

ՅԱՐԱՇ

ՕՐԱԹԵՐԹ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN FRANCE

HARATCH - Fondé 1925 - R. C. S. 376.288

Directeur-Propriétaire : SCH. MISSAKIAN

17, Rue Damesme - PARIS (13^e)

Tél.: GOB. 15-70 - C. C. P. Paris 1678-63

ԲՆԺՆԵՐԻՆ. — Տար. 750, Գաճա. 400, Յամս. 200 ֆրանկ

Mercredi 1 MAI 1946 Չորիշաբթի 1 ՄԱՅԻՍ

ԺՁ. ՏԱՐԻ — 18^e Année N^o 4599-Նոր շրջան քի 328

Խմբագիր՝ Շ. ՄԻՍԱԿԻԱՆ

Գին՝ 3 ֆր.

Մեր ԽՕՄԲԸ

ՓԱՌԻՔ ԱՇԽԱՏԱՆՔԻՆ

1909 Մայիս 2) 15ին, երբ Internationale 4-րդ կոնգրեսի կը թարգմանէին Պոլսոյ «Ազգակ» շաբաթաթերթին մէջ, սուլթանական իշխանութեան մը թափանչումով, հազիւ թէ որոշ գաղափար ու նէինք աշխատաւորական շարժման մասին:

Այի մը նորափետուր տղաք, ինչքան տեղեկութիւն կրնայինք ունենալ, եթէ այն ինչ որ կը կարողայինք պատահար ձեռք անցած զիրքերու եւ թերթերու մէջ: Հետզհետէ հասան թղթակցութիւններ Եւրոպայէն, պարզելով շարժումին դանդաղան երեսները:

Այդ օրերէն ընտանի եղանակ մը դարձած էր Շոնշանիկ Կուրդիներէն ծանօթ երգը. — Այդ մե՛նք եմք գալիս ...

Եւրոպա ենք այսօր եւ բաց աչքով կը տեսնենք ամէն բան: Գիրքերն ու թերթերն ալ կը լրացնեն ընդհանուր պատկերը:

Ինչ հսկայական, սրբնայ յառաջդիմութիւն, այդ օրերէն ի վեր: Ամէնէն մեծ եւ ծաղկեալ երկիրներէն մինչեւ ամէնէն յետամնաց կամ հեռուոր տափաստանները: Եւ նոյն եղանակը ամէն տեղ. —

Մե՛նք եմք, մե՛նք, բանուորներ աւ գեղջուկ, Աշխատաւոր շարժ իրաւագործ:

... Այլ այս վերջին գրոհն է մեր, — Սեղմուիմք միարամ — Ամէն երկրի բանուորներ — Մե՛րն է օրը վաղուան:

Երգը արդէն դարձած է իրականութիւն, տեսանելի եւ շօշափելի: Միլիոններ ու միլիոններ ոչ միայն արթնցած, կազմակերպուած, անդիմադրելի հեղեղ մը կազմած են, այլեւ կը տիրապետեն, կ'իշխեն, տարով տարի հիմնապէս կերպարանափոխելով ամբողջ աշխարհը:

Իրամատիրական ուժերը կը սարսին իրեն պատուանդաններուն վրայ: Եւ հիմա իրենք են որ պաշտպանողական միջոցներ օրէնքներ կը փնտռեն:

Աշխատանքի պաշտպանութեան տարրական պահանջները շատով իրականացած են: Բանուորական եւ արհեստակցական կազմակերպութիւնները առաւելագոյն ծրագիրն է որ կը պարտադրեն արդէն, միեւնոյն ատեն ուղղակի միջամտելով իւրաքանչիւր երկրի քաղաքական - վարչական գործունէութեան:

Ընկերվարութիւնն ու համայնավարութիւնը անկասկած դործելով հանդերձ, իրար կը դիմաւորեն Աշխատանքի պաշտպանութեան պայքարին մէջ:

Ո՛րքան տառապանքներ, զոհողութիւններ եւ ողջակէզներ՝ այս յաղթական արշաւին մէջ: Միայն 1917ի ուսական յեղափոխութիւնը արեւան բաղնիքներ արժեց, տարիներով: Եւրոպան ալ ունեցաւ իր մարտիրոսագրութիւնները:

Իսկ այժմ, կը թուի թէ օրուան հզօրներուն կամաւոր նահանջը, օրէնքներն են որ կը հարթեն ճամբան, խաղաղօրէն:

Արիւն միշտ ալ թափած է եւ կրնայ թափիլ: Բայց, կը թուի թէ այլեւ հեռուոր յիշատակ մը պիտի կազմեն համատարած արիւնահեղութիւնները, քանի որ բազմաթիւ պատմէնք քանդուեցան երկրորդ Աշխարհամարտի ընթացքին:

Մեր պարծե՛ք երկիրը, դասական վառարան փոթորկալի յեղափոխութեանց, վերջին մէկ տարուան ընթացքին կարեց այնքան ճամբայ՝ որքան պիտի չկրնար, 25 տարուան մէջ, տարբեր պարագաներու տակ: Նոր Մասնամարտութիւնն իսկ, իր հիմնական կէտերուն մէջ, կը բխի Աշխատանքի պաշտպանութեան հոգիներէն:

Անգլիա, Կապիս աւանդապահ եւ բարեշրջական երկիր, ուր Արհեստակցական Միութիւնները տիրական դեր կը կատարեն սկիզբէն ի վեր, արդէն ձեռնարկած է ճարտարագործական մեծ հաստատութեանց ազգայնացման: Աշխատաւորական կառավարութեան հիմնական գործերէն մէկն է այս, ուրիշ բարեփոխող ծրագիրներով:

Նոյն օրէնքական բարեփոխումները՝ ամբողջ արեւմտեան Եւրոպայի մէջ: Իսկ աւելի արժատական եւ հարուստային՝ դէպի արեւելք. — այն երկիրներուն մէջ ուր կը տիրապետէ խորհրդային իշխանութիւնը (Հունգարիա, Լեհաստան, Ռումանիա, Պուլկարիա, Եւրոպայի եւս):

Մայիս Մէկը այլեւս տօնական ցուցադրութիւն մը չէ, այլ իրական յաղթանակը Աշխատանքի աւանդանին: Մեր միեւնոյն Հայաստանն ալ աշխատանքով է որ կը դառնայ իր վերջերը, հեղեղահեղ ծաղկելու համար:

Հինի մեծ տօնավաճառը

Լի՛նն. — Մեր քաղաքին միջազգային մեծ տօնավաճառը որ, Լայփցիկի հետ, եւրոպական տօնավաճառներուն կարեւորագոյնը կը համարուէր, պատերազմի ընթացքին հինգ տարի դադարէ վերջ, վերստին բացաւ իր դուռները ապրիլ 27ին, առեւտրական եւ ճարտարաբանութեան աշխարհի տեղադրին եռուշաբթի մէջ: Այս առթիւ Ֆրանսայի երրորդ քաղաքը կը թողու իր սովորական մոռայի հանդարտութիւնը եւ քանի մը օրուան համար կը զգենու փարիզեան ժխորն ու ողբերգութիւնը: Մասնաւոր արդուարդ է տարուած հրապարակի արձաններուն, պատմական յիշատակարաններուն եւ պաշտօնական շէնքերուն, զոր երկրորդական գործարար լայտերներն պիտի լուսավառեն դիշերամուտէն արշալոյս: Կազմակերպուած են նաեւ երաժշտական եւ թատերական արտակարգ ներկայացումներ թէ սրահներու մէջ եւ թէ հրապարակներուն վրայ: Բայց ամէնէն ուշագրան է ինքնաշարժ կառքերու պատկանելի թիւը որ դրեթէ նման նախապատերազմեան տարիներու, անվերջանալի շարքով քաղաքին զանազան մասերէն դէպի տօնավաճառը կը սուրան: Կառնալ, թանկագին հեղուկ, ահա վերսկսած է շուրթի պէս հոսիլ, մինչդեռ կը քննան կաթն ու գինին եւ ինչ ինչ հեղուկներ կամ նիւթեր... Ժամանակներու դադարից, պիտի ըսէ միամիտ անցորդը, արդար դառնութեամբ:

Շարունակելով ճամբաս, կը հասնիմ տօնավաճառին վայրը, Pont de Boucle, Ռոնի վրայ բազմող տասը կամուրջներուն վերջինը, հոն ուր անհանգարտ գետը իր հրամայող կ'առնէ քաղաքին, իր մեկամաղձոտ ափերով երկարելու համար դեռ շատ հեռու, մինչեւ իր ծննդավայրը, լեռնագարդ Չուրիցերիա:

Իրեն նորութիւն, այս տարի քանդուած են տօնավաճառին մաս կազմող բոլոր պէրօնէ տաղաւարները ուր զանազան արհեստանոցներու վերաբերող... խոշոր մեքենաներ, սուր հեռաբարձութիւն ստեղծող եղանակաւոր ազմուկ կը բարձրացնէին: Անոնց տեղ կան դուրսը ցուցադրուած մեքենաներ, շարժիչներ (moteur), հողագործական, ջրարշակական, շաղաքի եւսյն: Այժմ, այդ տաղաւարներուն անհետացումով, այցելուները կըրնան, ծառուղիին ամբողջ երկայնքին անարգել տեսնել ու վայելիլ քաղաքին հասարակաց ընդարձակ պարտէզը, Parc Tête d'Or, աւելի զեղեցիկացած իր գարնանային թարմութեանը մէջ, սրուն համար կ'ըսեն արդէն, ամէնէն սիրունն է Ֆրանսայի:

Աստ տօնավաճառին բարձրակերտ բազմաթիւ շէնքերը որ, ծուխի եւ մուխի այս կեդրոնին մէջ հազուադէպ բարեբախտութիւնը ունին պահելու իրենց կոյս սպիտակութիւնը, անշուշտ շատ հեռու ըլլալով գործարաններէ: Բազմաթիւ օտար ազգեր, պաշտօնապէս թէ անպաշտօն կը մասնակցին ներք իրենց քնայարի արտադրութիւններով, Աւստրիա եւս, Ֆրանսական դրաման բանակի հովանաւորութեամբ: Միւսական պէտք են մի առ մի թուելու համար ցուցադրուած առարկաները: Անոնք այնքան շատ են իրենց տեսանելիութիւնը եւ թիւերով: Անկարելի է արդէն մէկ շունչով տեսնել ամէնը, ժամեր պէտք են այցելելու համար հարուր ցուցատեղիները (stand): Ծտապե՛մ ըսել թէ հոն ամփոփուած են աշխարհի ճարտարաբանութեան կան արդիական բոլոր ստեղծագործութիւններու հրաշալիքները, ինքնաշարժ կառքերու, մետաղագործութեան, մետաքսեղէններու, կաշեգործական, քիմիական, անուշահոտութեան, ոսկերչու թեան, ելեկտրական, կահագործութեան եւ վերջապէս բոլոր արհեստներու եւ արուեստներու անհամար եւ այլազան նմուշներ եւ գործիքներ: Ամէնէն աւելի աչքի կը զարնէ մասնաւոր գույցերիական տաղաւարին մէջ կնոջական հանդերձեղէնի տեսնողագործութիւնը, վերջին ծայր սուլուորիչ իր նրբութեամբ: Հոն սքանչացում կը պատճառեն նաեւ ցուցադրուած ժամացոյցները, մասնաւոր փոքրիկ (ձեռքի), ամէն մէկը զմբռնալ կարծես: Մեծ տեղ կը զբաւեն նաեւ Լիոնի, Վիէնի եւ Սէնթ Էթիէնի մետաքսեղէնները, իրենց ներմաներով մեքենական հիւսուածքներով, բանուածքներով եւ պատկերագործումներով: Զգլիւի տեսարան մը կը պարզեն վարագոյրներու պէս ամբողջ երկայնքով եւ լայնքով սրահներու պատերն ի վար կախուած միճակին մէջ, նոյն ատեն փաստը տնով միջին Ֆրանսայի առաջին ճարտարաբանութիւն:

Տեսնելով Լիոնի 1946ի տօնավաճառը, սա եզրակացութեան կը յանգիս որ դրեթէ տարբերութիւն չունի, իր ճոխութեամբ եւ փարթամութեամբ, 1939ի եւ նախորդ տարիներու նոյն քաղա-

ՉՈՐՍ ՏԵՍԱԿ ԾՐԱԳԻՐ Ի Տ Ա Լ Ի Ո Յ ԳԱՂԹԱՎԱՅՐԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ

Անգլիական անակնկալը

Չորսերու ժողովին երկուշաբթի օրուան նիստին մէջ, Անգլիոյ արտաքին նախարարը դարձանք պատճառեց մասնաւորապէս Պ. Մոլթոթով, մէկ անգամէն առաջարկելով միացնել Ափրիկեան Տրիպոլիտը եւ Կիւբէնիան եւ կազմել նոր պետութիւն մը, անկախ եւ միացիկալ Լիբիա: Պ. Պէյլին կերակր օր խորհրդակցած էր բրիտանական դաղթապետութեանց վարչապետներուն հետ, եւ անոնց հաւանութեամբ է որ առաջարկեց այս ծրագիրը: Այս առաջարկէն առաջ, Պ. Մոլթոթով ալ անակնկալ մը պատճառեց: Փոխանակ պնդելու որ միայն Ս. Միութեան յանձնուի Ափրիկեան Տրիպոլիտոյ խնամակալութիւնը, աւելի չափաւոր ծրագիր մը ներկայացուց, — ինամակալութիւն Իտալիոյ հետ, ինչ որ նորէն տիրական դիրք մը պիտի ապահովէ իրեն: Նոյն հարցին առթիւ, Մ. Նահանգները կ'առաջարկեն միջազգային խնամակալութիւն, իսկ Ֆրանսա կ'ուզէ որ խնամակալութիւնը յանձնուի դաղթապետներու նախկին տիրոջ, Իտալիոյ:

Չորս ժամ վիճարանելէ վերջ, որոշուեցաւ յետաձգել հարցին ըննութիւնը: Առիթնէ օգտուելով, Պ. Պիտո յաջողեցաւ օրակարգին մէջ անցնել դերմանական հարցը, որ պիտի ըննուի առանձին, երբ կարգադրուի Իտալիոյ Պուլկարիոյ, Ռումանիոյ, Հունգարիոյ եւ Ֆինլանտայի խնդիրները: Հակառակ ընդհանուր մտավախութեան, միտորտըրը հանդարտ էր, կծու բառեր չիտրանակուեցան, ինչպէս անցեալ Սեպտեմբերին, Լոնտոնի մէջ: Անգլիական ծրագրին առթիւ, Պ. Մոլթոթով պարզապէս դիտել տուաւ թէ ստիպուած է հրահանգել սպասել Մոսկուայէն: Գերմանական հարցին առթիւ ալ, Պ. Պէյլին բացատրեց թէ Ռուրի եւ Հունտոնի խնդիրները չեն կրնար առանձին ըննուիլ, այլ կապուած են ամբողջ դերմանական հարցին հետ: Ամէն պարագայի մէջ, Ֆրանսա յաջողութիւն մը եւս չահեցաւ, օրակարգի վրայ դնելով խնդիրը: Ամերիկեան պատուիրակը յայտարարեց թէ իրեն կը վերապահէ օրակարգ անցնել նաեւ Աւստրիոյ խնդիրը:

Վիճարանութեան ընթացքին ընունեցաւ նաեւ Երկուտասան կզղիներու խնդիրը: Անգլիոյ ներկայացուցիչը առաջարկեց Յունաստանի վերադարձնել այդ կզղինները: Պ. Պ. Պիտո եւ Պրենս համաձայն էին, բայց Պ. Մոլթոթով վերապահ դիրք մը բռնելով, ժամանակ խնդրեց մտածելու: Իրազեկներ կը հաւաստեն թէ Մոլթոթով կ'երակի օր առանձին խորհրդակցելով Պ. Պրենսի հետ, հասկցուցած է թէ Ս. Միութիւնը կ'ուզէ նախահանգ պիտի դիւրութիւններ պահանջել Երկուտասան կզղիններուն մէջ, միեւնոյն ատեն ընդդիմանալով անոնց ապազինման:

25 տարուան դաշնագիր մը Գերմանիոյ դեմ

Վիճարանութեանց ատեն, ամերիկեան պատուիրակը յայտարարեց թէ վերջերս յանուն իր կառավարութեան ծրագիր մը հաղորդած է Չորս Մեծերուն, առաջարկելով 25 տարուան դաշնագիր մը կնքել, շարունակելու համար Գերմանիոյ կատարելով պիտի խափուէր:

Այդ ծրագրին համաձայն, Մ. Նահանգները, Ֆրանսա, Ս. Միութիւնը եւ Մեծն Բրիտանիա դաշնագիր մը պիտի կնքեն, որ 25 տարի հսկողութեան տակ պիտի պահէ Գերմանիան, զինուորական զբաւումէն վերջն ալ: Ամերիկացիները նոյն ինչ որ կը նշանակէ թէ Մ. Նահանգները տարիներով տիրական դեր պիտի կատարեն միջազգային քաղաքականութեան մէջ: Եթէ երկու դաշնագիրները ստորագրուին, Մ. Նահանգները աւելի գործուն դեր մը պիտի կատարեն Եւրոպայի եւ Մայր-Արեւելքի գործերուն մէջ, քաղաքականութիւն մը

(Լուրերու շարունակութիւնը կարգալ Գ. Էյ)

ՄԱՅԻՍ 1Ի ՏՕՆԻՆ ԱՌԹԻՒՆ «Յառաջ» յաջորդ համարը լուս կը տեսնէ ուրբաթ օր:

Իր տօնավաճառներէն, ինչ որ սակայն երբեք չի համապատասխանէր «արտաքին աշխարհի» տրնտեսական կացութեան, ուր նիւթեղէնի պակասը, բաղադրամամբ վերոյիշեալ տարեշրջաններուն, ամէնքս ալ գիտենք եւ կը տեսնենք որ որքան մեծ է, անվիճելի է:

Չմոռնամ ըսել որ, Ֆրանսայի ցուցադրողներուն մէջ, ուր շատ օտարներ ալ կան, շատ փրնտուցի Հայու անուն մը, եւ մէկ հատ մը միայն գտայ, — Dongayan (Կոչիկ), ինչ որ դարձանք պատճառեց, քանի որ մեր հայրենակիցներէն նշանակելի թիւ մը խոր աղօս բացած է այս երկրին առեւտրական, արհեստագործական եւ նոյն իսկ ճարտարաբանական ասպարէզին մէջ:

ԳԵՂԱՄ ԵՐՈՒԱՆԴՈՒՆԻ

ԽԱԽԱՔԱՐՏԷ ԱՇՏԱՐՍԿ . .

(Մասնաւոր քարտեզաբան Յառաջի)

Աւելի քան կէս դար առաջ ծնաւ Մայիս Մէկը, 1888—1890 թուականներուն: Այսինքն ճիշդ այն օրերուն՝ երբ ռազմաւարական եւ հրապարակ իջան մեր յեղափոխական կուսակցութիւնները — Հնչակեան եւ Իսախանյան:

Տասնեկիններորդ դարը երբեք չի եւ ճարտարաբանութիւնը դարձեալ: Շնորհիւ գիտութեան զարգացման, նորանոր գիտելիքներ եկան եւ արտադրութեան միջոցները, իրենց նախնական վիճակէն դուրս գալով դարձան մեքենական: Փոքրիկ արհեստանոցներու տեղ հսկայական գործարաններ կառուցուեցան: Անհատական մանր ձեռնարկները հետզհետէ առաջադէմ քրտեցան եւ ծանր արդիւնաբերութիւնը եկաւ գրաւել անոնց տեղը, մասնաւոր ճարտարապետի եւ հիւսիսային Ամերիկայի մեծ քաղաքներուն մէջ:

Ճարտարաբանութիւնը զարգացման հետ զուգընթաց, հետզհետէ պարզուեցան գիւղերը, ուր դժուար էր կեանքը, ու մարդիկ աստիճանաբար համարձակուեցան մեծ քաղաքներու շուրջ, ուր երկնայալց ծխնելոյղներով մեծ ու փոքր գործարաններ կառուցուեցան:

Այս ձեւով է որ մէջտեղ եկաւ նոր դասակարգ մը, բանուոր, աշխատուոր դասակարգը, որ յետագային, ընկերվարական բառարանին մէջ կոչուեցաւ ընչազուրկ դասակարգ — պրոլետարիատ:

1789ի Փրանսիական Մեծ Յեղափոխութեան ժամանակ երեք գլխաւոր դասակարգեր կային — ազնուականական, կղերական ու «երրորդ դասակարգը», ոչ-առճճիկ քաղաքացիներն ու գիւղացիութիւնը: Այս վերջին դասակարգն էր մղիչ ուժը այն տարերային մեծ շարժումին, որ 18րդ դարուն վերջերը: «Ազատութեան», Հաւասարութեան եւ Յղարկութեան» վեհ նշանախօսքերը հրապարակ նետեց, խանդավառելով հոգիները բոլոր այն ժողովուրդներուն, որոնք բռնակալութեան ճիրաններուն մէջ կը տուայտէին Ասլանտեանի եղբայրներէն մինչեւ Միջերկրական ու Կասպից ծով:

Այդ աննախընթաց յեղափոխութեան ռահիւրայ դասակարգին մէջէն էր որ 19րդ դարուն ծնաւ առանձնաշնորհալ քաղքին (բուրժուա) դասակարգը՝ հարստացած, դրամատէր դարձած եւ իշխանութիւնը ձեռք անցուցած: Արդիւնաբերութիւնը, արտադրութեան միջոցները անոր սեփականութիւնն էին: Անդալաբար, 18րդ դարու համեմատ արհամարուած դասակարգը ազնուականականութեան տեղը բռնեց: Եւ իսկին ճորտերուն տեղ, այժմ բանուորները, ընչազուրկներն էին որ կը շահագործուէին դրամատիրական նոր դասակարգին կողմէ:

Ընկերվարական կուսակցութեանց հրապարակ դարձ նորատեսակ յեղափոխութիւն մըն էր, ոչ սակայն տարերային՝ ինչպէս մեծ յեղափոխութիւնը: Ընկերվարականները կը ձգտէին արդիւն մարդուն շահագործումը իր նմաններուն կողմէ: Իսասկարգային պայքար յայտարարելով, կ'ուզէին վերջ տալ քաղքին դրամատէրներու բռնատիրութեան:

Շահագործումը չափ ու սահման չունէր: Գործարանի տաժանակիր աշխատանքներուն ենթակայ էին նոյնիսկ երկուսն անչափասաններ: Ժամի սահմանափակում չկար: 12—14 եւ աւելի ժամեր աշխատող բանուորներ կային: Աշխատուորներու եւ իրենց ընտանիքներու բնակարանները յաճախ օդէ ու լոյսէ զուրկ ազոտոտ խրճիթներ էին: Ապրուստի պայմանները վերջին ծայր խեղճ:

Ընկերվարական կուսակցութիւններն ու աշխատուորական սէտիքները նուիրուած էին այս ընչազուրկ դասակարգի կեանքի պայմանները բարելաւելու գործին: 1860ական թուականներէն սկսեալ գործադուլներով, ցոյցերով եւ այլ սպառնական միջոցներով կ'աշխատէին մարդավայել կեանք մը ապահովել աշխատող բազուկներուն:

«Երեք ութ» երու նշանախօսքն էր հրապարակ նետուած իրենց խոփալ: — ութ ժամ աշխատանք, ութ ժամ հանգիստ եւ ութ ժամ քուն: Այն նշանախօսքին շուրջ տարիներով պայքար մղուած էր:

«Մայիս Մէկը» այդ պայքարը խորհրդանշող օրն է: Անոր տօնը:

Առաջին անգամ «Աշխատանքի Ամերիկեան Իսախանյանութիւն» էր որ իր 1888 Դեկտեմբերի Սէյնթ Լուիզի համագումարին մէջ որոշեց Մայիս 1ին միջազգային մեծ ցոյց մը կատարել, գործադուլի ձեւին տակ, պահանջելու համար օրական ութ ժամեայ աշխատանքի գործադուլները: Միջազգային բանուորական մեծ շարժումի մը դադար արձարձուած էր նաեւ նոյն տարին Փրանսական «Մէյիքներու Ազգային Իսախանյանութեան» Գ. Աղբայրի համագումարին մէջ, որ տեղի ունեցաւ Պորտոյի մէջ 28 Դեկտեմբեր — 9 Նոյեմբ. 1888ին: Հոն որոշուեցաւ որ բանուորական կազմակերպութիւնները բոլոր երկիրներու մէջ 1889 Փետրուար 10ին պէտք է ցոյցեր կատարեն՝ ութ ժամեայ աշխատանք եւ նուազագոյն աշխատավարձ պահանջելու համար եւ մինչեւ փետրուար 24 պայմանաւճառ տան կառավարութեանց՝ դահագում ստանալու համար: Այս ցոյցը տեղի ունեցաւ Փրանսայի կարգ մը մեծ քաղաքներուն մէջ, սակայն սպասուած արդիւնքը չտուաւ:

«Մայիս Մէկը» միջազգային առաջին ցոյցը

Թուրքիոյ վարչապետը, մարտին Լրագրողներու Համագումարին, փոխկրէ աշտարակներ կը շինէր՝ երբ տուն կուտար Թուրք Մամուլի ներկայացուցիչներուն, թէ «Թուրք հայրենակիցները քաղաքական հասունութեան տէր են այսօր, ու Թուրք նոր կուսակցութիւններու կազմութիւնը փաստ է՝ որ դեմոկրատութիւնը ի գորտ է երկրին մէջ, ամենալայն իմաստով»:

Մարաճոյու կ'ակնարկէր, անշուշտ, այն երեք կուսակցութիւններուն, որոնք անուն առին վերջին վեց ամիսներու ընթացքին, — «Ազգ. Վերականգնում», «Դեմոկրատ» եւ «Սոցիալ — դեմոկրատ» պիտակով, եւ, «ճշմարտագէտ եւ ոչ կարծեօք», լծուեցան ազգային — քաղաքական աշխատանքներու . . .

Պատմութիւնը անողոք ու բիրտ է սակայն, եւ ընկերային թէ հաւաքական կեանքի անդադար — ձուլումը՝ յաճախ մղձաւանջի կը վերածեն մեր անհաստակ «բարի» ցանկութիւնները:

Թուրք նոր կուսակցութիւններու կազմութիւնը իրողութիւն էր անշուշտ: Եթէ անոնց գոյութիւնը չէր համապատասխաներ ընկերային — քաղաքական ո եւ է պահանջի, կ'որդարանար՝ առ նուազն, իրենց անուններուն գոյութեամբ: — Մրազիւրներ մշակուեցան, կանոնադրութիւններ պատրաստուեցան, առաջադրութիւններ հրատարակուեցան, եւ ահա արդիւնքը:

«Թասվիր» (21 Մարտ) առաջին էջին վրայ, եւ չորս սիւնակի վրայ զգայացուց խորագիրներով կը հաղորդէ թէ «Քայքայումի հասանականութեան առջեւ կը գտնուի նորակազմ Ազգ. Վերականգնումի կուսակցութիւնը», որ հազիւ վեց ամսուն կեանք ունի:

Իսկ Մարտ 22ի թիւով, նոյն թերթը հետեւեալ մանրամասնութիւնները կը հաղորդէ.

«Ազգ. Վերականգնումի կուսակցութիւնը կազմալուծման վտանգի մատնուած է: Նախ՝ կուսակցութեան հրատարակչի հիմնադիր անդամներին էրըրումի նախկին երեսփոխան Հիւսէյին Ալին Ուլալ, այն պատճառարաններով թէ իր անհաստակ տեսակետները չէ կրցած ներդրանակել կուսակցութեան ձգտումներուն հետ: Իսկ միւս երկու հիմնադիրներուն՝ կուսակցապետ Նուրի Տէմիրազի եւ Ճէվատ Րիֆաթի միջեւ, ծայր տըրուած է սուր տարակարծութիւն մը, ու անոնք, փոխադարձաբար . . . իրար վտարած են կուսակցական շարքերէն:

«Նուրի Տէմիրազ եւ Ճէվատ Րիֆաթ, նամակներ ուղղած են խմբագրութեանս, թիւրիմացութիւնները փարատելու համար: Իրողութիւնն այն է

տեղի ունեցաւ 1890 Մայիս 1ի հինգշաբթի օրը Ամերիկայի եւ Եւրոպայի մէջ եւ Պրիւսիի ընկերվարական միջազգայինի համագումարը (16—23 Օգոս. 1891) վերջնական կերպով նուիրագործեց այդ թուականը: Անկէ ի վեր «Մայիս մէկը» դարձաւ աշխատարանի տուն: Այդ օրը բանուորները չէին աշխատել, այլ իրազը սոյցերով, հրապարակային հաւաքոյթներով կը պահանջէին իշխանութիւններէն օրէնքներ քուէարկել, բարւոքելու համար իրենց կեանքի պայմանները:

Օսմանեան Մահմանադրութեան հռչակումէն վերջ, Թուրքիոյ մէջ անգամ ծանօթ տուն մը դարձած էր «Մայիս մէկը»:

Շնորհիւ ընկերվարական կուսակցութեանց մղած պայքարներուն, տարիներու ընթացքին աշխատուորներու շահերը պաշտպանուեցան հետզհետէ: Երկար տեսնէ ի վեր Ամերիկայի մէջ բանուորները շատ մը իրաւունքներ եւ հանգստաւէտ կեանք կը վայելէին: Ռուսիոյ մէջ բանուոր դասակարգը իշխանութեան գլուխ անցած՝ կը կառավարէ աշխարհի մէկ վեցերորդ մասը: 1914ի պատերազմէն աւելին Եւրոպայի կարգ մը երկիրներուն մէջ իշխանութիւնը ընկերվարական կուսակցութեանց ձեռքն անցած է, առանց հաշուելու Հայաստանն ու Վրաստանը, որոնք 1918ի մայիսէն սկսեալ մինչեւ խորհրդայնացումը ընկերվարական կառավարութիւն ունէին:

Փանսայի մէջ ալ ընկերվարական դադարները առաջին իսկ վայրկեանէն լայն ծաւալ դտած էին: 1936ին ընկերվարական կուսակցութիւնը հասաւ այնպիսի աստիճանի մը, որ կոչուեցաւ կառավարական ղեկը ձեռք առնելու: Այսօր դարձեալ ընկերվարական եւ համայնապար կուսակցութիւններն են — աշխատուոր դասակարգի պաշտպանները որ կը կառավարեն այս երկիրը:

«Մայիս մէկը» ժողովրդականութիւնը այնքան համաշխարհային էր, որ նոյնիսկ Հիթլեր ու Մուսոլինի այդ օրը աշխատուորներու տուն հռչակեցին, իրենց հասկացողութեամբ:

Ի դուր չանցած «Մայիս մէկը» նշանախօսքերը: Այսօր ամէն կողմ ընկերվարական դադարները ի պատուի են, ի շահ ընչազուրկ, բանուոր մարդկութեան:

ՀՐԱՆՏ ՍՍՄՈՒԷԼ

«Յառաջ» էն իմացայ Նորայր Մերոուկեանի մահը: Այս քանիներօրէն է որ կ'իյնայ — կ'իյնան մէկիկ մէկիկ, իրարու ետեւէ: «Ման, ծնան, ծնան հայ մայրեր, ու դարձեալ անոնց դիրկերը պարագ մնացին . . .» (Ա. Ահարոնեան): «Փայտե խաչերու» շարք մը ճակատներու վրայ: Պարզու — նակ շիրիմներու շարք մը հոն՝ stalagներու համայնական դերեզմանատուններուն մէջ: Ուրիշներ վերադարձի մեծ բախտին արժանացած՝ բայց, հալածաչ երէկի իրենց շարժարանքներէն ու տառապանքէն կ'իյնան:

Ինչ գրել, ո՞ր մէկի մասին գրել: Անոնք որ չորս — հինգ տարիներու գերութեան ճամբաները կտրեցին ու ինկան ուժասպառ, անոնց իւրաքանչիւրին մասին մէկ մէկ հատոր կարելի է գրել: Չէ՞ որ անոնք զարհուրելի պատմութիւն մը ապրեցան ու ճակատագրին սեւ բախտին իրենց ուժէն ու կարողութեանէն վեր տուրք մը չճարեցին . . . Բայց, պէտք է քանի մը տող մըրտուել, ընկերական պարտք մը կատարելու համար:

Նորայր Մերոուկեան . . . ո՞վ չի ճանչնար Kommando 544) 11ի «Կոյցի» մեր թարգմանը, Stalag XI Աի հայկական յարմարեցուած նուազախումբի ղեկավարը, մեր երիտասարդ մաթեմատիկոս լեզուագէտը (կը խօսէր Փրանսերէն, իտալերէն եւ գերմաներէն):

Միւս Յիւլիոյ (Պուկարիա), շրջանաւարտ Սեվոսի Մ. Ռաֆայէլեան վարժարանէն, Նորայրը անոնցմէ չէր որ դպրոցին մէջ շատ բան կը սորվին, բայց անկէ դուրս շուտով ամէն բան կը մոռնան: Ինչ նիւթի մասին որ խօսէիք, ազգային թէ գրական, արհեստի թէ դեղարուեստի, Նորայրը բաւականին լայն պաշար ունէր եւ կրնար դիւրութեամբ բացատրել: Այն օրերուն մեզի տրուած խառն ի խառն սնունդին հետեւանքով (ինչ որ գտնէինք, հում թէ եփած, կ'ուտէինք), շատերուն պէս Նորայրն ալ ստամոքսի հիւանդութիւնէ կը տառապէր: Բայց, այդպիսի «մանր», «աննշան» հիւանդութիւններուն, ո՞ր բժիշկը կարելորդութիւն կուտար: Նորայրին հիւանդութիւնը երթալով բարդացաւ, այն աստիճան որ զինքը Kommando Stalag զրկեցին: Stalag բժիշկները իր հիւանդութիւնը գտան աննշան եւ իբրեւ շորթ թուրքի վրայ «թէթեւ աշխատանք» նշանակեցին: Բայց Նորայրը իրօք յուրջ հիւանդ էր: Օրեր, շաբաթներ

սակայն, որ անդունդ կայ երկուքին միջեւ, ու պառակտուած է կուսակցութիւնը: — Ճեվատ Րիֆաթ կ'ընդգծէ, թէ «Նուրի Տէմիրազ չափազանց բռնապետական ու մենատիրական ընթացք ցոյց կուտայ անդամներու թէ վարչական խորհուրդի անդամներու հանդէպ, եւ պատճառ կը դառնայ, որ վաստակուոր դէմքեր, դիտանալիքներ թէ մտաւորականներ, դառնանաւ եւ հեռանան: Միւս կողմէ՝ յարգանքի պակաս ցոյց կուտայ նաեւ Ազգ. Պետին (Ինչօնիւի) հանդէպ: Ահա թէ ինչու, կուսակցութեան պատուոյ Ատեանը, Մարտ 3ի իր նիստին մէջ, որոշած է վտարել զինքը»:

«Կուսակցութեան վարչական ժողովն ալ — կը շարունակէ խորհրդածել «Թասվիր» —, կը պաշտպանէ Նուրի Տէմիրազը, եւ մերժելով Պատույթատեանին որոշումը, զայն կ'ընդունի իբրեւ կուսակցապետ, կը դատապարտէ Ճեվատ Րիֆաթն ու իր համախոհները, եւ կը վտարէ զանոնք կուսակցութեան շարքերէն»:

Կատարեալ Արշակեան, ուրեմն: — «Դուն ըրիք, ես ըրիք»ի պատմութիւն: Բայց՝ ի՞նչ ըրին, ինչո՞ւ, ե՞րբ այսքան զգուշտուելու կրակ . . . : «Վարչական ժողովը», որ կը կանգնի Նուրի Տէմիրազի կողքին, պոչ մը կը ձգէ դուրս. — «Ճեվատ Րիֆաթ եւ իր երկու ընկերները շարաշար կը գործածէին կուսակցութեան վարկը եւ ազդեցութիւնը, ու անվայել յայտարարութիւններ կ'ընէին կուսակցութեան դէմ: Պարզ խաղաղիկ էին մարդոց ձեռքը, որոնք վտահալի չեն մեզի համար»:

«Թասվիր», «ամօթ» մը կ'որակէ կատակեր — գութիւնը, եւ կը շեշտէ Մարտ 26ի խմբագրակալումը. — «Չխաղանք հանրային վստահութեան հետ: Կուսակցութիւն կազմել, անդամակցել ո եւ է կուսակցութեան, համագործ է բաժին ստանձնելու երկրի գործերուն մէջ: Հետեւաբար, կուսակցութեան ո եւ է անգամ, պատասխանատու է ազդին ու պետութեան առջեւ: Նուրի Տէմիրազի կուսակցութեան մէջ պատահած դէպքեր, կը նուազեցնեն ժողովուրդին վստահութիւնը՝ հանդէպ «դեմոկրատականացման» ո եւ է շարժումի: Տարակոյս չկայ, թէ մէկ կողմն ու միւսը՝ հաւասարապէս յանցաւոր են: Չենք ուզեր մեր ճամբուն վրայ փոս ու փլուզում տեսնել, երբ տակաւին ծայրն ենք ծրարոց, ու ազատութեան աւելի լայն հորիզոններու կը ձգտինք: Անգամ մը որ կորսնցնենք հարաւորութիւնը քաղաքական հասունութեան կորիզները ատեղծելու, միանգամ ընդ միւս կը ցնդի ամէն յոյս՝ ժողովրդապետութիւնը փութացնելու»:

Մարաճոյուի վստահութեան դէմ առաջին հարուածը կուգայ Նուրի Տէմիրազին: Ապահովաբար, միւս աշտարակներու շէնքերն ալ խաւարատ ու կիր են միայն . . .

Մ.

կը պատահէր որ ինչ որ ուտէր քանի մը ժամ վերջ դուրս կուտար:

Ինչպէս այսօր հոս, այնտեղ ալ, ամէն ինչ «եւ շուկայ»ով կը քալէր: Եթէ ամերիկեան դաշնիկ, ամերիկեան շօքօլա, օսկիէ մատանի, ժամացոյց, քանի մը հարիւր մարդ դրամ չունէիր, եթէ չէիր կրնար հազար զոհողութիւններով «լեցուն» քարտէսը՝ ճարել ազատ, անկուշտ բոլորներուն եւ անոնց «միջնորդ»ներուն, սարգիւն էին բոլոր աշխատանքները: Եւ որովհետեւ հէք Նորայրը ոչինչ ունէր անոնց հրամայելիք, չէր կրնար «Գըրախտի դռնէն» ներս մտնել...

Stalag XI A, գիշեր մը: Բնաւ պիտի չմոռնամ, կէս գիշերէն վերջ, յանկարծ, ընկեր մը զիս եւ քանի մը ընկերներ կ'արթնցնէ, «եղէք, եղէք, Նորայրը շատ հիւանդ է: Կը պոռայ, կը դաւարուի»: Կ'ըլլենք, հապճեպով կը հազուինք: Այդ օրերուն, մենք, Հայերս, իրրեւ «անբողձարի»ներ (գերու-թեան մէջ զինուորի հազուատով այս ալ տեսանք) Ֆրանսացիներէն դատած, Բախին մէկ անկիւնը, Հրեաներուն հետ առանձին տաղաւարի մը մէջ տեղաւորած էին ծանօթ տեղակալ Ռօպէր Վալընտի Ռատոյի կարգադրութեամբ: Հրեաներուն մէջ կային քանի մը բոլորներ եւ զեղադրածներ: Երկու ծանօթ բոլորներ կը կանչուէր, կը քննեն ու կը թելադրեն որ անմիջապէս հիւանդանոց փոխադրուի:

Հիւանդանոց... բայց ինչպէ՞ս: Մենք տաղաւարին մէջ փակուած, փշաղէկներու ետին, դուռը դռն, մեր գերմանացի հսկիչը տաղաւարէն դուրս, գորանոցը: Պէտք է միջոց գտնել, կը պնդէ բոլորը: Գուրու կ'ըլլենք տաղաւարէն, կը սկսինք քարածրածայն պոռալ: Պոռացինք, պոռացինք մինչեւ որ մեր վերակեցուն քանի մը պահակներով եկաւ:

Նորայրը փոխադրեցինք հիւանդանոց: Բժիշկները կը հաւաքուին շուրջը, կը քննեն, «մեծ բան մը չունի», կ'ըսեն: Ըրածը «կապիկարմութիւն է», կ'ըսեն: Նորայրը սակայն կը դաւարուի, կը պոռայ, գետնին կը տապալակի... Իր բախտէն, յանկարծ ներս կը մտնէ մեզի ծանօթ լեհ բժիշկը, կը քննէ եւ անմիջապէս տեղին վրայ գործողութիւն մը կատարելու միջոց կուտայ: Ազնուական բժիշկին գործողութեան գործիքները կը շարժին, մենք դուրսը անքուն՝ լուրի կը սպասենք: «Եղաւ, լրացաւ, կ'ըսէ մեր խմբակետը, բայց, բայց»... Ու կը կմկմայ: Բժիշկը ըսաւ, եթէ երեք օր ապրի, այլեւս մտահոգութեան բան չկայ, իսկ եթէ չապրի... ան ալ իր բախտին:

Stalag հայկեանքի բաժինը, հայորդիները անխտիր երբ օր «հսկում» կը կատարեն: Նորայրին անունն է որ կը շրջի բերնէ բերան, սենեակէ սենեակ: Երեք օր վերջ անտարբեր լուրը կը հասնի, թէ, Նորայրը աչքերը բացեր եւ նախադասութիւն մը արտասանեց է: «Աքորտիօն» բերէք, ըսեր է: Իրիկուան մեր տաղաւարը տօն կը սարքէ: Չուրթակարար կարգիւր, Գործարաններուն եւ Շարժի կարայի հետ կը նստակեն, պարասէր զոյգերը կը դառնան, պատուելին եւ ես ճառ կը խօսինք, ուրիշներ կ'արտասանեն:

Նորայրը առողջացաւ: Իր գործողութիւնը պատճառ եղաւ որ իրրեւ անկար տուն վերադառնայ եւ իր սիրելիները դունէ: Մենք մնացինք հոն օրերը հաշուելով: Վերադարձիս իրեն հանդիպեցայ Տէսին մէջ առողջ, զերցած, ուրախ եւ զուարթ: «Լաւ եմ, շատ առողջ կը գտնեմ ինչպէ՞ք», ըսաւ: Փարիզ պիտի հաստատուիմ, Գ. Ալէքսանի մօտ աշխատելու:

Սերախութիւնս սակայն երկար չտևեց: Ուսուցիչս, Յառաջը որ ամէն օր կուգայ մեր ցաւերն ու մտաւանդութիւնները ամօքելու, մեր յոյզերն ու յոյսերը թարմացնելու, ահա ինձի — իր հազարաւոր ծանօթ ընկերներուն — կը բերէ գոյժքերիտասարդ հայորդիին, մեր սիրելի Նորայրին մահունան:

Ինչ գրել, ինչ «միջնորդ» խօսք ընել անոր դժբախտ մօրը, որ, Տէսինի «իտիկին Ֆապրի-քան»ները մաշեցաւ, իր մէկ հատիկ տղուն ռուսում եւ հայեցի դաստիարակութիւն տալու ռուսար: Ինչպէս ըսել, «Նորայր, արի՛ ընկեր, հոգը թեթեւ վրադ, երբ անոր երեսուն եւ երեք դարունները դեռ այդ «թեթեւ հոգ»ին կարիքն ու կարօտը չունէին...
ՄԻՍՍԷ ՄԻՐՁԷ

ԷՎԷՐԷԿ - ՖԷՆԷՍԷՒ ՀԱՅԵՐԸ

Պոլսոյ թերթերը կը գրեն թէ Կեսարիոյ էվէրէկ - Ֆենէսէ գիւղին մէջ կը գտնուին 150 տունի չափ Հայեր, որոնք ոչ - բարեկեցիկ վիճակ մը ունին ընդհանրապէս եւ կը զբաղին երկրագործութեամբ եւ փոքր արհեստներով: Ֆենէսէի մեծ եկեղեցին հողային բերքերու Օֆիսին կողմէ շտեմարանի վերածուած է: Էվէրէկի Ս. Ռորոս հին եկեղեցին մէջ ժամերգութիւն եւ պատարագ տեղի կ'ունենայ, հոգեւոր հովիւ Եղիշէ քնյ. ի կողմէ, փոքրիկ դպրոցներու մասնակցութեամբ: Ազգ. դպրոց գոյութիւն չունենալով, տղաքը թուրք վարժարանը կը յաճախեն:

ՃԵՂՈՒՄ. — Ապրիլ 26ին Վալանսէն գրուած թղթակցութեան ստորագրութիւնը, Ռազմիկ, որ եւ է կապ չունի Ռազմիկ Պաղտասարեանի հետ, որ 17 տարեկան պատանի մըն է:

Հայերէնի խնդիրը

ՍՄԲ. — Ապրիլ 3ին Գահիրէի Համագայինը Բեկերուքիւնը վիտաբանական դասախօսութիւն մը սարքած է, նիւթ ունենալով Հայերէնի խնդիրը: Այս առթիւ «Յուսարեք»էն կը քաղուի հետեւեալ տեղեկութիւնները, որոնք խորապէս կը խնայազրգեն մեր գաղութն ալ. —

Հաւաքոյթին վարիչը, Գ. Մխիթարեան, բանալով երեկոյթը շնչունց հարցին կարեւորութիւնը եւ անոր պարզ երեւոյթին տակ՝ բարդ հան - դամանքը: Մեր դրակաւնութեան զարգացման, տարածման եւ ընդհանուր առմամբ աղագայակման մի տեսակէտէն կենսական խնդիր մը, որուն լուծումը պէտք է ուշանայ:

Դասախօսը, Պ. Բ. Թաշեան, նախ քան իր նիւթին անցնիլը, ցոյց տուաւ թէ հայ լեզուի խնդիրը ինչ երեւաններով կը ներկայանար մեզի: Մասնաւոր կերպով զլխաւոր երեւաններ — ուղղագրութեան հարցը, օտար բառերու որդեգրումը եւ միաձոյլ լեզուի խնդիրը, եւ երկու յաւելուածական մասեր — գաղութներու մէջ միօրինակ եւ տեղական ազդեցութիւններէն զերծ լեզուի մը գործածութիւնը եւ դաւաճարարութեան խնդիրը:

Սուելով ուղղագրութեան մասին՝ ըրաւ կարգ մը անժխտելի հաստատումներ ժողովուրդի մը լեզուին կազմութեան եւ բարեշրջումին վերաբերեալ: Ու շնչունց որ փոփոխութիւններ, երբեմն յանկարծական, կրնային ըլլալ, բայց անոնք պէտք է միշտ պարտադրուած ըլլան ժողովուրդէն, կամ անոնց պէտքը զգալի ըլլայ որ եւ է ստիպողական կերպով, եւ ժամանակը յարմար դատուի ժողովուրդին ամբողջ մտաւորականութեան կողմէ՝ ընելու համար առաջարկուած փոփոխութիւնը: Այս ըրաւ պատմականը Արեղեան ուղղագրութեան, որ 1922էն ի վեր կը գործածուի Ս. Հայաստանի մէջ: Բերաւ վիպագրութիւնը խորհրդահայ քննադատ Պ. Մակնոյեանի, որ Արեղեան ուղղագրութիւնը ձախողութիւն մը նկատելով մէկտեղ՝ եղած սխալը կ'ուզէր սրբագրել աւելի մեծ սխալով մը, որ է Մեծարարեան տառերուն տեղ ընդունիլ լատինական տառերը, որպէսզի կարելի ըլլայ կովկասեան միւս ժողովուրդներուն դրակաւնութեան հետ դիւրու-թեամբ կապուիլ:

Տալէ ետք ուրիշ մանրամասնութիւններ, որոնք կը դժուարացնէին զորոնքու գործը՝ բացատրեց թէ ինչպէս խորհրդահայ դրակաւնութիւնը պէտք եղածին պէս չի տարածուիր գաղթահայութեան մէջ միշտ այդ ուղղագրութեան պատճառով, ու մենք չենք կրնար մտերմանալ մեր հայրենիքին կենսայ արտայայտող եւ երգող դիրքերուն հետ:

Օտար բառերու գործածութեան մասին խօսելով — ան ալ դրակաւն պաշտօնական լեզուին մէջ — դասախօսը պատմական ակնարկ մը նետեց այդ սովորութեան վրայ, որ մուտք գործած էր կովկասահայութեան մէջ, Գ. Արծրունիի օրերէն: Պարտնիքի վիպագրութեամբ օտար մը շատ աւելի լաւ կը հասկնար «Մշակի» մէկ հեռագրական լուրը, քան Հայ մը: Դասախօսը աւելցուց, որ ատեն մը նոյն խտրող կը տիրէր նաեւ պոլսահայութեան մէջ, եւ տուաւ նմոյշ մը հարիւր տարի առաջ լոյս տեսնող Պոլսահայ թերթէ մը: Սակայն, դիտել տուաւ դասախօսը, երբ արեւմտահայերէնը հարիւր տարուան մէջ մեծ յառաջդիմութիւն է ունեցած, ան - դին՝ արեւելահայերէնը ոչ միայն այդ դէպքով սովորութիւնէն չէ հրաժարած, այլ պետական թոյլ - տուութեամբ ալ կը շարունակէ նուիրագործել զայն: Արեւմտահայերը ունին հիմա դրակաւն զեղեցիկ, ճկուն եւ զուտ լեզու մը: Ապա տուաւ նմոյշներ խորհրդահայ բառերէն, որոնց հայերէնը գոյութիւն ունի:

Դասախօսը զովասանքով խօսեցաւ այն ճիշդ մասին, որ քիչերու կողմէ Հայաստանի մէջ կը կատարուի մեր գրաբարէն առնելով վերակենդանացնելու կարգ մը զեղեցիկ բառեր, կամ բոլորովին հայկական արմատներով կերտելու նորերը: Տը - ւաւ նմոյշներ:

Դասախօսը անցաւ օտար բառերու գործածութեան արտասահմանի մէջ: Չաղկեց Եգիպտոսի, Ֆրանսայի, Ամերիկայի հայութեան անփութութիւնը՝ իր լեզուին մէջ թոյլ տալուն համար մուտքը արաբերէն, ֆրանսերէն կամ անգլիերէն բաներու: Տուաւ ծիծաղելի նմոյշներ:

Յաջորդ դասախօսութեան մը ձգելով լեզուի (արեւելահայերէնի եւ արեւմտահայերէնի) միա - ձուլման խնդիրը, ինչպէս եւ բարբառներու զուտ - միւս ու դաւաճարարութեան հաւաքման հարցը, դասախօսը երգակացուց, որ մեր ճայքը կը ինչ ունի հայրենիքի մեր եղբայրներուն՝ Հայաստանի մտաւորականութեան մը: Հետեւաբար պէտք է աշխատինք բոլորս, որ մեր լեզուն ստանայ իրեն արժանի զեղեցիկութիւնը:

Ե. Արթիւնեանի մէկ քանի հարցումներէն ետք խօսք տուաւ բժիշկ Ե. Սաթմանեան, որ իր համաձայնութիւնը յայտնելով զեկուցաբերին՝ յիշեց այն զեղեցիկ բառերը (թիւով քիչ), որոնք զրաբարէն անուններով գործածական դարձեր էին այսօր Հայաստանի գրողներուն մօտ: Ապա ըրաւ կարգ մը դիտողութիւններ եւ հաստատումներ, որոնք ոչ թ կուտային դասախօսին տեսակէտներուն:

Բժիշկը համաձայն էր միայն օտար քեթիք բառերու որդեգրումին: Հ. Աւագեան խօսք առնելով՝ ըսաւ թէ անպայման ժողովուրդը չէր, որ պիտի շինէր լեզուն կամ փոխէր զայն, այլ մտաւորականութիւնը, երբ անհրաժեշտ դատէր այդ: Ինչո՞ւ պէտք է, օրինակի համար, պահել այն գիրքը կամ գիրքը, զոր կը դնենք բառերու վերջաւորութեան, բայց չենք հնչեր:

Օտար բառերու գործածութեան առնչու - թեամբ խօսելով՝ Վ. Նաւասարդեան յայտնեց, թէ բառեր կային, որոնք պետական հրահանգով պարտադրաբար կը գործածուին սովետական բոլոր հանրապետութիւններուն մէջ: Եւ շատ չէ անոնց թիւը: Անոնց վրայ ամէն տարի կ'աւելնան որոշ թիւով ուրիշ բառեր: Այս դրութիւնը կը ձգտի պետական կենսաբան մէջ բոլոր հանրապետութիւններուն հասարակաց լեզու մը ստեղծելու, ժամանակի ընթացքին: Ասիկա որոշ ծրագրի համաձայն կատարուող շարժում մըն է եւ շատ կարեւոր՝ քաղաքական տեսակէտով: Միւս կողմէն՝ Հայաստանի մտաւորականութիւնը կը պայքարի մասնաւոր բառերէ զուրս գործածուող օտար բառերուն դէմ: Եւ կը պայքարի ուժղնօրէն: Կը տեսնենք գիրքեր, Պետհրատի տպարանէն լոյս տեսած, որոնք երբեմն շատ զեղեցիկ եւ զուտած հայերէնով մըն են զգրուած: Ապա, տալէ ետք քանի մը նմոյշներ, Վ. Նաւասարդեան արդարացուց Հայաստանի մտաւորականութիւնը, հաշուի առնելով անոր պարտաւորութիւններուն շրջագիծը:

Վերջին խօսողը, Գ. Մխիթարեան, ամփոփելով վիճարկութիւնները, ըսաւ թէ նոր ուղղագրութիւն կամ որ եւ է փոփոխութիւն կարելի էր կատարել երբ կենսաբան անհրաժեշտ կը դարձնէ: Բայց որ եւ է փոփոխութիւն պէտք է ըլլայ քանի մը մտաւորականներու կողմէ, ան ալ յաճախ հարկադրանքի տակ: Մեր պարագային՝ պէտք է ամբողջ հայ մտաւորականութիւնը, յանձին իր ձեռնհաս ներկայացուցիչներուն, ուսումնասիրութեան հրաւիրուի որ եւ է բարեփոխութեան համար: Յետոյ, խօսելով Արեղեան ուղղագրութեան մասին՝ ըսաւ թէ Հայաստանի վարիչները անհրաժեշտ դատեր էին ստիկա՝ քաղաքական նպատակներով:

Այդ ուղղագրութեամբ կը խօսէր անցեալի հետ կապը, եւ մեր հին ու արժէքաւոր հեղինակները ալ չէին կարողացուեր նորահաս սերունդէն:

Բայց, լեզուն քաղաքական ու վարչական գործիք մը չէ, այլ ժողովուրդի մը դարաւոր մշակոյթի արդիւնքը: Ծիշող այդ պատճառով ալ վերէ հրամանագրիներու միջոցներէն եւ կենսական նոյն ժողովուրդին ու անոր մտաւորականութեան:

Սուելով օտար բառերու անտեղի գործածութեան մասին, ըսաւ թէ ըլլայ Հայաստանի ըլլայ գաղութներու մէջ գորաւոր պայքարայէտք է բանալ հայ լեզուի պաշտպանութեան համար եւ օտար բառերուն դէմ: Հայերէնը ճկուն է, հարուստ եւ ընդունակ օտար բառերու համապատասխան դրակաւնելու, ինչո՞ւ անպատճառ օտար որդեգրել: Ինչ կը վերաբերի զուտ քեթիք ու մասնագիտական բառերուն, եթէ անկարելի ըլլայ անոնց հայերէն - ները գտնել, կարելի է սահմանափակ թիւով որդեգրել: Ժամանակը ուշ էր, թէ եւ առանց սպառած ըլլալու նիւթը: Հաւաքոյթը ցրուեցաւ ուրիշ երկոյթի մը կազմակերպումի մտադրութեամբ:

ԼՈՒՐԵՐ ՀԱՅՐԵՆԻՔԷՆ

(Քաղաքացիական Վարչապետի «Իզլիստիա» թերթին)

ԱՐԱՐԱՏԻ ՍՏՈՐՈՏԸ

Արարատեան դաշտին մէջ կենդանացիք են դաշտերն ու այգիները: Հայեացքը կը հրճուի զիտեղով աշնանացանի հսկայ քառակուսիներու վառ կանաչը: Աշտարակի «Շինարար» կոլտոզի վիւղատունտն ընկեր Մասթէնսեանը ամէն օր կը շրջի իր հսկողութեան ենթակայ հողերը, ստուգելով վարուցանի, պարարտացման ու այգեմշակման վիճակը: Այս տարի «Շինարար»ը 1800 սայլ պարարտանիւթ է տուած իր հողերուն: Չորս օրէն կատարեցին ցորենի եւ բանջարեղէնի զարնաւացանը եւ նուիրուեցան խաղողատունկերուն, որոնք փութած են 120 հեկտար տարածութեան վրայ: Այս կոլտոզն անցեալ տարի ունեցաւ Արարատեան դաշտի ամենաբարձր բերքը — 200 կենդինար խաղող մէկ հեկտարէն, որ ծրագրով նախատեսուածէն չորս անգամ աւելի էր:

— Այս տարի, կ'ըսէ կոլտոզի Ղարիբեանը, մենք կը քաղենք 240 կենդինար: Այդ պիտի ըլլայ մեր աշխատանքի տուրքը նոր հնգամեակին:

Համբարաշտօրէն կը տքնին կոլտոզիկները բաժնակի արտերուն մէջ: Առաջնութիւնը կը պատկանի Մասթենիկ Կարապետեանի խումբին, որ անցեալ տարի յաղթական բերք ստացաւ իր հողամասին մէջ 45 կենդինար հեկտարի վրայ, նախատեսուած 15ի տեղ: Այս տարի բոլոր խումբերը պիտի օգտագործեն անոր աշխատելու ձեւը: Բայց Մասթենիկը դո՛ւ չէ արդիւնքէն, ան եւ իրօզնականը՝ Պայծառ Յովհաննէսեան որոշեր են այս տարի 70 կենդինար ստանալ մէկ հեկտարէն:

— Եթէ բոլոր խումբերը կատարեն իրենց յանձնարարութիւնները, կ'ըսէ Պայծառը, մեր կող-

խոզի եկամուտը այս տարի կ'ըլլայ 7 միլիոն ռուբլի, անցեալ տարուան 4ուկէս միլիոնին դիմաց :

Շահեկան տեղեկութիւն մը տուաւ հաշուապահ Մարգարեանը :

Անցեալ տարի մեր կոլխոզի հովիւ ընկեր Սահակեանը 900 աշխօր կատարելով ստացաւ 90 փութ (1 փութը 16 շիլօ է) ջրբնն, 110 փութ խաղող եւ 32000 ռուբլի : Գրեթէ նոյնքան շահեցաւ այգեգործ Աւագեանը :

Այս օրերս կոլխոզականները ողբերուած կը խօսին իրենց ապագայի մասին : Հողը, որ հինգ տարի առաջ ժլատ էր ու անպտուղ, այժմ կուտայ մեղի միջին հաշուով 25էն 30 կենդինսր բամպակ, իսկ լաւ մշակուած հողամասերու մէջ երկու անգամ աւելի : Հաւաքական տնտեսութեան զարգացման առջեւ սահման չկայ : Բերքի քանակը կախում ունի մեր աշխատունակութիւնէն եւ բարեխղճութիւնէն : Այն ինչ որ մեզմէ կը պահանջէ հնգամեայ ծրագիրը, մենք կրնանք կատարել եւ կը կատարենք ժամանակէն առաջ :

որմէ խուսափած են հանրապետութեան հաստատումէն ի վեր : Երկու ծրագիրներուն ալ կատարելագոյն համաձայն են նախագահ Թրոմբն եւ Մերակոյտին վարիչ Ղէմքերը :

Թերթերը կը գրեն թէ Անդլիա եւ Պրանսս սկզբունքով համաձայն են երկու ծրագիրներուն, իսկ Ս. Միութիւնը վերապահ է եւ կ'առաջարկէ ծրագրին քննութիւնէն առաջ ուսումնասիրել Գերմանիոյ գինեթափութեան վիճակը : Ամերիկեան ծրագիրը միւս երեք պետութեանց հաղորդուած է անցեալ Փետրուարին եւ մինչեւ հիմա գաղտնի կը պահուէր : Ամերիկեան թերթերը արդէն հրատարակած են դաշնագրին պատճէնը, որ կը պարունակէ շատ խիստ տրամադրութիւններ, միանգամ ընդ միշտ գինեթափ ընելու համար Գերմանիան : Բոլոր գինեթափական կազմակերպութիւնները, ընդհանրապէս կը լուծուած պիտի մնան : Պիտի արդիւնքին ամէն տեսակ զէնքերու, ռազմանիւթի, պայթուցիկներու, զինուորական հանդերձանքի եւն. շինութիւնը եւ ներածումը, ամէն տեսակ մարտանաւերու կառուցումը եւն. եւն. : Այս բոլորը՝ ապահովելու համար աշխարհի կազմակերպիչներ : Ուրեմն չորս պետութիւններ պիտի դառնան խնամակալներ Գերմանիոյ եւ Ճափոնի, տիրաբար միջամտելով երկու պարտեայ երկիրներու ներքին գործերուն, առ նուազն 25 տարի եւ աւելի երկար, եթէ հարկ դառնան :

Սանմանադրութեան պայխարը

Վարչապետ Պ. Կուէն, որ Մարտէլ դացած էր, առջի օր երկար ճառ մը խօսելով էքսի մէջ, պարզեց երկրին վիճակը ազատագրութենէն ի վեր եւ յորդորեց «այո» պատասխանել նոր Սահմանադրութեան : «Ես չեմ ուզեր զիտնալ այժմ թէ մեզի առաջարկուած Սահմանադրութիւնը կատարեալ է, կամ թէ ներդաշնակօրէն հաւասարակշռուած է : Ինչ որ զիտեմ, այն է թէ մարդկային գործ մըն է, հետեւաբար անթերի չէ, անշուշտ, բայց իմ աչքիս ունի էական եւ հիմնական արժանիք մը, — իր գոյութիւնը » :

Պ. Կուէն շեշտեց թէ երկրին շահը կը պահանջէ քուէարկել դայն, վերջ տալու համար առժամեայ կարգուսարքին, որ երբեք ցանկայի չէ ոչ ներքին, ոչ ալ արտաքին շահերու տեսակէտով : «Չարագանց երկար տեւեց առժամեայ կարգուսարքը : Երկրին զերագոյն շահը կը պահանջէ ապահովել հաստատուն կառավարութիւն մը, որ կազմուած չըլլայ քանի մը ամսուան կամ քանի մը շաբթուան համար» :

Վարչապետը մեծ յոյս դրած է զիւղացիներուն եւ արհեստաւորներուն վրայ, երկրին վերաշինութեան համար : Կառավարութիւնը պիտի ջանայ արդիացնել զիւղական Ֆրանսան, ապահովել պարենաւորումը եւն. :

Պ. Թորէզ, համայնավար առաջնորդը, իր կարգին ճառ մը խօսելով Նիսի մէջ, պահանջեց որ Իտալիան ալ հատուցում վճարէ, ինչպէս Գերմանիան : Ինք 66 միլիոն ֆրանք կը հաշուէ Իտալիոյ պատճառած վնասները : Պահանջեց նաեւ որոշ սրբազրութիւններ կատարել Ֆրանքեիտայական սահմանադրութիւն վրայ :

Արտաքին նախարար Պ. Պիտո խօսելով իր շըրջանին մէջ (Լուա), յանձնարարեց «ոչ» պատասխանել նոր Սահմանադրութեան, «որ պիտի երկարաձգէ առժամեայ կարգուսարքը» :

Միւս նախարարները եւ բոլոր կուսակցութեանց ներկայացուցիչներն ալ կը շարունակեն պտոյտներ կատարել եւ տեսակէտներ պարզել հազարաւոր ունկնդիրներու առջեւ :

ԱնԳԱՐԱՅԷՆ կը հեռագրեն թէ թրքական պատուիրակութիւն մը ճամբայ պիտի ելլէ դէպի Զուլիգերիա, Անգլիա եւ Մ. Նահանգները, 12 միլիոն սթրլինգի կերպաս եւն. գնելու համար : Ուրիշ պատուիրակութիւն մըն ալ պիտի մեկնի տարբեր գնումներու համար :

Փիլիթի — Սիւր Ամիսէն Պ. Օ. Կիրակոսեան 500 ֆրանք կը նուիրէ Հ. Յ. Գ. Վեթերաններու ֆոնդին :

ՀԱՅԱՍՏԱՆԻ Ս. Ս. Հ. Գերագոյն Խորհուրդին նախագահութեան Ապ. 2ի որոշումով ժողովրդական գործավարներու (կոմխար) խորհուրդն այսուհետեւ պիտի կոչուի Հայաստանի Ս. Ս. Հ. նախարարներու (մինիստր) խորհուրդ եւ ժողովրդ. գործավարութիւնները՝ Հայաստանի Ս. Ս. Հ. նախարարութիւնները :

Նոյն որոշումը համապատասխան մարմինի կողմէ եղած է Մարտ 31ին Թիֆլիզի մէջ, Վրաստանի Ս. Ս. Հ. եւ Ալաբախի եւ Արթուրախի ինքնավար հանրապետութեանց համար, Ապրիլի 1ին՝ Ազրբէջանի Ս. Ս. Հ. եւ Նախիջևանի ինքնավար հանրապետութեան մէջ :

ԵՄԱՌԱԲՈՒԾՈՒԹԵԱՆ Երեւանեան ձեմարանը պատրաստած է տպագրութեան համար «Հայաստանի պտուղներու» քարտէսը, որ լիովին կը պարզէ Հայաստանի պտղաբուծութեան ներկայ վիճակը եւ կը պարունակէ նկարագրութիւնը 110 տեսակ տեղական կորիզաւոր պտուղներու, ծիրան, դեղձ, սալոր, բալ, կեռաս եւ նուշ :

ՏՆՏՐՈՒՆԻ — Թ. ՄԵՇԱՏՈՒՐԵԱՆ

Վերջին պահուն ցաւով կ'իմանանք մահը ընկեր Թաղէոս Մեծատուրեանի, որ անկողին դամուած էր ամիսներէ ի վեր : Ծանօթ էր կուսակցական եւ հանրային գործունէութեամբ, Մարգուսէն մինչեւ Պոլիս, Փարիզ, մանաւանդ Հարաւային Ամերիկա, ուր գործօն դեր կատարած է եկեղեցական եւ վարչական կազմակերպութեան մէջ : Տակաւին առիթ կ'ունենանք խօսելու իր կեանքին եւ գործի մասին :

Գրիգորապետ Միխայիլեանի

Մահուան 41ամեակին առթիւ, Հ. Յ. Գ. Մարտէլի Գրիգորապետը ենթակոմիտէին նախաձեռնութեամբ եւ հովանաւորութեամբ, Մարտէլի Երջ. կոմիտէին, հրատարակային հանդէս՝ Մայիս 5ին, կիրակի առաւօտ, Թափի Վէրի (Ռոքսի) սինամային մէջ : Բանախօս՝ Ե. ՆԱՐԴՈՒՆԻ :

ՅՆՐԵԿՈՅԹ ՊԱՐԱՀԱՆԴԻՍ

Կազմակերպուած Հ. Յ. Գ. Մ. Եթեմեզբայրեան խումբի կողմէ, հովանաւորութեամբ Եգիպտացի կոմիտէի, 5 Մայիս կիրակի ցերեկէն վերջ ժամը 3էն մինչեւ 11, Իվրիի Bains Douchesի սրահին մէջ, rue Barbès, Ivry, métro Choisy : Բանախօսութիւն եւ զեղարուեստական ճոխ բաժին : Եւրոպական պարերը պիտի սկսին ժամը 6ին : Ճոխ եւ ժամն պիւֆէ : Մուտքը 50 ֆրանք :

ԲԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՄԱՅԻՍ 1ի ԱՌԹԻՒՆ այսօր բոլոր սրճարանները եւ ճաշարանները պիտի փակուին, հանրակառքերը պիտի չբանին, թատրոնները եւ սինէմաները պիտի բացուին իրիկուան ժամը 9ին, կառախումբերու երթմանը պիտի կրճատուի, նամակատուները բաց պիտի ըլլան միայն հեռագրի եւ հեռաձայնի համար : Աշխատաւորական թափօրը պիտի կազմուի ժամը 2ին, Պատթիի հրատարակէն :

ԹէՀՐԱՆԷՆ կը հեռագրեն թէ Աարպատականի պատուիրակութիւնը, որուն կը նախագահէ վարչապետ Փէշավարի, սկսաւ բանակցել կեղր. կառավարութեան հետ : Փէշավարի միասին առած է զինեալ թիկնապահներ : Պատուիրակութեան ընտանիքներն վրայ կը հսկեն 300 ոստիկան-զինուորաներ : Պատուիրակութեան մէջ կը դառնուի նաեւ քիւրտ ներկայացուցիչ մը :

ՓԱՐԻՉԻ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԴԵՍՊԱՆԻՆ՝ Ապէցի Թաղած մնտուկը, որ երեւան հանուցեալ Գերմանիոյ Սեւ Անտառին մէջ, ոչ թէ զանձ մը կը պարունակէ, այլ շատ կարեւոր փաստաթուղթեր, համաձայն վերջին տեղեկութեանց : Այդ վաւերագրերներուն մէջ կը գտնուին Հիթլերի եւ Մուսոլինիի միջեւ փոխանակուած նամակներ եւ ուրիշ կարեւոր դաղտնիքներ :

ՍՊԱՆԻՈՅ ԿԱՅՈՒԹԻՆԸ քննելու համար, Ապահովութեան խորհուրդը 10 ձայնով որոշեց յանձնարումը մը զրկել : Յանձնարումներն պիտի մասնակցին Պրազիլիա, Չինաստան, Պրանսս եւ Լեհաստան : Պիտի նախագահէ Աւարալիոյ ներկայացուցիչը : Տեղեկագիրը պատրաստ պէտք է ըլլայ մինչեւ մայիս 30 : Ս. Միութիւնը ձեռնպահ մնաց, վերջնապէս լուսարանուած նկատելով ինչերը :

ԳՆԴ. ՏԸ ԼԱ ՌՕՔ, նախկին Հրեղէն Խաչերու հրամանատարը, մեռաւ կիրակի օր, բժշկական գործողութենէ մը վերջ : 60 տարեկան էր : Պատերազմի ընթացքին անդամ էր Փէթէնի կազմած Աղբ. Խորհուրդին, բայց, հակառակ իր հակահրեղեան եւ հակաբոլշեւիկ գործունէութեան, ձերբակալուելով Գերմանիա արտորուցաւ : 1936ին երբ «Հրեղէն Խաչը» լուծուեցաւ, Տը լա Ռօք ստեղծեց «Պրանսայի ընկերային կուսակցութիւնը», իրբեւ նշանախօսք ունենալով «Աշխատանք, Ընտանիք, Հայրենիք» զոր իւրացուց Փէթէն : Գերմանիայէն վերադառնալէ վերջ ձերբակալուեցաւ ար Կոյի կառավարութեան կողմէ եւ արտաքուտեցաւ հանրային կեանքէն, իրբեւ յայտնի ֆաշական :

Օր. ՎԻՓՈՐՈՐԻԱ ԵՏԵԱՆ ԱՇՈՏ — ԺԱՐԲ. ՍԷՐՃԱՆՆԱՆ Փարիզ, 28 Ապրիլ Ամուսնացած

ՄԱՅԻՍ 28Ը ԿԸ ՏՕՆՈՒԻ «Փրէի Ժուռնալ»-ի մեծ սրահին մէջ, Մայիս 29ի դիշերը : Պաշտօնական մասէն վերջ պարահանդէս մինչեւ լոյս :

Ա. Անարոնեանի

ԾՆՆԴԵԱՆ 80ԱՄԵԱԿԸ ԿԸ ՏՕՆՈՒԻ Լիոնի Հ. Յ. Գ. Նոր Սերունդ Միամանթօ խումբին կողմէ, այս կիրակի, ժամը 8.30ին, Salle François Coppée, 8 rue Victoire Sardou : Կը նախագահէ Պ. Յ. Վարժապետեան : Կը խօսին Տիկին Օտէթ Միքայէլեան հայերէն (Պրանսուհի Վալանտէն), Պ. Պ. Հ. Բալուեան եւ Ս. Միսլեան, կ'երգէ Օր. Մ. Տէր Պետրոսեան : Գեղարուեստական ճոխ բաժին : Կը մասնակցի Կրքոպլէն հրաւիրուած Կապոյտ Խաչի Սանուհիներու Միութիւնը որ առհմիկ տարազներով պիտի պարէ հայկական պարեր զեկա վարութեամբ Տիկին Սիսլեանի : Մուտքը ազատ է :

ՅՈՒՇԱՏԵՏՐ

ՓԱՐԻՉԻ Եգիպտացի կոմիտէն ընդհ. ժողովի կը հրաւիրէ իր բոլոր անդամները այս Ուրբաթ, ժամը 8.30ին, ընկերավարականներու սրահը, 9 rue Victor Massé, métro Pigalle :

ԻՍԻ — Հայ Կապոյտ Խաչը ընդհ. ժողովի կը հրաւիրէ իր ընկերուհիները, այս ուրբաթ, 3 Մայիս, իրիկուան ժամը 8.30ին, Խրիմեան դպրոցին մէջ : Կարեւոր օրակարգ :

ՅՐԱՆՍ. ԲԱՆԱԿԻ ՀԱՅ ՆԱԽԿԻՆ ՌԱԶՄԻԿՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԵԱՆ ՀԱՆԴԵՍԸ

Ի նպատ իր բարեկարգացող ձեռնարկներուն, այս շաբաթ դիշեր, 4 Մայիս, Hôtel George Vի զեղեցիկ սրահներուն մէջ, 31 Ave. George V, բարձր հովանաւորութեամբ եւ ներկայութեամբ Փարիզի զինուորական կառավարիչ Mr. le Général Legentilhommeի : Կը մասնակցին. — Պ. Պ. Jacques Hélianի եւ Bachichaf նուագախումբերը, իրենց vedetteներով, ինչպէս նաեւ Փարիզի տաղանդաւոր արուեստագիտուհի եւ արուեստագէտներ՝ Josette Daydé Marcel Dieudonné, Madeleine Adjémian, Assia de Busny, եւն. : Ցուցադրութիւնը Georgette Rénal տան ամառնային նորաձեւութեանց : Մրցում պարերու : Պիւֆէ, պար : Տոմսակներու համար դիմել Պ. Սարաֆեան, 22 rue de la Banque. Cent. 92-97 :

«ՅԱՌԱՋ» ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

Յովհ. Տէր Յովհաննէսեան մէկ տարեկան «Յառաջ» կը նուիրէ Պ. Չոօն Առաքելեանի, Պուաբոլմայ :

ՏԷՍԻՆ. — ՏԷՐ ԵՒ ՏԻԿԻՆ Գ. Փաիագեան շնորհակալութիւն կը յայտնեն Տէսինի Հ. Յ. Գ. կոմիտէին, Նոր Սերունդին, Կապոյտ Խաչին, Հ. Ա. Միութեան եւ Պետ. Կարմիր Խաչին, ինչպէս նաեւ բոլոր բարեկամներուն որոնք անձամբ, ծաղկեպսակով եւ մամուլի միջոցաւ ցաւակցութիւն յայտնեցին իրենց քրոջ աղջկան՝ ԱՆԱՀԻՏ ԳԱՐԱՔՈՒԶԵԱՆԻ մահուան առթիւ, Մոնպարիզին մէջ :

ETAB. Z A R E H

40ՇԻԿԻ վերաբերեալ ամէն տեսակ պիտոյք, ՍՈՐԹ ԵՒ ԿԱՇԻ, 348 rue des Pyrenées, Paris (20) :

ՀԱՅԱԿԱՆ ՄԵԾ ՀԱՇԱՐԱՆ

Յեթմեթեր ԳԼԵՄԱՆ ԵՒ ԳՕՓԱՔԵՆԵԱՆ 6 rue Maubeuge, Paris (9), Métro Cadet, Notre Dame de Lorette : Tél. TRU. 85-47

Առաջնակարգ օդի եւ ամէն տեսակ ըմպելիներ, ընտիր աղանդեր, պոլսական կերակուրներ եւ անուշեղէն : Ընդարձակ եւ օդաւտ սրահ : Ամէն երեկոյ ժամը 7էն սկսեալ Քէմանիստ ՅՈՎՀԱՆՆԷՍ, ուստի ԱԼՖՅՆԱՍ եւ երգիչ ԱՐԹԱՔԻ կը նուագեն եւ կ'երգեն հայկական եւ արեւելեան երգեր : Գոց է Զորեքարթի օրերը :

Պ Ա Տ Ր Ա Ս Տ

ՀԱԳՈՒՍՏԵՂԵՆԻ ՄԵԾ ՎԱՀԱՌԱՍՏՈՒՆ Այլերու եւ պատանիներու

ՊՕՅՅՁԵԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ

6, Rue Mulet, LYON

T. S. F.

21 rue du Soleil, կամ 50 Fg. St. Martin (tél. 78-66) ՌԱՏՈՒՅԻ առաջին կարգի գործիքներ, լուրջ երաշխաւորութեամբ եւ մեծաքանակի զիններով : Դիմել ԱՐԱՊԵԱՆ ԵՂՖԱՅՐՆԵՐՈՒ, որ իրենց 25 տարուան փորձառութեամբ լիովին զոհարուած կուտան : Մասնաւոր արհեստանոց նորոգութեան :

Le Gérant : H. AGONEYAN

Imprimerie DER AGOPIAN, 17 Rue Damesme - 13^e

Մեր հօսիքը

ԹՐԻԱՊԱՏՈՒՄ

Պոլսոյ վերջին թղթաբերը (17 Ապրիլ) զարմանազան գրոյցներ կ'արձանագրէր ուսուեթուրք յարաբերութեանց մասին:

Ընթերցողները կը յիշեն անշուշտ, — Ապրիլ 19ին հրատարակէր էինք ամերիկեան երկու գործակալութեանց մէկ հեռագիրը, որուն համաձայն երրորդ պետութիւն մը միջնորդած է, վերահաստատելու համար բարեկամական յարաբերութիւնները Ս. Միութեան եւ Թուրքիոյ միջեւ:

Այդ առթիւ կ'ըսուէր թէ խորհրդային թերթերը եւ անթերթ ալիւս չեն յարձակիր Թուրքիոյ դէմ: Իսկ Պոլսոյ «Վաթան» թերթը զիտեղ կուտար թէ հողային պահանջները «ուրիշ բան չեն եթէ ոչ կարգ մը հայ եւ վրացի քաղաքացիներու մասնաւոր հրատարակութիւնները, թէ բոլորովին սխալ է այդ պահանջները նկատել ուս պաշտօնական քաղաքականութեան մէկ արտայայտութիւնը» եւն.:

Ի՞նչ նորութիւն՝ Պոլսոյ թղթաբերէն: Կը հաստատուի որ չըջած գրոյցները Անդաբայէն հեռագրեր է «Վաթան» ի խմբագրատնոցը, Ահմէտ Էմին Եալման: Նոյն օրը այդ գրոյցները իրենց թերթերուն հեռագրեր են ամերիկացի թղթակիցները: Ահմէտ Էմին չի կրնար հաստատել գրոյցներուն ոչ ճշգրտութիւնը, ոչ ալ աղբիւրը: Բայց կ'աւելցնէ. — «Օտար չըջանալիներու մէջ այդ գրոյցները նախանշան մը կը նկատեն թէ կանգ առած են ուսուեթուրքի ցանկութեան ալիքները»:

Միեւնոյն ատեն կը հաղորդէ այլապէս շոնջալից գրոյց մը, — Անդլիոյ արտաքին նախարարը, Պ. Պէլլին հաւանաբար Թուրքիա եւս այցելէ, երբ Եգիպտոս երթայ, բանակցութիւններ կատարելու համար անդլիոյ խորհրդակցական դաշնագրի մասին:

Ուրիշ թերթեր ալ կ'արձանագրեն այդ գրոյցը, միեւնոյն ատեն աւետելով թէ անդլիական զբաղաւոր մը, «Բիւնկ ձօրձ Ե.», որ 35.000 թոն տարողութիւն ունի, մօտեւր Պոլիս պիտի այցելէ, երկու թորիխանաւերու հետ:

Այս բոլոր գրոյցներէն առաջ, «Վաթան» ի խմբագրատնոցը սրտառու էր սողեր մը կը նուիրէր ուսուեթուրք բարեկամութեան:

«Ոչ մէկ խնդիր գոյութիւն ունի մեր եւ Ռուսիոյ միջեւ: Կարգ մը բսի-բսաւներ միայն կը մքազեն մեր յեղաշրջումները մեղալուսնի շրջանին քանակագին բարեկամութիւնը: Շատ մը հայ եւ վրացի պոլիտիկոսներ տարօրինակ պահանջներ մէջտեղ մետեցին: Պաշտօնական խորհրդային աշխարհը ուշադիր եղաւ անոնց տէր չելլելու: Վարանա շրջանէ մը վերջ, ոչ մէկ լուրջ խոչընդոտ գոյութիւն ունի, որպէսզի թեականոն բարեկամութեան նամակներուն վերադառնան»:

Մինչ «Վաթան»ը լուստան կ'երեւայ եւ ցանկալի կը դանկ բարեկամութեան վերահաստատում մը, ուրիշ թերթ մը, «Թանին», երբեք չի հաւատար չըջած գրոյցներուն, եւ մանաւանդ երրորդ պետութեան մը միջնորդութեան: Եւ կը յայտարարէ, ամբարտաւան շեշտով մը.

«Տեսակցելու համար պէտք է որ տեսակցելիք խնդիր մը գոյութիւն ունենայ: Տեսակցիլը աղէկ, բայց ի՞նչ բանի շուրջ պիտի դառնայ տեսակցութիւնը: Նեղուցներուն մէջ խարի՞սի մը տալ Ռուսերուն. մեր կարգ մը նահանգները Ռուսերուն յանձնել: Թուրքիան առնի մերթելու համար անգամ չի տեսակցիր»:

Թուրք թերթը «ցնորք» համարելով հանդերձ «անպատասխանատու հայ եւ վրացի փրոֆէսէօրները» հողային պահանջները, կը կարծէ թէ Սթալին իւրացուցած է զանոնք: Հետեւաբար, կը սպասէ որ խորհրդային կառավարութիւնը «իր բերնովը մերժէ եւ հերքէ զանոնք: Եթէ ուս կառավարութեան կողմէ այդպիսի հերքում մը կատարուի, բարեք յարաբերութիւնները կրնան վերահաստատուել առանց երրորդ պետութեան մը միջամտութեան»:

Դժբախտաբար ուրիշ աղբիւրներ կը պակսին, աւելի լուստարանելու համար խնդիրը:

Հաստատումը թէ Թրքահայ Դատի պաշտպանութեան Յանձնախումբը ուշադրութեամբ կը հետեւի ամբողջ անցուղարձին, կանխելու համար նոր անակնկալներ:

Հայաստան գրութիւնները եւ հրատարակչին ցոյցերը ամէն բան չեն: Պէտք է միշտ լարուած պահել աչք ու ականջ եւ գործել, հետապնդել անընդհատ: Մանաւանդ հիմա որ Փարիզը դարձած է կեղծոն միջազգային ժողովներու: Ե.



ՉՈՐՍ ՄԵՇԵՐԸ. — 1. ԺՈՐԺ ՊԻՏՕ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐՈՒ ՆԱԽԱՐԱՐ ԾՐԱՆԱՍԻՐ

ԸՆԿԵՐ ՅՈՎԼ. ԱՄԱՏՈՒՆԻ

Յրէզնոյէն (Գալիֆորնիա) գրուած մասնաւոր նամակէ մը խորին ցաւով կ'իմանանք նոր դոյժ մը, — ԸՆԿԵՐ ՅՈՎԼ. ԱՄԱՏՈՒՆԻ յանկարծամահ (Ապրիլ 22):

Պատերազմէն ի վեր առաջին անգամ ըլլալով, Փետրուար 1 թուակիր նամակ մը կը ստանայինք, ուր ողբացեալ ընկերը տեղեկութիւններ կուտար իր կեանքի մասին: Կը դէր թէ «մինչեւ 1940 ծառայեցինք ազգին, անկէ վերջն ալ նոր կը սկսինք ծառայել մեզի: Հաղիւ կըրցանք բոյն մը ճարել մեզի համար, ուր այժմ կը բնակինք. — պղտիկ տնակ մը, ետեւը պարսկերէ կարմարութիւններով: Ամբարն եղանակին կ'աշխատիմ պտուղի պահածոններու գործարանի մը մէջ»:

Ամէն պարզայի մէջ, առողջութիւնը լաւ էր եւ միշտ կ'աշխատակցէր «Հայրենիք»ի: Զատիկին ուրբա զուարթ խօսեր է նամակադրին հետ, — արձակուած զինուոր մը, Ազատ, որ նոր վերադարձած էր Ֆրանսայէն:

Գաղաքին ամերիկեան մեծ օրաթերթը, Յրէզնի Պի հաղորդելով Ամատուսնի մահը, պատկերն ալ հրատարակած է:

Յովհ. Ամատուսնի (Աղբառան) ծնած էր Խարբերը, եւ կանուկէն Ամերիկա դադրած: Ունեցած է բեղուն եւ բազմակողմանի գործունէութիւն Կովկասի մէջ, նախորդ պատերազմի ընթացքին, իրբեւ անգամ Ապահովութեան Խորհուրդի եւ ուրիշ մարմիններու: 1919ին Պոլիս եկաւ իրբեւ ներկայացուցիչ Հ. Յ. Դ. Բիւրոյին եւ մնաց մինչեւ պարպումը, ամբողջովին նուիրուելով կուսակցական եւ ազգային գործունէութեան: Անգամ էր Պոլսոյ Գաղաք. ժողովին: Յետոյ եկաւ Փարիզ, ուր նոյնպէս կը վազէր զանազան պաշտօններ: Մասնակցած է վերջին ընդհ. ժողովներուն, եղած է անգամ Կ. Կոտիտէներու եւն.:

Այս հարեւանցի տեղեկութիւնները հազիւ թէ դադար մը տան իր երկարատեւ գործունէութեան մասին: Պիտի խօսինք առանձին:

20Բ. ՏԸ ԿՕԼ տեսակցութիւն մը ունեցեր է զուրկերիական թերթի մը հետ եւ յայտնէր է թէ նոր Մահմանադրութիւն մը կը պատրաստէ, «ընդունելի բոլորին համար»: Զօրավարը յոստես է միջազգային կացութեան մասին եւ կը կարծէ թէ «նոր պատերազմ մը պիտի պայթի Ծայր. Արեւելի մէջ, եթէր ամիսէն կամ աւելի ուշ»: (Վերապահութեամբ):

ՄԱՅԻՍ Ի 8ՈՅՑԵՐԸ ԵՒ ԳԱՂԱՔԱԿԱՆ ՃԱՌԵՐ

Մայիս 1ի աշխատաւորական տօնը խաղաղութեամբ տօնուեցաւ Փարիզի մէջ, մասնակցութեամբ աննախընթաց բազմութեան մը, 1.200.000 — մէկուկէս միլիոն: Թափորը Պատիւի հրապարակէն Նասիօն դնաց առաջնորդութեամբ Աշխատանքի Դաշնակցութեան, որուն ետեւէն կ'երթան յին համայնավար եւ ընկերավարական կուսակցութիւնները, իրենց թերթերով, եւ անհամար Միութիւններ, կազմակերպութիւններ, խմբակցութիւններ, բոլորն ալ աւուր պատշաճի խորհրդանշաններով եւ նշանախօսքերով: Գլխաւոր ազգանշանը՝ կիրակի օրուան հանրաքուէն էր, — «Այո» պատասխանեցէք: Ճառեր խօսեցան Պ. Լուի Մայեան, ընդհ. քարտուղար Մէնտիքաներու Համաշխարհային Դաշնակցութեան, Պ. Հէնաֆ, քարտուղար Մէնտիքաներու Միութեան, Պրնուա Ֆոռաշոն, քարտուղար Աշխատանքի Դաշնակցութեան, Պ. Դ. Մայէր, ընդհ. քարտուղար ընկերավարական կուսակցութեան, Պ. Մորիս Թորէզ, Լէօն Ժուէօ: Բնորոյ ալ ծանրանայով նոր Մահմանադրութեան վրայ, կը թեւադրէին վաւերացնել զայն, վերջնական հարուածը տարու համար յետադիմութեան: Թափորներ կազմուած էին նաեւ Մարսէլի մէջ (100 հազար հոգի), Լիոն (տասնեակ հազարներ), Պոնտօ (40.000), եւն.:

Մուկուայի մէջ մեծ զօրահանդէս մը տեղի ունեցաւ Կարմիր Հրատարակչի վրայ, Լէնինի դամբարանին առջեւ: Այս առթիւ կարգացուեցաւ Ապարադտ Սթալինի յայտարարութիւնը, որ կը փաստարկէր պատերազմի յաղթանակը եւ կ'ըսէր թէ. — Ս. Միութեան քաղաքականութիւնը հիմնուած է «խաղաղութեան եւ սպահովութեան, ժողովուրդներու հաւասարութեան եւ բարեկամութեան վրայ»: Յետոյ կը շեշտէր թէ նոր հնգամիս ծրագիրը «մեծ հեռանկարներ կը բանայ Ս. Միութեան առջեւ, տնտեսական ուժի ամման եւ բարօրութեան, ինչպէս եւ մշակոյթի զարգացման տեսակէտով: Ու կ'ազգարարէր միշտ արթուն մնալ միջազգային յետադիմութեան դաւերուն հանդէպ, բազմապատկելով ազգական ուժերը»:

Մուկուայի անթերթ կը ծանուցանէ թէ 400 օտար պատուիրակներ կը մասնակցէին թափորին որ ամէնէն հսկայական ցոյցն էր խաղաղութեան ատեն: Այս առթիւ ճառ մը խօսեցաւ նաեւ մանուշափ Թորոյսի, ազգարարելով. — «Միջազգային յետադիմութեան ուժերը նորէն դուրս կը վերցնեն, կը փորձեն խախտել ազատասէր ժողովուրդներու գործակցութիւնը խաղաղութեան եւ բարեկամութեան համար»: Հանդիսութիւնը տեւեց 7 ժամ:

Պերիլի մէջ քանի մը հարիւր հազար բանուորներ կարմիր մեխակներ դրած իրենց լամբակներուն վրայ, շրջեցան քաղաքին աւերակներուն մէջ, դաշնակց պետութեանց դրօշներով:

Աթէնքի մէջ ձախակողման հոտանքները թափոր մը կազմելով բողոքեցին արքայականներու եւ Անդլիացիներու բռնութեանց դէմ:

Մատրիսի մէջ, ճիշդ կէս դիշերին ուսմբ մը պայթեցաւ զօր. Ֆրանքոյի հոտանքին պատկանող հաստատութեան մը դրան առջեւ: Հոռմի մէջ աւտոմանակներով եւ ձեռնառուներով զինուած հինգ զաւաղիւրներ դրանելով անթերթը, Փաշալեան քայլերը հնչեցուցին երբ վայրկեան: Պերիլի մէջ հազարաւորներ ողջունեցին ընկերավարական վարչապետը, միեւնոյն ատեն պահանջելով հեռացնել «մարդասպան Ֆրանքոն»: Թրիւսի մէջ աւելի քան 50.000 Եուկոսպաներ թափոր մը կազմեցին: «Կեցցէ թիթօ, կեցցէ Սթալին» ազգակեցիկ: Թեհրանի մէջ ալ պարսիկ բանուորները ցոյցեր կատարեցին, իսկ Թէլ Ախլի մէջ (Պաղեստին) հրեայ համայնավարները կարմիր դրօշներ պարզեցին, Լէնինի եւ Սթալինի պատկերներով:

Չորսերու ժողովը

Պ. ՊԻՏՕ ՀԵՌԱՋԱՅՆՈՎ ԿԸ ԽՕՍԻ ՆԱԽԱՐԱՐ ԾՐԱՆԱՍԻՐ ԶԵՏ

Չորսերու ժողովին վեցերորդ նիստին մէջ, Մ. Նահանգներու պատուիրակը առաջարկեց անմիջապէս 15.000ի զեղչել Աւստրիոյ ամերիկեան անդլիական, Ֆրանսական եւ խորհրդային զինուորներուն թիւը: Այս առթիւ բացատրեց թէ երբ Աւստրիան ամբողջովին պարպուի, այն ատեն Անդլիա եւ Ամերիկա պիտի կրնան իրենց բանակները քաշել Իտալիայէն: խորհրդային փոխ - պատուիրակը, վիշինակի մերժեց Աւստրիոյ եւ Իտալիոյ խնդիրները միացնելու առաջարկը եւ պնդեց զբաղիլ միայն իտալական դաշնադրով: Ամերիկեան ազգիւրներու համաձայն, այժմ Աւստրիոյ մէջ կան 15.000 ամերիկեան, 15—20.000 Ֆրանսական, 30.000 անդլիական եւ 150 հազար խորհրդային զինուորներ:

Ժողովը մերժեց Աւստրիոյ պահանջը՝ հարաւային Թիրոլի մասին որ նախորդ պատերազմէն ի վեր կը պատկանի Իտալիոյ: Ամերիկացիները կը պնդեն որ Թրիէսթէն մնայ Իտալիոյ ձեռքը, քանի որ բնակչութեան 70 առ հարիւրը իտալացի է, հազիւ 30 առ հարիւրը սլաւ եւ ուրիշ ազգեր: Միեւնոյն ատեն կ'առաջարկէն միջազգային յանձնաժողով մը կազմել նաւահանգիստին համար: Այժմ սկսած են զբաղիլ Պալքանեան դաշնագրիներով:

Պատմութիւնը կը կրկնուի

Ա. ԽՆԻՊՅԵԱՆ (Խնիփ-Ապեր)

(ՄԱՀՈՒԱՆ ՏԱՍՆԱՄԵԱԿԻՆ ԱՌԹԻԻ)

ԺԸՆԵՒ — Կլանուած հայկական պահանջներու իրականացման անհամբեր սպասումովը, թե- բեւ մեղմէ կը վրիպի՝ համաշխարհային մարդին մէջ տեղի ունեցող պատմական իրադարձութիւններու իրական արժէքը :

Այս իրադարձութիւնները՝ թէեւ կը կատարուին յամբար եւ այդ իսկ պատմաբանութիւնը դժուար կ'ըլլայ անոնց ըմբռնումը, սակայն իրողութիւն է որ տեղի կ'ունենան անայլայ կանոնաւորութեամբ մը :

Մտաւորաբար հազար վեց հարիւր տարի առաջ ալ նման պատմական իրադարձութիւններ տեղի ունեցան, երբ հռոմէական կայսրութիւնը, Գերմաններու յարստեւ գրոհին առջեւ, իր մակա- նը փոխանցեց ուրիշ ձեռքերու եւ երբ Բիւզանդիոն ստացաւ կայսրութեան ժառանգութիւնը իր բոլոր ծանրութեամբը :

Մինչեւ իր վերջնական անկումին օրը, մայիս 1453, ու թէեւ կազմուած առաւելագոյն ոչ — Հռոմ- մայիցի ժողովուրդներու զոյգըոյն ապա միաձոյժ ամբողջութեանէ մը, Բիւզանդիոն ինքզինքը նկա- տեց միշտ «հռոմէական կայսրութիւն» մը, իր- բեւ շարունակութիւնը Հռոմի մը :

Մինչեւ թ. դար՝ Բիւզանդիոն ինքզինքը նկա- տեց Հռոմի յաջորդը ոչ միայն բարոյական մար- դին մէջ, եւ անոր շարունակութիւնը, այլեւ քա- ղաքանի ու աշխարհակալական իր ձգտումներովը ուղեց արեւմուտքի մէջ խաղալ Հռոմի դերը, առանց նկատելու որ այլեւս բոլորովին արտա- կեղծուի դերը մը ունէր եւ թէ առաւելագոյն արեւ- մուտքի կայսրութիւն մըն էր՝ քան արեւմտեան : Ան՝ այսպէս մինչեւ թ. դար եւ անկէջ վերջն ալ մասամբ, վատնեց իր լուսազոյն ոյժերը, վերահաս- տատելու ու պաշտպանելու համար իր հռոմէա- կան իրաւունքները արեւմուտքի մէջ : Մինչդեռ՝ կացութեան աւելի պայծառ ըմբռնում մը իրեն պիտի թոյլատրէր անվիճելի գերակշռութիւն մը ձեռք բերել՝ երկար ատենուան համար, Արեւելքի մէջ, ընդունելով արեւելեան իրական կայսրու- թեան մը դերը : Իսկ Հռոմի անուան համարը այնքան զօրաւոր էր որ, Հայաստանի հետաւոր ձորբեքն եկող կայսրերն անդամ շարունակեցին խաղալ «հռոմէական կայսրութիւն» :

Այսօր նման տեսարանի մը ներկայ կ'ըլլանք : Քսանդրինգ տարուան ընթացքին, գերմանա- կան կրկնակ գրոհներուն առջեւ, Ալպիոն՝ իր հա- մաշխարհային կայսրութեան մականը կ'ուզէ փո- խանցել նոր Բիւզանդիոնի մը, Ամերիկայի Ա. Նա- հանգներուն : Ան կը զգայ իր կրած խոր ցնցումնե- րուն հետեւանքները, որոնք զինքը դեռ թէ անկա- բող կը դարձնէ միակը տանելու հսկայ կայսրու- թեան մը ընդ : Եւ ինչպէս Հռոմի՝ իր սնուցած Բիւզանդիոնին կանցրէր մականը, Ալպիոնն ալ կը փորձէ իրմէ սերտ Անգլիսաքսոն Ամերիկայի փոխանցել, «եղբայրական» միութեան մը մէջ, իր կայսրութեան մականը :

Չըրչիլի վերջերս կատարած կրկնակ առաջար- քները այս կը թելադրէին, ոչ աւելի ոչ պակաս : Անգլիսաքսոն կոչուած Ամերիկայի ալ, Բիւ- ղանդիոնի նման գոյնգոյն ժողովուրդներու միա- ձոյժ կայսրութիւն մը կը ձեռնարկէ : Ամերիկայի ալ Բիւզանդիոնի նման՝ ցարդ կը պարծենայ շարու- նակութիւնն ըլլալ անգլիսաքսոն ցեղին, թէեւ հոն գտնուին խոշոր համեմատութիւն մը օտարա- կաններու :

Չըրչիլի ճառերուն եւ առաջարկներուն պէտք չկար, նշմարելու համար թէ՛ յամբար բայց հաստատաբար, Ալպիոն իր մականը կը փոխանցէ Ամերիկայի : Բնական է ասիկա պիտի չկատարուի մէկ օրէն միւսը, մէկ տարիէն միւսը : Հռոմի ալ իր մականը Բիւզանդիոնի չփոխանցեց մէկ օրէն միւսը : Այլ քանի մը սերունդներու ընթացքին, յամբար կատարուեցաւ փոխանցումը : Մնայէս որ, երբ Հռոմի վերջին կայսր, Ռոմուլուս Օկտա- սուլուս, 476ին դահէն հրաժարեցաւ, արդէն մա- կանը անցած էր Բիւզանդիոնի, Գ. դարէն իսկ :

Նման պարագայ մը եւս կը պատահի այսօր Ալ- պիոնի եւ Մ. Նահանգներուն միջեւ եւ եթէ մենք կը տեսնենք այդ փոխանցումին առաջին քայլերը, քանի մը սերունդներ վերջն է որ ան կատարելա- պէս իրականացած պիտի ըլլայ :

Մինչ այդ տակաւին ինչ փոթորիկներ պիտի գան կրկին ցնցել սա խեղճ Եւրոպան, ուր կարծէք ճակատագրուած է որ ոչ մէկ կայսրութիւն պիտի կրնայ երկարատեւ կեանք ունենալ :

Աշխարհի խաղաղութիւնը ապահովելու հա- մար, նախագահ Բոդլիլթ կ'ուզէր որ այս դանդաղ փոխանցումին մասնակցի նաեւ Ս. Միութիւնը, Ալպիոնի համաշխարհային կայսրութիւնը բաժնե- լով երկու ժառանգորդներու միջեւ, արեւելք եւ արեւմուտք : Ան այսպէսով կ'ուզէր խուսափիլ Բիւզանդիոնի սխալէն : Իր այս ծրագիրը կէս մնաց իր մահովը : Բոդլիլթի յաջորդները, կարծէք զըլ- խիկոր կը նետուին Բիւզանդիական սխալին մէջ, իրենց վերապահել ուղելով ժառանգութեան ամ- բողջ իրաւունքը : Այս բանը Ալպիոն ուրախու- թեամբ կը զիտէ, որովհետեւ այս հակամարտու- թիւնը պահ մը երկարել պիտի տայ բաժանումին սրայմանումը : Որովհետեւ պէտք է միշտ խորհիլ

Հայ մանկական գրականութեան զարգացման պատմութեան մէջ իր ուրոյն եւ պատուաւոր տեղն ունի նշանաւոր առակախօս բանաստեղծ Ալթարէկ Մնկոյեանը (Մնիփ-Ապեր), որին վիճակեց ապրել նաեւ խորհրդային իշխանութեան պայմաններում եւ դառնալ սոցիալիստական մեր երկրի պայծառ ու կենսուրախ մանուկներին սիրելին, նրանց դե- ղարուեստական դաստիարակներին մէկը :

Գրական ասպարէզ ինչնելով անցեալ դարի 90ա- կան թուականներին, Մնկոյեանը հէնց սկզբից հանդէս եկաւ՝ որպէս աշխատաւոր ժողովրդի հա- րազատ զաւակ, մայր ժողովրդի շահերին ծառա- յելու, նրա վիշտն ու տառապանքը երգելու, մա- նուկ սերնդին բարոյականութեան եւ առաքինու- թեան վեհ ըմբռնումներով դաստիարակելու խնդ- րով : Աշխատաւոր ու չարքաչ զիւղացու ծոցից ե- լած՝ Մնկոյեանը իրրեւ հայ զիւղի զիտակ, նրա կեանքի ու սովորութիւնների, վարք ու բարքի, պատմութեան եւ առօրեայի իրազեկ, ոչալիստ էր իր էութեամբ եւ արտայայտչական միջոցներով :

Կարճատեւ որոնումներից յետոյ Մնկոյեանը, սակայն, շուտով զգաց, որ իր կոչումը մանկական գրականութեան մէջ է, ուստի եւ իր գրիչն ու կեանքը ամբողջովին նուիրեց հայ մանուկ սերնդի գեղեցուեստական դաստիարակութեան զործին :

Նրա ստեղծագործական դիմանկարը ձեւաւորու- ցեց յատկապէս այն շրջանում, երբ նա հանդէս եկաւ Ստ. Լիսիցեանի հրատարակութեամբ եւ Յ. Թումանեանի մօտիկ աշխատակցութեամբ լոյս տեսնող «Հասկեր» մանկական ամսագրում : «Հաս- կեր» էջերում Մնկոյեանը ծաւալեց մի ահտիւ ստեղծագործական աշխատանք, որի ընթացքում նա գրել է պարզ ու անպաճառ երգեր, խորիմաստ առակներ (ինքնուրոյն եւ թարգմանական), գեղեց- ցիկ ու զբաւելի հէքեթներ, համով - հոտով պատ- մուած քններ, որոնք այնուհետեւ հեղինակի համար մշտական ու փառաւոր տեղ նուաճեցին մայրենի լեզուի դասադրեքում («Հաւասեր», «Գասըն - կեր» եւ այլն) : Մնկոյեանը միանգամից հաւասարի իրաւունքով կանգնեց այդ ասպարէզի խոշորագոյն վարպետ Թումանեանի եւ այնքան ժողովրդական Ղ. Ալաշանի կողքին եւ նրանց հետ միասին կազ- մեց հայ մանկական գրականութեան փայլուն ե- ուսաստեղութիւնը :

Մնկոյեանն ամենից առաջ մանկական լիրիկա- յի (քնարերգութիւն) վարպետ է : Մանկական հա- սակի հասակային, գեղեցիկ պատկերաւորու- թեան, յուզական յագեցումով թեան(?) հնչել նմանատառութեան, ու յանգւորման շնորհիւ նրա բանաստեղծութիւնների մեծ մասը («Մեղու», «Միժեռակիւն», «Ձուկը», «Ձեռ Պապին», «Նորիկ գեղձուհին», «Լորիկը» եւ շատ ուրիշներ) ոչ մի- այն հեշտութեամբ բերանացի են արուել ընթեր- ցողների կողմից, այլեւ մեր մի շարք երաժշտա- պէսների (Ս. Մելիքեան, Ա. Մանուկեան, Մ. Միրզոյեան, Գ. Ղազարեան եւ այլք) կողմից ձայ- նագրուել են ու մտել երգարանների մէջ : Այդ բա- նաստեղծութիւններում Մնկոյեանը բուռն սէր ու հետաքրքրութիւն է արթնացնում ինչպէս բնու- թեան ու կենդանական աշխարհի, նոյնպէս եւ զբը- բի ու աշխատանքի նկատմամբ :

Մնկոյեանի ստեղծագործութիւններում կայ նաեւ քաղաքական երգիծանքը, որ զերգանցա- պէս ուղղուած էր ցարական բիւրոկրատիայի դէմ : Այդ բանն առաւել ուժգնութեամբ երեւան է եկել նրա առակագրութեան մէջ, որ հանդիսանում է Մնկոյեանի ստեղծագործական հիմնական տարե- րը : Մեծ ուշադրութեամբ ուսումնասիրելով միջ- նադարեան հայ առակախօսներին (Մ. Գոչ, Վ. Ալեկցի), խորապէս իւրացնելով մեր ժողովրդա- կան բանն ու բանը՝ նա մեծ չափով հարստացրեց ու զարգացրեց հայ ինքնուրոյն առակագրութիւնը՝ դանախով նրա անդուզական ներկայացուցիչը : Ոչ միայն բովանդակութիւնը, այլեւ պատկերնե- ր ստեղծելու արուեստը, զործող անձանց ձայնա- նմանութիւններով ու նմանատառութեամբ բնա-

թէ երբեք սրաի թեթեւութեամբ չէ որ ծեր կայս- րութիւն մը, նման ժառանգութիւն մը, ըլլայ Հռոմի մը թէ Ալպիոնի մը, կը ձգէ իր երկտասարդ ժառանգորդին :

Ուրեմն մարդկութեան խաղաղութիւնը կապ - ուած է երկու մրցակիցներուն ցոյց տալիք իմաս- տութեանը : Մանաւանդ Մ. Նահանգներուն, կա - ցութիւնը իրապէս ըմբռնելու կարողութեանը :

Եթէ այս վերջինը շարունակէ մնալ բիւզանդ - դական սխալին մէջ, մարդկութիւնը պէտք է սպա - սէ տակաւին երկար տարիներ, անորոք եւ յեղյե - դուկ կացութեան մը յառաջ բերելիք տուալտանք - ներով : Մինչեւ որ, ինչպէս Բիւզանդիոն նորա - ծագ արարական վտանգին առջեւ ըմբռնեց, թէեւ ուշ, իր դարաւոր սխալը, նոյնպէս ալ Մ. Նահանգ - ները ըմբռնեն իրենց այսօրուս սխալը :

Ոչինչ կայ ուրեմն նոր արեւուն տակ եւ պատ - մութիւնը մշտնջենական կրկնութիւն մըն է : Երա - նի՛ թէ մարդիկ օգտուին անոր դասերէն :

ՊԵՐՃ

գրելու հմտութիւնը, ինչպէս եւ հնչեղանական կո - միզմը նա իւրացրել է հայ Փոլիկորից :

Այս սեռի գծով նրա ուսուցիչն է եղել նաեւ ակնաւոր ուս առակախօս - բանաստեղծ Ի. Ա. Կոլովը, որից նա կատարել է բազմաթիւ թարգմանութիւններ : Բայց Կոլովի եւ Մնկոյեանի միջեւ ոչ միայն թարգմանական կապ գոյութիւն ունի, այլ նաեւ գրական - ստեղծագործական շփում : Հայ հեղինակն իրրեւ առակախօս մեծապէս աշակերտել է Կոլովին, իւրացնելով նրա գրելա - կերպը եւ մի շարք առակներ գրելով նրա հետեւո - ղութեամբ :

Կոլովից բացի, զեռ եւս մինչ խորհրդային շրջանում Մնկոյեանը սիրել ու դնահատել է նաեւ Պուշկինին, Ժուկովսկուն, Նեկրասովին, Կոլցո - վին, Նիկիտինին եւ ուսա այլ հեղինակներին, որոնց երկերից նա կատարել է զգալի քանակութեամբ թարգմանութիւններ, փոխադրութիւններ՝ կրելով ուսա գրականութեան բարեբարագընցութիւնը : Մն - կոյեանի համար նոյնքան թանգ ու հոգեհարազատ հեղինակ է եղել նաեւ ուկրայական յայտնի բա - նաստեղծ, յեղափոխակ-ժողովրդավար Տարաս Շեչենիօն, որի ծննդեան 100ամեակի առթիւ, զեռ եւս 1914 թուին նա գրել է մի յողուած եւ տպագրել «Հասկեր»ում :

Գրական հարուստ ու բազմերանգ այսպիսի ժառանգութեամբ է, որ Մնկոյեանը ոտք դրեց սոցիալիզմի դարաշրջանը : Նա մեր անցեալի ժո - ղովրդավար մտաւորականների այն սպինի ներկա - յայտնիչներէ մէկն էր, որ ջերմօրէն ողջունեց Հոկտեմբերեան Սոցիալիստական Մեծ յեղափո - խութիւնը եւ իր գրիչն ու կեանքը անվերապահօ - րէն նուիրեց սոցիալիզմի համար մղուող պայքա - րին, մեր աճող սերնդի կոմունիստական դաստիա - րակութեան զործին :

Մորհրդային շրջանում զգալիօրէն ընդարձակ - ւեց Մնկոյեանի, չէր ժողովրդի ամենայն շրջան - ներում աւելի զանդուածային Մնիփ - Ապր ստեղ - ծագործական տեսադաշտը : Նրա գրիչը դարձաւ բազմապիսի ու հրատապ հարցեր շօշափող եւ բեղմնաւոր. առանձնապէս ուշադրաւ են նրա պոէմները («Չորս ազգի մայրեր — չորս ազգի մա - նուկներ», «Չորագէսի երգը», «Տրամվայը Երե - նուկներ», «Պիտներ Քաջը» եւ այլն), որոնք ման - կա - պատանեկան հասակի ընթացողներին տողո - րում են սոցիալիզմի շինարարութեան յաղթական պայքոսով, միջազգայնութեան խորհրդի հայրենա - սիրութեան ոգով : Այդ կարգի նրա լուսազոյն եր - կերից է նաեւ «Մեծ Հոկտեմբերը», որի մէջ Մնիփ - Ապեր պատմում է րուշեւիկեան կուսակցութեան ղեկավարութեամբ ցարիզմի եւ բուրժուազիայի դէմ պրոլետարիատի մղած հերոսական կռուի ու յաղթանակի մասին :

(Ս. Հ.)

ԳՐ. ՍՍՐԳՍԵԱՆ

«Արեւելեան Ըմպեղարան»

Ոչ մէկ մակղեր իր ներկայացուցած հաստա - տութեան բնոյթը այնքան հարազատօրէն չի ցու - ցադրել, չի խտացնել որքան «Արեւելեան ըմպեղա - րանը» : Վայրը, տէրը, յաճախորդները, ասելի եւ անասելի բառերով խօսուած լեզուները, բարբառ - ները, թղթախաղը եւ հանրամասնօթ նարտը, ժխո - րը եւ մանաւանդ ուստի եւ ջուրակի ընկերակցու - թեամբ երգուած դազէները եւ շարժիները, իրա - պէս թրքական կամ արաբական սրճարաններու կենցաղը, միջնորոտը կը ներկայացնեն ապշեցու - ցիլ ճշգրտութեամբ :

Հայաշատ թաղին կեդրոնը, խաժակ ու սեւակ, թուրքի եւ սպիտակ խումբ — խումբ հայ փոքրիկներ ինքնագոհ շարժումներով, զուարթ կանչերով կը զրօնուն : Այս կամ այն դրան առջեւ, մայրիկն ե - զերքը, հայ մամիկներ եւ կիներ, աթոռներու վը - րայ նստած կամ ոտքի վրայ, ո՞վ կրնայ դուշա - կել թէ՛ ինչ նիւթի շուրջ առատօրէն կը շաղա - կատան : Փողոցին անկիւնը, հնամենի տան մը կեանալարիկը, արեւելեան ըմպեղարանն է : Դրան առջեւ բոպէ մը տնտնալէ վերջ ներս կը մտնեմ : Մտաւորապէս տանեւեթթ մեթթ երկայնք եւ 7 մեթթ լայնքով, խոնաւութեանէ, ծուխէ մըլո - տած, աղտոտած, սեւցած պատերով սրահը ա - ռանց պատուհանի արօտ կերպով լուսաւորուած է մեծկակ դրան բացուածքէն եւ դիմացի ձեղունի ապակեայ աղտոտած լուսանցքէն ներս խուժող լոյսի շեղբերով :

Տօնական օր է, եւ իրիկնամուտ : Այլ ու ձախ շարուած սեղանները գրաւուած են : Մուկիկն կը խաղան թուղթ, նարտ եւ կամ բար - ձրաձայն կը վիճարանին զանազան նիւթերու շուրջ : Դիմացը, սեղանին առջեւ զինիլ բաժակ - ներ պարպելով քանի մը ինքնակոչ երգիչներ թուրքերէն եղանակ մը կը «թրթոցանեն» : Մի - ջանցքը, հոս, հոն, խումբ — խումբ, խոնոլուած՝ խաղացողները, ղիտողներու, անխուսափելի հե - տաքըրներու բազմութիւնով մը :

Կը վիճին, կը խաղան եւ կ'ըմպեն, ախտազին նուիրումով : Բազմութեան մէջ կը ջանած հայեացք կեդրո - նացնել : Աչքերուս առջեւ կը ցցուի, ըմպեղարանի Մալաթիացի տէրը, պարկեշտ եւ անմամ, նիշար

Պրպտումներ

Հաղիւ վերջացուցած Կ. Պետուշի «Կը փըն - տուելին» որ կը յանձնարարէր թղթատել Հայկազեան բառարանը, գտնելու համար յետադիմականները, «յառաջդիմական»ը սկսաւ միտքս նեղել:

Գրադարանիս մէջ, բաւական փնտռելէ վերջ բառադիրքը, յիշեցի թէ պատերազմէն առաջ փոխ տուած էի բարեկամի մը եւ չար բախտէս, այդ բարեկամս Չատկի արձակուրդի մեկնած էր: Ծուռ- շըս առի ուրիշ բարեկամի մը տունը եւ առտուն կանուխ գինըը գտայ անկողնին մէջ:

Ձիս տեսնելուն, «Սէր ըլլայ» մը փախցուց բերնէն: Բացատրեցի այցելութեանս նպատակը: Վայրկեան մը կեցիր, ըսաւ, հոս փոխադրուելէս ք վեր, դիրքերս մտաւոր դրուած են, ի՞նչ ընեմ, եղբայր, սենեակս շատ պզտիկ է, տեղ չկայ:

Քանի մը վայրկեան վերջ, փոշիի եւ մամուռի մէջ կորսուած գիրք մը դրաւ ձեռքս: Էջերը իրարու ետեւէ սկսայ արագ արագ դարձնել եւ ճիշդ փնտրած բառիս համանակին էջը երբ գտայ, ամբողջութեամբ փճացած էր: Խոնարհութիւնը կարծէք մասնաւորաբար այդտեղէն սկսած էր կրծել:

Ո՛ր կրնայի դո՛հացում ստանալ, եթէ ոչ հայկականգրատուն մը: Գրատան առջեւ հասնելով, կը տեսնեմ խուռ մը մարդիկ որ դուրս կ'ելլեն, յաճախորդներ կը կարծեմ եւ կ'ուրախանամ մտքս թէ այդքան յաճախորդ ունեցող առեւտրականը պիտի բարեհաճի անշուշտ երկու վայրկեանի համար տրամադրել բառարան մը, (վերջէն կ'իմամ - նամ թէ յաճախորդներ չեն եղեր, այլ դրատան տիրոջ բարեկամները): Հարցում - խնդրանքիս պատասխանը կ'ըլլայ ժխտական: Պատերազմէն ք վեր թուղթի տառնապ տիրելով, դիրքերն ալ սկըսած են սեւ շուկայի ճամբան ընել: Վերջապէս կակուղնալով գրատան տէրը կ'ըսէ, - Եթէ կ'ուզես կրնամ գտնել, բայց սարսափելի սուղ: Ինչքն ալ նախկին գրագէտէ մը պիտի գէշ որ առօրեայ ապրուստը հոգալու համար, ստիպուելի է դիրքերը քիչ քիչ ծախել: Կը բացատրեմ թէ գնելու համար չէ, այլ «յառաջդիմական» բառին ...

Բարեկամ, յառաջդիմական բառը նոր բառ է, նախկին իմաստը չունի այլեւս, ի՞նչպէս կ'ուզես որ Հայկազեան բառարանին մէջ գտնես, քանի որ հրատարակուած է գիրքը հազար ... Կը տեսնե՞ս թուականն անգամ սկսած եմ չիշել, այնքան հազուադէպ դարձած է այդ դիրքը: Բայց դո՛հացում տալու համար քեզի, կրնամ յանձնարարել բարեկամ փրօֆէսորի մը որ ձեռնարկած է հին եւ նոր բառերու ստուգարանութեան, լայնածաւալ գիրքի մը կազմութեան: Մէկ պայմանով, այդ բառին երեսէն շահած դրամիդ հարիւրին յիսուելը ինձի պիտի վերապահես:

ու միջհասակ Ամուսն, համեստ արտաքինով, անխորժ յուսախաբուութիւններու տուայտանքէն ընկճուած, սակաւախօս՝ անհազորդ դիմապիծով: Կարծես սրահին մէջ ներկայ է միայն իր մարմնական գոյութիւնը զգացնելու համար: Ամէն անգամ որ զինք նշմարեմ, ինձի կը թուի թէ երեսակա - յութեամբ, մտովին կ'ապրի իր ծննդավայրը, կը տեսնէ արեւազեղ Պապ Ուխտին, կը ճաշակէ Մալթիոյ արեւահամ ծիրանը, կարօտով կ'երազէ սրտին պայպիլը: Անշուշտ դժկամութեամբ կը համակերպի անհրապօր իրականութեան: Եւ միշտ մտադրաւ, կ'ակնկալէ ու կ'երազէ, կ'երազէ ու կ'ակնկալէ ...

Հոս են Կեսարացի, Սարբերդցի, Մալթիացի, Կարնեցի, Հայաստանի եւ Փոքր Ասիոյ նահանգներու եւ դաւառներու արմատախիլ հայ ժողովուրդի մնացորդաց ներկայացուցիչները, համեստ մարդեր, արհեստաւորներ, - դերձակ, կոշկակար, որմնադիր, հիւսն եւ ուրիշներ, որակեալ բանուորներ, շրջում վաճառողներ եւ անգործներ, զով զովի համախմբուած, «ժամանակը սպաննելու», զայն ունայնորէն վատնելու համար: Մանրանկար միջավայր մը, հատուած մը մեր հաւաքական կեանքէն, խայտաբղէտ, կենսունակ եւ պսպրողուն: Անհասկնալի, անբացատրելի երեւոյթ մը, որ տարիներու ընթացքին մնացած է անփոփոխ: Նոյն ողին, նոյն մթնոլորտը միօրինակ եւ կայուն: Երկու սեղաններու միջեւ աթոռի մը վրայ կը նստիմ:

«Սենդ» Օհանը, «գաղտնի ոստիկանը» խրատելով կը սաստէ:

Կեանքը լաւ ապրելու, օրը զուարթացնելու լաւագոյն եղանակը դո՛հունակ ժպտիլն է, կը հասկնամ, ժպտէ, երեսը միշտ ժպտով պընէ, միամիտ մի՛ ըլլար, սիրող անարժէք հնչուողներով միտառապեցներ: Ժպտէ կամ հեռացիր առջեւէս, ես այստեղ չեկայ երեսիդ ցաւազար տուրտանքը դիտելով օրս պղծելու եւ դինիս պղտորելու - Սահակ, դինի մը տուր: Ինձի խնդր Օհան կ'ըսեն, ապուշները - եթէ ես խնդ եմ, հապա դուռ ի՞նչ ես: - Ես «գաղտնի ոստիկան» եմ:

Գողմարիկ դիմադիրժով փոքրիկ աղջիկ մը թըղթախաղով գրաւած հօրը՝ աղբորսազին շեշտով մը կ'ըսէ ... Բարձր մաման քեզի կը սպասէ, պիտի ճաշենք, անօթի եմ ...

ՕՇԻՆ ԵՐԱՆԳՈՒՆԻ

Բարեկամ - փրօֆէսորին կը դիմեմ: Սեղա - նի մը առջեւ, մխրճուած էր թուղթերու մէջ, անտիպ բառերի մը հրատարակութեամբ զբաղած: Ծիշող ուզած բառիս վրան էր արդէն: Ստուգարանութիւնը չէր վերջացած տակաւին, հարկ էր կարգ մը պրպտումներ եւս կատարել, բայց հակառակ ատոր կըցաւ քանի մը տեղեկութիւններ տալ: Ըստ իրեն, «յառաջդիմական» բառը ծնունդ առած է առաջ եւ դէմք բառերէն որ միանալով կը նշանակէ առաջին առթիւ դէմք փոխել: Կարգ մը ան - յայտ գիտնականներու կարծիքով, յառաջդիմականը պզտիկ դէմք ունեցողի, - այսինքն պզտիկ դըրուիս - բացատրութիւնը կուտայ, քանի որ ալ եւ իկ մասնիկները մեր մէջ փոքրացուցիչ հանգամանք կը ներկայացնեն եւ դիմն ալ, ինչպէս ըսի, դէմք բառէն առաջ եկած կը կարծուի:

Ուրիշ դիտնական մը կը պնդէր թէ, դէմք բարդուելով, քանի որ էն իի լծորդ է, դարձած է դիմական, որ կը բացատրուի յոռաջ բառին կցելով, առաջին դէմքն ալ, նոր ուղղադրութեամբ դի փոխուելով եւ տեղի տալով նորին, եղած է դէմ (լատիներէն թէմքո բառին կրճատումը կամ արմատը) բունդներ, այսինքն առաջին ձայն բունդներ:

Փրօֆէսորը տակաւին պիտի շարունակէր, երբ դուրսու առած դուրս ելայ, դիրքերու եւ բառերու տեղատարափէն: Վերջին վայրկեանին յիշեցի տեղ մը կարդացած ըլլալ բացատրութիւն մը յառաջադէմ բառի մասին, յառաջի դէմ ակններու կազմակերպութիւն իմաստով, բայց ո՛ր, կարելի չեղաւ վերգտնել: Ի՞նչ զուր շարժարուեցայ ... Եւ վերջապէս օրոշեցի նամակ մը գրել, որ ամէնէն կարճ ճամբան էր, «Ներգաղթող Հայերու տեղադրման կոմիտէին», լուսարանութիւն խնդրելով:

Նամակս զրկելէ քանիչոքս ժամ չանցած, պատասխանն ստացայ Փարիզէն, հետեւեալ մակագրութեամբ: - «Սիրտ գաղտնի»: Նամակը կը սկըսէր «յարգելի Հայրենակից»ով եւ կ'ըսէր թէ կառավարական զաղանքները առ այժմ կարելի չէ հրապարակել, մանաւանդ դիւանադիտական ներկայ պայմաններուն մէջ, իսկ հակառակ ատոր, եթէ կը փափաքէի նամակ մը գրել, ուղղակի այստեղի կազմակերպութիւններու դիտու վրայէն, թոյլատրելի չէր իբրեւ Հայ եւ այդ տարրական գիտելիքները պէտք էր արդէն մինչեւ հիմա սորված ըլլայի: Կը խնդրուէր եւ կը պահանջուէր միանգամայն, շրջանիս Միութեան խողովակով դիմել, Երջանայինին, Երջանայինն ալ կեդրոնա - կանին, Կեդրոնականն ալ, արձանագրութեանց Կոմիտէին, կոմիտէն ալ չեմ գիտեր որու համա - ձայնութիւնը անեղէն վերջ, եթէ յարմար նկատուէր եւ եթէ չէր վնասեր հաւաքական շահերու հիմնական տեսակետին, այն ժամանակ նամակս կը յանձնուէր, առ որ անկ է, իսկ պատասխանն ալ խնդրական ...

Ինձի կը մնար ... շիտակ Երեւան երթալ: ՄԵՂՈՒ

Վարանդեանի յիշատակին

ԽՄԲ. - Ինչպէս գրած էիք, Ապրիլ 22ին ուխտագնացութիւն մը տեղի ունեցաւ Մարտի 22ին Սէն Փիլէպ գերեզմանատունը: Այս առթիւ հետեւեալ աւելորդ կարգաց ընկեր Տիգրան Թադաճիան, յա - նուն Ն. Յ. Գ. Երջ. Կոմիտէի ...

«Տասներկու տարիներ անցած են արդէն այն օրէն ի վեր, երբ Վարանդեան կաթուածահար ինկաւ այս քաղաքի արուարձաններէն Պոմոնի մէջ: Հակառակ տարիներու անջրպետին, կարծէք թէ երէկ էր այդ, Այսօր, կրկին մեր աչքերուն առջեւ կը պատկերանայ անոր յաղթանալով պարթեւ հասակը, կըսած տառապանքներու ծանրութեան տակ: Այսօր, մեր ակնաջներուն մէջ տակաւին կը հնչեն անոր քաղցը, երաժշտական, թըր - թուացող ձայնին արձագանգները, երբ, այնքան խանդավառօրէն, եռանդով ու զգացումով կ'երգէր «Սիւսիական քաղեր» ծանօթ քայլերը:

Ծնած եւ ապրած ըլլալով հայ ժողովուրդի զարթօնքի շրջանի, կանուխէն նետուեցաւ ազատագրութեան արիւնոտ յորձանքին մէջ, եւ իր կեանքի ամբողջ տեւողութեան, իր անվիճելի տաղանդը ու կարողութիւնները ի սպաս դրաւ հայ ժողովուրդին, ՀայՅեղափոխութեան պաշտպանութեան եւ Հայկ. Դատի ծանօթացման պրոպագանդան: Փառարանեց եւ սրբացուց ստրուկի կոխը, ըմբոստացումը բունակալութեան դէմ, եւ Հայոց լեռներուն ու անդրախոր ձորերուն մէջ կուռուղ, մարտնչող Ֆէտայիներուն ազատութեան հերոսի, ռազմիկի պատմուճանը հազուեցուց: Հայկական Յեղափոխութիւնը եւ անոր գաղափարական հե - րոսները Վարանդեանէն աւելի կարող, աւելի ար - ժանաւոր մէկը չէին կրնար գտնել իրենց անմահացումին կամ պանծացումին համար: Կրկին կար - դացէք իր սողերը նուիրուած Հայ Յեղափոխու - թեան հերոսներուն, ուր, այնքան կենդանի գոյնե - րով կը պատկերացուին մէկը միւսէն գեղեցիկ, մէ - կը միւսէն գաղափարական դէմքեր:

Ն. Յ. Դաշնակցութեան Երջ. Կոմիտէն, այսօր, կազմակերպելով յարգանքի այս համեստ ձեռնարկը մեր ողբակցաւ ընկերոջ դամբարանին վրայ, նախ, ընկերական համեստ պարտականու - թիւն մըն է որ կը կատարէ անոր անմոռանալի յիշատակին հանդէպ, երկրորդ, Վարանդեանի յիշատակին յաւերժացումով, կ'ուզէ նաեւ յարգել բոլոր այն հերոսներու ու մարտիկներու հիշատակը որոնք յաւերժացան Վարանդեանի հետ: «Յիշատակ ամենայն զօրաց Հայոց զորոց զանուանըս տէր տէր» Վարանդեանի այս շիրիմը թող ըլլայ այդ խորհրդանշան յիշատակարանը, յիշե - լու համար այս շրջանին մէջ մահացած բոլոր այն յայտնի ու անյայտ ընկերները, որոնց Դաշնակցութեան հանդէպ զոհուած յիշատակներն չհասած, ինկան օտար ափերու վրայ, մահուան անողորմ հարուածներուն տակ: Անոնք եւս, իրենց մարմնէն, իրենց հոգիէն բան մը տը - րած են մեր կազմակերպութեան, որպէսզի ան աւելի ուժեղ ըլլայ, աւելի գաղափարական: Այդ ընկերներն են Մարտի 22ին՝ Տիգր. Քիւրթիճեան, Արզար Արզումանեան, Գարեգին Շահաճեան, Պո - դոս Հիւսեան, Պերճ Թաշճեան, Աղաճան Դարբինեան, Բարսեղ Հայրապետեան, Յ. Ասլանեան, Ս. Դաւիթեան, Սենեքերիմ, Լեւոն Պոյաճեան, Կար - տանէն՝ Արզար Քէչիշեան, Կարապետ Արքահամ - թիւ համեստ շարքայինները, որոնց անունները այս վայրկեանիս կը խուսափին մեր յիշողութենէն: Չենք կրնար չիշատակել նաեւ Հայ Յեղափոխու - թեան եւ Հայկ. Դատի ռահվիրաներէն Մ. Փոր - թուգարեանի եւ Մ. Չերազի անունները, ինչպէս նաեւ Մարտի 22ին նախկին առաջնորդ Գ. Կարապետ - պոս Պալաքեանը, որոնց հանրային գործունէու - թիւնը նոյնպէս երկապախութեան արժանի է:

Սիրելի ընկ. Վարանդեան, այսօր, քու գաղա - փարակից ընկերներդ, քու աչակերտներդ, հա - ւաքուած քու գերեզմանիդ շուրջ, կ'ուխտեն ան - վեհեր քալել այն ճանապարհէն որմէ դուռ անցար, միշտ գերադասելով քու սիրելի ժողովուրդիդ շահերը: Կ'ուխտեն անայն յուսանալու, ա - ռանց ընկրկումի շարունակել քու կէս ձգած գործը:

Նոյն առթիւ խօսեցաւ նաեւ Պ. Հր. Բալուխան.

«Նկատած էք, երբ փոթորիկը կը նշմարուի հօրիգոնին վրայ, մրկահաւը կը սկսի իր թեւերը բանալ, ու երբ կը սկսի ամպերուն որոտը, թուռու - նը կը սաւառնի ալ աւելի վեր: Յաջորդաբար քանի կը մթնէ, որքան փոթորիկը ահեղ կը դառնայ, այնքան մրկահաւը կը բարձրանայ անհասանելի բարձունքները, միշտ դէպի վեր: Այսպէս է նաեւ մեր կեանքը. որքան մոլթը, անստուգութիւնը, կասկածը կը ծանրանան մեր հոգիներուն վրայ, այնքան պահանջը կը զգանք վեր ճախրելու, դէ - պի բարձրութիւնները ուր կ'ապրին Վարանդեան - ներու, Չաւարեաններու, Սաճակներու եւ այլ ընտանիքի լուսաթաթախ ստուերները: Այս պահ - ճուս եթէ եկեր ենք շիրիմ մը յարգելու, անպայ - ման թէ ճախրանք մը կայ մեր մէջ, դէպի բար - ձրակէտ Վարանդեանի հոգին: Աքսորական դամ - բաններ: Կ'անցնին այս օրերն ալ եւ երբ Հայաս - տանի մէջ կ'ունենանք ազատ միտք, զերծ կաշ - կանդումներէ, վերջապէս երբ մարդիկ կը սկսին առանց կիրքի դատուի լաւ ու դէշը, անպայման Վարանդեանի աճիւնը կը մտնէ սամփոփ մէջ, փոխադրուելու համար Հայաստան: Ինչպէս Քը - րանսական Պանթէոնին մէջ արձանագրուած է, - «Հոս է Կամպէթթային սիրտը», մենք ալ մեր սա - փորին տակ պիտի գրենք. - «Հոս է հայ յեղափո - խութեան միտքը»:

Նշելէ վերջ Մ. Վարանդեանի գործին զանա - զան արժանիքները եզրակացուց եւ ըսաւ. «Վա - րանդեան, եւրոպական իմաստով մշակուած միտք մը, փոխանակ մեծ անուանի դէմքերը կենդա - նացնելու, զնաց պարզ, ռամիկ, դաւառի հայ - դուկներուն կեանքը անմահացնելու, այն հայրուկ - ներուն որոնց գերեզմաններն իսկ անյայտ են»:

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՄ

Մէնթ Իթիլ (Յառաջ). - Տէսինի Ն. Յ. Գ. կոմիտէի թատերախումբը մեր հրաւերին վրայ եկած էր բեմադրելու Երվանդատի «Չար Ողին»: Ապրիլ 13ին, Jeu de l'Arc սրահը լեցուած էր աւելի քան 200 հոգինոց բաղձութեամբ մը: Ըստ հայկա - կան սովորութեան վարագոյրը բացուեցաւ ժամը 9.30ին: Դերակատարները ընդհանրապէս յաջող էին: Միջնարարներուն մենեթը Տիկին Մարի Կարապետեան (Միքանի ծառ) իսկ փոքրիկ Կերա - կատար մը, որուն անունը դժբախտաբար չեմ յի - շեր, հայերէն խօսելու մասին շատ զեղեցիկ ար - տասանութիւն մը ըրաւ, երեւան բերելով Տէսինի հայ վարժարանի ուսուցիչ ընկեր Մ. Փափազեանի գնահատելի շնորհքը: Երկուքն ալ երկարատեւ ծա - փեր խիցին ներկաներէն: Ներկայացումէն գոյա - ցաւ կոկիկ դուամար մը: - Հարգանքի

Մ. Նահանգներու արտաքին նախարարը, Պ. Պրենս, չորեքշաբթի օր երեք ժամուան տեսակցութիւն մը ունեցաւ Պ. Պրատոյի հետ, միջազգային խնդիրներու եւ Ֆրանսայի պահանջած վարկերու համար: Յետոյ անաջարկեց որ հեռաձայնով խօսի նախագահ Թրումբըին հետ: Արտաքին նախարարը ուրախութեամբ ընդունելով այս անաջարկը, երկարօրէն խօսեցաւ նախագահին հետ եւ բաժնուեցաւ զո՞ տպաւորութեամբ: Թերթերը կը գրեն թէ Պ. Պրատո բացատրած է որ Ֆրանսա պէտք ունի կէս միլիոն թոն ցորենի, զոցելու համար հին եւ նոր հունձքին միջեւ եղած բացը:

Պ. Պ. Պրենս եւ Պրատո շատ մը խնդիրներու կարգին քննած են նաեւ գերմանական հարցը եւ Ռուսի խնդիրը: Անգլիա եւ Մ. Նահանգները միշտ կ'ընդդիմանան այդ շրջանը Գերմանիայէն բաժնելու ծրագրին, որ կենսական կը համարուի Ֆրանսայի համար: Բրիտանական դադթապետութիւններն ալ բացարձակապէս հակառակ են անջատման:

ԲԱՆԻ ՄԸ ՏՊՂՈՎ

ՊԱՂԵՍՏԻՆԻ անդլեամբերիկեան քննիչ յանձնաժողովին տեղեկագիրը կը քննուի այժմ, ինչպէս յայտարարեց Անդլիոյ վարչապետը երեսի. ժողովին մէջ: Յանձնաժողովին առաջարկները ծանր յանձնառութեանց տակ պիտի դնեն երկու պետութիւնները: Յանձնաժողովը կ'առաջարկէ անմիջապէս, եթէ կարելի է այս տարի արտօնել 100.000 Հրեաներու մուտքը Պաղեստին: Կը թուի թէ Պաղեստինը ոչ հրէական պետութիւն պիտի դառնայ, ոչ ալ արարական: Ուրեմն երկու կողմերն ալ դժգոհ են: Երուսաղէմի Արարական Գերագոյն Խորհուրդը որոշեց անմիջապէս ընդհ. դործադրու հռչակել: Հեռագրիները ուղղուեցան հարեան երկիրները, որպէսզի դործադրու հռչակեն միեւնոյն օրը: Արարական Դաշնակցութիւնն ալ բացառիկ նիստի հրաւիրուած է: Պիտի լուծուին երկու ազգութեանց զինեալ ուժերը: Ամերիկացիները կը վախճան որ սրբազան պատերազմ ծագի:

ՏԱՍՀ ՏԱՐԻ տաժանակիր աշխատանքի դատարանուեցաւ անգլիացի դիտանական մը, Տոքթ. Նոն Մէյ, 35 տարեկան, որ ամբաստանուած էր թէ 1945 Մայիսին երբ Բանասա կը գտնուէր, դադունի տեղեկութիւններ եւ իւրանիօմի նմոյշներ ծախած է անձանօթ անձի մը: Ամբաստանեալը խոստովանեցաւ յանցանքը, բայց մերժեց յայտնել իր մեղսակիցին անունը:

ԶՕՐ. ՄԱԲ ԱՐԹՐԸԸ սպաննելու ծրագիր մը մէջտեղ հանուեցաւ Թոքթոյի մէջ: Մահափորձը պիտի կատարուէր Մայիս 1ին: Բուն կազմակերպիչը փախած է: Բազմաթիւ ձերբակալութիւններ կատարուեցան:

ՆԻՐԻԸՊԵՐԿԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԵԱՆ Մայիս 1ի նիստին մէջ, Գերմանիոյ նախկին երմտական նախարարը, Տոքթ. Եարթ յայտարարեց թէ ինք միշտ պայքարած է հիթլերական իշխանութեան ծախրայեղութեանց եւ պատերազմին դէմ, թէ կ'ընդունի իր անձնական արարքներուն պատասխանատուութիւնը եւն.:

ԳԵՐՄԱՆԻՈՅ ամերիկեան շրջանին հրամանատարը որոշեց 300 գոլ (քաղաքի) կրճատել զինուորներուն օրապահտիլը, կիրակիէն սկսեալ: Ուրեմն պակաս հաց, ալիւր, շաքար եւն. պիտի ստանան: Այս կրճատումը անհրաժեշտ համարուած է, նկատելով որ հիւժախտը եւ ուրիշ հիւանդութիւններ կը ճարակին դերման ժողովուրդին մէջ, իբրեւ հետեւանք անբաւական սննդառութեան: Ետտ աւելի ծանր է Աւստրիոյ վիճակը: Վիէնայի մէջ այս շարժումն օրապահտիլը 900 գոլ պիտի ըլլայ, մինչ անցեալ շաբթու 1300 գոլ էր: Ոչ պտուղ կայ, ոչ բանջարեղէն, իսկ սեւ շուկայի զինները անուշիկ չափերու հասած են:

1926 ՅՈՒՆԻՈՒՄ 1ի եւ Մայիս 31ի միջեւ ծնած բոլոր երիտասարդները պէտք է իրենց շրջանի զինուորապետութեան գրասենեակները ներկայանան, բժշկական քննութեան ենթարկուելու եւ դրօշի տակ առնուելու համար, Մայիս 6էն սկսեալ:

ԲԺՇԿԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՆ բողոք մը ուղղեց կառավարութեան, զանդատելով սնունդի անբաւականութեան դէմ: Մարտին օրապահտիլի գոլը իջած էր 1300ի, այսինքն 25 առ հարիւր պակաս անհրաժեշտ չափէն: Հիւանդութիւնները կ'աւելան:

ՅՐԱՆՍ. ԲԱՆԱԿԻ ՀԱՅ ՆԱԿԻՆ ՌԱԶՄԻԿՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԵԱՆ ՀԱՆԴԵՍԸ

Ի նպատ իր բարենպաստակ ձեռնարկներուն, այս շաբաթ գեղեր, 4 Մայիս, Hôtel George Vի գեղեցիկ սրահներուն մէջ, 31 Ave. George V, բարձր հովանաւորութեամբ եւ ներկայութեամբ Փարիզի զինուորական կառավարիչ Mr. le Général Legentilhommeի: Կը մասնակցին — Պ. Պ. Jacques Hélianի եւ Bachichahի նուազախումբերը, իրենց vedetteներով, ինչպէս նաեւ Փարիզի տաղանդաւոր արուեստադիտուհի եւ արուեստագէտներ՝ Josette Daydé Marcel Dieudonné, Madeleine Adjémian, Assia de Busny, եւն.: Յուցադրութիւն Georgette Rénal տան ամառնային նորաձեւութեանց: Մրցում պարերու: Պիւֆէ, պար: Տոմարներու համար դիմել Պ. Սարաֆեան, 22 rue de la Banque, Cent. 92-97:

ՔՐԻՍՏԱՓՈՐ ՄԻՔԱՅԷԼԵԱՆԻ

Մահուան 41ամեակին առթիւ, Հ. Յ. Գ. Մարտիլի Գրիտափոր ենթակոմիտէին նախաձեռնութեամբ եւ հովանաւորութեամբ Մարտիլի Երջ. կոմիտէին եւ մասնակցութեամբ Պոմոնի Նոր Սերունդի Գրիտափոր խումբին, հրապարակային հանդէս՝ Մայիս 5ին, կիրակի առաւօտ ժամը 9.30ին, Թափի Վէրի (Ռոքսի) սինամային մէջ: Կը խօսին՝ Ծ. ՆԱՐԴՈՒՆԻ եւ ԺԻՐԱՅՐ ՄԻՍԱԲԵԱՆ (Լոնտոնէն): Պատուոյ նախագահութեամբ Տիկին Ս. Ա. ՀԱՐՈՆԵԱՆԻ, կենդանի պատկեր, երգ եւ արտասանութիւններ եւն.:

Ա. Ամարունեանի

ՄՆՆԻԵԱՆ 80ԱՄԵԱԿԸ ԿԸ ՏՕՆՈՒԻ
Լիոնի Հ. Յ. Գ. Նոր Սերունդ Միամանթո խումբին կողմէ, այս կիրակի, ժամը 8.30ին, Salle François Coppée, 8 rue Victoire Sardou: Կը նախագահէ Պ. Յ. Վարժապետեան: Կը խօսին Տիկին Օտէթ Միքայէլեան հայերէն (Ֆրանսուհի, Վալանտին), Պ. Պ. Հ. Բարուեան եւ Ս. Սիւրեան, կ'երգէ Օր. Ս. Տէր Պետրոսեան: Գեղարուեստական ճոխ բաժին: Կը մասնակցի կրթնուլէն հրաւիրուած Կապոյտ Խաչի Սանուհիները Միութիւնը որ տոհմիկ տարազներով պիտի պարէ հայկական պարեր զեկա վարութեամբ Տիկին Սիւրեանի: Մուտքը ազատ է:

ԵՐ. ՏԵՐ ԱՆԴՐԵՍԱՍԵԱՆԻ ԵՐԵՍԱՍԿԻՆ

Հողահանգիստ հանգուցեալ հրապարակագիր ԵՐՈՒԱՆԵՐ ՏԵՐ ԱՆԴՐԵՍԱՍԵԱՆԻ, մահուան տարելիցին առթիւ այս կիրակի առտու, 5 Մայիս Լիոնի Հայոց եկեղեցին, 69 rue Louis Blanc, Lyon: Նախաձեռնութեամբ Ազգ. Միութեան: Կը հրաւիրուին իր յիշատակը յարգողները: Այս առթիւ այց մը կազմակերպուած է, իր հողակոյտին վրայ, կիրակի, Թիէոի դերեղմանատան դրան առջեւ ժամը 3ին: Ժամագրութիւն, Լիոնի Հ. Յ. Գ. եան Նոր Սերունդի կողմէ: Կը հրաւիրուին Տէսինի, Վիէնի, Սէն Եամոնի եւ Սէնթ Էթիէնի Նոր Սերունդի ներկայացուցիչները:

ԱՊՐԻԼԵԱՆ ՍԳԱՀԱՆԴԵՍ ԿՐԸՆՈՊԼԻ ՄԷՉ

Նախաձեռնութեամբ Հ. Ա. Ը. Միութեան եւ մասնակցութեամբ յարանուանութեանց եւ բոլոր կազմակերպութեանց, այս կիրակի: Մանրամասնութիւններ տեղին վրայ:

ՄԱՐՍԷՅԸ. — Հ. Մ. Ը. Մ. Ի մասնաճիւղի տարեկան ընդհ. ժողովը՝ այս շաբաթ (4 Մայիս) իր

իրկուն ժամը 6.30ին, Միութեան հաւաքատեղին, Bar du Globe: Օրակարգ՝ 1. Տարեկան հաշուետուութիւն: 2. Նորը Մարզականի ձուլումը Հ. Մ. Ը. Մ. Ի մէջ: 3. Վարչական ընտրութիւն:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ — Կարապետ Մասլաքեանի

եւ աղջկը ժաքըին կը ծանուցանեն թէ իրենց մօր՝ ԹեֆԱՐԻ եւ տիկնոջ ՀԱՅԿՈՒՀԻԻ համար հողեհանգիստ պիտի կատարուի, այս կիրակի առաւօտ Փարիզի Հայոց եկեղեցին: Կը հրաւիրուին յիշատակը յարգողները եւ բարեկամները:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ. — Այրի Տիկին Զարուհի Ստեփանեան (Meudon), Պ. Վահրամ Ստեփանեան,

հողահանգատեան պաշտօն կատարել կուտան իրենց ամուսնոյն, հօր եւ մեծ մօր, Պ. ՃիվԱՆ ՍՏԵՓԱՆԵԱՆԻ եւ Տիկին ԾԱՀԱՐ ՍՏԵՓԱՆԵԱՆԻ համար, այս կիրակի, Փարիզի Հայոց եկեղեցին: Կը հրաւիրուին իրենց յիշատակը յարգողները:

ՄԵՍ - ՆՈՐ ԳԻՒՂԻ ՎԵՐ. Հայր. Միութեան

«Իթալի» մասնաճիւղին անդամաժողովը, զուամարուեցաւ ապրիլ 14ին, Ժանթիէի դպրոցին մէջ: Միութիւնը վերակազմուած ըլլալով, կը հրաւիրէ բոլոր հայրենակիցները անխտիր համախմբուի Միութեան շուրջ: Նկատի ունենալով դէպի հայրենիք ներդաշնակ պարագան եւ Վերաշինացի շինարարութեան մասնակցութիւնը, կը խնդրէ չզրանալ իր նիւթական եւ բարոյական աշակցութիւնը, խտացնելով շարքերը: Առժամեայ վարչուրիւն:

ՍՍԱՌԻՆԱԿԱՆ, 1200 ԷՂ, «Բիւր Ալ, «Հապար Ալ»ի հետ 575 Փրանք կանխիկ:

Արտասահման վեց (6) տոլար: Դիմել D. Tchitouny, 13 rue Caumartin, Փարիզ (9):

ՈՒՍԱՆՈՂՆԵՐ, ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ, ՊԱՐԱՀԱՆԴԵՍ ԻՆՏԻԹԻԸ Արմէնիէի կողմէ, նախագահ

հովանաւորութեամբ կրթական նախարար Mr. Naegelenի եւ բարձր հովանաւորութեամբ Mr. Justin Godartի: Միջազգային տան շքեղ սրահներուն մէջ, շաբաթ 4 Մայիսին ժամը 4էն 24: 21 Bd. Jourdan, métro Cité Universitaire կամ Porte d'Orléans: Մուտք 100 Փր.:

Օր. ԼՈՒԻՉ ՍԱՐԳԻՍԵԱՆ
Պ. ՍԻՎԱՆ ԳԵՆՐԳԵԱՆ
Նշանուած
Issy 28 Ապրիլ 1946 Pavillon a) Bois
ՅՈՒՇԱՏԵՏՐ

ՓԱՐԻԶԻ Եղիպտացի կոմիտէն ընդհ. ժողովի կը հրաւիրէ իր բոլոր անդամները այսօր, ուրբաթ ժամը 8.30ին, ընկերակարաններու սրահը, 9 rue Victor Massé, métro Pigalle:

ՇԻՆՈՒԹԵԱՆՑ ԵՒ ՓԱՅՏԻ ԱՐՏԷԼԻ անդամները ընդհ. ժողովի կը հրաւիրուին այս շաբաթ օր կէս օրէ վերջ ժամը 2.30ին Սթիւարտո Caumartin 19a rue Caumartin: Ներկայ պիտի ըլլալ վարչութեան նախագահ՝ Վ. Եասուեան որ նոր վերադարձած է: Կարեւոր օրակարգ: Կը հրաւիրուին նաեւ բոլոր այն արհեստակիցները որ տակաւին չեն արձանագրուած ներգաղթին:

Այրի Տիկին Աղաւնի Մեծատուրեան, Տոքթ. Գուրգէն Մեծատուրեան, Օր. Եուզան Մեծատուրեան, Այրի Տիկին Մարիամ եւ Օր. Աղաւնուլ Գօնչէկիւլեան, Տէր եւ Տիկին Զարմայր Մեծատուրեան եւ զաւակները՝ Օր. Հայկանուլ, Պ. Պ. Գամէր եւ Գարեղին Մեծատուրեան (Սոֆիա), Այրի Տիկին Մըրուհի Մեծատուրեան, Տէր եւ Տիկին Վ. Մեծատուրեան եւ զաւակները (Արժանթին), Պ. Օշին Գօնչէկիւլեան (Ամերիկա), Տէր եւ Տիկին Ս. Գօնչէկիւլեան (Ամերիկա), Տէր եւ Տիկ. Ժ. Գօնչէկիւլեան, Պ. Վահան Մեծատուրեան, Տէր եւ Տիկ. Կ. Սասունի (Պէյրուի), Օր. Մ. Մեծատուրեան, ինչպէս նաեւ Մեծատուրեան, Գօնչէկիւլեան, Եակոբեան, Աղաւեան, Ներսէսեան, Գալստէքեան, Միլասեան, Աւաղեան ընտանիքները սրտի խորունկ կակիճով կը ծանուցանեն մահը՝ իրենց ամուսնոյն, հօր, եղբոր, հօրեղբոր, մօրեղբոր եւ աղբականին՝

Պ. ԹԱՂԵՍՍ ՄԵՍԱՏՈՒՐԵԱՆԻ

որ տեղի ունեցաւ իր բնակարանին մէջ: Թաղումը կը կատարուի այսօր, ուրբ. առտուան ժամը 11.15ին, Փարիզի Հայոց եկեղեցին, ուրկէ մարմինը պիտի փոխադրուի Պանթէօի դերեղմանատունը, ընտանեկան դամբանին մէջ: Մասնաւոր մահադէ չստացողներէն կը խրնդրուի իր այդ նկատել ներկայս:

ՅԵՐԵՅԱՆՑԹ ՊԱՐԱՀԱՆԴԵՍ

Կազմակերպուած Հ. Յ. Գ. Մ. Եօթնկարայրեան խումբի կողմէ, հովանաւորութեամբ Եղիպտացի կոմիտէի, 5 Մայիս կիրակի ցերեկէն վերջ ժամը 3էն մինչեւ 11, Իվրիէ Bains Douches սրահին մէջ, rue Barbès, Ivry, métro Choisy: Բանաստեղծութիւն եւ զեղարուեստական ճոխ բաժին: Եւրոպական պարերը պիտի սկսին ժամը 6ին: Ծոխ եւ աժան պիւֆէ: Մուտքը 50 Փրանք:

ՄԵՍ ՊԱՐԱՀԱՆԴԵՍ

Կազմակերպուած Հ. Բ. Ը. Միութեան Մարտիլի Երիտասարդական Ընկերակցութեան կողմէ, իր կազմութեան տասնամեակի առթիւ, այս շաբաթ իրկուն ժամը 9էն մինչեւ յոյս, սալոն Գօլպիէի մէջ, 7, 9 rue Colbert, Marseille:

Կիրակի 12, Մայիս 1946 Յերիկայք ժամը 3ին

«Եիմի»ի Թատրապահը 28, ուի Սէն-Տօմիմիֆ (Մեք. Էնվալիտ)

ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

ԿԸ ՆԵՐԿԱՅԱՅՆԷ ՈՒ ԿԸ ԽԱՂԱՅ ՀՐԱԶ ՏԱՐՈՆԵԱՆԻ
ՀԱՅՐԵՆԻ ՔԷՆ ՀԵՌՈՒ
ԹԱՍՐԵՐԳՈՒԹԻՒՆԸ, 4 ԱՐԱՐ, 5 ՊԱՏԿԵՐՈՎ
Տոմերն ապահովել սովորական վայրերէն Թատրի կիշէն ու զուները կը փակուին ժամը 3ին:

ԿԸ ՓՆՏՈՒԻ ՏԻԿԻՆ Մարիամ Կերակոսեան (Սէվէրէկցի), ամուսնոյն անունը Խաչատուր (նախկին հացէն 90 Bourg de Valence): Իմացնել հօրեղբոր տղուն Մարգիս Մարտիրոսեանի, 35 rue de Chiffonnier, Paris (19):

ՀԱՅԵՐՈՒ ԺԱՄԱԴՐԱՎԱՅԸ

ՃԱՏԱՐԱՆ CHEZ ARTHUR (ՅԱՐՈՒԹԻՒՆ)
28 Rue Ramponneau, Métro Belleville. Tél. Men. 64-47
Արեւելիան եւ եւրոպական համեղ կերակուրներ, ընտիր օգի եւ նոյն ազանդը: Հինգշաբթի օրերը գոց է:

Մեր Խօսքը

ՎԱՂՈՒԱՆ ՀԱՆՐԱՔՈՒՆ

Վաղը, կիրակի, 5 Մայիս, Փրանսայի Ժողովուրդը «այո» կամ «ոչ» պիտի պատասխանէ նոր Մասնաճակատներին, որով հիմար կը դրուի Չորրորդ Հանրապետութեան:

Այ թէ ձախ, երկու կողմերն ալ վստահ կ'ընեն իրենց յաղթանակին վրայ: Համայնաժողովները «Այո» կը յուսան 60 առ հարիւր համեմատութեամբ, ընկերակարականներուն հետ: Հանրապետական - Ժողովրդական Եւրոպայ (M. R. P.) նոյնքան լաւատես կ'ընեն, յոյսը զնեղով չափաւոր եւ աջակողմեան տարրերուն վրայ, որոնց մէջ աչքի կը զարնէ նոր հոսանք մը, Ազատութեան Հանրապետական կուսակցութիւնը: Այս վերջինը, որ ֆաշիական կը համարուի համայնաժողովներուն կողմէ, դեռ անցեալ շաբթու դուրսից կը ընդհատուի, եւ ուժգնորէն կը բողբէ եղած վերադարձներուն դէմ:

Խնդիրը այն է որ, Ժողովրդականներն ալ հաւատարմութիւն տան իրենց հոսանքին վրայ, ինչպէս եւ Արմատականները: Միւս կողմէ, Եւրոպայի կուսակցութիւնը ինք, որ միացեալ ճակատ կազմած է խումբ մը ձախ հանրապետականներու հետ, փոյլուն վիճակ մը չի ներկայացներ, ներքնապէս:

Ամէն պարագայի մէջ, բոլոր ուժերը հրապարակ նետուած են արդէն, իրենց զոյնզոյն յայտարարութիւններով եւ ճարտասանական մարզանքներով: Պակասը կը լրացնեն իրենց շարքերը, թողութիւններ ցրուելով, հակառակորդներուն յայտարարութիւնները պատուելով եւ զանազան սրամիտ խաղեր սարքելով:

Այսպէս, եթէ փոքրամասն մը տղաքը «Ոչ» արձանագրած են արդարեւ մէջ, կաւիճով կամ անջնջելի ճերմակ ծեփով մը, միւսները կամ կը սրբեն «ոչ»ը, եւ կամ անոր դիտուն վերեւ կը շինեն կեռ խաչ մը: Աւերիչ խօսքով, ըսել կ'ուզեն թէ «Ոչ»երը հիթլերական են, կամ թշնամի կ'ուզէ որ բացասական պատասխան տան:

Եւ փոխադարձաբար: Միւսներն ալ կը փորձեն միտք պղտորել մուրճ - մանգաղով:

Եթէ մեծամասնութիւնը «Այո» պատասխանէ, Մասնաճակատները կը դառնայ վերջնական: Մէկ ամիս վերջը, Յունիս 2ին պիտի կատարուին ընդհ. ընտրութիւններ, կազմելու համար նոր Երեսփ. Ժողովը, որ պիտի դառնայ երկրին գերագոյն իշխանութիւնը, ինչպէս 1792ի Ազգ. Համաձայնագրի (Convention):

Մերակոյտը ջնջուած ըլլալով, այլեւ չկայ ուրիշ ժողով մը իբրեւ հակակշիռ կամ ազդակ հաւասարակշռութեան: Ազգ. կամ Երեսփ. Ժողովը, որ հինգ տարի պիտի պաշտօնավարէ, ինք պիտի ընտրէ Հանրապետութեան նախագահն ու վարչապետը: Երկուքն ալ, եւ մանաւանդ առաջինը, սահմանափակ իրաւասութիւններով:

Ի՞նչ են այս նոր դրութեան անպատահելիքները, անջնջելի եւ չափաւորներուն կարծիքով:

Թէ Մասնաճակատ Ժողովին մէջ եղած վիճաբանութիւնները եւ թէ հրապարակային արտայայտութիւնները կը պարզեն մէկ հիմնական մտահոգութիւն, — այս նոր կարգուսարքով, զլիարար կուսակցութիւնները պիտի դառնան տէր-տիրապետական երեսփ. Ժողովին, ինչ որ ի վերջոյ կրնայ յանգիլ մէկ հոսանքի զիկատարութեան: Այնինչ ձախերն ալ կը վախճան որ, եթէ ընդունին առաջարկուած փոփոխութիւնները, դուռ պիտի բացուի անձնական զիկատարարի:

Աւերիչ պարագայ մը, — Զախերը իրենց հակաձառութեանց մէջ միշտ կը շեշտեն որ եթէ մեծամասնութիւնը «ոչ» պատասխանէ, երկիրը նորէն պիտի մատնուի առժամեայ կարգուսարքի մը, եթէր ամիս կամ աւելի երկար ժամանակ:

Ասոր ի պատասխան աջերը, նոյնիսկ Դիմադրական ճակատը չափաւոր ներկայացուցիչները դիտել կուտան, — Եթէ Մասնաճակատները մերժուի, քանի մը շարքեր բաւական է, զայն բարեփոխելու համար: Մինչդեռ եթէ «այո» պատասխանեն, շատ երկար պիտի տեւէ վերաքննութիւնը, մեծ բարդութիւններ ստեղծելով:

Այս տեղեկութիւնները կրնան զաղափար մը տալ պայքարի սաստիկութեան վրայ:

Վերջին օրն է այսօր, եւ վաղը քուէն է որ պիտի խօսի: 1945 հոկտ. 21ի ընտրութեանց ատեն, ձախերը 9.509.499 քուէ շահած էին, իսկ միւսները հաւաքաբար 9.659.420: Արդ, ձախերը եւ մանաւանդ համայնաժողովները այնքան լաւ կազմակերպուած են որ, եթէ նոր քուէներ չահին, նոր Մասնաճակատները կը դառնայ վերջնականորէն: Շ.



ՉՈՐՍ ՄԵԾԵՐԸ. — 2. Պ. ԻՐԵԼՍՏ ՊԵՎԻՆ ԱՆԳԼՈՅ ԱՐՏԱՔԻՆ ՆԱԽԱՐԱՐԸ որ դժբախտաբար քրքակաւ տեսակէտը կը պաշտպանէ կարգապահութեան մասին:

Երևանի բանքերը կը խօսք շԱՅԱՍՏԱՆԻ ՈՒ ՆԵՐԳԱՂԹԻ ՇՈՒՐԸ

(Մասնաւոր քրքակցութիւն «Յառաջ») Ինչե՞ր, ինչե՞ր կը պատահին այստեղ, սիրելի «Յառաջ»: Թղթակցի իմ պարտականութիւնս՝ տարբերութիւն չունի առանց զէնքի պատերազմի դաշտ մեկնող զինուորի մը կացութեան: Ըսելիք կայ, տեղ չկայ: Հարկադրաբար, կտոր - բրդուճ բանքերը կը վերածեմ հրատապ խնդիրները:

— Հաղորդե՛ր էի, թէ Երևանին Լիբանան հասած է «սովետ դեպարտման աշխատակից» Գառնիկ Նազարեան, որուն հազարամէկ առաքելութիւն կը վերադրեն պաշտօնական եւ մասկանացու մարզիկ, «ի լողաց», կամ «արժանահատ ազբունքէ» կ'իջելով:

Ծանօթանալու համար հայ «յառաջգիտակցի» խմբագիրներուն, եւ տեսակէտի փոխանակութիւններ ունենալու համար անոնց հետ, — կը դրէ «Չարթօնք» բառ առ բառ, 8 Ապրիլի երկուշաբթի առաւօտ, հանդիպում մը ունեցան Պ. Նազարեան, եւ միմիայն «Չ. Զայն»ի, «Չարթօնք»ի, «Առաւօտ»ի, «Արարատ»ի եւ «Կայծ»ի խմբագիրները: Օրակարգ՝ խորհրդակցայ կեցեալը եւ ներգաղթ:

Ամփոփ զիճեցով կ'արտադրեմ հիմնական մասերը, «յառաջգիտակցի» թերթերէն: ՄԱՅՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿԵԱՆՔ. —

Թիւր եւ դատարարները բամբասանքներ կը չըջնին մայրութեան օրէնքի եւ ընտանեկան կեանքի շուրջ: Նախ՝ ճիշդ չէ «աղջիկ մայր» բացատրութիւնը: Ռուսերէն բնագիրը կ'ըսէ «միայնակ մայր»: — Այս դատարարին մէջ կ'իյնան այրի մնացած մայրերը, յղութեան ժամանակ ամուսինը մեռած կիները, ինչպէս նաեւ ամուսին չունեցող կիները: (Մ. — «Այրի» կին, ու «յղութեան չըջնանին իրենց ամուսինը կորսնցնող» կիներ՝ ըմբռնելի: Բայց ի՞նչ կը նշանակէ «ամուսին չունեցող» կին: Այս մասին անձնապէս հետաքրքրուեցայ, եւ ստուգեցի՝ թէ համաձայն Սովետ Գերագոյն Խորհուրդի 8 Յունիս 1944 թուակիր բարեփոխեալ Օրէնքին, Խորհրդ. Միութեան սահմաններու մէջ բոլոր անօրինի ծնունդները պոռնկորդի չեն նկատուելի, ու իրենց մայրերը նպաստ կը ստանան Պետութեանէն: Այսօրինի կենսակցութեամբ դաւակ ունեցող մայր մը, առաջին դաւակին համար կը ստանայ ամսական 100 րուբլի, երբ կ'ունենայ երկրորդ մը՝ կը ստանայ 150, երբ կ'ունենայ երրորդ մը՝ կը ստանայ 200: Անդրադառնալով այս օրէնքի

Չորսերը առանձին կը խօսակցուին

Օրուան թերթերը լաւատես չեն երեւար Չորսերու Ժողովի մասին: Բոլորն ալ կը հաստատեն թէ որ եւ է համաձայնութիւն չէ զոյսացած հիմնական հարցերու մասին, սկսելով իտալական դաշ - Տաղրէն: Ասոր համար չորս նախարարները նորէն սկսած են մասնաւոր, զազունի խորհրդակցութիւններ կատարել, եւ մը զտնելու համար: Այս ձեւը փորձուած էր անցեալ Սեպտեմբերին՝ Լոնտոնի, եւ Դեկտեմբերին՝ Մոնիլուայի մէջ:

Առաջին զազունի խորհրդակցութիւնը տեղի ունեցաւ հինգշաբթի օր եւ պիտի շարունակուի, ամէն անգամ որ անհրաժեշտ համարուի: Խորհրդակցութիւնը տեւեց 2ուկէս ժամ, երեք հիմնական հարցերու մասին. — 1. Պ. Պըրնս, որ կը նախագահէր, բացատրեց թէ համաձայնութիւն չէ զոյսացած իտալական դաշնադրին վրայ եւ թէ այս թիւթացքով ամիսներ պիտի սպասեն, դաշնագիր մը գործադրելու համար: Ռուսի առաջարկեց վերա - քննել պարտուած պետութեանց զինադաշարի պայմանները, իբրեւ միջին ճամբայ: Այս մասին սկզբունքով համաձայնութիւն զոյսացած էր մէկ շաբաթ առաջ, բայց այս անգամ Անգլիացիները կարգ մը առարկութիւններ ըրին: Միւս երկու ինդիւիսներն էին իտալական հատուցումներու եւ վաղթալայրերու հարցերը: Չորս նախարարները հաստատ մ'ապին իրենց տեսակէտներուն վրայ: Արեւմտեան կացութիւնը հետեւեալն է, համաձայն տեղեկամատերիկեան մամուլի քաղած տեղեկութեանց. — Լիազուար նիստերու մէջ համաձայնութիւն չէ զոյսացած, իսկ մասնաւոր խորհրդակցութեանց արդիւնքը լաւատեսութիւն չի ներշնչեր:

Գազունի Ժողովին մէջ, Պ. Մոլոթով զիտեղ տուաւ թէ Լոնտոնի Ժողովին մէջ որոշուած էր Եւրոպայի ձգել Տարմացիոյ ասիերուն իտալական շուրջ ստեղծուած ըսի - ըսաներուն՝ պատուիրակը կը շարունակէ... —

«Ամուսին չունեցող մայրերու պարագան հազարաւոր է ամբողջ Սովետ Միութեան մէջ: Իսկ Հայաստանի մէջ գոյութիւն իսկ չունի այդ պարագան, եւ ո՛չ մէկ այժմէականութիւն ունի Օրթոքսի մայր տրամադրութիւնը: (Ընդգծուած ինձմէ, Մ.) : Հայաստանի մէջ, չի կրնար ալ պատահիլ այսպիսի դէպք, որովհետեւ տղամարդոց թիւը աւելի է կիներու թիւէն: (Մ. — Կը յիշեմ կարգացած ըլլալ «յառաջգիտակցի» մամուլի մէջ, թէ այրերու թիւը նուազ է կիներու թիւէն, ինչ որ աւելի հաւատարի կը թուի): Իսկական բարոյականը գոյութիւն ունի Սովետներու երկրին մէջ: Մասնաւոր վարկ յատկացուած է, հինէն ի վեր, պայքարելու համար պոռնկութեան դէմ: Ու ճիշդ է, որ սովիէթ իրաւակարգը կրցած է ոչնչացնել պոռնկութիւնը: Դատարկ խօսք է ըսել, որ Ս. Միութիւնը թողատու է անոր հանդէպ: Հայ կնոջ ամօթխածութիւնը, հինին պէս պահուած է Հայաստանի զերդերուն մէջ: (Մ. — «Հիմնի պէս»ը իմ ապրանքն չէ...):

«Ընտանեկան կեանքն ալ չափազանց զօրաւոր է Հայաստանի մէջ: Ամուսնալուծումները բացարձակ երեւոյթ են Ժողովրդային Դատարանի թէ Գերագոյն Դատարան, 40 առ հարիւր համեմատութեամբ կը յաջողին հաշտութեամբ վերջացնել ընտանեկան - ամուսնական դժուարութիւնները: ՏԱՆ ԱՌՈՒՏՈՒՐ

«Սովետ Հայաստանի մէջ, իւրաքանչիւր քաղաքացի կրնայ ծախել իր տունը, եւ անմիջապէս գնել ուրիշ մը: Սխալ է «Պայքար» թերթի այն տեսակէտը՝ թէ «հարկ է երեք տարի սպասել, նոր տուն մը կարենալ գնելու համար»: Իրողութիւնն այն է, որ նոր գնուած տունը չի կրնար ծախուիլ, մինչեւ երեք տարի: Այս արգելքն նպատակն է առաջն առնել տան առեւտուրի, ու առիթ չտալ չարաչառութեան: Ու եւ չսովետ քաղաքացի կրնայ վարձու տալ իր տունը՝ պետական գինով: Ամէն մարդ կրնայ ունենալ քաղաքացի տուններ, բայց գործնապէս Հայաստանի քաղաքացիները երկու կամ երեք տունէ աւելին չունին: Պէտք ալ չեն զգար ունենալ... : ԱՆՁՆԱԿԱՆ ԳՈՐԾ

«Ամէն ոք կրնայ ունենալ անձնական գործ մը: Առանց սակայն ուրիշներ աշխատեցնելու իր մօտ: Պետութիւնը կ'արտօնէ աշխատեցնելու նախ կը հսկէ՝ որ յարգուի աշխատանքի օրէնքը: ՇՈՒԿԱՅ

Կոլխոզային շուկայի վրայ, որ ազատ է, կարելի է առատօրէն գնել ամէն ինչ: Գիները կապ ունին առատութեան եւ սակաւութեան հետ: Միջին որակով հացին քիւն՝ 90 կոպեկ, լաւ ձեռք մը հազուստ՝ 300 րուբլի: Աշխատատեղի մը միջին թոշակը 500—600 րուբլի, ինչ որ կը բաւէ 5—6 հոգինոց ընտանիք մը բարեկեցիկ ապրեցնելու:

«Կանանց աշխատանքը պարտադիր չէ Հայաստանի մէջ: Կ'աշխատին՝ եթէ կը ցանկանան»:

Գ. Նազարեան, 11 Ապրիլի 1946ին, հրապարակային խօսք ուղղած է Պէյրութի «Կրան Թիւթ»-ի մէջ, սովետական կեանքի եւ ներգաղթի շուրջ: Այդ ալ՝ յաջորդով: Մ.

կղզիները, բայց երկու փոքր կղզիներ, փէլախօզու և փրանոզա դուրս կը մնան այդ կարգադրութեանէն: Իր առաջարկին վրայ, որոշուեցաւ փէլախօզուի և փրանոզայի միացումը, որովհետեւ արդէն արդարեաւ որ երկու կղզիներուն ձկնորսներն ալ փոխադարձաբար օգտուին եւ որ եւ է ամբողջին չկառուցուի:

Այս խնդիրը լուծելէ վերջ, չորս նախարարները քննեցին պատերազմի ոճրագործներու հարցը: Մ. Նահանգներու, Անգլիոյ եւ Ֆրանսայի ներկայացուցիչները առաջարկեցին Դանսկիցիներուն յանձնել ամբաստանները եւ յանձնարարութեամբ մը կազմել, զանոնք դատելու համար: Պ. Մուրթոյ առաջարկեց Իտալիոյ յանձնել զանոնք: Խնդիրը մնաց առկա:

Ժողովի ընթացքին, Պ. Պիտո, որ չորեքշաբթի օր երկար խօսակցութիւն մը ունեցած էր Պ. Պլընսի եւ Մուրթոյի հետ, ամէն ճիշդ փորձեց, տարբեր անասկէտները հաշտեցնելու համար: «Տէյլի-Մէյլ» կը դէմ թէ խորհրդակցութեանց ընթացքին Պ. Պլընս խնդրեց Պ. Մուրթոյէն բացէ ի բաց յայտնել իւր Միութեան քաղաքականութիւնը Եւրոպայի մէջ: Աւելցնելով հիմնական խնդիր մը, — Մուրթոյ ծաւալմամբ կը ձգտէր, թէ կ'ուզէ անկեղծօրէն գործակցել միւս պետութեանց հետ, կազմակերպելու համար խաղաղութիւնը: Այս առթիւ կրկին ամերիկեան առաջարկը, — 25 տարուան դաշնագիր մը կ'ընել զինուորական գրաւումէն վերջը, բոլորովին զինաթափ ընելու համար Գերմանիան: Վերջապէս հարցուց թէ Պ. Միութիւնը ինչո՞ւ կը վախճայ իր պահպանութեան համար, ո՞ր է որ կը սպառնայ իրեն, պատրաստ է ստորագրելու 25ամեան դաշնագրեր: Լոնտոնի թերթը կը դէմ թէ Մ. Նահանգներու արտաքին նախարարը խօսեցաւ հանդարտ, եւ բաւական երկար: Ոչ պոռոց կանչեց, ոչ ալ սպառնաց, այլ փաստարանի դեր կատարելով, ջանաց համոզել, որպէսզի Պ. Միութիւնը ետ կենայ իր անհաշտ դիրքէն, սպառնալով գործակցութիւնը: Բայց եւ այնպէս, հասկուց թէ Մ. Նահանգները դժգոհ են ժողովի ընթացքէն: Պ. Պլընս կ'ուզէ որ ժողովը փութացնէ իր աշխատանքները, իսկ եթէ կարելի չէ, թող պարզեն պատճառները:

Այս առթիւ, քաղաքական շրջանակները մտահոգութեամբ կը քարոզեն, — Ի՞նչ պիտի պատահի, եթէ խորհրդակցութիւնը ձախող կամ քաջբեր: Մ. Նահանգներու պատուիրակութիւնը իր բեռները կապելով պիտի վերադառնայ եւ անշատ հաշտութիւն պիտի կնքէ: Անգլիական քաղաքները կը կարծեն թէ Պ. Միութիւնը կ'ուզէ ձգտել ժողովը, շարունակելով ծաւալման քաղաքականութիւնը, մասնաւորապէս Պալէստինայի մէջ: Արեւմտեան տեսակ մը անկ:

Թուրքիա կը բողոքի

Պուլսէն կը հեռագրեն թէ թրքական շրջանակներու մէջ բուն ընդդիմութիւն մը կը յայտնուի Պուլկարիոյ պահանջներուն դէմ, — եւր զէպի Երզնկան ծով: Ինչպէս դրած էինք, Պուլկարիոյ արտաքին նախարարը, Պ. Բուլքիւն յուշագիր մը ուղղած է Չորսերու ժողովին, պնդելով այս պահանջին վրայ: Թուրքիոյ զիւստիակցական շրջանակներուն մէջ դիտել կուտան որ եթէ այս պահանջը դո՛ւստացում ստանայ, հետեւանք պիտի ըլլայ նրբանցք մը հաստատել զէպի ծով, եւ այն ատեն Պուլկարիոյ, որոնք Ռուսերու տիրապետութեան տակ են, պիտի կրնան Թուրքիան բաժնել քարկիւմ ազգէ մը: Յունաստանէն: Թուրքիա եւ Յունաստան այժմ կ'ապուլուեն են սերտ զինակցութեամբ մը, որուն հիմը կը կազմէ հասարակաց սահմանադրութիւնը: Եթէ պուլկարական ներքինը կը հաստատուի զէպի ծով, միայն Տէտէ Ալան, Ռուսիա պիտի կրնայ շրջապատել Թուրքիան եւ չեզոքացնել ներքինը: Արդէն ուս կ'ընտրուին կը գտնուին բուրժուարական սահմանադրութիւն վրայ, իսկ արեւելեան կողմը՝ խորհրդային գիւտարները դիք բռնած են այն գծին վրայ որ Թուրքիան կը բաժնէ Վրաստանէն, Հայաստանէն եւ Իրանէն:

Իսլամները կը ւարձանակ հրեաներուն

Պաղեստինի անգլիական բնիչ յանձնաժողովի տեղեկագրին վրայ, որ կը տրամադրէ անմիջապէս արտօնել 100.000 Հրեաներու մուտքը, Տէյլի Հասան էլ Պանա, Իսլամական եղբայրութեան նախագահը, աղաբարեց, — Յանձնարարութեամբ «70 միլիոն Իսլամներու առիւծի բերանը կը նետէ քանի մը միլիոն Հրեաներ: Փոխանակ անոնց սպասարան մը ձարելու Եւրոպայի մէջ, կը դրկեն Պաղեստին, ուր պիտի դռնեն իրենց վախճանը»: Հնդկաստանի մահմետականներուն վարիչը, ձիւնահա եւ յայտարարեց թէ Անգլիա «կոպտորէն կը դրժէ Արաբներուն տուած խոստումները, բան մը որուն երբեք պիտի չհանդուրժէ իսլամական աշխարհը»: Երուսաղէմի Արաբական Գերագոյն Խորհուրդն ալ աղաբարեց անգլ. կառավարութեան. — Եթէ յանձնարարութիւն առաջարկները ըն-

Յեսաձգում է

ԳՐԻՍՏԱՓՈՐ ՄԻՔԱՅԷԼԵՍԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ Մարտի 25-էջ սարքուած հանդէսը, կիր. օրուան քուէարկութեանց առթիւ:

դուռուին, Արաբները «պիտի վերսկսին ազգային պայքարը» որ ընդհատուած էր 1939ին: Այս ազգայնաբարութիւնը մասնաւոր նամակով մը դրկուած է Անգլիոյ վարչապետին: Միեւնոյն ատեն հրաւէր ուղղուած է բոլոր արաբ ազգերուն որ օգնեն, «պաշտպանուելու համար ազգային դէմ»: Արաբ վարիչներէն Ահմէտ Շիքրի կարդաց Անգլիոյ վարչապետին ուղղուած նամակը, մամուլի ներկայացուցիչներուն առջեւ: Արաբները յուշագիր մը կը պատրաստեն, կէտ առ կէտ հերքելու համար յանձնարարութիւն եղբայրացութիւնները:

Երէկ ընդհ. զործադուլ հռչակուած էր բոլոր արաբական երկիրներուն մէջ: Սուրիոյ կառավարութիւնը բողոքելով յանձնարարութիւն տեղեկագրին դէմ, լիակատար աջակցութիւն խոստացաւ: Երբպատոսի մէջ ալ մեծ յուզում կը տիրէ: Արաբական Դանսկիցիներու քարտուղարը ազգայնաբարութիւն մը ուղղեց անգլիական եւ ամերիկեան դեսպաններուն, շեշտելով կացութեան վտանգաւոր հանգամանքը: Ի հարկին Պ. Միութեան օգնութեան պիտի դիմեն:

Հրեաները նոյնքան դժգոհ են — քանի որ հրեական պետութիւն պիտի չկազմուի — եւ դիտել կուտան թէ Անգլիա դիտմամբ կը քաջբէ խնդիրը եւ կը հրահրէ արաբներէն իրենց թշնամութիւնը, շարունակելու համար հողատարութիւնը: Իսկ Անգլիացիները կ'ըսեն թէ Միացեալ Ազգերու խնամակարութեան պիտի յանձնուի Պաղեստինը:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՅՐԱՆՍՍ 2.250.000.000 ՏՈՂՈՎ պիտի ստանայ Մ. Նահանգներէն, սկսելով այս ամիսէն, իր բեւ արդիւնք Պ. Լէոն Պլումի կատարած բանակցութեանց: Յրանսայի պահանջած զուտարն էր չորս միլիոն, բայց Ամերիկացիները զեղծած են: Միեւնոյն ատեն պիտի ջնջուին փոխ-վարձի օրէնքով տրուած դրամները: Վարկերը պիտի տըրուին չորս տարուան ընթացքին: Միեւնոյն ատեն պիտի աւելնայ ամերիկեան անուրի առաքումը:

ՀԱՄԲՈՒՐԻ ԳՐԻՍՏԱՓՈՐ ՄԻՔԱՅԷԼԵՍԻ հետեւանքով, երկարատեւ յոյսը չարագանջ կրճատուած է Շիքրիի եւ ուրիշ 1300 քաղաքներու մէջ, խանդավարով առեւտրական դործերը:

ՈՒՏԵՍԱԸ ՆՈՐԷՆ ՊԻՏԻ ԿՐՃԱՏՈՒԻ Անգլիոյ մէջ, քանի մը օրէն, արժաթ ինայելու համար: Սեւ հաց պիտի ուտեն, կարկանդակը եւ պիւսքիւն պիտի կրճատուին 25 առ հարիւր են: — Յրանսայի նախարարական խորհուրդը առջի օր լեց պարենաւորման նախարարին զեկուցումը, եւ քննեց չորս առաջարկներ. — 1. Ձնջել պետական հրահրութիւնը. — 2. Ձնջել մասամբ. — 3. Պահել ներկայ դրութիւնը. — 4. Աւելի լաւ պարենաւորել բողոքամարդ քաղաքները: Վերջական որոշումը յետաձգուեցաւ երեքշաբթի օրուան: Այս առթիւ թերթերը կը գրեն թէ ուտելիք 3)4ը կը խուսափի պիտեան հսկողութիւնէն, մտահոգութեան մատնելով միլիոնաւոր Ֆրանսացիներ:

ԳԱՀԻՐԻԻ Ծարուք համալսարանը պաշարուեցաւ եղբայրացի զինուորներու կողմէ եւ 18 ուսանողներ ձերբակալուեցան, իրեն խոսիւարար: Երբ հոգի սպաննուեցան ընդհարումներու հետեւանքով:

ՊԵՐՍԻՆԻ ամերիկեան շրջանին հրամանատարը արդիւնց ամերիկացի զինուորներու սիրարանութիւնը Գերմանուհիներու հետ, փողոցներու մէջ: Այս առթիւ լաւ. — «Ձեռք կրնար քննել թէ ի՞նչ կ'անցնի կը դառնայ դուռներուն ետեւ, բայց կրնանք եւ պիտի քննենք հրապարակային արարները»:

ՆԻՐԻՐԸՊԵՐԿԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԵԱՆ Մայիս 2ի նիստին մէջ, Տոքթ. Շախթ դիտել տուաւ թէ Անգլիա եւ Ֆրանսա Հիթլերի պահանջածէն աւելի մեծ պարզեւ տուին Միւնիխի մէջ, «արժաթ փոխի մը վրայ»: Յետոյ կ'առաջարկէ ինք միշտ պայքարած է Հիթլերի դէմ եւ նոյնիսկ մասնակցած մահափորձերու կազմակերպութեան:

1.800.000 ՁՅԳ 40ՇԻԿ եւ մէկ միլիոն չապիկ հրապարակ պիտի հանուին ամէն ամիս, Մայիս 18էն սկսեալ, համաձայն ծարու. արտադրութեան նախարարին յայտարարութեան:

ՀՈՒՆԳԱՐԻՈՅ դրամը գերոյի վերածուած է: Տոլար, որ հինգ փէնիկո կ'արժէր պատերազմէն առաջ, այսօր կ'արժէ 220.000 փէնիկո: Հարիւր հարիւր թղթադրամներ հանուած են եւ վախ կայ որ մէկ միլիոննոց ալ տուրի քանի մը շարքէն: Մէկ հաւիթը, որ 60 փէնիկո կ'արժէր անցեալ սեպտեմբերին, այսօր 9ին բարձրացած էր 350.000ի, իսկ այժմ՝ 2.400.000 փէնիկոյի:

ԿԸ ՓՆՏՈՒՈՒԻ Տիկին Մարիամ Կիրակոսեան (Մէվրէկէղի), ամուսնոյն անունը Պաշտաուր (Նախկին հացոյն 90 Bourg de Valence): Իմացնել հօրեղբոր տղուն Սարգիս Մարտիրոսեանի, 35 rue de Chiffonnier, Paris (19):

Ա. Ամարոնեանի

ԾՆԵՆԵԱՆ ՏՈՒՄԵԱԿԸ ԿԸ ՏՈՆՈՒԻ
Լիոնի 2. Յ. Դ. Նոր Սերունդ Միամանթո խումբին կողմէ, այս կիրակի, ժամը 8.30ին, Salle Francois Coppée, 8 R. Victorien Sardou: Կը նախագահէ Պ. Յ. Վարժապետեան: Կը խօսին Տիկին Օտէթ Միլքայէլեան հայերէն (Ֆրանսուհի, Վալանսէն), Պ. Պ. Հ. Բալուեան եւ Ս. Սիւլեան, կ'երգէ Օր. Մ. Տէր Պետրոսեան: Գեղարուեստական ճոխ բաժին: Կը մասնակցի Կըրնոպլէն հրաւիրուած Կապոյտ Սառի Սանուհիներու Միութիւնը որ տոճիկ տարազներով պիտի պարէ հայկական պարեր ղեկավարութեամբ Տիկին Սիւլեանի: Մուտքը ազատ է:

ՅԵՐԵՎԱՆԻ ՊԱՐԱՀԱՆԻՍ

Կազմակերպուած 2. Յ. Դ. Մ. Եօթնեղբայրեան խումբի կողմէ, հովանաւորութեամբ Երիւյտացի կոմիտէի, 5 Մայիս կիրակի ցերեկէն վերջ ժամը 3էն մինչեւ 11, Իվրի Bains Douchesի սրահին մէջ, rue Barbès, Ivry, métro Choisy: Բանասիրութիւն եւ գեղարուեստական ճոխ բաժին: Եւրոպական պարերը պիտի սկսին ժամը 6ին: Ճոխ եւ աժան պիւսքի: Մուտքը 50 ֆրանք:

ԸՆԿ. Թ. ՄԵԾԱՏՈՒՐԵԱՆԻ մահուան առթիւ փոխան ծաղիկապսակի 200ական ֆրանք կը նուիրէ ընկեր Մինաս Ալթունեան Պանէօ Քաշանի, դուրսը կայ, Կապոյտ Սառի, Հ. Յ. Դ. Նոր Սերունդին, Փարիզի Հայ Արիներու Միութեան եւ Հ. Յ. Դ. Վեթերաններու Ֆոնտին: (Առաջին երեք վրձարուած ուղղակի, վերջին երկուքը ստանալ «Յառաջ»):

ՈՒՍԱՆՈՂՆԵՐ, ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ, ՊԱՐԱՀԱՆԻՍ Էնթիթիւ Արմէնիէի կողմէ, նախադասութեամբ կրթական նախարար Mr. Naegelenի եւ բարձր հովանաւորութեամբ Mr. Justin Godartի: Միջազգային տան շքեղ սրահներուն մէջ, շարք 4 Մայիսի ժամը 4էն 24: 21 Bd. Jourdan, métro Cité Universitaire կամ Porte d'Orléans: Մուտք 100 ֆր.:

ՄԵԾ ՊԱՐԱՀԱՆԻՍ

Կազմակերպուած 2. Բ. Ը. Միութեան Մարսէլի Երիտասարդական Ընկերակցութեան կողմէ, իր կազմութեան տասնամեակի առթիւ, այս շաբաթ իրիկուն ժամը 9էն մինչեւ յոյս, սալօն Գոլպէրի մէջ, 7, 9 rue Colbert, Marseille: Կը բանասիրէ Պ. Ա. Եփրիմեան, կ'երգէ հանրածանօթ Երզնուհի Օր. Իրիս Պիլպիլեան (հրահրութեամբ Փարիզէն): Կը նուագեն Օր. Անժէլ Ա. Կլինեան (դաշնակ), (Professeur à l'école de Piano Madeleine de Valmalette): Պ. Լեւոն Դեւոնեան ջութակ, 1er Grand Prix de Violon du Lycée Musical, կը պարէ Օր. Պաշտարեան: Օրգէսթը Marcel Dulel եւ ընկ.:

ՅՐԱՆՍ. ԲԱՆԱԿԻ ՀԱՅ ՆԱԽԿԻՆ ՌԱԶՄԻԿՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԵԱՆ ՀԱՆԴԵՍԸ

Ի նպատ իր բարենպաստի ձեռնարկներուն, այս շաբաթ դեղեր, 4 Մայիս, Hôtel George Vի գեղեցիկ սրահներուն մէջ, 31 Ave. George V, բարձր հովանաւորութեամբ եւ ներկայութեամբ Փարիզի գինուորական կառավարիչ Mr. le Général Legentil-hommeի: Կը մասնակցին. — Պ. Պ. Jacques Hélianի եւ Bachichahի նուագախումբը, իրենց vedetteներով, ինչպէս նաեւ Փարիզի տաղանդաւոր արուեստադիտուհի եւ արուեստագէտներ՝ Josette Bayné Marcel Dieudonné, Madeleine Adjémian, Assia de Busy, են: Յուշադրութիւն Georgette Rénal տան ամուսնային նորաձեւութեանց: Մրցում պարերու: Պիւսքի, պար: Տոճակներու համար դիմել Պ. Սարաֆեան, 22 rue de la Banque. Cent. 92-97:

ԵՐ. ՏԵՐ ԱՆԴՐԵԱՍԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Հոգեհանգիստ հանդուցեալ հրապարակապի ՅԻՇԱՏԱԿԻՆ ՏԵՐ ԱՆԴՐԵԱՍԵԱՆԻ, մահուան տարելիցին առթիւ այս կիրակի առաւ, 5 Մայիս Լիոնի Հայոց եկեղեցին, 69 rue Louis Blanc, Lyon: Երանանքներով Սպ. Միութեան: Կը հրաւիրուին իր յիշատակը յարգողները:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ. — Կարապետ Մասլաքեան եւ աղջկը Ժաքլին կը ծանուցանեն թէ իրենց մօր ԹԵՄԱՐԻ եւ տիկնոջ ՀԱՅԿՈՒՀԻ համար հոգեհանգիստ պիտի կատարուի, այս կիրակի առաւօտ Փարիզի Հայոց եկեղեցին: Կը հրաւիրուին յիշատակը յարգողները եւ բարեկամները:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ. — Այրի Տիկին Զարուհի Ստեփանեան (Meudon), Պ. Վահրամ Ստեփանեան, հոգեհանգիստեան պաշտօն կատարել կուտան իրենց ամուսնոյն, հօր եւ մեծ մօր, Պ. Ճիվան ՍՏԵՓԱՆԵԱՆԻ եւ Տիկին ՇԱՀՆԱՐ ՍՏԵՓԱՆԵԱՆԻ համար, այս կիրակի, Փարիզի Հայոց եկեղեցին: Կը հրաւիրուին իրենց յիշատակը յարգողները:

ՄԵՐ ԽՕՍՔԸ

«ՅԱՌԱՋԴԻՄԱԿԱՆ» ԲԱՐՔԵՐ

Յեղեղուկ, ծանծաղ միտքեր կան որոնք ոչ բան կը սորվին, ոչ ալ ժամանակի ոգին կ'ըմբռնեն: Կամ այն է որ կորսնցուցած են տրամաբանալու կարողութիւնը: Եւ կամ, իրենց խելքը վարձու տուած ըլլալով, կը խօսին ու կը գործեն համաձայն «վերէն» տրուած հրահանգներու:

Ուրիշ կերպ կարելի չէ բացատրել կարգ մը երեւոյթներ, որոնք բոլորովին հոգեբանութիւն մը կը մատնեն:

Այսպէս, Ազգ. Միութիւնը (Հ. Ա. Ճ.) երկու տարիէ ի վեր ստանձնած է Համազգային Սգատոնին կազմակերպութիւնը:

Կատարեալ դարձ, քանի որ այդ Միութեան հոգեւոր հայրերը, անոր կորիզը, «ներքին կոմիտէն» մինչեւ 1939 ոչ միայն չէին մասնակցեր Ազգ. Միութեան Սգատոնին, այլև դարձելի թուցիկներ հրատարակելով, կը ճգնէին խափանել:

Երէկուան պատմութիւնն են այս բոլորը, եւ աւելորդ է մանրամասնութեանց մէջ խրիլ:

Արդ, ինչպէս իր բոլոր ձեռնարկներուն մէջ, Սգատոնի կազմակերպութեան առթիւ ալ «Ազգային» կոչուած Միութիւնը կ'առաջնորդուի սմանդուկ միտումներով:

Նախ, կը սարսափի քաղաքական կուսակցութիւններէն: Կը հրաւիրէ թերթեր կամ այսինչ անհատը: (Աչք մը նետեցէք իրենց կազմած Մարմիններուն վրայ եւ կը համոզուիք): Յետոյ, իմաստութիւնն կը սեպէ անտեսել այն կազմակերպութիւնները որ չեն վայելի իր բարձր հովանաւորութիւնը:

Կը կարգաբ. Սգահանդէսի յայտարարութիւններն ու հրահանգները, — «մասնակցութեամբ բոլոր հասարակական կազմակերպութեանց»: Բայց, ի զուր կը փնտռէ իրական ուժեր, օրինակ, Յր. Կապույտ Սաչը, Հ. Յ. Գ. Նոր Արուստիք եւն:

Յետոյ, տեղ մը Ազգ. Միութիւնը ինքն իր գլխուն սգահանդէս կը սարքէ, առանց հրահանգներ «որոշ հոսանքի մը պատկանող» կազմակերպութիւնները (Իսի յ Մուկիս, Լիոն, Սէն Եւաճեան եւն.): Իսկ Սէն Եւաճեանի մէջ, նախաձեռնութիւնը միշտ Ազգ. Միութեան պատկանելով հանդերձ, Սգահանդէսին կը մասնակցին Հ. Յ. Գ. կոմիտէն, Կապույտ Սաչը, անոր Սանտիսիմերու Միութիւնը, Նոր Սերունդը եւն.:

Կրնա՞ք լուծել այս հանելուկը: Եթէ ուզէինք աւելի խորանալ, «Յառաջ» ի մէկ շարժումն թիւրք պիտի չբաւէին:

Մարդիկ բառ մը լսել են — «յառաջդիմա կան» և օրն ի րուն իրենց մանածը կը ներկեն, առանց խորհելու որ ի վերջոյ ծիծաղելի կը դարնան հանրութեան առջեւ:

Գծախտարար Երեւանցիներն ալ կը խրախուսեն այդ ստիպան, հատուածական, ըսէք՝ տմարկի խեղկատակութիւնը:

Ահա վերջին օրինակը, — Երեւանէն պատուիրակ մը կուգայ Սուրբա - Լիբանան, եւ, զեկուցում տալու համար կը հրահանգէ միայն... «յառաջդիմական» թերթերը, — խայտաբղէտ օրկաններ որոնք զլիսաւոր արժանիքն է «յորձանշուրթն փառաբանութիւնը», հանգուցեալ Վ. Թէքէեանի բառերով: Քծնիլ եւ բարեւի կենալ:

Նոյն պատուիրակը, Պ. Նազարեան, խօսելով ներգաղթի մասին, կը յայտարարէ բարձրաձայն. — «Այս պատուիրակն օրերուն, մեր նշանաբանն է որ ոչ մէկ հայրենասէր Հայ անմասն միայն այս գործին մէջ»:

Հրաշալի: Անշուշտ պատուիրակը միասին բերած է ջերմաչափ մը կամ ծանրաչափ մը, ստույգալու համար զանազան հոսանքներու եւ թերթերու հայրենասիրութեան աստիճանը:

Աւելի պատկերազարդ պատմութիւն մը: Յակոբ Օշական մահացող մեղք մը կը գործէ, քննադատելով Ս. Հայաստանի բանաստեղծութիւնը: Եւ ահա զեհեհի վայնասուն մը «յառաջդիմական» մամուլին կողմէ, — «Հակահայաստանեան»: Խափանել զբաղէտին յորեխանը, արձակել ուսուցչական պաշտօնէն եւն.:

Երեւանի պատուիրակն ալ, հազիւ Լիբանան հասած, հազիւ երկու խեղճուկրակ «ուսումնական» իրեն տեսած, առանց ստույգելու սեն ու ճերմակը, անմիջապէս ձայն կը բռնէ: (Մանրամասնութիւնները Գ. էջ):

Եւ այս խեղկատակութիւնները կը կոչուին «Հայաստանասիրութիւն»... Ե.



ՉՈՐՍԵՐՈՒ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻՆ ԸՆԴՀ. ՊԱՏԿԵՐԸ

«ՆԵՐԿԱՂԹԸ ՊԻՏԻ ԶՆՄԱՆԻ ՏԵՂԱՇԱՐԺԻ»

(Մասնաւոր քննադատութիւն Յառաջի)

Ամփոփել էի «Լիբանանի սովետ. դեսպանատան աշխատակից» Գ. Նազարեանի յայտարարութիւնները՝ Խորհր. Հայաստանի կեանքին շուրջ: Կամբողջացնեմ պարտքս, ամփոփելով նաեւ բանբերին վկայութիւնները՝ ներգաղթի եւ այլ խնդիրներու շուրջ:

« Հոս գալիս ի վեր, բաւական մօտէն ծանօթացայ գաղութի կեանքին: Այցելեցի դպրոցներ եւ ակումբներ, չիտում ունեցայ զանազան յառաջդիմական կազմակերպութիւններու հետ: (Մ. Միշտ «յառաջդիմական» ուղիով): Գոհունակութեամբ կը յիշեմ, որ հակառակ աննպաստ պայմաններուն, պետական օժանդակութեան համարեալ ամբողջական պակասին, մեծ աշխատանք կը տարուի հայ ընդունի եւ կուլտուրայի պահպանումին, եւ նոյնիսկ զարգացումին: Տեսայ բազմաթիւ հանդէսներ, որոնց ընթացքին խօսողները կ'արտայայտէին իրենց անկեղծ սէրն ու նուիրումը՝ Սո. վիլէթ Հայաստանի հանդէպ: Այս երեւոյթի համար շնորհակալութիւններս կը յայտնեմ արտասահմանի մեր եղբայրներուն:

« Այս տարի կը սկսինք ներգաղթի պատմական գործը: Ներգաղթի արձանագրութիւնները մի աւելորդ անգամ եւս ցոյց տուին այն խանդավառութիւնը եւ նուիրումը, զոր արտասահմանի Հայութիւնը ունի դէպի Սովետ. Հայաստանը: Այս պատմական օրերուն՝ մեր նշանաբանն է՝ որ ոչ մէկ հայրենասէր Հայ անմասն մնայ այս մեծ գործին մէջ:

« Հայաստանի աշխատաւորութիւնը մեծ բերկրանքով ընդունեց ներգաղթի որոշումը: Ոչ մէկ Հայ անմասն մնալու է ներգաղթի օժանդակելու գործում: Հայաստանի մէջ, Արտաշատի կոյսողներին նախաձեռնութեամբ սկսած է նմանը շտեմարտ շարժում մը, ի նպաստ ներգաղթողներու օգնութեան ֆոնտին: Կոլտոգնիկներ, բանուորներ եւ մտաւորականներ, արտակարգ ճիգեր եւ զոհողութիւններ յանձն կ'առնեն, ներգաղթի գործը յաջող սկսելու համար: Սովետ. Հայաստանի կառավարութիւնը մեծ աշխատանքներ կը կատարէ, լաւազոյն ձեռով կազմակերպելու համար ներգաղթը:

« Այս ներգաղթը պիտի չնմանի բոնի տեղաշարժներու, որոնցմէ շատ է տեսեր մեր ժողովուրդը: Ան պարտի ըլլալ գործ մը՝ որ ցոյց տայ Սովետ Հայաստանի ուժն ու հեղինակութիւնը: (Ընդգծումը ինձմէ, Մ.): Հոն, այժմ տեղի կ'ունենան բնակարանային հսկայական շինութիւններ, որպէսզի իւրաքանչիւր ներգաղթող ինքզինք զգայ իր տան մէջ: Հայաստանի մէջ, իւրաքանչիւր ներգաղթողի պիտի ըսենք.

— « Այս ձեր բնակարանը, ա'յս ձեր աշխատանքը, ա'յս ձեր դպրոցը: (Ընդգծումը... յառաջդիմական «Չարթօնք»ինն է, Մ.):

ՉՈՐՍ-ՀԻՆԿ ԺԱՄ ՃԱՌ

ՉՈՐՍԵՐՈՒ ԺՈՂՈՎԻՆ ՄԷՉ

Ոչ մեկը տեղի տալ կ'ուզէ

Չորսերու խորհրդածոզովը ուրբաթ օր լսեց Եւրոպայի եւ Իտալիոյ ներկայացուցիչները, զանազան խնդիրներու մասին: Ազգ. Միութիւնը, Գաղութի, խօսեցաւ խրուածքներէն, որ կը թարգմանուէր տող առ տող: Մէկ ժամ ալ խօսեցաւ Իտալիոյ վարչապետը, Կատիէրի: Անգամ մը եւս հաստատուեցաւ թէ երկու երկիրներուն տեսակէտները կը մնան անհաշտ: Սեզանի վրայ կան վեց առաջարկներ՝ սահմանադրութիւններու մասին, — Եւրոպայ, Իտալիան, Ֆրանսական, անգլիական, ամերիկեան եւ խորհրդային, մէկը միւսէն տարբեր: Վեճին զլիսաւոր ազբուրը կը կազմէ թրիէսթի խնդիրը: Անգլիականները կ'ուզեն Իտալիոյ վերադարձնել զայն, Ս. Միութիւնը կը պահանջէ Եւրոպայի յանձնել: Թերթերը կը գրեն թէ Ֆրանսական ծրագիրը 89.000 Եւրոպայեան կը յանձնէ Իտալիոյ, իսկ 190.000 Իտալացիներ՝ Եւրոպայէն:

Չորս ջոջերը երէկ պիտի քննէին այս հակասական առաջարկները, ելք մը դնելու համար: Ան այժմ կացութիւնը անորոշ է եւ յոռետեսութիւնը կը շարունակուի: Կարգ մը շրջանակներու մէջ կը կարծեն թէ՛ խորհրդածոզովին ճախողութիւնը կանխելու համար, նախընտրելի է առժամայէս մէկը զնել Իտալիոյ հաշտութեան դաշնակիցը եւ բարեփոխել զինադադարի պայմանները, ինչպէս առաջարկեց Ֆրանսական պատուիրակը: Չորս նախարարներն ալ կ'ընդունին թէ Իտալիոյ քաղաքական եւ տնտեսական կացութիւնը ստիպողական կը դարձնէ որ եւ է կարգադրութիւն: Խնդիրը այն է որ Պ. Միութիւնը չընդունի զինադադարի պայմանագիրը բարեփոխելու առաջարկը, իսկ բուն հաշտութեան դաշնակցի մասին համաձայնութեան ճար չի տեսնուիր: Միւս կողմէ, Անգլիոյ ներկա-

(Լուրերու շարունակութիւնը կարդայ Գ. էջ)

տանքը, ա'յս ձեր դպրոցը: (Ընդգծումը... յառաջդիմական «Չարթօնք»ինն է, Մ.):

« Հայութի առնելով միաժամանակ դժուարութիւնները, այդ գործում հասցեայ ցոյց տալու է: Կը ցանկանայի, որ մեր հայրենակիցները ներգաղթի նշանակութեան շարժումները զիտակցէին դժուարութիւններուն: Այս տարի սկիզբն է ներգաղթի, որ զանդուածային կարգով պիտի կատարուի 1947ին: Այս տարի, ամէն միջոց ձեռք կ'առնենք, Յունիսին ուղարկելու համար առաջին կարուստը »:

Մ. Գ. — « Ի լսողաց », — իրեն թէ Երեւանի բանբեր Գ. Նազարեան, պիտի ստանձնէ Լիբանանի սովետ հիւպատոսութիւնը՝ ներկայ հիւպատոս Ա. Տարսնուի տեղ:

ՀԱՅԿԱԿԱՆ ԴԱՏԸ

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ

(Վանի հերոսամարտի 31րդ տարեդարձին առիթով)

Պէտք է կանգ առնել բոլոր մը, հարկ է փակել աչքերը, կատարել մտածման ճիշտ մը՝ հայկական ներկային մէջէն, մերձեցաւ համար մեծութեանը պատմական պահուն: «Իրականացնել» անոր բացառիկ հանգամանքը, տեսնել Հայոց պատմութեան եղակի այս անկրկնադարձը, որուն նմանին հասնելու համար՝ հայկական ճակատագիրը կրնար դարեր սպասել: Անշուշտ, ամէն ոք գիտէ այդ մէկը, եւ արդէն ըսես մաշած՝ այդ ճշմարտութիւնը կորսնցուցեր է իր նորութիւնը: Իր առջ քերած բարոյական խմորումը — պայման ազդեցիկ գործունէութեան — ածելու տեղ՝ կը նուազի: Գոնէ արդէն հի անձիւր: Այդ Դատը, անշուշտ, անտէրձգուած չէ, բայց, հեռու է պաշտպանուելէ յայնպէս ինչ — պէս կը սպասուէր, ինչպէս բոլորէին բացառիկ հանգամանքը պիտի հրամայէր:

Անշուշտ, ամէն ոք գիտէ: Հարկ է սակայն մնալ գիտակցական վառ աստիճանի մը վրայ, մնալ տեւականապէս, յարածուն կերպով, ինչպէս արդասաւորական ջերմութեան մը մէջ, երկունքը դիմաւորելու իրաւունքը չահելու համար:

Անկախութիւնը կորսնցնել է ի վեր, չէ պատահած երբ եւ իցէ, որ մեր ժողովուրդին շահերուն պաշտպանութիւնը՝ միաւորուել այսքան լրիւ՝ ամէնէն մեծ պետութիւններէն մէկուն կամքին հետ: Այդ բոլորէն է վեր, չէ պատահած երբեք, որ այդ նոյն Դատը ունենայ այնպիսի կուռն մը, որպիսին է անհրեւակի յի իրականութիւնը խորհրդային Հայաստանին: Այդ բոլորէն է վեր, չէ պատահած երբ եւ իցէ, որ հանուր աշխարհին վրայ ցրցնուած հայ բեկորները՝ արձակեն մէկ ազգակի միայն, իրենց պատմական պահանջը բանաձեւելու համար:

Եւ եթէ այս բոլոր պարագաները բացառիկ են դրականորէն, ապա ուրեմն, բացառիկ է նաեւ, իր աստիճանութեամբ ու պայթուցիկ բարդութեամբ, միջազգային հակամարտութեան դասաւորումը: Բացառիկ է, նոյնքան եւ աւելի, շահերու նոր ձեւաւորումներուն յարաբերութիւնը ու յեղեղուկ նկարագրը: Մեծ ազգեր, իրենց հակումները շուկայի հանած ղէպի տեւական կայունութեանց ամբանքը, ամէն ոք՝ նոր անակնկալ մը կը նետեն, միջազգային հրապարակին վրայ:

Բացառիկ է նաեւ այն, որ սոցալային հիւսուածքին կարկասը այսօր բանեցնող գրեթէ բոլոր անհատները՝ անցած են 14ի պատերազմին ու անոր «խաղաղութեան» պատրաստութեան... Մենք նմանապէս, ժամանակակիցներն ենք այն եւ այս պատմական շրջաններուն՝ լի այնքան յորդուն յոյսերով, հրապարակութիւններով, ամուլ ճիգերով, անհակազիւ մտնումներով...

Բացառիկ, մանաւանդ ինչքան սրտառու է, ինչքան եղբերականորէն սրտալիք, հեռուէն հասած ձայները մեր երէց, մեր եղբայր եղբայրակիցներուն, Հայաստանի աւազ քաղաքացիներուն՝ Իտահականին, Դեմիրճեանին, Սարգսեանին, Աճառեանին, Մալխասեանին, դեռ այնքան ուրիշներուն... դիւթական շեշտերով ձայները՝ հայրենիքէն, «Հայրենի Հրակէր»... «Իշպի Երկիր»...

Հարկ է ճիշտ ընել՝ չիղձկնելու համար...



Ինչպէ՞ս չիլիւլ, ինչպէ՞ս չոգեկոչել՝ Հայոց Հայրիկը, իւր Զօհրա՛ւրը, եւ Ակնունին, Զարդարեա՛ւրը, Երեմիայի, Վարդապետի, Սաթախի, Սիւրբաթի, Թումանեանի, Տէրեանի, Սանջեանի... Ինչպէ՞ս չոգեկոչել... Ա՛, եթէ ո՞ղջ ըլլալին... Ո՛, եթէ մեր պատմութեան այս բացառիկ բոլորէն, այս անգին զանձը տրուած ըլլար իրենց կեանքին... Նոյնքան մեծօրէն բացառիկ ինչքան այս բոլորէն, շեշտեր պիտի ժայթքէին անոնց սրբուհիներէն, ամէն մէկուն սրտին մասնաշատուկ թրբութեանցով:

Օսմանեան կայսրութեան արիւրուն՝ ինչպիսի մոռնուցներ պիտի արձակէր... Հայոց աշխարհը Հայրիկը, Վասպուրականի հոգեկէն զանձէն, աղամանդեայ շերտով, ինչպիսի զոհար մը պիտի դուրս բերէր, անպաճոյճ այլ շքեղ, կարարգելու համար Հայուն սիրտը, բոլոր Հայերուն սիրտը, ուր որ ալ ըլլար ան... Երկունքը Վարդապետին, Թումանեանին, Սիւրբաթիին, Տէրեանին «պիտի պատուուէին» մարդկային սրտին միակ մեծագոյն, միակ ազնիւ, միակ արգասաւոր կիրքէն, որ կը կոչուի զոհարբող հայրենասիրութիւն... Կարեւոր պիտի ըլլա՞ր խուսափել խուժեղէն, կարելի պիտի ըլլա՞ր մեր սուրբ սպասումներու հերկին մէջ՝ երբեք չհանդիպել կարծի ու եղիճի, կարելի պիտի ըլլա՞ր սուրբ առաջնորդել մեր Դատին երիցս արդար նաեւ՝ առանց թարթափումի, կարելի պիտի ըլլա՞ր... Անշուշտ, անհարկն է տալ դրական պատասխան: Կեանքը շատ է դժուար, մարդուն ախորժակը միշտ անսահման ու զապանային, «գայլը» միշտ իրաւասու «ոչխարին» վրայ, արդարութիւն, իրաւունք միշտ վարչամակ միայն՝ հիւլէական ուժերի մերկութեան վրայ...

Վասպուրական աշխարհ... Հրեղէն անունիդ, դրախտագեղ ազգեստանիդ, բարձրաբերձ սարերուդ, ծովիդ ու ձորիդ անհունօրէն կարօտ, հոգիս՝ արցունքներով եւ ընդվզուած մով մը ահաւոր, քեզ կ'ողբկոչէ... Երեսուն եւ մէկ տարի՛ առաջ... Եւ ինչ հրաշափառ օրեր...

Երբ բոլոր ազատատենչ սիրտերն առնակորով, մարտի երգն էր բերան՝ ռազմաշունչ կ'որոտային: Երբ՝ բոլոր բազուկները յաղթ, հրազէններուն արեւափայլ ճաճանչներով կը շողային: Երբ՝ բոլոր աչքերը հրակարմիր, ցաւուհի եւ վրէժի մոլեգնութեամբ կը խայտային: Որպէսզի՛ արեւնաժանգ ու հաստակուտ զընտանները փշրուէին եւ ոսկեծին դաշտերու մէջ, խոփն ու դուժմանը արդար աշխատանքը յաւերժացնեն:

Որպէսզի՛ չբեղազարդ պայտանները ծխան, ու խորտակուին հայ արիւնը լափող սաղայէնները փլատակներուն տակ խեղդելով: Ու բռնութեան հիմերը սարսիւն, կործանին յաւերժանապէս: Որպէսզի՛, երջանիկ օր մը, հրեղէն դարա — դուրս մը բացուի մեր արեւնաքամ ցեղին եւ արեւնաների հայրենիքին համար:



Վասպուրական աշխարհ... Դուն խորհուրդներուն գերագոյնը եւ ներշնչումներուն նուիրականը պատգամեցիր մեզի, երբ թշնամին դարձեալ իր սուրբ կ'երկնցնէր մեր պարտոյններուն:

Երբ «Աւերաթ Առուին» մօտերը հայ զեղանի հարսներն ու դեռատի ազնիւներն նորէն կը ճշային լեղապատառ, թշնամու լափը ճանկերուն մէջ:

Երբ՝ Վոսթեանը կ'անհետացուէր, Իշխանը՝ Միհրանն ու Վահանը դաւաղաբորէն կ'իյնային պարտակալութեան ճամբուն վրայ:

Երբ՝ ստեղծագործ մեր ցեղին զանգուածները պաշարուեցան եւ թշնամին իր մահատարած հրանօթները կը դետեղէր:

Երբ՝ բազմահազար կիներ, ծերեր եւ լեղապատառ մանուկներ փրկուեցին կ'աղբաչէին... Գուցէ ու մարտնչումի խիզախութիւն սերմանեցիր մեր հոգիներուն մէջ:

Սիւրբաթի եւ Վարդի բարձունքներուն վրայ անգամ մըն ալ ծնաւ հզօրութիւնը մեր ցեղին ու կամքը պողպատակուտ: Ու երկինքը փառեց անտեսուած ընդվզումին մեծ խորոյկը բոցատարած: Ատոր համար էր որ՝ մեր կորացած մէջքերը շտկուեցան, մեր բազուկները վէճը շարժեցին:

Ատոր համար էր, որ լացը չորցաւ մեր ահնադիրին մէջ ու սորվեցանք միայն մեր բազուկներուն ապաւինիլ: Մահն իր սարսափ կորսնցուց... Բայց, սա մէկը դրական է, — այդ «նաւը» պիտի ընթանար աւելի հաստատ, աւելի շքահայեաց, աւելի գերուուն եղանակով մը: Աւելի մեծ չափով պիտի ձեռքարդարուէր հին ու ամուլ թարթափանքներէն, պիտի որդեգրէր, աւելի մեծ չափով, «արդիական», ո՛չ բեմադրական, աղբու՛ր դորձեալ կերպները:



Հեռու մեզմէ, այսպիսի պահու մը, դիւրին ու անհասկացող քննադատութեանց հակումը: Ինչ որ կը պատահի այսօր մեր ճակատագրին, մեզմէ ա՛մէն մէկը, ամէն մէկ Հայ պատասխանատու է անոր: Մեծապէս ժամանակ է հասկնալու, որ բոլոր Պիղատոսներ չընդունիր: Տարակոյսէ վեր է, որ կ'ան կարելիութիւնները: Զիրակնացնել այդ կարելիութիւնները՝ հաւաքական թէ անհատական այն մեղքն է որ որակում չունի: Որ մեր ժամանակակիցները պիտի դամէր ընդ միշտ՝ անարգանքի սրկանին:

Անկարելին չէ տրուած ու եւ է մահկանացուի կամ հաւաքականութեան: Ու ամուլ է ողբալ զայն: Բայց անհատը, ինչպէս հաւաքականութիւնը, երկու հոգեկան վիճակ ունի կատարուած իրականութեան առջեւ: Մէկ պարագային՝ ան կ'ըսէ. « Ինչ որ կարելի էր՝ ըրի»: Միւս պարագային. «Այնքան քան կարելիք, եւ չըրի»:

Առաջին պարագային մէջ զտնուող անհատը կամ հաւաքականութիւնը կրնայ ապագային ամէն ինչ սպասել: Իր կամքն ու ուժը, իր զոհարբումի կարողութիւնը՝ միշտ տրամադրելի: Երկրորդ պարագային՝ արդար է կատարել մուսլ ախտաճանաչում... Պահճը վիպապաշտ, առաւել նուազ՝ բիւզան — դական վերլուծումներուն չէ որ կը պատկանի: Սակայն, հարկ է չմոռնալ երբեք, որ ու եւ է գործնական նորութեան ետեւ, միշտ ներկայ է նոր ոգիի աղբիւրը: Այնքան ատեն որ ոգին, հայեացքը չէ կրած ու եւ է փոփոխութիւն, գործնական իրականացումները դատապարտուած են մնալ սովորամոլութիւն:

Պահճը վիպապաշտ, առաւել նուազ՝ բիւզան — դական վերլուծումներուն չէ որ կը պատկանի: Սակայն, հարկ է չմոռնալ երբեք, որ ու եւ է գործնական նորութեան ետեւ, միշտ ներկայ է նոր ոգիի աղբիւրը: Այնքան ատեն որ ոգին, հայեացքը չէ կրած ու եւ է փոփոխութիւն, գործնական իրականացումները դատապարտուած են մնալ սովորամոլութիւն: (Մնացեալը յաջորդով) **ՀՐԱՉ ԶՍՐԴԱՐԵԱՆ**

Եւ շատերը մոլեգնորէն դիմադրեցին եւ ինչպէ՛ս անմահօրէն, «Վանի Ապրիլեան հերոսամարտը» կերտելով:

Վասպուրականի հերոսամարտ, ի՛նչ փառապանք անուն եւ յաղթանակի ի՛նչպիսի յուշարձան մեր ազատագրական պայքարին մէջ:

Եւ ի՛նչպիսի ստորնացուցիչ, ամօթալի կը թշնամիին համար եւ անոր պատմութեան մէջ:

Վասպուրական աշխարհ... Փա՛ռք քեզ... Փա՛ռք քո շանթարձակ ու բարձրաբերձ լեռներուն, ապառաժներուդ կարծրութեան, պատմաքանդակ բերդին Շամիրամայ, «Յարալէզի» կենսանորոգ, Աղթնամարին արքայանիստ, քու Վա — րագիդ Արծուարոյն ու Նարեկիդ աստուածիկերդ:

Փա՛ռք պողոտատ ու հերոսական Այգեւստանին, մեղրածորան ու մարտագոռ Շատախին, հագարածեայ քաղաքիդ ու հնարագէտ վարպետներուն, որոնք հայկական առաջին թնդանօթը ձուլեցին, եւ ծխաւոր ու անծուխ վառօղբ պատրաստեցին: Փա՛ռք, արեւակէզ մշակներուդ, մտքի, խօսքի ու երգի, գինաւորեալ որդիներուդ արի-արանց եւ բոլոր զաւակներուդ Արմենական: Վասպուրական աշխարհ... Դուն դարձեալ դերի ես հիմա ու սղաւոր, ինչպէս Արարատը յաղթապանձ, ինչպէս Կարինը արքայանիստ, ինչպէս Տարօնը անտուիկ, ինչպէս Երիզան ու Սայրոյ — Զորն... Եւ բոլոր բոյները մեր հայրենի, ուր դեռ մահկալուր դօրը կը ծածանի: Վասպուրական աշխարհ... Ո՛ր եւ արաւոյններդ հրակարմիր, երբ Սիւրբաթի լուսաճաճանչ արեւներու հետ կը պարէր: Ո՛ր եւ հայկական դաշտերուդ սրբապաշտ պղծեցեր, երբ հովիւներու սրինգները կը զնգային: Ո՛ր եւ արտերդ ոսկեփարս, պողպատաններդ դրախտային, վարդանոցներ ու բուրաստաններդ անմահական: Ո՛վ մոխրացուց բարունակներն ու որթատունկերը մեր արգաւանդ աշխիւներուն, որ սկիհն անգինի մնաց եւ ժամն անպատարազ: Ո՛վ հրեհհեց մեր ղէզերը ոսկեճամուկ, մեր կան ու ամբարը, որ մենք մեր հանապազօրեայ հացէն զուրկ մնանք: Ո՛վ ցամքեցուց ձէթը Լուսաւորչի կանթեղին, թոնիւրն անկրակ եւ հողն անմշակ թողուց, որ չէն ու ամառը չըքանան: Ինչո՞ւ հօտերը չեն մալցիլը բլուրներն ի վեր, ինչո՞ւ կ'թուրներու երգն ու ծիծաղը ցամքեցաւ մեր արօտին ու մարգերուն վրայ: Ո՛ր գացին թռչուններու երամները գունապեղ եւ աղոկաները կը կոկոսն Վանէն Տարօն, Երի — զային Կարին, Սալոյն Զորէն մինչեւ հեռաւոր անդամանները հայկական: Մառ չմնաց, ծաղիկ չմնաց, աղբիւրներն ու ջրհորները ցամքեցան եւ ամենուրեք սովալլուկ գայլերն ու բորենիները կը թափառին: Ի՛նչպէս աղիոզում ճշային, ի՛նչպէս գեանատարած պաղատանքն ու չաթափ եւ որդեկորոյս մայրերը այլհեր: Նորահասներն այրիացան, գեղուհիները «մերկանդամ» պարեցին ընտանոքի դաշոյնէն եւ մտրակի հարուածներէն կապուցած իրենց սրբունքները հազիւ շարժելով: Սրտաճմլիկ լացին օր ու դիշեր իրենց սպաննուած մայրերու արիւնոտ ստինքները լիզող, ծրծկերները անմեղապարտ: Դիակներ զիղուեցան, դիղուեցան, յօշոտուած եւ անճանաչելի, ջախջախուած կամ հրկիզուած: Դիակներ՝ լեռնալանջերու եւ բլուրներու վերայ, ճամբաներու եղերքը և աղբակոյտերու վրայ: Դիակներ՝ շուկաներու մէջ, հիւանդանոցներու, դպրոցներու, բանտերու եւ օրօրոցներու մէջ: Դիակներ՝ աշխարհի հզօրներուն ներկայացուցիչներու գոնեներուն առջեւ... Տեսան՝ այդքան չարիք եւ արհաւիրք, այնքան տանջանք եւ զարհուրանք, աւերն ու արիւնը: Տեսան մայրերու գերկերէն խլուած եւ ապառաժներու վրայ, մանուկներու գանկերը ջախջախուած: Տեսան՝ երբ դեռատի հարսներ եւ աղջիկները դէպի հարէմները կը քաշկուտուէին... Ոչ ոք փաթթեց անոնց վէճերը լայնաբերան եւ ոչ ոք զղաց ամօթանքն անդամանելի, հազար հե իրենց ծնունդը նշովոզ եղինկներուն: Ու ծաղրեցին մեր տառապանքն անօրինակ, արարութիւնը մեր Դատին, սակարկելով՝ մեր գոյութիւնն ու արիւնը: Վասպուրական աշխարհ... Դուն դերի ես Արարատին նման. դուն կը սքառ բռնաւորին բիրտ լուծին տակ, ու զաւակներդ հայրենակարօտ քեզ կ'երազեն: Բայց, «Աշխարհն է սպայն չի մնայ»: **ԱՅԳԵՍՏԱՆՅԻ**

ՍՏՅՍՏՆԻՔ
The Appeal of His Holiness Kevork VI, Katholikos of All Armenians. (Կաթողիկոսին յուշագիրը Հայկ. Դատի մասին):
Armenian Bulletin, March 1946. Թիւ 5: (Հրատ. Հայկ. Դատի Յանձնախումբին, Նիւ Եորք):

ՊՈՒՏ Մ ԾԻՄԱՂ

Հե/կարակալի...

Մեր բարձր վաթսուսանքը, Պոլսոյ վարկէ- նի Մարտիկէն ետքը, վկայութեան հրաւիրած են փարիզեան բերքի մը բարձրակից Պ. Ֆաժանը, փաստելու համար իրենց երկրին յառաջդիմութիւնը ու իրենց ֆալսեպետութիւնը ժողովուրդի հանգա- մանքը:

Կարգալով Պ. Ֆաժանի շահարեք եւ «անկողմ- նակալ» տեղեկութիւնները թուրքիոյ մասին, տե- սակցութիւն մը խնդրեցի իրմէ:

— Ի՞նչ է ձեր մինչեւ թուրքիա եւ մինչեւ Կա- րին, Կարս, Արտասան ճամբորդելուն պատճառը: Ձեք՝ կրնար, հոս հանգստորէն նստած ձեր սեղա- նին առջեւէն գրել այդ հէքեաթները:

— Օ՛, մենք կ'ուզենք աչքով տեսնել ամէն ինչ: Մեր թերթը միայն ճշմարտութիւնը գրելու վար- ժուած է: Ես թուրքիա դացի ճշմարտութիւնը փն- տելու նպատակով: Ի՞նչ սխալ հասկացած էք, Կա- րին չեմ եղած ես, Անգարայէն ուղղակի էրզրում դացի:

— Էրզրումին հայերէնը «Կարին» է, որ հայ- կական քաղաք մըն է: Իսկ ճշմարտութիւնը ըսու- ածը, այդ տեղերէն շատոնց հեռացած է: Պարսպ տեղը յոյնած էք: Որքա՞ն հեռաւորութիւն կարե- ցիք Անգարայէն մինչեւ Կարին եւ ի՞նչ միջոցով ճամբորդեցիք:

— Հազար երկու հարիւր քիլոմետր, որ 42 ժամ կը տեւէ երկաթուղով:

— Այսինքն Փարիզէն Նիս: Եւ քառասուն երկու ժամէն: Այդ ի՞նչ արագութիւն: Գլխու պտոյտ չէ՞ք ունեցած: Աւելի լաւ չէ՞ք ըլլար եզան սայլով ճամբորդէիք, հանգիստ եւ անվտանգ:

— Այո՛, տեսաւ եզան սայլեր, շատ հետաքրք- րական էին, բայց անոնք հասարակ ժողովուրդին եւ դիւզայիններուն համար են եղեր:

— Ըսէք, ստիպողական դորձ ունեցողները միայն եզասայլով կը ճամբորդեն եղեր: Ինչպէ՞ս դառն Կարինը:

— Այսինքն էրզրումը: Հա՛, շատ հետաքրքրա- կան քաղաք: Հոն, Արեւելքն ու Արեւմուտքը իրար կ'ողջունեն: Բազմաթիւ շնորհալի միւսարէներ, մզկիթներ, նեղլիկ փողոցներ: Աշխոյժ բազմու- թիւն: Ա՛խ, մանաւանդ քողածածուկ հանրամենք ինչպէս եւ բացերես կիներ: Այս վերջինները որ արդիացում իրատեսեր են, այնքան ալ հետաքրքրա- կան չեն...

— Արդէն թուրքը ուր որ ոտք է դրեր, միմա- րդեմբն է տնկեր հոն, իր քաղաքակրթութեան միակ կոթողը, իսկ հին քրիստոնեայ եկեղեցիները խլամայնելով՝ մզկիթի է վերածեր:

«Ժողովուրդին աշխուժութիւնն ու բացերես կիներն ալ, կ'երեսայ թէ, ի պատիւ ձեզի սար- քուած տեսարան մըն է: Մենք լաւ կը ճանչնանք թուրքին աշխուժութիւնը եւ մանաւանդ այդ տե- սակ աշխուժութիւնները ցուցադրելու անմրցելի վարպետութիւնը:

— Սակայն նոր էրզրումը արդիական, եւրո-

Խաչակրութիւն՝ Օջակալի դեմ...

(Սեփակիան բարձրակարգիւն «Յառաջ»)»

Արձազանդ տուա՞ւ ունոցը՝ զոր Մերձ. Արե- վելքի մէջ կը բարձրացնեն «յառաջդիմական» թեր- թեր, Օջակալի դէմ:

Պատճառ:— Զիմացա՞ք: Քննադատը համար- ձակեր է իր վերջին գործերէն մէկուն մէջ («Վկա- յութիւն մը», մամուլի տակ, լոյս կը տեսնէ քանի մը օրէն) «պարագայական» նկատել Սորսրդասայ բանաստեղծութիւնը, ու չեղաւ՛ (ինչպէս կը շե- տէ 1926էն ի վեր), թէ Հայաստանի մէջ իրար բա- նաստեղծութիւն չկայ:

Այս տեսակէտը կրնայ վիճելի ըլլալ շատերու համար: Ոչ ոք կը հարկադրէ, որ հայ ժողովուրդ եւ հայ քննադատ, դրադատ եւ դրադէտներ բաժ- նեն զայն: Բայց, ոչ ոք կրնայ մեղադրել Օջակա- նը, իր անձնական մտահոգութիւններուն եւ եզրա- կացութիւններուն համար:

Հիմ բունելով այս աննպատ կարծիքը՝ Սոր- սրդասայ գրողներու գործին հանդէպ, Սուրբոյ, Լիրանանի, Կիպրոսի թէ Երուսաղէմի բոլոր կա- չաղակները, ձայն ձայնի եւ կտուց կտուցի տուած անէճք կը կարդան Օջակալի հասցէին, որ «հակա- հայաստանեան» իր կելոյթով, կը դառնայ «Դաշ- նակցութեան թմբակ»...:

Աւելորդ չըլլայ ճշդել, թերեւս, որ «Վկայու- թիւն մը» հատորը՝ վկայութիւն մըն է «Սփիւռքի հոգեխառնութեան», յետպատերազմեան սերունդի, եւ բանաստեղծ Ա. Ծառուկեանի «Թուղթ առ Երեւան» հատորի բարեխառնութեան եւ կրիմային մասին: (Մօտ 200 էջ): Օջակալ, մասնաւոր վեր- յուժումի կ'ենթարկէ այն ոգին՝ որ կը տիրէ այսօր Սփիւռքի մէջ, հանդէպ Հայաստանի, եւ այն ոգին որուն թարգման կը հանդիսանան Գեորգ Արով ներն ու Զ. Բաշինջաղեանները: Այս հակադրու- թեան փորձը՝ պարզապէս տալու համար «Թուղթ առ Երեւան»ի հոգեխառնը:

պական քաղաք է, որ կը տարածուի մինչեւ ար- ուարձանները: Նոր շէնքեր տեսայ, որ կրնային փոխադրուիլ Ֆրանսա, Պելճիքա եւ Անգլիա եւ օրինակ ծառայել այդ երկիրներուն:

— Արդէն Եւրոպայի քաղաքակրթութիւնը թուրքերէն ընթացիկաւ կ'ազատուի: Անոնց Եւրոպայ ոտք կ'սկսէն առաջ, Եւրոպացիները վրանարնակ ժողովուրդներ էին: Այս տեսակէտը փաստացի հաստա- տեցին րահմէթուլլաի Մուսթաֆա Բէճաւը, եւ - րոպացի կարգ մը անկաշառ դիտողականներ, ինչ - պէս նաեւ մեծ բանասէր Մարթա օղլու պայԱկորը:

— Հա, չմոռնամ յիշել: Էրզրումի հինգ հա - րիւր հոգի պարունակող թատրոնը: Մանկավար - ժական կաճառը, Սելճուքներէն մնացած իսլամ համալսարանը եւ լիսէն:

— Կ'երեսայ թէ, այդ թատերասրահը, ժամա- նակին Հայոց Մանասարեան վարժարանի աշա - կերտական ներկայացումներու սրահն էր: Արդէն, հինգ հարիւր հոգինոց սրահ մը կրնայ միայն դե- րասաններու փորձին բաւել: Հայալ ժողովուրդը ո՞ր պիտի նստի... Լիսէն եւ համալսարանը ըսած- ներդ ալ մէտրօպոլիտներ են անպայման, որովչ զուրս եկած են իսլամ կրօնամոլներ եւ ջարդի ու աւա- րատութեան նշանաւոր մասնագէտներ: Կա՞րք ինչպէս դառն:

— Թուրքը փճացուցած են այդ քաղաքին դե- ղեցիկութիւնը, սուլթանական պալատներն ու դե - ղեցիկ շէնքերը: Բայց թուրքերը կրկին շինած - շտկած են զայն:

— Ի՞նչ կասկած: Արդէն թուրքերը ստեղծուած են շինել - շտկելու՝ մանաւանդ եղած շէնքերը հարթելու եւ մաքրելու համար: Իսկ ձեր «սուլթա- նական պալատներ» ըստին ալ Հայոց Բազրատունի թագաւորներու շինած պալատներն են:

— Թուրքերը սահմանադրուիլ անանցա - նելի փշաթելերով պաշտպանուած է: Եթէ ո եւ է թշնամի փորձէ յարձակիլ թուրքիոյ վրայ, վա՛յ է եկեր զլիսուն: Ես հեռագիտակով մինչեւ ուսուական հողը դիտեցի, հոն պահակ զինուորներ կային:

— Իսկապէս որ կարող ռազմադէտներ են թուրքերը: Որո՞ւն մտքէն կ'անցնէր փշաթելերով սահմանադրուիլ ամբողջը: Մե՞ղք որ Գերմանե- րը խելք չըրին ներկայ պատերազմին՝ փշաթելերով պաշտպանել իրենց երկիրը: Եթէ խելք ըրած ըլլա- յին, կարելի՞ էր, որ Թուրքը մինչեւ Պերլին յա- ուաջանային: Գոնէ թուրքերը, իբր բարեկամ յի - շեցնելու էին Գերմաններուն:

« Ի՞նչ լաւ որ հեռուէն դիտած էք այդ փշա- թելերը, այլապէս ձեր աչքերը կը վտանգուէին եւ բոլորովին կը կուրծայիք: Հայերու մասին ո եւ է բան լսած չէ՞ք Կարնոյ մէջ:

— Այո՛, ըսին որ Հայերը օդափոխութեան գացած են, սահմանէն անդին, իրենց հայրենակից- ներուն մօտ՝ Թուրքերը միմակ ձգելով հոն: Կը յուսան մօտերս վերադառնալ իրենց տեղերը: Ամէն պարագայի մէջ, թուրքերը փոխուած եւ արդիա- ցած են:

— Ինչպէս քիչ առաջ ըսիք, Կարնոյ մէջ բօ- ղածածուկ հանրմներու քով քողպերձ թրքուհի - ներ ալ կան: Ուրեմն՝ հին եւ նոր թուրքը իրարմէ բաժնորը՝ բարակ քոլ մըն է...

Կ. ՊԵՏՈՒՇ

Հայհո՞ւււ, սպառնալիք, դիւային դոտում - գոչում: «Յառաջդիմական» բեմեր, վարժարան - ներ, կազմակերպութիւններ, Մամուլ եւ տիրացու- ներ՝ մրցանիչ կը կտրեն անարգանքի եւ սպակա- նութեան կալուածներու վրայ, ի սէր... Հայաս- տանի: Աւելորդ է ըսել, թէ ոգին այն չէ՛ զոր ցոյց կ'ուզեն տալ իբրեւ շարժառիթ. այլ այն գար- շելի ծանծաղամտութիւնը, որ ստեղծուեցաւ վեր- ջին 10—12 ամիսներու ընթացքին, իբրեւ հետե - ւանք «Մեմֆ չեմֆ մոռացիլ»ներու եւ Զ. Բաշին - ջաղեաններու կաղկանձին: «Յառաջդիմական- ները» զէնք դարձուցած են թրքաբարոյ բոլոր այն հայու ղէշները, զորս պրոֆէսօրներու բերնէն իմա- նայու դժբախտութիւնը ունեցան հայրենակարօտ հայ բազմութիւնները:

Ուրիշ ոչինչ: Օջակալ, քան տարիէ ի վեր ճշդած է իր դիրքը՝ թրքաբարոյ գրականութեան եւ բանաստեղծութեան հանդէպ, այս ձեւով եւ այս եզրակացութեամբ: Միակ տարբերութիւնն այն է, որ երէկ ձահիճ չկար՝ կրկան գորտերու համար:

Օջակալ անխոցելի չէ: Ես, անձնապէս, պիտի կարենայի կոմթել զինք, ու, մանաւանդ, հակա - սուլթանները թէ տկարութիւններ հաստատել: Բայց, զարշելի այս խաչակրութիւնը՝ այս ձեւով ու այս ոգիով, աղերս չունի քննադատութեան թէ աղբ. նախանձախնդրութեան հետ, եւ բարձրը բառասմբակ դահալթութեմ մը մասին կը վկայէ:

Այնքան խորունկ է անպատասխանատուութիւ- նը, որ պաշտօնական հանրապրութիւններ կը հրա- տարակուի թերթերու մէջ (միշտ... յառաջդիմա- կան), խափանելու համար Օջակալի Յորեւանը, ու հարկադրելու Երուսաղէմի Պատարբը, որ հրաժարի Յորեւանական Յանձնախումբի նախա - դահալթենէն, ու վտարէ զբազէտը Ռուսեցչական իր ամպիոնէն...:

Այս առթիւ, նուազ... իմաստալից չեն թոյն ու մաղձ սողերը՝ նաեւ «սովետական դեսպանա - տան աշխատակից», Երեւանի բանբեր Գ. Նաղար-

Հ Ր Ա Ջ Դ Ա Ն Ի Ն

(ԳԱՐՆԱՆ ԳԵՂՈՅ)

Հրագրանի կանաչատու ավերին գժտ Ամէն գարնան ծաղկում էին ցօղուն ու ծառ, Թագ մարգերը պատմութեանում ֆօղով քաշի եւ ջերմութեամբ էր սրբաբնում հողը արբշխ:

Նշեմիներն ու զիշերուան մեթութեան մէջ Կայս աստղերին պատմում էին երազն իրենց, Հովն էր յուշիկ օրօր ասում շիւղերին գորշ՝ Լուսնով դիւքուած իրար ժպտում ծիլ ու բողբոջ:

Մինչ Գեղամայ սէգ լեռներից հուսկ Ախուրեան Ծաղ էր տալիս քէթ արեւը շողեր բուրեան, Սեւան լիւր սէրմ էր գեղում իր վաղորդեան Ջրիսի հետ՝ Ծաղկաձորով դէպ Երեւան:

Լճում էի Արալեանը պերն, ծառագարդ, Ազատ շնչում ֆո գեփիւրը, իմ Հրագրան, Հանգչում քովիչ ասպարապեղ քթեմու տակ, Ապա անմեղ խաղով խառնում ջրերդ յստակ:

Ըմբռշխնել եմ ամառներիդ տօթը կիզիչ, Լոգանք առել ֆո ջրերում բիւրեղաշինչ, Եւ հետամուտ ջրիսի ֆո խեմք ու խելա՛ Ունկըն դրել հեփիաթներիդ ոսկեբարբառ:

Նարեկացու շարականներն էի լսում Մեր գիւղերից՝ հորովելներ ջերմ, հայկազուն, Ջանգիւլումներ, եւ Լէլէներ, Հոյնարն անուշ — Որոնց ձուլուած են իմ ամէն երազ ու յուշ:

Խոյզ կայեացում քափանցել եմ յառակդ խոր Ու որոնել մեծ ասպետին խորիքաւար... Շուրջ բոլորդ՝ աւազներից մինչ ֆարաժայո Պրալտել եմ իմ պապերից մի թանկ նշխար:

Քն աւրք գրկից արդ ընկեցիկ ես որք մանուկ՝ Ինձ են կանչում ֆո ավերից ֆանի՛ ամուս, Քա՛նի կարօտ սիրով արտեր անրջացած — Քն շէն ու շող խոր ձորերից, իմ Հրագրան:

ԳՈՐԵԱՆ

ԼՐԱՏՈՒ ԱՐՈՒԵՍՏԻ

«Ֆրանս-Ամէրիք» մէջ կը կարդանք նկարչուհի Վալայի (կինը յայտնի նկարիչ Ս. Պաշտուրեան - նի) մասին հետեւեալ տողերը, Yvan Gollի ստորա- գրութեամբ.

Ապրիլ 21ին ցուցադրուեցան Վալայի նկար - ները: Վալայն, որ հազիւ տարի մը առաջ սկսած է նկարել, մէկ անգամէն երեւան կը բերէ իր դաղտ- նիքները իր 32 ջրանկարներուն մէջ: Արդարեւ, այն բոլոր «կիները» որ կը քննան իր մէջ, կը բոտ նայուածքով միզամած էակներ են, կանուխէն խածուած շրթներ որ իրենց արեւելեան նկար - գրին մէջ կը ծածկեն դոյնի սքողեւած մշուքը: Այս կիներուն վարպետութիւնը առաջին իսկ ժպիտէն, աչքէդ հեռանալն է: Կը կարծես զանոնք հրապու - բել եւ սակայն արդէն կ'անհետին: Այս տեսակէ - տով Մասի Լօտանսէնի երկղիմի Փարիզցիներուն կը նմանին: Վալայի վրձինը թեթեւօքէն եւ ան - նշանակելի կերպով կը դաշէ կտակին, երազը մի - այն մէջտեղ հանելու կը ձգտի ան, քան թէ իրա - կանութիւնը, անձերուն ձգելով իրենց էական ջր - ջաղիճը: Այս կիներուն հոգին է որ աւելի ներկայ է քան անոնց մարմինը: Անոնք մաս կը կազմեն այն փունջերուն որ կը բուրումնաւետեն հասուն եւ դրաւիչ պտուղներ բաժակին մէջ: Շղարշեայ կի - ները եւ ծովափրիւրը կը մրցին շեշտելու թեթե - ւութիւնը անոր կտաններուն:»

× Ուրախութեամբ կը լսենք թէ Ambassadeurs - Henri - Bernstein թատրոնին մէջ, ուր կը ներկա - յացուին Courtelineի շարք մը թատերախաղերը, ե - րիտասարդ եւ տաղանդաւոր դաշնակահար Ռաֆֆի Պետրոսեան է որ կը վարէ նուագախումբը: Այս առթիւ կը յիշեցնենք թէ յառաջիկայ մայիս 15ին, Ռաֆֆին նուագահարէս մը պիտի տայ Լոստոնի մէջ: Յաջողութիւն:

Եանի, հրապարակային իր յայտարարութիւններու կարգին.

— «Կան մարդիկ, որոնք իրենք զիրենք գրա - գէտ համարելով հանդերձ, անմտօրէն կը փորձեն հարուածել Ս. Հայաստանի կուլտուրական ար - ժէքները: Որքան քիչ ըլլան անոնք, եւ որքան շուտ ՄԱԲՐՈՒԻՆ, այնքան աւելի կը շահի հայ ժողովուրդը»: («Ջարթօն», 14 ապրիլ 1946):

Ընդգծումը իմն է:

Ես սիրտ չունիմ ախտաճանաչութեան փորձը խորացնելու: Բանբերին տողերը, ամբողջ ողբեր - գութիւն մըն են ինքնին:

ՎԱՋԳԻՆ ՎԱՆԱՆԴԵԱՆ

ՍՏՍՅԱՆԲ

Հ. Մ. Բ. Մ. (Հայ Սկստու), ամսագիր, թիւ 1, Ապրիլ 1946: Տարեկան բաժնեկին 600 Ֆրանք: Ձեռքէ՛ 50 Ֆրանք: Հասցէ. — U. G. Arménienne «Homenetmen», 32 - 34 rue St. Lazare, Paris (9):

յացուցիչը համաձայն է որ քննուին Ռուսական, Պուլկարիոյ եւ Հունգարիոյ դաշնադիրները, մինչեւ որ խտալական խնդիրը չկարգադրուի: Իսկ Պ. Պ. Մոլոթով եւ Պիտո աւելի գործնական կը գտնեն ընդհանուր քննութեան մը ենթարկել բոլոր դաշնագիրները, յետոյ սակարկութեան մտնելու համար, փոխադարձաբար:

Ճրանսական եւ ռուսական շրջանակներու մէջ աննպաստ ընդունելութիւն գտած է Պ. Պէլլինի ծրագիրը, որ կը թելադրէ անկախ պետութեան մը վերածել Հիւս. Ափրիկէի իտալական գաղթականութեան, Լիբիա եւն.: Պ. Մոլոթով փոփոխութեամբ հասկցուցած է թէ այդ ծրագիրը պիտի ծառայէ ծառայելու բրիտանական ազդեցութիւնը Հիւս. Ափրիկէի մէջ: Ընդունելութիւն չէ գտած նաեւ խորհրդային ծրագիրը (ռուսափոխական խնամակալութիւն), իսկ Ամերիկա կը պնդէ միջազգային խնամակալութեան վրայ:

Մոսկուայի թերթերը կը քննադատեն նաեւ Պ. Պրենսի այն ծրագիրը որ կ'առաջարկէր 25ամեայ դաշնագիր մը կնքել, բոլորովին զինաթափ ընելու համար Գերմանիան: Մոսկուայի անթեր ղերտել կուտայ թէ Մ. Նախնայները այդ ծրագիրը առաջարկելով, կ'ուզեն խուսափիլ իրենց յանձնարարութիւններէն եւ կարճ կապել Գերմանիոյ զինուորական գրաւումը:

Խորհուրդներ Պաղեստինի մէջ

Երուսաղէմէն կը հեռագրեն թէ 12 ժամ տեւեց ընդհ. գործադուլը, բողոքելու համար անգլի-ամերիկեան քննիչ յանձնաժողովին եզրակացու-թեանց գէմ: Արարները 15.000 հոգինոց թափոր մը կազմեցին Երուսաղէմի մէջ, «անկցի» Անգլիա, անկցի՝ Ամերիկա» ազդակելով: Թշնամական ցոյցեր եղան Անգլիոյ վարչապետին եւ Մ. Նա-հանգներու նախագահին դէմ, իսկ նախորդ միջ-թիւն, որ Ֆրանսա կը գտնուի, ծափահարուեցաւ մոլեզնորէն: Ամբոխը քարկոծեց անգլ. զինուորն-րը: Հոգաւոր իշխանութիւնը արապկարգ միջոց-ներ ձեռք առած էր, բարեկարգութիւնը պահպա-նելու համար: Յոյցը վտանգաւոր հանգամանք ստացաւ, երբ 5000 Արաբներ փորձեցին յանաջա-նալ դէպի Դամասկոսի Դուռը, Երուսաղէմի հին քաղաքամասին մէջ: Երբ այս բարեպաշտները մըղ-կիթներէն դուրս կ'ելլէին, ուրիշ 10.000 Արաբներ ալ միացան առաջնորդութեամբ Արաբական կոմի-տէի նախագահին: Երբ ամբոխը Դամասկոսի Դրան կը մտնուար բարկածայթ, անգլ. զինուորները շտապաբար փակեցին երկաթեայ դուռը եւ անմի-ջապէս փշաթելեր հաստատեցին հրապարակին վը-րայ, հրացաններն ուղղելով բազմութեան: Այդ մի-ջոցին էր որ քարեր եւ անէճքներ արձակուեցան: Քանի մը զինուորներ վիրաւորուեցան: Խուճ մը Արաբներ պարիսպներէն մաղկեցելով քարեր նետե-ցին կառքերուն վրայ, բայց ի վերջոյ կարելի ե-ղաւ ցրուել ցուցարարները: Եմանորինակ ցոյցեր տեղի ունեցան ամբողջ Պաղեստինի, Եգիպտոսի եւ ուրիշ արաբական երկիրներու մէջ: Արաբ վա-րիչները կ'առաջարկեն պատերազմական շրջան հռչակել Պաղեստինը եւ հարեան արաբական եր-կիրները փոխադրելով կիները եւ մանուկները: Պաղեստինի արաբական վեց զլխաւոր հասանքն-րը կը պահանջեն սրբազան պատերազմ յայտարա-րել: Ե՛լ յի մը ազդարարեց:

«Մենք նոյն մեթոտները պիտի գործածենք ինչ որ Մամսոն կատարեց Փղշտացիներուն դէմ: Մենք բոցալառ ջահեր պիտի կապենք շնագայլե-րու պոչերուն եւ զանոնք պիտի քշենք հրէական ցորենազաւերը, մեծ հրդեհներ եւ կորուստներ պատճառելով »:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՄԱՀՈՒԱՆ ԴԱՏԱՊԱՐՏՈՒԵՑԱԻ Ալլապի գեր-ման մարզպետը, Վալնէր, ուրիշ չորս մեղսակից-ներու հետ, իբրեւ պատասխանատու 30.000 հա-կանացիներու ջարդին եւ նոյնքան Ալլապցիներու արքորին: Անպարտ արձակուեցաւ մէկ ամբա-տանեալ:

ՍԵՒ ԾՈՒԿԱՆ ոչնչացնելու համար, Պեթիոյ կառավարութիւնը ի հարկին հրապարակը պիտի ողողէ ներածեալ ապրանքներով, ինչպէս ազդա-րարեց ազդ. տնտեսութեան նախարարը: Կօշիկնե-րու դինը պիտի կրճատուի 20 առ հարիւր, կարգ մը կերպասներու դինը՝ 10—20 առ հարիւր: Երկու հարիւր ապրանքներ ազատ պիտի հոսակուին նե-րածման արտօնագրէ եւն.:

ՄԱՅԻՍԻ ՊԱՐԵՆԱՏՈՄԱՐՈՒՆ մէջ անկո-փոխ կը մնան հացի, պանիրի, ճարպեղէնի, շաքա-րի, բրինձի եւն. բաժնեկիները: Միւս ուտեստ-ներու մասին մասնաւոր կարգադրութիւններ պի-տի ըլլան հետզհետէ: — Հաւկիթ պիտի բաժնուի Մայիս 5էն սկսեալ 11 երկու հատ, 12, 13 չորսակի (ապրիլի D կտրօն): 1946-47ի ձմրան համար ամու-խի նոր տոմսեր պիտի բաժնուին մայիս 6—25, Մայիսի 0 կտրօնով (վեցամսեայ): Անոնք որ ոչ կազ ունին, ոչ երկարակամութիւն խոհանոցի հա-մար, պիտի կրնան ածուխի տոմս ստանալ յունիսի թիւ 0 կտրօնով: Պէտք է 15 օրուան մէջ արձանա-

գրուել ամխափաճառին: Ընդհանուր բաշխումի շրջանէն վերջ, միայն բացառիկ պարագաները նկատի պիտի առնուին:

ՀԱՄԱՅՆԱՎԱՐ ԵՐԵՍՓՈՒՍԱՆ ՄԸ ԱՊՏԱԿԵՑ րանկներու նախարարը, Քլէմմոն - Ֆեռանի մէջ, վիճարանական ժողովի մը առթիւ: Երեսփոխանը վտարուեցաւ, իր կարգին նախատուելէ եւ խոշ-տանգուելէ վերջ:

ՀԱՅԻ ԲԱՏՆԵՉԱՓԸ օրական 250 կրամի գեղ-չուեցաւ Յունաստանի մէջ:

ՃԱՓՈՆԻ պատերազմի 28 ոճրագործներու դա-տը սկսաւ Թոքիոյի մէջ: Ամբաստանազիրը ճափո-ներէնէ անգլեիքներէն կը թագմանուէր, եւ մե-ղադրեալները անտարբեր երեւոյթ մը ունէին: Նոյն իսկ մէկը մշիկ - մշիկ կը քնանար, բայց ուրիշ ամբաստանեալ մը գրգռուելով երկու ապտակ իջե-ցուց նախկին վարչապետ Թոթոյի զլխուն եւ գուրս հանուեցաւ:

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ 185 ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐ, որոնք մեծ մասով օղանաւեր եւ զէնքեր կ'արտադրէին եւ կը գտնուէին ամերիկեան շրջանին մէջ, պիտի բաժնուին զլխաւոր Դաշնակիցներուն միջեւ, իբ-րեւ հատուցում:

80 ՄՆՏՈՒԿ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԵՐ փարիզ հասան Գերմանիայէն, մասնաւոր վաճառով մը: Օթէլ Մաթէսթիքի գերման զինուորական վարչութեան վաւերագիրներն են ստոնք:

ՆԻՒՐԸՆՊԵՐԿԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԵԱՆ Մայիս 3ի նիստին մէջ, ամերիկեան դատախազը կարգաց ամբաստանեալ Տոքթ. Շախթի կարգ մը նամակ-ները, որոնք «ճիճագլիկ հոտիւ» կը կոչեն կէօ-րինիք, «յարենման Ներոնի»: Ամբաստանեալը հարցումի մը պատասխանելով, ըսաւ. — «Եթէ ձեռքս զար, ես պիտի սպաննէի Հիթլերը»: Նախ-կին երմտական նախարարը ամբաստանուած է իբ-րեւ նիւթական կազմակերպիչը Գերմանիոյ վե-րագինման:

ԻՐԱՆԻ ԽՆԴԻՐԸ նորէն պիտի քննուի Ապահո-վութեան խորհուրդին մէջ: Թէ՛հրանէն կը հեռա-գրեն թէ կառավարութիւնը ձեռքապահեց կայս-պալատի բարձր պաշտօնատարներէն Միրզա խան Ռաշտին, որ տեսակցութիւն մը ունեցած էր Ատր-պատականի վարչապետին հետ:

ՕՓԵՐԱՅԻ ԵՒ ՕՓԵՐԱ ՔՈՄԻՔԻ երկրորդ գոր-ծադուլն ալ վերջացաւ եւ երէկ վերսկսան ներկա-յացումները:

ԸՄՔՈՍՏՈՒԹԻՒՆ ՄԸ ԵՄԳԵՑԱԻ ամերիկեան բանտի մը մէջ, որ կը գտնուի Սան Ֆրանչիսկոյի զիմացը, կղզեակի մը մէջ: Հարկ եղաւ հրացան, հրասանդ եւ զնդացի գործածել: Մարտանաւերն ալ գիրք բռնեցին: 16 կայանաւորները կը դիմա-դրէին 24 ժամէ ի վեր: Երկու պահակներ սպան-նուեցան, 14 հոգի վիրաւորուեցան: Կ'ըսուի թէ բոլոր բանտարկեալները վիրաւորուած են: Մի-լանի (Իտալիա) բանտին մէջ ալ նոր լմբոսուութիւն մը ծաղեցաւ:

300 ՆՈՐ ԹԱՏՐՈՆՆԵՐ պիտի շինուին Խ. Մի-ութեան մէջ, Կովկասէն մինչեւ Կեղք. Ասիա, հա-մաձայն հեղամեայ ծրագրին: — Քսան միլիառ բուրիի նոր փոխառութիւն մը հրապարակահանուե-ցաւ, «պատերազմի վէրքերը դարմանելու համար»:

ԳԵՐՄԱՆԻՈՅ ամերիկեան շրջանի հրամանա-տարութեան որոշումով, Պեթիոյ, Չեխոսլովա-քիոյ, Տանրմարքայի, Ֆինլանտայի, Յունաստա-նի, Լիբանոնի, Հոլանտայի եւ Նորվեգիոյ հպատակները այլեւս նպաստ պիտի չստանան, ե-թէ իրենց երկիրները չվերագառնան մինչեւ մա-յիս 15:

ՆԿԱՐԱՀԱՆԴԻՍ — Չարեհ Մութաֆեան կը ցուցադրէ իր գործերը Մարսէլի՝ Galerie Sebireի մէջ (81, rue Paradis), Ապրիլ 29էն Մայիս 11:

Ծաղկանոթ

Քերթուածներու հատոր մը, հեղ. Յ. Տապալ - եան, շքեղ տպագրութիւն, կողքը նկարազար-դուած Մ. Քէյպպպեանի կողմէ: Էջ 126, Փարիզի 1946: Գին՝ 150 Ֆրանք: Դիմել հեղինակին՝ H. Da-baghian, 30 rue de Trévisse, Paris (9) եւ գրավա-ճառներուն:

MEUBLES MODERNES

60 Bd. DE LA BLANCARDE, MARSEILLE

Բացուած է Վ. Քիթիֆլեանի կահ - կարա-սիններու մեծ վաճառատունը: Խիստ մատ-չելի գիներով կը ծախուին, ննջասենեակի, ճաշարահի, խոհանոցի, հիւրանոցի ար-գելական ոճով բոլոր տեսակի կարասիներ: Կը ծախուին նաեւ աթոռներ, բազմոցներ, թիկնաթոռներ, կաշիէ եւ թաւիչէ:

Le Gérant : H. AGONEYAN
Imprimerie DER AGOPIAN, 17 Rue Damesme - 13°

ՅՈՒՇԱՏԵՏՐ

Հ. Յ. Դ. «Նոր Սերունդ»ի Փարիզի մասնա - ճիւղի ընդհ. անդամական ժողովը Մայիս 6ին եր-կուշաբթի երեկոյ ժամը 8.30ին Studio Caumartinի մէջ: Métro Madeleine: Կարեւոր օրակարգ: Անդա-մազրուել փափաքողներն եւս կրնան ներկայ ըլլալ:

ԿԱՊՈՅՏ ԽԱՉԻ Փարիզի մասնաճիւղին ընդհ. ժողովը՝ երկուշաբթի, 6 Մայիս, ժամը 3ին Stu-dio Caumartin:

ԼԻՈՆ. — Հ. Յ. Դ. Նոր Սերունդի «Միաման-թօ» խումբին պիտի դասախօսէ՝ Պ. Հր. Բալու-եան, Մայիս 7ին Գշ. «Խ. Արովեան եւ իր Վէրք Հայաստանին»: Մայիս 9ին՝ Եշ. «Հայկական Հարցին ծագումն ու զարգացումը», իրիկուան ժա-մը 8էն 11, Ընկերվարականներու սրահը, 26 rue Paul Bert:

ՅԵՐԵԿՈՅԹ ՊԱՐԱՀԱՆԴԻՍ

Կազմակերպուած Հ. Յ. Դ. Մ. Եօթնեղբայր - եան խումբի կողմէ, հովանաւորութեամբ Եգիպ-տացի կոմիտէի, 5 Մայիս կիրակի ցերեկէն վերջ ժամը 3էն մինչեւ 11, Իվրիի Bains Douchesի սրահին մէջ, rue Barbès, Ivry, métro Choisy: Բանա-խօսութիւն եւ դեղարուեստական ճոխ բաժին: Եւ-րոպական պարերը պիտի սկսին ժամը 6ին: Ճոխ եւ աժան պիւֆէ: Մուտքը 50 Փրանք:

ԿԱՊՈՅՏ ԽԱՉԻ Փարիզի զարոյցն աշակերտ - ները եւ ուսուցչուհին Չատիկ առթիւ 500 Փրանք նուիրած են, հաւկիթ բաժնելու համար չքաւոր աղոց:

ԱՊՐԻԼ 11—24Ի ՍԳԱՏՈՆԸ ԱԼՖՈՐՎԻԼԻ ՄԷՉ այսօր, կիրակի առտու, նախաձեռնութեամբ Ֆ. Ա. Ը. Մ. -եան եւ մասնակցութեամբ բոլոր միու-թիւններու, Ս. Պօղոս - Պետրոս եկեղեցւոյ մէջ: Մասնաւոր պատարագ, հոգեհանգիստ եւ բանա-խօսութիւն: Այս առթիւ կը խնդրուի բոլոր հայ սրճարանապետներէն փակել իրենց սրճարանները ժամը 11էն 13:

ԲՈՒՈՐ ԿԵՍԱՐԱՅԻՆԵՐՈՒ. — Փարիզի եւ շըր-ջաններուն մէջ ընկող Կեսարացի, Թալասցի, Է-վէրէկցի, Թօմարացի, Էֆէբէցի, Կէրմերցի, Տէրէվանցի, Թալուսուեցի եւն. երկուս հայրե-նակիցները խորհրդակցական ընդհ. ժողովի մը կը հրաւիրուին այսօր կիրակի կէս օրէ վերջ, ժամը 2.30ին, 60 rue Lafayette, ճաշարան Արամի ետեւի սրահը: Métro Cadet:

ԴԵՐՉԱԿԱՏԱՆ ՓՈՒՍԴՐՈՒԹԻՒՆ Դերձակ ՏԻԳՐԱՆ ՊԱԳԱԼԵԱՆ կը ծանուցանէ իր յարգի յաճախողներուն, որ տեղափոխուած է 4, rue d'Alexandrie, Paris 2°, երկրորդ յարկ: Հե-ռաձայն Gut. 70-92:

Կիրակի 12, Մայիս 1946 Յերիկոյք ժամը 3ին



«Շիւի»ի Թատրաբախը 28, ռիւ Սէն-Տովինիֆ (Մեք. Էնվալիտ)

ԲԱԳՐԱՏՈՒՆԻ
ԿԸ ՆԵՐԿԱՅԱՅՆԵ ՈՒ ԿԸ ԽԱՂԱՅ
ՀՐԱԶ ՏԱՐՈՆԵԱՆԻ
Հ Ա Յ Ր Ե Ն Ի Ք Է Ն Հ Ե Ռ Ո Ւ
ԹԱՏՐԵՐԳՈՒԹԻՒՆԸ, 4 ԱՐԱՐ, 5 ՊԱՏԿԵՐՈՎ
Տոմսերն ապահովել սովորական վայրերէն
Թատրի կիշէն ու դռները կը փակուին ժամը 3ին:

ՎԵՐԱԲԱՅՈՒՄ
AMERICAN LLOYD
Շոգեմատային ընկերութեան գրասենակներուն
(PARIS, 7 RUE AUBER)
MARSEILLE, 48 RUE DE LA REPUBLIQUE
Շոգեմատով, օդանավ եւ շոգեկառնով մամբար-դութեան տոմսեր Ամերիկայի եւ բոլոր երկիր-ներու համար: Ընդհանրապէս ամէն կար-գի փոխադրութեան վերաբերեալ գործողութիւններ:
Դիմել Պ. ԺԱՆ - ԵՂԻՇԷ ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆԻ Վերոգրեալ հասցէով
ETAB. Z A R E H
ԿՕՇԻԿԻ վերաբերեալ ամէն տեսակ պիտոյք,
ՄՈՐԹ ԵՒ ԿԱՇԻ, 348 rue des Pyrenées, Paris (20):
Պ Ա Տ Ր Ա Ս Տ
ՀԱԳՈՒՍՏԵՂԷՆԻ ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ
Այրերու եւ պատանիներու
ՊՕՅԱՃԵԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ
6, Rue Mulet, LYON

ՀԱՐԱՇ

ՕՐԱԿԻՐ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN FRANCE

HARATCH - Fondé 1925 - R. C. S. 376.286

Directeur-Propriétaire : SCH. MISSAKIAN

17, Rue Damesme - PARIS (13^e)

Tél.: GOB. 15-70 - C. C. P. Paris 1678-63

ՔԱՓՆԵՒԻՆ. - Տար. 750, Շաբա. 400, Յաբա. 200 ֆրանկ

Mardi 7 MAI 1946 Երեքշաբթի 7 ՄԱՅԻՍ

ԺՁ. SU.ՐԻ - 18^e Année N°4603-Նոր շրջանի քիւ 332

Խմբագիր՝ Ե. ՄԻՍԱԿԻԱՆ

Գին՝ 3 ֆր

ՀԱՅՊԱԿԱՆ ԴԱՏԸ

(Բ. Ե. Վերջին մաս)

Պայքարը այն միջոցներով որոնք փրավակա-
տի գլուխին տակ կը գտնուին: Դարձեալ, հեռու
մեզմէ, զանոնք արհամարհելու, հեղինակու հակա-
մտաւորական ու անմիտ կեցուածքը: Այն ինչ որ
ցաւալի, վտանգալի պիտի ըլլար, այն ալ՝ անոնց
ներգործութեան աստիճաններուն վրայ թիւր զգա-
ցական միճակի մէջ գտնուին է, ու հաւաքակա-
նութիւնները այդ վիճակէն վարակելն է:

Միքիլի մը մէջ, կամ սեղանին շուրջ, գի-
նի բաժակը ձեռքին, «մարտիրոս Հայաստանին»
մասին քանի մը օտարահունչ խօսք լսելէ եւ ըսելէ
վերջ, կամ, հայասիրական քանի մը տող ստորա-
գրելէ վերջ, թերթի մը անկիւնը, այն ալ... Եւրո-
պական թերթի մը մէջ, Հայկական Դատը շահ -
ուած՝ իր զրպանը սպառնալ կարծելու արքեպո-
սի մամբը օրօրելու օրօրով... Պիտի նշանակէր
զայն շահելու միջոցներուն մէջ առ նուազը քառորդ
զար ետ երթալ: ... Նուպար փաշան ու Նորա -
տունկեանը, Երկար շրջանով մը, իր առջեւը ձգել...

Պոռչիւղները: Կը թուին աւելի ներգործու
ըլլալ: Եւ սակայն, այդ գրքոյկներուն յղացումն ալ
պէտք է նորոգել: Աւա՛ղ, պէտք է որ գրական
ըլլան անոնք: Ոչ ալ՝ զոնքանչ-հարսի զգուշտու-
մէ՛ իսկ քրիստոնէամիտ, կամ դադարաբախտա-
կան... Այդ բարձր ալ, եթէ կ'ուզէք, բայց դոր-
ձածուած որպէս սէմալ, խորհրդանիշ, եւ ո՛չ թէ
իրիւ հնչուն դրամ...

Հաշի՛ւ, հաշի՛ւ, շահ, շահ, շահ, շահ...

Աւա՛ղ, կը գիտակցիմ որ նորութեանց գոհար-
ներ չէ, որ կը թափուին, եւ սակայն մարդոց պատ-
մութիւնը համակ՝ ուրիշ բան չէ թէ ոչ նոյն յա-
մառ, յաճախ անդարմանելի թերիւններուն կրկնու-
թիւնը...

Ստեղծելու համար ջերմութեան իրական եւ
աւելի կայուն միջոցներով, կարելի պիտի ըլլար թե-
րեւս, նախնորութիւն տալ ռատիօի պարբերա-
կան, կանոնաւոր «հայկական ժամ»-ի մը: Չուն
հայկական ղեկարգութեան բաժին մը շատ աւել-
ի տպաւորիչ պիտի դարձնէր զայն, եւ ջնջեր «Գա-
տի» բաժնին ճանճրոյթը:

Տարակոյս չկայ, սակայն, որ իսկապէս դրա-
կան, շօշափելի արդիւնք մը երբ կարելի է ստի-
նալ, այն ալ կրնայ զայլ, ճշգրտէն՝ ըմբռնուած,
զիւնանախապական կանոնաւոր, ամենօրեայ, յա-
մառ, մեթոտիկ աշխատանքով: Միւսները, այս
մայր գետին տեսակ մը ստուակները պէտք է որ
կազմեն: Անոր արտացոլացումները ըլլան:

Այդ աշխատանքին արդիւնքը կախուած է կար-
եւոր չափով մը անձնաւորութեանց ընտրութե-
նէն, օտար թէ հայ, եւ անոնց ամբողջական ճի-
ւերուն ապահովութենէն եւ գործածութենէն:
Ժամանակ է, որ, ամենօրեայ, թաղականական ա-
մուլ, տխմար գործընկերակիցները նստուին մէկտե-
ղ: Հաստատել կեդրոնատեղի մը, որ ունենայ անմի-
ջապէս անվճար եւ մասնաւոր միջարուած իր պաշ-
տօնատարները, որ առտուրէն մինչեւ իրկուսի ի-
րենց բուն գործը՝ ա՛յդ ընեն: Ու ոչ մէկ առարկա-
թիւն, այսօր, մազի չափ կրնայ ընդունել ըլլալ:
Ժամանակին, եւ մի՛շտ, դրամականն էր: Անըն-
դունելի է ան այսօր: Թող ըլլայ լուրջ մարմին մը,
թող սկսուի լուրջ գործ, մտահոգութիւնը արագ կը
տարածուի, ու, ե՛ւ այս ժողովուրդը, ե՛ւ ունեւոր
դար պէտք եղածին ալ աւելի կ'ապահովուին զայն:

Ինչքան հասկնալի է ամէնուն, որ առեւտրա-
կան ընթացիկ ձեռնարկի մը իսկ յաջողութիւնը՝
պայմանաւորուած է գործատեղիի մը գոյութե-
թեամբ, պաշտօնէութեան մը կանոնաւոր աշխա-
տանքով: Եւ սակայն, բնական, բնական կը
գտնենք, որ Դատի մը լուծուած յաջողութեամբ
պսակուի, զիջ մը ամէն տեղ, այս կամ այն ան-
կիւնը գումարուած կրակատար մարդոց կրակատար
ժողովէ մը:

Բաւականին շեշտուեցաւ ժամանակաշրջանին
մասնաւորապէս բարդ ու յարապիտիս նկարագիրը
որ համեմատութիւն կարելի չէ ընել 14ի յետպա-
տերազմին շրջանին հետ: Անհրաժեշտ է ուրեմն
ամենօրեայ, յամառ աշխատանք, մշակելու համար
տեսականապէս՝ տեսակէտ եւ հաւաքական կեց-
ուածք, գուժահեռակամացնելու համար ամէն օր,
եւ հետզհետէ աւելի սեղմ ուժգնութեամբ, Դատին
պաշտպանութեան ցամաքները՝ տիրող քաղաքա-
կանութեան ցամաքներուն:

Պէտք է, եւ կարելի՛ է, խաղաղով, ապահովել
ինչպէս որ հարկն է, ամենօրեայ գործակցութե-
նը, առաջին գծի վրայ գտնուող օտար պետական

անձնաւորութեան մը, կամ նոյն իսկ անձնաւորու-
թեանց: Միւս մեծ հայաստեանները երեւան կրնան
զալ՝ մերթ ընդ մերթ, գործի կարելի է լծել՝ եր-
բեմն երբեմն: Այս մէջը, ամէն օր, իր խորհուրդ-
ներով, իր միջամտութիւններով, իր անձնա-
կան ծանօթութիւններով ու հեղինակութեամբ, որ
օրուան նորոգ նորոգ կացութիւններու մէջ, ձեռք
պիտի պահէ, իր հայ գործակիցներուն հետ, Հայի.
Դատի կառքին ղեկը: Այդ կերպով է, մասնաւոր,
զիրքի ամենօրեայ մշակման աշխատանքով ու
«մասնագէտ» անձնաւորութեանց ձեռքերով, որ
կարելի է ալ Հայի. Դատին այն լեզուն, որ ընդ-
հանրապէս խորհրդատուներուն մէջ կը լսուի
առանց ժպտի, եւ կը հասկցուի... Այն կիսովին,
երբեմն ըսուած, երբեմն չըսուած, երբեմն աղա-
ղակուած լեզուով, որ կրնայ շարժիլ միայն, աղ-
նարկուած «հայկերուն», «չահերուն» ճախճա -
խուտ, թունալից, պայթուցիկ մակերեսներուն
վրայ... Ի՛նչ գործ ունին հոն, Աստուած իմ,
«մարտիրոս Հայաստանին» սրտաշարժ կանչերը...
Այդ կանչերուն միակ սրբապալը՝ մեր սրտերն են:
Ժամը ժամին, ու ճիշդ իր ժամին, ու ճիշդ իր տե-
ղը կատարուած զիմումէն, գործէն, կատարուած
հեղինակաւոր ձայնով որ կը կոթնի հանուր բազ-
մութեանց մտահոգութեան ու կամքին վրայ, կարե-
լի է յուսալ իրականանալին: Դիմում, գործ, ձայն
որ կը բխի ձեռնհաս Մարմինէն՝ պատրաստ մէն մի
արտաքին հիւսկազդեցութեան հակադրելու առաւել-
ազոյն չափով ներգործուն ու նորոգ ազդեցութե-
նը: Ճի՛շդ է, «Հայասիրականը» յաճախ խորուսիկ
է, շատ յաճախ սնամէջ, վարձկան, շահագէտ եւ
զրեթէ միշտ ամուլ կամ անազրու:

Եւ սակայն, կայ նաեւ նոյն շքադրամին ետեւի
երեսին ճշմարտութիւնը: Նախ, մենք շատ քիչ բան
ըրձ ենք որ այդ հայասիրական ուժերը ըլլան
անկեղծ, իրական: Տեսոյ, խորագոյն միամտու-
թիւն մը կայ մեր կողմէն, անմիտ մեղադրանքի
այդ ընդհանրացած շեշտով, սպասել որ ան ու-
րիշ կերպ ըլլայ: Եւ սակայն, հայասիրական ու-
ժերը ունենալով հանդերձ այդ յատկանշուժը,
կրնան, պէտք եղած քաղցին, շարժել վերջ պէտք
եղած եղանակով, դառնալ իրական, եւ ապա կար-
ծուածէն աւելի մեծ արդիւնք:

Ահա վաղը Փարիզի մէջ կը բացուի հաշտու-
թեան խորհրդատուութիւնը: Կ'ըսեն որ ան կրնայ ու-
նենալ իր օրակարգին վրայ նաեւ Հայի. Դատը, եւ
կրնայ ունենալ իրեն կից հայկական պիւնո մը...
Կր մնայ դիմաւոր, թէ դարձեալ անապառն ու
թատերական ընդ պիտի յաղթեն, թէ՛, պատմական
րոպէին բարտորոշ մեծութեանը պատշաճ լո՛ւրջ
գործը:

Որ եւ է կարգի դանձ երկնքին չիփար: Պէտք է
արժանանալ անոր: Չոհոնութիւն կատարելով:
Կատարուած զոհողութիւնը արժեցնելով: Նախորդ
սերունդները, ժամանակակից պատմութեան եր-
կայնքին, տոնին առատօրէն այդ տուրքը: Երիտա-
սարդ կեանքերու ամբողջ փաղաքանքը, իսկալը
աչքերուն, մեռնելու դաջին...

Կուզայ րոպէ մը, ուր անհատը, ուր հաւաքա-
կանութիւնը հարկ է որ առակ ըլլայ ամբողջովին
փոխակերպուելու, զոհաբերող հայրենասիրու-
թեան անօրինակ ժայթքի մը մէջ... Մտաւորակա-
նութեան կ'իյնայ ձգելիս զգեցողութեան ի վրայ պահու-
ման:

Ամէնուն կը արուի այնքան՝ ինչքանի որ, բոլոր
եղանակներով, արժանի կը յաջողի հանդիսանալ
ան:

ՀՐԱՁ ԶԱՐԴԱՐՆԵՆ

ԱՌԻՅՐԻՆԻՆ կը հեռագրեն թէ անպէ՛. կառավա-
րութիւնը իր միտքը փոխած է եւ կ'ուզէ որ անմի-
ջապէս հանրաքուէ կատարուի — փոխանակ յե-
տաձգելու մինչեւ 1948 — վճռելու համար միա-
պետութեան խնդիրը: Անպէ՛. գործը Յունաստան
պիտի մնայ, մինչեւ հանրաքուէի կատարումը:
ՆԻՒՐԸՆՊԵՐԿԻ մօտ շարք մը պայթիւններ
տեղի ունեցան, ոչնչացնելով 15.000 թոն պայթու-
ցիկ նիւթեր 25.000 թոնի վրայ եւ 173 V2 սուժեր:
Բազմաթիւ պատուհաններ խորտակուեցան 10 մղոն
հեռաւորութեան վրայ:

ՊՈՒՔՐԻՆԻՆ կը հեռագրեն թէ մառէ՛լայ Ան -
տանէսքուի դատը սկսաւ երկուշաբթի օր:

ԶԵՐԲԱԿԱՆՈՒԵՑԱՆ զնդ. Փասի (Դիմադրա-
կան ձակատէն) եւ 50 անդամներ D. G. E. R. կազ-
մակերպուի ինչպէս (զազանի) սոսիկանութիւն:
Կ'ըսուի թէ ինչպէր քաղաքական հանդուսնք չու-
նի, այլ կը վերաբերի նիւթական զեղծումներու:

ՓՐԱՎԱՅԻՆ կը հեռագրեն թէ նացի դաւադիր-
ներ օդը հանցին ռազմանիւթի մթերանոցներ, ո-
րոնց հետեւանքով վառեցան ութ զիւղեր, հինգը
ամբողջովին: Չոհերու թիւը 50ը կ'անցնի:

ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ՄԵՐԺԵՑ ՆՈՐ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Մօս մեկուկես միլիոն «ոչ»

Կիրակի օրուան ընդհ. քուէարկութիւնը անա-
կնկալ մը եղաւ շատերուն համար, — մերթուժ
Սահմանադրութեան, աւելի քան մէկուկէս միլիոն
քուէներու առաւելութեամբ, ինչպէս կը հաստա-
տան առաջին տեղեկութիւնները: Երկուշաբ -
թի առտու մինչեւ ժամը 3 հասած լուրերու հա -
մաձայն, 79 նահանգներ «ոչ» պատասխանած են
53 առ հարիւր համեմատութեամբ: Փարիզ եւ Սէ -
նի նահանգը եւս ժխտական պատասխան տուած են,
հակառակ բանուորական շրջաններու «այո»ներուն:

Այսպէս նոր Սահմանադրութիւնը մերթուժ
ըլլալով, 1945 նոյեմբեր 2ի օրէնքին համաձայն,
որ ժողովուրդին հաւանութեան արժանացաւ 1945
Հոկտեմբեր 2ի ընդհ. քուէարկութեամբ, պիտի
ընտրուի նոր Սահմանադիր ժողով մը, միեւնոյն
իրաւասութիւններով, մշակելու համար Սահմա -
նադրութիւնը: Մեծամասնութիւնը «ոչ» պատաս-
խանած ըլլալով, անցեալ ապրիլին քուէարկուած
ընտրական օրէնքն ալ ինքնին ջուրը կ'իյնայ: Երկ-
րորդ Սահմանադիր ժողովին ընտրութիւնը պիտի
կատարուի Յունիս 2ին, համաձայն 1945ի ընտրա-
կան օրէնքին:

Աջակողմեան եւ չափաւոր հոսանքները բնա -
կանաբար դո՛հ են «ընկերվարական-համայնավար»
Սահմանադրութեան մերթուժէն: Figaro կը գրէ թէ
«ոչ» մտութիւնը յաղթեց: Մայրաքաղաքը եւ իր
շրջանը — կարմիր — (արուարձաններ) սքանչելի
պայքով մը մերթուժին ընդունիլ շղթայակալ Սահ-
մանադրութեան նախագիծը զոր կ'առաջարկէին ի-
րենցը: L'Époque, թունգը աշխարհեան, որ սկիզբէն
ի վեր պայքար կը մղէր բուն յարձակումներով եւ
ծաղրանկարներով, կը յորդորէ դիտարկը, —
«Փրանսան «ոչ» պատասխանեց կարմիր Փաշակա-
նութեան»: L'Aube, ժողովրդական հոսանքին (M.
R. P.) պաշտօնաթիւթը, «կեցցէ՛ հանրապետու-
թիւնը» խորագրով խմբագրականի մը մէջ (Մոռիս
Շուման) կ'աւետէ «ժողովրդապետութեան յաղ -
թանակը» եւ կը յայտարարէ. — «Այս առտու մի -
այն մէկ յաղթական կայ, — Հանրապետութիւնը»:

Համայնավար պաշտօնաթիւթը, L'Humanité,
զիտել կուտայ թէ «թեթեւ մեծամասնութիւն մը
գոյացած կը թուի «ոչ» երու միաբանութեամբ»:
Եւ խոշոր խորագրիներով կը կրկնէ իր նշանախօս-
քը. — «Միութիւն, Միութիւն»: Ու կը հրաւիրէ
համայնավարները, ընկերվարականները, դիմա -
դրականները, հանրապետականները ձեռք ձեռք
տալ, կարելի եղածին չափ շուտ ապահովելու հա-
մար տեսական օրէնքներ Փրանսայի եւ հանրապե-
տութեան բարիքին համար: Ընկերվարական
պաշտօնաթիւթը, Le Populaire, անդամ մը եւս կը
բացատրէ կուսակցութեան տեսակետները, ընդհ. -
քարտուղարին ստորագրութեամբ, — «ը՛հմ՝ ամէն
տեսակ զիկատարութեան, ինչ որ ալ ըլլայ»: Եւ
կը յիշեցնէ վերջին ընդհ. ժողովին նշանախօսքը,
— «Մտառել եւ փրկիլ երկիրը, որպէսզի վերջա-
պէս աղատի այն քառսէն ուր խրած է»:

ԳԱՆԻ ՄԸ ԹԻՒՆԵՐ ԵՒ ՊԵՏԱԿԱՆՆԵՐ

Երէկ առտուան թերթերը հրատարակելով
մինչեւ ժամը 3.30 հասած տեղեկութիւնները, կը
գրէին թէ 93 նահանգներու մէջ 9.082.500 քուէար-
կուներ «այո» պատասխանած են, 10.315.600 հոգի՝
«ոչ»: Ուրիշներ 1.500.000 — 1.600.000 կը հաշուեն
«ոչ» երու առաւելութիւնը: Վերջնական պատկերը
պիտի պարզուի այսօր:

Քուէարկութիւնը տեղի ունեցած է ընդհան -
րապէս հանդարտ: Ամէնէն բուն պայքարը մըղ-
ուեցաւ Փարիզի մէջ: Թերթերը կը գրեն թէ շատ
մը համայնավարական աղբերու «այո»ին վրայ
«ոչ»եր փակցուած էին զիշերանց. այնպէս որ
կարծողներ եղած են թէ կուսակցութիւնը փոխած
է իր դիրքը: Ծարաւարդործական մեծ շրջաննե -
րու մէջ ոչ մէկ տեղ «այո»ները կարեւոր համեմա-
տութիւն մը կը կազմէին: Փարիզի 19րդ թաղա-
մասին մէջ, ուր քուէարկողները մեծ մասով բան-
ուորներ են, 42.353. «այո»ներու դէմ 41.846 «ոչ»
քուէներ կային: 11րդ թաղամասին մէջ՝ 51.361
այո, 45.292 ոչ, 20րդին մէջ՝ որ թունգը կարմիր
կը համարուի, 55.176 այո, 40.625 ոչ: Ա. թաղա-
մասին մէջ (Լուվր), 8րդ (Շան Գէնիլի), 9րդ (Օ -
փերա), 16րդ (Փասի), բոլորն ալ աղտուակեա -
կան շրջաններ, մեծամասնութիւնը «ոչ» պատաս-
խանած է: Սէն-Տընիի եւ Սէնթ Ուէնի մէջ, որոնք
բանուորական շրջաններ են, «այո»ները աւելի քան
կրկնապատիկ էին, բայց հակահամայնավար շըր-
ջաններու մէջ երբեմն «ոչ»ները «այո»ներուն քա-
նապատիկն եղած են:

Գաւառի մէջ ալ նոյն պատկերը: Մարսէյ, որ
ընկերվարական — համայնավար միջնաբերդ մը կը
համարուի, 153.691 «այո», 101.252 «ոչ» արձա -
նադրած էր: Գիւղական շրջանները ընդհանրա -
պէս «ոչ» պատասխանած են: Պոտտոյի մէջ այո
պատասխանած են 45.236 հոգի, ոչ՝ 68.407 հոգի:
Նահանգներէն «այո»ն մեծամասնութիւնը չա-
հած է Պուլ - տիւ - Ռոնի, Տրոմի, Վատի մէջ են:

× Թերթերը կը գրեն թէ գոր. ար 40լ չէ մաս-
նակցած քուէարկութեան, ոչ անձամբ, ոչ ալ նա-
մակով:

Չորսերը անեղի սուղել

Չորսերու ժողովը շարաթ օր քննեց Եռեկո - սլաւիոյ եւ Իտալիոյ պահանջները, առանց որ եւ է համաձայնութեան յանգելու: Մ. Նահանգներու նախագահը յաջողօր օրը մասնաւոր խօսակցութիւն մը ունեցաւ Պ. Պ. Մոլոթովի եւ Պէլլիւի հետ, եւ ք մը դառնելու համար: Վէճի զլխաւոր նիւթն է Թրիէսթի խնդիրը: Անգլիա, Ֆրանսա եւ Մ. Նահանգները կ'առաջարկեն Թրիէսթէն վերադարձնել Իտալիոյ, իսկ Միութիւնը կը պահանջէ յանձնել Եռեկոսլաւիոյ: Այս առթիւ պատմական - ակադեմիական տեսութիւններ ալ պարզուեցան, սկսելով 15րդ դարէն: Պ. Մոլոթով դիտել տուաւ թէ անգլի-եւամերիկեան ծրագիրը «տեսակ մը պատիժ է Եռեկոսլաւիոյ համար, որ ամէն պարագայի մէջ դաշնակից մըն է»: Իր կարծիքով, եթէ այդ հողա-մասը Եռեկոսլաւիոյ չյանձնուի, զուտ պիտի բա-նայ Ֆրանսիան նոր արշաւանքի մը: Եւ պիտի ցու-կոսլաւիոյ յանձնել բոլոր վիճելի հողերը, յանձն առնելով Իտալիոյ դոհացում տալ ուրիշ խնդիրնե-րու մէջ: Պ. Պէլլիւն դիտել տուաւ թէ Անգլիա չի կրնար սակարկութիւններ կատարել ժողովուրդնե-րու կեանքին վրայ: Պ. Պրընս ըսաւ թէ Թրիէսթէն Իտալիոյ կը պատկանէր 15րդ դարուն: Պ. Մոլո-թով պատասխանեց թէ 15րդ դարուն միացեալ Ի-տալիա չկար, այլ Վենետիկի հանրապետութիւն, թէ 1810ին Նափոլէոն այժմ վիճելի հողերէն կազ-մեց Իլլիրիոյ հանրապետութիւնը, մէջն առնելով Թրիէսթէն, ինչ որ կը նշանակէ թէ Եռեկոսլաւիոյ կը պատկանի: «Ամէն պարագայի մէջ Նափոլէոն Եռեկոսլաւ չէր: Ասոր վրայ Պ. Պրընս առաջար-կեց հանրաբուժ կատարել: Պէլլիւն մերժեց այս ա-ռաջարկը, իսկ Մոլոթով պատասխանեց թէ հան-րաբուժն պէտք է կատարուի ամբողջ Վենետիա ձիւղիւրի վրայ շրջանին եւ ոչ թէ անոր մէկ մասին մէջ:

Ամբողջ խնդիրը դիւանագիտական պայքար մըն է Միջերկրական շուրջը: Ս. Միութիւնը կը ձգտի Միջերկրական իջնել, Անգլիա կ'ուզէ պահել իր գերակշռութիւնը այդ ծովուն մէջ: Քաղաքա-կան շրջանակներու մէջ անհամբեր կը սպասեն մասնաւոր խօսակցութեանց արդիւնքին, որ պիտի պարզուէր երէկուան ժողովին մէջ:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ մասին համաձայնութիւն գո-յացած է Իրանի կեդրոնական կառավարութեան եւ նոյն նահանգի ներկայացուցիչներուն միջեւ, հա-մաձայն վերջին լուրերու: Ռուսերը արդէն պար-պած չորս նահանգներ եւ երէկ, 6 Մայիս, Ասոր-պատականէն ալ հեռացած պիտի ըլլային, համա-ձայն իրենց խոստումին: Ապահովութեան խոր-հուրդը վաղը նորէն պիտի քննէ Իրանի խնդիրը եւ հաւանաբար պիտի փակէ զայն, քանի որ Ռուսերը քաշուած են:

ՊԱՂԵՍՏԻՆԻ ԽՆԴԻՐԸ հետզհետէ կը ծանրա-նայ: Արաբական Դաշնակցութեան ընդհ. քարտու-ղարը յայտարարեց թէ արտակարգ ժողով մը պի-տի գումարեն Մայիս 15-20, քննելու համար անգլեամերիկեան յանձնաժողովին տեղեկագիրը: Այս առթիւ ակնյուշ թէ արաբական պատուիրա-կութիւն մը պիտի զբնդուի Մոսկուա, իսկ Միութեան անգլիացիները խնդրելու համար անգլիա-մերիկեան միջամտութեան դէմ: Պատուիրակու-թիւնը պիտի բաղկանայ Պաղեստինի եւ Երիտասի արաբ ներկայացուցիչներէն: Հինգ պատուիրակ-ներ Արաբիա դաշին օդանաւով, խորհրդակցելու համար Բաղդ Ենթուի հետ: Ուրիշ պատուիրակու-թիւն մըն ալ, որ կը բաղկանայ Իսլամ եղբայրու-թեան եւ Ռուսանդական Միութեան ներկայացու-ցիչներէն, Պաղեստին գնաց: Իրաքի միացեալ կու-սակցութիւնները որոշեցին ընդհ. գործադուլ յայ-տարարել ուրբաթ օր, բողոքելու համար անգլիա-ամերիկեան ծրագրին դէմ: Սուրիոյ երեսփ. ժո-ղովին մէջ երեսփոխան մը շնորհակալութիւն յայտնեց Ս. Միութեան որ մերժած է մասնակցիլ «Պաղեստինի դէմ սարքուած անգլեամերիկեան դաւադրութեան», եւ խնդրեց Միացեալ Արգերէն եւ Ս. Միութեանէն մերժել անգլեամերիկեան յանձնաժողովին առաջարկները: Մոսկուայի ան-թելը կը բաշխուի ընդդիմութիւնը՝ արաբերէն գեկոյցներով:

ԱՆԳԼԵՒԵՒԹՅԱԿԱՆ ԲԱՆԱԿՅՈՒԹԻՒՆՆԵՐԸ վճռական կէտի մը հասած են: Կ'ըսուի թէ Անգլ-իա պիտի պարպէ իր զօրքը, նոյնիսկ Սուէզը: ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԱՄՈՒԼԻ ՕՐԸ տօնուեցաւ Մոսկուայի մէջ, ի պատիւ կուսակցական պաշտօ-նակիրներին՝ «Փրալմաթ»-ի, որ հիմնուած էր 1912 Մայիս 5ին, 1էնիսի եւ Սթալինի կողմէ: Երկու նոր նախարարութիւններ հաստատուեցան Ս. Մի-ութեան մէջ, Ռուստի պահեստ եւ հում նիւ-թերու պահեստ:

ՊԵՐՏՐՈՒԹԵՆ կը հեռագրեն թէ անգլ. եւ Ֆը-րանսական զինուորները Սուրիա - Լիբանանէն պիտի հեռանան մինչեւ Յունիս 30:

150 ԿՐԱՄ ՊԱՂԱՏՈՅ Միս պիտի բաժնուի Մայիս 6-12, B4 (1004.) եւ BB (50 4.) կարօննե-րով, ինչպէս եւ 100 կրամ խոզեղէն՝ B3 կարօնով:

ՅԱՉՈՂ ՁԵՌՆԱՐԿ ՄԸ

ԿՐԸՆՈՊԷ, (յապաղած) — Միութիւն «Յառաջ», մեր Սանուհիներու Միութիւնը որ կազմուած է երեք ամիսէ ի վեր, ունի 40 անդամուհի, 13-23 տարեկան: Կը յաճախեն հայերէնի դասընթացք մը շարաթ երկու անգամ: Ուսուցիչն է Պ. Տրդատ Սո-ղոմոնեան, որուն շնորհիւ մաքուր առողջանու-թեամբ հայերէն կը խօսին, կ'երգեն եւ կ'արտա-սանեն: Սանուհիները կազմակերպած էին հանդէս մը Մարտ 30ին, St. Josephի թատրոնը: Կընդունին եւ շրջաններէն բազմութիւն մը եկած էր քաջայերել այս ձեռնարկը: Սանուհիները նախ երգեցին երկու նոր երգեր որմէ վերջ ներկայացուեցաւ Կապոյտ Խաչի կողմէ գաւեշտ մը երեք արար (Ս. Թօլոյեա-եանի) «Բարձրացիր, բարձրացուր»: Դերակա-տարները իրենց դերերը տարին շատ յաջող, թէ եւ առաջին անգամ բեմ կ'ելլէին, երեք գործող աղ-ջիկները: Զուռնայի վերջ Տիկին Միսիսի դեկա-վարութեամբ, Սանուհիները պարեցին հինգ պար երկու պատկերներով: Առաջին պարը, չինական թէ հաղուստով եւ թէ երգով, բոլորովին նորու-թիւն մըն էր հանդիսականներուն համար: Միւս պարերը հայկական էին, ճոխ տարազներով: Տնօ-րէնը շնորհակալութիւն յայտնելով, ակնյուշ թէ միշտ մեր տրամադրութեան տակ կը դնէ թատրո-նը: «Այս տեսակ կարգապահութիւն երբեք չտե-ռայ միւս օտարներու մօտ»: Ներկաները այնքան յուզուած էին հայկական երգերէն եւ պարերէն որ մէկը միւսին կ'ըսէր. — Այսօր մեր Մուշի գիւղն էմ»: Իսկապէս ապրեցանք վայրկեան մը մեր հայ-րենիքէն, մեր աչքերուն տղեւ պատկերացան հայրենի կանանց դաշուները, կապուտակ երկինքը, լսեցինք Արաբի զլլալը, Պինկօլը, դառնելու մայրը, ապրեցանք մէկ ժամ մեր հայրենի երգե-րով: Տիկին Միսիսի շնորհակալութիւն յայտնե-լով հանդիսականներուն, հրաւիրեց ծնողները ան-դամագրել իրենց գաւակները այս արգօղուտ Միութեան: Հանդէսը վերջացաւ տեղատարափ ծաղիկներ տակ եւ ներկաները մեկնեցան հայրենի կարօնով: Սանուհիները եւ Կապոյտ Խաչի վար-չութիւնը իրենց խորին շնորհակալութիւնը կը յայտնեն բոլոր անոնց որ օգնեցին այս ձեռնարկին, հանդերձեղէնի պատրաստութեան եւ վեղարուես-տական բաժինին: — Լիւսի

Թ. ՄԵՏԱՏՈՒՐԵԱՆԻ մահուան առթիւ փո-խան ծաղկեպսակի, Քաշանէն Գարակէօղեան եւ Նիկողոսեան ընտանիքները Պանէօ - Քաշանի հայ դպրոցին կը նուիրեն 500 Փրանք:

ՇՆՈՐ ՀԱԿԱԼԻՔ. — Վիէնէն Պ. Յակոբ Մա-թոսեան, Տիկին Եւա Իշխանեան, Տէր եւ Տիկին Մարգիտ Մաթոսեան, Տէր եւ Տիկին Սերոբ Իշխան-եան (Ուոշինկիթը), իրենց խորին շնորհակալու-թիւնները կը յայտնեն բոլոր անոնց որ անձամբ, հեռագրով, նամակով կամ ծաղկեպսակներով ի-րենց ցաւակցութիւնը յայտնեցին Տիկին ՄԱՐԻԱՄ ՄԱԹՈՍԵԱՆԻ (ծնեալ Իշխանեան), մահուան առ-թիւ, (18 Ապրիլ):

Վիէն. — Կապոյտ Խաչի վարչութիւնը իր խո-րին ցաւակցութիւնը կը յայտնէ Պ. Յակոբ Մա-թոսեանի եւ ընտանեկան պարագաներուն, իր տիկ-նոջ մահուան առթիւ:

ԱՅՐԻ ՏԻԿԻՆ ԵՂԻՍԱԲԵԹ ՄԵՍՐՈՊԵԱՆ իր խորին շնորհակալութիւնը կը յայտնէ իր հայրե-նակիցներուն, Մուրատեան վարժարանի նախկին աշակերտներուն, Ս. Խաչ եկեղեցւոյ հոգաբարձու-թեան եւ դպրաց դասուն եւ ամէն անոնց որ ան-ձամբ կամ զբաւոր ցաւակցութիւն յայտնեցին իր զաւակն ՆՈՐԱՅՐ ՄԵՍՐՈՊԵԱՆԻ մահուան առթիւ եւ փոխան ծաղկեպսակի դրամական կարեւոր նուիրատուութիւններ ըրին:

ՏՆՐՈՒՆԻ. — Հ. Յ. Գ. «Մ. Եօթնընամբ - եան» խումբին եռանդուն անդամներէն ընկեր Ար-մենակ Յակոբեան դժբախտութիւնն ունեցած է կորսնցնելու իր մայրը: Այս առթիւ խումբը եւ բո-լոր ընկերները իրենց խորին ցաւակցութիւնը կը յայտնեն սպաւոր ընկերով:

ԱՐԿԱՅԻ ՉՈՂ ԳՆԱՅ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՄԸ, Կարպիս Պոյաճեան, 28 տարեկան որ Ամերիկացի - ներուն ըզզ կ'աշխատէր: Հինգ շաբաթի օր Կարպիս, ամերիկացի սպան եւ գերման գերի մը գաւառ կ'երթան փոքր նիւսով մը: Կառավարն էր Ամերի-կացին: Պովէի մօտերը ամերիկեան խոշոր բեռնա-տար կառք մը կը զարնուի ճիւղին, որ ջարդուիչուր կ'ըլլայ երեք ուղեւորներուն հետ: Դժբախտ Կար-պիսը անդամ էր Հայ Արիներու Միութեան, զա-ւակը՝ Տէր եւ Տիկին Գեորգ Պոյաճեանի եւ կը բնակէր Շապիլ, ուր շատ սիրուած էին ամբողջ ընտանիքով:

Le Gérant : H. AGONEYAN
Imprimerie DER AGOPIAN, 17 Rue Damesme - 13

Հ. Մ. Ը. Մ. Ը ՄԱՐՍԻՆԻ ՄԷՋ

ՄԱՐՍԻՆԻ. — 1945 — 1946 տարեշրջանը Մի-ութեանս բաժակներու շահման աննախընթաց տա-րին եղաւ: Ա. խումբը ջախջախիչ յաղթութիւններով շահեցաւ Caillolի խումբին կազմակերպած Tournoin բաժակը եւ յետոյ Sportingի բաժակը:

Այժմ ալ Միութեանս փոքրիկներու խումբը շահեցաւ Coupe Mailhanի բաժակը, պարտութեան մատնելով 10 Փրանսական խումբեր որոնց մէջ կը գտնուէր նշանաւոր Olympique de Marseilleի խումբը: Ուրախութիւնը մեծ է եւ առաջին անգամն է որ Միութեան մը բոլոր ջանքերը կը դնահաստուին եւ կը վարձատրուին:

Պզտիկ տեղեկութիւն մը խումբերու դասա - կարգութեան. —

Ա. Խումբ. — Շահեցաւ Coupe Marius Barreraի բաժակը, Sportingի բաժակը եւ St. Loupի Souvenir բաժակը: Իսկ ախոյեանական խաղարկութեան իր groupeին Գ. է եւ կրնայ ըլլալ որ վերջնութեւր եր - կու խաղարկութիւն եւս ունենայ եւ յաղթութեան պարագային Division d'Honneur բարձրանայ:

Խառն խումբ. — Իր groupeին առաջին ըլլալէ վերջ, այժմ կը մասնակցի տիտղոսի խաղարկու - թեան: Արդէն երկու յաղթութիւն տարած է եւ ե - թէ այս վերջին խաղն ալ շահի, պիտի խլէ ախոյե - նութեան բաժակը:

Ժիւնիոս Ա. — Իր groupeին առաջինը: Մաս - նակցելով տիտղոսի խաղարկութեան, այժմ հա - սած է demi finale:

Ժիւնիոս Բ. — Իր groupeին առաջինը: Կը մաս - նակցի տիտղոսի խաղարկութեան եւ այժմ հասած են demi finaleի խաղարկութեան:

Minimes. — Ախոյեան Coupe Mailhanի խաղարկու - թեանց: Առաջինը իրենց groupeին եւ մասնակցելով Sud - Estի ախոյեանական մրցումներուն հասան demi finale: Կը յուսանք որ պիտի կրնան իրենց ճարպիկ խաղարկութեամբ Sud - Estի ախոյեանութեան բա - ժակը շահիլ: — Վահան Դամիսալ

ՅՈՒՇԱՏԵՏՐ

Հ. Յ. Գ. ԱՐՄԻԻ Ենթակոմիտէի ընդհ. ժո-ղովը այս ուրբաթ իրիկուն, ժամը 8.30ին, ծանօթ հաւաքատեղին:

ՄԱՐՍԻՆԻ ՔԱՂԱՔԻ Հ. Յ. Գ. Նոր Սերունդի, բացման թէյյանեղանը՝ Մայիս 26ին: Զխաչածեւէյ: ՄԱՐՍԻՆԻ. — Գինեծօն ի պատիւ 1941 եւ 1942 Բ. զօրադասերու արձակուած ընկերներուն եւ 46ի նորակոչներուն, նախաձեռնութեամբ Հ. Յ. Գ. Նոր Սերունդի Երջ. Վարչութեան, այս չորեքշաբ-թի ժամը 19ին, Café Noailles:

ՏԵՄԻՆ. — Հ. Յ. Գ. կամիտէն եւ Կապոյտ Խա-չի վարչութիւնը իրենց խորին ցաւակցութիւնը կը յայտնեն ընկեր Յակոբ Մաթոսեանի, իր տիկնոջ մահուան առթիւ:

ՀԱՅ ԱՐԻՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԵԱՆ գործադիր խոր-հուրդը, շրջանային պետերը եւ սկաուտները ի - րենց խորին ցաւակցութիւնը կը յայտնեն իրենց ընդհ. պետին՝ Տօրթ. Գուրգէն Մեծատուրեանի, իր հօր՝ Հայ Արիներու Միութեան հովանաւորող մարմնի անդամ Պ. ԹԱԴԵՍՍ ՄԵՏԱՏՈՒՐԵԱՆԻ մահուան առթիւ:

ԿԸ ԽՆԴԻՐԵՆԻ Երջ. թղթակիցներէն մեկի չըր-կել ուրիշ թերթերու մէջ երեցած կասկածելի տե-ղեկութեանց պատասխանները:

ՍՍՍՈՒՆԱԿԱՆ, 1200 էջ, «Իլիւր Ալ, «Հապար Ալ»ի հետ 575 Փրանք կանխիկ: Արտասահման՝ վեց (6) տոլար: Դիմել D. Tchitouny, 13 rue Caumar-tin, Փարիզ (9):

ՏՐԱԿԻՆԵԱՆ. — Բարեխէր Պ. Գ. Լոռէնեանի մահացու հիւանդութեան մը ապաքինման առթիւ շնորհապարտ Հայ մը 500 Փրանք կը նուիրէ յու-նահայ կարօտեալներու: Ստանալ «Յառաջ»էն:

ETAB. Z A R E H
40ՇԻԿԻ վերաբերեալ ամէն տեսակ պիտոյք ,
ՄՈՐԹ ԵՒ ԿԱՇԻ, 348 rue des Pyrenées, Paris (20):

Կիրակի
12, Մայիս
1946
Յերեկոյք
ժամը 3ին



«Շիւրի»ի
Թատրապարտը
28, ռիւ
ՍԷՆ-Տօմիսիք
(Մեք. Էնկալիտ)

ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

ԿԸ ՆԵՐԿԱՅԱՅՆԷ ՈՒ ԿԸ ԽԱՂԱՅ
ՀՐԱԶ ՏԱՐՈՆԵԱՆԻ
ՀԱՅՐԵՆԻ ՔԵՆ ՀԵՌՈՒ

ԹԱՏԵՐԳՈՒԹԻՒՆԸ, 4 ԱՐԱՐ, 5 ՊԱՏԿԵՐՈՎ,
Տոմսերն ապահովել սովորական վայրերէն
Թատրի կիշէն ու զոնները կը փակուին ժամը 3ին:

ՀԱՐԱՏԻ

ՕՐԱԹԵՐԹ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN FRANCE

HARATCH - Fondé 1925 - R. C. S. 376.286

Directeur-Propriétaire : SCH. MISSAKIAN

17, Rue Damesme - PARIS (13^e)

Tél.: GOB. 15-70 - C. C. P. Paris 1678-63

ՔԱԺՆԵՒԻՆ. — Տար. 750, ծամս. 400, Յամս. 200 ֆրանք

Mercredi 8 MAI 1946 Զորեզարթի 8 ՄԱՅԻՍ

ԺՁ. ՏԱՐԻ — 18^e Année N° 4604 — Նոր շրջանի քի 333

Խմբագիր՝ Ծ. ՄԻՍԱԿԻԱՆ

Գին՝ 3 ֆր

Մեր ԽՕՍԻԸ

Թեի ԱՌԻՆ, ԿԸ ԳՈՐԾԵՆ

Երբ ձեռնարկեցինք Հ. Յ. Գ. Նոր Սերունդի կազմակերպության, շատեր յոտեռես էին: Գոհ պիտի ըլլայինք, եթէ 200 պատանիներ եւ պատանուհիներ համախմբուէին, մէկ տարուան մէջ:

Վեց ամիս չանցած, արդէն վեց հարիւր կը հաշուեն անդամներու թիւը:

Պատկառելի թիւ մը կը կազմէ Մարտիկի շրջանը: Յետոյ կուգայ Փարիզը: Միւս գաւառական քաղաքներուն մէջ ալ 20—25 հոգինոց կորիզներ կազմուած են, միշտ ընդունակ անելու:

Իւրաքանչիւր մասնաճիւղ ունի վարչութիւն մը, երեք կամ հինգ անդամներով: Եւ գրեթէ ամէն տեղ ալ կը գտնուի ընկեր մը կամ բարեկամ մը, որ բան — դործ կ'ընէ շարաթը քանի մը ժամ տրամադրել, զանոնք դաստիարակելու համար:

Կազմակերպության հիմնական նպատակն է.

1.— Դաստիարակել երիտասարդութիւնը հայկական մշակոյթով, պատրաստել Հայաստանի կարգապահ եւ գաղափարաւոր քաղաքացիներ:

2.— Հետո պահել երիտասարդութիւնը մեղմ գրադասութիւնի եւ խղիւղի, գարկ տալ անոր փիզիկական առողջ դաստիարակութեան, պատրաստելով չարքաշ կեանքի վարժ ու պատուախնդիր երիտասարդներ:

3.— Կազմակերպել հանդէսներ, դասախօսութիւններ, մարզական մրցումներ, որոնք պիտի ներպատեն արժարժեք ու վառ պահելու հայկական սիրտը եւ ազգային հայրտուրքիւնը հայուքեան մէջ: Ձեռնարկներ կատարել օտարներուն ծանօթացնելու Հայոց պատմութիւնը, մշակոյթը եւ հայ քաղաքական Դատը:

Անշուշտ նկատի առնուած են միջավայրին պահանջները, — պար, մարզանքներ, արշաւներ, դաշտագնացութիւն եւն.: Բայց հիմնականը՝ նոր սերունդին հայեցի դաստիարակութիւնն է: Արթիւցնել եւ վառ պահել սպիտակ գիտակցութիւնը: Տարրական գիտելիքներ ականգել, մայրենի լեզուին հետ: Մըն նախաձեռնութեան ոգին: Միւր — ցնել հայկական միջավայրը, որմէ շատեր խոյս կուտան տեսակ մը շտեմարկեամբ կամ ինքնահաճանհոգութեամբ:

Մէկ խօսքով՝ «ժառանգորդներ» հասցնել:

Արեւելեան դարձութիւններու մէջ, Յունաստան, Պալէստին, Սուրիա — Լիբանան, Եգիպտոս, Իրաք, Իրան եւն. դարձութիւններ կը դիւրացնեն այս աշխատանքը: Այստեղ ալ ունինք ծաղկոցներ, մասնաւոր 1944ի ազատագրութենէն ի վեր: Բայց, անբաղդատութիւնի տարրերութիւնը: Նոյն իսկ Պոլսոյ մէջ սերունդ կը հասնի հայկական դաստիարակութեամբ, իսկ Ֆրանսայի եւ Ամերիկայի մէջ հարթիչ դասը կը խանդարէ շատ մը հաշիւներ:

Բայց եւ այնպէս, ոչ մէկ ընկերու: Ոչ վայրերան կանչեր, ոչ ալ սաւառնաթիւ ծրագիրներ:

Անկեղծ հաւատք եւ տեսական աշխատանք: Իսկ ամէն բանէ առաջ՝ խրատախոս նորահասներուն, որպէսզի վարժուեն իրենց վարելի իրենց դործերը:

Ուղղութիւն տալ, առանց կապարի ծանրութեան մը վերածելու խնամակալութիւնը: Խրատել երբ կը շեղին, համոզել՝ երբ կը սխալին: Բայց չդառնալ Տէր Թողիկներ:

Եթէ հոգեբանութիւն եւ մանկավարժութիւն կոչուած գիտութիւնները արժէք մը ունին, ամէնէն աւելի այստեղ է որ դեր կ'ընեն կատարել:

Արդարեւ, կարելի չէ յաջողիլ, առանց ըմբռնելու նորերու հոգին:

Անոնք շարունակ պայքարի մէջ են միջավայրի մը հետ որ խորթ է մեզի, բայց ընտանի, կախարդական՝ իրենց համար: Ձէ՞ որ այստեղ ծնան, կամ հասակ նետեցին:

Ամէն պարագայի մէջ, կրնանք հպարտութեամբ յայտարարել, — մեր Նոր Սերունդին տղաքը թեւ առած են արդէն եւ կը դործեն:

Անոնց հետ զուգընթաց՝ Կապոյտ Խաչի Սանուհիներու Միութիւնները, որոնք հայկական, հայրենաշունչ արշաւներ կը կատարեն բեմէ բեմ եւ քաղաքէ քաղաք:

Դուք լսած էք անոնց երգերն ու արտասանութիւնները, այնքան հարազատ եւ տաք շեշտերով, հանդէսներու պահուն:

Իրենց նայուածքն անգամ կը պայծառացնէ ձեր հոգին, այս մտայլ օրերուն:

Թող ամէն մէկը մտածէ իր դակին համար, — եւ հարիւրները կը վերածուին հազարներու: Յայտն սերունդի փրկութեան:

Անարունեանի ՏՕամեակը

Լիոնէն մեր թղթակիցը եւ Նոր Սերունդի վարչութիւնը ինչ որ անգամ թէ կիրակի օր մեծ յաջողութեամբ տօնուեցաւ Ս. Ահարոնեանի 80-ամեակը: Ներկայ եղած են 2000 հոգի: Մանրա — մասնութիւնները եղան:

Նկարիչ Զարեհ Մուրաֆեան

ԽՕԲ. — Մարտիկի Le Patriote - Renaissance շարքա-քերթին մէջ (3 Մայիս) նկարչական ծանօթ ֆինադատ ժամ Թուրք-նկարիչ Զ. Մուրաֆեանի ցուցահանդէսին մասին հրատարակած է փնտհատակաւ ուսումնասիրութիւն մը (ինչպէս եւ նկարիչին մէկ կտար), քր ստորեւ. —

Մուրաֆեան հայ նկարիչին առաջին ցուցահանդէսը Մարտիկի մէջ: Բացման խուսն բազմութիւն մը: Շատ տաք էր առաջին այս հանդիպումը: Մուրաֆեան կրցաւ դրաւել Մարտիկի հասարակութիւնը այն մաքուր անկեղծութեամբ, որ կը ցայտէ իր նկարչութենէն՝ համակ բիւզանդական շեմոնեան մը: Նկարիչը աշխատած է Խոսրոյի եւ Չուրիցիի մէջ՝ վերջնապէս հաստատուելէ առաջ Փարիզի մէջ: Արեւելքէն դառնալ Մուրաֆեան վենետիկէն քննելու իր ստեղծութիւնները, որ սքանչելի թարմութիւն մը ունի: Տոնախոյն հրեշտակները կը ձեւացնէին խուսն մը հրեշտակներով՝ կապոյտ — սեւ ու կանանչ — կապոյտ եղբրուով: Արշալոյսին կամ վերջալոյսին ներդաշնակութիւնն է, զոր յետագային կը գտնէ Վերաքիչ, Փրատոյի պսակաւորման համար: Մուրաֆեան ժառանգած է բիւզանդական եւ վենետիկական այս զգայնութիւնը, որ բնականօրէն, ներկարիչին մօտ, կը հակի դէպի գոյնի սէրը, նիւթին միտքի ճառագայթումը: Իր բնանկարներուն, ինչպէս իր յղացական պատկերներուն մէջ, ինքզինքը կուտայ սիրտով եւ արիւնով: Բնութեան միանգամայն ներկայացումը եւ ոճաւորումը:

Այս արունտագէտին մասին արտայայտուելու ժամանակ՝ ոմանք խօսած են տպաւորապաշտութեան մասին: Այո, միշտ է այդ՝ երբ նկարիչը կ'ունենանք իր առաջին ստեղծագործութիւնները: Ան գիտցաւ գտնել իր ստեղծագործ պարզութիւնը, ինչպէս պէտք էր ընէր ամէն իսկական նկարիչ: Գոյններու հակադրութիւնները արտայայտուած են վառ կերպով՝ արիւնի մտահոգութեամբ մը երանգներու, խղճմտութեամբ ուսումնասիրուած, վարպետի կողմէ, որ պարզութեամբ եւ կարելի անկեղծութեամբ կը ներկայացնէ իր կրած տպաւորութեան ուսումնասիրութիւնը: Լեմանի լիճին տեսարանը լեցուն է նրբագրութեամբ եւ խաղաղութեամբ: Մարթի մէկ բնակարան, ընդհակառակն, կը գատորոշուի բարձրակարգ հարուածներով, առանց հոգ ընելու կարճատեսներու գնահատութեան համար:

Յուցահանդէսին ամէնէն շահեկան պատուանդներն մէջ կը յիշատակենք «Հանդիսը», անթերի զմաքուրութեամբ մը, հազիւ զեղապարզութեամբ թեթեւ ու ջողարկուն գոյներով:

«Ողանոց»ը ուրիշ հետաքրքրական նկար մըն է: Նկարիչը կը դերագանցէ բնութիւնը դիտակցութեամբ եւ իր երեւակայութիւնը որուն կ'ընկերանայ ապահով մասնադիտութիւն մը, կ'ամբողջացնէ այս վերջինը: Այս ներդաշնակութիւնը կարելի է տեսնել նաեւ ուրիշ նկարի մէջ՝ որուն «Հարս — Փեսայ» անունը կուտայ, նիւթ մը գորհիւնայի կերպով մշակած է՝ հարուստ գոյներով: Նկարիչը երեւան կը բերէ աւելի ուժեղ կենսունակութիւն մը այս նկարին մէջ: Հակադրութիւնները, կոտորուքներն ու հպումները ներդաշնակ զուգորդութեամբ՝ շեմոնեան մը կուտան այն սենեակին, ուր երեք երախաներ հարս — փեսայ կը խաղան:

Մուրաֆեան հաւատարիմ մնացած է ձեւին որ միշտ ենթարկուած է գոյնին: Իր հրահանգիչ գոյները, արուեստի մասին իր ունեցած նախնական ու մանկուկական ըմբռնումը մեզի կուտան շնորհով ու հարազատութեամբ բնանկար մը, պարտէզի մը մէկ անկիւնը կամ խարակի մը յանկարծակի վայրէջքը, այնպիսի հրճուանքով որ շատ բնական է:

Մուրաֆեանի նկարչութիւնը անսպասելի կերպով կը թափանցէ դիտողին: Նկարահանդէսը այցելողները պէտք է խորհրդածեն: Այն ասան է միայն որ անոնք պիտի գտնեն այն ներքին բախումը զոր արուեստի գործ մը կը ներարկէ դիտողին:

Մուրաֆեան որ անխնայ աշխատող մըն է,

ՄԱՅԻՍ 5Ի «ՈՁ»Ը ԵՒ ՆՈՐ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Կառավարական սազմայ չկայ

Նախարարական խորհուրդը դումարուեցաւ երէկ առաւ, քննելու համար նոր կազմութիւնը, իրբեւ հետեւանք Մայիս 5ի ժողովրդային քուէարկութեան: Բոլոր տեղեկութիւնները կը հաստատեն թէ կառավարութեան երեք թեւերը համաձայնած են շարունակելու դործակցութիւնը, նկատի առնելով միջազգ. կազմութիւնը: Միւս կողմէ, թէեւ Յունիս 2ի ընտրուելիք Սահմանադիր ժողովն ալ եօթը ամիս պայմանաժամ պիտի ունենայ, բայց հաւանական է որ նոր Սահմանադրութիւնը պատրաստուի աւելի շուտ, երեք ամիսէն: Անհրաժեշտ է համարուի արտակարգ նիստի հրահրել ներկայ Սահմանադիր ժողովը: Մարտի Գաղէնի կարծիքով, կառավարութեան երեք թեւերը դիւրաւ պիտի համաձայնին, փոխադարձ թեթեւ զիջումներով, յօրինելու համար նոր Սահմանադրութիւնը: Համայնապար կուսակցութիւնը մասնաւոր յայտարարութեամբ մը կը հաստատէ այս պարագան, շեշտելով թէ նոր Սահմանադիր ժողովը պէտք է քանի մը շաբաթէն «եւ բոլոր հանրապետականներու համաձայնութեամբ յօրինէ նոր Սահմանադրութիւնը», որպէսզի վերջ գտնէ առժամ — եայ կարգուսարքը: Ընկերավարական կուսակցութեան ընդհ. քարտուղարն ալ անհրաժեշտ կը գտնէ կարճ կապել առժամայ կարգուսարքը: «Նոր Սահմանադիր ժողովն ալ եօթը ամիս պիտի տեւէ, բայց եթէ իմաստուն ըլլայ — եւ պիտի ըլլայ — պէտք է արագօրէն մշակէ նոր Սահմանադրութիւնը եւ քանի մը շաբաթէն, ժողովուրդը վաւերացնելով նոր օրէնքը, պիտի ընտրէ երեսփոխուիչը, հինգ տարուան համար»: Ժողովրդական կուսակցութիւնն ալ համաձայն է շուտ վերջապէս Սահմանադրութեան մշակումը եւ քուէարկութիւնը:

ՀԱՆՐԱՔՈՒՅԻՆ ՎԵՐՁՆԱԿԱՆ ԱՐԴԻՒՆՔԸ

Պաշտօնական տեղեկագրին համաձայն, կիրակի օրուան ընտրութեան արդիւնքը եղած է հետեւեալը. — Արձանագրուած քուէարկուներ՝ 25.221.614, մասնակցած են՝ 20.203.733: Ոչ պատասխանած են 10.522.478 հոգի, այս՝ 9.323.709 (մէջն ըլլալով Ալբերիան, Թունուզը եւ Մարոքը): Սահմանադրութիւնը մերժուած է 1.198.769 ձայնով: «ՈՁ»երու համեմատութիւնն է՝ 53 առ հարիւր, «այո»ն՝ 47 առ հարիւր: Ձեռնպահներու համեմատութիւնը՝ 20 առ հարիւր (մօտ հինգ միլիոն), Փարիզի մէջ՝ 12 առ հարիւր: Փարիզի 20 թաղամասերէն 15ը մեծամասնութեամբ ոչ պատասխանած են: 56 նահանգներու մէջ «ոչ»երը մեծամասնութիւն չափած են, 36 նահանգներու մէջ՝ «այո»ները: Փարիզի մէջ ոչ պատասխանած են 760.721 հոգի, այս՝ 596.359: Մէնի նահանգին մէջ այս՝ 605.102, ոչ՝ 443.923:

Թեթեւը կը գրեն թէ ձախակողմեան հոսանքները բաւական քուէ կորսնցուցած են, բաղդատելով 1945 հոկտ. 21ի ընտրութեանց հետ: Անգլիոյ եւ Մ. Նահանգներուն մէջ մեծ կարեւորութիւն կ'ընծային կիրակի օրուան քուէարկութեան արդիւնքին եւ դիտել կուտան թէ Ֆրանս — ա «ոչ» պատասխանելով նոր Սահմանադրութեան, կը փակէ դուռը այս կամ այն կուսակցութեան դիկտատուրային առջեւ: Մոսկուայի մէջ ձախերու պարտութիւնը կը վերագրեն ընկերավարական կուսակցութեան, ըսելով թէ թոյլ շարժած է: Անցեալ հոկտեմբերին ընկերավարական եւ համայնապարները միասին 9.500.000 քուէ չափած էին: Այս անգամ զգալի կորուստ ունեցած են: Կարգ մը թերթեր մինչեւ 409.472 կը հաշուեն այդ կորուստը: Այժմ անհամբեր կը սպասուի Յունիս 2ի քուէարկութեան, որ պիտի պարզէ երկրին վերջնական պատկերը: Կարծողներ կան թէ մեծ փոփոխութիւններ պիտի չկատարուին եւ երեք մեծ հոսանքները դրեթէ հաւասար ուժ պիտի ունենան: Տարօրինակ երեւոյթներ ալ պարզուած են, կիրակի օր: Լիոնը, որ Դիմադրական պայքարին վառարանը եղած էր, «ոչ» պատասխանած է 40.000 քուէներու մեծամասնութեամբ:

Մայիս 5ի քուէարկութեան արդիւնքը մեծ ազդեցութիւն գործեց սակարանին վրայ: Տղարը, որ մինչեւ 320ի բարձրացած էր սեւ շուկային մէջ, մէկ անգամէն ինչու 260ի: Սեղանաւորական շրջանակներու մէջ բարեկեան կը համարին նոր Սահմանադրութեան մերժումը: Ճարտարագործական բոլոր արժեթուղիները բարձրացան:

Պաշտօնական տեղեկագրին համաձայն, Ֆրանսայի 93 նահանգներէն 69ը «ոչ» պատասխանած են: «Այո»ները մեծամասնութիւն կը կազմեն

(Լուրերու շարունակութիւնը կարդալ Գ. Է)

անշուշտ կանգ պիտի չառնէ այն ճամբուն վրայ ուր արդէն մտած է: Վստահ ենք, իր գործը տեսնել յետոյ, որ ան նոր փնտառուքներ պիտի կատարէ այն անսպասելի ճամբին մէջ որ նկարչութիւնն է բոլոր անոնց համար որոնք կ'ըմբռնեն

JEAN TOURETTE

ՆԵՐՊԱՂԹԸ ԵՆ ԱՊՏԱՍԱՆՈՒՄԻ ՎԱՐՏԱԿԱՆՈՒՅԻՆԵՐ

Գիր՝ Աստուծոյ իրոյս

ԽՄԲ.— Ընկեր Ս. Վրացեան հետեւեալ խորհրդածութիւնները կ'ընեն «Հայրենիք»-ի մէջ, այս խորագրով գրութեամբ մը.—

... Ներգաղթի որոշումը, եթէ իրականացուի, ապա անհնարաբար մեծամասնութիւնը մէջ, Հայաստանի կառավարութեան մեծագոյն գործը պիտի լինի, իր քառասունհինգամեայ գոյութեան ընթացքին: Անոր հրահանգով է, որ Արտասահմանի հայկական զանգուածները ոտքի ելած են՝ խզելու համար բոլոր կապերը իրենց ապրած երկրներէն հեռու: Անոնք որ արձանագրուած են արդէն, այլեւս չեն կար մնալ ուր որ են եւ պէտք է մեկնին: Որոշ տեղեր նաեւ այսօր դեռ չարձանագրուողներն ալ պէտք է հեռանան, որովհետեւ ազգակիցներու մեկնումէն յետոյ իրենց կեանքը կը դառնայ այլեւս անհանդուրժելի օտար միջավայրին մէջ: Հայաստանի կառավարութիւնը մեծ պատասխանատուութիւն ստանձնած է այդ զանգուածներու հանդէպ եւ յուսանք որ լիովին պիտի կատարէ իր պարտականութիւնը:

Հայաստանի կառավարութիւնը յանձն առած է նաեւ ներգաղթի նիւթականի մէջ մասը՝ ազատելով ներգաղթողները իրենց հետ տարած գոյքերու մարքէն եւ տրամադրելով ներգաղթողներու համար շինուելիք բանակարաններու արժէքի կէսը: Տարակոյս չկայ, որ ներգաղթողները պէտք է ստանան նաեւ աշխատելու եւ իրենց ապրուստը ապահովելու միջոցներ ու հնարաւորութիւններ: Բայց այդքանը բաւական չէ, զանգուածային ներգաղթը լայն եւ առողջ հիմքերու վրայ դնելու համար: Գոնէ մինչեւ այժմ եղած տեղեկութիւններէն կարելի է եզրակացնել, որ Սովիետական իշխանութիւնը ճանապարհածախսի եւ ներգաղթի գործի արտասահմանեան մասի կազմակերպման համար նիւթական ու եւ չարտահանութիւն չի ստանձններ: Այս հարցը, ըստ երեւոյթի, ձգուած է ներգաղթողներուն իրենց եւ Արտասահմանի հայութեան: Որով, ուրեմն, մեզ Հայաստանէն դուրս ապրող Հայերու վրայ կ'ընդունուի լուրջ պարտականութիւններ զիւրապանելու եւ արագացնելու համար ներգաղթի գործը: Ի՞նչ կրնանք եւ ի՞նչ պարտաւոր ենք ընել մենք:

Մեր ընկերքը, իրերու բերումով, պէտք է լինի հետեւեալը.—

Նախ՝ ներգաղթի հարցը սերտօրէն կապուած է Հայկ. Դատի հետ: Հայկ. Դատը միջազգային խնդիր է: Մեծ պետութիւնները որոշ պարտաւորութիւններ ստանձնած են Հայերու հանդէպ եւ, հետեւաբար, ունին նաեւ որոշ պարտականութիւններ: Հայկ. Դատի լուծումը միայն թրքահայ հողերու կցումը չէ Հայաստանին: Այլեւ տարագիր Հայերու վերաբնակեցումը հայկական հողերու վրայ: Ընդ այնպէս, ինչպէս աշխարհ այսօր զբաղած է տարաւոր Հրեաներու տեղաւորման հարցով, ինչպէս սնունդ ու հողատարութիւն կը տրուի պատերազմի աղէտահարներուն UNRRA-ի միջոցով, պետութիւնները պարտականութիւն ունին, առաջին համաշխարհային պատերազմի հետեւանքով տարագրուած Հայերն ալ իրենց երկիրը փոխադրելու: Այս կը նշանակէ թէ բոլոր անոնք, որոնք զբաղած են Հայկ. Դատի պաշտպանութեան գործով, իրենց նպատակակէտ պէտք է ունենան եւ ներգաղթի գործի ապահովութիւնը միջազգային ուժերու օժակ-ցումներով:

Երկրորդ՝ երբեք մեր միտքէն հանելու չենք, որ թուրքերը ոչ միայն թուրքերոյ հայութեան կէսը չարղեցին եւ միւս կէսը արտաքսեցին երկրէն, այլեւ հայ ժողովրդի բովանդակ նիւթական միջոցները իւրացուցին: Մեր իրաւունքն է եւ պարտականութիւնը, ամէն տեղ ուր հնար է, պահանջել հատուցում: Ներգաղթի գործը այդ պահանջը ամբողջօրեայ փաստերէն մէկն է:

Եւ, վերջապէս, մեր պարտականութիւնն է սեփական զոհողութեամբ օգնել ներգաղթողներուն: Այդ պարտականութիւնը որոշ կերպով ձեւակերպուած է Երեւանի Ներգաղթի Կոմիտէի Բարեգործականին ուղղած պատասխան նամակին մէջ.— 1) Օգնել ներգաղթողներու ճանապարհածախսը վճարելով եւ Հայաստանի մէջ անոնց պէտքերը հոգալով, 2) Գումարներ տրամադրել կարիքաւոր ներգաղթողներու բնակարաններու շինութեան համար, 3) Ուղարկել Հայաստան արդիւնաբերական, հեւանդանոցային եւ մանկական հիմնարկներու կահաւորում, հագուստ, կոշիկ եւն.:

Եթէ նկատի ունենանք, որ ներգաղթողները հարիւր հազարներով պիտի համրուին եւ անոնց մէջ կարեւոր մասը նիւթական միջոցներէ գուրկ մարդիկ պիտի ըլլան, ներգաղթի գործի համար խոշոր գումարներու պէտք պիտի լինի: Որքան ալ չարագանցուած ըլլայ Երեւանի կարծիքը Արտասահմանի Հայերու հարստութեան մասին, մեր հնարաւորութիւնները այնուամենայնիւ, արհամարհելի չեն: Արտասահմանը ի վիճակի է չօշակելի օգնութիւն հասցնելու, եթէ իմաստութիւնն ու

Մերելի՛ք իմ Նարդուհի.— Ամէն անգամ զիս կը մեղադրես, թէ ահա 30 տարին լրացաւ մեր բաժանման թուականէն առէին, բայց օր մը օրանց առողջ դեր չբերեցիր, կտոր մը թղթիկիւ արժանի չեղայ... Ի՞նչ շուտ մոռցար: Զէ, իմ անուշիկ քոյր, չեմ մոռցած, երբեք, ոչ քեզ, ոչ հայրիկը, ոչ հօրեղբայրը, ոչ հարսանեբը, ոչ մեծ մայրիկը, ոչ աղբարիկներն ու Վարդգէսը եւ, ոչ ալ ո եւ է մէկը, եթէ նոյնիսկ երեսուն անգամ երեսուն Ապրիլինք դան ու անցին ու ես կեանք ունենամ:

Նարդուհի՛, դուն արեւ ու լոյս չտեսար երբեք... բայց երբ արեւին նայէիր սեւ ու երկար թարթիչները ի՞նչպէս կը դողային... ու կ'ըսէիր.— Աղբար, լուսնկան տաք չէ արեւին պէս, բայց ես գայն ալ կը տեսնեմ...: Ու մատուցը ցոյց կու տայիր ճիշդ անոր տեղը:

Ու հիմակ, Նարդուհի, կըրցած, արծաթ թուշիկներով լուսնկան երբ կը տեսնեմ, ջու ալք խօսքերը կը վերլուծեմ: Եւ, կը կարծեմ թէ՛ դուն ես սա ազուրիկ լուսնիւր, երկինքին վրայէն կը քալես դէպ ի վար՝ ինձի նայելով...:

Ահա այսօր բաղձանքը կը կատարեմ թղթիկ մը ճամբելով, որ հաւատաս թէ չեմ մոռցած ձեզ: Զէ, Նարդուհի, չեմ մոռցած, բայց երբ դեր գրեմ քեզի, անուշաման կոկոնայի բաներ պիտի վերլուծեմ, ու ահա ասոր համար...: Ուրեմն, նախ՝ հայրիկի մասին, ինչպէս որ մեզի հասած է.— Յուլիսեան արեւակը երկինքէն մաղ-մաղ կրակ կը թափէր: Զինաթափ դուրսը պայպկած, խանձած էր ծարուէն: Զառայն առջեւէն կ'անցնէին: Զինուած բորենիներու շղթայէն դուրս սուրաց մէկը դուռընէն շարքերէն բաժնուելով: Թոյլ եւ յոգնած, պարտասած, սակայն խելագարի պէս խոյացաւ դէպի գետակը: Հազիւ ծուած ու շրթները պղտոր գետակին հասցուցած էր, հահ գնդակ մը սուլեց...: Պղտոր, կարչահոտ ջրէն ուժպ մը չբաշտած տեղն ու տեղը անչնչացաւ...: Զակուէն արեւնը դէպի գետակ ցայտեց արեւի կարմիր շողերուն պէս...:

Երկրորդ իրիկունը երբ Բենիկայի կամուրջէն անցանք — առաջին իրիկունը Ս. Կապանի առջեւ պատկեցանք, որ հազիւ 3 ժամ է մեր գեղէն ու անկէց ալ Բենիկ հազիւ նոյնքան — Տօրեղբայրը մեզմէ բաժնեցին իր շուրջ 40 ընկերներուն հետ: Նարդուհի, անշուշտ չես մոռցած ու կը վերլուծես, թէ ինչպէս մեզ մեկուսացուցին դեղին վերեւ, Սօսիկին տակը՝ նեղ հովիտին մէջ, ուր զիշերն անցուցինք...: Մութը թանձրացած էր, երբ գնեցինք դեղ ձայները մեզ՝ կարաւանը ահ ու դողի մասնակցին...: Այն ի՞նչ զիշեր էր, Նարդուհի: Բոլորն ալ, խումբ — խումբ իրարու կապուելով զընդակահար ըրին ու Եփրատի կառուած ու փրփրոտ ալիքներուն յանձնեցին...:

Այժմ հեռացած ենք մեր անուշիկ բնաշխարհէն ու կոտորուած, տարապրութեան ճամբաներուն վրայ: Գիւղ մըն ենք: Տիկիտար: Ամառուան կիլիչ արեւին տակ, ցայգէն մինչեւ զիշեր արտ կը

հայրենասիրութիւնը ունենայ իր բոլոր ուժերը շարժման մէջ դնելու:

Վերջին քանի մը տարիներու փորձը ցոյց տուաւ, որ հատուածական ամէն ձեռնարկ մասնակի յաջողութիւններ կրնայ ապահովել: Անցեալի փորձը ցոյց կուտայ, որ համազգային ուժերով կատարուած ձեռնարկները — Ազգ. Միութեան եւ Բանակի հանգանակութիւնները — փայլուն յաջողութեամբ կը պահուին: Ոչ մէկ տարակուս, որ ներգաղթի համար ըլլալիք հանգանակութիւններն ալ, եթէ կատարուին հատուածական ձեռնարկներով, պիտի չտան անհնարաբար արդիւնք, եւ, ընդհակառակն, եթէ համազգային հիմքերու վրայ դըր ունին, առաւելագոյն գումարը կրնան ապահովել: Եւ ոչ միայն մեծ գումար, այլեւ ներգաղթի գործի շուրջ առաջ կը բերեն բարձր խանդավառութիւն, աւելի եռանդ ու զոհարեցութեան ոգի:

Պէտք է հնթադրել, որ Երեւանի Ներգաղթի Կոմիտէի ցանկութիւնն ալ այդ է, երբ ան կ'ըսէ, թէ «բոլոր հասարակական եւ բարեգործական կազմակերպութիւններին համար ամենակարեւոր եւ պատասխան խնդիրը... կարող է հանդիսանալ օգնութիւնն Արտասահմանի Հայերի Հայրենիք վերադասնալու գործի կազմակերպման եւ նրանց տեղաւորման»:

Ահա, ուրեմն, զեղեցիկ առիթ մը բոլոր ազգային ուժերու համադրութեան եւ համազգային ճիշդ, Հայաստանի ու հայ ժողովրդի պատմական այս մեծ գործին աջակցելու համար: Քաղաքական մեր Դատի պաշտպանութեան շուրջ միասնաբար իմաստութիւնն ու հայրենասիրութիւնը չունեցանք: Դէպի միեւնոյն նպատակակէտ քալեցինք ու կը քալենք դատ — դատ եւ, ի հարկէ, ի վիճակի չեղանք օգտագործելու բոլոր կարելիութիւնները: Ներգաղթի գործի շուրջ գոնէ համախմբուելով, միացնելով մեր բոլոր ուժերն ու նիւթական հնարաւորութիւնները, լարենք մեր բովանդակ կամբքը, մեր հայրենասիրութիւնը: Պատմական մեծ դէպքերը կը պարտադրեն մեզ եւս մեծ ըլլալու: Ա. ՎՐԱՅԵԱՆ

քաղենք: Մեր սնունդն էր ամբողջ, այդ երկար տարի օրուան համար մէկ - մէկ ափ անի, անտուր խաշուած ձաւար...: Մայրիկին կուրծքերը ցածքեցան: Միակ աղբարիկը հեռու անտառէն: Մեր ափերովն ու մանգաղներուն կռակովը հոն, արտոն թուրքին տակ, երեսուցի հողմարի մը շինեցինք ու անոր մատղաշիկ ոսկորները մէջը տեղաւորեցինք:

Տասը օր ետք ուրիշ գիւղ մըն ենք: Փաշաբաշ: Դարձեալ միեւնոյն պայմաններուն տակ, նոյն աշխատանքը, նոյն սնունդով: Միսաք աղբարիկն ալ հոն մեռաւ, ան ալ անօթութենէն ծիրերէ կտոր, Ընկերսը կոչուած տեղը: Երկրորդ աղբարիկին հետ դուրսայ մը բերինք մօտիկ աղբարիկէն...: Դալար ու գովաստուն ունենիներուն շուքին մէջ երեսուցի հողմարի մըն ալ անոր համար շինեցինք: Այժմ կարգը քուրդ էր, նահապետներու նահատակը՝ Նարդուհի: Իրիկուն մը ետք «Թթենիներուն տակը» մեր գիշերելու վայրը դարձանք, չկայիր դուն...: Բորենիները տարած էին քեզ...: Ո՞ւր փնտռեցինք... ի՞նչպէս գտնեցինք քեզ...: Հիմակ, իմ միսքս ի՞նչ ամական ու բառ պիտի կրնայ ճարել ջու նահատակութիւնը վերլուծելու համար այս թղթիկին վրայ: Զեռքս ի՞նչպէս գրիչ պիտի շարժէ...: Մէկ ամիս ետք, գետակի մը եզրերը խնկելի, ձերմակ, ձիւնի ու մարմարի պէս անբիծ ոսկորները դատայ ու իրենց համար հողմարի մը շինեցի գետակէն քանդակելով քայլ անդին: Նարդուհի, այն երկու բորենիները, որ քեզ տարած ու մորթոտած էին... երկուքն ալ — Բէյ Պէրին ու Սուլային տղան՝ Մրտաֆան, շան սատակ կղան մեր աչքերուն տողէ: Առաջինին կողերը ծակծակեցան անկողինին մէջ ու ստակեցաւ...: Իսկ երկրորդը իր սիրտին ծոցին մէջ, խաւարով մը կուրծքը շերտ — շերտ ըրած էին... եւ շուտով ստակեցաւ նոյնպէս: — Պազո նէնէն ու Տօրուհի հարսանք, — պատմեցին թէ, նոյն տարին (մեր տարադրութեան) հարուստ վերադարձած էին մինչեւ մեր գեղը, ստակալի պայմաններու տակ... եւ, իրենց տանջուած ոսկորները յանձնած մեր հողմարիներն: Որոշ չկրցայ զիտնալ թէ ո՞ւր մնացին մեր անուշիկ Վարդգէսը ու նաեւ Սապա հարսանք: Ու այսպէս, բորենի, ձիւնաղբ մեզ անձիւտեց, տնեցիները, աղբականները, զեղացիները, քաղաքացիները ու բոլորը, բոլորը, մեր սիրելի հայրենիքը իւրացնելու միտքով: Սակայն, Նարդուհի, օր մը անուշաման անոր արեւնոտ կզակը պիտի փըշուէ, պիտի փոշիանայ մեր սրբազան հողերուն վրայէն, որ ձեր արիւնովը ոռոգուած են, ու դուք պիտի ապրիք, մենք պիտի յարատեւենք, զի, Արարտար կանգնուի է:

Ն. ՇԻՆԱԿԱՆ Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆԻ 80ԱՄԵԱԿԸ ՎԱԼԱՆՍԻ ՄԻՋ

ՎԱԼԱՆՍ.— Ապրիլ 28ին մենք ալ տօնեցինք Ա. Ահարոնեանի 80ամեայ յոբելեանը, խուռն բազմութեամբ: Շատեր հարկադրուեցան ոտքի վրայ մնալ: Հանդէսը սկսաւ Վիէնի եւ Վալանսի Կապոյտ Սաչի տանուհիներու խմբերով: Օրուան նախագահը, ընկեր Գ. Բիրէճեան, բացման խօսքին մէջ համառօտակի ներկայացուց Ա. Ահարոնեանի կեանքն ու բեղուն զործունէութիւնը եւ անցաւ յայտագրին:

Գեղարուեստական բաժինը Տօրուհի էր: Փոխն ի փոքր յաջողութեամբ երգեցին Օր. Գրիգորեան (Ռոմանէն), Տիկի Մ. Կարապետեան (Վիէնէն), Տիկ. Ս. Փէրգիկեան (Վալանսէն), Օր. Ա. Կարապետեան (Վիէնէն), Տիկի Ն. Միքայէլեան (Քրէշէն), Օր. Ս. Մաթոսեան (Վիէնէն) եւ Վալանսի ստիակը՝ փոքրիկ Օր. Մ. Սաչեքեան:

Կարժէ յատկապէս յիշել Պ. Կ. Պիպեանը, 14 տարեկան (Վիէնէն) որ իր ջութակով զմայլեցուցուց ներկաները: Յաջորդաբար արտասանեցին Օր. Ազգունեան (Վիէնէն) եւ ընկերներ Մ. Միրզէ (Լիոնէն), Մ. Դաւիթեան (Վալանսէն):

Ապա, բեմ հրաւիրուեցաւ Հայր Տէրմոյեան որ աւեր պատշաճի լուրջ ու շինիչ ճառ մը խօսեցաւ: Վիէնի կազմին կողմէ սրտաբուխ բարեմաճ հրաւիրուեցաւ ընկեր Մ. Մուրտեան: Յետոյ բեմ մէկ ժամ անընդհատ լարուած վիճակի մէջ պահեց ունիղիւրները: Համակրելի բանախօսը մանրամասնօրէն ներկայացուց իր հանդիպումներն ու տպաւորութիւնները, խորապէս յուզելով ներկաները: Ընդհանուր ոգեւորութեան մէջ, նախագահը առաջարկեց շնորհաւորական եւ երախտագիտական հետադիւր մը ուղղել մեծահասակ յոբելեանին: Անմիջապէս տեղին վրայ խմբաբար եւ Տիկի Օտէթ Միքայէլեան թարգմանեց Ֆրանսերէնի: Ամէնէն վերջը կրկին բեմ հրաւիրուեցաւ ընկեր Մ. Միրզէ որ զեղեցիկօրէն պատկերացուց աւեր մտաւորականին կատարած դերը, որու շնորհիւ ամբողջ սերունդ մը վարակուած է հայրենասիրութեան եւ ազատութեան ոգիով:

Այո՛, Ահարոնեանն է որ քանդակած է մեր սրտերուն մէջ հայ քաղաքացիի պարտականութեան բարձր գիտակցութիւնը, ուրեմն կեցցէ Ա. Ահարոնեանը եւ կեցցէ Ն. Շ. Դաւիթեանը: Զարգանիչներէն գոյացաւ 20,500 Քրանք: Թղթակից

Այս աղ՛ ուրիշ խայտառակութիւն

(Սեփակման քննակցութիւն «Յառաջ»)
Թուրք Մամուլը, 15—20 օր առաջ արձագանգ տուաւ այդ կազմակերպութեան հաստատման, երեք — չորս տողով. անուշ, կուսակցապետը՝ ձեռնի Ալփայ, եւ նպատակը՝ ... «լայն ժողովրդապետութիւն»։ Ու, լուռութիւն։

Երէկ միայն, իմացանք որ կազմալուծուել է քսանօրեայ այս կուսակցութիւնը, «իր արմատները օտար կազմակերպութեանց մէջ քաղած ըլլալու» ամբաստանութեամբ։

«Ճումհուրիէթ» (30 Մարտ) երկտող մահազգով մը հաղորդելով Ներքին Գործաւարութեան արգելքի որոշումը, կը խորհրդածէ։

«Ճեմիլ Ալփայ, քսան օր միայն դիտցնելէ վերջ իր մանկիկը, սկսաւ օտար կար տալ անոր։ Անա բէ ինչու, պատկան իշխանութիւններու որոշումով՝ լուծեցաւ Սոցիալ — դեմոկրատ կուսակցութիւնը, որ անախտ միայն գոյութիւն ունէր։ Ո՛չ ոք արձանագրուած էր, ցարդ, այդ կազմակերպութեան»։

Չորս տող, ու չորս ողբերգութիւն։ Կուսակցութիւն մը կը կարգուի՝ որ «անդամ չունի»։ Կուսակցապետ մը կը կարգուի՝ որ «օտարի գերի կը նետուի», դերադրական անպատասխանատուութեամբ։ Հսկայական Ներքին Գործաւարութիւն մը, 20 օրուան մէջ կը քանդէ կուսակցութիւն մը, որուն ծրագրին պատրաստութիւնը հաւանաբար 3—4 ամիս տեւեց...

Եւ վերջապէս, թուրք մամուլը կը հարկադրուի իր թուրքով կնքել զերեզ — ման մը, որուն մէջ կը նախատեսէր մշակել ժողովրդավար փորձիկ անու մը...։ Կը հատումք որ միւսները աւելի բախտաւոր պիտի ըլլան, կամ պիտի չզղջան այն քիչ մը երկար կեանքին համար՝ որ կը շնորհուի իրենց։ Անձնապէս, լաւատես չենք։

Վերադառնալով խեղճ «Սոցիալ — դեմոկրատ — ներքին», ճշդեմք բնոյթն ու տարողութիւնը իրենց համակուսակցութեան։

Երեւակայեցէ՛ք թուրք կուսակցապետ մը, որ շուտիկութիւնը կ'ունենայ պուրկարական «Նա — բոտ» թերթի խմբագրութեան ուղղել «Իրերօգնութեան եւ աշխատակցութեան» հրատարակումը, եւ, — ո՛վ ազատութիւն...։ «Գալիաթի» (գանդատի) յայտնի եւ ծածուկ բաղամիւ «Հայածանքներու» մասին, որոնց կ'ենթարկուին «Հալթ»է գուրս մարդիկ, թուրքերով մէջ։

Լաւ է նոյնութեամբ տեղ տալ այն պաշտօնական նամակին, զոր թուրքերով «Սոցիալ — դեմոկրատ» կուսակցութեան առաջնորդը, ձեմիլ Ալփայ ուղղած է պուրկար «եղբայր» կուսակցութեան, ու, այս վերջինը, հրատարակութեան տուած է դայն, իր պաշտ. օրկանին՝ «Նարոտ»ի մէջ. (15 մարտ)։

«Ընկերներ, թուրք «Սոցիալ — դեմոկրատ» կուսակցութիւնը երկար տարիներու քաղաքական արդիւններէ, եւ հաղարարութեան արդիւններէ զէմ երկարատեւ պայքարէ վերջ, դարձեալ գործու — նէութեան կը լծուի։

«Հակառակ անոր, որ իր առջին քայլերուն իսկ նիւթական մեծ անձկութիւններու զէմ յան — դիման կը գտնուի, Սոցիալ — դեմոկրատ կուսակցութիւնը արդէն իսկ իր բաժինը ստանձնած է մարդկութեան լուսամտութեան ու ազատութեան ճամբուն վրայ։

«Եղբայր Սոցիալ — դեմոկրատներ, — մեր ձեռքը կ'երկարենք ձեզի՛ր՝ այն ապահովութեամբ, թէ անվերապահ համակրանքի եւ ընդունելութեան պիտի արժանանանք։ Մեր սիրտերը կը բարբախտ իրարու միանալու անհուն ցանկութեամբ։ Մեր նպատակն է մարդկութիւնը տանիլ զէպի երջան — կուսութիւն եւ յառաջդիմութիւն։ — Ստորագրու — թիւն՝ ձեմիլ Ալփայ, Իսթանպուլ, 26 փետր. 1946»։

Այնքան անյատակ տխմարութիւն կայ նամակին թէ շարժուածէին մէջ, որ մարդ կը տարուի, ազամայ, խաղ կամ սաղարան փնտրելու, բոլոր այս տղայական փոխառացութիւններուն մէջ։ Բայց, խնդիրը լուրջ է, եւ թուրք մամուլը այս փորձին մէջ կը հաստատէ «կատարեալ խաղու — թիւնը» նոր կուսակցութեան։

Գումարեցէ՛ք բոլոր խեղկատակութիւնները, — «Հալթ»ը համաժողովը կը յետաձգուի՝ որովհետեւ կարգ մը երեսփոխաններ մտադիտութիւնն ունին իրենց աթոռը կորսնցնելու, «դեմոկրատ» կուսակցութիւնը զոհ կը դառնայ խափանարարութեան փորձերու, «Ազգ. Վերականգնում»ի կուսակցու — թիւնը երկուքի կը բաժնուի, հիմնադիր թէ անդամ իրար կ'ուտեն, իրարու կը հայհոյեն՝ թերթերու մէջ, դատարան կ'իյնան։ Ու, ահա, «Սոցիալ — դեմոկրատները կը լուծուին պաշտօնապէս, իրրեւ դաւադիր — մակարոյ՞...։

Կրնա՞ն անուն մը տալ այս պատկերին, սիրելի «Յառաջ»։

ԱՐՄԻՆ ԱՄԱՏԵԱՆ

«Հալթ»ը համաժողովը կը յետաձգուի՝ որովհետեւ կարգ մը երեսփոխաններ մտադիտութիւնն ունին իրենց աթոռը կորսնցնելու, «դեմոկրատ» կուսակցութիւնը զոհ կը դառնայ խափանարարութեան փորձերու, «Ազգ. Վերականգնում»ի կուսակցու — թիւնը երկուքի կը բաժնուի, հիմնադիր թէ անդամ իրար կ'ուտեն, իրարու կը հայհոյեն՝ թերթերու մէջ, դատարան կ'իյնան։ Ու, ահա, «Սոցիալ — դեմոկրատները կը լուծուին պաշտօնապէս, իրրեւ դաւադիր — մակարոյ՞...։

Կրնա՞ն անուն մը տալ այս պատկերին, սիրելի «Յառաջ»։

ԱՐՄԻՆ ԱՄԱՏԵԱՆ

«Հալթ»ը համաժողովը կը յետաձգուի՝ որովհետեւ կարգ մը երեսփոխաններ մտադիտութիւնն ունին իրենց աթոռը կորսնցնելու, «դեմոկրատ» կուսակցութիւնը զոհ կը դառնայ խափանարարութեան փորձերու, «Ազգ. Վերականգնում»ի կուսակցու — թիւնը երկուքի կը բաժնուի, հիմնադիր թէ անդամ իրար կ'ուտեն, իրարու կը հայհոյեն՝ թերթերու մէջ, դատարան կ'իյնան։ Ու, ահա, «Սոցիալ — դեմոկրատները կը լուծուին պաշտօնապէս, իրրեւ դաւադիր — մակարոյ՞...։

RESPUBLICA ARMAENA, Ա. տարի թիւ 3 (Մայիս 1)։ Կը պարունակէ զոր. Թորոքմի մէկ կոչք։ Խմբագիր՝ Bernard - Wahé. Վարչական սնորհէն՝ H. Stéphan, 57 rue du Fbg. Montmartre, Paris:

«ՀԱՅԱՍՏԱՆԱՍԵՐՆԵՐԸ»

ՏէՍԻՆ, 19 Ապրիլ. — Խնդալու կամ լալու համար չէ որ գրի կ'առնենք տխուր երեւոյթ մը դաւաճութեան մէջ գործող խայտառակ տարբերութեան պատ քարոզութիւններէն։ Այն պահուն, երբ Երեւանէն մինչեւ հեռաւոր Ամբրիկա միացած մէկ նպատակի համար դիմում կը կատարենք ի խնդիր Թրքահայ Դատին եւ յուշադիրներու դէպքեր կը զրկենք յիշեցնելով Թրքական վայրագութիւններն ու ջարդերը, հոս, Տէսինի մէջ, Նիսէն եկած Ֆր. Երիտ. Միութիւնը պատիւ ունի մեզի ներկայացնելու... Թրքական շարժանկար մը... «Parlant et chantant», «Լէպլէպլիճի չօր — չօր աղան»... Եւ խորհիլ որ՝ այս թեթեւոյթիները ամէն օր հրապարակը կ'աղմկեն քուսթեամբ եւ զրբպարտութիւններով։ Ու մանաւանդ այս օրերուն՝ երբ ամէն Հայ իր մեռելը կը յիշէ ու Ապրիլեան Երեւանի սարսափները մտաբերելով դարձանք միայն կ'ունենայ թրքութեան հանդէպ։ Կը հարցնենք այդ պարուններուն — Ի՞նչ մեռել չունեցա՞ք Տէր Զօրի մէջ, ձեր տունըրը չբանդեցի՞ն, ու վերջապէս լուր չունի՞ք աւելի քան մէկ միլիոն Հայերու ջարդերէն՝ կազմակերպուած ու գործադրուած նոյնիքն «Լէպլէպլիճի» թուրքերէն։ Դրամի պէ՛տք ունիք, ելէք հանդանակութեան, հայ ժողովուրդը երբեք մերժած չէ բարենպաստիկ ձեռնարկները։ Փի՛լմ կ'ուզէք ներկայացնել, Երեւանէն բերել տուէք «Այմասոր», «Քաջն Վարդան», «Դաւիթ Բէկ» կամ ուրիշ Ֆիլմեր, հայ ժողովուրդը կը գովէ ձեզ եւ նոյնիսկ հրապարակաւ կը ծափահարէ։ Իսկ ո՞ր են ձեր ազգային դիտակցութիւնն ու անհաստական արժանապատուութիւնը։

Մի մտնաք որ հայ ժողովուրդը չկարգադրուած հաշիւ մը ունի թուրքերուն հետ, եւ անմոռանալի կսկիծ՝ իր սրտին մէջ։ Մի մոռնաք նաեւ որ Չուհանեանը, այդ «Օփէթէթ» դրամ տունըր ոչ Տէր Զօր կար, եւ ոչ ալ հայկական նահանգներու թալանն ու հրկիզումը։

Քանի մը խօսք ալ այն Հայերուն, որոնք մոռացածի տունը իրենց մեռելները՝ դէպի սինէմա կը վազէին տեղ բռնելու համար։ Քիչ մը ցեղային ատելութիւն ձեր սրտերէն ներս, յիշեցէք այն Հայերը՝ որոնց գլուխները ջախջախուցան թուրքերու ձեռքով, այն գլի կ'իյնէր՝ որոնք իրենց ոտքերէն կապուած կը քաշէին սայլերու ետին։ Յամբած ջրհորներու մէջ նետուած հայ մանուկներուն ձայնը չէ՞ք իմանար դեռ, դուք ազատ երկրի մը մէջ ապրող Ապրիլեան որբեր, քոյրեր ու եղբայրներ։ Մի քաջալերէք Թրքական ոչ երգ, ոչ թատրոն, եւ ոչ ալ շարժանկար։ Այնպէս կատակցին անոնք՝ որոնք արիւնը դեռ թաց է։

Խօսք յատկապէս անոնց է, որոնք ներգաղթ կ'արձանագրեն դէպի Երեւան, բայց սիրտերը կը բանան Անդարայէն եկած խժալուր ձայներու։ Յարգանք ունեցէ՛ք մեր մեռելներուն հանդէպ եւ մի վիրաւորէ՛ք մարտիրոս ժողովուրդի մը զզապտմանը։ Հոս է որ «Հայաստանասիրութիւնը» արժէք պիտի ունենայ, այլապէս անկիւնը դրուած ցախաւելը կրնայ շատ մը բաներ աւելի ու սրբել։ Հայկական բարեկեցութեան մոլորեալներուն։

Որսարդ

ԶԱՅՆԵՐ ԳԱԻԱՌԵՆ

ԿԵԱՆՔԸ ՎԻԷՆԻ ՄԷՋ

Վիէն, (Յառաջ) — Հակառակ տնտեսական ծանր պայմաններուն, Վիէնի Հ. Մ. Ը. Մ. ի տեղական կազմը յաջողած էր Ապրիլ 20ին կազմակերպել Հայերու շատ սիրելի աւանդական հաւթախաղը, որ գրեթէ մոռցուած էր այս վերջին պատերազմի վեց տարիներու ընթացքին...

Պ. Խաչիկ Պետրոսեանի մեծ սրճարանը, ուր տեղի ունեցաւ հաւթախաղը, իրապէս պզտիկ կու գար Հ. Մ. Ը. Մ. ի բոլոր անդամներուն, բարեկամներուն եւ համակիրներուն։ Զատկական դունաւոր հաւթիթներուն քով, ոսկեղոյն կարկանդակները, ինչպէս նաեւ զանազան խմիչքներ, ազանդերները, ծաղկազարդ սեղանները եւ ներկաներու ուրբա տրամադրութիւնը գրեթէ նախապատերազմեան երեւոյթ մը տուած էին սրահին։

Հ. Մ. Ը. Մ. ի վարչութեան քարտուղարը, ինչպէս նաեւ փոխ — նախագահը՝ Ս. Գալուստեան խօսք առին ըսելու համար թէ ինչ պայմաններու տակ գործած է Հ. Մ. Ը. Մ. ի Վիէնի կազմը այս մէկ տարուան ընթացքին, թէ իր Ֆուլթայլի երկու խումբերը, ինչպէս նաեւ սկստուները ինչ յաջողութիւններ ձեռք բերած էին եւ թէ ինչ կը մնար ընկեր, որպէսզի անոնք լաւազոյն ներկայացուցին իրրեւ դառնան յայտ օտարին։

Պատէն կախուած տարեկան խաղացանկէն կըրցանք հաստատել, որ իրապէս Հ. Մ. Ը. Մ. ի Ֆուլթայլի երկու խումբերը սկզբնական շրջանին՝ տկար վիճակին բարձրացած են, եւ 1946ի սկիզբէն ի վեր շարունակ յաղթանակներ արձանագրած, զարմանք պատճառելով նոյնիսկ Թրքահայաստաններուն։

Մանրամասնութեան տաք միջնորդութիւն մը մէջ, աճուրդի դրուեցաւ աղուորիկ սպիտակ ուլիկ մը — որմէ գոյացաւ հազիւ կէս ժամուան մէջ՝ 41 հազար

ՁԱՆՁԱՆՈՒՍԻ ԳԱՆԿԵՐ

ՊՈՒԼԷՆ. — Թառի Պօղոսեայ Մանուկ աղան, այս նահապետը, պարթեւ հասակով աղնուական մըն էր։ Անոր տունը կառուցուած էր Մաստաթի ստորոտը, չորս ճամբաներու վրայ։

Ո՞վ չէր կերած անոր հացէն, աղքատը, ճամբորդը, թուրք պաշտօնեան, թէ Փատիշահին «ասքիար»ը։ Բաց էր անոր դուռը օրը 24 ժամ, բազմանդամ էր անոր ընտանիքը։ Ունէր շատ մը ծառաներ, մինչեւ իսկ իր տունը ծնած։ Անոր կինը զոր տանտիկին կը կոչէին՝ մինչեւ կէս դիշեր չբերիք ձեռքէն չէր ձգէր։ Անոր հարսները ամէն օր հացթուխ կ'ընէին։ Ո՞ր մէկ թուրքը կամ Գիւրտը չէր փափաքեր անոր քերվան ըլլալ։ Ան որչափ ծառաներ էր ամուսնացուցած։

Ասանկ էր Մանուկ աղան. — հողը հերկել, հաց հանել, հացը բաժնել ամէնուն։ Արդար ճակտի քրտինք, եղան վաստակ։ Ասանկ վարժեցուցած էին իր հայրերն ու նախահայրերը։

է՛ր, եկան արտոր եւ ջարդերը։ Մանուկ աղան ձեր էր եւ ծանր հիւանդ, չէր կրնար քալել։ Անոր տան մէջ ծնած ծառաներէն մէկը շալկեց դայն, ստարաւ ու քարով ջախջախեց դուրը, բուռ մըն ալ խմեց անոր արիւնէն։ Եկաւ պղծեց անոր աղջիկը։

Այսօր անոր արտերը 30 տարիէ ի վեր արօր չեն տեսած։ Անոր ուղին կը սաւառնի քանդուած օձախին շուրջը, անիծելով քաղաքակրթութիւնն ու քարիւղը։ — Հ. Գուլուստեան

Փրանք։ Կնքամայրութիւնը աճուրդին ստանձնած էր Տիկին Հռիփօիմէ Փափագեան 5000 Փրանքով, իսկ ուլիկը շահողը եղաւ Պ. Ն. Ալէքսանեան, Հ. Մ. Ը. Մ. ի պատուով նախագահը։

Մարիլեան Ագաթոս. — Վիէնի Սահակ Մեհրոպ զարոցի վարչութիւնը, այս տարի առիթն ունեցաւ իր անհատական, նախաձեռնութիւնը ստանձնեց կատարելու Ապրիլեան Համազգային Ագաթոսը, ձայնաւոր պատարագով եւ հողհանգստեան պաշտօնով մը։

Մինչ անդին պաշտօնական մարմինները կը դանդաղին կատարելու այդ սրբազան պարտականութիւնը, ասդին խուռը մը նորահաս երիտասարդներ, ինքնաբերաբար եւ բարի նախանձով լեցուած, չեն ուզեր որ մոռացուեան մասնուի մէկ միլիոնէ աւելի զոհերու յիշատակը, մանաւանդ այս օրերուն երբ պահանջներ կը ներկայացնենք յափշտակուած հայրենի հողերու մասին։ Հանդիսաւոր պատարագը տեղի ունեցաւ երկուշաբթի օր, 22 ապրիլ, Զատիկի Մեռելոցին Saint André le Bas եկեղեցիին մէջ, ժամը 10ին։ Գրեթէ Վիէնի ամբողջ հայ զաղութիւնը փութացած էր մասնակցել այդ կրօնական հանդիսութեան։

Պատարագիչը՝ Հ. Պապեան, հողհունչ քարոզով մը ուղեկոչեց մեր նահատակներու անմահ յիշատակը, վեր հանեց անոնց զոհաբերութեան անսահմանութիւնը, մասնաւորապէս մեր պարտիրոսներու։ Ծատ յաջող երեցեցողութեամբ Եկմալեան պատարագը վերջացաւ ժամը 11.30ին, մինչ երգէնը կը հնչեցնէր «Բամ Փորոտան»ը, յուզելով եւ խանդավառելով մեր պանդուխտ սիրտերը։

Թղքակից 1946

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՍԳԱՏՕՆԸ ՍԷՆԹ ԻԹԻԷՆԻ ՄԷՋ

ՍԷՆԹ ԻԹԻԷՆ, (Յառաջ) — Ազգ. ճակատի նախաձեռնութեամբ եւ քաղաքական թէ հանրային կազմակերպութեանց մասնակցութեամբ սարքուած Համազգային Ագաթոսը տեղի ունեցաւ Ապրիլ 30ին, Էլիզէ Ռեքլիւի սրահին մէջ։

Նախորդ տարիները երբ կը տօնէինք նոյն Օրը, այսօրուան հերոսները ոչ միայն չէին մասնակցեր, այլեւ կը ճշնէին խանդարել։ Իսկ այսօր։ Այսօր ուրախ ենք յայտարարելու որ առանց հրէի եւ հեթանոսի խտրութեան բոլորն ալ եկած էին, իրենց յարգանքի տուրքը բերելու։

Սգաբեմը զարդարուած էր աւուր պատշաճի։ Մասնակցող կազմակերպութիւններուն կողմէ զրկուած ծաղիկապսակները յատուկ վերտառութիւններով՝ զետեղուած էին մահաբեմին վրայ եւ շուրջը։ Օրուան նախադասի հրաւերին վրայ, բոլոր ներկայացուցիչները բեմ կը բարձրանային, իրենց յարգանքի տուրքը մտաբերուեցաւ։

Ազգ. ճակատի կողմէ Պ. Գալուստ Պէրպլեան կարգաց զբաւոր ճառ մը։ Հ. Յ. Դաշնակցութեան կողմէ ընկեր Թորոս Հերոյեան (Տէսին) իրրեւ ահանատեան նկարագրեց գործուած անլուր ոճիրները եւ ըսաւ. — «Ամէն մէկը զոհ մը ունիք այս Արհաւիրքին մէջ։ Եթէ կ'ուզենք որ խորհ. այս փորձիկ Հայաստանը բարդաւածի ու ընդարձակուի, անմէնք մէկ, առանց կուսակցական ճղճիմ հաշիւներու պէտք է որ ձեռք ձեռքի տանք ու կազմենք հակաթրքական ճակատ մը։ Ահա այն ատեն մենք կատարած կ'ըլլանք մեր նահատակներուն նուիրական կտակը»։ Հայ Կարմիր Ուշի կողմէ զբաւոր ճառ մը կարգաց Տիկին Փալանճեան։ Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան անունով խօսեցաւ Պ. Մեհրոպ Միտոնեան (Վիէն), ցոյց տալով քրիստոնեայ Եւրոպայի կնամարդի քաղաքականութիւնը հայկական արիւնոտ Դատին մէջ։ Ֆ. Հ. Կապոյտ Սաչի կողմէ զբաւոր յուզիչ ճառ մը կարգաց

ՍԷՆԹ ԻԹԻԷՆ, (Յառաջ) — Ազգ. ճակատի նախաձեռնութեամբ եւ քաղաքական թէ հանրային կազմակերպութեանց մասնակցութեամբ սարքուած Համազգային Ագաթոսը տեղի ունեցաւ Ապրիլ 30ին, Էլիզէ Ռեքլիւի սրահին մէջ։

Նախորդ տարիները երբ կը տօնէինք նոյն Օրը, այսօրուան հերոսները ոչ միայն չէին մասնակցեր, այլեւ կը ճշնէին խանդարել։ Իսկ այսօր։ Այսօր ուրախ ենք յայտարարելու որ առանց հրէի եւ հեթանոսի խտրութեան բոլորն ալ եկած էին, իրենց յարգանքի տուրքը բերելու։

Սգաբեմը զարդարուած էր աւուր պատշաճի։ Մասնակցող կազմակերպութիւններուն կողմէ զրկուած ծաղիկապսակները յատուկ վերտառութիւններով՝ զետեղուած էին մահաբեմին վրայ եւ շուրջը։ Օրուան նախադասի հրաւերին վրայ, բոլոր ներկայացուցիչները բեմ կը բարձրանային, իրենց յարգանքի տուրքը մտաբերուեցաւ։

Ազգ. ճակատի կողմէ Պ. Գալուստ Պէրպլեան կարգաց զբաւոր ճառ մը։ Հ. Յ. Դաշնակցութեան կողմէ ընկեր Թորոս Հերոյեան (Տէսին) իրրեւ ահանատեան նկարագրեց գործուած անլուր ոճիրները եւ ըսաւ. — «Ամէն մէկը զոհ մը ունիք այս Արհաւիրքին մէջ։ Եթէ կ'ուզենք որ խորհ. այս փորձիկ Հայաստանը բարդաւածի ու ընդարձակուի, անմէնք մէկ, առանց կուսակցական ճղճիմ հաշիւներու պէտք է որ ձեռք ձեռքի տանք ու կազմենք հակաթրքական ճակատ մը։ Ահա այն ատեն մենք կատարած կ'ըլլանք մեր նահատակներուն նուիրական կտակը»։ Հայ Կարմիր Ուշի կողմէ զբաւոր ճառ մը կարգաց Տիկին Փալանճեան։ Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան անունով խօսեցաւ Պ. Մեհրոպ Միտոնեան (Վիէն), ցոյց տալով քրիստոնեայ Եւրոպայի կնամարդի քաղաքականութիւնը հայկական արիւնոտ Դատին մէջ։ Ֆ. Հ. Կապոյտ Սաչի կողմէ զբաւոր յուզիչ ճառ մը կարգաց

ՍԷՆԹ ԻԹԻԷՆ, (Յառաջ) — Ազգ. ճակատի նախաձեռնութեամբ եւ քաղաքական թէ հանրային կազմակերպութեանց մասնակցութեամբ սարքուած Համազգային Ագաթոսը տեղի ունեցաւ Ապրիլ 30ին, Էլիզէ Ռեքլիւի սրահին մէջ։

Նախորդ տարիները երբ կը տօնէինք նոյն Օրը, այսօրուան հերոսները ոչ միայն չէին մասնակցեր, այլեւ կը ճշնէին խանդարել։ Իսկ այսօր։ Այսօր ուրախ ենք յայտարարելու որ առանց հրէի եւ հեթանոսի խտրութեան բոլորն ալ

Տիկ. Մ. Ծ. Փառապետ (Տէմիս) : Կապ. Պաշտ. Մանուկներէն Օր. Անահիտ Մանուկներէն մեծ յաջողութեամբ արտասանեց «Սեւ խաւարը» (Ա. Անարտեսեան) : Ծրանաստիճան երիտասարդներէն մէկը կարգաց գրաւոր ճառ մը : **Հ. Յ. Գ. Նոր Սերունդէն** ընկեր Մանուկ Մանուկներէն խոնարհելով մահարեմին առջեւ, ուխտեց հաւատարիմ մնալ եւ պայքարիլ մինչեւ հայկական սրբազան Դատին իրաւահանցումը : Վերջին բանախօսն էր Ազգ. ճա. կատին կողմէ Մարտիկէն հրաւիրուած Պ. Արամ ձէվիզ, (Մ. Գ. Հ.), որ դժբախտաբար շեղեցաւ դիւանոր նիւթէն :

Երկրորդ մասին տեղի ունեցաւ տրամախօսութիւն մը : Մէկը երգեց «ի վերին Երուսաղէմ» , իսկ հանդիսականները բազմաձայն երգեցին «Հայր Մեր» : Սպասուող վերջացաւ կենդանի պատկերով մը, որմէ վերջ կարգաւորեցաւ բողոքի հետագիւրը, Հայկ. Դատի մասին : — Հարգանքի

հրահանգները եւ հարաւի համայնաւարական կեդրոններուն մէջ (Մարտիկէն ալ մէջն ըլլալով) :

Ինչպե՞ս կ'ստանան ինքիւր յետագոյնը

ԱՅԺՄ ԿԸ ԲՆՆԵՆ ՌՈՒՄԱՆՈՅ ԵՒ ՊՈՒԼԿԱՐՈՅ ԴԱՇՆԱԳԻՐՆԵՐԸ

Իտալական դաշնագրի մասին համաձայնութիւն գոյացած չըլլալով, Չորսերու ժողովը որոշեց յետագոյն զայն եւ քննել պալատներէն դաշնագրի մասին : Չորս նախարարները երկուշարթի օր ալ գործունէ խորհրդակցութիւն մը կատարեցին, լուծելու համար Թրիէսթէի հարցը, բայց ապարդիւն : Մոլոթով պնդեց որ Թրիէսթէն Եւրոպայի յանձնուի, իրաւունքն յանձն առնելով կարգ մը վիճակներ կատարել հիւս. Ափրիկէի փոխարինող զաղթաւարներու մասին : Միւս երեք նախարարները մերժեցին, դիտել տալով թէ Թրիէսթէի ընկալուածքն սեփականութիւնը իտալացի է : Այս անկէն առջեւ էր որ Մ. Նահանգներու ներկայացուցիչը առաջարկեց զբաղիլ պալատներէն դաշնագրի մասին : Այդպէս ալ եղաւ : Խնդիրը այն է որ Ռուսներէն, Պուլկարիոյ եւ Հոնդարիոյ դաշնագրի մասին ալ նոյն դժուարութիւնները կը ներկայացնեն :

Երկի առումն լիարժեք նիստը յատկացուած էր Ռուսներին : Այստեղ ալ կան վիճելի խնդիրներ, — Թրանսիլանիա, սահմանային հարցեր, Դանուբ, Փաշկան կազմակերպութիւն եւ պատերազմի ոճրագործներ : Նախնական քննութեան մը երեւան եկաւ որ նոյն կառավարութիւնը կը տիրէ չորս մեծերուն միջեւ. աւելի ճիշդ՝ արեւմտեան պետութեանց եւ Ս. Միութեան միջեւ : Չի կարծուիր որ Թրանսիլանիոյ խնդիրը մեծ դժուարութիւններ պատճառէ, որովհետեւ չորս մեծերը անցեալ սեպտեմբերին համաձայնած էին թէ այդ նահանգը կամ անոր մեծագոյն մասը պէտք է վերադարձուի Ռուսներին : Գայով սահմանային խնդիրներուն, Անդրիս եւ Մ. Նահանգները կը պահանջեն դաշնագրով ճշդել Ռուսներին նոր սահմանները, իսկ Ս. Միութիւնը կ'առաջարկէ քննել միայն վիճելի սահմանները : Առաջին երկուքը կ'ուզեն իմանալ թէ ի՞նչ պիտի ըլլայ Ռուսներին եւ Ս. Միութեան վերջնական սահմանադրութիւնը : Ինչ կը վերաբերի Դանուբի, Ամերիկացիները կ'ուզեն որ այդ գետը բաց ըլլայ ամէնուրեք առջեւ, իբրեւ միջազգային ջրուղի : Ռուսները կ'ուզեն այդ իրաւունքը վերապահել միայն Սեւ ծովեան պետութեանց : Պատերազմի ոճրագործներու խնդիրն ալ դժուարութիւններ կը ներկայացնէ : Ամերիկացիները կ'առաջարկեն միջազգային յանձնարարութիւն մը միջոցաւ քննել թէ ամբաստանեալներուն յանցանքները բաւական են զանոնք ուրիշ երկիրներու յանձնելու համար : Ռուսները կը պահանջեն անմիջապէս յանձնել, եթէ պատկան պետութիւնը պահանջէ :

Պուլկարական հարցը նոյնպէս բարդ հանգամանք ունի : Արեւմտեան պետութիւնները կը պահանջեն որ Ս. Միութիւնը քաշէ իր զինուորները : Յետոյ կան սահմանային վիճակներ, հատուցումներու խնդիր եւն. :

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԹԱՒԻՐԻՉԷՆ կը հեռագրեն թէ կարմիր բանակը սկսեալ քաշուիլ երկուշարթի օր, հինգ տարուան գրաւումէ մը վերջը : Բաղաբին փողոցները պարզարուած էին խորհրդային եւ իրանեան զօրչնորով : Մեծ գաղմտութիւն մը խնդրուած էր առտուն կանուխ : Պատուոյ պահակախումբ մը բարեկեցացած էր մեծ պողոտային վրայ եւ երբ խորհրդային զօրքը Ազգ. ժողովին առջեւ հասաւ, նախագահ ճառ մը խօսեցաւ, շեղուելով թէ կարմիր բանակը «մեծապէս օգնեց Ատրպատականի ազգին» : Խորհրդային մամուլի թղթակիցը յայտարարեց թէ պարզուած պիտի շարունակուի համաձայն կարմիր բանակին եւ իրանի կառավարութեան միջեւ կնքուած պայմանագրութեան : Իրանի կառավարութիւնը այսօր Ապահովութեան

Թաղեալ Մեծատուրեանի

ՅՈՒՂԱՐԿԱՆՈՐՈՒԹԻՒՆԸ

Մայիս 3ին օտար հողին յանձնեցինք Պ. Թաղեալ Մեծատուրեանն ալ : Խուռն բազմութիւն մը հաւաքուած էր Փարիզի Հայոց եկեղեցին, յարգանքի վերջին տուրք տալու հայրենասէրին, բոլորէն սիրուած Թաղեալին, Հոն էին Հայ Արիւնքը, բարեկեցացած անոր դաղաղին առջեւ, ի յարգանս Հայ Արիւնքու Միութեան հովանաւորող մարմնի անդամին եւ հօրը՝ Իրենց ընդհ. պետին՝ Տօթթ. Գուրգէն Մեծատուրեանի :

Առաջին դամբանախօսն էր Սիմոնեան Ա. քահանայ որ ծանրացաւ հանգուցեալին հարաւային Ամերիկայի մէջ ունեցած գործունէութեան վերայ : «Ան էր որ զարկ տուաւ այնտեղ դպրոցներ բացուելուն եւ կազմակերպեց հայկական եկեղեցիները հրատարակելով միանգամայն «Հայ Կեդրոն» ամսագիրը» :

Յանուն իր գաղափարի ընկերներուն՝ խօսեցաւ Պ. Հրանտ Սամուէլ, որ մանրամասն կենսագրականն ըրաւ : Ծնած 1882ին իր ծննդավայրին՝ Բենիկայի մէջ (Բինիկեան), ստանալէ վերջ իր նախնական կրթութիւնը, զնաց Մարդուանի Ամերիկեան Գոյէճը : Անտուրի մէջ, ամերիկեան այս գոյէճները ոչ միայն եղած են կրթական հաստատութիւններ, ըսաւ, այլ օճախներ ուր յաճախ խորտուած են մեր ազգային շարժումները : Համարեան դաժան շրջանին, խումբ մը ուսանողներով դպրոցական սեղաններուն առջեւ դաղմոսի կը կարգան Չօպանեանի «Անահիտ»ը, կը լրտեսուին, ու գեռ պատանի բանա կը նետուի Թաղեալի ընկերներով ուր կը տառապին երեք տարի : Մարդուանի մէջ կուսակցական բեղուն գործունէութեան վերջ,

Սորհուրդին պիտի ծանուցանէ թէ պարպումը եւ զած վերջացած է, ինչպէս ծրագրուած էր : Թեբեւս խորհրդային պատուիրակն ալ տեղեկագրեր մը ներկայացնէ :

ԹՐՈՒՄԸՆ — ՍԹԱԼԻՆ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ մը մասին շատ կը խօսին ամերիկեան թերթերը : Վերջին լուրերու համաձայն, Մ. Նահանգներու նախագահը նոր փորձ մը պիտի կատարէ, յաջողութեամբ համար տեսակցութիւնը, որ ստիպողական կը համարուի, նկատի առնելով Փարիզի խորհրդաժողովին վիճակը :

ՀՈՒՆԳԱՐԻՈՅ անտեսական եւ ելմտական տաղանալը դարհուրելի չափերու հասած է : Սթերլինը բարձրացաւ 60 միլիոն փէնիկոյի, տուրքը՝ 15 միլիոնի : Հունձը 76 առ հարիւր պակասած է, արջառի 60 — 70 առ հարիւր փճացած : Տարին 160 հազար արջառ յատկացուած է գրաւման բանակին : ԳԵՐՄԱՆԻՈՅ անձնատուրեան տարեկարձն էր երկի, 7 Մայիս :

ԱՆԳՆՈՒՅ աշխատաւորական կուսակցութիւնը կոչ Եր ուղղեց Եւրոպայի ընկերվարականներուն, որպէսզի հետեւին անգլիական օրինակին, ըլլան յանդուրդն, շինարար, պահելով իրենց անկախութիւնը եւ չտարուին միակ հոսանքի մը տիրապետութեան մարգարէներով :

ԵՐՈՒՍՏԱՆԻՍ ԵՒ ՀԵՆՈՂՐԵՆԻ թէ երկուշարթի օր 300 իսլամ եւ քրիստոնեայ կիներ, որոնք սեւ թղթով ծածկուած էին իրենց երեսները, Օմարի մղկիթին մէջ ազդեցիկ վերջ փորձեցին Ս. Գեորգիանի եկեղեցին մտնել, բայց քահանաները ընդդիմացան : Կիները, որոնց զուլը կը գտնուէր Տիկին Մաթիլտ Մուզանամ, յաջողեցան յաղթել քահանաներուն եւ ներս մտնելով կէս ժամ ազդեցին : Այս առթիւ Տիկին Մաթիլտ ճառ մը խօսեցաւ, խտորէն դատաւարաբար Անդրիոյ վարչապետը եւ նախագահ Թրումընը, «որոնք կը ճշմարիտ յափշտակել Արաբներու երկիրը» : Կիները յետոյ թափոք մը կազմելով յառաջացան դէպի Գամասկոսի Դուռը, ընկերակցութեամբ քանի մը հազար այրերու որոնք դրօշներ պարզած էին հետեւեալ արձանատուութեամբ. — «Պիտի կուրիք Պաղեստինի համար մինչեւ մեր արեան վերջին կաթիլը» : Անդր. ոստիկանութիւնը կէս ժամ պահ կեցուց թափոքը, որ կ'ուզէր ամերիկեան հիւպատոսարան երթալ : Ի վերջոյ արտօնութիւն տրուեցաւ պատուիրակութիւն մը զրկելու, որ բողոքագիր մը ներկայացուց : Արաբական պատուիրակութիւն մը պիտի երթալ Լոնտոն, բողոքելու համար :

ՅՈՒՂԱՐԿԱՆ ՏՈՒՂԱԿԱՆՈՐՈՒԹԻՒՆ Հայկական ԲԱՐԵՂՈՐԾԱԿԱՆ Ընդհ. Միութեան հիմնարկութեան 40րդ տարեկարձին առթիւ : Այս շաբաթ 11 Մայիս ժամը 15ին, Օթէլ Լիւթէսիայի հանդիսարանին մէջ, Métro Sèvres Babylone : Բիչթիւնով տրամադրելի աթոռ մնացած ըլլալուն՝ փափաքողներէն կը խնդրուի զբերլ կամ հեռաձայնել Միութեան կեդրոնատեղին, 11 Square Alboni. Tél. Troc. 03-18, հրատարակողն ապահովելու համար :

ԿՈՒՂՈՒԻ մասնագէտ կարի գործաւորուհիներ, կարի աշխատանոցի մէջ կամ տունը աշխատելու համար : Նպաստաւոր պայմաններ : Դիմել, Maison Mina, 32 rue des Annelets, Métro Botzaris կամ Place des Fêtes, հեռաձայն Bot. 48-19 : Ներկայանալ առաւօտները :

Կանցնի Պուլիս ուր Դաշնակցութեան մէջ կ'ունեն նայ կարեւոր պաշտօններ, իբրեւ Կեդր. Կոմիտէի անդամ եւ իբրեւ գործիչ :

Պ. Մ. Գարակիզեան խոնարհելով դաղաղին առջեւ, պատմեց թէ ինչպէս, երբ դեռ նոր կը կազմաւորուէր Ծրանաստիճան դաղութը, օր մը պատրաստեան լսած են երախաներ որ հայերէն չէին խօսեր : Պէտք է հայերէն սորվեցնել անոնց, ըսած է Թաղեալ ու իսկոյն մարմին կ'անէ Պանեօ Գաշանի դպրոցը : Բանաստեղծական շեղուելով մէջբերումներ ըրաւ Միսաք Մեծարեցեան (ազգական Թաղեալ Մեծատուրեանի, Բենիկայի մէջ Մեծատուրեանները Մեծարեց կը կոչուէին տեղական բարբառով), «Այս ըլլայի, ըլլայի, ուղեւորի ժամանման հիւզն ըլլայի» :

Դողդօջուն շրթներով եւ արցունքը աչքերուն մահաբեմ եկաւ Թաղեալի ամէնէն հին եւ ամէնէն մտերիմ ընկերներէն Հայկազն Հապէշեան որ ըսաւ թէ Բենիկան եղած է հայկական դիմադրութեան փառարանը, Փոքր Հայքի մէջ մշակուցի եւ յեղափոխութեան կեդրոն մը ուրիշ էյած են մտաւորականներ եւ յեղափոխական դէմքեր : Թաղեալ, դաւալը այդ վիզին, մարով կրթուած մըն էր, ճշմարտախօս, եւ չէր հանդուրժեր կեղծիքի :

Վերջին խօսուողն էր Հայ Արիւնքու կողմէ Նուպար Պոյաճեան, որ նախ հայերէն եւ յետոյ Փրանսերէն խօսեցաւ օտար հիւրերուն համար :

Ներկայ էին մեծ թիւով Ծրանաստիճանի որոնց մէջ կը նշմարուէին Մաւր Սանիէ ընտանիքը, Պ. Կապրէլի Ռոպինէ (խմբադրասպետը Ֆիկառո թերթին), կոմսուհի Հանրի Մաթիլ, Պ. Լարսէն, ինչպէս եւ բժշկապետներ եւ զանազան հաստատութեանց ներկայացուցիչներ, որոնցմէ բոլորէն ալ սիրուած էր ողբացեալ Թաղեալը :

Բարեկամ մը

ՅՈՒՂԱՏԵՏՐ

Հ. Յ. Գ. ԱՐԾԻԻ ԵՆԹԱԿՈՒՄԵՒԵՐ ԸՆԴՀ. Ժողովը այս ուրբաթ իրիկուն, ժամը 8.30ին, ծանօթ հաւաքատեղին :

ՎԱԼԱՆՍ — Հ. Յ. Գ. կոմիտէն ընդհ. ժողովի կը հրաւիրէ բոլոր ընկերները այս ուրբաթ, իրիկուն ժամը 8.30ին, Անարտեսեան ակումբը :

Հ. Յ. Գ. Բաֆֆի խումբին ժողովը՝ այս շաբաթ իրիկուն, ժամը 8.30ին, ընկերվարականներու սրահը, 9 rue Victor, Massé, Métro Pigalle :

ՄԱՐՍԻՅԷԼ — Գինեճօսի պատիւ 1941 եւ 1942 Բ. զորագասերու արձակուած ընկերներուն եւ 46ի նորակոչներուն, նախաձեռնութեամբ Հ. Յ. Գ. Նոր Սերունդի Երջ. Վարչութեան, այս չորեքշաբթի ժամը 19ին, Café Noailles :

ԱՐՄԵՆԱԿ ՅԱԿՈՒԲԵԱՆ խորին ցաւով կը ծանուցանէ մահը իր մօր՝ Տիկին Սէթրու ՅԱԿՈՒԲԵԱՆԻ (ծննալ թովմասեան, Ալալաթցի) որ տեղի ունեցաւ Մայիս 4ին, Փարիզ : Թաղումը կատարուեցաւ Մայիս 6ին, Ժամթիւի գերեզմանատունը :

Պ. ԹԱԴԻՍՍ ՄԵՇԱՏՈՒՐԵԱՆԻ մահուան առթիւ փոխան ծաղկեպսակի Եահլամեան ընտանիքը 500 Փրանք կը նուիրէ Հայ Արիւնքու Միութեան : Նոյն տիտը առթիւ փոխան ծաղկեպսակի Միւրտի Աշճեան ընտանիքը 500 Փրանք կը նուիրէ Վեթերաններու Ծոնտին եւ 500 Հայ Արիւնքու Միութեան : Ստանալ «Յառաջ»էն :

ԼԻՈՆ. — Այրի Տիկին Ն. Կարապետեան եւ զաւակները, Տէր եւ Տիկին Պ. Պրզըճեան (Հայաստան), Տէր եւ Տիկին Ա. Պրզըճեան (Պաղատ), Տէր եւ Տիկին Ն. Պրզըճեան (Մարսէլ), Տէր եւ Տիկին Փ. ձուկուրտայեան, Տէր եւ Տիկ. Թօրինեան (Փարիզ), Տէր եւ Տիկին Թօրեան (Մարսէլ), Այրի Տիկին Վիլթորիա Արապեան (Փարիզ), Այրի Տիկին Փ. Խեղէլեան (Փարիզ), Տէր եւ Տիկին Ա. Նիկողոսեան (Փարիզ), Տէր եւ Տիկին Տիգրան ձուկուրտայեան (Ալֆորվիլ), Տէր եւ Տիկին Ն. Յակոբեան (Ալֆորվիլ), Տէր եւ Տիկին Աղասի Պէրպէրեան (Ալֆորվիլ), Տէր եւ Տիկին Պէրպէրեան (Ծն. Պարսամեան, Ալֆորվիլ), Այրի Տիկին Վ. ձամկեօգեան եւ զաւակները (Փարիզ), Այրի Տիկին Արաքսի Կորկորեան (Լա Սիոթի), սրտի խոր կսկիծով կը ծանուցանեն դառնաղէտ մահը՝ վրենց ամուսնոյն, հօր, եղբորորդւոյն եւ ազգականին :

Պ. ՊԱՐՈՅՐ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ — ՊԸԳԸՃԵԱՆԻ որ յանկարծամահ եղաւ Ապրիլ 30ին, 53 տարեկան հասակին, իր բնակարանը, 64 rue Rabelais :

Յուզարկաւորութիւնը կատարուեցաւ Մայիս 3ին, Caillotiereի գերեզմանատունը, ազգականներու, հայրենակիցներու եւ բարեկամներու ներկայութեամբ :

Այս առթիւ, ընտանիքը եւ ազգականները շնորհակալութիւն կը յայտնեն բոլոր անոնց որ ներկայութեամբ եւ կամ ծաղկեպսակով, իրենց յարգանքի րաժինը բերին :

ՅԱՄԱՆ

ՕՐԱԹԵՐԹ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN FRANCE

HARATCH - Fondé 1925 - R. C. S. 376.286

Directeur-Propriétaire : SCH. MISSAKIAN

17, Rue Damesme - PARIS (13^e)

Tél. : GOB. 15-70 - C. C. P. Paris 1678-63

ԲԱԺՆԵԳԻՆ. — Տար. 750, Յամս. 400, Յամս. 200 ֆրանկ

Jeudi 9 MAI 1946 Հինգշաբթի 9 ՄԱՅԻՍ

ԺՁ. SU.ՐԻ — 18^e Année N^o 4605 — Նոր շրջանի թիւ 334

Խմբագիր՝ Ծ. ՄԻՍԱԿԻԱՆ

Գին՝ 3 ֆր.

ՄԵՐ ԽՕՍԻԸ

ՄԱՅԻՍ 5Ի «ՈՉ»Ը

Կիրակի օրուան հանրաքուէն յըջօրէն կը դրադեցնէ մանաւանդ միջազգային մասովը, որուն համար անակնկալ մը եղաւ Ֆրանսայի նոր Սահմանադրութեան մերժումը :

Ինչպէս այստեղ, Արտասահմանի մէջ ալ իւրաքանչիւր հոսանք այդ մերժումը կը դատէ համաձայն իր հայեցողութեան :

Ինչպէս այստեղ, Լոնտոնի մէջ ալ պահպանողական մամուլը Մայիս 5ի «ՈՉ»ը կը նկատէ պարտութիւն մը «Կարմիր Փաշականութեան», «սպտակ մը համայնավարութեան երեսին» եւն : Մինչդեռ, աւելի չափաւոր թերթերու կարծիքով, սխալ է կիրակի օրուան պատասխանը համարել դարձ դէպի աջ :

Անշուշտ շատ մը յետադիմականներ մերժած են Սահմանադրութիւնը, մղուած իրենց դասակարգային շահերէն : Բայց, եւ այնպէս, մօտ 1.200.000 «ՈՉ»երու մեծամասնութիւնը չի նշանակեր թէ Ֆրանսայի ժողովուրդը, որ դէպի ձախ կը քալէ 80 տարիէ ի վեր, դարձեր է թունդ պահպանողական :

Ընդհակառակն, ժողովուրդը բարեկրթութեամբ աներ, արդիական օրէնքներ կը պահանջէ տարիներէ ի վեր : Երբեմն խաղաղօրէն, երբեմն արտակարգ ուժգնութեամբ : Վերջին պատերազմը, երկրին ջախջախիչ պարտութիւնը եւ ուրիշ աղէտներ աւելի շեշտեցին այդ պահանջը : Քարացած միտքերն անդամ համոզուեցան թէ մաշած է երկրին քաղաքական, տնտեսական եւ ընկերային կարգուսարքը : Ամէնէն պահպանողական հոսանքներն անդամ կը ջանան նորոգել, «թարմացնել» իրենց կազմական կանոնադրելը :

Արդ, ժողովուրդը բարեկրթութեամբ պահանջելով հանդերձ, չի համոզուած թէ իրենց անհատական իշխանութեան, անհատական ըլլալ թէ կուսակցական : Այս այն ժողովուրդն է որ Քլէմանսօն անդամ ծանր դատաւ, 1918ի յաղթանակէն վերջը :

Այստեղ պէտք է փնտրել կիրակի օրուան «ՈՉ»ին գաղտնիքներէն մէկը :

1946ի Սահմանադրութիւնը — 15րդը՝ 1875էն ի վեր — լայնօրէն դիտարկուած կուսայ ժողովուրդին : Մանաւանդ աշխատուող բազմութեանց, պաշտպանելով անոնց հիմնական իրաւունքները : Ան ունի տրամադրութիւններ որոնք բոլորովին արդիական են, ներշնչուած՝ ընկերայական դաւանանքէն : Անոր մէջ նախատեսուած է նոյնիսկ մեծ հարստութեանց արգելադրումը, սեփականութեան իրաւունքի սահմանափակումով :

Բայց, նոյն Սահմանադրութեան կարգ մը յօդուածները լուրջ մտաւարկութիւն կը պատճառեն շատ շատերուն :

Նախ, ընտրական օրէնքը այնպէս մը կազմուած է որ փոքրամասնութիւնները կը խեղդուին : Ո եւ է թեկնածու հարկադրուած է արձանագրուիլ քաղաքական կուսակցութեան մը :

Երկրորդ, կ'առարկեն թէ ամէն իշխանութիւն կեդրոնացնելով մէկ Ազգ. ժողովի մէջ, գլխաւոր կուսակցութիւնները ճամբայ կը բանան դէպի զիջատուութեամբ : Քան մը որ կրնայ ի վերջոյ յանդի մէկ հոսանքի միահեծան իշխանութեան : Յոռեւ տեսնել այդ հոսանքին անունն ալ կուտան, — համայնավարութիւն, նկատի առնելով անոր կուսակազմակերպութիւնը եւ արտակարգ ճիգերը :

Եւ ուրիշ վիճելի կէտեր որոնց մասին դրած ենք օրը օրին :

Կիրակի օրուան հանրաքուէն տեսակ մը հակազդեցութիւն է ձախելու տիրապետութեան դէմ : Բայց ոչ այնքան ջախջախիչ, որքան կը սպասուէր : Յունիս 2ին է որ պիտի պարզուի բուն կացութիւնը, երբ ընտրուի երկրորդ Սահմանադիր ժողովը :

Արդէն իսկ ուժերը լարուած են բոլոր հոսանքներուն կողմէ, այդ օրուան պայքարին համար : Նոր ժողովին կազմէն կախում ունի 16րդ Սահմանադրութեան ոգին :

Այս առթիւ, ինչպէս «Իրազիտական դասեր», մեծ ժողովուրդի մը կեանքէն :

Յաղթական թէ պարտեալ, բոլոր հոսանքներն ալ ուղղամտօրէն խոնարհեցան ժողովուրդի կամքին առջեւ :

Գաղափարական պայքարը կը շարունակուի միշտ, աւելի կամ պակաս ուժգնութեամբ : Սա — կան, քաղաքացիական կրթութիւնը եւ արատու — թեան դարձաբարը այնքան խոր արժատներ ձգած են որ, մարդիկ ամէն բանէ առաջ երկրին փրկութեան մասին կը մտածեն, այս կամ այն դրօշին տակ :

Հայերէն. միշտ հայերէն

Փարիզի Հայ Գրողներու Ընկերութիւնը իր վերջին ասուլիսները յատկացուցած էր «օտար բաներու դորձածութեան» : Վէճք մը որ ինչքան զբոլորի, օգտակար է :

Այն աղբը որ էր ու գրականութիւնը չունի, դատաւարտուած է կորուսելու : Իսկ անոնք որ ունին ու, չեն կրնար պահել զայն, ուշ կամ կանուխ պիտի ենթարկուին նոյն աղէտին : Հետեւաբար, եթէ կ'ուզենք ապրիլ, պէտք է որ պահենք մեր լեզուն : Մեր գիրն ու գրականութիւնը :

Ա. — Ի՞նչպէս պահել մեր լեզուն, — Ո՞ր երկինքին տակ ալ դանուինք, աշխատինք հայերէն խօսիլ : Հայերէն սորվեցնել մեր պոետիկներուն : Հասկցնել համը ու հոտը, քաղցրութիւնը մեր բարբառին : Եթէ անգամ մը կապուին անոր, արդէն փրկուած են :

Տեղական որ եւ է լեզու, որ եւ է ատեն կը սորվին : Եւ սորվիլը լաւ բան է : Ան կ'օժանդակէ մեզ ուրիշ մարզերու մէջ : Բայց խօսինք եւ սորվինք հայերէն : Ոչ ոք կ'արդիւնէ մեզ :

Անցեալ օր, երիտասարդի մը կը հանդիպիմ : Հակառակ անցնող տարիներուն, ան դարձեալ, իր շրթներուն վրայ կը հոլովէ բարբառ մը, որ մեզ նետեց սարէ սար, երկրէ երկիր : Ու կ'ըսեմ, —

— Հայերէն խօսինք, աւելի լաւ կը հասկնանք իրար :

— Ա՛հ, եթէ կարենայի... Բայց դուն, թուրքերէն խօսելու մի նայիր : Ես Հայ եմ :

— Ինչո՞վ կ'ապացուցանես :

— Աղօթքս կ'ընեմ, եկեղեցիս կ'երթամ եւ երախաներս ալ հոն մկրտել կուտամ :

— Այդքանը չի բուեր : Ամէնէն առաջ հայերէն խօսինք :

— Հասկցա՞ւ թէ ոչ, չեմ դիտեր : Բայց տեսայ որ դէմքը կարմրեցաւ :

Ու այսպէս շատ մը օրինակներ : Եթէ ուզենք, կրնանք դարձանել աղէտը :

Բ. — Մեր գրականութիւնը — Այս ալ նոյնքան կարեւոր հարց մըն է : Կարգ մը գրքեր որ կը վրասան հրատարակելն իրայ յիշուին են օտարբանութիւն : Իւրաքանչիւր իր ապրած երկրին դրօշը կը կրէ : Այսինքն նոյն երկրին կտորներովը կարկուտուած : Այստեղ խնայելով «Յառաջ»ի սինակններուն, այդ հրատարակութիւններէն մէջը բերումներ պիտի չընեն : Միայն պիտի տամ քանի մը օրի նակներ :

Ամէն հեղինակ, պէտք է գիտնայ որ, օտար բաներով կարկուտած չընդ դորձ մը կը կորսնցնէ իր հարստութիւնը : Կը գտնայ անհամ ու անճաշակ : Ուրեմն այս մարզին մէջ ալ, պէտք է աշխատիլ, որ գրականութիւնը ըլլայ անխառն :

Մեր լեզուն մէկն է այն միւս լեզուներէն, որ ունի ճոխ բառամբերք մը : Հետեւաբար արանջալու չեն գրողները : Ու եթէ բանաստեղծ մը շատ նեղը մնայ, այն ատեն կարելի է յարմարցնել այնպիսի բառ մը, որ չխաթարէ լեզուին նորութիւնը :

Սակայն, արձակի մէջ պարզան նոյնը չէ : Եթէ աշխատինք, եթէ պրպտենք, անպատճառ պիտի դանեմք մեր փնտած բառը : Լաւ է մեր ճանդուկը քան թէ օտարին արծիւը, որ խորխուսար պիտի թաղի մեր մայրենի Ծառին վրայ : Ամէն դրող, եթէ անզուլութեամբ օտար բառ մը խառնէ իր գրուածքին, տարիներ վերջ, եկող սերունդներ իրենք գիրենք պիտի դանեն դժուար հանելուկի մը առջեւ : Ու այսպէս, մեր գրականութիւնը գտնուելով օտար բաներու խառնարան մը, հետզհետէ պիտի լուծուի, պիտի թաղուի խորխուստին մէջ :

Եթէ կ'ուզենք որ ապրի հայերէնը, զգուշանանք օտար բաներու անտեղի դորձածութեանէն :

ՊԱՐՄԱՆԻ

ՃԱՓՈՆԻ պատերազմի ոճրագործներու դատավարութեան առթիւ, նախկին վարչապետ Թոթօ յայտարարեց թէ իր երկիրը կուսեցաւ ինքնապաշտպանութեան համար եւ թէ որ եւ է իր ճահարկութիւնը չզգար : «Մենք պատերազմեցանք արեւելեան երկիրները փրկելու համար օտար ազդեցութեանէ, միայն բարգաւաճելու համար ազատութեան եւ հասարակութեան մէջ » :

ՀԻՒԼԵՍԿԱՆ ՌԻՓԻ դարգացման համար Մ. Նահանգներու նախագահը 50 միլիոն անդլ. ոսկիի վարկ մը պահանջեց խորհրդարանէն : Ամբողջ պատերազմական վարկը պիտի ըլլայ 1.811.583.800 սֆերլին :

ԱՆԳԼԻԱ ԵՐ ՊԱՐՊԷ ԵԳԻՊՏՈՍԸ

Մեծ յուզում Երեսի. Ժողովին սեղ

Գահիրէի բրիտանական դեսպանատունը Մայիս 7ին պաշտօնական յայտարարութիւն մը հրատարակեց, որուն համաձայն Անգլիա իր գինուրդական րոլը ուժերը պիտի քաշէ Եգիպտոսէն եւ զինակցութիւն մը պիտի կնքուի երկու երկիրնե՛րուն միջեւ, փոխադարձ պաշտպանութեան համար : Այս յայտարարութիւնը հաստատուեցաւ Անգլիոյ վարչապետին կողմէ, երեսի. Ժողովի նոյն օրուան նիստին մէջ, մեծ յուզում պատճառելով պահպանողականներուն : Պ. Իտըն, նախորդ արտաքին նախարարը, հարցուց թէ գաղթապետութիւններուն կարծիքը անուստէն է : Վարչապետը պատասխանեց թէ գաղթապետութեանց վարչապետները, ինչպէս եւ ընդհ. սպայակոյտը հաստատութիւն յայտնած են : «Կատարութիւնը կ'ուզէ փարատել այն կասկածները թէ մենք կ'ուզենք գրաւել Եգիպտոսը : Մեզի տրուած բոլոր խորհուրդները համոզեցին թէ՛ որպէսզի զինակցութիւնը շարունակուի միւսնոյն փոխադարձ փոխահովանութեամբ եւ յաջողութեամբ ինչպէս անցեալին մէջ, էական է, իբրեւ նախարան, ապահովել Եգիպտոսի կատարեալ ազատութիւնը եւ անկասկածութիւնը : Մենք դո՛ւ եւք որ մեր առաջարկները լաւագոյն միջոցներ կ'ընծայեն մեզի, համաձայն նախկին յանգելու, զինակցութիւնը իրականացնելու եւ ի հարկին օգնութեան հասնելու համար » :

Վիճարանութեանց ընթացքին, Չըբչիլ իր խորին վրդովումը յայտնեց այս յանձնարարութեան առթիւ, հարցնելով. — Ո՞վ թելադրեց թէ Սուէզի ջրանցքը կարելի է ապահովել առանց զինուորներ պահելու այդ շրջանին մէջ » : Պ. Իտըն հարցուց թէ «Ի՞նչ է պատճառը այս յանձնարարութեան, քանի որ 1936ի անգլիական-էգիպտական զինակցութեան դաշնադրը կը նախատեսէ բրիտանական զօրքին ներկայութիւնը Եգիպտոսի մէջ : Անոնք դրաւման բանակ չեն : Գաշնադրը ընդունուած էր մեր, Եգիպտոսի եւ բոլոր կուսակցութեանց կողմէ » : Յետոյ երկարօրէն բացատրեց թէ եգիպտական բանակ ի վիճակի չէ պաշտպանելու երկիրը եւ կայսերական հարցողակցութեանց ճամբաները : «Ենթագրեցէք թէ Մուստֆէին կամ Հիթլէր յաջողած ըլլային : Այն ատեն Եգիպտոս ի՞նչպէս պիտի կրնար արտայայտել իր ազգային տենչերը » :

Վարչապետը իր պատասխանին մէջ բացատրեց թէ Եգիպտոսիները իրենք զիրենք ազատ պիտի չզգան, ցորչափ օտար զինուորներ կը գրտնուին երկրին մէջ, նոյնիսկ զինազրոյց : Ընդդիմաբանները առաջարկեցին շտաճակը վիճարանութիւնը, բայց ժողովը մերժեց 158ի դէմ 327 ձայնով : Աշխատաւորական իշխանութեան հաստատումէն ի վեր առաջին անգամ է որ պահպանողականները չեշտակի ժխտական դիրք մը կը բռնեն կատարութեան դէմ :

Իր բոլոր զինուորական ուժերը քաշելով Եգիպտոսէն, Մեծն Իրանանիա վերջ տուած պիտի ըլլայ 64 տարուան դրաման եւ նոր էջ մը բացած Միջին Արեւելի անդլիական տիրապետութեան մէջ, որ սկսաւ 1801ին, Նախորդին բանակներուն պարտութենէն վերջը : Պարպուտի յանձնարարութիւնը չի վերաբերիլ Սուտանի, որ կը կատարուի Անգլիոյ եւ Եգիպտոսի կողմէ : Վարչապետը հասկցուց թէ Եգիպտոսէն քաշուելով Անգլիա չի հրաժարի Սուէզը պաշտպանելու իրաւունքէն :

Պաղեստինէն կը հեռագրեն թէ պարպուած սկսած է արդէն եւ առաջին զինուորական բերք Հայֆա հասաւ չողենաւով մը : Անգլիոյ յանձնարարութիւնը մեծ գոհունակութիւն պատճառեց Եգիպտոսի մէջ : Վարչապետը յայտարարեց թէ բանակցութիւնները պիտի սկսին անմիջապէս : Իրազեկներու կարծիքով, պարպուտի դորձողութիւնը պիտի տեսէ հինգ տարի : Անգլիա կ'ուզէ Եգիպտոսի ժողովուրդին բարեկամութիւնը շահիլ : Այդ մտահոգութեամբ է որ անկասկած խոստացած է նաեւ Հնդկաստանի եւ Լիբիոյ :

Պաշտպանական դաշնագիրներու և իննուրիւնը

Չորսերու ժողովին երեքշաբթի օրուան նիստին մէջ, որոշուեցաւ վերահաստատել Ռուսանիայ եւ Հունգարիոյ սահմանադրուող համաձայն 1938 յունուար 1ի կացութեան : Չեղեալ հռչակուեցաւ Վիեննայի որոշումը որ տրուած էր Հիթլէր — Մուսոլինիի կողմէ, 1940 Օգոստոս 30ին եւ որոշուեցաւ Թրանսիլվանիան վերադարձնել Ռուսանիոյ : Ինչ կը վերաբերի 10. Միութեան եւ Ռուսանիոյ սահմանադրութիւն, որոշուեցաւ պահել ներկայ վիճակին մէջ, այսինքն Ռուսիոյ ձգել Պեսարպիան եւ հիւսիսային Պուրովիան : Գալով Ռուսանիոյ եւ Պուլկարիոյ սահմանադրութիւն, որոշուեցաւ պահել Քրայովայի պայմանագիրը (1940 Մեպտեմբեր 8), որուն համաձայն Պուլկարիոյ կցուած է հարաւային Տոպրուսան :

ԲԱԶՄԱԹԻԻ ԽՆԴԻՐՆԵՐ ԱՆՈՒԹԵԼԻ

Այս խնդիրները կարգադրել վերջ, ժողովը նորին անկի մը յանդեցաւ, զանազան խնդիրներու պատճառով: Չորսերը որոշեցին լուծել Ռուսմանիոյ ֆաշիական կազմակերպութիւնները, բայց չկրցան համաձայնիլ պատերազմի ոճրագործներու մա- սին: Մոլոթով չուզեր որ դաշնակից յանձնաժողով մը քննէ պատերազմի ոճրագործներու պարագան, զանոնք իրենց պատկան երկիրներուն յանձնելէ ա- ուաջ: Խնդիրը մնաց առկախ: Համաձայնութիւն չգոյացաւ նաեւ Դանուբի նաւարկութեան մասին: Մոլոթով մերժեց անգլիական եւ ամերիկեան ա- ուաջարը, որ կը տրամադրէր Դանուբը ազատ ձգել բոլոր ազգերուն առջև եւ պահանջեց խոր- ճրագոծող մը գումարել դանուբեան պետու- թիւններէն, Ռուսմանիոյ, Հունգարիոյ եւ Պուլկա- րիոյ դաշնակիցներուն ստորագրութիւնէն վեց ամիս վերջը: Ժողովը քննեց նաեւ Պուլկարիոյ եւ Յու- նաստանի սահմանադրութիւն հարցը (երկու պետու- թիւններն ալ սրբազրուութիւն կը պահանջեն), եւ որ- ոշեց առ այժմ անփոփոխ պահել սահմանագիծը: Երկու երկիրները բերանացի պիտի հաղորդեն իրենց տեսակէտները, ուրիշ նիստի մը մէջ: Յե- տաճգուեցաւ նաեւ Հունգարիոյ սահմաններու խնդիրը:

Անդրեւածերիկեան պատուիրակները սոսա- ջարկեցին խորհրդային զօրքը քաշել Պուլկարիա- յէն: Մոլոթով մերժեց, դիտել տալով թէ այդ զօրքին ներկայութիւնը անհրաժեշտ է, ապահովե- լու համար հաղորդակցութիւնները Աւստրիոյ մէջ հաստատուած քանակին հետ: Պ. Պէլլին աւարկեց թէ Անգլիա հաւանած է որ խորհրդային զօրքը մնայ Ռուսմանիոյ մէջ, ապահովելու համար զին- ուորական հաղորդակցութիւնները, բայց Լանտնի մէջ չորսերը համաձայնած էին պարպել Պուլկա- րիան եւ սէտք է յարգել այս խոստումը: Վերջա- պէս բացատրեց թէ քանի որ խորհրդային զին- ուորներ կան Ռուսմանիոյ մէջ (Դանուբի հիւսիսա- յին ափերուն վրայ), աւելորդ է զինուոր պահել Պուլկարիոյ մէջ (հարաւային ափ): Մոլոթով տեղի չտուաւ:

Եւ դեռ ուրիշ վիճելի խնդիրներ, որոնց ման- րամասնութիւնները հրատարակելով, միջազգային մամուլը յոռետես եզրակացութեանց կը յանդի:

Պուլկարական կառավարութիւնը յուշարիւր մը յանձնելով խորհրդաժողովին, կը թուէ երկիրն կրած զոհողութիւնները պատերազմի ընթացքին, եւ կը պահանջէ Պուլկարիոյ վերադարձնել արեւ- մտեան Թրակիան, համաձայն Պուլքէշի դաշնա- պրին (1913), ինչպէս եւ ելք դէպի ծով: Այս առ- թիւ կը յիշեցնէ Դաշնակիցներուն հանդիսաւոր խոստումները նախորդ պատերազմին առեւն:

ԲԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԿԱՍԱԿԱՐՈՒԹԻՒՆԸ միաձայնութեամբ որո- շեց շարունակել պաշտօնը մինչեւ Յունիս 2ի բնու- թութիւնները: Յատակից Սահմանադիր ժողովը պիտի ջանայ օր առաջ մշակել նոր Սահմանա- դրութիւնը: Այս առթիւ Պ. Պիտո մանրամասն տե- դեկտիւններ հաղորդեց Չորսերու ժողովի մա- սին: Քննուեցաւ նաեւ պարենաւորման խնդիրը: Որոշուեցաւ ազատ ձգել պտուղներու եւ բանջարե- ղէններու առուծախը:

ԻՐԱՆԻ ԽՆԴԻՐԸ պիտի մնայ Ապահովութեան Խորհուրդի օրակարգին վրայ, անգլ. պատուիրակ- կութեան առաջարկով: Իրանեան պատուիրակը հաստատեց թէ խորհրդային զինուորները քաշ- ուած են հիւս. Իրանի չորս նահանգներէն, բայց «շարունակական միջամտութիւններ թոյլ չեն տար որ կառավարութիւնը որոշ դադարի մը կազմէ Ատրպատականի կացութեան մասին»: Մինչդեռ Իրան Ծիրուզ կը խորհարարէ թէ կառավարու- թիւնը «լիովին դոճ է խորհրդային զինուորներու պարպումի եղանակէն»: Թէհրանի պատուիրակը, Հիւսէյին Ալա, վախ յայտնած է թէ Ատրպատա- կան տեսակ մը ինքնավարութիւն ստանալով, պի- տի ենթարկուի ոչ թէ Իրանի, այլ Ռուսիոյ թե- ւարկութեան:

ՉՐ. ՏԸ 401 մերժեց մասնակցել Մայիս 12ի հանդիսութեանց (տօն յաղթանակի), առարկելով թէ «զրադած է»: Նոյն օրը պիտի այցելէ Քլէման- տոյի դերեզմանը: Մասնակցելու հրաւերն ուղղած էր վարչապետը:

ՄԱՌԷՇԱԼ ԹԻԹՈՅԻ փոխանորդը հերքեց այն զրոյցները թէ Նուկուրաւիա պատերազմի կը պատ- բաստուի: Թրիէսթէի հարցին առթիւ, կամ զին- ուորներ համախմբած է այդ քաղաքին մօտ:

ՅՈՒՆԱՍՏԱՆԻ բարեկարգութեան նախարա- րին ներկայացուցիչը յայտարարեց թէ ինք հողի սպաննուած են հիւսիսային չրջանին մէջ, համայ- նակարներու կողմէ, 48 ժամուան ընթացքին: Վարչապետն ալ խորհրդակցելով անգլ. իշխանու- թեանց հետ, յայտնեց թէ 116 քաղաքական սպա- նութիւններ գործուած են Մարտ 31ի ընտրութիւն- ներէն ի վեր եւ ամէն օր նոր եւ արիւնայի դէպքեր կը պատահին:

ՊԱՇՏՈՆԱՊԷՍ ՀԱՍՏԱՏՈՒԵՑԱԻ դնդ. Փասիի (Վալսէն) արդեւափակումը, խումբ մը ամբաս- տանեալներու հետ: Կըսուի թէ 25—30 միլիոն ֆրանքի զեղծում կատարուած է: Գնդապետը վա-

ՍՈՒԿԻ ԵՒ ՈՒՆՏԻ ՕՐԸ

ՇԱՎԻԼ. — Ապրիլ 28ի կիրակի երեկոյին Շա- վիլի քաղաքապետարանի սրահին մէջ, իր նուէ- րական մեռելները յարգել զիտոյող, կոկիկ բազ- մութեամբ մը, տօնեցինք մեր սուգի եւ միանգա- մայն ուխտի Օրը: Նոյնիսկ այդ իրիկուան հեղե- դանման անձրեւը, պատճառ մը չէր կարծեմ, որ հայրենասիրութեամբ եւ ազգասիրութեամբ յո- խորտացող անհատներ իրենց բացակայութեամբ փայլէին: Մեր անման նահատակները եթէ տարին դոնէ մէկ անգամ քանի մը ժամ պիտի չկրնան մեղ ի մի հաւաքել, այլեւս ի՞նչ արժէք ունին հրա- պարակի այսքան արժուէր ու վիճուէր:

Հանդէսին նախաձեռնութիւնը ստանձնած էր Եկեղեցական Ընկերակցութիւնը, որուն իրենց օ- ժանդակութիւնը բերած էին բոլոր քաղաքական եւ մշակութային միութիւնները: Օրուան յարմար բանաստեղծութիւններ ըրին նախաձեռնող Միութեան կողմէ հանդէսին նախադասը Պ. Դաւիթ Տէր Գա- ռուսեան եւ Աղբ. Միութեան կողմէ Պ. Վազգէն Անդրէասեան: Հ. Յ. Դ. Նոր Սերունդի «Անդրա- նիկ» խումբի կողմէ Օր. Պերճուհի Մարտիրոսեան եւ «Ռաֆֆի» Երիտասարդաց Միութեան կողմէ Օր. Մարի Նարպանտեան, տօնին պատշաճ ու զերծներ կարգացրին: Գեղարուեստական բաժնին զրկելէ մեծ մասը իր վրայ առած էր «Ռաֆֆի» երգչախումբը, ղեկավարութեամբ ընկեր Ս. Յով- հաննէսեանի: Մենեղեցին Պ. Պ. Յ. Դաւիթեան, Խ. Մինասեան, Տիկիներ Ս. եւ Լ. Սարգիսեան եւ Օրիորդներ Ա. Քէօսէեան եւ Չ. Տէմիրճեան: Ար- տասանեցին դերասան Պ. Պողոսյան, եւ Պ. Թու- րիկեան, Օրիորդներ Բնարիկ Օսանեան, Ազա- տուհի Գարաջյանեան եւ Մատի Պետեան:

Նախադասը կարգաց քանաձե մը որ, կ'ար- տայալսէր մեր հայրենիքի արդար դատին մասին մեր ժողովուրդին բաղձանքները եւ որ ընդուն- ուեցաւ միաձայնութեամբ եւ զրկուեցաւ Հայկ. Դատի յանձնախումբի Փարիզի նախադասութեան: Թղթակից

ԿԸ ՓՆՏՈՒՄԻ Ամերիկայէն Սիրուհի Ազար - եանի կողմէ Զարեհ Զարիֆեանը (Սեբաստացի), եղած է Փրանսական զինուոր կիտնի մէջ, հօր ա- նունը Յովհաննէս, մօրը Նազելի, քոյրերը Արսի- նէ, Էլիզա, Լուիզա, Ռոզա: Իմացնել Տիկին Ս. Փանոսեանի 94 Avenue Roger Salengro, Champigny s)Marne:

ՇՆՈՐ ՀԱԿԱԼԻԲ. — Այրի Տիկին Զարուհի Ստե- փանեան (Meudon), եւ Պ. Վահրամ Ստեփանեան շնորհակալութիւն կը յայտնեն բոլոր անոնց որ ներկայ գտնուեցան իրենց ամուսնոյն, հօր եւ մեծ մօր՝ Տիկին ՍՏԵՓԱՆԵԱՆԻ եւ ՏԻԿ. ՇԱՀՆԱՐ ՍՏԵՓԱՆԵԱՆԻ հոգեհանգստեան արարողութեան:

ՊՈՒՏՈ. — ԿԱՊ. ԽԱԶԻ սոսն սանուհիներու բաց- ման հանդէսը տեղի կ'ունենայ 12 Մայիս, կիրակի կէսօրէ վերջ ժամը 3ին, երիտասարդ ընկերվարա- կաններու սրահը, Սըսոն: Կը խօսի ընկերուհի էլ- լէն Բիլգանդ: Մանրամասնութիւնները տեղւոյն վրայ: Հանդէսէն վերջ խնջոյք:

ՄԱՐՍԷՅԸ. — Յր. Կապոյտ Խաչի ենթամաս - նաճիւղը ցաւակցութիւն կը յայտնէ (Տէսին) ընկե- րուհի Սարուհի Տէմուրճեանի եւ պարագաներուն, իր զաւկին ՎԱԿԱՐՇԱԿ ՏԵՄՈՒՐՃԵԱՆԻ մահուան առթիւ:

ՀՈԳԵ ՀԱՆԳԻՍ. — Ողբացեալ Սարգիս Պողոս- եանի մահուան քառասունքին առթիւ կիրակի 12 Մայիսին առաւօտուն պատարագ եւ հոգեհանգիստ պիտի կատարուի Առնուիլի լէ Կոնէսի Հայոց եկե- ղեցիին մէջ: Կը հրաւիրուին յիշատակը յարգող- ները: Ծոզեկաւքը Gare du Nordէն ժամը 10.45ին:

ՆՈՒՐԱՏՈՒԹԻՒՆ. — Պ. Գարուն Զիլին - կիրեան փոխան ծաղկեպսակի Մարիամ Արզուման- եանի զերեզմանին, 1000 Փրանք կը նուէրէ Փա- րիզի Աղբատարին: Եւ Արշաճ մը Զապէլ Զի- լինիկրեաններու զերեզմանին՝ ծաղկեպսակի փո- խարէն 1000 Փրանք Կարմիր Խաչին, 1000 Փրանք Կապոյտ Խաչին:

Ըրին էր զազունի տեղեկութեանց սպասարկութեան մը (D. G. E. R.) եւ զօր .տը Կօլի մտերիմ դործա- կիցն Եղած է Լանտոնի մէջ:

ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՆ ՆԱԽԱԳԵՐԱԾ ԸՖՄԱՅ ԶԻՆՆԵՆԻ, հաստատեց թէ հեռագիր մը ուղղած են Սթալինի եւ Մոլոթովի, անոնց միջամտութիւնը խնդրելով ի նպաստ Պաղեստինի Արաբներուն, բայց պատասխան չեն ստացած: «Մեր միակ յոյսն է դառնալ դէպի Արեւելը, Արեւմուտը մեզ բոլորովին ծախեց չրեաններուն»:

ՅՈՒՇԱՏԵՏԻ

Հ. Յ. Դ. ՄՐԾԻԻ ենթակոմիտէի ընդհ. ժո- ղովը այս ուրբաթ իրիկուն, ժամը 8.30ին, ծանօթ հաւաքատեղին:

Հ. Յ. Դ. ՆՈՐ ՍԵՐՈՒՆԻ Բաֆֆի խումբին դասախօսութիւնը՝ այս երկուշաբթի ժամը 8.30- ին, Studio Caumartin, 19a rue Caumartin: Կը խօսի Պ. Ա. Չօպանեան, Անգլիոյ Դպրութեանց մասին:

ՎԱԼԱՆՍ. — Հ. Յ. Դ. կոմիտէն ընդհ. ժողո- վի կը հրաւիրէ բոլոր ընկերները այս ուրբաթ, իրիկուն ժամը 8.30ին, Ահարոնեան ահուճը:

Հ. Յ. Դ. Բաֆֆի խումբին ժողովը՝ այս շա- բաթ իրիկուն, ժամը 8.30ին, ընկերվարականներու սրահը, 9 rue Victor, Massé, Métro Pigalle:

ՎԱԼԱՆՍ. — Հ. Յ. Դ. Նոր Սերունդին մաս - նաճիւղին անդամական ժողովը, այս ուրբաթ ժա- մը 8.30ին, Ահարոնեան ահուճը:

ԼԻՈՆ. — Հ. Յ. Դ. կոմիտէն ընդհ. ժողովի կը հրաւիրէ բոլոր ընկերները այս ուրբաթ իրի - կուն ժամը 8ին, ընկերվարականներու կեդրոնը՝ Place Belcour թիւ 25: Խիստ կարեւոր օրակարգ:

ԼԻՈՆ. — Բարձր Հայքի Հայր. Միութեան ընդհ. ժողովը՝ այսօր, հինգշաբթի իրիկուն ժա- մը 8.30ին ծանօթ հաւաքատեղին:

ՇՆՈՐ ՀԱԿԱԼԻԲ. — Ընկեր Արմենակ Յակոբ - եան շնորհակալութիւն կը յայտնէ Հ. Յ. Դ. Յօթն- եղբայրեան խումբի ընկերներուն, Փորթ Խիթա - լիլ չրջանի Կապոյտ Խաչի մասնաճիւղին եւ բոլոր անոնց որ անձամբ, նամակով կամ ծաղկեպսակով ցաւակցութիւն յայտնեցին իր մօր մահուան առ - թիւ: Այս առթիւ 500 Փրանք կը նուէրէ Հ. Յ. Դ. Վեթերաններու Փոստին, 500 Փրանք ալ Յունահայ կարօտեալներու, Կապոյտ Խաչի միջոցաւ: Սոսա - նալ «Յառաջ» էն:

Հ. Ա. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ Ժանթիլի - Պիտէթի մասնաճիւղի վարչութեան նախաձեռնութեամբ Սգառօն եւ Ազգ. Դատի պաշտպանութեան բողոքի մեծ միթինկ, այս շաբաթ իրիկուն ժամը 8.30ին Պ. Յովհաննէսեանի սրահը, 11 rue Curie, Kremlin - Bictre (Seine):

ՅՈՒՇԱՏԵՏԻ ՏՈՆԱԿԱՐՈՒԹԻՒՆ Հայ - կական ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ Ընդհ. Միութեան հիմ - նարկութեան 40րդ տարեդարձին առթիւ: Այս շա- բաթ 11 Մայիս ժամը 15ին, Օթէլ Լիւթէսիայի հանդիսասրահին մէջ, Métro Sévres Babylone: Բիչ- թիւով տրամադրելի աթոռ մնացած ըլլալուն փափաքողներէն կը խնդրուի զրել կամ հեռաձայ - նել Միութեան կեդրոնատեղին, 11 Square Alboni. Tél. Troc. 03-18, հրաւիրարոմս ապահովելու հա- մար:

ԿՈՒՂՈՒԻ մասնազէտ կարի դործաւորուհի- ներ, կարի աշխատանցի մէջ կամ տունը աշխա- տելու համար: Նպաստաւոր պայմաններ: Դիմելու Maison Mina, 32 rue des Annelets, Métro Botzaris կամ Place des Fêtes, հեռաձայն Bot. 48-19: Ներկայանայ առաւօտները:

ETAB. Z A R E H ԿՕՇԻԿԻ վերաբերեալ ամէն տեսակ պիտոյք, ՄՈՐԹ ԵՒ ԿԱՇԻ, 348 rue des Pyrenées, Paris (20): Հեռ. Men. 69-86:

Կիրակի 12, Մայիս 1946 Յերեկայք- ժամը 3ին «Երվի»ի թատրապահը 28, ուի Ալեմ-Տօմիթի (Մեք. Էնվալիտ)



ԲԱԳՐԱՏՈՒՆԻ ԿԸ ՆԵՐԿԱՅԱՅՆԻ ՈՒ ԿԸ ԽԱՂԱՅ ՀՐԱԶ ՏԱՐՈՆԵԱՆԻ ՀԱՅՐԵՆԻՔԷՆ ՀԵՌՈՒ ԹԱՏՐԵՐԳՈՒԹԻՒՆԸ, 4 ԱՐԱՐ, 5 ՊԱՏԿԵՐՈՎ Տոմսերն ապահովել սովորական վայրերէն Թատրի կիշէն ու դռները կը փակուին ժամը 3ին:

ԿՈՒՂՈՒԻ սպասուհի մը 3 հոգեկոնց ըտանիքի մը համար: Դիմել «Յառաջ»ի:

Պ Ա Տ Ր Ա Ս Տ ՀԱԳՈՒՍՏԵՂԵՆԻ ՄԵՍ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ Այրերու եւ պատանիներու ՊՕՅԱՃԵԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ 6, Rue Mulet, LYON

Le Gérant : H. AGONEYAN Imprimerie DER AGOPIAN, 17 Rue Damesme - 13

ՀԱՐԱՏԻ

ՕՐԱԹԵՐՐ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN FRANCE

HARATCH - Fondé 1925 - R. C. S. 376.286

Directeur-Propriétaire : SCH. MISSAKIAN

17, Rue Damesme - PARIS (13^e)

Tél.: GOB. 15-70 - C. C. P. Paris 1678-63

ԲԱԺՆԵԿԻՆ. — Տար. 750, Ճամբ. 400, Յամբ. 200 ֆրանք

Vendredi 10 MAI 1946 Ուրբաթ 10 ՄԱՅԻՍ

ՓՁ. ՏԱՐԻ — 18^e Année N° 4606 — Նոր շրջան թիւ 335

Խմբագիր՝ Ե. ՄԻՍԱԿԻԱՆ

Գին՝ 3 ֆր

Մեր ԽՕՍԻԸ

ՊԱՏԵՐԱԶՍԻՆ «ՇՆՈՐՀՆԵՐԸ»

Երբ հրանօթը կ'որոտար եւ ուժաւոր օդանավերը կը ստերային, կրակ տեղալով երկինքէն, մարդիկ ընդհանուր Արհաւիրքին մէկ երեսը միայն կը տեսնէին կամ կը յսէին:

Ահաւասիկ մէկ տարի է որ վերջացած է պատերազմը, Եւրոպայի մէջ, եւ պատասխանատու վարչիներն ու թերթերը կը խօսին ուրիշ աղէտներու մասին: Անօթութիւն: Համաճարակներ: Միլիոնաւոր բազմութիւններ անտուն — անտէր: Ընկերային խլրտումներ: Եւ անխաղճաց, համատարած ապականութիւն բարեբու: Գլուխն ըլլալով բանակները:

Այն ատիւնն որ, յաղթականները իրենք ալ անուշոյի մատնուած են, եւ ի գո՛ւր վճռական դարձաներ կ'որոճան:

Ամիսներէ ի վեր, Գերմանիոյ ամերիկեան շրջանին հրամանատարութիւնը վրդովիչ տեղեկագրիներ կը հրատարակէ, պարզելով զինուորներու նոր «բազմործութիւնները» զբաւեալ երկիրէն-րուն մէջ:

Չարիքը այնքան լայն համեմատութիւններ ստացած է որ, հրամանատարութիւնը կառավարութեան դիմած է, աւելլարժանատի միջոցներ անօրինելու համար:

Գեո անցեալ օր էր որ հրամանատարութիւնը պաշտօնական ազդով մը կ'արգելէր զինուորներու հրատարակային սիրարանութիւնը փողոցներու մէջ: Աւելի առաջ, ուրիշ անօրինութիւններ եղած էին, զայլու համար անկարգութիւնները:

Ամերիկեան թերթերը ճոխ եւ պատկերազարդ պատմութիւններ կը հրատարակեն, այս նոր աղէտին առթիւ, հիմնուելով ոչ միայն պաշտօնական տեղեկագրիներով, այլեւ ակամատներու վկայութեան վրայ: Եւ բոլորն ալ կ'ողբան, — Յաղթանակէն ճիշդ մէկ տարի վերջը, Մ. Նահանգներու բանակին համար, «որ երբեմն այնքան փայլուն էր ինչպէս ազատարարին սուրը», այժմ շատ ինկած է:

Քսան ամիս Եւրոպայի ամերիկեան բանակներուն մէջ ծառայելէ ետք, վերջերս իր երկիրը վերադարձաւ երէց մը, պատ. Բէնթոնի, եւ դառն ճշմարտութիւններ հրատարակեց «Քրիսչըն Սէնչըրի» մէջ: Ամերիկեան թերթերը անմիջապէս արտատպեցին այդ յայտնութիւնները, զինով զինուորներու պատկերներով եւ ուրիշ մանրամասնութիւններով:

Ի՞նչ կ'ըսէ պատուելին. — 1. Ընդհանուր առումով, ամերիկացի զինուորը չի գիտեր թէ ինչու կուտեցաւ, եւ թէ ինչ կը նշանակէ յաղթանակը: Իրականին մէջ, շատ ալ չի հետաքրքրուիր այդ հարցերով:

2. Ան կը հետաքրքրուի զլիաւորաբար երեք բանով. — 1. «Գերմանուհի մը գտնել եւ միասին պառկել» (քնազրին բառերն են). — 2. Շիշ մը քոնեակ գնել կամ գողնալ եւ լուրի դառնալ. — 3. Տուն վերադառնալ: (Նիւ Եարք թայմզ նոյն երեք մոլութիւնները կը դասաւորէ այսպէս. — 1. Գրամ. — 2. Կին. — 3. Ողբելից ըմպելի):

3. Միջին Ամերիկացիին այնքան ալ գէշ էր Եւրոպայի մէջ: Ան կուտեցաւ արհաւիրք եւ ինկաւ հազարներով: Բայց, չկրցաւ ինքզինքը արժեքներ խաղաղութեան ատեն: Գերազանցութեան հով մը աննելով, անոնք ամբողջ ժողովուրդներ կը դատեն քանի մը պոստիկներու, զինովներու եւ սեւ շուկայիներու վրայ:

4. Զինուորը (եւ սպան) որս մը կը նկատէ հանդիպած կինը եւ չի վարանիր «առաջարկել»: Ան բաց է բաց կը հետապնդէ կինը ամբողջ Եւրոպայի մէջ. ոչ միայն ցնձուհիները, այլ ամէն կին: Յետոյ կը խմէ, կը ճնկէ անասունի պէս:

5. Սեւ շուկան մանր մուկն առուծախէն բարձրացած է մեծաքանակ առեւտուրի:

6. Վեներական արտերը համաճարակի հանգամանք ստացած են: (Կարգ մը շրջաններու մէջ մինչեւ հազարին 427 համեմատութեամբ):

Ու վերջապէս անկարգապահութիւն, դասաւորութիւն, ոճիրներ եւայլն, ինչպէս տեսանք Ֆրանսայի մէջ ալ:

Անշուտ այս «չնորհները» աւելի պիտի ծաղկին ու ծաւալին, քանի երկարին զբաւման տարիները: (Քաղաքային հազուատ հազած կամ իրենց զինուոր ամուսիններուն միացած Ամերիկուհիները ստիպուել են մասնաւոր նշանակներ գնել, որպէս զի չհետապնդուին, իբրեւ Գերմանուհի...):

Ե.

Ա. Անարնեանի 80ամեակը Լիոնի մէջ

Լիոն, 6 Մայիս, (Յառաջ). — Կիրակի էրբեկուն, 5 Մայիս, Սալ Ֆրանսուա Գոփէի մեծ արհիւն մէջ խուն բազմութեամբ եւ խանդավառութեամբ տօնուեցաւ Ա. Ահարնեանի 80ամեակը:

Օրը, թուականը անյարմար (հանրաբուէ), եղանակը անպատշաճ, տեղատարափ անձրեւ օրն էրուն, եւ սակայն Ահարնեանի անունը բաւական եղած էր Ֆրանսուա Գոփէի հեռաւոր արհաւիրքը հարկ հայրենակիցները: Հոն էին թէ տարեցը, թէ երիտասարդը, հոն էր մեր քաղաքի ընտրանին, ինչպէս եւ ուսուցիչներ մեր «Նոր Սերունդ»էն, Վալանսէն, Վիլիէն, Սէնթ Էթիէնէն, Սէն Եամօնէն, Տէպիէն: Հոն էր Կրճնուպը իր նազելաճեմ սանուհիներով, իրենց ղեկավար Սիւլեան ամուսին հետ: Հոն էր վերջապէս Լիոնի Նոր Սերունդը իր Սիւսիլիթօ խումբով, բեմին վրայ, բեմին ետեւ, իր պարտականութեանց զուրկ:

Վարդույրը կը բացուի Ալիշանի «Բամ Փոբոտան»ով որ կ'ունենդրուի յոտնկայս: Օրուան նախադասը, Պ. Յ. Վարժապետեան իր բացման խօսքը կ'արտասանէ, վեր հանելով մեծ բանաստեղծին աղբային, զբաղան եւ զեղարուեստական արժեքները:

Յայտագիրը այնքան ճոխ էր որ կարելի չէ ամփոփել «Յառաջ»ի նեղ սիւնակներուն մէջ: Ուղերձներ կարդացուեցան Լիոնի, Վիլիէնի, Տէպիէնի, Սէնթ Էթիէնի, Սէն Եամօնի, Վալանսի, Կրճնուպի Նոր Սերունդի ներկայացուցիչներու կողմէ, որոնք կը փառաւորէին Վալիէնի երգիչը, առողջութիւն կը ցանկային անոր եւ կը խոստանային հաստատակամ եւ յարատեւութիւն քաղել Ահարնեաններու ճամբէն:

Գեղարուեստական բաժնին իրենց մասնակցութիւնը բերած էին Լիոնի լաւագոյն ուժերը: Ետ յաջող արտասանութիւններ ըրին Պ. Պ. Լեւոն Ալէքեան, Ռուբեն Գոման, Խրիստոս: Իրենց արտասանութիւններով ծափերու արժանացան նաեւ մեր հիւրերէն Օր. Սըլայոյ Սեղրակեան (Սէնթ Էթիէն), Տիկին Քորոսեան (Կրճնուպ) եւ օրիորդ մը որ շատ գեղեցիկ կերպով արտասանեց Չարենցի «Գովը Հայաստանի»: Երգողներու բաժնին մէջ կային ծանօթ երգչուհի Օր. Ծովիկան Տէր Պետրոսեան, Տիկիններ Ահարնեան, Կարապետեան (Տէպիէն), Տէր Կոմսեան (Կրճնուպ): Ետ յաջող էր «Պարզիկ Սեղրակ»ի երգախառն պատկերը զոր կատարեց Կրճնուպէն սանուհի մը:

Օրուան բանախօսներէն ընկեր Միսաք Միրզէն խօսեցաւ Չ. Յ. Գ. «Վարանդեան» կոմիտէին կողմէ, ներկայացնելով Գաղափարական Անարնեանը: Նախ հայերէն, ապա, Ֆրանսերէն գեղեցիկ ու զերծներ կարդաց մեզի ծանօթ համակերպի Տիկին Odette Միքայէլեանը (Վալանսէն), անկեղծ մեծարանքի խօսքերով: Այս ագնիւ Ֆրանսուհին մեզի չափ ծանօթ է Ահարնեանին կեանքին եւ գործին: Կրկին ինամբով պարտաստուած Ֆրանսերէն ուղերձ մը կարդաց Կրճնուպի մեր ետանդուն ընկերը, Սիւլեան վեր հանելով Ահարնեանի գրական եւ քաղաքական գործերը, անոր հայ ժողովուրդին եւ համայն տառապող մարդկութեան հանդէպ ունեցած սէրն ու խանդաղատանքը:

Օրուան բուն բանախօսն էր «Զուարթնոց»ի խմբագիրը, Պ. Հ. Բալուեան, որ մէկ ժամ տեւող բանախօսութեամբ մը մեզ տարաւ մերթՊոմոն, Ահարնեանին բնակարանը, անոր հիւանդի մահի ճիւղ մօտ: Մերթ ուսանող, երիտասարդ Ահարնեանին հետ Փարիզ կամ ժնեւ, մերթ Կ. Պոլիս, Ս. Երրորդութիւն եկեղեցին, մերթ անկախ Հայաստանի խորհրդարանին մէջ: Ետ հաճելի պիտի ըլլար ամբողջութեամբ զբի ստնել բանախօսին ճառը, բայց տեղի անձկութիւնը եւ սղաղունութեան պակասը թոյլ չտուին ինծի: Հրապարակաւ կանանք շնորհաւորել ինքը որ կրցաւ մեր թարգմանը հանդիսանալ այդքան խուն բազմութեան մը առջեւ:

Հանդէսին Բ. բաժնի վերապահուած էր Կրճնուպի մեր շնորհալի սանուհիներուն: Տիկին Ա. Սիւլեանի ղեկավարութեամբ եւ հայկական տարագրով ճիշդ մէկուկէս ժամը ցուցադրեցին հայկական եւ մէկուկէս պարեր մէկը միւսէն յաջող, մէկը միւսէն գովելի: Արդարեւ, ճիշդ է այն առածը թէ «այստառողին դորձ չի պակսիր»: Տէր եւ Տիկին Սիւլեանները աշխատեցին միջոց գործունեցեր են: Ապացոյց այն աշխատանքը որ տեսանք, այն պէսպիսութիւնները զոր ճաշակեցինք:

Ժամը 9ին սկսած հանդէսը գրեթէ անանց դա-

ՆՈՐԷՆ ԿԵՍ ՃՍՄԲԱՆ ՄՆՍՅԻՆ

Հաշտութեան Ժողով Յունիս 15ին

Փարիզի մէջ

Չորս նախարարներու խորհրդաժողովը իր վերջին օրերը կ'ապրէ: Ոչ մէկ համաձայնութիւն հիմնական հարցերու մասին: Երէկ ժողովը պիտի քննէր մինչեւ հիմա կատարուած աշխատանքները, իսկ մասնաւորապէս՝ Պ. Պրընսի առաջարկը: Մ. Նահանգներու արտաքին նախարարը առաջարկեց փոխանորդներու յանձնել վիճելի խնդիրներու քննութիւնը եւ հաշտութեան ընդհ. խորհրդաժողովի հրաւիրել 21 պետութիւններ, յունիս 15ին, դարձեալ Փարիզի մէջ: Թերթերը կը գրեն թէ Ֆրանսա եւ Անգլիա համաձայն են աշխատառարկին, իսկ Մոլթոլ որոշ պատասխան չէ տուած, թէ-րեւս հրահանգի կը սպասէ: Երէկ պիտի պարզուէր կացութիւնը:

Ինչպէս կը հաստատեն պաշտօնական տեղեկութիւններն ալ, Չորսերու ժողովը 14 օր նիստ դուրս ելէ վերջ, կատարեալ համաձայնութեան չյանգեցաւ ոչ իտալական ոչ ալ պալքանեան դաշնագիրներու մասին: Ռուսները եւ Հունգարիոյ (Թրանսիլվանիա), Ս. Միլեթեան եւ Ռումանիոյ (Պեսարապիա եւ հիւս. Պուրովինա), Ռումանիոյ եւ Պուլկարիոյ (Տոպուզա) սահմանային խնդիրները շատոնց կարգադրուած էին, եւ Չորսերու ժողովը պարզապէս վաւերացուց կատարուած իրողութիւնը: Միւս բոլոր հարցերը կը մնան առկա: Հաւանական է որ ժողովը անմիջապէս փակուի, առկա հարցերու քննութիւնը ձգելով փոխանորդներու: Այն ատեն չորս նախարարները նորէն պիտի հանդիպին Փարիզի մէջ, յունիս 12ին կամ 13ին, պատրաստելու համար բուն հաշտութեան ժողովը:

Երէկ պիտի քննուէր Ֆինլանդական խնդիրը, որ մասնաւոր դժուարութիւն մը չի ներկայացներ, ինչպէս եւ գերմանական հարցը, որու մասին տարբեր տեսակէտներ ունին մասնաւորապէս Անգլիա եւ Ֆրանսա: (Հոնոսի եւ Ռուրի խնդիր են):

Առջի օրուան նիստին մէջ, ժողովը նորէն քննեց իտալական հատուցումներու խնդիրը, բայց չկրցաւ որ եւ է համաձայնութեան յանգիլ: Ս. Միլեթեանը հատուցում կը պահանջէ իրեն եւ Նուկուալիոյ համար: Անգլիա եւ Մ. Նահանգները զիտել կուտան թէ ի վիճակի չէ եւ հետեւանքը պիտի ըլլայ տնտեսական փլուզում:

Պ. Պրընս հեռաձայնով խօսեցաւ նախ. Թրումբընի հետ եւ տեղեկութիւններ հաղորդեց ժողովին կացութեան մասին:

Եգիպտոսի խնդիրը եւ խոստովանութիւն մը

Անգլիոյ երեսի. ժողովին չորեքշաբթի օրուան նիստին մէջ, վարչապետ Պ. Էթլի խոստովանեցաւ թէ սխալ յայտարարութիւն մը ըրած էր նախընթաց օրը եւ ներողութիւն խնդրեց: Վարչապետը նախապէս հարցումի մը պատասխանելով, ըսած էր թէ Եգիպտոսը պարպելու համար խորհուրդ հարցուած է գաղթապետութեանց, որոնք համաձայնութիւն յայտնած են: Մինչդեռ հիմա կը խոստովանի թէ սխալած է: «Կը կարծեմ թէ «համաձայնութիւն յայտնած են» բացատրութիւնը կրնայ սխալ տպաւորութիւն գործած ըլլալ: Լրիւ տեղեկութիւններ տրուեցան եւ վիճարանութիւններ տեղի ունեցան, բայց գաղթապետութեանց վարչապետները չհրաւիրուեցան համաձայնութիւն յայտնել հարցի մը մասին որուն պատասխանատուութիւնը կ'իյնայ Միացեալ Թագաւորութեան վրայ (Անգլիա): Անոնք տեսակէտով, Եգիպտոսի հետ մերձեցման ուղիները պէտք էր որոշուէր կառավարութեան կողմէ, համաձայն օրուան սյայմաններուն եւ իրենց քաղաքային եւ զինուորական խորհրդականներու կարծիքին»:

Լոնտոնի թերթերը կը գրեն թէ Հարաւ. Աֆրիկէի հանրապետութիւնը եւ Աւստրալիա հակառակ են Եգիպտոսը բոլորովին պարպելու ծրագրին: Անգլիոյ պահպանողական կուսակցութիւնը բուն պայքար կը մղէ այդ որոշումին դէմ, առաջնորդութեամբ Չորչլի: Անցեալ շաբթու, երեսի. ժողովին մէջ, երբ աշխատաւորական նախարար մը կ'ըսէր թէ կառավարութիւնը «գժկա մակութեամբ հաւանած է» Եգիպտոսը պարպելու:

Չառ խոր ու կազմուած տպաւորութեան տակ սրահը փակեցինք ներկաներուն առջեւ: Հրապարակային շնորհակալութիւն բոլոր մեր շրջաններէն եկած ընկեր բարեկամներուն, — անոնց որ մեծ զոհողութիւն յանձն առեր էին ներկայ գտնուելու համար:

Փա՛ռք Հայկական ուժին ու հանճարին: ԹՂԹԱԿԻՑ

«Ի՞նչպես քաղցին Հայկ. Անկախութիւնը» (Մասնաւոր քարակոտորի Յատուի)

Պոլսոյ «Միւլէթ» պարբերականը Մարտ - Ապրիլի թիւին մէջ, «Բաց նամակ» հայ հայրենակցի վրէժ խորագրին տակ, շնական հաճոյքով մը հետեւեալ խորոտիկ - պատմութիւնը կը հրատարակէ «Հայ հայրենակցի մը», որ համարձակութիւնն ու միատուութիւնը ունեցեր է հարցնելու թէ «Թուրքիոյ նման անկախութեան հաջողայ յարգանք ունեցող ազգ մը, ինչո՞ւ քարեայակամութիւն ցոյց չի տար, երբ ուրիշներ նոյն իրաւունքներ կը դիմեն»։ — «Պատասխաններ, կը զրէ «Միւլէթ»։ Ու կը շարունակէ։

«Այն՝ զոր դուք «ուրիշներ» կ'անուանէք, Ռուսիան է ապահովարար, ինչպէս կ'երեւի, արդէն, խմբագրութեան ուղղելու ձեր նամակէն։ Խնդիր է, սակայն, թէ ինչ ապագայ կարելի է սակեալ Ռուսերէն, յօղուտ Հայերուն։ Այսպիսի հարցումներու պատասխանը՝ լուսազոյն ձեռով կուտայ պատմութիւնը։ Երբ կարգաւ յետագայ տղերքը, ու հետեւեւ պատմական իրողութիւններուն, լուսազոյն եղբայրացիութիւններու կը հասնիք։ — Ուրեմն, հաճեցէ լսել։

«Ռուսերը, Հայերու անկախութեան ատաճ՝ Վրացիներու անկախութեան դէմ դաւած են, եւ դաւադրական այդ աշխատանքը յանձնած են իւրիւր թիւրքիանովի։ Վրաստանի հաշիւը մաքրելէ վերջ, իշխան թիւրքիանով գրաւած է Երրվան քաղաքը, եւ արշաւած Բագու։ Բայց, հոն, Բագուի պատերուն տակ, սպաննուած է Հիւսէյին Քուլու Սանի կողմէ։

Այս վերջինը իր մօտ ընդունած է բազմաթիւ Հայեր, որոնք Վրաստանի մէջ տեսած են Ռուսերու հարստահարութիւնները, եւ սարսափած, ապաստանած են իր մօտ։

Կլասիկովի պաշտօն տրուեցաւ պատուհասել զանոնք, բայց այդ միջոցին Պարսկաստան եւս ըմբոստացաւ։ Մանաւանդ այն Հայերը, որոնք Երեւանէն փախչելով ապաստանած էին Թէհրան, եւ կամ Թիֆլիզէն հոն եկած էին, լայազին կը պատմէին ռուսական խժոժութիւնները, թալաններն ու կոտորածները։

Առաջին անգամ, իշխան Ապպաս Միրզայի հրամանին տակ, 20.000 հոգիներ քանակ մը կազմուեցաւ, որ անցաւ Արաքս գետը։ Պարտուեցաւ, բայց իր պարտութիւնը պատճառ եղաւ, որ Վրաստանի եւ Հայաստանի լեռները հրոսակներով յեցուին։ Ռուսերը, ոչ մէկ կերպով լիակատար նուաճում մը կրցան սպառնալէ։ Մինչեւ 1826, այս վիճակը շարունակուեցաւ այս կերպով, ինչ որ կը բաւէ հաստատելու թէ ինչքան խուզում եղած են զործուած հարստահարութիւնները։

1826ին, Նիքոլայ Ա. վերին հրամանատար կարգեց Զօր. Փաքիելիչը, եւ հրամայեց՝ որ ամբողջովին մաքրէ Վրաստանի եւ Հայաստանի համբողջը։ Փաքիելիչի վայրագ բանակները, իսկական հեղեղի մը պէս թաւալեցան Երեւանի վրայ, ու թէեւ Երեւանի Հայերն ու թուրքերը փոքր ինչ պաշտպանեցին իրենք զիրենք, չկրցան սակայն դիմադրել։ Անոնք որ փախան, փրկուեցան։ Իսկ անոնք որ չյաջողեցան արձել՝ սուրէ անցան, իրենք ընտանիքներով, — այդ, կին, մանչ ու աղ-ջիկ... Երբ Փաքիելիչ ցարին հաղորդեց սպանդին արդիւնքը, կայսրը խայտառ ուրախութենէն, եւ «Երեւանի հերոս» մակդիրը տուաւ ջարդարարին։ Այսուհանդերձ, Հայերը ընկճուած ու սրբուած չէին ամբողջովին։ Հրոսակային կռիւ կը մղէին, լեռներու մէջ թալանի կոտորածի կարասաններ, եւ, անվերջ, կը յարձակէին ռուս սպանակախոսներու վրայ։ Իսկ Ռուսերը, ամէն անգամ որ առիթ գտնէին, կը շարունակէին ջարդել։

1837ի հայեւորացական յեղափոխութիւնը մանաւանդ, զարհուրելի եղաւ։ Այդ օրերուն, Ռուսերը այն լուրը տարածեցին, թէ յեղափոխութիւնը կազմակերպուած էր Անգլիացիներու կողմէ, — որովհետեւ յեղափոխականներու զլուխ կը գտնուէր Անգլիացի մը՝ Պալ։

Վրացիներն ու Հայերը չյաջողեցան սակայն, ու ասիկա՝ շատ սուղի նստաւ իրենց։ Յեղափոխութիւնը զսպուեցաւ, եւ մինչեւ 1844, Ռուսերը դահիճի նման վարուեցան, շարժման մէջ պահելով միշտ 200.000 հոգիէ բաղկացեալ ուժ մը, — Զօր. Վորոզովի հրամանատարութեան տակ։

Միւս կողմէ, Ռուսերը յաջողեցան հետզհետէ որոմ սերմանել Հայերու եւ Վրացիներու միջեւ, ու երեւակայական թագաւորութեան մը խամաճիկը շարժելով՝ յաջողեցան իրենց կապել Հայերը։ «Հայկական անկախութեան» այս հէքեաթը իսկական կատակերգութիւն մըն է, որուն բնագիւղիչը Ռուսերն են, եւ որուն մեծագոյն քանդիչը, դարձեալ իրենք՝ նոյն Ռուսերն են։

1826ին, Անգլիա մատի փաթեթոց զարձուց Հայկ. անկախութեան խնդիրը, ու ըսաւ թէ այսպիսի անկախութիւն մը կընայ շատ օգտակար ըլլալ իրեն։ — Անկախ Հայաստան մը, Թուրքիայէ

աւելի լաւ պահակ կընայ ըլլալ Միջերկրականի, կը խորհէր Մեծն Բրիտանիա։ Այս կերպով, Ռուսիոյ արեւելեան ճամբան ալ կը զոյգուի։

Ոչ մէկ կասկած, թէ Անգլիա կը կատակէր այս կերպով, ու կը գրգռէր։ Ասկէ աւելի լաւ միջամտութիւն մը չէր կրնար ըլլալ, միանգամընդ՝ միշտ գերեզման դնելու համար Ռուսիոյ կողմէ յեղեղուած «Հայկ. անկախութեան» հարցը։

Եւ իրօք, այդպէս եղաւ։ Երբ Անգլիա սկըսաւ ուժ տալ հայկական անկախութեան, Ռուսիա բացաւ աչքերը, մանաւանդ որ Անգլիա սկսած էր նաեւ կապ հաստատել Հայ մեծքամեծներու հետ, եւ ժամանակաւոր կերպով շահած Հայերու համակրանքը։

Այդ շրջանին, Ռուսիոյ վարչապետն էր Լոպանով, որ այս կացութեան առջեւ կը ջղագրգռուէր, եւ շափազանջ կը զզմար հայկական խնդիր մը մէջտեղ հանած ըլլալուն համար։ Անգլիա, առաջարկած էր այս մասին զործակցել նոյն իսկ, Ռուսիոյ հետ։ Լոպանով, սակայն, ըսած էր անգլիական դեսպանի երեսին. — «Շատ ուշ է այլ եւս։ Դժուար թէ Ռուսիա Անգլիոյ հետ գործէ։ Շատ դժուար է»։

Ռուսիոյ Ալեքսանդր ցարն ալ կը ջղագրգռուէր այս կացութեան առջեւ, եւ տղու մը միամտութեամբ կ'ըսէր. — Փրկուինք, փրկուինք անգլիական ծուղակէն։

Միւս կողմէ, Հայերը դո՛ւ էին անով՝ որ կըրցել էին ապահովել Անգլիոյ օժանդակութիւնը։ Անոնք դիմեցին Ռուսիոյ վարչապետին, — որ իրեն թէ հայկ. անկախութեան կնքահայրն էր —, եւ ըսին. — Մեր խնդիրը կարգաւորուեցաւ։ Վերջապէս, վարչապետ Լոպանով պոթեցաւ, եւ հրաբուխի մը պէս որոտաց. — Ռուս կառավարութիւնը չի կրնար արձուցնել, որ կազմուի Հայաստան մը, որ իր շահերուն անդուժ մէկ քանակը պիտի ըլլար։

Այս պատասխանին վրայ, իրենց անկախութեան համար աշխատող Հայերու մուխը մարեցաւ։ Երբեք չէին խորհէր, որ, Ռուսիա, որուն կոթնած էին, եւ զոր հայր կը նկատէին, այս կարգի պատասխան մը պիտի տար։

Լոպանով, այդ պատասխանով ալ չբաւականացաւ։ Բ. Դուրը (Պապը Այլի) զրդեց Հայերուն դէմ, — հակահայ ամէն ձեռնարկի ուժ տուաւ։ Բ. Դուրը, սակայն, բնաւ ականջ չկատեց այսպիսի քրքրութիւններու։

Ռուսիա, երբ տեսաւ թէ չի կրնար թուրք կառավարութիւնը գրգռել Հայերու դէմ, այս անգամ գարձեալ Հայերու կողմ դարձաւ, եւ սկսաւ «անկախութեան» հին եղանակը նուազել. — Հայերը ականջ տուին եղանակին, զինուեցան, հրոսակային խումբերով լեռ ելան, յեղափոխութիւն կազմակերպեցին։

Հայ բռնիքեցիները, որոնք բնաւ դաս չեն առած պատմութենէն, չէին կրնար ըմբռնել, թէ Ռուսիա ամէնէն աւելի ուղած էր կործանել զիրենք, եւ «անկախութիւն» բառը, անուշ շաքարի մը նման իրենց բերանն էր նետած։ Չէին գիտեր, որ Ռուսիա վատահոգութիւն չունի իրենց վրայ, ոչ ալ կըզէ իր շահերը զոհել Հայաստանի մը համար, որ, մերթ Անգլիոյ, մերթ ալ Գերմանիոյ հոսանքին համաձայն՝ յով եւ ուղղութիւն կը փոխէր։ Ռուսիա, ուշ կամ կանուխ, ճղմել պիտի տար Հայերը։

Այդպէս ալ եղաւ, եւ Ռուսիա իր ձեռքով նիւթեց 1891ի եւ 1893ի հայկական յեղափոխութիւնները, որոնք, բնականաբար, շատ սուղի նստան Հայերուն։ Այն ատեն, բոլոր պետութիւնները թուրքիոյ դէմ բողոքեցին, մինչ Առաջին միակը եղաւ որ բերանն իսկ չբացաւ։ Ահա Վրացիները, Հայերը եւ Ռուսերը, եւ ահա իրենց... քարեկամութիւնը։

Դժուար է, ներկայիս, ճշդել թէ այս խարեւ պատեր քաղաքականութիւնը զեռ ո՞րքան պիտի տեւէ, այդ ժողովուրդին ղեկավարները ե՞րբ պիտի խելաբերին...»։

Ինչպէս կը տեսնէք, Թուրքերը այնքան խելաբերած են որ, ուրիշներուն խելք ծախելու էլեր են, դարաւոր պատմութիւն մը քնարեր հէքեաթի վերածելով։

ՄԵՐ ՄԱՆԿԱՊԱՐՏԻՉԻՆ ՎԵՐԱԲԱՅՈՒՄԸ

ՎԵՆՍԵՆ. — Գոհունակութեամբ կը տեղեկանանք թէ, շրջանիս դադուքն ալ սթափելով 1934էն ի վեր տիրող թմրութենէն, կը հետաքրքրուի նոր սերունդին փրկութեամբ։ Արտօնութիւն ստացած մանկապարտէզի մը, առայժմ հինգ շաբթի օրերը մինչեւ կէս օր։ Թաղային կեդր. վարժարանէն ալ սրահ մը արամազրուած է։

Կը յուսանք թէ դադուքը խրատուելով անցեալի սխալներէն, այս անգամ խղճմտօրէն յանձն պիտի առնէ ամէն աջակցութիւն, բարոյական թէ նիւթական։ Անձնական հաճոյքներու համար հարկւարոր Փրանքներ կը ծախանք, բայց ո՞ր Հայր պիտի զլանար իր տասնեակ մը Փրանքը, հայեցի պատմարեկութեան համար։ Անշուշտ ծնողները պիտի փութան իրենց դաւակները կանոնաւորաբար զրկել, օգտուելու համար հայեցի դաստիարակութեան բարիքներէն։ — Ուսումնասիր մը

Նոր սերունդի փրկութիւնը

Գաղութներու ինքնապաշտպանութեան պայքարին մեծագոյն հոգը հայ նոր սերունդին տոհմային դաստիարակութիւնն է։

Խնդիրը կը ծեծուի միշտ, եւ պէտք է որ ծեծուի, մինչեւ որ իրեն հիմնական դարման՝ ազատագրուած հայրենիքը կարելիութիւնը ունենայ իր դոները լայն բանալու իր թափառական գաւակներուն առջեւ։

Բոյնէն արտաբուած ազգի մը վրին՝ ճակատագրականօրէն կախուած կը մնայ՝ այլասերու մի, ձուլումի կլանիչ սպառնալիքը։ Ու այդ աւերը՝ համաճարակի մը չափ վտանգաւոր է եւ մահացու։ Ազգային ընկերային հիւանդութիւն մը՝ անշուշտ մեծ մասամբ դարմանելի, երբ գորակաւի ենթարկուին տրամադրելի քայլեր ոյժերը։

Բոլորս ալ համաձայն ենք, տարիներէ ի վեր պատաճանաչում կը կատարուի, բայց ինչպէ՞ս դարմանել վէրքը։ Ի՞նչպէս հայերէն սորվեցնել օտար հոգի վրայ ծնած եւ կամ հոն հասակ նետած մեր մանուկներուն եւ պատանիներուն։

Հարցը կը խօսի մեր սրտին։ Արդ՝ իրեն սիրող՝ կ'առաջարկեմ երեք հիմնական միջոցներ. —

Ա. — Արդէն, նպատակին ի նպաստ վաստնուած բոլոր ճիշդերը տան նպաստաւոր արդիւնք մը, իւրաքանչիւր գաղութ պէտք է որ ունենայ կեդրոնական մարմին մը, տեսալ մը Ուսումնական կոմիտէի, կազմուած մտաւորականներէ, մասնագէտներէ, մեկենասներէ, մարմին մը որ՝ անձնուիրաբար, յանուն ազգայնապաւնումի, վարէ եւ ֆազայրէ՝ բոլոր երիտասարդ հայորդիներու տոհմային դաստիարակութեան գործը։

Ունինք՝ երիտասարդական, ուսանողական մարդկան Միութիւններ, երգչախումբ եւ թատերախումբեր, ամէնք ալ՝ մասնիկները հայ կոկոմիտէի մը, բայց՝ բոլորը անկեղծ, առանց ուղեցոյցի, հեղինակաւոր, պաշտպան կեդր. մարմնի մը հովանաւորութեան։

Չկայ կազմակերպուած աշխատանք։ Ուրեմն վաստուած ժամանակի, ոյժերու, եւ նիւթական ազբերներու։

Մամուլն ու ժողովուրդը իրար կ'անցնին թէ նորերը հայերէն չեն սորվիր, միւս կողմէ՝ փարիզահայ ինչ ինչ թաղեր ուսուցիչ չեն կրնար գտնել իրենց զաւակներուն՝ շարաթը դոնէ մէկ օր՝ հայերէն դասաւանդելու համար։

Կը հետաքրքրուինք, գիտե՞նք թէ՛ ինչ միջոցներով, ծնողներուն ինչ սիրտմաշուքով, ինչպէ՞ս մտաւանդ կ'ընտրուին մեր թաղային ծաղկոցներու դասատուները։

Պէտք է՞ որ ծնողները գանն իրենց օգնող կեդր. մարմին մը, որ բնութիւն եւ հայրայրէ՛ իրենց կաշտմին նուիրուած ուսուցիչ կամ ուսուցչուհիներ մեր մանուկներուն։

Դեռ աւելին՝ պէտք է՞ որ ունենանք կեդր. մարմին մը, որ քաջալերէ մեր մարդկան եւ պատանեկան միութիւնները, որպէսզի իրագործեն Հ. Մ. Ը. Մ. ի նուիրական դաւանանքը՝ «Բարձրացիր, բարձրացուր»։

Պէտք չունին՝ այդպիսի հեղինակաւոր մարմին մը նիւթական թէ բարոյական աշակերտութեան եւ մեր դերասանները, նկարիչները, հեղինակները, երգիչները, — բոլորը պահապան հայկական մշակոյթի, ու տարբեր մեր ազգային, ցեղային հրաշալիքներուն զարգացման, եւ, հետեւաբար, սերունդներու, ազգապահպանումի առաջնորդ պահակները։

Չգալի չէ՞ պահանջը կեդր. մարմնի մը, որ՝ առանց մենատիրական յաւակնութեան մանաւանդ, ձեռք ձեռքի՝ զանազան Միութիւններու վարչական մարմիններու հետ՝ կազմակերպէ, դասաւորէ եւ մտածուած, ուսումնասիրուած ծրագրով մը, քարոզութեան արդիական միջոցներով, խանդավառէ, միջոցաւ ստեղծէ, ու հող պատրաստելով արդիւնաւոր դարձնէ՝ իրենց իւզովը տապալուող Միութիւններու ազգօգուտ գործունէութիւնը։

Բ. — Տալ նոր սերունդին անձնուէր, կոչումի մը գիտակից ուսուցիչներ։

Գիտենք, նիհար է, շատ նիհար, հունձը մեր ուսուցչանոցներուն... Գիտենք, Դպրոցատէրքանի մը հարսնուներ միայն պատրաստեց, զիտենք, շարաթական մէկ օրուան վաստակով ստամոքի հարցը չի լուծուիր բնաւ։ Օ, գիտենք, ծանօթ ենք միջավայրի անթիւ գոտարութիւններուն։

Ե՞րբ եւ ո՞ր շրջանին, չենք ունեցած միւլուտին գոտարութիւնները։ Ե՞րբ մեր ուսուցիչները իւր են կապած իրենց ամսականներով... Մեր նախակրթարանները ի՞նչ համեմատութեամբ՝ երկրորդական վկայական ունեցող դասատուներ են ունեցած։ Քանի՞ համալսարանականներ կը հաշուեն մեր երկրորդական ուսումնարանները։ Ու հակառակ այս ամէնուն՝ սերունդ չե՞ն հասցուցած՝ Պոլիս, Իզմիր թէ դաւառը։

Միջավայրէ՞ տարբերութիւն։ Եթէ մեր երէկը ունէրիայաշունչ միջոցաւ մը, մեր այսօրը ունի հայրենաշունչ միջոցաւ մը՝ սերունդ խանդավառուելու։ Ու ինչպէս երէկ՝ այսօր եւս կը բաւէ մեղի ունենալ՝ իրենց կոչումին սէրը, գիտակցութիւնը, արուեստագէտի բոցը ունե-

ՍԵՆՏՐԱԲ ՊԱԼԸԳՃԵԱՆ

ԽՄԲ. — Բանի մը ամիս առաջ Գահիրէի մէջ մեծաւ հիմն հայրենասէր մը, Սեդրաք Պալլըզեան, որ ունեցած է բեղուն գործունէութիւն, յեղափոխական թէ համըմային: Յուսարբեր ողբացեալ ընկերոջ դիմագիծը կը խտացնէ մասնաւոր յողաւածով մը — «Հին հուսարբերից»:

1946 Փետրուար 21ին 72ամեայ տարիքի մէջ ընդմիջապէս փակեց իր աչքերը Հ. Յ. Գ. Եզրիպտոսի կազմի հնագոյն ընկերներէն Սեդրաք Պալլըզեան:

Շուրջ կէս դար առաջ, 1896ին, մերկ բազուկներով եկաւ Եզրիպտոս, այստեղ, օտարութեան մէջ, իր բախտը փորձելու համար: Առաջին ճիզն անցաւ անպտուղ. մտաւ Մէլքոնեան ծխախոտա-գործարանը, դժգոհ մնաց ու ելաւ: Այդ օրերէն լուր տարածուած էր, թէ ասիկ է հոսում է Ալքա-տրալիոյ մէջ: Յանդուղն ու կորովի երիտասարդ, ցուպն առաւ իր ձեռքը եւ անցաւ Միլքուրն: Նորէն ձախողելով՝ կրկին դարձաւ Գահիրէ եւ վերստին մտաւ Մէլքոնեան ծխախոտագործարանը, ուր եւ մնաց ընդմիջապէս, մինչեւ այդ Հաստատութեան հաշ-ուեկարգարը, դառնալով նրա կարեւորագոյն պաշ-տօնեաներէն մէկը՝ Մէլքոնեան ծխախոտագործարանի ղրխաւոր հաշուակար:

Եւ Եզրիպտոս իր բոլորած շուրջ յիսնամեայ շրջանին եղաւ ու մնաց Գահիրէի ծխախոտա-գործարանի անդամներէն մէկը, տարիներով ան-դամակցեց կազմակերպական վարիչ մարմինի, ե-ղաւ «Հայրենաց» ի ջերմ գործակիցներէն, միշտ նե-ցուկ մնաց իր կուսակցական տան, աւելի ուշ «Հա-մագգային» ի հիմնադիրներէն մէկը հանդիսացաւ, իսկ որ ամէնէն ուշագրաւն է՝ միշտ, մինչեւ իր մահը, մի յատուկ — ջերմ ու խոր — զգացումով կապուած մնաց «Յուսարբեր» ի, որի հաշիւները իրրեւ հմուտ հաշուակալ վարում էր ինք, փ հար-կէ, անվճար:

Եւ որովհետեւ մէկն էր մեր բարեկեցիկ ըն-կերներից, ուստի եւ առաջիններից էր նիւթական իր լայն աջակցութեամբ մէջ թէ՛ կարօտ ընկերնե-րին եւ թէ՛ մասնաւորաբար «Յուսարբեր» ի, մանա-ւանդ տարիներ առաջ, երբ թերթը՝ իրրեւ տնտե-սական ձեռնարկ՝ տակաւին գտած էր ինքնիրեն:

Հ. Յ. Գահիրէի ծխախոտա-գործարանի ղեկավար էր:

Սակաւախօս, համեստ եւ ինքնամփոփ, բազ-մութիւններից միշտ հեռու եւ հրապարակային փառարանութեանց ու ծափերի միշտ հակառա-կորդ, բայց մտերմիկ բարեկամութեան սիրա-հար, անխորտակելի կամքի տէր, յամառ եւ զին-ուած հօր հաւատարմի:

Կէս դար առաջ Գահիրէի արձանագրուեց այստեղ՝ Եզրիպտոս:

Ոչ թէ Եզրիպտոս մնալու եւ խաղաղ կեանք վարելու համար, այլ երկիր վերադառնալու նպա-տակով, ուր պիտի ապրէր եւ գործէր իրրեւ յե-ղափոխականին վայել մահով էլ ընկնելու համար:

Եւ որովհետեւ այս վճռակամ մարդու խօսքը համազօր էր գործի, ուստի շուրջ կէս դար առաջ, այս օտար երկրի մէջ, նա որոնեց ու գտաւ այն մարդոց, որոնք իրեն նման պատրաստ էին իրենց կեանքը զոհարելու հայրենիքի ազատագրու-թեան իրենց համար:

Սուրբ մեծ էր թուով, ընդամենը հինգ հո-գի էին, սակայն մեծ էր կամքով եւ հօր էր հա-ւատարմի:

Այս խմբից, խմբին անդամակցող ընկերների իսկ նիւթական գործողութեամբ, Ստեփան Եսայ - եանն Իզմիրլի վրայով 1907ին վերադարձաւ իր ծննդավայրը՝ Կեսարիա, Մկրտիչ Եփրեմեանն ան-ցաւ Պալլըզեանը՝ այնտեղից երկիր մտնելու նը-պատակով, իսկ Գահիրէի ծխախոտա-գործարանից Արշակը 1906ին մեկնեց Թիֆլիզ՝ Արեւելեան Բիւ-րոյի հրահանգով կրկին ղեկավար նոյն ուխտավայրը ուղեւորուելու պայմանով:

Սեդրաքը եւ իր միւս տակաւին ողջ ընկերը, որ ցող դասատուներ, — եւ մեծ մասով մեր պատանի-ները կը փրկուէին այլասերումի կորուստէն:

Մանկավարժ, հոգեբան ուսուցիչը պէտք է անհրաժեշտօրէն իր անձը սիրոյն է իր աշակերտնե-րուն եւ ժպիտով, միշտ ժպիտով մեր ցեղին ա-ռաքինութիւնները: Գիտնալ անիկա՝ համեմել իր դասաւանդութիւնները մեր պատմութեան, գե-ղարուեստի, հերոսագրութեան, մատենագրու-թեան հարցում էջերովը, ու այսօր այլ միջոցա-նցեալին, կը կատարուի հրաշքը, ու խորթ կլի-մաներու պատանին չի կարմրի իր անունի «եան» վերաջաւորութեանէն ...:

Գ. — Տալ մեր պատանիներուն լաւ ուսում - նախընտրած, լաւ պատրաստուած դասագիրքեր:

Հայ աշակերտը, հինէն ի վեր, կը ճանչնայ մղձաւանջը դասադրքի պակասին ... Թանգարաւի, Գանձարան, Մայրենի լեզու սպառած են արդէն եւ անոնց նոյնութեամբ վերհրատարակու-թիւնը չի գոհացներ այսօրուան մանկավարժա-կան պահանջները:

Մ. Պարսպանեան, իր Արարատներովը, եւ ու-րիշներ լուսազոյն նպաստը կը բերեն Հայ նոր սե-րունդի տոհմային դաստիարակութեան:

Բայց այդ մասին ուրիշ անգամ:

Ա. ԿԱՊԵՆՅ

ապրում է Եզրիպտոս, մի առ ժամանակ պիտի մը-նային այստեղ, շարունակէին իրենց օժանդակու-թիւնը երկիր անցած ընկերներին, քիչ վերջը իրենք եւս նոյն վայրը մեկնելու համար:

Մինչ այս մինչ այն վրայ հասաւ սակայն 1908ի թրքական յեղափոխութիւնը, որին յաջորդեց Սահ-մանադրութիւնը՝ տակնուվրայ անելով խմբի բո-լոր ծրագիրները:

Մի պահ այնպէս կարծուեց, որ վերջ է գըտ-նում յեղափոխութիւնը, եւ կեանքը Թուրքիոյ մէջ մտնում է մի նոր ու սահմանադրական հուշի մէջ:

Խմբի անդամներից Մկրտիչն ու Ստեփանը կրկին վերադարձան Եզրիպտոս, ուր այլեւս նոր կեանք սկսուեց բոլորի համար, նոր ծրագիրներով ու նոր երազներով:

Փոխուեց կեանքը, բայց ոչ Սեդրաքը: Կարօտն իր մեծ երազի միշտ մնաց իր հոգում — մարմնով այստեղ էր, սակայն հոգիով՝ երկրում: անուանա-պէս անդամ էր Հ. Յ. Գ. Վարժապետի կազմակեր-պութեան, սակայն իր լուռ երազների մէջ միշտ լեռների վրայ էր, միշտ նահատակների հետ:

Ինչ որ մեկը անում էինք այստեղ՝ օտարու-եան մէջ՝ իր սրտին լրիւ էր խօսում:

Իր բարոյական քաջաբերանքով, նիւթական իր լիարունակ աջակցութեամբ, իր կեանքով ու գործ-քով միշտ մեզ հետ էր եւ զրեթէ միշտ, սակաւ-թիւ օրերի բացառութեամբ, անդաւանդայն — շուն իր կուսակցական սրահի եւ իր սիրած թերթի՝ «Յուսարբեր» ի, բայց եւ միշտ կարծես «բաժան» էր մեզանից ...

Իր լուռ խոհումների մէջ իրեն արժանի էր նկատում Գահիրէի կուսակցական կուսակցու-ն, ու քանի որ իր ուխտը մնացած էր անկատար, ուստի փորձում էր այս մեղքը քաշել լուռ գոհողութեամբ միայն եւ լուռ մտերմութեամբ այն մարդոց հետ, որոնք ե-ղած էին երկիր եւ գործած այստեղ:

... Կեանքը միայն ժպիտ չեղաւ իրեն, այլևս արցունք, տառապանք ու զրկանք: 18 տարի տառջ անակնկալաբար կորցրեց իր 16ամեայ խոստումա-լից եւ սիրասուն դաւակին, յետոյ այլեւս շատ դառն օրեր, բայց ընկճուեց եւ տոկաց բախտի այս դաժան հարուածներին:

Իր անձնական կեանքի մեծագոյն մխիթարան-քը իր ընտանեկան բոյնը եղաւ, — իր սպասու-յալին, կորովի եւ գաղափարակից մի Հայուհի, որ ամէն կերպ թեթեւացրեց իր կեանքի ընկերը բե-ռը, եւ իր զոյգ դաւակները, մեծը՝ բարձրագոյն կրթութեամբ, իսկ փոքրը տակաւին ուսանող:

Աշխարհի բոլոր իրադարձութիւնները, բոլոր մեծ ու փոքր դէպքերը, բոլոր տիրութիւններն ու ուրախութիւնները Սեդրաքի համար հետաքրքրու-թեան միայն մէկ անունը ունէին — Հայի. Գատը:

« Դուսն աւ բրէ, մեզի բան մը պիտի ըլլայ », — այս էր իր սովորական հարցումը ամէն անգամ, երբ ընկերների միջև տաք վէճ էր ծագում քաղա-քական որ եւ է ինչքի շուրջ:

Մտքով, հոգիով, իր բովանդակ էութեամբ կապուած էր միայն իր տառապած հայրենիքի ա-զատագրութեան մեծ եւ լուռի խոհալին:

Ինչ որ շահաւէտ էր մեր Գատին՝ սիրելի էր ի-րեն, ինչ որ անօրուտ էր՝ իրեն համար հետաքրք-րութիւն չունէր:

Այդ Գատի մեծ կարօտով ապրեց եւ այս ան-կատար իր ընդմիջապէս քաժանուեց մեղանից:

Վ. Ն.

ՄԱՐԶԱԿԱՆ ԿԵԱՆՔ

ՎԱՍԱՆՍ. — Հայ Մարզական Միութիւնը իր մէկ տարուան գործունէութիւնը յաջողութեամբ պսակեց, ունենալով 90է աւելի մարզիկներէ կազ-մուած չորս խումբեր: Վարանի դաղութը հարցա-ն է իր Մարզականով որուն շնորհիւ իրենց դաւակ - ները կ'ազատին վատտող վայրերէ:

Ապրիլ 14ը պատմական օր մը եղաւ Պուրկ Սէնթ Անտօյի գեղեցիկ դաշտին վրայ: Երկայ էին բազմաթիւ Հայեր եկած շրջաններէն, մար-զանքի լիազօրը, վարչութեան նախագահը, չորսէ աւելի Ֆրանսացի թղթակիցներ եւ մեր յայտնի բերդապահ Երեւանեանը: Սաղարկութիւնը զոր պկան մեր կրտսերները, Նիոսի «բառէ»ներուն դէմ 70 վայրկեան տեւեց: Մեր «Քրտէ»ները, ի-րենց ճիւղն խաղարկութեամբ արժանացան Տրօմ եւ Արշլիի ախոյեան տիտղոսին: Ժամը 3ին սկսաւ մեր առաջին խումբի խաղարկութիւնը Լաոժան - թիէտի Ա. խումբին դէմ եւ մերիները այս ան - դամ ալ շահեցան Տրօմ Արտէշի ախոյեանի տիտ - ղաւը, բուն ծափերու մէջ: Ցաւալի է ըսել որ մեր «ժիւնիօր»ները տըմի փիւսալին կորսեցին ու - տիւսն: Յոյսով ենք որ մեր առաջին խումբը այս վերջին երեք մրցումները եւս շահելով փրօսօսիւ-նի պիտի բարձրանայ: Սրտանց կը մտղթենք որ Ֆրանսահայ մարզիկները իրենց սին վէճերուն մի-անդամ ընդ միշտ վերջ տարով միանան եւ զօրա - տըր խումբեր կազմեն: Ուր որ համերաշխութիւն կայ, այնտեղ ամէն բան կարելի է: Մեր մասնա-ւոր շնորհակալութիւնը կը յայտնենք վարանի դա-ղութիւն որ միշտ կը քաջալերէ մեզ, նիւթապէս թէ բարձրագոյն: Այս առթիւ կարօտով կը յիշենք մեր տարաբախտ ընկերը, Հայկազ Պարսպանեան, որ ե-ղաւ Միութեան անձնուէր հիմնադիրներէն: Այ - սօր իր երազները իրականացած ըլլալով, իր յի - շատակը միշտ վառ պիտի մնայ մեր սիրտերուն մէջը — վարչութիւն

ՁԱՅՆԻՐ ԳԱՒԱՌՆ

ԱՅՅ ՄԸ ԵՐ. ՏԷՐ ԱՆՆՐԻԿԱՍԵԱՆԻ ԳԵՐԵՉՄԱՆԻՆ

ԼԻՈՆ, 6 Մայիս. — Կերակի, 5 Մայիս, ող - բացեալ Եր. Տէր Անդրէասեանի առաջին տարեկի - ցին առթիւ Հ. Յ. Գ. «Նոր Սերունդ» ի մեր տղաքը այց մը կազմակերպած էին անոր շիրմին: Առ - տուն մատուոն մէջ հոգեհանգիստ կատարուե - ցաւ Ազգ. Միութեան կարգադրութեամբ: Կէս - օրէն վերջ Նոր Սերունդի տղաքը, որոնք մէջ կա - յին Կրքոսովի, Տէսիւնի, Սէնթ Էթիէնի «Նոր Սե - րունդ» ի ներկայացուցիչները, Տէր Անդրէասեանի աղջիկը, տղաքները եւ քանի մը մտերիմ բարե - կամ այց մը կատարեցինք անոր գերեզմանին: Գերեզմանատան մէջ քահանային հոգեհանգիստեան պաշտօնէն վերջ, կարգով խօսք առին ընկեր Մի - սաք Միրզէ, Նոր Սերունդի կողմէ, ընկերներ թ. Այվազեան, Սիւսակ Սիւսեան, Պ. Պ. Վարժապետ - եան եւ Ա. Կիւլպէնկեան, որոնք վեր հանեցին հանդուցեալին կեանքն ու գործը, անոր կատարած հանրային եւ հրապարակապարական աշխատանք - ները:

Նոր Սերունդին կողմէ թարմ ծաղիկներու փունջ մը դրուեցաւ շիրմին վրայ, յետոյ այցե - լուները կրկին ցաւակցութիւն յայտնեցին ընտա - նեկան պարագաներուն եւ ցրուեցան:

Ուրախալիթ պարագայ մը չէ՞ որ սա Նոր Սե - րունդի տղաքը, հաղի մեր առօրեայ կեանքին հետ չիման մէջ մտած՝ ահա, պարտականութիւններ կը ստանձնեն, յարգելով մեր ազգային արժէքնե - րը: Կեցցե՛ն մեր տղաքը: — Այցելու մը

ԿԱՊՈՅՏ ԽԱՉԻ ԶԵՆՆԱՐԿՆԵՐԸ

ԿԻՐԸՆՈՊԸ. — Կապոյտ Խաչի Կերպարու - ցած Մարտ 31ի հանդէսը, օգտուելով Պ. Հ. Բա - լուեանի ներկայութեան, կազմակերպեց բանա - խօսութիւններու շարք մը: Առաջինը նուիրուած էր Ա. Ահարոնեանի, իր 80ամեայ յորեկանին առ - թիւ: Պատրաստուած էր զեղարուեստական կո - կիկ բաժին մը՝ առաւելագոյն Ահարոնեանի գոր - ծերէն: Եղան խմբերգներ եւ արտասանութիւններ Հ. Յ. Գ. Նոր Սերունդի եւ Կ. Սաչի սանուհիներ - րուն կողմէ:

Երիտասարդ բանախօսը՝ շատ պարզ ու յը - տակ լեզուով խօսեցաւ ամբողջ մէկ ժամ, Ահա - րոնեանի կրթական ու քաղաքական գործունէութեան մասին, վեր հանելով մասնաւորապէս այն բացա - ուրի դերքը՝ զոր Ահարոնեան դրաւած է մեր դրա - կանութեան մէջ: Առաջին բանախօսութեանէն ժո - դովուրդն այնքան դո՛հ մնաց, որ հակառակ աշխա - տանքի օրեր ըլլալուն, շատ սիրով ներկայ եղաւ յաջորդ դասախօսութիւններուն եւ հետաքրքրու - թեամբ հետեւեցաւ մինչեւ վերջն ալ: Մասնաւոր Արովեան եւ Հայ Ազատագրական Ծարժումը, Ներսէս Վարժապետեանէն մինչեւ Հ. Յ. Գահիրէի - ցութիւնը՝ այսպիսի անմասշէլի նիւթեր, յարգելի դասախօսը ժողովուրդին պարզեց հասկնալի ու հաճելի ձևով: Ամէն դասախօսութեան վերջ յան - պատրաստից զեղարուեստական բաժին մը կը ստեղծէր ընտանեկան հաճելի մթնոլորտ մը:

Քառակ տօներուն առթիւ, Կ. Սաչի տի - կիները այցելեցին հիւանդանոցները գտնուող Հայ հիւանդանոցներուն եւ բաժնեցին ուսուցիչներ: Ե - դան դրամական նուէրներ գաղութիազատներուն:

Կ. Խաչուի մը

ՆՈՐ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԼԻՈՆԻ ՄԷՋ

ԼԻՈՆ. — Ազգ. Միութեան վարչութեան պաշ - տօնավարութեան նստաշրջանը լրացած ըլլալով, իր նիւթական ու բարոյական զեկոյցը տալէ վերջ, իր հրաժարականը ներկայացուցած էր 1945 Դեկտ. 30ին դումարուած ընդհ. ժողովին: Հոն կը նշա - նեկուէր քննիչ յանձնախումբ մը: Ընդհ. ժողովը մեծամասնութեամբ կ'որոշէ, որ յառաջիկային դումարուի ներկայացուցչական ժողով մը, քննիչ յանձնախումբին զեկոյցը լսելու համար:

Մարտ 10ին դումարուած ներկայացուցչական ժողովը բաւարար եւ զոհացուցիչ գտնելով տըր - ուած զեկոյցը, կ'որոշէ Ապրիլ ամսու ընթացքին հրաւիրել սոյն ժողովին մաս կազմող կազմակեր - պութիւններէն մէկ մէկ ներկայացուցիչ իրրեւ բնորոգական յանձնախումբ, վարելու համար յա - ռաջիկայ ընտրութեան գործերը:

Ապրիլ 25ին եկեղեցւոյ սրահին մէջ տեղի ու - նեցաւ ներկայացուցչներէ բաղկացած ընտրողա - կան յանձնախումբի ժողովը: Այս ժողովի ընթաց - քներ քննուեցաւ Ազգ. Միութեան անունը փոխելու հարցը, նկատի ունենալով որ, Յը. Ազգ. Ընդհ. Միութիւն մը գոյութիւն ունի Լիոնի մէջ: Պարզա - պէս շփոթութեան խուսափելու համար, ընտրողա - կան յանձնախումբին ժողովը մեծամասնութեամբ անպատեհ հարաւ անունի փոփոխման պարա - գան, պայմանաւ սակայն որ իր նախկին ծը - րագրային բոլոր արամագրութիւնները պահուին, անկախ զրութեամբ՝ ըստ առաջնոյն:

Միւս յանձնութեամբ ընդունուելէ վերջ այս պայմանագրութիւնը, որոշուեցաւ մայիս 26ի կի - րակին կատարել ընտրութիւնը ժողովողային ա - զատ քուէարկութեամբ: Գ հոգիւնոց յանձնախումբ մը նշանակուեցաւ այդ գործին համար:

Ընտրութեան վերաբերեալ մանրամասնու - թիւնները պարզող առանձին յայտարարութիւնը տեղին վրայ:

Ընտրողական Յանձնախումբ

«կղերմութիւն, իբրև նախաբան անդլեւեղի պատական բաւակցութեանց, Չըրչիլ պատասխանեց.

— «Մեծ աշխատանքով շինուած բաներ մէկը ի կը նետուին մեծ ամօթով եւ յիմարութեամբ»:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՄԻԼԻՆՆԵՐՈՒ ԱՆՕԹՈՒԹԵԱՆ դարման տանելու համար, Անդլիոյ նախարարներէն Մորիսըն Ուոլթըրը կ'երթայ այսօր, օգնականով: Պիտի խորհրդակցի նախ. Թրուսընի հետ որպէսզի ճար մը գտնեն եւ ուտելիք հասցնեն Եւրոպա, Հընդ-կաստան եւ Մայր. Արեւելքի զանազան երկիրները: — Ուտեստի տագնապը առ նուազն հինգ տարի պիտի տեւէ, համաձայն մասնագէտի մը յայտարարութեան:

ԱՌԷՆՔԷՆ կը հեռագրեն թէ կառավարութիւնը հրամայեց փակել ծայրագոյն աջ եւ ձախ կուսակցութեանց պատկանող 150 դրասնեակներ: Արգելուած ամէնէն կարեւոր կազմակերպութիւններն են միապետական «ՈՒՆ» եւ էամի երիտասարդական միութիւնը (ձախ):

ՊԱՂԵՍՏԻՆԻ հարցին առթիւ Իպըն Մէլուս, Արարիոյ թագաւորը յայտարարեց թէ անդլեւեղութեան յանձնաժողովին տեղեկագիրը դաւաճանութիւն մըն է եւ աւելցուց. — «Այլեւս չեմ կրնար խրատել Արարներուն որ հանդարտ կենան: Տակաւին կը յուսանք թէ անդլիական եւ ամերիկեան կառավարութիւնները պիտի չզործազրեն յանձնաժողովին յանձնարարութիւնները. որովհետեւ այն ատեն դաւաճանութիւնը կատարելով պիտի ըլլայ»:

ԽԵՆԻ ՄԸ, Ժան Երմինո, ձեռքը բիր մը բռնած դացեր է Մաուրի, զոր. տը Կօլի բնակարանին առջեւ, «վրէժ լուծելու համար»: Թերթերը կը գրեն թէ մարդը պոռացեր է. — «Պիտի սպաննեմ զօրավարին աղջիկը, որովհետեւ ան է այս բոլոր թշուառութեանց պատճառը»: Երտակ յիմարանոց:

ՆԻՐԱԲԵՆՊԷՐԻՍ ԱՏԵԱՆԸ Մայիս 8ին սկսաւ դատել ծովակալ Տէօնիցը, — ան որ Գերմանիոյ անձնատրութեան գիրը ստորագրեց ճիշդ մէկ տարի առաջ: Ամբաստանեալը խոստովանեցաւ թէ գերմանական նաւատորմը ի վիճակի չէր Անդլիոյ դէմ կռուելու 1939ի աշնան եւ թէ հազիւ 30 — 40 սուզանաւոր ունէին: Յետոյ գիտեց թէ անդլիական օդանաւերն եւ մարտանաւերն էին որ առաջին անգամ կրակ բացին ազատարար նաւակներու մէջ ապաստանած կամ լողացող Գերմաններու վրայ: «Այն ատեն մենք ալ ստիպուեցանք սահման չգնել ընդդոյն պատերազմին համար»:

ԻՐԱՆԵԱՆ ՈՆԴԻՐԸ Ապահովութեան Խորհուրդի օրակարգին վրայ պիտի մնայ մինչեւ Մայիս 20: Այսպէս որոշուեցաւ միաձայնութեամբ ՚ի բացակայութեան խորհրդային պատուիրակին որ մերժած էր ներկայ ըլլալ: Ապահովութեան խորհուրդը պիտի սպասէ պաշտօնական տեղեկագրին, երկու կողմէն ալ, հաստատելու համար կարմիր բանակին վերջնական պարզումը:

ԱՆԴՐԱՎՈՎԿԱՍԵԱՆ ՆՈՐ ԵՐԿԱԹՈՒՂԻ ՄԸ պիտի բանի այս ամառ, 700 քիլոմէթր կարճեցնելով Մոսկուա — Թիֆլիզ հեռաւորութիւնը: Այս գիծը, որ նախապէս Բագուէն կ'անցնէր, երկար շրջան մը կատարելով կ'ասպից ծովուն շուրջը, այժմ պիտի բանի Սեւ Շովուտ արեւելէն (Սոչի), 18 ժամ պակասեցնելով ճամբորդութիւնը:

ՀԱՅԻ ՏԱԳՆԱՊ կը տիրէ քանի մը օրէ ի վեր, Փարիզի մէջ: Եստ մը փուռեր փակուած են, առիւր չգտնելով: Ձեռնհաս իշխանութիւնը կը յայտարարէ թէ կացութիւնը պիտի բարւոյն յառաջիկայ շաբթու եւ թէ ալիւրը երբեք պակաս չէ Մէնի նահանգին մէջ:

ԱԶԳ. ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԵԱՆ տոմսերը 220 Փրանքէն պիտի բարձրանան 260 Փրանքի: Իւրաքանչիւր շաբթ պիտի ունենայ 600.000 տոմսակ, կէսը Ա., կէսը Բ. պարզեւնեքութիւնը պիտի ըլլայ 104.636, համազումը 93.600.000 Փրանք արժէքով: Ա. շաբթին մեծ պարզելը պիտի բարձրանայ 8 միլիոն Փրանքի, Բ. շաբթինը՝ պիտի մնայ 2 միլիոն եւն.:

Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ամխահանքի բանուորներուն զործադուլը կը շարունակուի, խանդարելով բոլոր հաշիւները: Բանթողներուն թիւը հասած է մէկ միլիոնի, օրական կորուստը կը հաշուեն հինգ միլիոն սթրիլին: Ճորտի շատ մը զործարանները փակուեցան: Երկաթուղիներու բանուորներն ալ զործադուլ հռչակեցին:

ՀԻՒԼԷԱԿԱՆ ՌՈՒՄԲԻ փորձերուն Ֆրանսայի կողմէ ներկայ պիտի ըլլան Պ. Փառտուի եւ Ժուլիօ Քիւռի, յառաջիկայ Յուլիս — Օգոստոսին, Սաղաղակաւ Ուիլիամսի մէջ:

ՅԱՂԹԱՆԱԿԻ ՏՕՆԻՆ առթիւ, արտակարգ լուսավառութիւններ պիտի կատարուին Փարիզի մէջ, կիրակի գիշեր: Զօրահանդէս մըն ալ պիտի կատարուի:

ՊԵՐՏՈՒԹԷՆ կը հեռագրեն թէ անձանօթներ փորձեցին կրակի տալ ամերիկեան մամուլի եւ շարժութեանց գրասենեակները:

ԴԵՐՉԱԿԱՍԱՆ ՓՈՍՏԻՐՈՒԹԻՒՆ Դերձակ Տիգրան ՊԱԳԱՆԵԱՆ կը ծանուցանէ իր յարգոյ յաճախորդներուն, որ տեղափոխուած է 4, rue d'Alexandrie, Paris 2^e, երկրորդ յարկ: Հեռահայն Gut. 70-92:

ՅՈՒՇԱՊԱՏՈՒՄ ԵՂԵՍԻՈՅ

Ամերիկահայ քերթերէն կ'արտասուպնիս են — տեւեալ կոչը.

Ասով կուզանք յայտարարել թէ տարւոյս փետրուար 23ին, կազմուած է «Ուրֆայի Յուշապատուի Յանձնախումբ» մը, որուն նախագահն է Յ. Արդուհայճեան, Ատենայեալ Կ. Ճէրրահեան, գանձապահ՝ Յ. Եօթնեղարարեան, խորհրդակալներ՝ Տ. Արտուրի եւ Կ. Թադոսեան:

Նպատակն է մօտիկ ապագային համար պատրաստել եւ հրատարակել հատոր մը, որ բովանդակէ (ա) Ուրֆայի անցեալ դարերու պատմութիւնը, (բ) 1895ի ահաւոր ջարդը եւ (գ) 1915ի հայրենական մարտնչումները:

Նոյնպէս անոր մէջ տեղ պիտի տրուի Ուրֆայի գաւառաբարձութիւն, սասցուածքներուն, տեղական սովորութիւններուն եւ ազգագրական արժէք ներկայացնող բոլոր տեղեկութիւններուն:

Յարգ Ուրֆայի մասին երեւցած են հայ մամուլի մէջ ցրուած յողուածաշարքեր եւ մէկէ աւելի զրքոյններ: Յանձնախումբին նպատակն է, աւելի ընդարձակ եւ խնամուած գործ մը յառաջ բերել, որ իր մէջ ամփոփէ ցարդ գրուածները եւ ամբողջացնէ պահանջները եւ այսպէս անմահացնէ Հայկական Ուշիան:

Հիմա է ժամանակը այս գործին, քանի զեռ Ուրֆայի վերաբերողներ կան Սուրիա եւ շրջակայքը: 1915ին եւ յետոյ շատ մը հայկական շրջաններու տարակրկիներ Ուրֆային անցած են եւ շատեր շահեկան տեղեկութիւններ կրնան ունենալ հերոսամարտին եւ ուրիշ անցքերու մասին: Բոլորէն կը խնդրուի իրենց յուշերը գրելու Յանձնախումբին, որ զրկուած նիւթերը պիտի հաւաքէ եւ յանձնէ կարող եւ ոչ-Ուրֆայի գրողի մը, որ դաստիարակ, մաղէ եւ վերջնապէս խմբագրէ «Ուրֆայի Յուշապատմութիւն»:

Հասցէ. — Գ. Ա. ԱՆ, K. Alan, 460o Bergenline Avenue, Union City, N. J., U. S. A.:

Պ. Յակոբ Պետիկեան, Տէր եւ Տիկին Սարգիս Պետիկեան եւ զաւակները, Պ. Պետրոս Պետիկեան, Տէր եւ Տիկին Սարգիս Պետիկեան եւ զաւակները, Այրի Տիկին Եպրայիմ Պետիկեան եւ զաւակները, Տէր եւ Տիկին Սուրբէն Պառուեան եւ զաւակները եւ բոլոր ազգականները խոր կսկիծով կը ծանուցանեն զառնողէտ մահը իրենց տիկինը, մօր, մեծ մօր, մօրաբոջը, զորքանչիւն եւ աղջկանին:

Տիկին ՍՕՅԻ ՊԵՏԻԿԵԱՆԻ որ տեղի ունեցաւ Մայիս 7ին, 62 տարեկան հասակին մէջ:

Յուզարկաւորութիւնը պիտի կատարուի վաղը շաբթ, 11 Մայիս, կէսօրէ վերջ ժամը 3.30ին: Հաւաքուիլ հանդուցեալին բնակարանը, 6 Villa des Maupas, Epinay s/s:

Մահազո շտապողներէն կը խնդրուի իբր այդ նկատել ներկայս:

Այրի Տիկին Եսալ Պօյաճեան, Տէր եւ Տիկին Գէորդ Պօյաճեան, ինչպէս նաեւ Պօյաճեան, Levasseur, Lagarde, Երամեան եւ Էլլիպիէնեան ընտանիքները սրտի խորունկ կսկիծով կը ծանուցանեն մահը իրենց ամուսնոյն, զաւակին, եղբօր, փեսային, բեռորդոյն:

Պ. ՇԱՌԼ (ԿԱՐՊԻՍ) ՊՅՅԱՃԵԱՆԻ (Մեռած արկածով)

Յուզարկաւորութիւնը տեղի պիտի ունենայ Մայիս 11ին, ժամը 15ին Eglise Saint - Vincent de Paul de Clichy (96 Bd. Jean Jaurès): Հաւաքուիլ իր բնակարանը 5 rue Henry Barbusse, Clichy (Seine):

Մարմինը պիտի ամփոփուի Լըվալուայի դերեղմանատունը ընտանեկան դամբանին մէջ:

Մահազո շտապողներէն կը խնդրուի ներկայս իբր այդ նկատել:

ՊՈՒՏՕ. — ԿԱՊ. ԽԱՉԻ սան սանուհիներու րացման հանդէսը տեղի կ'ունենայ 12 Մայիս, կիրակի կէսօրէ վերջ ժամը 3ին, երիտասարդ ընկերակարաններու սրահը, Սրնօն: Կը խօսի ընկերուհի Էլլիէն Բիւլակնը: Մանրամասնութիւնները տեղւոյն վրայ: Հանդէսէն վերջ խնջոյք:

ԿՈՒՉՈՒԻ մաքուր կարի աշխատակուրուհիներ իրենց անը մէջ աշխատելու համար: Լաւ վճարում: Դիմել Maison Alice, 24 rue de Ponthieu, Paris (8): Tél. Bal. 48-86:

ՇԱՎԻԼԻ Կապոյտ Սաչի վարչութիւնը շնորհակալութեամբ ստացած է 1000 Փր. Սթանոզի Պ. Յարութիւն Փափազեանէ, իր գործին յաջողութեան համար:

ՀԱՅԵՐՈՒ ԺԱՄԱԴՐԱՎԱՅՐԸ ՃԱՇԱՐԱՆ CHEZ ARTHUR (ՅԱՐՈՒԹԻՒՆ) 28 Rue Ramponneau, Métro Belleville. Tél. Men. 64-47 Արեւիկեան եւ Երազակեան համեղ կերակուրներ, ընտիր օդի եւ ֆախ ազանդեր: Հիմնադրութիւնը գոց է:

ՅՈՒՇԱՏԵՏԻՐ

Հ. Յ. Դ. ԱՐԾԻԻ Ենթակոմիտէի ընդհ. ժողովը այս ուրբաթ իրիկուն, ժամը 8.30ին, ծանօթ հաւաքատեղին:

Հ. Յ. Դ. ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ Բաֆֆի խումբին դասախօսութիւնը՝ այս երկուշաբթի ժամը 8.30ին, Studio Caumartin, 19a rue Caumartin: Կը խօսի Պ. Ա. Չօպանեան, Անգլիոյ Դպրութեանց մասին:

ՎԱԼԱՆՍ. — Հ. Յ. Դ. կոմիտէն ընդհ. ժողովի կը հրաւիրէ բոլոր ընկերները այս ուրբաթ, իրիկուն ժամը 8.30ին, Ահարոնեան ահումբը:

Հ. Յ. Դ. Բաֆֆի խումբին ժողովը՝ այս շաբաթ իրիկուն, ժամը 8.30ին, ընկերակարաններու սրահը, 9 rue Victor, Massé, Métro Pigalle:

ՎԱԼԱՆՍ. — Հ. Յ. Դ. Նոր Սերունդին մասնաճիւղին անդամական ժողովը, այս ուրբաթ ժամը 8.30ին, Ահարոնեան ահումբը:

ԼԻՈՆ. — Հ. Յ. Դ. կոմիտէն ընդհ. ժողովի կը հրաւիրէ բոլոր ընկերները այս ուրբաթ իրիկուն ժամը 8ին, ընկերակարաններու կեդրոնը՝ Place Belcour թիւ 25: Խիտա կարեւոր օրակարգ:

ՄԷՆ ՇԱՄՈՆ. — Հ. Յ. Դ. Նոր Սերունդի «Վարդգէս» խումբին դասախօսութիւնը այս շաբաթ իրիկուն ժամը 20ին, Փր. ընկերակարաններու սրահը, rue Maurice Bonneville, 55: Նիւթ թրփահայ Բնարեգուիթիւնը եւ Վախան Թէֆէեան:

Մայիս 12ին՝ կիրակի կէս օրէ վերջ ժամը 3ին Սալ Ժան տ'Արքի մէջ: Հրատարակային տօնակատարութիւն Ա. Ահարոնեանի 80ամեակին առթիւ, զեղարուեստական ճոխ րաժիս:

Մայիս 13ին՝ երկուշաբթի իրիկուն ժամը 20ին Փր. ընկերակարաններու սրահը: Նիւթ՝ հաշատուր Արովեան եւ Վերթ Հայաստանի: Երեք ժողովներուն ալ պիտի խօսի Պ. Հ. ԲԱՆՈՒՅԱՆ: Մուտքը ազատ է:

ՄԱՐՍԷՅԼ, ՊՈՄՈՆ. — Թատերական ներկայացում Հ. Յ. Դ. Նոր Սերունդի «Բրիտանիո» խումբի կողմէ, Մայիս 13ին, երկուշաբթի իրիկուն ժամը 8.30ին, սինէմա Ֆլորէալի մէջ: Կը ներկայացուի ՉԱՐՇԼԻՆ ԱՐԹԻՆ ԱՂԱ:

ՄԱՐՍԷՅԼ. — Գրաւուած օր, Կապոյտ Սաչին տարեկան մեծ պարահանդէսը, Յունիս 1ին: Կը խնդրուի նկատի ունենալ:

ՄԱՐՍԷՅԼ. — Գինեճօն ի պատիւ Միլիթարեան սան՝ Ջարեհ Մուքաֆեանի, Միլիթարեան նախկին սաներու կողմէ, Մայիս 13ին, երեքշաբթի իրիկուն, ժամը 8ին, Café Noailles ներքնա սրահին մէջ:

Հ. Յ. Դ. ՓԱՐԻԶԻ «Եզրիպոսի» կոմիտէն ցաւակցութիւն կը յայտնէ ընկեր Արմենակ Յակոբեանին, իր մօր մահուան առթիւ:

Պ. ԹԱԴԵՆՍ ՄԵԾՍԱՆՈՒՐԵԱՆԻ մահուան եւ իր Պանարայի մէջ կատարած հանրօրոյտ գործերուն յիշատակին առթիւ Տէր եւ Տիկին Միհրատ Ալիքսանեան 250 Փրանք կը նուիրեն Փարիզի Աղքատախումբին: Ստանալ «Յարաջէն»:

ՅՈՒՅԼԵՆԱԿԱՆ ՏՕՆԱԿԱՍԱՐՈՒԹԻՒՆ Հայկական ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ Ընդհ. Միութեան հիմնարկութեան 40րդ տարեդարձին առթիւ: Այս շաբաթ 11 Մայիս ժամը 15ին, Օթէլ Լիւթէսիայի հանդիսարանին մէջ, Métro Sévres Babylone: Քիչ թիւով տրամադրելի աթոռ մնացած ըլլալուն՝ փափաքողներէն կը խնդրուի գրել կամ հեռագրանի Միութեան կեդրոնատեղին, 11 Square Alboni. Tél. Troc. 03-18, հրաւիրատուս ապահովելու համար:

Կիրակի 12, Մայիս 1946 Յերեկոյք ժամը 3ին



«Շիմի» թատրապետը 28, ուի Սէն-Տօմիթիֆ (Մեք. Էնվալիտ)

ԿԸ ՆԵՐԿԱՅԱՏՆԷ ՈՒ ԿԸ ԽԱՂԱՅ ՀՐԱԶ ՏԱՐՆԵԱՆԻ ՀԱՅՐԵՆԻ ՔԷՆ ՀԵՌՈՒ ԹԱՐԵՐԳՈՒԹԻՒՆԸ, 4 ԱՐԱՐ, 5 ՊԱՏԿԵՐՈՎ Տոմսեր ապահովել սովորական վայրերէն Թատրի կիւն ու գունները կը փակուին ժամը 3ին:

ԿԸ ՓՆՏՈՒԻ Միհրան Սէֆէրեան (Իղմիրցի), 1939ին զինուոր եղած է Փրանսական բանակին մէջ, Մաթինոյի դիմ վրայ: Կը կարծուի որ գերի ինկած է: Լուր տուողին կը խոստանանք նուէր: Իմացեալ Դաւիթ Մուրատեանի, 61 Grand rue des Charpens, Villeurbanne, Rhône, եւ կամ իր բոջը Տիկին Սէֆէրեանի, 15 Odos Colocotronis, Salonique, Grèce:

Le Gérant: H. AGONEYAN Imprimerie DER AGOPIAN, 17 Rue Damesno - 13

Մեր ԽՕՄԳԸ

ՓՇԱԹԵԼԵՐՈՒ ՅԱՆՑԸ

Չորս Մեծերու ժողովը առաջին բախտաւոր չեղաւ քան Լոնտոնի խորհրդաժողովը (1945 Սեպտեմբեր) :

Վէճ՝ բոլոր հիմնական հարցերու մասին : Եթէ կարգ մը սահմանային խնդիրներ դիւրաւ լուծուեցան, պատճառը այն է որ շատոնց փակուած էին : Ժողովը պարզապէս հաստատեց կատարուած իրողութիւնը :

Ռուսներու թրանսիլվանիան ապահոված էր 1944 Սեպտեմբեր 12ին, երբ դինազազար կնքեց Մոսկուայի հետ, պատերազմ յայտարարելով Գերմանիայի դէմ : Ս. Միութիւնը արդէն ետ առած էր Պետարապիան եւ հիւսիսային Պուրովիան : Պուրովիան փոխադարձ համաձայնութեամբ տիրացած՝ հարաւային Տարաւալիսի :

Երկու շարժումն առաջինի խորհրդակցութիւնները անգամ մը եւս հաստատեցին շահերու եւ տեսակէտներու անհաշուութիւնը Մեծերուն միջեւ :

Մէկ տարբերութեամբ, — մինչ Լոնտոնի մէջ բուն վիճարանութիւններ տեղի կ'ունենային, այս անգամ առաջին պայմարներն կ'երեւան հակամարտ կողմերը : Առաջին տրամադիր՝ միջին ճամբաներ դնելու : Սակարկութիւններ փորձելու :

Անշուշտ այդ սակարկութիւնները պիտի կատարուին փոքրերու գլխուն :

Անոնք հազիւ շնորհ կը ստանան յուշադիրներ յանձնելու եւ ընթացիկ բացատրութիւններ տալու (ինչպէս մենք, 1918—22...) : Եթէ զիջումներ կը կատարուին կամ պիտի կատարուին, Չոլքերը նկատի ունին ոչ թէ ինքզինքներն արդար պահանջը, այլ իրենց աշխարհակարութեան շահերը : Այս դեմքին վրայ պերճախօս օրինակ մը թրխեցէ՛ք խնդիրը :

Պահանջատէրերը Իտալիան եւ Եւրոպայի մասն են, բայց, իրականին մէջ, Մեծերու պայքարն է որ կը շարունակուի անոնց կոնսիլի վրայ : Անգլիա եւ Մ. Նահանգները կը մերժեն Եւրոպայի յանձնել այդ նաւահանգիստը, վախճալով որ ան խորհրդա մը կը կրնայ դառնալ Ս. Միութեան համար, Միջերկրական իշխելու :

Այսպէս եւ միւս վիճակի հարցերուն մէջ : Մոսկուա կը պահանջէ հիւսիսային Աֆրիկէի խաղաղական դադարաւարներուն ինքնակալութիւնը, իրեն ընկեր առնելով պարտուած Իտալիան : Լոնտոն, առաջին վարկած, առաջարկեց անկախ Լիբիան մը հաստատել Երբմէն Օսմ. կայսրութեան այդ հողերէն, որոնք Իտալիայի ձեռքն անցան 1912ին :

Դարձեալ Միջերկրականի խնդիր : Մէկը կ'ուզէ ոտքի տեղ ձարել, միւսը՝ անվթար պահել իր տիրապետութիւնը այդ փերերուն վրայ :

Մոսկուան ունի տակաւին ուրիշ խաղաղութու թեր, — Տարաւալիսի, Տէտէ Պալաճ, Երկուտասան կղզիներ են : Բոլորն ալ նոյն մտահոգութեամբ, — խորհիսներ ձարել՝ յանուն ապահովութեան :

Եւ ահա տակի արարական խնդիրը :

Լոնտոն ձախողելով Պաղեստինը Հրէաստանի վերածելու ծրարքին մէջ, օղնութեան կանչեց Մ. Նահանգները : Մտան յանձնաժողովին տեղեկագրերը հաղկել հրատարակուած, փոթորիկը պայթեց : Ոչ Հրէաները զոհ են, ոչ ալ Արաբները : Անգամ մը եւս կը հաստատուի որ կարելի չէ հրէական պետութիւն հաստատել Պաղեստինի մէջ, թէ՛ եւ Յանձնաժողովը կը թելադրէ 100.000 Հրէաներ եւս ընդունիլ :

Արաբները, ամէն դնով խափանելու համար հրէական ներգաղթը, ոչ միայն սրբազան պատերազմ կը սպանան, այլեւ կը փորձեն Մոսկուան ալ ասպարէզ քաշել :

Այս ճակատագրական պահուն, Լոնտոն կը խոստանայ պարպել Երկուտասան, ահա զորով մատնելով պահանջողականները :

Աշխատաւորական կառավարութիւնը այնքան ալ միամիտ չէ, հրատարակու համար 64 տարուան տիրապետութեան մը : Գաղտնիքը, — Երկուտասան տեղը կրնան բռնել Պաղեստինը, Սուտանը եւ անկախ Լիբիան :

Յանցը շատ լայն է տակաւին եւ կը հասնի միջեւ Թուրքիա :

Հակասական լուրերու եւ բանավէճերու յաբիւրնիստին մէջ, աչքի կը զարնէ մէկ բացայայտ իրողութիւն, — Մեծերը կ'ուզեն աշխարհը վերազգովի տիրաբար, միայն խորհրդակցական ձայն տալով փոքրերուն : Իսկ Միացեալ Ազգերու Կազմակերպութիւնը դեռ «ի լինելութեան է» :

Հինն ու նորը նոյն սեղանին շուրջ

ՄԱՐՏԻՅԱՆ. — Զ. Յ. Դ. Բրիտանացիները կ'ստանան իրենց իրաւունքները իրենց իրաւունքները : Կիրակի գիշեր թէյսեղանի մը սարքած էին ի պատիւ Ե. Նարդուանի եւ Փ. Միսաքեանի : Մրհար ծայրէ ծայր լեցուած էր, մօտ 300 հոգի եւ խանդավառ մթնոլորտ մը ստեղծուած օրուան հիւրերուն շուրջ : Ընկեր Պարսամ քանի մը խօսքով բացատրեց հաւաքութիւն նպատակը, իրեն յարգանքի արտայայտութիւն Ա. սիրուած դրագէտին, Բ. Հայկ. Գառի անխնայ ախտիանին (Լոնտոնի մէջ) : Սեղանապետ ընտրուեցաւ Պ. Ե. Արմէն որ սրամիտ եւ հաճելի մէջընկերակցութիւն թէյսեղանի կառավարեց մեծ յաջողութեամբ : Օր. Յարութիւնեան Ահարոնեանի «Մասիս»ով բացաւ զեղարուեստական բաժինը որուն յաջորդեցին «խօսքեր», երգեր, արտասանութիւններ, բոլորն ալ ինքնարուեստ եւ սրտային : Փարիզէ «քնարեալ հասարակութիւն» մը, պատահաբար Մարտէլ իջած, «կատեչյէր» փայլը այս հաճելի հաւաքութիւնը որ սկիզբէն միջեւ վերջը բազմութիւնը պահեց ոչ միայն դահուանակ, այլեւ լարուած եւ ուշադիր :

Պ. Հրաչ Մարգրիտեան ծանրացաւ Նարդուանի դրական վաստակին վրայ, — հատորներ տպուած, հատորներ անտիպ, հատորներ ի լինելութեան ու հատորներ սարմուռուած, մաղթելով որ ան ժամանակ եւ միջոց ունենայ այդ բոլորը տալու :

Պ. Գ. Բրիտանացի երկու յաջող արտասանութիւններէն վերջ, Պ. Կ. Փօլատեան իր բարեկամ մտկան ջերմ զգացումներուն խոսնեց հիացումը Նարդուանին հանդէպ : Տիկին Արշալոյս Մարգրիտեան արտասանեց Նարդուանին «Երազիս մէջ անսայ Հայաստանը», այնքան խոր յուզումով եւ ներքուինամբ որ շատերու աչքերը լեցուցանան :

Եկարիչ Զ. Մուսաֆեան, ինչպէս բոլոր երմէ առաջ եւ վերջ խօսողները, Պ. Ժ. Միսաքեանի յայտնելէ վերջ իր համակրանքը ու դնահատութիւնը, Նարդուանին բերաւ հիացումը արուեստագէտի մը որ անոր դրականութիւնը կը նկատէ եւ նկարագրութիւն, եւ բանաստեղծութիւն եւ կրթաշուքիւն : Տիկին Չապէլ Մորէնոն «Աղջիկ անաստուած»ով իր ձայնին անուշ հմայքը պատգուց ջերմութեամբ բարասուն բոլոր սրտերու վրայ, որմէ վերջ Պ. Տ. Փիլիպեան կարճ բայց բովանդակալից բառերով ողջունեց «Յառաջ»էն՝ «լուսաշող եւ ճաճանչագեղ» այդ թերթէն մեզի եկող Նարդուանին :

Օր. Պիլիպեան իր ծանոթ արուեստով եւ շնորհով երգեց Մայիս Նովայէն եւ Ալեքսանդր : Տիկին Ե. Միսաքեան փորձեց տալ քանի մը զիջելի Նարդուանին, իրեն մարդ, իրեն հրապարակագիր եւ դրագէտ որ միշտ նոր է, միշտ անակնկալ եւ թանկագին : Պ. Յ. Միսաքեանէ խնդրուեցաւ երգել մասնաւորաբար Կոմիտասէն «Ով Զարմանալիս», գանձ մը մեր եկեղեցական երաժշտութեանէն, որ երկուցուցութեամբ համակցեց բոլորը եւ որուն «Գեո մի զարճուրիք»ը թրթաջուց Տիկին Մորէնոն :

Պէյրութէն նոյն օրն իսկ հասած բժ. Գոնեւեան յուզուած քիչ առաջ կատարած ուխտագնացութեան զէպի մեր «Մեծկապիւն», Ահարոնեանը, բառեր փնտնեց արտայայտելու այն խոր տպաւորութիւնը զոր ստացած էր հաւաքութիւն Փրանսահայ կազմութիւն մէջ ոտքը նետած առաջին օրէն :

Կարկազար խօսքը տուաւ օրուան «հերոսներուն» : Պ. Ժիրայր Միսաքեան շնորհակալութիւն յայտնելով իրեն եղած համակրական արտայայտութիւններուն, խօսքը ուղղեց մասնաւորաբար Նոր Սեբուսիին, զայն նկատելով վաղուան Դաշնակցականները որոնք ուժեղ կամքով, կարգապահութեամբ եւ քաղցրութեամբ պիտի շարունակեն երէց ընկերներուն պարտականութիւնները :

Ոտքը Նարդուանին է, որ նախ շնորհակալութիւն յայտնեց, յետոյ աւելցուց թէ Դաշնակցութեան աւանդութիւններուն մէջ չկայ անհատներ մեծարել, այլ միայն դադարաւորներ առնել, այն պէս որ կը նախընտրէ զորք տալ եւ հեռու մնալ հանդիսական ցոյցերէ : Իր մանկութիւնն պատմեց յիշատակներ եւ ներկայացուց իր մտաւորական կազմութեան պատմութիւնը՝ զայն կապելով երեք զպրօցներու, — հայ գիւղը, Զ. Յ. Դաշնակցութիւնը, «Յառաջ»ը : Այս երեք զպրօցներուն յատկանիւններն ու արժէքը բացատրելով վերջ, յիշեց Ռոնսարի մէկ խօսքը, որուն հետեւողութեամբ

Չորսերու ժողովը ի զուր կը ճգնի ելք մը դրանի, լուծելու համար վիճակի խնդիրները : Հինգ շարժի օրուան նիստին մէջ, սուր վիճարանութիւններ տեղի ունեցան Պ. Պրնսին առաջարկին շուրջ, որ կը թելադրէր հաշտութեան ընդհ. ժողովը հրաւիրել Յունիս 15ին, մասնակցութեամբ 21 պետութեանց, համաձայնութիւն դոյանայ թէ ոչ խաղաղական եւ պալլաքանական դաշնակցութեամբ մասին : Պ. Միսաքեան մերժեց այս առաջարկը, պայման դնելով որ նախ Չորսերու ժողովը համաձայնի դաշնակցութեամբ մասին : Յետոյ առաջարկեց որ չորս նախարարները յետաձգեն իրենց խորհրդակցութիւնները եւ նորէն հաւաքուին Յունիս 5ին, երբ հրաւիրեն պիտի ուղղուին միւս 17 պետութեանց, եթէ դաշնակցութեամբ խմբագրութիւնը վերջացած եւ համաձայնութիւն դոյացած ըլլայ : Մ. Նահանգներու ներկայացուցիչը մերժեց այս պայմանը, դիտել տալով թէ համաձայնութեան փորձեր կատարելով հանդերձ, անհրաժեշտ է հրաւիրել հաշտութեան ժողովը : Իր կարծիքով թերեւ 21 պետութիւնները յաջողին դուրս հանել ինչ որ չկարգան ընել չորս Մեծերը : Երկու կողմերն ալ համաձայն են որ հաշտութեան ժողովը հրաւիրուի Յունիս 15ին, համաձայն են նաեւ որ չորս նախարարներուն փոխանորդները շարունակեն քննել իտալական եւ պալլաքանական դաշնակցութեամբ, հաշտեցնելու համար վիճակի կէտերը : Բայց իւրաքանչիւր կը պնդէ իր տեսակէտին վրայ, հիմնական հարցի մասին, — պէ՞տք է նախապէս համաձայնիլ եւ վերջնական ձեւ տալ ընտուած դաշնակցութեան : Իրազեկներու կարծիքով, եթէ Միսաքեան կը պնդէ որ չորս նախարարները նորէն ժողով դուրս բերն Յունիս 5ին, եւ հաշտութեան ժողովը հրաւիրեն երբ համաձայնութիւն դոյանայ իրենց միջեւ, պատճառն այն է որ չուրք 21 պետութեանց վճիռն յանձնել ամբողջ խնդիրը : Սորհրդային պատուիրակը նոյնիսկ պայման դրած է որ չորս նախարարները իրենք որոշեն հաշտութեան ժողովին գումարման կանոնները : Եթէ այս պայմանն ընդունուի, չորսերը պիտի տիրապետեն միւս 17 աղբիւր ժողովին վրայ :

Վիճարանութեան ընթացքին, Անդրլոյս ներկայացուցիչն այ պաշտպանեց ամերիկեան տեսակէտը, իսկ Պ. Պիլատ, որ միայն մէկ անգամ խօսեցաւ, նորէն կը փորձէ միջին ճամբայ մը դնել : Հինգ շարժի օրուան ժողովը տեւեց 2ուկէս ժամ եւ չորս նախարարները լսելով իրենց փոխանորդներուն տեղեկագրերը, տեսան թէ մեծ թիւ մը կը կազմեն վիճակի խնդիրները : Երկու շարժումն ընթացքին համաձայնութիւն դոյացած է միայն 20 երկրորդական խնդիրներու մասին : Պ. Պիլատ զիտել տուաւ թէ Չորսերու ժողովին պարտականութեան է դիւրացնել եւ ոչ թէ բարդացնել հաշտութեան խորհրդաժողովին աշխատանքները, հետեւաբար իրենց փոխանորդները պէտք է ջանան հարթել զժողովութիւնները : Այս մտահոգութեամբ, Փրանսայի արտաքին նախարարը բանաձեւ մը ներկայացուց : Յետոյ մասնաւոր տեսակցութիւն մը ունեցաւ Պ. Պէյլիսի հետ, միեւնոյն առնին ջոշափելով դեմաւանական խնդիրը, որու մասին մեծապէս կը տարբերին անգլիական եւ Փրանսական տեսակէտները :

Նիւ Եորքէն կը հեռագրեն թէ մեծ մտահոգութիւն կը տիրէ մամուլին եւ քաղաքական շրջանակներու մէջ, Չորսերու ժողովին մէջ ծագած վէճերու առթիւ : Փարիզէն հասած լուրերու համաձայն, անգլիացի, Փրանսացի եւ ամերիկացի մասնաղէտներ կը կարծեն թէ բացուած խորամտոր կրնայ տարիներ տեւել : Այդ պարագային Ս. Միութիւնը պիտի դորացնէ իր ուժերը Գերմանիայի մէջ, երկարաձգելով դրաւուածը : Չորս կը շրջի թէ ծեւաւաւական Վանտկայէրի, ընդդիմադիր մը որ անգամ է ամերիկեան պատուիրակութեան, լուրջ յոռետեսութեան մատնուած ըլլալով, կ'ուզէ Ամերիկա վերադառնալ եւ պարզել աշխարհի խաղաղութեան սպաննացող վտանգները : Մերակուտաւ կանին կարծիքով, Ս. Միութիւնը վճռած է շարունակել իր ծաւալման քաղաքականութիւնը միջեւ ուր որ կրնայ, բոլոր միջոցներով, բայց ի պարագային : Իր կարծիքով, «ծայր աստիճան վտանգաւոր քաղաքականութիւն մըն է այս» :

Լուս թէ քանի՛ կը յօտեն հայ ժողովուրդը, զայն խորհրդանշող կազմակերպութիւնը՝ Զ. Յ. Դաշնակցութիւնը, այնքան կ'ուսմանայ այդ ծառը, այնքան զեղեցիկ ճիւղեր կ'արձակէ : Այդ ծառին կանանց ճիւղերէն մէկն ալ ինք :

Պ. Ե. Արմէն իր փակման խօսքով ծանրացաւ Նարդուանին աշակերտական սեղաններէն ճառագայթող տաղանդին վրայ, որ գուշակել կուտար ապագայ Տէմիքիդականը : Անոր դրականութեան խորութիւնը, նկարագրեց բանաստեղծութիւնը, լեզուի ու ոճի մաքրութիւնը եւ յստակութիւնը շնչաւորով, ի վերջոյ զայն կոչեց մեր «աշխարհական Արիշտը» :

Դժուար թէ սրահէն մեկնող ժողովուրդը մոռնայ այս հաւաքութիւնը որ տպաւորութիւնն ու արժէքը : Թ. Պ. Այիճ

«Եւրոպայի Մ. Նանակներ»

Չըբչիլ ճառ մը խօսելով Հորանտայի խորհրդարանին մէջ, առաջարկեց Միացեալ Նահանգներու վերածել Եւրոպայի, արեւելքէն եւ արեւմուտքէն, «այնպիսի եղանակով մը որ տեսնուած չէ հոսովմէական կայսրութեան անկումէն ի վեր»: Իր ծրագրին համաձայն, այդպիսի կազմակերպութեան մը մէջ բոլոր ժողովուրդները պիտի վայելեն բարօրութիւն, արդարութիւն եւ խաղաղութիւն: Այս առթիւ նախորդ վարչապետը ցաւ յայտնեց որ Մ. Նահանգները գործօն դեր մը չստանանեցին Ազգերու Դաշնակցութեան մէջ: «Եթէ այդ դերօն դերն ստանանէին եւ Ազգերու Դաշնակցութիւնը պատրաստուած ըլլար հաւաքական ուժ գործածելու, խախտելու համար Գերմանիոյ վերադիմումը, տեղի չէր մնար նոր արեւմտահարկութեան: Գոնէ խրատուիք այս ահաբեկ դասէն: Եւրոպայի ողբերգութիւնը կը ցնցէ մարդկութիւնը, կը մթաղնէ պատմութեան էջերը եւ սարսափ պիտի պատճառէ ապագայ սերունդներուն»:

ԲԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

Թէ՛ ՀՐԱՆՔԻՆ կը հեռագրեն — վարչապետ Վալադ Մալթանէ յայտարարեց թէ ի հարկին զէնքի պիտի դիմէ, եթէ Ատրպատականները չընդունին իր ծրագիրը: Իր յայտարարութեան համաձայն, յաջողած է համոզել Գերմանիայի որ հրաժարին ինքնավարութենէ, բայց համաձայնութիւն չէ գոյացած ուրիշ կէտերու մասին: «Ես չեմ ուզիր զէնքի դիմել, բայց եթէ ելք մը չլուծուի համաձայն իմ ծրագրիս, ինձի կը մնայ զինուորացու զինակ»:

Այս առթիւ աւելցուց թէ իր ստացած տեղեկութեանց համաձայն, Ռուսները պարպած են Ատրպատականը եւ թէ խորհրդային կառավարութիւնը յայտարարութիւն մը պիտի հրատարակէ այս մասին:

ԱՌԺԱՄԱՊԵՍ ԱՉԱՍ ԱՐՁԱԿՈՒԵՑԱԻ զօր. վէկան, 80ամեայ սպարապետը որ ձերբակալուած էր մէկ տարի առաջ, Գերմանիայէն վերադարձին եւ հիւանդանոցի մը մէջ կը մնար: Դատավարութիւնը պիտի կատարուի Յունիս 2ի ընտրութիւններէն վերջ:

ՊՍՂԵՍՏՐԻՆ ԽՆԴԻՐԸ հեռագրեց կը բարդանայ: Իրաքի քաղաքական կուսակցութիւնները եւ Պաղեստինի Պաշտպանութեան կոմիտէն յայտարարութիւններ հրատարակեցին, բողոքելով անպիտանութիւններ յանձնաժողովին առաջարկներուն դէմ: Կուսակցութիւնները հաւաքական ծանուցագիր մը ուղղեցին կառավարութեան, պահանջելով ազգայնաբան Անգլիոյ թէ ոչ եւ է զործողութիւն որ կը սպառնայ Պաղեստինի ապահովութեան պիտի համարուի թշնամական արարք Իրաքի եւ բոլոր արաբական պետութեանց հանդէպ: Ծանուցագիրը միայն մէկ լուծում կը գտնէ — կատարուի անկախութիւն Պաղեստինի Արաբներուն: Իրաքի մէջ — լուծում. զործողուլ հռչակուեցաւ Մայիս 10ին: — Նոր պայթիւններ եւ հրացանածուցութիւններ տեղի ունեցան Պաղեստինի հրէական ասանին թէ՛ Ավիյի մէջ:

ԻՏԱԼԻՈՅ ԹԱԳԱՌՈՐԸ, Վիքթոր Էմմանուէլ, դահլէն հրաժարելով, յաճանաւ մը նստաւ Նախընտրիէն մեկնեցաւ անձամբ ուղղութեամբ: Թաւուսէն ալ միասին է: Թագաւորը կ'իշխէր 46 տարիէ ի վեր: Մեկնելէ առաջ երկար տեսակցութիւն մը ունեցաւ գահաժառանգին՝ Իշխան Ումպերթոյի հետ: Յունիս 2ին հանրաքուէ պիտի կատարուի, վճռելու համար երկրին վարչաձեւը:

ԵՒՐՈՊԱՅԻ ԱՆՈՒԹԵԱՆ տաղնապար կը մնայ նոյն վիճակին մէջ: Լա Կարտիա, Միջազգային Նպատամատոցը վարչութեան (UNRRA) ընդհ. անօրէնք, սպառնաց հրաժարիլ յիշուի տալով թէ հինգ շաբաթէ ի վեր ձեռք առնուած միջոցները անբաւական են կանխելու աղէտը: Վարչութիւնը չի կրնար նոյնիսկ մէկ ամիս առաջ դիմանալ թէ ինչ պաշար պիտի կրնայ ստանալ: Նիւ Եորքը հասած լուրերու համաձայն, Յունաստանի եւ Իտալիոյ ուսանողի պաշարը այնքան խղճալի է որ, երկու երկրներէն ոչ մէկը պիտի կրնայ պահել հացի ներկայ բաժնեշարքը: Աւստրիա սովա՝ մահուութեան դատապարտուած է Մայիսի վերջը, եթէ պաշար չստանայ անմիջապէս: Եղած ուսեստը հազիւ կը բաւէ օրական 250 դոլ սպահովելու: Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ արտաքին նախարարութեան բանբերը հերքեց այն զրոյցները թէ համաձայնութիւն գոյացած է, Ֆրանսայի արուելիք վարկերու մասին: (Թերթերը գրած էին թէ Ֆրանսա 125 միլիոն սթերլին պիտի ստանայ, իրբիւ առաջին փոխառութիւն): Պ. Լէոն Պլումբ անշի օր մէկուկէս ժամ խօսեցաւ Մ. Նահանգներու խորհրդարանի արտաքին գործերու յանձնաժողովին առջեւ, պարզելով Ֆրանսայի պահանջները: Այդ զեկուցումէն վերջը, յայտարարեց թէ խօսք չեղաւ Ֆրանսայի ներքին քաղաքականութեան մասին եւ թէ բանակցութիւնները վերջնական կէտին հասած են արդէն: Ամերիկայի օգնութեան չարք եւ պայմանները պիտի յայտնուին 8—10 օրէն:

ՎԱՐՁԱՊԵՏ Պ. ԿՈՒԻՆ տեսակցութեան մը առթիւ յայտարարեց թէ «Ֆրանսա պիտի զարմա-

ՅՐ. ԱԶԳ. ՄԻՈՒԹԵԱՆ դիւանէն ստացանք զեկուց մը, որ ծանուցանելով Ֆրանսահայերու ներգաղթի կեդր. կոմիտէին կազմութիւնը, յոյս կը յայտնէ թէ «ամէն Հայ պարտականութիւն պիտի համարի բարոյսակց ու նիւթակց օժանդակել, զիւրացնելու եւ յաջողութեամբ դուրս հանելու համար այս մեծապէս հայրենասիրական պարտականութիւնը»: Աւելորդ է ըսել թէ Կոմիտէն կազմուած է միայն «յառաջդիմական» տարրերէ, մասնակցութեամբ յարանուանութեանց եւ Բարեգործականի:

նայ, երբ իմանայ Մ. Նահանգներուն տալիք վարկերուն կարեւորութիւնը, թէ եւ գումարը չի հասնիր մեր առաջարկած չափին: Աւելի բան չեմ կրնար ըսել: Կը սպասեմ Լէոն Պլումբի հեռագրին»:

Պ. Կուէն այս առթիւ խօսեցաւ նաեւ Ֆրանսայի ներքին կացութեան, Մայիս 5ի հանրաքուէին եւ նոր ընտրութեանց վրայ, եւ բացատրեց թէ միակ էլքը ետեւեւ կառավարութիւնն է, ինչպէս հիմա: «Ամէն տեսակ արկածախնդրութեանց դուրս պիտի բացուի, եթէ կառավարութիւն մը կազմուի երկու մեծ կուսակցութեանց շատ փոքր մեծամասնութեան մը վրայ: Այդ պիտի նշանակէր երկու ձեւակառի բաժնեկ Ֆրանսան»:

ՄՈՒՍՈՒԼԻՆԻ ԳԻՐԿԻՆ գողութեան առթիւ երկու կասկածելիներ ձերբակալուած ըլլալով, առաջարկեցին յայտնել տեղը, պայմանաւ որ արտօնութիւն տրուի թաղելու ընտանեկան դամբարանին մէջ: Կառավարութիւնը մերժեց:

ՀԱՅՈՒ ՄԸ ԱՆՈՒՆՆ ԱԼ կը յիշուի, Թրանսվալի մէջ գտնուած նոր ոսկեհանքին առթիւ, — Անանեան: Եթէ հաւատանք «Ֆրանսա - Սուառ»ի ուրիշ Հայեր ալ կան, «սեւ աղբիւրով», ինչպէս են Մալիպետեր, Չինացիներ, շատերը՝ զինուած:

ՅԱՂԹԱՆԱԿԻ ՏՕՆԻՆ ԱՌԹԻԻ կիրակի առտու ժամը 10ին վարչապետը ծաղիկապսակ մը պիտի դնէ ժան Կարտի արձանին վրայ: Ժամը 11ին Փարիզի զինուորական կառավարիչը էթուալի հրապարակին վրայ պիտի ընդունի երեք դաշնակից երկիրներու արտաքին նախարարները, Գամպուճի թագաւորը եւ Ֆրանսայի վարչապետը, որ ճառ մը պիտի խօսի: Տօնակատարութիւնը պիտի վերջանայ զորահանդէսով մը: Գիշերը՝ հրախաղութիւններ եւ ժողովրդային խրախմանք: Սրճարանները, պարասրահները եւ դրօսավայրերը բաց պիտի ըլլան շաբաթէն կիրակի դէշեր, իսկ մինչեւ առտուն ժամը 2՝ Մայիս 12—13ի դէշերը:

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ օր առաջ կարգադրելու է, կ'ըսէ «Թալմա», պարզելով անդիլիական տեսակէտը, որ հակառակ է հողեր անջատելու: «Բուրբ գերմանաբնակ հողամասերը պէտք է մնան Գերմանիոյ, բացի ապահովութեան համար ստիպողական համարուած պարագաներէ»:

ԱՄԵՐԻԿԱՀԱՅ Թերթերը ուրախութեամբ կ'արձանագրեն նոր սերունդին յաջողութիւնները Քանադայի մէջ: Ներկայիս կան հայ բժիշկներ եւ փաստաբաններ որոնք աւարտած են թրանսլոյի համալսարանը: Նոր բժիշկ մը, Վարուժան Պատմաճեան (ժողովրդ. Չէնիլիէրցի եւ Սեթատայի) իր շրջանը աւարտած է մեծ պատիւներով: 1942ին շահած է 250 տոլարի նուէր մը, 1943ին՝ ոսկի շքանշան, 1944ին՝ ընդունուած է բժշկական կազմակերպութեան մէջ, ստացած է սակի բանայի եւ 1500 տոլար:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՆԸ իր բացման հանդէսին առթիւ, որ տեղի պիտի ունենայ Մայիս 30ին, Համբարձման օրը, Salle d'Iénaի մէջ, ժամը 15 — 18, կը կազմակերպէ ցուցահանդէս մը նուիրուած Հայաստանեան եւ տեղական հրատարակութիւններու, նկարներու եւ հայ մշակոյթի այլ ստեղծագործութիւններու:

Կը խնդրուի այն բոլոր արուեստագէտներէն որ կը փափաքին մասնակցիլ սոյն ցուցահանդէսին իրենց գործերը, նուազագոյն երկուական օրինակ, յանձնել հետեւեալ հասցէին, ամենաուշը մինչեւ 25 Մայիս — Dr. Kaldjian, 5 rue de Maubeuge, Paris (9): Մանրամասնութիւններու համար դիմել Միւսթեան կեդրոնատեղին: Հեռագրային՝ Eto. 12-00: Ժամը 12—15:

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԵԾ ՃԱՇԱՐԱՆ
Տնօրէններ ԳԼԻՄԱՆ ԵՒ ԳՕՓԱՐԱՆԵԱՆ
6 rue Maubeuge, Paris (9), Métro Cadet, Notre Dame de Lorette: Tél. TRU. 85-47

Առաջնակարգ օշի եւ ամէն տեսակ ըմպելիներ, ընտիր աղանդեր, պոլսական կերակուրներ, անուշեղէն: Ընդարձակ եւ օդաւէտ սրահ Ամէն երեկոյ ժամը 7էն սկսեալ Քէմանչիստ ՅՈՎՀԱՆՆԷՍ, ռատի ԱԼՖՅՈՆՍ եւ երգիչ ԱՐԹԱՔԻ կը նուագեն եւ կ'երգեն հայկական եւ արեւելեան երգեր: Գոց է Չորեքշաբթի օրերը:

ԿՈՒՉՈՒԻ արեւելեան գորգ նորոգող արհեստաւոր մը: Գրել Maison Boccara, 18 Place Bellecour, Lyon:

Le Gérant: H. AGONEYAN
Imprimerie DER AGOPLAN, 17 Rue Damesme - 13

Մայիս 28ը Փառիզի մէջ

Կը տօնուի Մայիս 29ին, իրիկուան ժամը 9էն մինչեւ առաւօտ, Petit Journalի մեծ սրահը, 21 rue Cadet: Կը մասնակցին Օր. Աստղիկ Առաքելեան, Պ. Ֆիլիպի Աղազարեան, Արմենիա Վարկազ եւ ռատիոյ ծանօթ նուագախումբը զեկավարութեամբ Raymond Verneyի, Բանախօսութիւններ: Մանրամասնութիւնները մօտ օրէն:

ՅՈՒՇԱՏԵՏԻ

Հ. Յ. Գ. ՆՈՐ ՍԵՐՈՒՆԻ Բաֆֆի խումբին դասախօսութիւնը՝ այս երկուշաբթի ժամը 8.30ին, Studio Caumartin, 19a rue Caumartin: Կը խօսի Պ. Ա. Չօպանեան, Անգլի Գայրութեանց մասին:

Հ. Յ. Գ. Բաֆֆի խումբին ժողովը՝ այս շաբաթ իրիկուն, ժամը 8.30ին, ընկերվարականներու սրահը, 9 rue Victor, Massé, Métro Pigalle:

ՍԷՆ ՇՍՄՈՆ — Հ. Յ. Գ. Նոր Սերունդի «Վարդգէս» խումբին դասախօսութիւնը այս շաբաթ իրիկուն ժամը 20ին, Փր. ընկերվարականներու սրահը, rue Maurice Bonneville, 55: Նիւթ՝ Թրֆահայ Քնարերգութիւնը եւ Վահան Թէֆեան:

Մայիս 12ին՝ կիրակի կէս օրէ վերջ ժամը 3ին Սալ ժան Կարտի մէջ: Հրապարակային տօնակատարութիւն Ա. Ահարոնեանի 80ամեակին առթիւ, զեղարուեստական ճոխ բաժին:

Մայիս 13ին՝ երկուշաբթի իրիկուն ժամը 20ին Փր. ընկերվարականներու սրահը: Նիւթ՝ Խաչատուր Արովեան եւ Վերվ Հայաստանի: Երեք ժողովներուն ալ պիտի խօսի Պ. ՀՐ. ԲԱՆՈՒՆԵԱՆ: Մուտքը ազատ է:

ՍԷՅԻՆՕՉՅԻՆԵՐԸ ժողովի կը հրաւիրուին այսօր, շաբաթ ժամը 20.30ին, Սրբիման զպրօցի սրահը, 2 rue de la Défense, Issy les Moulinaux:

ՄԱՐՍԷՅԸ, ՊՈՄՈՆ — Թատերական ներկայացում Հ. Յ. Գ. Նոր Սերունդի «Քրիստափոր» խումբի կողմէ, Մայիս 13ին, երկուշաբթի իրիկուն ժամը 8.30ին, սինէմա Փորէալի մէջ: Կը ներկայացուի ՉԱՐՇԸԼԸ ԱՐԹԻՆ ԱՂԱ:

Հ. Յ. Գ. ԵԳԻՊՏԱՅԻ կոմիտէն իր խորին ցաւակցութիւնը կը յայտնէ ընկերներ Սարգիս եւ Պետրոս Պետիկեանի եւ Սաշիկ Միլոտիչեանի, իրենց մօր եւ զորանչին մահուան առթիւ:

Հ. Յ. Գ. «ՆՈՐ ՍԵՐՈՒՆԻ»ի կեդր. վարչութիւնը 500 Փրանք կը նուիրէ, ողբացեալ ընկեր Օհան Կարոյի տապանաքարի շինութեան ծախքերուն համար:

Այրի Տիկին Շառլ Պոյաճեան, Տէր եւ Տիկին Գէորգ Պոյաճեան, ինչպէս նաեւ Պոյաճեան, Levasseur, Lagarde, Երամեան եւ Էլլիպիեան ընտանիքները սրտի խորունկ կսկիծով կը ծանուցանեն մահը իրենց ամուսնոյն, դաւիին, կղբօր, փեսային, բեռորդուին:

Պ. ՇԱՍԼ (ԿԱՐՊԻՍ) ՊՅՍԱՃԵԱՆԻ (Մեծած աղկաձով)

Յուզարկաւորութիւնը տեղի պիտի ունենայ Մայիս 11ին, ժամը 15ին Eglise. Saint - Vincent de Paul de Clichy (96 Bd. Jean Jaurès): Հաւաքուի իր բնակարանը 5 rue Henry Barbusse, Clichy (Seine): Մարմինը պիտի ամփոփուի Լըվալուայի գերեզմանատունը ընտանեկան դամբանին մէջ: Մահազո շատացովներէն կը խնդրուի ներկայ իրր այդ նկատել:

ՅՈՒՇԱՅԻՆ ՏՕՆԱԿԱՍԱՐՈՒԹԻՆ Հայկական ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ Ընդհ. Միութեան հիմնարկութեան 40րդ տարեդարձին առթիւ: Այս շաբաթ 11 Մայիս ժամը 15ին, Օթէլ Լիւթէսիայի հանդիսարանին մէջ, Métro Sèvres Babylone: Քիչ թիւով արամադրելի աթոռ մնացած ըլլալուն՝ փափաքողներէն կը խնդրուի գրել կամ հեռագրանել Միութեան կեդրոնատեղին, 11 Square Alboni. Tél. Troc. 03-18, հրատարակուած ապահովելու համար:

Կիրակի 12, Մայիս 1946
Ցերեկոյք ժամը 3ին



«Շիմի»ի Թատրոսարանը 28, ռիւ Սէն-Տոմիսիֆ (Մեք. Էնվալիս)

ԲԱԳՐԱՏՈՒՆԻ
ԿԸ ՆԵՐԿԱՅԱՅՆԷ ՈՒ ԿԸ ԽԱՂԱՅ
ՀՐԱԶ ՏԱՐՕՆԵԱՆԻ
ՀԱՅՐԵՆԻ ՔԷՆ ՀԵՌՈՒ
ԹԱՏՐԵՐԳՈՒԹԻՆԸ, 4 ԱՐԱՐ, 5 ՊԱՏԿԵՐՈՎ
Տոմսերն ապահովել սովորական վայրերէն
Թատրի կիշէն ու զաները կը փակուին ժամը 3ին:



Մեր ԽՕՍԻԸ

ՈՒՐ ՄՆՍՑ «ԿԱՊԸ»

Ճիշդ մէկ տարի առաջ, 1945 Մայիս 23ին հրատարակել էինք նամակ մը Երեւանէն, Յունուար 20 թուակիր, երկրի եւ Արտասահմանի յարաբերութեան մասին: Մտորագրութիւնը՝ «Արտասահմանի հետ կուտուրական կապի Հայկա-կան Ընկերութեան վարչութիւն», նախագահով եւ անդամներով:

Այդ օրէն ի վեր, ի զո՛ւր կը սպասենք նորահաստատ «Կապ»ին իրական գործունէութեան:

Ճիշդ է որ այստեղ ալ կոտոր մը կ'երեւալ, — «Կուտուրական կանոնադր կապի հաստատում» Արտասահմանի հայ առաջադիմական ընկերութիւնների եւ կազմակերպութիւնների հետ:

Խնդիր է այժմ. գոնէ «յառաջդիմականները» կրցա՞ն իրապէս օգտուել այս կապին:

Գիտենք որ Մշակույթի Միութիւն մըն ալ հաստատուեցաւ Փարիզի մէջ, ամիսներ առաջ, աւելի վաղահաստատուեցաւ համար այդ յարաբերութիւնները:

Աւելի բարատու եղա՞ւ այդ Միութիւնը:

Լուր չունինք: Իրազեկներ կը հաւատեն թէ պատասխան անգամ ստացած չեն ամիսներ առաջ գրկուած նամակները:

Մեր գործը չէ պրպտել պատճառները: Կը ցաւինք, միայն, որ մէկ տարի ալ կորսուեցաւ թղթ-թակցութիւններով: Եւ Փարիզը մնաց գրեթէ «անգիր Ալպանացի»:

Անդին, արեւելեան գաղութներուն մէջ, զբաղուածներ բացուած են Ս. Հայաստանի հրատարակութեան համար եւ ծանուցումներ կուտան: Փարիզի գրաստաններն ալ իրանէն, Լիբանանէն կամ Պաղեստինէն կը ճարեն խորհրդակցութիւններն ու գիրքերը: Արդեօք անո՞ր համար որ այդ գաղութները աւելի մօտ են Երեւանի:

Անշուշտ կապը միայն գիրքերու փոխանակութեամբ չի սահմանափակուիր:

Մենք շատ աւելի լայն կ'ըմբռնենք զայն, որքան թոյլ կուտան հաղորդակցութեան միջոցները: Դժբախտաբար այս ճակատին վրայ եւս ազանդամուլ նեղամտութիւնն է որ կը տիրապետէ:

Օրինակ, պատերազմի ընթացքին եւ մինչեւ այսօր Երեւան լուրեր եւ յօդուածներ կը գրկէ Արտասահմանի թերթերուն: Բայց ոչ ամէնուն, այլ անոնց որ «յառաջդիմական» կը համարուին: Մարդիկ նկատի ունին միայն «բարեկամութիւնը», Ոչ թէ թերթին արժէքը եւ անոր կապուած բազմութիւնները:

Ս. յա ալ «վերին» հրաման է: Բայց Մոսկուան Եւրոպայի մէջ զբաղուած հաստատում էր պատե-րազմէն տարիներ առաջ, եւ վճարովի ծանուցում կը գրկէր այս թերթին, գիրքերու հետ:

Ինչ եղանակով ալ բացատրեն այս երեւոյթը, տխուր է եւ աններելի: Ամէն պարագայի մէջ, անհամապատասխան պետութեան մը վարկին:

Հայրենիքը խորութիւն չի դնէր իր զաւակներուն միջեւ, կ'ըսեն հաւատարիմները եւ ուղեկիցները: Բայց ահաւաստիկ խորութեան փաստ մը, որ ոչինչով կ'արգարանայ:

Արդարեւ, ի՞նչ կը շահի հայրենիքը, եթէ տարազիր բազմութեանց մէկ աննչան մասը — «յառաջդիմականներն» ու մնացեալը վերի արտիցորեն համարուին, իսկ միւսները գրկուին: Ընդհակառակն, պետութիւնը ինք բան — գործ պիտի ընէր անընդհատ նիւթ ճարել «հեթանոս» բազմութեանց, զանոնք լուսարաններու համար: Ինչպէս կ'ընեն Եւրոպայի բոլոր պետութիւնները եւ կուտակուածութիւնները, տարածելով իրենց գաղափարներն ու աշխատանքները:

Այս տարրական պարտականութիւնը ստիպողական է մանաւանդ հիմա, երբ ներգաղթ պիտի կազմակերպուի: Երբ Երեւանը ինք անհրաժեշտ կը դառնէ Արտասահմանի արակցութիւնը, պարտաւոր է՞ նիւթ, գիրք եւ թերթ ճարել ամէնուն: Արդե՞ր, բաժնել, տարածել անխտիր: Առանց նոյն իսկ «խորովակներ» փնտռելու:

Միամտութիւն: Ոչինչ: Թող մենք բաժնւնք, իրբեւ արտայայտիչ անհամար բազմութեան մը որ հայրենիքի սէրը չի չիտթեր դետամած խոնարհութեան եւ շղթորթութեան հետ:

Եթէ Երեւանէն եւ Էջմիածինէն արձակուած «միամտականութեան» կոչերը իմաստ մը ունին, ահաւաստիկ պատեհութիւն մը եւս, ապացուցանելու համար անոնց անկեղծութիւնը:

Դիւրբերը պարզ են, բոլոր հիմնական հարցերուն մէջ: Ոչ ոք իրաւունք ունի հաւատաքննութիւն կատարելու: Ներսէն թէ դուրսէն: Ծ.

Մեկ տարուած պատմութիւն

ՄԱՐՍԻՅԸ. — Այսօր մէկ տարի է որ Մարսէյի Հ. Յ. Դ. Երջ. Կոմիտէն խումբ մը խանդավառ եւ հայրենասէր երիտասարդներու կը յանձնէր Հ. Յ. Դ. Նոր Սերունդի ծրագիրը — կանոնադիրը եւ կը թելադրէր զբաղել կազմակերպական աշխատանքով, իր հովանաւորութեամբ:

1945 Մայիսին Հ. Յ. Դ. Նոր Սերունդի մասնաճիւղ մը կը կազմուէր Պոմոնի եւ Պուլվառ Օտտոյի մէջ, խումբ մը երիտասարդներով, որոնց շուտով յաջորդեցին չորս նոր խումբեր, Կառտան, Սէն Լու, Մարսէյի քաղաք, իսկ բացման հանդէսէն երկու օր առաջ, Սէնթ Անն: Այս բացումը տեղի ունեցաւ նոյեմբեր 27ին, մօտ 1700 հոգիի ներկայութեամբ, ստեղծելով մեծ խանդավառութիւն: Այս բացումէն վերջը կազմուեցան երկու նոր խումբեր եւս, Սէնթ Մարկիտ եւ Սէնթ Անթուան եւ մեր շրջանը ունեցաւ 8 խումբեր: Բազմազան անդամներուն թիւը: —

1945 Մայիսին 25 անդամ. — 1945 Նոյեմբեր 273 210 անդամ — անդամուհի, — 1946 Մայիս 5. — 360 անդամ — անդամուհի:

Ամէն խումբ ունի հերթական ժողովները, ուր հայերէնը պարտադիր է: Անդամները կ'ընտրեն իրենց վարչութիւնները, իսկ խումբերու վարչութիւնները՝ Երջ. Վարչութիւնը: Ներքին գործունէութիւնը կը բաժնուի երեք մասի, — Մշակութային, գեղարուեստական, մարզական:

1. Մշակութային. — Իւրաքանչիւր խումբ ունի շաբաթը մէկ կամ երկու անգամ հայերէնի դասեր: Դասախօսութիւններ կը տրուին խումբերու մէջ 15 օրը անգամ մը, ինչպէս եւ 18 բացառիկ դասախօսութիւններ կազմակերպուած են Երջ. Վարչ. կողմէ, Մարսէյի մէջ, հետեւեալ նիւթերու շուրջ. — Հայոց պատմութիւն, աշխարհագրութիւն, հայ յեղափոխական շարժումներ եւ հայ զբոսականութիւն:

2. Գեղարուեստական. — Չանդան խումբեր ունին իրենց թատերախումբերը, ինչպէս նաեւ կարող արտասանողներ, երգողներ, նուագողներ (Սէն Լուի նուագախումբը): Երջանի բացումին յաջորդեցին զանազան խումբերու բացման հանդէսները, կամ ներկայացումներ որոնք ունեցան մեծ յաջողութիւն եւ զնահատուեցան ժողովուրդին կողմէ: Մօտ առնէն պիտի կազմակերպուի երգչախումբ մը:

3. Մարզական. — Անցեալ ամառ ունեցանք երեք զաշտաղնացութիւններ եւ այս տարուան համար սարքուած են զանազան պտոյտներ որոնք պիտի սկսին շուտով:

Անդամուհիներու խումբերէն շատեր ունին «պատքէթ պօլ»ի խումբեր, միւսներն ալ շուտով կ'ունենան:

Անդամներուն համար, ամէն մասնաճիւղ ունի իր Փութպօլի խումբը եւ յաճախ տեղի կ'ունենան Նոր Սերունդի ներքին ախոյեանական խաղերը: Չանդանի առթիւ Երջ. Վարչ. կազմակերպած էր Փութպօլի մեծ մրցում մը (Tournoi de Sixtes), 8 խումբերու մասնակցութեամբ եւ մօտ 700 երիտասարդներու ներկայութեամբ: Արդեւե՞ր. —

Առաջին խաղերը. — Քաղաք 1, Սէնթ Անթուան 0, Սէն Լու, Սէնթ Մարկիտ (forfait), Կարտան 3, Պուլվառ Օտտո 1, Պոմոն 2, Սէնթ Ան 1:

Երկրորդ խաղերը. — Սէն Լու 3, Պոմոն 2, Կարտան 10, Քաղաք 2:

Երրորդ խաղը. — Սէն Լու 6, Կարտան 2: Սէն Լուի խումբը վարձատրուեցաւ Ք. Ռ. 2. երրորդութեան բաժակով, իսկ Սէն Լուի եւ Կարտանի խաղացողներուն բաժնուեցան շքանշաններ:

Այս ամառուան համար, Երջ. Վարչ. ձեռնարկած է «Jeux Olympiques»-ի, ուր պիտի ըլլան զանազան մրցումներ, — Փութպօլ, պատքէթ պօլ, վազք, ցատկէլ, լողալ եւայլն:

Այս քանի մը տողերով ուզեցի ծանոթացնել 360 երիտասարդ երիտասարդուհիներու ընկերական կեանքը: Այսօր ունինք 360 անդամ — անդամուհիներ, որոնք գիւրութեամբ կը խօսին մայրենի լեզուն, կը հետաքրքրուին Հայոց պատմութիւնով ու աշխարհագրութիւնով, հայ յեղափոխական դէպքերով ու Հայկական Հարցով: Անշուշտ Մարսէյի հին սերունդը, ինքն ալ ուղեւորուած այս գործունէութեամբ, հասնոյցով պիտի կատարէ իր պարտականութիւնը, բերելով մեզ իր բարոյական օժանդակութիւնը:

Այս առթիւ, «Յառաջ»ի միջոցաւ ուրախութեամբ կը հետեւինք Փարիզի, Իսի լէ Մուլինոյի, Ծալիլի, Սէնթ Էթիէնի, Վիէնի, Սէն Ծամոնի,

Ապրիկեան Տրիպոլիտիա՝ Իսալիոյ

Չորսերու ժողովին ուրբաթ օրուան նիստին մէջ, երեք ժամուան խորհրդակցութենէ մը վերջ, կարգ մը զժողովուրդները հարթուեցան փոխադարձ զինուորներով, շնորհիւ Պ. Պիտոյի միջա-մտութեան: Տեսակ մը ընդհանուր համաձայնու-թիւն գոյացաւ Ապրիկէի իտալական գաղթական-բերու մասին: Հաշտութեան խորհրդածրոյցի գումարման խնդիրը կը մնայ առկա, ինչպէս Թրիէսթի հարցը: Քաղաքական շրջանակներու մէջ բարենչան կը համարին այս երեւոյթը, առանց շատ լաւատես ըլլալու:

Ժողովի առտուան նիստին մէջ, Յրանսայի արտաքին նախարարը առաջարկած էր նորէն քննել հիմնական խնդիրները: Պ. Պ. Պըրնս եւ Գէվին դարձեալ փափաք յայտնեցին որ ճշգրտի հաշտու-թեան խորհրդածրոյցին գումարման թուականը: Վիճարանութիւններէ վերջ համաձայնութիւն գոյացաւ միայն իտալական գաղթականներու մասին: Պ. Մոլոթով անմիջապէս յայտարարեց թէ Ս. Միութիւնը կ'ընդունի Քրանսական առաջարկը, — իտալիոյ խանդակալութեան տակ դնել ապրիկեան Տրիպոլիտը, Միացեալ Ազգերու հովանաւորու-թիւն գործեց ժողովին մէջ եւ անմիջապէս ըն-դունուեցաւ: Ուրեմն Մոսկուա կը հրաժարէր Ապրիկեան Տրիպոլիտ խանդակալութեան պահանջէն: Միայն Պ. Պէվին առաջարկեց որ Կիւրէնեան թե-րակոյցին (Պէնկագի) դրուի Անգլիոյ խանդակա-լութեան տակ: Մոլոթով ժամանակ խնդրեց մտա-ծելու համար, եւ երէկ պիտի պատասխանէր: Կարծողներ կան թէ Մոլոթով այս կարեւոր զիջու-մը ըրաւ, շահելու համար Թրիէսթի դատը (Եւրոպայի յանձնել): Ամէն պարագայի մէջ, փշոտ խնդիր մը լուծուած կը համարուի, գոնէ առ այժմ:

Ժողովը քննեց նաեւ հատուցումներու խնդիր-ը: Մոլոթով 100 միլիոն տոլարի հատուցում կը պահանջէր Իտալիայէն, Ս. Միութեան, 200 մի-լիոն ալ՝ Յունաստանի եւ Եւրոպայի համար: Այս առթիւ բացատրեց թէ Ս. Միութեան համար պահանջած 100 միլիոնը այլաբանական իմաստ ունի, պարզապէս յարաժժ ըլլալու համար հատու-ցումի սկզբունքը: Պ. Պըրնս ալ հաշտարար ողի մը ցուցնելով, յայտնեց թէ կ'ընդունի 100 միլիոնի հատուցումը Ս. Միութեան համար, բայց Եւրո-պայի եւ Յունաստանի 200 միլիոն տոլարին փո-խարէն կ'առաջարկէ հողային եւ ուրիշ փոխարի-նութիւններ: Սկզբունքի համաձայնութիւն մը չ'ուրացաւ պատերազմի օճարողներու մասին:

Տակաւին առկա կը մնան չորս հիմնական խնդիրներ, — Թրիէսթի, Դանուբի նաւարկութիւն, ազատ առեւտուր պալքանեան երկիրներու հետ եւ կարմիր բանակին ներկայութիւնը Պուլկարիոյ մէջ: Ամէնէն բարդը Թրիէսթի խնդիրն է: Երէկ-ուան ժողովին մէջ նոր փորձ մը պիտի կատար-ուէր այս խնդիրներն ալ իրաւախօսութեամբ լու-ծելու: Իտալական նաւարկութիւնը կը քննուի մասնազէտներու կողմէ, որոնք որոշած են միայն 45 մարտանաւեր ձգել Իտալիոյ, երկուք՝ հինգսո-գրահաւորներ: Երկու արդիական զբաժանուորներ պիտի բաժնուին Անգլիոյ, Ս. Միութեան եւ Մ. Նահանգներուն միջեւ. բայց ի՞նչպէս, քանի որ երեքն ալ կը պահանջեն ...

Տիրապետող կ'ապստամբի՞ն

Լոնտոնի թերթերը կը գրեն թէ Լիբանանի ան-կախութեան հռչակումէն հազիւ մէկ ամիս վերջը, Տրիպոլիտը կը սպառնան ապստամբել, (70.000 լիբանականներ՝ 1.500.000 բնակչութեան մէջ): Ինչ-պէս յայտնի է, Տրիպոլիտը իսլամական աղանդ-մըն են, իսկ Լիբանանի բնակչութիւնը մեծ մասով քրիստոնեայ: Կացութիւնը վտանգաւոր կը հա-մարուի մանաւանդ անոր համար որ ապստամբու-թիւնը, եթէ պայթի, պիտի զուգըլպի անգլիա-կան եւ Ֆրանսական զօրքի պարպումին հետ:

Լիբանանցիները բացէ ի բաց կը մեղադրեն

(Լուրերու շարունակութիւնը կարգալ Դ. Է9)

Վալանսի, Տէսինի, Լիոնի մեր ընկերներուն դա-սախօսութեանց, մարզական կեանքին եւ ձեռ-նարկներուն: Չեմ մոռնար Կրնոպլը, ուր պատա-հարար ներկայ եղած ըլլալով, մեր ընկերները տե-ղեկութիւններ խնդրեցին Մարսէյի Նոր Սերուն-դէն եւ շատ ուրախացան, թնդացնելով «Մշակ բանուոր»ը:

Կը յուսամ թէ պարզուած աշխատանքները խթան մը պիտի ըլլան ուրիշ վայրերու երիտա-սարդներուն համար, որոնք հեռանալով սրճարան-ներէն կամ թղթախաղի սեղաններէն, պիտի միա-նան իրենց եղբայրներուն: Չեւք ձեռքի պայքա-րինք բոլոր այն մոլութիւններու գէմ որ կ'աղար-տեն մեր ազգային դիմագիծը:

Ըլլանք տիպար հայրերներ, հայ ժողովուր-դին պատիւ բերող Նոր Սերունդի երիտասարդներ:

ՃԻՐԱՅՐ ՈՍԿԵԱՆ

Շ Ա Տ Ե Ր Ե Ն Մ Է Կ Ը

Երբ կոչնադիր ստացաւ Եղուարդ՝ հանեց բերնէն պողոնը մը դամբ, ու վիզէն կաշիէ գոգնոցը ու, հարսնեւորի պէս վազեց դորանոց: Նոյն օրն իսկ հրացան մը տուին ձեռքը, ճիշդ հասակին չափ: Նայեցաւ հրացանին՝ ... դիտեց ընկերները...

— «Մարգարէ չե՞ն դիտեր, ոչինչ, երբ կէսը շարդուին, մնացածները կը վարժուին»:

Եղուարդ համաձայն էր — միամիտ տղա՛ — բայց միայն գիտնար թէ ինչպէ՞ս կը տեղաւորեն փամփուշտը հրացանին մէջ:

Այլապէս իր երազը իրականացած էր ահա՛: Երկար երգ մը որ տեւած էր Կարինէն մինչեւ Տէյր էլ Ջօր: Իր մանկական մղձաւանջին մէջ արդարեւ հունտի մը պէս ծիլ արձակած էր հրացան մը ունենալու փափաքը, ոչլոտ «գափթիկ»ին ունեցածին նմանը, նոյնինքն այդ մարդակերպ չնազայրեկ պաշտպանելու համար ծերեր ու մա՛նուկներ, կիներ ու հիւանդներ, սովահար, վիրաւոր ու անբանացած:

Հրացանը ձեռքն էր հիմա, նոր ու փառուոր, առատ զնդակով: Ի՞նչ լաւ պիտի ըլլար, եթէ Տաճկին դէմ դրկէին զինքը... հող չէ, այդ օրն ալ կու գայ: Վերջիչեց նմանապէս այդ դժոխային երազին մէջ ուրիշ մարդիկ եւս... լաւ հագուած, ածիլ ուսած, կարմիր երեսներով, մտրակը ձեռքը ու բոնք աղուոր աղջիկներ կ'ընտրէին իրենց տառապանքի կարուստին, աղուոր մանչեր, քոտոտ ժամատարմաներուն ուսին թափահարելով փաղաքօրէն: Կը յիշէր դեռ, մտրակած էին զինքն եւս անգլթօրէն, երբ անոնց ոտքը ինկած էր որպէսզի զինքն ալ «աղատեն» եւ շատ ուշ կըրցած էր հասկնալ մահամերձ մօրը դառն խօսքերը, — «Փախի՛ր, ա՛նոնցմէ ալ փախի՛ր, տղաս, անոնք քրիստոնէայ թուրքեր են, Ալամանները...»:

Նոր ընկերները տեղացի փորձ ու վարժուած զինուորներ էին: Առաջին օրէն փարեցաւ անոնց, կորզելու համար գէնքի հրապուրիչ դադանիքը, առանց իր արժանապատուութիւնը վրայ տայլու սակայն: Ինչո՞ւ ըսեն թէ՛ «Վարչապետը» պատերազմէն լուր չունի, թէ՛ խելքը ատանկ բաներու չի հասնիր:

Ընկերները, զուարճասէր եւ սկիստիկ տղաք, օրուան վարիչին անունը կրելուն համար «վարչապետ» տիտղոսով միկտեցին զինքը: Եւստով համակրեցան անոր. խոնարհ ու ոչինչ տղայ՝ ինչէ՞ն պիտի նախանձէին, մանաւանդ կոշիկակար, կրնար ի հարկին իրենց ոտիցները կարկառել:

Այսպէս փողով թմրուելով հարսնեւորներու նման, օր մըն ալ ձակատ հասան:

Այդ օրէն ի վեր ամիսներ անցան: Լուր մը պիտի չունենայինք Եղուարդէն, քանի որ չյարգեց նամակ գրելու իր խոստումը. մեզի համար ան շատոնց մեռած պիտի ըլլար, որովհետեւ շարաշուք լուրեր հասած էին թէ իր զօրաբաժինը անհետացած էր:

Յետոյ ի՞նչ, օրօրոց օրած չէինք ա՛: Եթէ փախուստի ճամբուն վրայ հանդիպած չըլլայինք նահանջող զինուորական բեկորներու: Օր ու գիշեր միասին էինք եւ մեր անհատնում հարցումներով վերջապէս դռանը գինուոր մը համակրելի, խելացի, զարգացած, երկու պատերազմ տեսնող մարդ մը, որ կը ճանչնար Եղուարդը, «Վարչապետը», եւ ի՞նչպէս չճանչնար...:

Ու այսպէս պատմեց մեծ գոհունակութեամբ, ինչպէս խորշակահար մը դաւաթ մը ստա շուր կը խմէ եւ երկար կը շնչէ, բան մը ըսելէ առաջ...

... Գիշեր էր եւ տեսարանը գարշուրելի, քառս մը պարզապէս: Մեր պաշտպանողակամը խրամադէն հեռու. կատարեալ անելի մը մատնուած էինք:

Տարօրինակ, դժոխային դոտում — գոչումէն նախ մեր լսողութիւնը կորսնցուցինք: Արձակուած թնդանօթներու, ուռմբերու որոտումով տարա՛նուած թիւերները վիբրացներու կը փոխուէին: Երկարաչար էր եւ մենք հրաբուխի խոտարանին մէջն էինք կարծես: Բլուրներ կը հարթուէին եւ բարձունքներ կ'ոտոտաւէին մեր շուրջը: Գիշեր էր, բայց հազարաւոր ասուպներ կը լուսաւորէին: Մենք բանականութիւն ունեցող էակներ չէինք այլեւս: Մեր տեսողութիւնը միայն կը գործէր առայժմ, եւ մենք ի զուր կը փնտռէինք թշնամին:

Մահը անմաքմաք կը հնձէր մեր շարքերէն: Համաձայն կար ու բո՛ւրիչ չունէինք: Մերթ կը սողայինք լուսաւոր փոթորիկներէն զգնանուած: Մեր ոտքերուն տակ շատրուաններ կը ժայթքէին ու վիշապներու հարբորոք կրակներուն մէջ կ'անհետանային անհամար մարդկային ձեւեր: Մայր ծառը կորսնցուցած չոր տերեւներու պէս մենք ամէն մէկս անկումի խորը մը կը փնտռէինք հոն կծկուելու համար: Ծառերս վերածուած էինք մսեղէն քարերու եւ ողջերը մեզմէ զոմեր կը կազմէին, քայլ մը ետ դէպի կեանքին հասնելու համար... Դիակներ փոռուած էին չորս զին որոնց սրտակեղքը գաւաբումները կը տեսնուէին լուսաւոր

ՎԵՐՋԻՆ ՀԱՄԲՈՅՐԸ...

Կ. Տէր Պողոսեանի յիշատակին

Վեց տարեկան էի: Մեր արեւահամ աշխարհին մէջ, իմ հասակակից ձագուկներու հետ, կը հըրձուէի ժպտուն ու շարածճի: Ամէն կողմ արեւ կար: Մեր տանը մէջ: Մեր պարտէզին մէջ: Մեր այգիներուն ու հովիտներուն մէջ: Մեր խրոխտ ու վեհ լեռներուն զագաթներուն վրայ, ու մեր աննման սայլը աչքերով աղջիկներու սիրտերուն մէջ:

Մանուկ էի: Հայոց երկրի շատ մը անմեղ ու բարի մանուկներուն պէս: Աշխարհի ցաւին ու տառապանքին անտեղեակ մանուկ: Մէկ բան գիտէի միայն. — Երբ իրիկուն կ'ըլլար, ու մութը կ'իջնէր մաղ — մաղ, լուսնկայ մեր ճրագը չէր ուշանար, ու կը խաղայի Մըլըկէնց Մանոյին հետ, մեր ու Մանոյինց մշտահոտ աղբիւրին մօտ:

Առաւօտ մը: Սեւ հովը եկած էր ու իր վայրագ թաթը դրած էր: Թթենիներուն եւ ուռնիներուն շափրակներուն տակ պահուրտած, սուր ու սարսափելի ճիչերով բուերուն ձայնը կը լսուէր եւ դէմքը կը տեսնուէր: Բուն մանուկներուն ամէնէն ատելի թռչունն էր:

Մեր տան համար, այդ տարին շարագուշակ եղաւ: Ամէն ինչ մոռայլ էր եւ սուգ: Մահուան ու գերեզմանի հոտ կուզար... Մայրս, անուշ մայրս միշտ մնացած էր, իր ձագուկներով միասին: Հայրս, իմ բարի հայրս, տուն ու տեղուանք, այգի ու այգեստան լքելով մեկնած էր, դէպի «ղարիպ»ներուն երկիրը — Ամերիկա... Մանուկ էի, անտեղեակ մշտահոտ հրձուկներուն եւ թռչունու թեւան: Օր մը մեր տան մէջ իրարանցում կ'ըլլաւ: Ես ոչինչ զգացի: Գիտէի որ, սեւ աչքերով, ողորուած ու աղուոր պիտեքով իմ կտորձ հայրս բացակայ էր: Մեկնած էր այն երկիրը ուր եաթաղակի ու արիւնաներկ դանակին սարսափը չկար:

Գարուն էր: Մեր այգիին բոլոր պտղատու ծառերուն շրթները բացուած էին, ինչպէս արբուրէի հասած մեր ամօթխած աղջիկներուն շրթները: Մեր այգին դարձած էր ծաղկատան մը, դանազան ծաղիկներու գեղեցիկութեամբ:

Գիշեր մը: Ահա խրախճանքի ու ցնձութեան կանչեր: Մեր տան դաւիթը լեցուած էր բազմօթթեամբ, լուսնի — լոյսով եւ պլպլացող աղուոր ճրագին տակ:

Կարիպ հայրս Ատլանտանի ափերը վերջնապէս ձգած՝ ու հարբած հսկայի մը նման դէպի՛ հայրենի վերադարձի որոշումը կուտայ: Զա՛գուկներու ու ընտանիքի կարօտը, իմ բարի հօրս ճրագը մարեց: Ահա այդ գիշեր, հայրենի մեր դաւաթին մէջ անկիւնը, անմասնօթ ու քիչ մը դարիպ մէկը նստած էր:

Ինձի ըսին թէ հայրս է: «Ձագուկս, իմ սիրտուն մանչս» ըսելով իր կուրծքին սեղմեց ու համբուրեց, այտերէս, աչքերէս, թաթիկներէս, ինչպէս կարօտակէզ մայր մը իր կորսուած զաւակը դրկած պահէ: Ես մանուկ էի, լուսնի պայծառ ճրագին տակ քնչօրէն քուն եղած:

Կը յիշեմ... Առաւօտ մը, տակաւին աքլորին կանչը չէր արթնցուցած մեր տան բարի ու աշխատասէր ընտանիքը: Տակաւին վարդենիին վրայէն պլպուլին անուշ գեղեցիկները չէր լսուած, ու չարածճի ճնձուկներուն խուժանավար բազմութիւնը

փայլատակումներու ժամանակ: Եւ, յանկարծ զգացի թէ կապարէ վերմակի մը տակ ինկած եմ ես ալ: Գլուխս եւ ձախ թեւս միայն դուրսն էին: Կ'ուզէի շարժիլ եւ աւելի կը խրէի, կ'ուզէի պոռալ եւ բերբաւոր արձագանգներ կոկորդս կը սեղմէին: Թեւս գերեզմանէս դուրս երկարած՝ պատրաստ էի բռնել, սեղմել, կառչել ինչ որ կեանք կը կոչուէր, եթէ այդ կեանքը ըլլար նոյնիսկ դիւային:

Չէի գիտեր թէ՛ որքան ժամանակ եւ ու՞ր կը գտնուէի, այլեւս յոյս չունէի ընկեր մը տեսնելու, ու կը սպասէի թշնամի զինուորներու երեւման, եւ ահա չուշացան անոնք: Նոր լոյսերու մէջ ստուերներու պէս կը սուրան, շատուոր են: Դիւահարներ են կարծես, այլեւս մէկ մտածում ունիմ, միայն բռնել գէթ մէկուն ոտքէն եւ ժանիքներս խրիլ ա՛նոր պարշապարին մէջ:

Մօտս չոր խոտերուն մէջ բազմահազար իժեր կը սուլին ու րոպեղէն յեղունք ալ — ձախ կ'երկարին. կրակ ինկած է, զինուորները աւելի կը մօտանան:

Ոչ, եկողները ընկերներ են: Կը հաւաքեմ վերջին օդը կուրծքիս ու օգնութիւն կը պտտեմ: Ա՛նոնցմէ մի՛ն այն որ հրացանի չափ հասակ ունի, ինձի կը դառնայ, պղնձէ զլխանոցս կը քաշէ եւ վերը լոյսին մէջ վրաս կը նայի, ստուգելու համար թեւեւ թէ՛ թշնամի չե՛մ: Կեանքս այժմ ա՛նոր ձեռքերուն մէջն է եւ անոր բոլոր շարժումները նուիրական են ինձի համար, որովհետեւ կեանքս ինքն է եւ ինքը կեանքս: Կը յիշեմ թէ՛ ա՛ն ինչպէս ուղեց արդէն ըլլալ ընկերներուն գլխիկը լոյս վաղբին, բայց միւսները հրեցին զինք պետին եւ վայրկեանէ մը անհետացան խուարին մէջ: Ես չեմ գիտեր թէ՛ դեռ որքան սպասեցի յուսահատ ուրիշ հրձիգ ուռմբի մը լոյսին, երբ ճակատս, աչքերս սկսան այրիլ եւ սատրիկ ցաւը սթափեցուց զիս: Զարմանալի բան, մարմնիս թեւեւ էր փե՛տուրի պէս. կապարէ գերեզմանը չէր ճնշեր այլեւս վրամ: Բայց ոտքերս օդին մէջն էին ու կար-

չէր բազմած մեր տան ամուր ցուրդներուն վրայ: Տակաւին՝ արեւ թաղաւորը, իր ոսկեղոյն պատ — մուճանով չէր եկած բազմելու մեր տան վրայ, մեր բուրումնաւէտ այգիին մէջ:

Արեւածաղէն առաջ, խայթող օձերու խմբակ մը եկած արած էր պանդխտութեան նոր վերադարձած երեսնամեայ հայրիկս, վշտահար ու ալեկոծ... Մանուկներ էինք: Դուրսը, ծով բազմութիւն մը: Կիներ, կիներ, տժգոյն ու մեղամաղձոտ: Հարսներ, Հայոց աշխարհի ծծկան երախաներով կամ յղի:

Թուրք ամբոխը կը ցնձար վայրադօրէն ու օձի ժպտով: Յեղին ողնայարը իրենց ձեռքն էր: Կ'ուզէին ճղմել — փշեղ արմատապէս: Եւ ահա, ցաւի ու ճիչի, լացի ու աղաղակի սրտամալիկ ձայներ: Դժխեմ մուկետիկներ գարշելի աղաղակը կը փոթորկէր խրճիթներն ու հողիները: Կարմիր ու սեւ օրեր էին: Մըլըկէնց Մանոյին լացը կ'ալե՛կ կոծէր մանուկ հողին, ու կը խեղդէր զիս:

Կը վաղեմ Մանոյինց բակը: Սեղճ Մանոյին հօր՝ Կարօ ամուկին խոշոր մարմինը աղբիւրին քարին վրայ երկնցուցած՝ մորթեր էին եւ անոր դիակին վրայ, «Հայրիկ հայրիկ, ի՛մ անո՛ւշ հայրիկ» կը ճչար Մանօն: Մայրը, իր մաղերը կը փետտէր, ծծկան նորածինը իր դիրկը, եւ կը հայհոյէր թագաւորին: Ամէն ինչ տխուր էր: Մեր տանը կատուն այլեւս չէր երեւար արեւուն տակ, ցուրդներ վրայ: Մեր եւ Մանոյինց շնիկները ալ չէին խնդար: Օձին բոյնը լեցուած էր օձի ձագուկներով: Ծոններու վոճմակը մահուան մանգաղով կը պտտէր: Փոթորիկ ամէն կողմ...:

Մայիսի առաւօտ մըն էր: Ամիսներ վերջ՝ հայրս բանտէն լուր դրկած էր մօրս թէ վերջին անգամ իր ձագուկը տեսնել կ'ուզէր: Որո՞ւն հետ, հօրս քով տարած էին զիս, չեմ յիշեր: Վարդենիները բացուած էին: Հոտն ու հոտուրտանքը ամէն կողմ տարածուած, կարմիրը, աւելի շատ էր, քան ձեռմակը:

Բանտին դրան առջեւ ենք: Մով ու անմեղ հայրերին: Բանտէն ներս, հարիւրաւոր կտրիճներու աչքերը փնտուտուքի մէջ են: Ամէն մէկը իր սիրելիին այցելութեան սպասող. վերջին հրածեղտը, վերջին բոց համբոյրը աննելու...:

Ժամատեսիլ ու արիւնածարաւ մարդասպաններուն արիւնտ աչքերը սարսափ կ'աղղէին:

Ահա շղթայակալ խումբի մը մահատարուտ պատկերը: Կը տեսնեմ հայրս, ու կը վաղեմ իր մօտ, գրկելու, իմ մանուկ կուրծքիս վրայ սեղմելու, իր հսկայ ու բազմավիշտ զլուխը: Իր աչքերը ծով կը դառնան, ու շղթայակալ ձեռքերով, դարձեալ վերջին համբոյր կը դրօշմէ ու կ'ըսէ.

— Ձագուկս, խելքը կ'ըլլի, ու մի լար, ես երեք օրէն պիտի վերադառնամ...»:

Մահուան դուռը դացող կարիճներուն խումբը, մարդասպաններու քաղաքէն տարին, իրիկ ուսան մայրամուտին ճառագայթներուն հետ գերկպիրիկ, դէպի արեան հովիտը...:

Ու ահա երեք օրերը երեսուն տարազի տարիներ եղան, հայր: Ո՞ւր է խոստումը: Ես մեծցայ, եղիճներու եւ տատակներու հետ, ու հասակ առի, մեր այգիին վարդենիին նման: Կը թափառիմ, օտար հորիզոնի տակ, հայրենիքէն հեռու: Ո՞ւր է գերեզմանը, որպէսզի ափ մը հող ցանեմ:

Ս. ԸՆՏՐԻԿԵԱՆ

Ծես կը թռչի. առաջին անգամն ըլլալով ծարաւ զգացի, ծարա՛ւ. ծարա՛ւ:

Պահ մը կարծես ականջիս մէջ ձայնաւոր գընդակ մը կը պարէր. եւ անունիս հետ դաւադրօրէն կ'ուզէր ուղեղին մէջ մտնել, արտակարգ լուռութեան մէջէն անուշ մեղեդիի մը փոխուելով: Ուրեմն ողջ էի: Վար սահեցայ բարձունքէ մը, ճակատս զովայաւ եւ երբեք չէի հաւատար թէ կեանքս պիտի հասնիմ, առուակներ սկսան զլզլալ կուրծքիս տակ, լեզուս դուրս ինկաւ ու սկսայ լակիլ անյադօրէն...»:

— Դէ՛հ, Ժանօ, տըպաւ (ոտքի՛), աղատեցանք զիտե՛ս. օյէ՛, ընկեր...:

Բացի աչքերս. Եղուարդն էր: Ո՞վ չէր ճանչնար զինք, մեր «Վարչապետ»ը, կեցած առտուան լոյսին մէջ արեւաշողին պէս: «Եւ դուն տեղեկու թիւն չունիս...»:

Այսպէս պատմեց փարիզցի զինուոր մը հապճեպով, փախուստի ճամբուս վրայ. Եղուարդի մասին ու աւելցուց.

— «Ինքն ալ վիրաւորուած էր, եւ իր շիկա ցած սողաւարտը իմ ձակատս նոյնիսկ այրած էր, երբ զիս կոնակն առած կ'ապառէր իմ գերեզմանէն, միս միշտակ, որովհետեւ միւս ընկերները լքեցին զինքն ալ իմ փոսիս մօտ:

Ամիսներով հիւանդանոց մնաց, թնդանօթի բոցերէն հրաշէկ սաղաւարակն իրբեւ յիշատակ իր ձակատին շուրջ սպիներու պսակ մը ունի հիմա:

Եւ գիտե՞ս կուրծքին ալ պատերազմական խաչ, արծաթ աստղով...»:



Նոյն տղան է դարձեալ, խոնարհ ու ժպտուն, տուփի չափ իր կրպակին ներսը նստած ցածիկ աթուղի մը վրայ, կօշիկակարի սնտուկ — սեղանի առջին ու պողոսը մը դամ միշտ բերնին մէջ: Անխօս ու խոհուն մուրճ կը մաշեցնէ օրն ի բուն, որպէս զի մարդիկ բոպիկ չքային...:

ՊՄՄՐՈՎ ՎԵՏՈՒՆԻ

Առաջնությունը 'ի...

Արքային անդուլտ էին ժամանակին, Սթամբուլի հայ գրականագետներն ու մտաւորականները: Օր մը օրանց մայրաքաղաքէն դուրս չէին նետեր իրենց ոտքերը, զալ բարեւ մը տալու համար մեզի, զբնակիչներու:

Մենք, դաւառն խելք կը թոյնէինք իրենց համար: Անոնք տարեգիրքերու մէջ, իրենց նկարով միայն կը բարեհաճէին դաւառ այցելել, եւ ասով կը գոհանայինք: Այսպէս, պարզմիտ էինք դաւառացիներս...

Հիմա դարը փոխուած է: Մեր գրեանքը մըր տած են ժողովուրդի մէջ: Մեզի հետ կ'ուտեն, կը խմեն ու նարտ կը խաղան, երբեմն ալ պարտուելու պայմանով... Այսօր մենք դանոնք միտով ոսկորով կը ճանչնանք: Ինչ երջանկովիս:

Անցածները, գրականագետներու հոյլ մը, ձգելով Փարիզի գեղահարձ միջավայրը, լքելով իրենց տաքուկ բոյներն ու իրենց մայրիկին տաքուկ ապուրը, իրենց լեռնակուտակ գրքերուն զէջը եւ իրենց հուրիատիպ սիրուհիները մեկնեցան Մարտէյլ, Նիս, Վալանս, Լիոն, Կրքնուպը եւ շրջակայները, քարոզելու, դասախօսելու, վիճելու, թէյա-մեծարուելու եւ իրենց դաւառի մայրիկներուն եւ թոյրերուն կերակուրներուն համը նայելու: Միեւնոյն ատեն սթափ պահելու այդ վայրերու հայ ժողովուրդը եւ լուսարանելու զանոնք, Հայոց պատմութեան, հայ գրականութեան, երթչութեան, նկարչութեան, հայ ճարտարագիտութեան, բանաստեղծութեան եւ գիտնագիտութեան մասին:

Գաւառի հայութիւնը հեւ ի հեւ կը վազէ սրահէ սրահ, լսելու, ըմբոշանելու, զարգանալու եւ հայ մտաւորականը մօտէն տեսնելու տենդով բռնուած:

Իրարու հետ մրցումի կ'ելլեն: Ուսուցիչացի երեկոյնի ժամին մէջ օրհնուած ծաղիկ պէս, իրարու ձեռքէ կը խլին այս տղաքը:

— Ես պատրաստութիւն տեսայ քանի օր է: Կարգը իմ է: Մեր տունն են այս երեկոյ:

— Եղբայր, ես ձեռք խառն խօսք առի: Բարեկամներ ալ հրաւիրած եմ: Հօրաքայրս, միտիս տղամ պատրաստած է, օդը տաք է, կարելի չէ պահել:

— Օ՛ր, ի՞նչ կ'ըսէք, մեր տան սեղանը պատրաստ է խաղէն: Ապուրն իսկ դրուած է պնակներուն մէջ: Քալեցէք, տղաք, խօսքի ակամպ մի տաք: Վաղն ալ հոն կ'երթաք...

Ասոնց կարուանագետն ու թելադրիչն է նար-

Մեր գրականութեան թեմաքիւնները

ԽՄԲ. — Կարտապետներ Երեւանի «Ազիւտական Հայաստան»էն: Հեղինակը՝ Նայիրի Զարեան, ծանօթ է իբրև բանաստեղծ եւ «խաչակիր»:

Մեր գեղարուեստական արձակի մէջ նկատելի է մի բան. շատ երկերի մէջ չեն գտնուում այնքան որ կոչուած է սեղանի կարգի կարգի կամ ազգային ձեւ: Այդպիսի երկերը անյաշող թարգմանութեան ար-պաւորութիւն են թողնում ընթերցողի վրայ: «Էլի, սիրելիս, խորամանկն ես, հա» — մօտաւորապէս այսպէս են խօսեցնում հեղինակներն իրենց հերոսներին, երբ ցանկանում են կենդանի խօսակցութիւն ստեղծել: Այնինչ ամէն մի գրականութիւն պէտք է արտայայտի իր ժողովրդի կենդանի խօսակցութեան լեզուն, իր տեղի եւ ժամանակի ամբողջ գունագեղութեամբ:

Աւելի ցայտուն կերպով նկատուած է մեր բանաստեղծութեան մէջ արտայայտչական միջոցների համալուծութիւնը: Մեր բանաստեղծութիւնը շատ նուաճումների է հասել եւ հարուստ է երիտասարդ գրականներով: Բայց չի կարելի ասել, թէ մեր բանաստեղծութեան մեծ ջանքեր են դրածուել մեր գրականութեան զարգացման, ժամանակի լսողուն, որով կենդանի է ամէն մի բանաստեղծութիւն: Արեւ ու երկինք, Մասիս ու Արագած, ապիւհ ու արծիւ, վերջերս էլ Սասունցի Դաւիթ եւ Հայկ Նահապետ — անա մեր գիտնացի գլխաւոր գէները: Իրանք բոլորն ալ սքանչելի են, բայց արդէն վաղուց մաշուել են՝ անխնայ գործածուելուց: Իրանցով այլևս չի կարելի սպրել: Պէտք է հարստացնել մեր բանաստեղծութեան բառաթերքը, արտայայտչական միջոցների զինանոցը՝ ժամանակակից կեանքի փոխարարութեան պատկերներով եւ ժամանակակից կենդանի խօսակցական լեզուով: Ես ինձ չեմ օրորում այն երջանակի մտքով, թէ ինձ միշտ բանաստեղծական հարմարեղում հանել մէկ թան բանաստեղծական հանքանիւթից: Իմ ոտանավորներից շատերը նոյնպէս այժմ մաշուած են եւ չեն դիմանում ժամանակի պահանջներին: «Երկացած Հողով» ժողովածուի մի մասը թէ կարելի է արդարացնել նրանով, որ պատրաստի առաջին տարիներին մենք թշնամուհի հարուածում էինք ձեռքի տակ ընկած ամէն ինչով եւ ժամանակ չունէինք զբաղելու գեղեցկագիտական ընտրութեամբ, ապա այսօր ես տեսնում եմ,

դուռին: Այդ շրջաններուն «տունի տղան», որ տարին հեղ մը, տնօրհնէնքի կ'ելլէ այդ տեղուանքը: Այս անգամ, կ'երեւայ թէ՛ «Հայ - Բոյժ»ի համար հիւթ եւ նիւթ հաւաքելու գնաց: Թէ՛ մաժուել ինչ յատկութիւններ ունի եւ որքան պէտք է ուտել: Թէ՛ կեռար կուտո՞ւմ թէ կոթով ուտելու է:

Այս անթիւ, մշտելու մեր երկնահայկաց բանաստեղծ Ահարոնն ալ, որպէսզի իր գրելը շալկած ուղղապարհ իջնէ: Կարուանին խառնուի:

Ըսողներ կան, որ նարդուներն միտք ունի այս անգամ կողակիցով մը վերադառնալու Փարիզ:

Բալուեան Զուարթնոց Հրանտը, ամիսներէ ի վեր կը շրջի այդ շրջաններուն մէջ: Կը բացատրէ հայ ժողովուրդին, Ներսէս Վարժապետեանի եւ Սրբիեան Հայրիկի դերը Պերլինի վեհաժողովին մէջ: Թաշատուր Արտվինի թաշակներն եւ կօշիկներուն մասին, մասնագիտական ցնցիչ յայտնութիւններ կ'ընէ: Միեւնոյն ատեն կը զբաղի Զուարթնոցի տաճարին վերակառուցման գործով եւ թ. Թօրամանեանի յաջորդութիւնը ձեռք բերելու խնդրով: Կ'ենթադրուի թէ՛ կէս աչքով աղ-Ջիկտեսի գործով ալ կը զբաղի, մայրիկին օգնականուհի մը բերելու համար...

Մուծաֆեան նկարիչն Զարեհ Մարտիրոս ժողովուրդին կը բացատրէ գոյներու առնչութիւնը կլիմայի եւ ազգային նկարագրին հետ՝ ուղղակի իր կառուներուն վրայէն, իր երանգապնակին աւելցնելով մաս մը հարաւի արեւ եւ Միջերկրա-կանի ջուր:

Գաղազեան բանաստեղծն Զարեհ, կ'ուսումնասիրէ ծովի ալիքներուն ընթացքը, իր գրելիք բանաստեղծութիւններուն նորադոյն չափականութիւն մը եւս աւելցնելու համար: Միեւնոյն ատեն, կ'ըսեն, կը հետեւի կնքահայրութեան արուեստին:

Թօփալեան իրա - խորհրդագրաւորն Բիւզանդ, բանաստեղծական նոր ոճի մը որսորդութեան մտատանջութիւնով, Մարտիրոս «Արեւներուն լիագոր բացած կարծիք խորքի», կ'ըմբոշանէ փարոս աչքերը կոյսերուն...

Արբուէի Զարեհ, մայրիկին մօտ ապաստանելու գացած է, մոռնալու համար իր որդութիւնը: Իր «Վարձու Սեփեակ»ները կը տրամադրէ անտուն եւ որը հողիներու, վաւերացնելով զանոնք իր անլուծելի ստորագրութիւնովը:

Պիլալիւլեան սոխակաձայնն Իրիս, միակ հար այս աղբորակումըն մէջ, իր դայալիկներովը կը թօթուէ, կը ցնցէ թմբած հայ հողիները մաքրելով անոնց վրայէն շարքիներուն ժանդը:

Ո՛վ դուք գաւառի Հայեր, մանաւանդ ո՛վ Մարտիրոսիներ, արդեօք կը զգա՞ք ձեր բախտաւորութիւնը...

Կ. ՊԵՏՈՒՇ

որ այդ ոտանավորները մեռան իբրև շարքային զինուորներ պատերազմի դաշտում, կատարելով անշուշտ իրենց ազնիւ դերը: Մենք այդ շրջանում ստեղծեցինք շատ եւ շատ մնայուն բանաստեղծական երկեր: Բայց շատ բան այսօր արդէն հնացել է եւ կորցրել իր արժէքը: Եւ դժուար է սնդել, թէ այսօր իրենց արժէքը կորցրած գրական բոլոր երկերը երէկ անհրաժեշտ էին: Կան գործեր, որոնք իրենց ծնած իսկ վայրկեանից դատապարտուած են մահուան:

Ես կարող եմ օրինակներ բերել մեր շատ անուանի բանաստեղծներից, բայց չեմ ցանկանում շօշափել իրենց ոճի մէջ վաղուց կարծրացած «կազմիները»: Ես գերադասում եմ խօսել մեր երիտասարդ գրականութեան մասին, որով պիտի ապահովուի մեր ապագան: Ես կ'ուզեմայի, որ Յովհաննէս Ծիրազը զարգաբեր մտածելուց, թէ ով ումից է առաջ եւ ումից ետ, այլ մտածէր այն մասին, թէ ինչպէս ընդթիւնից այնքան առատօրէն իրեն տրուած քանքարը շնչաւորէր ժամանակի առաջաւոր փելիսոփայութեամբ, զգեստաւորէր ժամանակակից կենցաղի արտայայտչական միջոցներով: Կլասիկ բանաստեղծութեան կրկնութիւնը, թէկուզ եւ յաջող կրկնութիւնը, չի նշանակում զարգացնել այդ բանաստեղծութեան արանդու-թիւնները: Զարգացնել նշանակում է ստեղծել նոր որակ: Չի կարելի կրկնել նաեւ ինքն իրեն: Մի ոտանավորի մէջ Մասիսը նմանցուած է Տիգրան Մեծի սարաւարտին: Գեղեցիկ է: Բայց յաջորդ ոտանավորի մէջ Մասիսն արդէն դանդում է Հայկ Նահապետ: Ինչպէս մարդոց, նոյնպէս եւ բանաստեղծական պատկերից պահանջում է ժուժկարութիւն, որ զարգացում է թէ՛ մէկին եւ թէ՛ միւսին: Սակայն, Ծիրազը վերջերս գնում է դէպի հասունացում: Հէնց վերելք ակնարկուած շարքի մէջ երեւում են հասունացման նշանները: Մի այլ մասկարգակի վրայ, բայց մօտաւորապէս նոյն վիճակն է ներկայացնում Ա. Գրաչին:

Արտայայտչական նոր ձեւեր գտնելու մեծ ճիւղեր չեն թախում նաեւ մեր միւս տաղանդաւոր երիտասարդները՝ Գ. Էմիրը, Մ. Մարգարեանը, Հր. Յովհաննիսեանը, Ս. Կապուտիկեանը: Էմիրը հանդէս է բերում ինքնատիպ մտայնացումներ եւ բնութեան թարմ նկարագրութիւններ: Նրա ծիւծանի պատկերը կարող էր պատիւ բերել ամէն մի իսկական բանաստեղծի: Բայց նա դեռ չունի սահուն երաժշտականութիւն, անցնող յանգերով ակամպ է ծակում եւ յաճախ շինում վիճակներ ստեղծում: Հր. Յովհաննիսեանը թարմ է եւ անմիջա-

Երազիս մէջ կարտավառ համբուրեցի հողն հայ-րենի, Խնդուքիւնից արտասուեցի, արցունք դառաւ ցօլն հայրենի, Մասիսն հեռուից նայում էր ինձ, Ալագագն էր սալներին տակ, Ծաղիկների թերթերի հետ սիրտս լուաց հողն հայրենի:

Երբ շուրթներս գետնին կպան, Թուաց քե՛ իմ Հայաստանի բոլոր արերն եմ համբուրում, Մեր գիւղացուն նախնիների շիրմաքարերն եմ համբուրում, Նուիրիկան նոր յոյգերով սիրտս լցրեց հողն հայրենի...

Օտար մեղրից հազար խնկալ քաղցր է մեր մի քուփը ախի, Հայրենիքի կարի ջուրը մի ովկիանի հետ չեմ փոխի, Սրբութիւն եմ բնկաները երգիքներից ելնող ծխի, Թող յար յաւերժ կանաչ վնայ, նուիրական հողն հայրենի:

Թագմիկ ընկեր, գիտեմ դու էլ մտածում ես նոյնն, ինչ որ ես, Գո սրտում էլ կլայ սէր, կարօտ, վարար յոյգեր, ինչպէս ջրվեժ, Զարմեմք արտին մեր ոտիս այս արտաւոր մարտերում քե՛ժ, Որ յազրական վերադառնամք ու համբուրեմք հողն հայրենի:

ԱՐՇԱԼՈՅՍ ՍԱՐՈՅԵԱՆ

կան իր յուզաշխարհով, բայց անհարթ իր արտայայտչական ձեւերի մէջ եւ սուրբ է տալիս շարքային: Միւս կապուտիկեանը գրում է բանաստեղծական գոյներով եւ միշտ ժամանակին վերջացնում է ոտանավորը: Բայց նա քիչ է մտածում տողի հնչեղանային կառուցումների վրայ եւ միւսների նման յաճախ սահմանափակում է դասական բանաստեղծութեան արտայայտչական միջոցների կրկնութեամբ: Նոյնը կարելի է ասել Մ. Մարգարեանի մասին: Մենք բոլորս փողոց ենք դուրս գալիս մեր հայրերի հնամաշ վորտը հագած: Եթէ դա ծիծաղելի է ուղղակի իմաստով, ապա որքան ծիծաղելի է բանաստեղծութեան մէջ:

Մենք նոր չէ որ խօսում ենք այս բոլորի մասին: Անցեալ տարի «Մովսէսական Գրականութիւն» թերթում լոյս տեսաւ ընկեր Տիգրան Հախումեանի խիստ շահեկան յօդուածը մեր բանաստեղծութեան մէջ տիրող տրափարեցողի ձեւերի մասին: Ընկեր Գ. Արթուր իր մի քանի էությունների մէջ մասնանշել է նոյնը: Բայց մեր բանաստեղծները վերաւորուեցան ընկեր Հախումեանից եւ հաճոյքով չընդունեցին ընկեր Արթուրի գիտնորութիւնները:

Ապա գրական խոստանքի մասին: Հասկնալի է, որ երիտասարդ գրողները քաջալերելու նպատակով պէտք է հրատարակել նրանց առաջին, թէկուզ եւ աակաւին կանաչփորձերը: Բայց մի պայմանով, եթէ այդ փորձերը մէջ նմարուած է գրական շնորհք: Սակայն հեղինակն անցրել է 10—15 տարուան գրական առաջին ներկայացնում է սխալներով լի ու գրական ո եւ է արժէքից զուրկ մի աշխատութիւն, ինչն՝ կարելի է արդարացնել նրա հրատարակութեան փաստը: Բացատրել անշուշտ կարելի է մարդկային զանազան թուլութիւններով: Մենք անցեալ տարի խօսեցինք Ա. Ծալրանի գրքի մասին եւ բոլորս, բացի հեղինակից, եկանք այն եզրակացութեան, որ այդպիսի գրքերի հրատարակութեանը վարկաբեկում է մեր գրականութիւնը ընթերցողների աչքին եւ նուազեցնում հեղինակների պատասխանատուութեան զգացմունքը: Թոււմ է թէ գրանից պիտի եզրակացութիւն հանէին խմբագիրներն ու հրատարակիչները: Բայց այս տարի մենք դարձեալ հանդիպում ենք գրքերի, որոնց լոյս տեսնելն անուշաղն զարմանք է պատճառում: Վերջինք, օրինակի համար, Բ. Կարպետեանի «Ռազմի քնարը»: Այնտեղ կան ապրուած տողեր եւ իսկական ցասում թշնամու դէմ: Բայց ո՞րքան անճարակութիւն եւ տրափարեցող: Կարիք չկար հրատարակելու այսպիսի ոտանավոր, թէ՛ պէտեւ նրա վերնագրին է «Հերոսի սիրտը»:

Մարտի քե՛ժ պահին ընկաւ գնդակով Հերոսը հեռու դաշտում ծաղկազարդ: Այդ արժիւնները եկան երգելով Այցի դիակին հերոսի անպարտ: Նայեց արծիւը հայեացքով խորին Մարտիկի վերքին՝ վարդի պէս բացում Յետոյ գովերգից խիղի մարտիկին Մեծ հայրենական մարտերում ընկած:

Արժիւր գիշարից թռչուն է եւ հողիւ թէ բարի նպատակով մօտենայ որ եւ է դիակի: Ժողովածուն լինէ է այսպիսի արժուային եւ սուրմամուռն: Թիւրիմացութիւններով. զբանք հեղինակի համար բանաստեղծի համբաւ չեն ստեղծի եւ միայն անախորժ խօսակցութիւնների առիթ կը տան:

ՆԱՅԻՐԻ ԶԱՐԵԱՆ

Ճրանագիրները, դանդաղաբեր թէ դիտմամբ գրող- գրուածներն կը սերմանեն, որչափ իրենց զօրքը մնայ: Լիբանանի խորհրդարանին չորեքշաբթի օրուան նիստին մէջ բուն վիճարարութիւն մը տեղի ունեցաւ երկու Տիւրքի ներկայացուցիչներու: Էմիր Մէճիտ Ալանի եւ Բէճմալ Կանալլատի միջև: Վերջինը հանրապետութիւն մը ներկայացուց նա - խազա՛ Պաշտա կը խորհի, խնդրելով միջամտել, վերջ տալու համար սնտեսական տաղանային: Եւ ահա փոթորիկ մը պայթեցաւ: Էմիր Մէճիտ սպառնաց բնութիւն բանեցնել հանրապետութիւնը ստորագրողներուն դէմ, իսկ Պ. Կանալլատ պա - տասխանեց նախատինքներ տեղադրելու մերժեց ներդրութիւն խնդրել: Հարկ եղաւ ոստիկան կան - չել եւ դուրս հանել Կանալլատը, որ սպառնաց վե - րադառնալ ատրճանակով: «Ներս պիտի մտնեմ զի - նու զօրութեամբ»: Կը վախցուի որ այս երկու ըն - տանիքները դէմքի դիմեն անմիջապէս: Ամէն զգու - շութիւն ձեռք անուսած է ներքին նախարարին կողմէ: Զինուոր եւ ոստիկան զրկուած են Կանալլա - տի շրջանը:

Եզիպտական թերթի մը թղթակիցը կը գրէ Պէյրութէն. — «Պատակաւոր սերմերը նախապէս ցանկցին օտարականներ: Օտար դորձակներ կը դրուեն կիրքերը, որպէսզի երբ խոսովութիւն ծա - դի, դուռները բացուին միջամտելու համար Լի - բանանի ներքին դորձերուն մէջ, փոքրամասնու - թիւնները պաշտպանելու պատրուակով: Կացու - թիւնը հետզհետէ կը ծանրանայ »:

Արարական իրարումները

Մայիս 10ին նոր խոսովութիւններ ծագեցան Գահիրէի մէջ: Ոստիկանութիւնը կրակ բացաւ 200 իսլամներու վրայ եւ 20 հոգի վիրաւորուեցան: Ընդհարումը տեղի ունեցաւ 7—8000 իսլամներու հետ, երբ անոնք դուրս կ'ելլէին էլ Ազհարի մզկի - թէն: Երկու հարիւր հոգի քարեր տեղացին մզկի - թին տանիքէն: Միեւնոյն ժամուսն դորձադուլ հրո - չակուած էր ուսանողներու, բանուորներու եւ զա - նազան կազմակերպութեանց կողմէ, բողոքելու համար Պաղեստինի անգլեւամերիկեան յանձնա - ժողովին տեղեկագրին դէմ: Երկու հարիւր հոգի ձեռքակալուեցան: Քարերու տեղատարափը այն - քան սաստիկ էր որ ոստիկանութիւնը հարկա - դրուեցաւ երեք անգամ նահանջել մզկիթին առջե - կէն: Բոլոր խանութիւններ փակուեցան եւ երթեւեկը դադարեցաւ:

Ուրուսները կը շարունակուին բոլոր արա - բական երկիրներուն մէջ: Իրաքի մէջ ալ ընդհ - գործադուլ յայտարարուեցաւ ուրբաթ օր: Երու - սազէմի Արաբական Կոմիտէն հազորեց Մ. Նա - հանգներու նախագահին, Անգլիոյ վարչապետին, Սպարապետ Սթալինի եւ Պ. Մոլոթովի թէ Պա - ղեստինի անգլեւամերիկեան յանձնաժողովին տե - ղեկագրով, «աշխարհի Հրեաները պիտի արշաւեն մեր երկիրը, անգլիական եւ ամերիկեան զինեալ ուժերու պաշտպանութեան տակ»: Կոմիտէն կը սպառնայ դիմադրել անգլեւամերիկեան յանձնա - ժողովին առաջարկներուն, «մինչեւ վերջին մար - դը» եւ արգարութիւն կը պահանջէ: Միեւնոյն պ - տան հեռագիրներ ուղարկէ Փարիզ, Չորսերու ժո - ղովին, պահանջելով ջնջել բրիտանական հոգա - տարութիւնը եւ արաբական անկախութիւնը հոչա - կել Պաղեստինի մէջ:

Պէյրութի մէջ լարուած սուրբեր նետուեցան երկու խանութիւններու դէմ, վիրաւորելով չորս հո - գի եւ մեծ վնասներ պատճառելով:

Երուսաղէմէն կը հեռագրեն թէ Պէյրութի խորհրդային հիւպատոսը, Ակրանով հոն հասաւ Մայիս 10ին եւ Հայֆա եւս պիտի այցելէ, արաբ համայնավարներու հրաւերով: Այս վերջինները Խ. Միլեթեան միջամտութիւնը խնդրած էին Պա - ղեստինի համար: Ետֆայի մէջ մեծ հանդիսաւորութեամբ օտուեցաւ արաբ առաջնորդ ձէմիլ Հիւսէյնի վերադարձը՝ 9 տարուան արտոյժ վեր - ջը: Ոստիկանութիւնը խզած էր Ետֆայի եւ Թէլ - Ավիլի հազորակցութիւնները, զգուշութեան հա - մար: ձէմիլ Հիւսէյնի ճառ մը խօսելով 8000 Ա - բաբներու առջեւ, յանձնարարեց ամէն առեւտուր զարդեցնել Հրեաներուն հետ: «Ո՛վ որ իր հոգը Հրեաներուն կը ծախէ, պիտի մեռնի »:

ԿՈՒՂՈՒՄԻ մարտը կարի աշխատաւորուհիներ իրենց տանը մէջ աշխատելու համար: Լաւ վճա - րում: Դիմել Maison Alice, 24 rue de Ponthieu, Pa - ris (8): Tél. Bal. 48-86:

ԿՈՒՂՈՒՄԻ սպասուհի մը 3 հոգինոց ըտանիքի մը համար: Դիմել «Յառաջ»:

MANUFACTURE de VÊTEMENTS
Hommes et Jeunes - Gens
Ets. BOYADJIAN
6, RUE MULET, LYON

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԻՏԱԼԻՈՅ Վերջոր էմանուէլ Թագաւորին հրատարակէն անմիջապէս վերջը, դա՛ ըստ ըստ - ցաւ դահաճառանգը, Ումպէրթօ Բ. անունով: Պի - տի դահաճալէ մինչեւ յունիս 2, երբ երկրին վար - չածեւը պիտի ձգուի ժողովրդային ըուէարկու - թեամբ: Նախարարական խորհուրդին մէջ, հա - մայնավարները հակառակեցան Ումպէրթոյի դա - հակալութեան, բայց ի վերջոյ հաւանեցան, պայ - մանաւ որ Թագաւորին ստորագրութեան աւանդա - կան բանաձեւէն ջնջուին հետեւեալ խօսքերը, — «Շնորհին Աստուծոյ եւ կամօքն ազգին»: Թագա - տոր իր երզումը պիտի կատարէ «Աստուծոյ եւ ազգին առջեւ»: Թագաւորը յանձն առած է համա - կերպիլ հանրաքուէի վճիռին եւ յարգել իր հօրը ստորագրած յանձնադրութիւնը: Թագաւորին հրա - ժարումէն անմիջապէս վերջը լուր տարածուեցաւ թէ միապետական դաւ մը սարքուած է: Այս առ - թիւ ներքին նախարարը յայտարարեց թէ «այլեւս թոյլ պիտի չտան նոր արշաւ մը Հոռմի վրայ»: Թեր ու դէմ ցոյցեր կատարուեցան Հոռմի, Միլա - նի եւ ուրիշ մեծ քաղաքներու մէջ: Հրատարեալ Թագաւորին համար քանի մը պալատներ արամա - դրուած են Աղեքսանդրիոյ եւ Գահիրէի մէջ:

937.000.000 ՍԹԵՐԼԻՆԻ բրիտանական փոխա - ռութիւնը վաւերացուեցաւ Մ. Նահանգներու ձե - րակոյտին կողմէ, չորս շաբթուան վիճարանու - թիւններէ վերջ, 12 բուէի մեծամասնութեամբ: Փոխառութիւնը վճարելի է 50 տարիէն: Այժմ կը մնայ երեսի. ժողովին վաւերացումը:

ՀԵՂՈՒՄՍՏԱՆԻ ԱՆԿԱՆՈՒԹԵԱՆ խնդրը լաւ ճամբու մէջ է: Երեք կողմերն ալ—անգլիացի, հըն - դիկ եւ իսլամ— լաւատես կ'երեւան խորհրդակ - ցութեանց ընթացքէն: Կանտի յանձն առաւ լուծել հնդիկ բանակը: Փոխարքայութեան անգլ. սպա - բայետը հրատարեցաւ:

ԹԷՂԻՆԻՆ կը հեռագրեն թէ կեզր. կառա - վարութիւնը համաձայնած է Ատրպայտականի հետ, կարգ մը կէտերու մասին: Ատրպայտականի բանակը պիտի լուծուի իրանեան բանակին մէջ եւ սպաները պիտի պահեն իրենց աստիճանները:

5000 ՍԱԿԱՇԱՐԺԵՆԻ (Թարսի) կը բանին Փա - րիզի մէջ եւ նորեր պիտի աւելնան մինչեւ մէկ ա - միս: Երէկուց է վեր ազատ է անոնց երթեւեկը, բոլոր սահմանափակումները ջնջուած ըլլալով:

ԼԵՀԱՍՏԱՆԻ արամադրուած 90 միլիոն տո - լարի վարկը յետաձգուեցաւ Մ. Նահանգներուն կողմէ, որ կ'առարկէ թէ յեճական կառավարու - թիւնը չէ յարգած իր յանձնառութիւնները, ազատ ընտրութեանց մասին:

ԶԻՆՈՒՈՐԱԳՐՈՒԹԵԱՆ քննութիւնները (Բժշ - կական են.) աւելի պարզ վիճակի մը վերածուե - ցան, պատերազմական նախարարին կարգադրու - թեամբ:

ՅԱՂՔԱՆԱԿԻ տօնին առթիւ, դաշնակից զին - ուորներն ալ պիտի մասնակցին այսօրուան զօրա - հանդիսին (կիրակի):

ՇԱՊԻԿ—ՎԱՍՏԻՔ պիտի ծախուի մայիս 18 - էն սկսեալ, մտոչելի զինեղով.— այր մարդու շա - պիկը՝ 185—268 Քրանք, կիներունը՝ 90—136, այրերու կարճ շապիկները՝ 105—137, կիներու «քոնպինկըն»ը՝ 110—166 են.:

ՕՏԱՐ ԱՐԺԵԹՈՒՂԹԵՐԸ պիտի զբաւուին (ուէրիդիսոն) մինչեւ 15 օր, նպաստաւոր պայ - մաններով:

ՆԻՐԸՆՊԵՐԿԻ ԱՏԵԱՆԻՆ ԱՌՁԵՒ, ծովակալ Տէօնից բարկանալով անգլիացի դատախազին հար - ցապնդումներէն, պոռաց անոր երեսին, եւ Կէօ - բինկի շնորհաւորութեան արժանացաւ: Անգլ. դա - տախազը խորապէս վրդովուած, պատասխանեց. — «Նս կ'ամբաստանեմ ձեզ թէ ձեր խօսքերով նպաստած էք աւելի քան հինգ միլիոն Հրեաներու ջարդին»:

ՏԷՐ ԵՒ ՏԻԿԻՆ ԱՐԱՄ ՊԵՏԻԿԵԱՆ ուրախու - թեամբ կը ծանուցանեն ծնունդը իրենց անդրանիկ թոռնիկին՝ Արպիի: 29 Ապրիլ, 1946, Մարտէյլ

ՅԵՏԱԶԳՈՒԱԾ է Տէսինի Հ. Յ. Գ. «Նոր Սե - բունդ»ի ներկայացումը՝ «Սասունը Այրուած է» սուգի պատճառով:

ԿՈՎԿԱՍՏԱՆԻ ԵՐԳԱՀԱՆԴԻՍ

Յունիս 9, կիրակի ժամը 20.30ին Salle d'Iéna, 10 Ave. d'Iéna (métro Iéna, նախաձեռնութեամբ եւ հովանաւորութեամբ Տէր եւ Տիկին Մարմարեանի, Պ. Պ. Թոսուլեանի եւ Կառուկեանի:

Առաջին անգամ ըլլալով փարիզահայ հասարա - կութեան կը ներկայանայ Ազնաւորեան ընտանի - քը իր զաւակներով երգելու համար կովկասեան եւ Ֆրանսերէն երգեր: Երգախառն պատկերներ Սա - շուք Նովայէն, Անուշէն, Սօս Վարդիթիւրէն, Ա - շուք ձիւսեան, Պերճ Պոշեանէն, Իսահակեանէն, Թումանեանէն, Ռօշ եւ Ազնաւոր իրենց յօրինած երգերով: Երաժշտութիւնը կը ղեկավարէ Պ. Արա Պարթեւեանը:

Տոմսերը Ազնաւորի մօտ, 22 rue Navarin, Pa - ris (9):

Le Gérant: H. AGONEYAN
Imprimerie DER AGOPIAN, 17 Rue Damesme - 13

ՅՈՒՇԱՏԵՏԻ

Հ. Յ. Գ. ՆՈՐ ՍԵՐՈՒՆԻ Բաֆֆի խումբին դասախօսութիւնը՝ այս երկուշաբթի ժամը 8.30 - ին, Studio Caumartin, 19a rue Caumartin: Կը խօսի Պ. Ա. Չօպանեան, Անգլիոյ Դպրոցեանց մասին:

ՄԷՆ ՇԱՄՈՆ.— Մայիս 13ին՝ Բշ. իրիկուն ժա - մը 20ին Փր. ընկերվարականներու սրահը: Նիւթ՝ Խաչատուր Արովեան եւ Վերք Հայաստանի: Պի - տի խօսի Պ. ՀՐ. ԲԱՆՈՒԵԱՆ:

Հ. Յ. Գ. ՏԷՍԻՆԻ կոմիտէն ընկ. Վ. Տէմիր - ճեանի մահուան առթիւ փոխան ծաղկեպսակի 1775 Քրանք կը նուիրէ Վեթերաններու Փոնտին: Ստանալ «Յառաջ»էն: Նախապէս ալ նոյն մարմինը 3800 Քրանք նուիրած էր Վեթ. Փոնտին, ընկեր Ա. Գիւլխանեանի մահուան առթիւ:

Վ. ԱԼԹՈՒՆԵԱՆ կը ներկայացնէ Մեսրոպ Տէր Մինասեանի՝

Ճառանկորդը

Տրամ 5 արար, հայ ընտանեկան կեանքէ Շարաթ 18 Մայիս ժամը 9ին, Շիմիթ Թատրոնը, 22 rue St. Dominique, մեթրօ Invalides: Կը մասնակ - ցին Տիկին Բ. Դաւիթեան, Տիկին Ազնաւորեան, Պ. Պ. Մ. Մարտոսեան, Ն. Մարգարեան, Գ. Տէր - վիչեան, Տիգրան Պողոստ, Պ. Բիւզանդ, Կ. Պետ - րոսեան, Տ. Աղալանեան եւ Գէորգ Վարդանեան (կոփամարտիկ):

Տոմսերու համար դիմել ճաշարան Հ. Սասու - նի 31 rue d'Alexandrie - Paris:

ՅՐ. ԿԱՊՈՅՏ ԽԱԶԻ Փարիզի մասնաճիւղի պա - րահանդէսը Յունիս 8ին, շարաթ գիշեր: Նկատի ունենալ այդ թուականը:

ՄԱՐՍԷՅԻ, ՊՈՄՈՆ.— Թատերական ներկա - յացում Հ. Յ. Գ. Նոր Սերունդի «Բրիտափոր» խումբի կողմէ, Մայիս 13ին, երկուշաբթի իրի - կուն ժամը 8.30ին, սինէմա Փլորէալի մէջ: Կը ներ - կայացուի ՉԱՐՇԸԼԸ ԱՐԹԻՆ ԱՂԱ:

Կիրակի
12, Մայիս
1946
Յերեկոյք
ժամը 3ին



«Շիմի»ի
Թատրաբահը
28, ուի
Սէն-Տոմիիֆ
(ՄԵՐ. Էնկալիս)

ԲԱԳՐԱՏՈՒՆԻ
ԿԸ ՆԵՐԿԱՅԱՅՆԵՆՆԻ ՈՒ ԿԸ ԽԱՂԱՅ
ՀՐԱԶ ՏԱՐՕՆԵԱՆԻ

ՀԱՅՐԵՆԻ ՔԷՆ ՀԵՌՈՒ

ԹԱՏՐԵՐԳՈՒԹԻՆԸ, 4 ԱՐԱՐ, 5 ՊԱՏԿԵՐՈՎ
Տոմսերն ապահովել սովորական վայրերէն
Թատրի կիշէն ու դռները կը փակուին ժամը 3ին:

ՃԱՇԱՐԱՆ ԻՏԷԱԼ (ԱՐԱՄ)
29 Rue Paganini, 29
N I C E

Սկսած է յատուկ խոհարարի մը միջոցով խնամով պատրաստել Արեւելեան համեղ կերակուրներ
ԱՆԳԱՄ ՄԸ ԱՅՅԵԼԵՏԷԲ

AMERICAN LLOYD

Շագնաւային ընկերութեան գրասենակներուն
(PARIS, 7 RUE AUBER)
MARSEILLE, 48 RUE DE LA REPUBLIQUE

Շագնաւով, օգնաւով եւ շագնաւով ցամաք - դուրեան տոմսեր Ամերիկայի եւ բոլոր երկիր - ներու համար: Ընդհանրապէս ամէն կար - գի փոխադրութեանց վերաբերեալ գործողութիւններ:
Դիմել Պ. ԺԱՆ - ԵՂԻՇԷ ԱՐՈՒՄԱՆԵԱՆԻ
Վերոգրեալ հասցեով

MEUBLES MODERNES

60 Bd. DE LA BLANCARDE, MARSEILLE

Բացուած է Վ. Քիլիֆիլեանի կահ - կարա - սիններու մեծ վաճառատունը: Թիստ մատ - չելի դիներով կը ծախուին, նկատենեալի, ճաշարանի, խոհանոցի, հիւրանոցի ար - ղեկական ոճով բոլոր տեսակի կարասիներ: Կը ծախուին նաեւ աթոռներ, բաղձոցներ, թիկնաթոռներ, կաշիք եւ թաւիչէ:

ETAB. Z A R E H
ԿՕՇԻԿԻ վերաբերեալ ամէն տեսակ պիտոյք,
ՄՈՐԹ ԵՒ ԿՕՇԻ, 348 rue des Pyrenées, Paris (20):
Հեռ. Men. 69-86:

Մեր ԽՕՍԻԸ

ՑԵՍԱԿԷՏՆԵՐ

Եթէ Մայիս 5ին մերժուեցաւ նոր Սահմանադրութիւնը, աւելի քան մէկ միլիոն քուէներու մեծամասնութեամբ, այդ չի նշանակեր թէ վերջնապէս պիտի թաղուի: Ամէնէն պահպանողական հոսանքն անդամ միտքէն չանցնելու պիտի թաղուի:

Աշխատանք մը կատարուած է արդէն, մեծապէս դիմադրող: Բայց լուրջ դիտողութիւններ կան, շատ մը յօդուածներու դէմ: Ուրեմն, ընտրական պայքարը կը մղուի տեսակէտներու տարբերութեան վրայ:

Այնքան պիտի փորձեն ջնջել կամ բարեփոխել վիճակը կէտերը, անշուշտ եթէ մեծամասնութիւն չապահովուի: Զարեքը վճռած են անփոփոխ պահել ուրիշներուն համար վիճակը, բայց իրենց համար հիմնական յօդուածներ, միջին ճամբայ մը գտնելու երկրորդական կէտերու մասին:

Գլխաւոր հոսանքները ամէն օր կը յիշեցնեն իրենց տեսակէտները, աւելի կամ նուազ պայծառութեամբ:

Այսպէս, ընկերվարականները վճռած են տեղի չտալ հետեւեալ կէտերուն մէջ. —

1. Աշխարհակառուիւն պետութեան եւ կըրքութեան:

Ժողովրդականները (M. R. P.), արմատականները եւ ուրիշ հոսանքներ փորձեցին Սահմանադրութեան մէջ անցնել «ուսուցման պատուիրան», սակայն ձախողեցան: Ընկերվարականները եւ համայնապարհները դիտել կուտան թէ անհատական դպրոցներն ալ ազատ են, բայց նպատակաւոր չտանան: Ամէն ծնողը կրնայ իր զաւակը զրկել ուղիւ դպրոցը, պայմանաւ որ ծախքերը իրենք հոգան:

2. Գերիշխանութիւն Ազգ. ժողովի:

Ուրիշ խօսքով, միայն մէկ Ազգ. ժողով: Կարելի է ընդլայնել ծրագրուած նոր հաստատութեան ձեւը: Ֆրանսական Միութեան Պորճուրդին եւ Տնտեսական Պորճուրդին կազմը եւ իրաւասութիւնները, բայց երբեք՝ վերահաստատել Ծերակոյտը, որ աւելորդ բեռ մը կը համարուի, եւ խափանարար ազդակ մը: Համայնապարհները եւ Ժողովրդականներն ալ համաձայն են Ծերակոյտի ջնջումին: Բայց, այս վերջինը կ'ուզէ որ անոր տեղը բռնէ Ֆրանսական Միութեան Պորճուրդը, վարչակարգի օրէնսդրական ամէն իրաւունք, եւ ոչ թէ դառնայ պարզ խորհրդատու մարմին մէ: Զարեքը կը մերժեն:

3. Հանրապետութեան նախագահի իրաւասութիւնները:

Ընկերվարականները կ'ուզեն որ նախագահը նախագահէ, բայց չկառավարէ: Անոնք նախապէս աւելորդ կը համարեն այս պաշտօնը, հետեւեալ արմատականութեամբ. — Եթէ նախագահը իրաւասութիւններ չունի, աւելորդ է իր գոյութիւնը, եթէ ունի, կրնայ յաճախ ընդհարել վարչապետին հետ: Միւս երկու հոսանքները մերժած ըլլալով այս տեսակէտը, ընկերվարականներն ալ համակերպեցան սկզբունքին:

Գալով ընտրութեան եղանակին եւ իրաւասութեանց, ընկերվարականները եւ համայնապարհները կը պնդեն որ 1. Նախագահը ընտրուի միայն Ազգ. ժողովէն. — 2. Շատ սահմանափակ իրաւասութիւններ ունենայ: Վարչապետն անդամ Ազգ. ժողովէն պիտի ընտրուի: Այնպէս որ, նախագահը պիտի դառնայ տեսակ մը խորհրդանշան, — պիտի նախագահէ սպ. Հանդիսութեանց, պիտի ստորագրէ եւ վաւերացնէ դաշնագիրները, դեսպաններու պաշտօնը, պիտի ստորագրէ օրէնքներու գործադրութեան հրամանագիրները, պիտի նախագահէ Ազգ. Պաշտպանութեան Գերագոյն Սորհորդին եւ նախարարական Պորճուրդին եւս.:

Զարեքը մասնաւորապէս անհաշտ պիտի մնան տնտեսական եւ ընկերային օրէնքներու մասին:

Արդարեւ, Սահմանադրութեան նախագիծը կը պարունակէ շարք մը արդիական արմատադրութիւններ, որոնք սահմանուած են պաշտպանութեան աշխատակարար ծրագրութեանց իրաւունքները, առանց սեռի, ցեղի, դասանանքի եւ ուրիշ խտրութեան:

Պայքարը սաստիկ ըլլալով հանդերձ, համայնապարհներն անգամ կը խոստովանին թէ՛ «միայն մէկ կուսակցութեան կամ քանի մը պետական մարզոց գործը չէ սպառնալիք Ֆրանսայի վերելքը, այլ միլիոնաւոր Ֆրանսացիներու եւ Ֆրանսուհիներու, ամբողջ Ազգին գործը»:

Բարեգործականի 40ամեակը

Բարեգործականի հիմնադրութեա Սրբ. տարեգործը տօնուեցաւ շարժք օր իւր թէսիս պանդոկին մէջ, կողիկ բազմութեամբ: Իժիշկ Պ. Քոլոյեան տկար ըլլալով, փոխանորդարար նախադահեց Պ. Վ. Ֆրէնկեան, որ շահեկան տեղեկութիւններ հաղորդեց Մ. Թեան ծնունդին ու կատարած աշխատանքներուն մասին: Բարեգործականը հիմնուած է Գահիրէի մէջ 1906ի Զատիկին՝ շնորհիւ ողբացեալ Պօղոս Երեւանցիի եւ իր անմիջական գործակիցներուն ջանքերուն: Միութեան նպատակն էր դարձանել միջ ժողովուրդին ցաւերը հայրենիքէն ներս կամ դուրս: Հիմնադիրները ծրագրած էին ոչ միայն օգնութեան ձեռք կարկառել հայ որբուկին, աննեղուկ այրիին կամ անտէր զիւզացիին, այլեւ ստարել հայ մանուկներու կրթութեան: Բարեգործականի բեղուն գործունէութեան շրջանը կը բացուի իր հիմնադրութեան առէր մէկ օրէն: Մինչեւ 1914 Միութեան հիմնած էր 40 զիւզական դպրոցներ, որանոց մը Կիլիկիոյ մէջ: 1909ին Կիլիկիոյ ջարդին խլակներուն օգնած է համաձայն իր նիւթական միջոցներուն: Առաջին Մեծ Պատերազմէն վերջ բացուած են Գահիրէի Յակոբեան ակնարտարանը (Երեւան), Պրիւսիոյ Նուպարեան Հիմնարկութիւնը, Փարիզի Հայ Ուսանողական Տունը, Նուպարեան Մատենադարանը: 1920էն մինչեւ հիմա Բարեգործականը հայ ժողովուրդին նպատի ձեռով յատկացուցած է ընդամէնը 918.000 սթերլին, որուն 335.000ը որբախնամ հաստատութեանց, 215.000ը Ս. Հայաստանին, 200.000ը արտասահմանի դպրոցներուն: Պատերազմի ընթացքին Միութեան Ամերիկայի կեդրոնը կրցած է Սուրբիոյ եւ Լիբանանի դաշնութիւններուն յատկացնել 115.500 տոլար, Ս. Հայաստանին 53.000 սթերլին: Առաջին համաշխարհային հանգանակութեան դուժարն եղած է 360.000 տոլար, իսկ 1945—46ի հանգանակութեան դուժար պիտի ըլլայ կէս միլիոն:

Յարգանքի խօսք արտասանեց Պ. Արշակ Զօպանեան որ անուշաբայ ծանրացաւ ուսկապար Ազատական կուսակցութեան եւ Բարեգործականի գործակցութեան վրայ: Հայ կաթողիկէ եկեղեցիին կողմէ զնահատական ճառ մը կարդացուեցաւ յանուն Արճ. Պահապանեան արքեպիսկոպոսի: Պատեան նաեւ Հայ. Առաքելական եկեղեցիի, Աւետարանականներու, Ֆրանսահայ Ազգ. Միութեան եւ Ներգաղթի Կեդր. Կոմիտէի ներկայացուցիչները, իւրաքանչիւրը վեր հանելով Նուպար փաշայի եւ իր հիմնած Բարեգործականին կատարած դերը մեր ժողովուրդին մշակութային գործին մէջ: Ենչտուեցաւ մասնաւորաբար որ մեր ժողովուրդը պէտք չէ միայն իր ուժերը կեդրոնացնէ որբերու այրիներ խնամելու անհրաժեշտ աշխատանքին, այլ պէտք է մտածէ պետականօրէն եւ ուժ տայ մայր հայրենիքին, կազմակերպէ ներգաղթը — «նոր օրերու հրաշքը» — որովհետեւ այսօրուան Հայաստանէն դուրս փրկութեան որ եւ է յոյս չենք կըրնար ունենալ:

Հ. Յ. Գ. Արեւմտեան Եւրոպայի Կեդր. Կոմիտէն ալ շնորհաւորական զիր մը ուղղած էր, այս 40ամեակին առթիւ:

Գեղարուեստական բաժնին մէջ, Առաքելեան Բառեակը բացումը կատարեց Հայաստանի քայլերով ու յետոյ երգեց ժողովրդական երգեր Երեւանէն՝ մեծ խանդավառութիւն ստեղծելով: Օր. Քենտրիքի դաշնակի վրայ նուազեց Սպենդիարեանի «Էնդէլի» եւ կտոր մը Տէպիւսիէն: Պ. Ֆիլիպ Աղապարեանի «Ղայթարման» եւ «Էնդէլի» արժանացան ջերմ ծափերու: Արտասանեց Օր. Աճեմեան: Փակման ճառը արտասանեց Պ. Առաքել Զաքերեան:

Վերջին պահուն յայտարարուեցաւ թէ Ամերիկայի մասնաճիւղին կազմակերպած համադրային հանգանակութեան Փարիզը մասնակցած է 300.000 ֆրանքով: Հանգանակութիւնը պիտի շարունակուի: — Երջում քարակից

Լիճի եկեղեցւոյ Ազգ. Միութեան դիւանէն ստացած ենք երկար նամակ մը, որ կը պարզ վարչութեան գործունէութիւնը, բարոյական թէ նիւթական: Արդէն նոր ընտրութիւններու ձեռնարկուած ըլլալով, աւելորդ կը նկատուի հրատարակութիւնը: Վարչութիւնը այս առթիւ կ'ըսէ իր «ընտրութիւն» յետաձգումները կը կրեն պարզապէս տեղական հանգամանք, եւ ոչ թէ ազդուած եւ մղուած են արտաքին թելադրութիւններէ, որոնց երբեք չենք ենթարկուած եւ չենք ալ ենթարկուիր »:

Բայց եւ այնպէս կը վիճին

Մոսկուայի անթելին խօսնակներէն մէկը առջի օր վերլուծելով Փարիզի խորհրդաժողովին աշխատանքները, յորդորեց բոլոր պատուիրակութիւնները «փոխադարձ հասկացողութիւն ցուցնել, սրբապի վերնան միաձայն վճիռներու խոչընդոտները»: Պահակը, տողորուած հաշտարար արամադրութեամբ, դիտել տուաւ թէ «կարծիքի տարբերութիւններ կան, բայց անյաղթելի չեն»: Յետոյ ծանրանալով աւելի շատ համաձայնութեանց քան թէ անհամաձայնութեանց վրայ, յիշեց Ռուսաստանի եւ Պուլկարիոյ սահմանադրութիւններու մասին եղած կարգադրութիւնները: Վերջապէս շեշտեց թէ անհրաժեշտ է «ժողովուրդներու հաւասարութիւնը եւ բարեկամութիւնը, միջազգային յարաբերութեանց մէջ», եւ մեղադրեց թէ անդիւրական կարգ մը շրջանակներ կը փորձեն պատակատու սերմանել Գաշնակիցներուն միջեւ:

Երկրորդ խօսնակ մըն ալ շօշափելով այս խնդիրը, թէեւ նուազ հաշտարար, բայց եւ այնպէս յոյս յայտնեց համաձայնութեան մասին: Իր զըլխաւոր առարկութիւնն այն էր թէ Անդլիա եւ Մ. Նահանգները չեն ուզեր համաձայնութեան երբեք պնդել, այլ կը ջանան իրենց որոշումները պարտադրել միւս պատուիրակութեանց:

Շարժք օրուան նիստին մէջ, Չորսերու ժողովը գլխաւորաբար զբաղեցաւ խտրական հաստատումներու եւ հաշտութեան խորհրդաժողովի խնդիրներով: Երկրորդ հարցին առթիւ, ամերիկեան պատուիրակը յիշելով կարգ մը խնդիրներու լուծումը, ստաջարկեց որոշել հաշտութեան խորհրդաժողովին թուականը: Մոլոթով պնդեց թէ անհրաժեշտ է նախ հիմնական համաձայնութիւն մը կնքել խտրական եւ պալքանեան դաշնակիցներու մասին: Իր կարծիքով, դեռ բաւական յառաջ պոյս չեն: Կը կարծուի թէ Մոլոթով պիտի հաւանի թուական մը որոշել հաշտութեան ժողովին համար, երբ կարգադրուին Թրիէսթի եւ հատուցումներու խնդիրները:

Ամերիկեան պատուիրակութիւնը համաձայն է որ Ս. Միութիւնը հարիւր միլիոն տոլարի հատուցում ստանայ հետեւեալ ձեւով. — 1. Իտալական վայրէջք Ռուսաստանի, Պուլկարիոյ եւ Հունդարիոյ մէջ. — 2. Յաւելուածական մեքենաներ որ կը գործածուին ռազմական արտադրութեանց համար. — 3. Երկու առեւտրական նաւեր որոնք Ամերիկացիներու ձեռքն են եւ 25 միլիոն տոլար կ'արժեն. — 4. Իտալական մարտանաւեր:

Մոլոթով առարկեց թէ մարտանաւերը պատերազմական աւար են, ոչ թէ հատուցում, ինչպէս որոշուեցաւ Փոքտամի մէջ, Գերմանական հատուցումներուն առթիւ: Պ. Պըրնս պատասխանեց թէ Գերմանիան առանձին խնդիր է եւ ընդհանուր համաձայնութիւն գոյացած չէ պատերազմական աւարներու մասին: Երբ յաղթական մը իր աւարը կը վերադարձնէ ուրիշ երկրի մը, այս վերջինը զայն պէտք է նկատէ իբրեւ հատուցում եւ ոչ թէ աւար: Մոլոթով պնդեց իր տեսակէտին վրայ, առաջարկելով հատուցումներն ստանալ ոչ թէ Ամերիկայի առաջարկած եղանակով, այլ ուրիշ աղբիւրներէ են: Ինչպէս կը յիշուի, Ս. Միութիւնը միւսնոյն առան 200 միլիոն տոլար հատուցում կը պահանջէ Յունաստանի եւ Եռակողմաւոր համար, բայց կը յուսացուի թէ կարելի պիտի ըլլայ համաձայնիլ այդ մասին, հողային զիջումներով:

Լոնտոնի թերթերը կը զրեն թէ Եգիպտոս եւ Եթովպիա հակառակ են որ Իտալիոյ Աֆրիկեան գաղթավայրերու ճակատագիրը որոշուի առանց իրենց հաւանութեան: Եգիպտոս անկախութիւն կը պահանջէ այդ գաղթավայրերուն համար, եւ կը մերժէ Անդլիոյ կամ Իտալիոյ խնամակալութեան յանձնել զանոնք: Միւս կողմէ Նէկիւսը Փարիզ կուզայ, ուժ տալով համար Եգիպտոսի տեսակէտին եւ իր պահանջներուն: Նշանակալից պարագայ մը, այս առթիւ. — Աղեքսանդրիոյ դպրատան եւ կեղեցիկին հաստատութեան ի վեր առաջին անգամ ըլլալով, Հայէնները մասնակցեցան դպրատան պատերազմին ընտրութեան:

Թէ՛ԼՐԱՆԿՆ հասած հեռագրի մը համաձայն, նախարար մը ըսեր է թէ բանակցութիւնները ձախողած են եւ Աւարպատականի վարչապետը թաւրիկ կրնայ վերադառնալ որ եւ է առեւն:

ԵՐԻՈՊԱՅԻ ԱՆՕԹՈՒԹԵԱՆ տագնապը մեղմացնելու համար, խուճար մը առաջնակարգ դէմքեր խնդրեցին նախագահ Թրուֆընէն անմիջապէս գործադրել պատերազմի առեւն վայելած լիազօրութիւնները, կրկնապատկելու համար Մ. Նահանգներու ուստեսի արտաձումը: Նոյն օրն իսկ Վիեննայէն կը հեռագրէին թէ պարենաւորումը աւելի զժուարացած ըլլալով, կառավարութիւնը հարկադրուեցաւ օրապահիկը զեղելի 867 գոլի: Վարչապէս հասած հեռագիր մըն ալ կը ծանուցանէր թէ լեհական կառավարութիւնը հրամայած է 20.000 թոն սերմնոց յատկացնել առօրեայ ուտեստի. ինչ որ կը նշանակէ 100.000 թոն պակսեցնել հունձը: Վարչապետի ամերիկեան ներկայացուցիչը կը հեռագրէ թէ պարենաւորման վիճակը «յուսահաստական է» եւ թէ գործադրուելը սկսած են արդէն, հաց ճարելու համար:

ԻՏԱԼԻՈՅ նոր թաղաւորին զահակալութեան առթիւ, 100,000 հանրապետականներ բողոքի ցոյց մը սարքեցին շարաթ օր, մինչ միապետականներն ալ կը ծափահարէին նոր թաղաւորը, ուրիշ հրապարակի մը վրայ: Հանրապետականները փորձեցին պալատ երթալ, բայց ոստիկանութիւնը արգելեց: Եզրայտոսի թաղաւորը Ադեքսանդրիս գնաց, ղեկավարելու համար հրատարակ թաղաւորը, Վիքթոր Էմմանուէլ: Թաղաւորը, որ մեծ դրամագէտ մըն է, ազգին ձգած է հին դրամներու հաւաքածոն, — թերեւս ամենամեծը աշխարհի մէջ: Իր մեկնումէն հազիւ 30 ժամ վերջը Հոտմ կը հասնէր Հայիլի Սելասիէ, Եթովպիոյ կայսրը, անգլ. օդանավով մը: (Մուսոլինի Եթովպիոյ կայսր տիտղոսը տուած էր Վիքթոր Էմմանուէլին):

ԳԵՐՄԱՆԻՈՅ ԱՄԵՐԻԿԵԱՆ շրջանի տարա-գիրները, մօտ 400.000 հոգի, խիստ քննութեան մը պիտի ենթարկուին, երեսան հանելու համար զանազան խարդախութիւններ: Հաւանական է որ հարաւորներ փոխարին դադարակայաններէն, մանաւանդ որ ոճիրներ ալ գործուած են, համաձայն ղեկավարական իշխանութեանց տեղեկագիրներուն: Միեւնոյն աղբիւրին համաձայն, դադարակայաններուն մէջ պահուած են շատ մը մարդիկ որոնք չեն ուզեր աշխատիլ: Անցեալ մարտին 27.000 տարագիրներ իրենց երկիրները դրկուեցան, եւ սակայն նոյն ամսու վերջը 8000 հոգի եւս աւելցած էին: Ապրիլին 11.244 աւելի տարագիրներ կային ներսն ու դուրսը, հակառակ անոր որ 17.809 հոգի իրենց երկիրները դրկուած կամ այլուր տեղաւորուած էին: Այժմ իւրաքանչիւր տարագրի հարցարան մը պիտի արուի, եւ կասկածելիները պիտի փոխուին: Միեւնոյն ատեն պիտի փնտռուին պատմութիւնը ոճիրները եւ օրինադրանքները:

ԱՆԳՂԻՈՅ երեսփ. ժողովին մէջ, երեսփոխան մը դիմել տուաւ թէ քսան տարեկանէն վար Անգլիոյ լուսիններու 40 առ հարիւր յղի էր, իրենց ամուսնութեան օրը: Այս յայտնութիւնը մեծ վրդովում պատճառեց աւանդամով երեսփոխաններուն, եւ սակայն «իմաստը մնում է փաստ»:

150 ԿՐԱՄ ՄԻՍ պիտի բաժնուի այս շարթով, Մայիսի B6 (1004) եւ BC (50 Կ) կարծեսներով, ինչպէս եւ 100 կրամ խոզեղէն, B5 կարծեսով: Յորեն, բանջարեղէն եւ զինի պիտի հասնի Այժերիսէն, ինչպէս հաղորդեց պարենաւորման նախարարը, որ քննական պտոյտ մը կատարած էր այդ երկրին մէջ:

ՊԱՂՏԱՏԷՆ կը հեռագրեն թէ Պաղեստինի Արաբական Կոմիտէին անդամներէն Աճմէտ Ալ Շիւքարի Իրաք հասաւ մասնաւոր պաշտօնով եւ յայտարարեց. — «Կը ջանանք սպանովիլ Ռուսիոյ զազաւական աջակցութիւնը եւ ամէն կարելի նիւթական օգնութիւն, ղեկավարելու համար Պաղեստինի արշաւանքին նոյն «արիւնով, տքնութեամբ, արցունքով եւ բրտնքով» ինչպէս Անգլիան ղեկավարեց 1940ին»: Մենք պիտի սպառնանք թէ մեր երկիրը կը սիրենք աւելի քան խաղաղութիւնը եւ պիտի ղեկավարենք մինչեւ վերջին մարդուն վերջին շունչը»:

ԵՐԳՈՒ ԱՄԵՐԻԿԱՅԻ ղեկավարները սպանուեցան Նիւ Իորքի մէջ, երբ կառքով կ'անցնէին չորս աղջիկներու հետ: Երկուքն ալ անգամ էին ամերիկեան բանակի թերթին խմբագրութեան: Կը կարծուի թէ զաւաղիրները ուզած են վրէժ լուծել, Գերմանուհի կարծելով աղջիկները, որոնց երկուքը անգլիացի էին, կ'ըսեն:

ԱՆԳՂԱՅԻ ԿԸ ՀԵՌՄԱՆՈՒՄ — Իամէթ Ինչօնիլ յայտարարեց Ազգ. Մեծ ժողովին մէջ թէ թուրք կառավարութիւնը խիստ միջոցներ ձեռք պիտի առնէ, արդիւնքը համար կազմութիւնը այն քաղաքական կուսակցութեանց որոնք կը ներշնչուին արտասահմանէ: Վարչապետը մասնաւորաբար քննադատեց նորաձին ժողովրդավար (դեմոկրատ) կուսակցութեան վերջին յայտարարութիւնը որ կամարատանէր կառավարութիւնը թէ չէ յարգած թաղապետական ընտրութիւնները Մայիս 26էն Սեպտեմբերին յետաձգելու իր առաջին խոստումը: Հետեւաբար կուսակցութիւնը որոշած է չմասնակցիլ ընտրութեանց: Ինչօնիլ իր կողմէ կամրատանէ օրուան ընդամադիրները, ղեկավարութիւնը թէ ընտրութեանց չմասնակցելու իրենց որոշումը շատ կը նմանի «օտար երկիրներու» ընդդիմադիր կուսակցութեանց հետապնդած քաղաքականութեան որուն նպատակն է ընդհանրապէս վարկաբեկել օրուան կառավարութիւնը յաջս օտար պետութեանց:

ՄԱՐՍԷՅԻ — Հ. Յ. Դ. Համազասպ խումբը ընկերահամակրական խնջոյք մը սարքած էր Մայիս 1ի առթիւ: Հայրենասիրական երգերէ եւ ընկեր վարդապետանի քանի մը քաջայերական խօսքերէ վերջ, փափաք յայտնեցին որ Այնթ Մարիլիս եւս ունենայ իր Կապոյտ Սաչը: Անմիջապէս կազմուեցաւ խումբը 12 տիկիններէ: Սեղանակիցները տեղին վրայ սկսան հանդանակութիւնը որմէ դուրսը 4200 Փրանք (վարդապետեան 500 Փր., Գալուստեան Բարսեղ 600 եւ Անցորդը 500 են.): Վարչութիւնն ալ ընտրուեցաւ: Յաջողութիւն կը վաղթենք: — Անցորդ

Պուկարիայէն ապրիլին գրուած անհատական նամակ մը կը քաղեմք հետեւեալ տեղեկութիւնները. —

Չեր վիճակը հաղար անգամ նախանձելի է բաղդատելով այս երկրին պարենաւորման դժուարութիւններուն հետ: Հացի բաժնէն 250 կր. քիլօն 28 լեվա, շաքար՝ 600 կրամ եւ մզ ամիսը անգամ մը, քիլօն 100 լեվա, ձէթ՝ երկու ամիսը անգամ մը, լիտրը 150 լեվա, օճառ՝ 125 կրամ վեց ամիսը անգամ մը, քիլօն 80 լեվա, յրինձ՝ ամէն չորս կամ վեց ամիսը անգամ մը, քիլօն 100 լեվա, պանիր՝ 200 կրամ վեց ամիսը անգամ մը: Ծնունդէն ի վեր միս չեն բաժնած: Ոչխարի քիլօն 400 լեվա կ'արժէ: Գետնախնձորին երեսը չտեսանք այս ամէն, իսկ չոքուրային համը մոտոցած են չորս տարիէ ի վեր:

Գալով հազուադէպ — կապուստի, ստիպուած եւս կուրիլ զոյգ մը դուրսը եւ շապիկ — շապկոնկեր մը ճարելու համար: Պոչերու նկարագրութիւնն անգամ ստեղծող կը պատճառէ: Կիներ մեռած են խեղդամահ, կարգի սպասած ատեն: Հազարէն 2000 հոգիները բաղդութիւններ իրար վրայ կը դիպուին ինչպէս ոչխարի հօտեր, չեն կրնար կարգ բռնել: Ոչ մէկ կարգապահութիւն կամ յարգանք կ'ընեն: Ոչ մէկ կարգապահութիւն կամ յարգանք մար, բայց չորս տարիէ ի վեր միայն դուրսը ստացած ենք, ոչ մէկ ճերմակեղէն, ոչ մէկ բրդեղէն կամ մետաքսեղէն: Ապրուստը շատ սուղ է. բանուոր մը կը շահի օրական 200 լեվա, ուրեմն ամիսը 6000, բայց վար գնելով պետական տուրքերը, իրեն կը մնայ միայն 4000 լեվա: Բնակարանի վարձքերն ալ շատ սուղ են, ամէն բան սուղ...

Վասպուրականի հերոսամարտը Մարտիկի մէջ

ՄԱՐՍԷՅԻ — Վասպուրականի Հայր. Միւսթիւնը կը տօնէ ՅԱՂՔԱՅԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻՆ 31րդ տարեկարծը, Մայիս 25ին, շարաթ իրիկուն ժամը 9էն մինչեւ յոյս, Salon Colbertի մէջ, rue Colbert No. 7: Կը նախապահէ Պ. ՌՈՒԲԷՆ ՅՈՎՀԱՆՆԵՆԻԱՆ, կը բանախօսէ հայրենակից ՀԱՅԿ ԶՐՈՒԱՆԳԵԱՆ (Փարիզէն): 25 վանուհիներ րեմին վրայ: Գեղարուեստական ճոխ բաժին:

Պ. ԱՌԱՔԵԼ ԹԱՌՈՒԼԵԱՆ 300 Փրանք կը նուիրէ Փորթ Իթալիի հայկական դպրոցին, փոխան ծագակցութեան, Պ. Արմենակ Յակոբեանի եւ Պ. Եսայիի մօր եւ զոքանչին մահուան առթիւ: Ստանալ «Յառաջ»էն:

ԱՆԻԷՌ — ՊՈՒՍ ՔՈՂՈՄՊԻ մէջ վերակազմուած է Հ. Մ. Բ. Մ. Ի մասնաճիւղը: Վարչութիւնը կոչ կ'ուզէ հին Հ. Մ. Բ. Մ. աշակներուն եւ նոր երիտասարդներուն հաւաքուելու եւ ստուարացնելու խումբը: Արձանագրուելու համար հին թէ նոր ղեկավար քարտուղարին, Պ. Ն. Սինանեանի 178 Bld. Voltaire, Asnieres:

ՎԱՂԱՆՍԱՀԱՅԵՐ, Մայիս 18ին շարաթ իրիկուն ժամը 8.30ին, բոլորք զէպի պետական թատրոնը, տեսնելու համար Տ. Կամալիսկանի «ՎԱՐՔԱՊԵՏԻՆ ԱՂՔԻԿԸ», հինգ արար:

ԿԸ ՓՆՏՈՒՄԻ Համալեան Ալֆօնս (Անգարա-ցի) որ առաջ Նիս կը բնակէր եւ հիմա հաւանօրէն Անթիլ: Գրել օր. Թանաքաղեանի, Union Franco-Armenien, 7 rue de Phalsbourg, Paris (17):

Օ. Փ. ՄԱՐՍԷՅԻ — Երկրորդը չի հրատարակուիլ:

ՀԱՅՎԱԿԱՆ ՄԵԾ ՃԱՇԱՐԱՆ Տնօրէններ ԳԼԵՄԱՆ ԵՒ ԳՕՓԱՐԱՆԵԱՆ 6 rue Maubeuge, Paris (9), Métro Cadet, Notre Dame de Lorette: Tél. TRU. 85-47

Աւաջեակարգ օդի եւ ամէն տեսակ ըմպելիներ, ընտիր աղանդեր, պոլսական կերակուրներ եւ անուշեղէն: Ընդարձակ եւ օդաւէտ սրահ, Ամէն երեկոյ ժամը 7էն սկսեալ Բէմանչիստ ՅՈՎՀԱՆՆԵՍ, ուտի ԱՆՅՕՆՍ եւ երգիչ ԱՐԹԱՔԻ կը նուազեն եւ կ'երգեն հայկական եւ արեւելեան երգեր: Գոց է Զորեքաթի օրերը:

ԱԹԷՆՔԷՆ Գէորգ Մարտումեան կը փնտռէ Գեղամ եւ Օննիկ Ղազարեանները որ պարտեղարմէն առաջ Պուս Գոլումպ կը բնակէին: Տեղեկացնել «Ազատ Օր»ի:

ՀԱՅԵՐՈՒ ԺԱՄԱԴՐԱ ԱՅՐԸ ՃԱՇԱՐԱՆ CHEZ ARTHUR (ՅԱ ՌԻԹԻՆ) 28 Rue Ramponneau, Métro Belleville. Tél. Men. 64-47 Արեւելեան եւ երոպական համեղ կերակուրներ, ըմպելիք եւ նախ ազանդեր: Հիմազարթի օրերը գոց է:

ՄԱՐՍԷՅԻ — Հ. Յ. Դ. Նոր Սեբուսի Շրջ. Վարչութիւնը առաջին տարեկարծին առթիւ դուրսուած վարչական ընդհ. ժողովի անունով կ'ուղչուէ Ֆրանսայի եւ բոլոր երկիրներու Հ. Յ. Դ. Երիտասարդական Միութիւնները, մաղթելով իրենց անվատ կամք եւ յարատեւ աշխատանք:

«ՅԱՌԱՋ» ԿԸ ՆՈՒԻՐԵՆ Ս. Ժերոմէն (Մարսէյ) ընկեր Կոմիտեան մէկ տարեկան «Յառաջ» կը նուիրէ իր հօրաբորջ որդուին՝ Պ. Նշան Վարատեանի, Ամերիկա:

× Տիկին Ա. Յակոբեան վեց ամսուան «Յառաջ» կը նուիրէ Պ. Տրդատ Յակոբեանի, Ամերիկա:

ՏէՍԻՆ — Հ. Յ. Դ. կոմիտէն, «Նոր Սեբուսի» եւ Հայ Կապոյտ Սաչի մասնաճիւղները իրենց խորին ցաւակցութիւնը կը յայտնեն ընկեր եւ ընկերուհի Միկայիլ Սրբուհի Տէմբրեանին ու զաւակներուն, իրենց սիրեցեալ զակին եւ եղբորը ՎԱՂԱՐՇԱԿԻՆ (անգամ «Նոր Սեբուսի») կսկծալի մահուան առթիւ, որ տեղի ունեցաւ Մայիս 1ին, 23 տարեկան ծագիկ հասակին մէջ:

«ՍԱՍՈՒՆՅԻ ԴԱԻԹ» ՎԷՊԸ՝ ՅՐԱՆՍԵՐԷՆՈՎ Աւարտած է ՍԱՍՈՒՆԿԱՅԻՆ Ֆրանսերէն ամբողջական թարգմանութիւնը: Օր առաջ սպազբեւու պատիւն ու շահը՝ օտար հրատարակչական տունի մը յանձնելէ առաջ, կոչ կ'ընեմ ազգակիցներու: Անհատ կամ խմբակցութիւն որ կը փափաքին ստանձնել անոր հրատարակութիւնը, փոթան յայտնել հեղինակին. — D. Tchitouni, 13 rue Caumartin, Paris (9):

ՊԱՆԵՆՅՈ ՔԱՇԱՆԻ Կապոյտ Սաչի մասնաճիւղը շնորհակալութիւն կը յայտնէ Պ. Մ. Պարսամեանի, որ զիւրեք նուիրած էր Պրէվանի հիւանդանոցի հայ հիւանդներուն համար:

ՓԱՐԻՉԻ ՀԱՅ ՏԻԿՆԱՆՅ ՄԻՈՒԹԵԱՆ գեղարուեստական պարանցիկ ցերեկոյթը, 19 Մայիս կիրակի ժամը 14—23, Hôtel Lutétiaի գեղեցիկ սրահներուն մէջ: Տոմսերու վաճառումը սովորական վայրերը:

Այլի Տիկին Կարապետ Տոնէլեան, Տէր եւ Տիկին Լեւոն Տոնէլեան, Տէր եւ Տիկին Արամ Տոնէլեան, Տէր եւ Տիկին Թաղուր Փալանեան եւ զաւակները, Տէր եւ Տիկին Արմենակ Վարդապետեան, Տէր եւ Տիկին Անդրանիկ Տէրտեան եւ զաւակը, Տէր եւ Տիկին Յովհաննէս Տոնէլեան եւ զաւակները, ինչպէս եւ Տոնէլեան, Դանիէլեան, Պատիկեան, Ճորճեան, Եղիսեան, Մանիկեան եւ Հոփանեան ընտանիքները խորին ցաւով կը ծանուցանեն մահը իրենց ամուսնոյն, հօր, եղբոր, հօրեղբոր եւ մօրեղբոր:

ՄԱՀՏԵՍԻ ԿԱՐԱՊԵՏ Տ. Խ. ՏՈՆԷԼԵԱՆԻ որ տեղի ունեցաւ Մայիս 11ին, 85 տարեկան հասակին մէջ, իր բնակարանը, 41 rue Victor Hugo, Bois Colombes:

Յուզարկաւորութիւնը պիտի կատարուի այսօր, երեքշաբթի, 14 Մայիս, ժամը ճիշդ 14.30ին, Փարիզի Հայոց Եկեղեցին, 15 rue Jean Goujon, ուր կէ մարմինը պիտի փոխադրուի Պուս Գոլումպի գերեզմանատունը, ամփոփուելու համար ընտանեկան դամբարանին մէջ:

Կամաւոր մահագ շատագոյններէն կը խնդրուի իբր այդ նկատի ներկայս:

ԵՐԳԱՀԱՆԳԻՍ Օր. Ծովինար Տ. Պետրոսեանի (Լիոնի Օփերայէն), Յունիս 16ին, կիրակի ժամը 14ին, Սալ Կապոյտի մեծ սրահին մէջ, 47 rue de la Boétie, métro Miromesnil):

ՏէՍԻՆ — Գալոսական հանգէս կազմակերպուած Հայ Կրթական Մարմնի կողմէ, կիրակի, 19 Մայիս, կէսօրէ վերջ ժամը 2.30ին, Հայ ժողովան մէջ: Երգ, արտասանութիւն, կենդանի պատկեր, եւ թատերգութիւն մը «ԱՅՆ ԳԻՇԵՐԻՆ», զպարզականներու կողմէ:

ՇԱՎԻԼԻ, Վերոֆլէի, Սեվրի բաժանորդներէն կը խնդրուի իրենց բաժնեկիները վճարել ընկեր ԳՐԻԳՈՐ ԿԻՒԼԵԱՆԻ, Եթէ զիւրութիւն ունին:

ԿՐԸՆՈՊԻ — Հայ Ռազմիկներու մասնաճիւղը իր հիմնադրութեան բացումը կը կատարէ «ԳՈՅՈՒԹԵԱՆ ՊԱՅՔԱՐԸ» ներկայացումով մը, Մայիս 19ին, կիրակի կէս օրէ վերջ ժամը 2.30ին Sacré Coeurի սրահին մէջ:

Le Gérant: H. AGONEYAN Imprimerie DER AGOPIAN, 17 Rue Damesno - 13

ՀԱՐԱՇ

ՕՐԱԹԵՐԹ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN FRANCE

HARATCH

Fondé 1925
R. C. S. 376.286

Directeur-Propriétaire : SCH. MISSAKIAN

17, Rue Damesme — PARIS (13^e)

Tél.: GOB. 15-70 — C. C. P. Paris 1678-63

ՔԱՆՆԵՔԻՆ. — Տար. 750, Ճամ. 400, Յամ. 200 ֆրանկ

Mercredi 14 MAI 1946 Չորեքշաբթի 15 ՄԱՅԻՍ

ԺՉ. ՏԱՐԻ — 18^e Année N° 4700-Նոր շրջանի քի 339

Խմբագիր՝ Ծ. ՄԻՍԱԿԻԱՆ

Գին՝ 3 ֆր

ՄԵՐ ԽՕՍՔԸ

ՃԱՆՉՑՆԵԼ ԵՒ ՃՈՒՍՏՆԵԼ

Ամերիկա հաստատուած գիտնական մը, Պ. Մանաս Սեւակ, կարեւոր խնդիր մը կը յուզէ «Հ. Կոչնակ»-ի մէջ, — գիտական գիրքեր եւ գործիքներ ճարել Հայաստանի համալսարանին (23 Մարտ) :

Անշուշտ նորութիւն մը չէ այս խնդիրը : Այս միայն ամբողջ մատենադարաններ, այլեւ շատ մը գործիքներ զրկուած են Երևան, տարիներու ընթացքին, Եւրոպայէն եւ Ամերիկայէն : Փարիզի ալ կարեւոր բաժին մը ունեցած է այդ առարկաներուն մէջ :

Բայց, ինչպէս գիտել կուտայ յոգևածագիրը, կազմակերպուած աշխատանք մը չէ որ կը կատարուի : Ինք իր մէկ հեղինակութիւնը զրկած ըլլալով Երևանի պետական համալսարանին, Մատենադարանի Գիտնական (Տեսուչ կամ Տնօրէն) կը յայտնէ իր շնորհակալութեան նամակին մէջ :

« Առ Խաւարակ Մատենադարանս հետամուտ է, կապ պահելով գաղութային հեղինակներին, գրասէր անհատներին եւ կուլտուրական կազմակերպութիւններին հետ, նոյնպէս իր գրքերի փոխադր, ձեռք բերելով հայերէն եւ օտար լեզուներով հայագիտական գրութիւնները » :

Միեւնոյն ատեն կը խոստանայ նուիրատուներուն հետ փոխանակել համալսարանի գիտական հրատարակութիւնները :

Ուրիշ խնդիր մը, գրեթէ անտեսուած : Յօդուածագիրը, որ, եթէ չենք սխալիր, կը պաշտօնավարէ Փէնսիլվանիոյ համալսարանին մէջ, համաձայն է նոյն հաստատութեան հրատարակած գիտական հանդէսի խմբագրապետին հետ, որպէսզի հրատարակէ Հայաստանէն ստացուած գիտական հրատարակութեանց անդերէն ամփոփումները : « Այսպէս մեր գիտուններուն հրատարակութիւնները կը դառնան մատչելի բոլոր ազգերուն համար » :

Իսկապէս գնահատելի ձեռնարկ մը, որուն անշուշտ մտածեր են հետեւիլ նաեւ Փարիզի մէջ (Հայաստանի գիտուններուն տեսական հետաքրքրութիւնները ծանօթացնել օտար գիտնականներուն եւ ժողովուրդներուն) :

Եւ վերջոյն անմիջական պահանջ մը, — նորագոյն գործիքներ ճարել Հայաստանի բնագիտական աշխատանոցներուն համար :

Յօդուածագիրը ստացած է ցանկ մը անհրաժեշտ գործիքներու, « որոնց առարկաները կարելի է ընել մօտաւորապէս հինգ — տասը հազար տոլարի նուիրատուութեամբ » :

Այնքան յաճախուէ՞ք եւ պատկառելի հանգանակութեանց եւ նուէրներու մէջ, ամերիկահայ գաղութը չէ որ պիտի անճկի այս համեստ գումարին առջեւ : Թերեւս ալ ճարած են, այս տողերը գրուած ատեն :

Ամերիկայի մէջ թէ՛ այստեղ, անհրաժեշտ չէ ժողովրդային հանդանակութեան ձեռնարկել, այս կարգի պահանջներ գոհացնելու համար :

Կաթողիկոսական կոչի մը վրայ, ամերիկահայ բարեբար մը յանձն առաւ նորոգել Էլմիթի տաճարը : Ուրիշներ սաներ որդեգրեցին Գեորգեան ճեմարանին համար, տարեկան 500 տոլար թոշակով, Ամերիկայէն մինչեւ Սուրիա — Լիբանան եւ Եգիպտոս : Ինչ ուրիշներ շօշափելի գումարներ տրամադրեցին, պայծառացնելու համար Անթի — լիասի կաթողիկոսարանը :

Այս բոլորէն պակաս կ'արժէ Հայաստանի համալսարանի մատենադարանին եւ բնագիտական բաժնին պայծառացումը : Մանաւանդ որ կապ ունի ամբողջ սերունդներու գաստիարակութեան, հայկական գիտութեան զարգացման հետ :

Մեր ունեւորները առ հասարակ աւելի ակնմը կուտան վեղարուներու փաղաքանքներուն, քան լրագրական կոչերու :

Անցեալ ամառ եպիսկոպոսներու եւ վարդապետներու — այժմ բոլորն ալ եպիսկոպոս — շքախոս մը գնաց Երևան եւ շատ բան տեսաւ : Անոնց ամէն մէկը կրնայ մեկեկստ մը ճարել ճաշասեղանի մը պահուն կամ պատարագով մը :

Լաւագոյն է այս ձեռով ճարել գիտական գիրքերու եւ գործիքներու դրամը, որպէսզի ընդհանուր հանգանակութիւնը ամբողջովին կեդրոնանայ Ներգաղթի դրամագլուխին վրայ : Այստեղ թէ Ամերիկայի մէջ, ուր Բարեգործական արդէն ձեռնարկած է մէկ միլիոն տոլար հաւաքելու :

«Հայրենիքն ձեռու»

Ամիջապէս ըսենք որ մինչեւ այսօր ներկա — յացուած հայկական թատերախաղերուն մէջ ամէնէն շատ հետաքրքրութիւն արթնցնողն էր կիրակի օրուան ներկայացումը : Արդուր էր այս հետաքրքրութիւնը երկու պատճառով : Առաջինը՝ երկուստարկ գրող մը, Հրաչ Տարօնեանն էր հեղինակը, բոլորովին անտախտ գործով մը, երկրորդ՝ անոր բնագործութիւնը ստանձնած էր Բագրատունին :

Առնենք նախ թատերախաղը : Քանի մը արարի մէջ, ներկայացնել օտար աիբրու վրայ ինկած հայ ընտանիքի մը ներքին կեանքը, ցոյց տալ այդ ընտանիքին ապրած ամբողջ ողբերգութիւնը, Քրանսացած դաւակներու եւ հայ մայրերու փոխադարձ ապրումները, — շատ գնահատելի փորձ մըն է եւ արժանի շնորհաւորութեան : Բայց թէ Պ. Տարօնեան յաջողած է իր նպատակին մէջ, հոս կարելի է ըսել, — Ոչ :

Վստահ եմ որ հասարակութիւնը դո՛ւ մնաց խնդիր, բայց իր գոհունակութիւնը անոր համար որ նիւթը կը խօսէ իր սրտին ու յետոյ դերակատարներէն մէկուն սակզած տիպարէն (Օննիկ Աղան), որ սկիզբը շատ բնական «Պապա» հայ մարդն է, քիչ խեղճով, անուս ու անկամ, կորսուած գրեթէ Ֆրանսայի մէջ : Ափսո՛ս, սակայն որ շատ շեշտեց իր տիպարին դաւեշտական կողմը, ժողովուրդը խնդացնելու միտումը :

Չեմ տիրեր ընդհանրապէս խաղի մը նիւթը պատմել : Հոս սակայն անհրաժեշտ է, բոլորովին նոր ըլլալով : Երկու հայ ընտանիքներ որ կարի գործով կը գրադին, իրենց աշխատանքով կրցած են խանութ մըն ալ բանալ (ազգային արժանիք մըն է այդ) : Անոնցմէ մէկը երկու զաւակ ունի, միւսը մէկ հասակի տղայ մը, որ տողորուած հայկական զգացումներով եւ ընտանիքի մաքուր դադափաղով, կը սիրէ Հերմինէն, միւս ընտանիքին աղջիկը, եւ պիտի ամուսնանայ անոր հետ : Հոն է սակայն Քրանսական միջավայրին ազդեցութիւնը Հայրենի վրայ : Հերմինէն շրջած տեղական բարբերէ, ձոխ, հարուստ կեանքի մը հետապնդողներէն, տարուած մակերեսային հաճոյքներէ, պատրաստ է գոհելու իր սէրը, պարզ մտքի մը համար : Իսկ եղբայրը, Յարութիւն «սիրոյ» հանդիպած ըլլալ կը կարծէ պարսաբանի մը մէջ յանձին Ֆրանսուէի մը :

Ասկէ դատ խաղը շունի ոչ հանդոյց, ոչ ալ action : Վստահ եմ որ եթէ ան իր ամբողջութեան մէջ տկար թատերգութեան մը տպւորութիւնը կուտայ, յանցանքին մէջ մասը կ'իյնայ բեմագրութեան վրայ : Պ. Բագրատունի տաղանդաւոր արուեստագէտ մըն է, իր խաղը միշտ զուսպ, բնական եւ ընդհանրապէս դասական է : Ստիպուած ենք, սակայն, ընդունիլ որ իր պատրաստած «Հայրենիքն ձեռու» իր տաղանդին եւ գեղարուեստական բժանդրութեան համապատասխան չէր : Պ. Բագրատունի, որ կը կատարէր Պ. Լեւոնի գերը (նախկին ուսուցիչ մը որ իր դաւակներուն այլատեսութեամբ խոցուած, կը տառապի խորապէս), իր կարելիութեան առաւելագոյնը չէր որ տուաւ կիրակի օր :

Պ. Ն. Մարդարեան բաւական յաջող էր այլատեսութեամբ սերունդին պատկանող տղու դերին մէջ, մանաւանդ որ ուրիշ առթիւ զինքը չէինք տեսած հայկական բեմի վրայ : Օր. Աղանորեանի բերնին մէջ հայերէն բառերը կը կառնէին կարծես : Ընդունինք պահ մը որ Ֆրանսա մեծցած աղջկան մը համար կրնայ իր լեզուն բնական թուիլ, բայց ի՞նչ ըսենք իր խաղին որ Պ. Տարօնեանին համար երբեք բարենիշ մը չապահովեց : Տիկին Քիւթնէրեան, Հերմինէի եւ Յարութիւնը մայրը, ո՛րքան պէտք ունի իր բնական շեշտով եւ ճայտով խօսելու : Լաւ դերասան մըն է Պ. Տէրվիչեան, եթէ զգուշանայ ցուցադրական միօրինակ ձեւերէ : Տիկին Ալմա — տը, որ միշտ «à l'aise» է բեմին վրայ, Պ. Ալթունեանին հետ լաւագոյն տուրք բերաւ Պ. Տարօնեանին : Լաւ պիտի ըլլար եթէ Վ. Ա. չչափազանցը սակայն իր «տիպարին» գիծերը եւ չփորձէր դաւեշտի ամէնէն նախնական ձեւերը որոնք աւելորդ են իրեն պէս դերասանի մը համար : Նոյնպէս բնական եւ վարժ խաղարկութիւն մը ունէր Օր. Lisa Dorel որ արհեստով դերասանուհին կը մատնէր :

Վերջացնելէ առաջ, ըսենք որ խաղը դանդաղ էր — նորութիւն մը չէ եւ ամէն մարդ դժգոհ էր ատկէ : Երբ թատերախաղի մը մէջ կառուցուածքը չէ որ հասարակութեան հետաքրքրութիւնը կը շարժէ, պէտք է որ խօսակցութիւնները (dialogues) ունենան անհրաժեշտ ուժը եւ սրա —

ՆՈՐԷՆ ՅՈՒՆԵՑԵՍՈՒԹԻՒՆ

Կերմակապակի խնդիրն ալ կը լինուի

Մինչ Մոսկուայի անթելը յոյսեր կը ներշնչէ հաշտարար տրամադրութիւններով, անգլեամէս — քիկեան մամուլը նորէն յուսահատ կ'երեւայ Չորսերու ժողովին ընթացքէն : Այսպէս, «Տէյլի Մէյլ» (պահպանողական) կը գրէր երէկ. — «Միայն ահապէս ճիշդ մը կրնայ այժմ նոր եւ աւելի ծանր խորտակումէ մը փրկել Չորսերու ժողովը : Երէկ անոնք նոր եւ հաւանաբար վերջնական անելի մը մատնուեցան, ներկայ բանակցութեանց առթիւ » :

Եւ կը պատմէ թէ՛ չորս ժամ խորհրդակցելէ վերջ, Պ. Պրընս խոստովանեցաւ թէ՛ կատարեալ անելի մը մէջ խրած են, հաշտութեան դաշնադրներու խմբագրութեան առթիւ : Թերթին տեղեկութեանց համաձայն, «չողքիցած է» ինչ որ ձեռք բերուած էր շարժուման վերջը եւ չորս նախարարները գրեթէ կը դառնուին հոն ուր էին երբ դործի ձեռնակեցին : Առկախ կը մնան բոլոր այն խնդիրները որ զննուած էին, — Ափրիկէի իտալական պաղթալայրեր, Թրիէսթէ եւ հատուցումներ : Հիմնական տարակարծութիւնները շատ խոր են : Այս պայմաններուն մէջ, չորս նախարարներուն կը մնայ որոշել հետեւեալ խնդիրը. — Հաշտութեան ժողով հրաւիրել Յունիս 15ին, թէ՛ չորս նախարարներու նոր ժողով մը սարքել մինչեւ երկու ամիս, Մոսկուայի կամ Ռոչինկիթի մէջ : Ամէն բան կարողութեան պատուիրակութեանց մասնաւոր խորհրդակցութիւններէն :

Երկուշաբթի օրուան նիստին մէջ երեւան եկաւ որ ամերիկեան պատուիրակը ուրբաթ օր առաջարկած է անկախութիւն շնորհել Ափրիկէան Տրիպոլիտայ եւ Կիւրէնիայի, մէկ տարի խնամակալութեան տակ պահելէ վերջ : Պ. Պրիտո մերժած ըլլալով այս առաջարկը, Պ. Պրընս այս անգամ թեւադրած է որ Իտալիա հրաժարի խնամակալութեան պահանջէն եւ այդ իրաւունքը յանձնուի չորս պետութեանց : Եթէ մինչեւ մէկ տարի համաձայնութիւն չըլլայ, ամբողջ խնդիրը պիտի ներկայացուի Միացեալ Ազգերու խնամակալութեան խորհուրդին : Այս առաջարկը պող ընդունելու թեան մը արժանացաւ, Պ. Պէյլին նորէն առաջարկեց Միացեալ Լիբիայի անկախ պետութիւն մը հաստատել : Պ. Մորիսով ժամանակ խնդրեց խորհելու համար եւ ամբողջ հարցը մնաց առկախ :

Սորհրդաժողովին 20րդ նիստն էր այս, ապրիլ 25էն ի վեր, եւ, բաղդատելով ուրբաթ եւ շաբաթ օրուան նիստերուն հետ, կը նշանակէր մէկ բայց սպա՛յ, երկու քայլ ետ : Հատուցումներու հարցի մասին ալ հակահաստատութիւնը շարունակուելով, ի վերջոյ որոշուեցաւ մասնաւոր յանձնախումբին վերադարձնել ծրագրերը, նրէն ուսումնասիրելու համար :

Օրակարգի երրորդ խնդիրն էր Թրիէսթէն : Պ. Մորիսով գիտել տուաւ թէ քանի որ ինք հրաժարեցաւ Ս. Միութեան խնամակալութեանէն՝ Ափրիկէան Տրիպոլիտայ վրայ, միւս նախարարներն ալ պէտք է զիջումներ ընեն Թրիէսթէի մասին, այսինքն Եւրոպայի յանձնեմ զայն : Բայց Պ. Պ. Պէյլին եւ Պրընս կրկնեցին իրենց առարկութիւնները : Տեսնելով որ ոչ մէկ հարցի մասին համաձայնութիւն կը գոյանայ, ամերիկեան պատուիրակը առաջարկեց դերմանական խնդիր զննել, մինչ Մորիսով կը նախընտրէր փորձ մը եւս կատարել, համաձայնութիւն գոյացնելու համար Իտալիան դաշնագրի մասին : Այս առթիւ Պ. Պրընս հարցուց թէ ուրիշ պետութիւններն ալ պիտի հրաւիրուին, դերմանակահարցին զննութեան առթիւ : Պ. Պրիտո պատասխանեց թէ հակառակ չէ որ հրաւիրուին, բայց Պ. Մորիսով բացատրեց թէ չորս նախարարները կը բաւեն : Վիճաբանութեան ընթացքին, Պ. Պրընս յիշեցուց իր ծրագրերը, — 25 տարուան դաշնագիր մը կնքել, Գերմանիան բոլորովին զինաթափ ընելու համար, ծրագրի մը ուրուն կ'ընդգրկանայ Ս. Միութիւնը : Ի վերջոյ որոշուեցաւ դերմանակահարցը զննել իտալական եւ պալթանեան դաշնագրիներու կարգադրութեան վերջը :

(Լուրերու շարունակութիւնը կարդալ Գ. Է9)

ԿԱՐԱՅ ՊԻՏԻ ԲԱՏՆՈՒԻ Մայիս 14էն սկսեալ, 150 կրամ՝ Մայիսի GB (100 կ.) եւ GA (50 կ.) կտրօններով :

մտութիւնը, ինչ որ կը պակսէր հեղինակին : Աւելորդ էր առաջին տեսարանը, որ եթէ exposition կամ prologueի դերը պիտի կատարէր, պիտի փճացնէր նաեւ խաղին հետաքրքրութիւնը : Անյաջող էր մանաւանդ երկրորդ արարքն վերջին տեսարանը, երբ հայրը կուգայ իր աղջկան պատիւը փրկել : Գաղափարը լաւ կրնայ ըլլալ, բայց ոչ իրապօրծումը :

Այս գիտողութիւններէն եւ առաջին տպաւորութիւններէն վերջ, կ'ուզէինք որ նորէն բեմադրուէր խաղը, աւելի ամփոփ եւ խնամուած : Հեղինակը, թէեւ երկուստարկ, բնորոշ ճաշակ ունի եւ շատնց կը հետեւի թատերական գրականութեան : ԱՐՓԻԿ ՄԻՍԱԿԻԱՆ

Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆԻ ՄԱՍԻՆ

Մարտի 11-ի մէջ, որոշեցի Ա. Ահարոնեանի աշակերտները: Բարեկամի մը հետ տեսակցութիւն մը ունեցայ այս մասին: Ինձ տրուած տեղեկութեանց առջեւ, որոշումս դորձադրելու վարանեցայ: Եւ վերադարձիս, մտածումները զիս մղեցին հասնողի ու ցաւի վերջի շրջաններու: Եւ ունեցայ տեսակ մը խորունկ մղձաւանջ՝ դանկու համար խոնարհութիւն ազնիւ հպարտութիւնը:

Մարդ էջը սպասելու եւ մարդ կրնար գուշակել թէ, ամբողջ կէս դարէ աւելի իր հոգեկան կարողութեան անխնայ զոհող, իր ներսի կրակէն շարունակ սպառող, իր աչքերու լոյսէն անզուարեան շարունակ աշխատող Մեծ Հայրենասէրին սքանչելի լեզուն, որ մը, 1934 փետրուար 11-ին, բանաստեղծութեան ընթացքին «Հայոց աշխարհի... իր նախագատու թիւերը չըրացուցած պիտի դադրի հնչելէ: Ահաւոր կաթնով մը պիտի զգեստնէր մտածումի այնքան բարձր ու զեղեցիկ կարողութիւն մը: Եւ տարիներով զայն չարչարել զաժանորէն:

Անշուշտ անմահ է Ա. Ահարոնեան: «Հին Հելլեններու թով, անմահութեան աւազանին մէջ մկրտուած Աքիլլէսն անգամ, իր կրունկին վրայ ճակատագրական բիծ մը կը կրէր, որ իր առջեւ բաց կը պահէր մահու ճամբան»: Ինձի կը թուէր, սակայն, թէ հայ ժողովուրդի այս հսկայ մտաւորականը այսպէս չմեղեցուցիչ ցաւի մը պիտի չզարնուէր մէկէն: Ես միշտ խորհած եմ թէ զէ՛մ քեր կան որոնց կենանք բոլորովին տարբեր է սովորական մարդոց կենանքը, թէ զէ՛մ քեր կան որոնց մահը հեշտ է ըմբռնել: Անոնք վերջին վայրկեանին իսկ ըսելիքներ ունին, իբրեւ շարունակութիւնը իրենց յանձնուած մեծ ու զեղեցիկ առաքելութեան:

Եւ միշտ խորհած եմ, ու հիմա, Մարտի 11-ի բարեկամին տուած տեղեկութիւններուն առջեւ, կարծես կը հարկադրուիմ անդրազանայ մինչեւ սոցալոթեանս օրերու դիւթական գաղտնիքներուն:

Հայրենի հէքեաթներու մէկ պատաստին վրայ զեղեցիկորէն ծաղկած իմ դիւղը ունէր աղբաւ բայց սիրուն, անկանոն բայց ներշնչող դպրոց մը: Այդ դպրոցը, որ մը ընդունելու քաղաքացի այցելու մը: Թուի ու բարձրահասակ, ծանրախոս ու իմաստուն կրօնաւորի պատկանանքն ունեցող այցելուն իստեցաւ Խարբերը գաւառի դրազէս թլկատինցիի մասին: Ես հազիւ տասն — տասներկու տարեկան, չեմ յիշեր որքան ժամանակ ծալապատիկ նստած ըսակնդրեցի: Կը հասկնայի՞ր դաստիարակի բոլոր բնութիւնը: Անշուշտ ոչ, բայց ինչ որ կը հասկնայի, իր ծանր ելեւէջներուն հետ, տեսակ մը ցանկալի եռանդ էր, որ յաջողապէս կը ձգտէր փոխել զգացումներս, վեր հանել զիս անձարակ մանուկի վիճակէն, դարձնել տարբեր տղայ մը, մտածումի եւ ոգեւորութեան առաջին բաժանի ըմպող տղայ, տղայ մը որ այլեւ կարող է կարողական աշխարհներ երեւակայել, եւ, հարազատ աշխարհի լոյսին տանող ճամբաներ որոնել:

Քաղաքացի մարդուն կատարած դաստիարակութեան ազդեցութեան տակ՝ շատ չանցած, իրիկուն մը լսեցի թէ վաղը մեր դիւղը պիտի գայ թլկատինցիին: Յարձուրդով դիւղերին հանդիսա թուն չունեցայ: Աստուի կանուր անապարեցի անկողինէս ելլել, խոյս տուի տունէն, խոյս տուի եկեղեցիէն: Հեռացայ դիւղէն, ու քաղաքի ճամբուն վրայ, անօթի, ի վուր ժամերով սպասեցի, ի վուր նայեցայ իմ դիւղը արձակուրդի եւ ուխտի գացող անձանցով մարդոց զէմքերուն, հասակներուն: Կը խորհէի թէ բնաւ չտեսած թլկատինցիս երբ թովէս անցնի, զայն պիտի ճանչնամ ինքնաբերաբար: Գիտէի թէ, ան ոչ միայն մտքով այլեւ հասակով, կազմով, իր ամբողջ երեւոյթով անմահներու յատուկ կերպարանք ունի, եւ ես անոր արտակարգ երեւոյթի հրապուրիս առջեւ, պարզ մերձեցումով մը միայն իրձերու եւ բարձունքներու ծարաւս յագեցնող օրհնութիւն մը պիտի տանամ: Կը խորհէի թէ, թլկատինցիս դիտելու, զննելու, մինչեւ հոգիներու խորը ճանչնալու կարող աչքեր ունի, աչքեր զուարթ, աչքեր հրաշալ, որոնցմէ ծիրանի խորհուրդ մը պիտի ճառագայթէ վրաս, պիտի զեղեցիկանամ, պիտի մեծնամ, պիտի զօրանամ մէկէն, զիւր դարձիս, բոլոր զիս տեսնողներու զարմանքը պիտի դրաւեմ եւ արտայայտելու համարձակ հպարտութեամբ պիտի յայտարարեմ:

Ես թլկատինցիս տեսայ ամէնէն առաջ: Թլկատինցիս եկա՞ւ, անցա՞ւ իմ մօտէս: Չեմ գիտեր: Բայց գիտեմ որ ես մտախար չեղայ, որովհետեւ երեւակայածիս պէս մէկը չտեսայ եւ անոր գալու մասին ոչ ոք ինձի բան մը խոսեցաւ: Ուրի — տասը օր անցած էր: Ուխտաւորները վերադարձեր էին: Արձակուրդի եկողները սաւկայն, զիւղիս առջեւ, լճեզրի ծառաստաններու մէջ տեղ առած՝ կը շարունակէին իրենց կենանքի հաճելի վայելքները: Անոնց մէջ էին Խարբերի գոյնճանկներն եւ վարժարաններէն ընթացաւոր մաս մը ուսանողներ, որոնց աշխուժութիւնը կարծես կը կայծկրտար եւ ոգեւորութիւնը բեղուն գաղափարներու համակ ցոլը էր:

Ծովքը բնութեան եւ պատմութեան հրապուրիչ կախարչանքն ունէր: Ծովքի մանուկներուն

թով, մարմինը զօրացնելու համար, բարկ արեւին տակ, լճի ջուրերուն մէջ, աւազներուն վրայ խաղալու, ցատկոտելու, կանանչազարդ բլուրները մազլցելու, վաղվելու ոսկի հէքեաթը կար: Ուսանողները շնչուած ցանկութեամբ կը հետեւէին սերտելու այդ հէքեաթը: Անոնք, իբրեւ յաղթական ու արի եղբայրներ, իրենց հանդէպ ցոյց տրուած համակրանքները վարձատրելու համար, կը սիրէին յաճախ իրենց մէջ ունենալ Ծովքի փոքրիկները, անոնց խօսիլ իրենց մտաւոր կարողութեան, բացատրել իրենց կատարած նուաճումներու կորովը:

Օր մը, այդ ընթացաւոր ուսանողները որոշեցին Հարգաց լեռան կատարը բարձրանալ: Անոնց պիտի ընկերանային Ծովքի քանի մը երիտասարդներ իբրեւ առաջնորդ, եւ զիւղի երկասարդ քահանան իբրեւ կրօնական պիտի զովարանէր լեռներու սրբութիւնը, հոն, կատարին վրայ մասուցանելիք պատարագով:

Հարգաց լեռը սրբազան էր, եւ, հնուց ի վեր, ամէն տարի իր տօնական օրն ունէր:

Լսեցի Ծովքի մեծ լեռան բարձունքը մազլցելու այս որոշումը: Լսեցի ու վաղեցի քահանային, վաղեցի հօրս: Տէր հայրը, ցանկութիւնս դիմաւորելու սիրուն ժպիտ մը ցոյց տուաւ, իսկ բարի հայրս նախ մերժեց, առարկելով թէ զեռ շատ փոքր եմ եւ անկարող այդքան բարձր լեռ մը մազլցելու, յետոյ, իր զաւկին աշխուժութիւնը քաջաբողջ հօր մը խանդաղատանքով ըսաւ:

Բայց եթէ ճամբան յոգնիս, յառաջանալու անկարող դառնաս, ոչ ոք պիտի օգնէ քեզի ու իմ որդիս կոչուելու պատիւէն պիտի դրկուիս:

Կախարդական աշխարհի խիզախութիւնները երեւակայող մանուկը չըմբռնէր իրական աշխարհի յոյսութեան անաւորութիւնը:

Մեր մեկնումի օրունա յաջորդող իրիկունը, մենք հանդիստ առինք լեռներու մէջ, մեծ լեռան ծունկերուն վրայ հոսող աղբիւրին առջեւ: Բնութիւնը մեր մարմինները օժելու եւ մեր յոյսութիւնները փայփայելու օրհնութիւնն ունի: Չով օդ մը անզաղար կը շոյէ մեր զէմքերը եւ մեր քիմքերուն կը ցանէ վայրի խոտերու եւ ծաղիկներուն անուշ հոտերը: Երկինքը շինչ է, աստղերը աւելի խիտ ու պայծառ: Երկինքի ցոլերը մութ ու գորշ գոյներու երակներ կը սփռեն եւ կը փայլալացնեն հոս ու հոն, համաձայն հողին ու ապառաժին գոյացուցած վիճակներուն եւ անոնց հետ ունեցած իրենց յարաբերական աղբիւրն:

Ընթրիքէն վերջ, ուսանողները, մարզանքի փոքրիկ խաղեր ըրին: Անոնց մէկը քիչ հեռու ցեցուած քարածայտի մը կողքին կոթնելով սկսաւ երգել:

Քարանիսար լեռան կրծքին...

Ուրիչ մը անոր յաջորդեց Սեւ խաւարը, որուն վերջուորութեան Տէր Պօղոս քահանան ըսաւ:

Այս հրաշալի երգը, երգէ աւելի ցաւի ու ցասումի մոնչիւն մըն է, հզոր մոնչիւն մը ազատութեան դրկուած եւ հայածանքներու ենթակայ դարձած հայ ժողովուրդի յուզումին:

Ծովքի երիտասարդ մը:

Ուրեմն առիւծ մըն է Ա. Ահարոնեանը:

Ուսանող մը հաստատեց:

Մտաւորական առիւծ մը, որ աղատութեան, յաղթանակի զեղեցիկութեան կարօտ, ցաւի արտասովոր մոնչիւններով կը սորվեցնէ իր կորիւններուն ըզրիկները իրենք հայածող թշնամիները:

Ա. Ահարոնեանի մտաւոր կարողութեանը եւ մեծութեանը մասին վկայութիւնները հեղահեղ ընդարձակուեցան, լեռներու մէջ, մեծ լեռան հովանիին տակ: Մեր հանդիստի վայրը յարանական սրահի մը սրբութեան հանգամանքն ստացաւ: Տէր Պօղոս քահանան նախագահեց, ուսանողները դաստիարակեց զարձան: (Մնացելով յաջորդով) ԿԻՒՐԵՂ ԽՐԱՅԵԱՆ

ԿՄՊՈՅՏ ԽԱՉԻ ՀԱՆԴԵՍԸ

ՎԱՒԱՆՍ — Կապոյտ Խաչի մասնաճիւղը ետանդուն գործունէութիւն մը ցոյց կուտայ: Ապրիլ 27-ին, Սալ տէ Ծէթի մէջ կազմակերպած հանդէսը մեծ յաջողութեամբ պատկուեցաւ, ոչ միայն Հայերու այլեւ օտարներու զնահատանքին արժանանալով: Այս առթիւ «Le Dauphiné» թերթը կը գրէ:

Շարաթ իրիկուն, Սալ տէ Ծէթի մէջ, Կապոյտ Խաչը, այս գործունէայ բարեգործական կազմակերպութիւնը որ հայկական գաղութին մէջ իր փրկարար դերը կը կատարէ, տուաւ երեկոյթ մը: Բացի «պիլֆէ»էն որ բոլորէն զնահատուեցաւ, մնացեալը զուտ ազգային էր, ժողովուրդը, արուեստագէտները եւ յայտարարը: Ծնորհիւ Տիկին Օտէթ Միլքայէլեանի, որ սահուն կերպով երկու լեռներն ալ կը խօսի, եւ զեղեցիկ ճառ մը խօսեցաւ, Քրանսացի ունկնդիրը կը ցաւ զնահատել Կապոյտ Խաչի խիզախ քարեգործական նպատակները: Վիլիէն Հ. Կ. Տէրոյնեան իր կարգին հայերէն խօսեցաւ իր հայրենակիցներուն: Յայտարարին մէջն էր հուրիւններու պատկեր մը զիւրիչ եւ սքանչելի երանգաւորումով, ինչպէս նաեւ «Վերջին Դաստատու» թատերականութիւնը Ալեքսանդրովիչէն որ ուսուցիչն է թարգմանուած էր հայերէնի եւ որուն գերակատարները բոլորն ալ Վիլիէնի հայ դպրութեան էին: Վախանի անոնց հայրենակիցները զնահատանքով կը ծափահարէին խաղը: — Թ.

Պայտար քաղաքի հարտար

Ներկայ իրանեան տաղանայը հետեւանքն է հին ազդեցութեան պայթարի մը Սլաւներու եւ Անգլիացիներու միջեւ, պայթար որ առժամապէս կարգադրուած էր 1907-ի ուսուցիչական եւ 1921-ի ուսուցիչական գաղութներով: Բայց 1944-ին վերսկսելով, շարունակելով շարունակուել վերջ, յանկարծ բոլորովին տարբեր երեւոյթ մը ստացաւ: Տեսեալեան բուն կռիւ մըն է որ կը մղուի, տիրելու համար իրանի եւ Միջին Արեւելքի քաղաքի հանքերուն:

Կորսրդային Ազրբայճանէն մինչեւ Սէուտական Արաբիան շեղ ժապաւէնի մը պէս կ'երկարին քարեղի երեք կարեւոր գօտիներ:

Հիւսիսը, կորսրդային իշխանութեան տակ, Բագուի նաւթային զանգուածը, նուազումի նշաններ ցոյց կուտայ, թէ եւ հոն է որ կը ճարուի տակաւին Ռուսիոյ քարեղի մեծագոյն մասը, 10 միլիոն թոն, 21 միլիոնի վրայ, բայց հաւանաբար իրանեան Ատրպատականի կից հողերն ալ կը պարունակեն քարեղ, մանաւանդ Կասպից ծովու ափերը: Ստոյղ տուեալներ չկան դեռ, բայց երկրաբաններ կը կարծեն թէ քարեղի ընդարձակ տակաւն մը կը գտնուի Կասպից ծովու հարաւային ափամասին, հարաւային, եւ հարաւային արեւելեան ափերուն վրայ, նոյնիսկ ծովուն տակ:

Կեղոնը, քաջամասթ են իրանեւրաքեան խաւերը, որոնք տեղագրին կը շահագործուին: Հանածոյի երեք գլխաւոր կեղոններ կան, Իրաքի մէջ Մուսուլ — Քէրքէքի շրջանը որ կը շահագործուի Իրաքի ֆէթթոլու մ'Քրմիթի կողմէ, կիսովին անգլիական դրամագլուխով, եւ մնացածը ամերիկեան եւ Ֆրանսական դրամագլուխով, երկրորդը, Իրանի շրջանը, Իրաքի մօտ՝ Մանէքըն, Նաֆթիսանէ եւ Նաֆթ — ի Շահ, ուր անգլիականեան ընկերութեան նաւթահորերը իրենց քարեղը կը գրկեն Քիրմանշահի գտարանները (Իրան) եւ Ալեքսանտրի գտարանները (Իրաքի մէջ): Երրորդը՝ հարաւային Իրանը ուր կարեւոր շահագործում կայ Ապատանի հիւսիսային կողմի գտարանով միասին, — Մէսաճիս — իւլ Սուլեյման, Հաֆթթէլ, Արաքիս, Կազ Սարան: 1945-ին Իրան եւ Իրաք արտադրած են 21.700.000 թոն քարեղ, որուն 17 միլիոնը Իրանի բաժինը:

Հարաւ, Սէուտական Արաբիան, յարակից մասերով՝ Քովէյթ եւ Պայնէյս, ունին նաւթի խաւեր, որոնցմէ ոմանք կը շահագործուին բանուկ կերպով ամերիկեան ընկերութիւններու կողմէ, ընդամենը երեք միլիոն թոն արտադրութեամբ: Բայց էլ — Հազա գաւառին եւ Հիճազի բարձր հաստիները շատ մեծ յոյսեր կը ներշնչեն:

Միջին Արեւելքի քարեղի հարստութիւնը ուրեմն անպիսի է, ներքին պահեստները կը հասնին 2 միլիոն 737 միլիոն թոնի, որուն 1100 միլիոնը Իրանի մէջ, 770 միլիոնը Իրաքի, իսկ 450 միլիոնը Սէուտական Արաբիոյ մէջ, 25 միլիոն թոնի տարեկան արտադրութեամբ — առանց հաշուելու Խ. Ազրբէյջանը — ինչ որ կրնայ իր վրայ հրաւիրել մեծ պետութեանց խորհուրդը: Ըսինք որ Իրանի, Իրաքի եւ Արաբիոյ այս հարստութիւնը բաժնուած է այսօր Անգլիացիներու եւ Ամերիկացիներու միջեւ, 60 առ հարիւր անգլիական եւ 40 առ հարիւր ամերիկեան: Առաջինները կը տիրապետեն միջին Արեւելքի կեղոնին, իսկ միւսները՝ հարաւին եւ նոյնիսկ Եգիպտոսի:

Այս պայմաններուն տակ զիւրին է գուշակել թէ Խ. Միլիոնները պիտի հետաքրքրուէր Միջին Արեւելքով, եւ այս՝ հետեւեալ հիմնական պատճառներով: —

Նախ, որովհետեւ իր քարեղի կէսէն աւելին կը հայթայթուի Խ. Ազրբայճանի նաւթահորերէն: Բագուի պահեստները կարեւոր են տակաւին, թէ եւ որոշ չափով նուազած: Եթէ արտադրութիւնն ալ նուազեցաւ պատերազմի ընթացքին, պատճառն այն էր որ շատ սահմանափակուեցաւ պատրաստ մթերքի կազմութիւնը եւ անկարելի դարձաւ փոխարութիւնը Պայթուի եւ Վօլկայի ճամբով, քանի որ Սեւ Ծովը Գերմանիոյ հսկողութեան տակ էր, եւ նոյնիսկ Վոլկայի մէջ մասը, Սթալինկրամի պաշարման առեւ: Անշուշտ Բագու պիտի կորսնցնէ իր կարեւորութիւնը որոշ չափով, խորհրդային ընդհանուր արտադրութեան տեսակէտէն, եթէ կատարելագործուին նաւթային արտադրութիւնները իմպայի՝ Կասպից ծովու հիւսիսային կողմը, Տագստանի՝ Կոլկասի հիւսիսը, եւ երկրորդը Բագուի, ընդմէջ Ուրալի եւ միջին Վոլկայի: Բայց այս վայրերուն մէջ քարեղը կը գտնուի երկրին շատ խորերը, եւ ամերիկեան մասնաւոր միջնեւ քարեղի զանգուածները, զոտեղուած ժայռային ընդունարաններու մէջ, 3000էն 4000 մեթր խորութեամբ: Միւս կողմէն յայտնի է որ Խ. Միլիոնեան մէջ կը պակսին քարեղի ճարտարագէտներ եւ դեռ վերջերս ան փորձեց ամերիկեան ճարտարագէտները հրապուրել: Այս խաւերուն շահագործումը ուրեմն պիտի ուշանայ, եւ դեռ երկար հայթայթիչը: Այս պատճառով, անհրաժեշտ կը նկատուի կազմել Բագուի առջեւ որոշ երկրամաս մը, իբրեւ թումբ, ի պաշտպանութիւն անոր նաւթահանքերուն, որովհետեւ Սովիէթները չեն մտա-

Յուճանայ գաղութին վիճակը տեղի եւ այսօր

ԽՄԲ. — Արեւմտեան Պակտան Այրեւսի Արմենիա
քերթին ուղղուած նամակէ մը կը բաղեցնէ հետեւե-
կալ շահեկան տեղեկութիւնները, որոնք ընդհան-
նուր գաղափար մը կը տան այս գոթախոս գա-
ղութի կացութեան մասին . —

1940 Հոկտեմբեր 28ին կը սկսի հեւլէն-իտա-
լական պատերազմը: Արաւսիոյ բարձր լեռներուն
վրայ, զերոյն վար տասը աստիճան ցուրտի տակ,
հեւլէն քաջարի բանակը պարտութեան կը մասնէր
իտալական զօրքը:

1941 Ապրիլ 6ին Գերմանիա պատերազմ հրո-
շակեց Յունաստանի դէմ, 30ին մտաւ Աթէնք:
Կեանքը իսկոյն փոխուեցաւ, ամէն ինչ սուղ, գոր-
ծերը կանգնեցան. ուստեղէն չկայ. ժողովուր-
դը սկսաւ զիւզերը խոժել, զիւղացիք դրամ չեն
ուզեր, այլ զգետեղէն ու զործիք: Ապրանքները
կը բարձրանան, մէկը տասը, հարիւր: Անօթու-
թիւնը ծայր կուտայ:

Հրապարակը ուսելիք չկայ. կաղամբին կո-
թերը իրարու ձեռքէ կը խնն: Տասը օրս հացը
կ'արժէ մէկ հնչուն ոսկի. երեսուն օրս հացով
տուն մը կրնաս գնել: Մարդիկ զաղաններու վե-
րածուած են. հայրը իր մասին կը խորհի եւ տղան
իւր: Սովորական թիւերը կը սկսի 1941 Նոյեմբերին:

Յուրաքանչեւ սկսի, գործ չկայ, փայտ չկայ,
գրամ չկայ, ամէն ոք իր ունեցածը կը տանի գիւ-
ղերը պատսո մը հացի փոխարէն ծախելու. մենք
մեր մետաքսեղէն գոթաստները գիւղերը կը տա-
նինք, եւ հագիւ մէկ ու կէս օրս սխտո կը ստա-
նանք փոխարէն: Մարդիկ սովահար կը մեռնին:
Ես մէկ ամուսնուս ընթացքին տի մը չոր չամիչ
եւ 25 տրամ հաց եմ կերած:

Գաղտնի շուկային վրայ շան, կատուի եւ իշու
միս կը ծախեն, քաղաքը կը մերկանայ:

Գերեզմանները կը փորուին աւելի խորունկ ու
լայն, մէկ անգամէն 15—20 մետրի համար:

Ազգային կեանքը արդէն մեռած է:

Կը գոցուին բոլոր դպրոցները, առանց բացա-
ռութեան, նիւթականի եւ ուսեստեղէնի չգոյու-
թեան պատճառով: Եւ ասիկա մինչեւ 1942 մարտ
ամիսը, երբ առաջին անգամ ըլլալով Միջազգա-
յին Կարմիր Խաչը կը սկսի օգնութեան: Կը բաժ-
նուի օրական 40 տրամ հաց եւ պնակ մը ապուր,
հոգ չէ թէ առանց իւրի:

Ժողովուրդը քիչ մը շունչ կը քաշէ: Գերմա-
նացիները կը բան մը միտուորական աշխատանք
ներ: Շատեր կամայ ակամայ կ'երթան աշխատելու
չարթական երկուրուկէս օրս հացի փոխարէն:

Մինչեւ 1943 Աթէնքի եւ Պիրէոսի մէջ անօթու-
թեան մեռան աւելի քան 100.000 անձեր: Հեղաշե-
տէ սկսաւ արտաքին օգնութիւնը, Արժանթինի ցո-
րենը կատարեց նախախնամական դեր մը: Իբրեւ
երախտադիտական արտասպառութիւն Աթէնքի
փողոցներէն մին, «Օտոս Վուլի», կոչուեցաւ «Ար-
ժանթինի Դիմոքրատիա»:

1944ի սկիզբը եւ մինչեւ իրենց հեռանալը,
Գերմանացիները սկսան բռնի Յունաստանի զանա-
զան մասերէն երիտասարդութիւնը Գերմանիա տա-
նիլ աշխատանքելու: Տարուեցան նաեւ հազարի չափ
հայեր:

Միայն Գոգինիայէն տարին 8000 քաղաքացի —

ցած Փրանքեանդիական ծրագրերը, 1939ին, որ
նպատակ ունէր ուժեղացնել Բաղուի քարիւղնե-
րը, եւ շատ լաւ գիտեն թէ ուսական Ատրպատա-
կանը պաշտպանուած չէ հարաւէն՝ այսինքն Իրա-
նի կողմէն, որ եւ է բնական սահմանադրուիտով
մը, քանի որ Արաքը դեռ որ միակ սահմանու-
ղաւան է Իրանի եւ Խ. Միութեան միջեւ, կը հոսի
ներքին ընդարձակ դաշտի մը մէջէն: Խորհրդա-
յին կառավարութեան ըմբռնումով իրանեան Ազր-
պէյճանի վերահսկողութիւնը կը ներկայանայ ու-
րեմի իբրեւ անհրաժեշտ՝ Բաղուի ապահովութեան
համար:

Երկրորդ՝ Սովիէթները կ'ուզեն ձեռք գնել
հիւսիսային Իրանի քարիւղի հարստութիւններուն
վրայ, որոնք ահալին արժէքը կը ներկայացնեն
ըստ երկրաբաններուն: Խուսերը կ'ուզեն գրաւել
մէկ մասը միջին Արեւելքի քարիւղին, որուն շա-
հագործման մենաշնորհն ունին այժմ Անգլիացի-
ները եւ Ամերիկացիները: Ասկէ զատ կը վախեն
որ եթէ իրենց ոտը չդնեն Ազրպէյճանի մէջ, նո-
րէն Անգլիացիները եւ Ամերիկացիներն են որ պե-
տի գան հոն, զի այս վերջինները արդէն կատա-
րեցին այդ փորձը առնուազն երեք անգամ՝ 1907ին,
1914ին եւ 1923ին: Կ'ըսուի թէ 1907ին, Պաթումցի
Վրացի մըն էր որ Անգլիա-Իրանեան ընկերութեան
ծախեց իր իրաւունքները, 200.000 սթերլինի փո-
խարէն: Այս ընկերութիւնն էր որ 1920ին հիմնեց
Խորք Փրոքշիմ Օյլ Բըմիւնթիլ, հիւսիսային Իրա-
նի քարիւղները շահագործելու համար եւ միեւ-
նոյն տարին Թէհրանի կառավարութեանէն բացա-
ռելի մենաշնորհ ստացաւ այդ մասին, թէ եւ յետոյ
այդ համաձայնութիւնը չվաւերացուեցաւ: Ասոր
յաջորդեց ամերիկեան Սթանտարտ Օյլ ընկերու-
թիւնը 1921ին, որ միեւնոյն շրջաններուն մէջ մե-
նաշնորհներ ստացաւ 5 միլիոն տուրքի փոխարէն,

ներ, եւ տեղւոյն վրայ սպաննեցին 300 հոգի:
1944ին Գոգինիայի ամբողջ պաշարեցին եւ 15 — 50
տարեկան բոլոր այրերը տարին: Մեր թաղը չհաս-
նելուն՝ մենք աղատեցանք:

Գաղտնիներուն մեծ մասը վերադարձան, անոնք
որ դժգոհութիւն չայտնած էին, ենթարկուած
են տաժանելի աշխատութեանց:

1942ի սկիզբները կազմուեցաւ Համազգային
մարմին մը, մասնակցութեան Հ. Յ. Գ. եւս, ուս-
մակալներու եւ համայնալարներու: Նպատա-
կին էր իրարու հետ հաշտ ապրիլ եւ դիմել արտա-
քին օգնութեան: Այս մարմինն շիղն ու ողին էր
տարարախոս Մ. Փափաղեանը, որ հակառակ իր
նիւթական վատ պայմաններուն, ամէն շաբաթ կը
թափէր իր ազգակիցներուն համար. ամէն միջոցի
կը դիմէր ազատելու բանտարկուած Հայերը:

1944 Հոկտեմբեր 12ին երկիրը կ'ազատագրուի
եւ ժողովուրդը կը սկսի շունչ քաշել: Կը կազմուին
Հայերէ ինքնիշխան «Կոմկուսի Ոստիկանական
Մարմիններ», որոնք արտօնուած էին հեւլէն նոյ-
նաժողովուրդին իրենց հասկցած ձեւով կա-
տարել Հայերու դրձերը: Եւ ահա կը սկսին Հա-
րածանքները: Դաշնակցութեան Գոգինիայի Չա-
ւարեան վարժարանը կը գրաւուի եւ անունը կը
դրուի Կարմիր Ակումբ: Գոգինիայի մէջ կը սպան-
նուի Դաշնակցութեան համեստ համակիր մը,
կ'աքորուին երեք Դաշնակցականներ եւ ուսմիս-
վարներ: Ֆիքսէն Միհրան Փափաղեանը, Տիկինը,
զուակը եւ բանաստեղծ Մանուկ Մանուկեան կը
գտնուին սպաննուած, մերկ եւ փոս մը մէջ նետ-
ուած: Բոլոր Դաշնակցական աչքի գարնոյ դէմքեր
կ'ապաստանին անգլիական գօտի. Յոյները ոչ մէկ
վնաս կը հասցնեն Հայերու, չարիքը կը գործուէր
Հայերու կողմէ:

Ապտամբական այս վիճակը վերջանալով,
բնակիչներն կեանքը կը սկսի:

Ներկայիս կիրքերը որոշ չափով մեղմացած
են: Կը հրատարակուին երկու հայերէն թերթեր,
«Ազատ Օր», նախկին «Նոր Օր» տեղ, խմբագիրն
է Սեդրակ Գոհարունի եւ «Նոր Կեանք»:

Կազմուած է միջ-կուսակցա-Ազգային Մար-
մին մը: 75 առ հարիւր ծանր է Հայերու տնտե-
սական կացութիւնը: Դէպի հայրենիք վերադարձի
ցանկութիւնը ընդհանուր է:

ԹԱՂԵՐՈՒ ՎԻՃԱԿԸ

Ֆիթս, ներկայիս ունի մօտ 5000 հայութիւն:
Պէտք է ըսել որ Ֆիքսը իր նախկին ամփոփ հայու-
թիւնը չունի. ունեւորներ 15—20 վայրկեան հետու
տուններ չինած կամ վարձած են. կեդրոնը նորէն
նախկինն է, իր մէջ ունենալով Ամերիկեան վար-
ժարանները եւ ազգային եւ կաթոլիկ եկեղեցիները
եւ դպրոցները:

Լուսաւորչական եւ կաթոլիկ միացեալ վար-
ժարաններու տեսուչն է Ջաքար Ջաքարեան: Աշա-
կերտութեան թիւն է 600, կեանքի սղութեան պատ-
ճառով պիտոճէն դժուարով կը հայթայթուի:

Հ. Մ. Բ. Մ. ը լաւ է, ունի 250 անգամ, ո-
րուն 150ը սկաւում:

Հ. Յ. Դաշնակցութեան Պատանեկան Միու-
թիւնը կը հաշուէ 50 անգամ, Հ. Կարմիր Խաչը 90,
որդեղբարձ է բոսն աշակերտ, կ'աշխատիօգտակար
ըլլալ հիւանդներու եւ չքաւորներու: Այս երեք
կազմակերպութեանց շուրջ հաւաքուած է տեղւոյն
հայութիւնը որոնց շիղն է Հ. Յ. Դաշ-
նակցութիւնը: Ֆիքսի հայութիւնը մնացեալ թա-

հասոյթին ալ հարիւրին 15ը Իրանի թողու պայ-
մանով: Այս փորձը յաջողեցաւ միայն Անգլիա-Իրանե-
ան ընկերութեան բողոքին շնորհիւ: Վերջապէս
1923ին ամերիկեան Միւնքէր ընկերութիւնը կրկնեց
նոյն փորձը, բայց միեւնոյն ընդլիմութիւններն
արդէն եղան իրեն: 1939ին նոյնիսկ Հոլանտայի
կողմէ գիւմուսներ կատարուեցան հիւսիսային Ի-
րանի մէջ մենաշնորհներ ձեռք բերելու համար:

Ասկէ կը հետեւի որ Խ. Միութիւնը ստիպուե-
ցաւ զգուշութիւններ ձեռք առնել՝ Ազրպէյճանի
մէջ օտար ընկերութեանց հաստատման դէմ, ո-
րուն արդիւնք եղան իր կատարած երեք զլխաւոր
փորձերը, նախ 1921ին Իրանէն խոստում առաւ որ
ուսական ազգեցութեան գօտիին մէջ մենաշնորհ-
ներ պիտի չտայ օտարներուն. բայց քանի մը ամիս
վերջ Սթանտարտ Օյլի կատարած ջանքերը ցոյց
տուին որ այդ խոստումը մեծ արժէք չէր ներկա-
յացներ: 1944ին Խ. Միութիւնը վերսկսաւ յարձա-
կումը եւ Թէհրանի կառավարութիւնն պահանջեց
ընդարձակ մենաշնորհներ, մանաւանդ հիւսիսային
եւ հարաւային Ատրպատականի, հիւսիսային Խօ-
րասանի մէջ եւս.: Թէհրանի կառավարութիւնը
մերժեց, որով իր դիւանադիտական յարաբերու-
թիւնները բաւական ձգտեցան Խ. Միութեան հետ:
Արտաքին պաշտպանութիւններ կամ խոստումներ
պատճառ եղան որ կառավարութիւնը հետեւի յոս-
տակ քաղաքականութեան մը, 1944 դեկտ. 2ի օ-
րէնքով խիստ պատիժներ սահմանուեցան ու եւ է
նախարարի դէմ որ պիտի յանդիմանէր ընդարձակ
մենաշնորհներ տալ օտարներու, պատե-
րագմի վերջաւորութեան առաջ, իսկ 1945ին Իրա-
նի նոր դահլիճը երկրին քարիւղներուն համար
մասնագէտ խորհրդական նշանակեց Գ. Կիւլպէնկ-
եանը, եւ Անգլիացիք էին որ այս անգը Թէհրան
փոխադրեցին օդանավով:

ղամասերու բաղդատմամբ, տնտեսապէս աւելի
լաւ պայմաններու մէջ կը գտնուի:

ԳՈԳԻՆԻԱ

Գոգինիայի հայութեան թիւը հինգ հազարը
կ'անցնի, ունի մէջ-կուսակցական թաղականու-
թիւն մը: Լուսաւորչ. եւ կաթոլիկ միացեալ վար-
ժարանը ունի 450 աշակերտ: Ամերիկեան վարժա-
րանը 120 եւ Ջաւարեանը 200: Երջանի հայութիւ-
նը ազատ ըլլալուն մեծ մասով, Ազր. վարժարան
կը զրկէ իր զուակները, որովհետեւ ձրի է: Ժողո-
վուրդին մեծ մասը կապուած է Դաշնակցութեան:

Այս շրջանին մէջ Հ. Մ. Բ. Մ. ը ունի 150 ան-
գամ, 100ը սկաւում: Ջաւարեանը կը ծառայէ ի-
րենց օրպէս ակումբ: Հ. Յ. Դ. պատանեկան
խումբը ունի երկսեռ 80 անգամ, իրենց դրադա-
րանը յունահայութեան մէջ մէկ հատիկ է: Հ.
Կարմիր Խաչը ունի 200 անգամ: Մեծապէս զնա-
հատուեան արժանի են աղջիկները, որոնք հա-
կատակ զերման տիրապետութեան, լուռ ու մուռ
պահեցին իրենց գոյութիւնը:

Երբ հայ մեծամասնականներու ձեռքէն առ-
նուեցաւ Ջաւարեան վարժարանը, ան աւերակ
դարձած էր: Մասնաճիւղը 6 ամիս իր հասոյթները
յատկացուց անոր վերանորոգման: Ազգային կեան-
քի բազմաբազմ, այս շրջանին մէջ եւս Հ. Յ. Դաշ-
նակցութիւնն է:

ԼԻՓՍԱՍՄԱ

Երբեմնի չէն ու հոծ Լիփագոյի հայութեան
հազար 130 տուն մնացած է ներկայիս: Հայու-
թեան մեծ մասը Ֆիքս եւ Գոգինիա փոխադրուած
է: Ազգային կեանքը վերակազմուելու վրայ է,
դպրոցը ունի 70 աշակերտ եւ երեք ուսուցիչ:
Ֆիքս ունի «Կոմիտաս» եւ Գոգինիա «Քնար» նու-
գախումբերը:

Ըսէք Հ. Կարմիր Խաչին, որ հազուաւ զրկէ
մեղի, մենք բոլորս ալ պէտք ունինք հազուաւ:

ՎԻՃԻՆԱՅԻ ՄԽԻԹԱՐԵԱՆՅ ԳՈՐԾԵՐԸ

Վիճինայի մայրավանքը կրկնակի ուժեղացած
մասն ենթարկուած՝ տակաւին կը պահէ իր ամբող-
ջականութիւնն եւ գործունէութիւնը: Վերջին կը-
րիւններուն հրանթի ուսմը մը 5—6 մէջեր երկայն-
քով կը քանդէ կողքը հսկայ տպարանին, որ այժմ
վերակառուցուած՝ կը շարունակէ իր փրկարար
գերը շնորհիւ եւրոպական ճոխ գիրքերուն. 50 լեզ-
ուով կրնայ տպագրել: Ուրիշ ուսմը մը կ'իյնայ ե-
կեղեցիին վրայ եւ կ'անբեւոթացնէ նկարապարզ
ձեռքերը, փանքիւ բոլոր պատուհանները կը փըշ-
ընէին, մակայն կառավարութիւնն ու բարեբարո-
րը կը յաջողին մեծ մասով վերաշինել: Հայկական
գիրքերն ու ձեռագիրները, ինչպէս նաեւ ամբողջ
թանգարանը, ժամանակին արդէն կը յաջողին պա-
տասարել ամբողջու նկուղներուն մէջ: Ներկայիս
գրադարանը գրաւած է իր նախկին տեղը, կը մնայ
թանգարանի բաժինը: Ուսուցիչը եւ հարգելիքի
կարտ են: Երկու հակառակորդ գրաւումներու
ժամանակ, ոչ մէկ սեփականացում եղեր է կառա-
վարութիւններու կողմէ:

Իսկ Պուլկարիոյ Միթարեան Հայերը, Սո-
ֆիայի խիստ ուժեղացածն ազգուած՝ սարսա-
փահար ժողովուրդին հետ իրենք ալ կը մեկնին
Յիւրպէտէն ու կը ցրուին գիւղերու կամ քաղաքնե-
րու մէջ: Երաժշտագետ երգահան Հ. Գր. Հէպոյ-
եան կը հաստատուի Խաւքովօ, ուր 60 աշակերտներ
(հայ թէ պուլկար) կը հետեւին իր մասնադիտու-
թիւններուն: Մէկ տարուան մէջ՝ քաղաքապետին
հովանաւորութեամբ ու ոստիկանապետին նախա-
զահուութեամբ՝ վեց զանազան նուագահայտներ
կուտայ իր կազմած երգչախումբով, ան-
թելը կը հետապիտէ, ուրիշ քաղաքներ ետեւէ ետեւ
հրաւերներ կը կարդան: Դաշնակի, աֆորտօնի,
օրֆէպրի բազմաթիւ գործեր ունի, ինչպէս Pot-
pourriներ, Perpetuum mobile, Brillante, Zephyre, Nym-
phen Serenade, Romance, Die Unrubige, Vergangenens
Glück, եւ շատ մը ուրիշ կտորներ մեկնեան կը
սպասեն տպուելու, թէ եւ անտիպ՝ հոն արդէն ժո-
ղովրդականացր են, մանաւանդ «Երնէ՛կ էն օրե-
րուն»ը: Այս երիտասարդ Միթարեանը մեծ ա-
պագայ կը խոստանայ, միայն թէ՛ Կոմիտաս վար-
գապետի նման՝ գործելու առիթը չկորցնէ իրմէ:
Ռուսական գրաւումէն վերջ, ինքը միշտակ կը վարէ
Յիւրպէտէ Միթարեան վարժարանը, որովհետեւ
միւս երեք Հայերը կը ձերբակալուին ու կը գա-
տապարտուին խիստ աշխատանքի — քարակոփու-
թեան: Եօթը ամիս եւ 7 օր վերջ անտնք կ'ազատին
իրենց ծանր պարտականութեանէն, եւ հիմա միա-
սին լծուած են դպրոցական կրթիչ գործին՝ երա-
ժշտագէտին տեսչութեան տակ: Վարժարանը բայց
է հայ աշակերտութեան առջեւ առաւուտէն մինչեւ
կէսօր. կէսօրէն վերջ, հրեան հաստակութիւնը
կ'օգտագործէ այդ չէքը եւ ընդարձակ բակը:
Տիւրք երեսօլթ մըն է նաեւ քանի մը բախտարն-
գիր անձերու միաբանութեան բաժանումը:

Կ. Պոլսոյ Բանկայթիի հոշակաւոր լիւնն,
միշտ բարգաւաճ ու յառաջադէմ, միշտ ճկուն ու
համակերպող, այժմ ի վերջոյ սկսեր է կըլլ թըր-
քական ծանր լուծին տակ: Կը յուսանք որ այդ եւս
կ'անցնի նախորդ օրերու նման:

Յարդակակի Ա. սարեկիցը

ԾԱՆԻԿ ՄԸՆ ԱՆ ՈՍՄՐԵՑԱԻ

Օր. ՍԻՒՋԱՆ ԶԱՄՊԱԳՃԵԱՆ
Պ. ԿԱՐՊԻՍ ԿԵՕԼՃԻԳԵԱՆ

Մարտի 19, 28-4-1946 Նշանում Լոնտոն

ՅՈՒՇԱՏԵՏԻ

Հ. Յ. Գ. ԵԳԻՊՏԱՅԻ ԿՈՄԻՏԵՆ ԸՆԴՀ. Ժողովի կը հրաւիրէ քաղաքի եւ արուարձաններու բոլոր ընկերները, այս ուրբաթ իրիկուն, ժամը 8.30ին, ընկերվարականներու սրահը, 9 rue Victor Massé, métro Pigalle: Կը խօսի ԺԻՍՍԻՍ ՄԻՍՍԱԲԵԱՆ: Նիւթը՝ «Անգլիա եւ Հայկ. Դատը»:

ԼՐՈՆ. — Հ. Յ. Գ. «Վարանդեան» կոմիտէն ընդհ. ժողովի կը հրաւիրէ իր ընկերները այս հինգշաբթի իրիկուն, ժամը 8.30ին, 26 rue Paul-Bertի ներքնասրահը: Խիստ կարեւոր օրակարգ:

ՍԷՆՏ ԷՔԻԻՆ. — Հ. Յ. Գ. Նոր Սերունդի «Բարդէն Սիւնի» խումբը կազմակերպած է դասախօսութեան շարք մը Place du Peuple, Café Bessetի վերնաշարի: Պիտի բանախօսէ Պ. Հ. ԲԱՆՈՒՆԵԱՆ, 15 Մայիս իրիկուն ժամը 8ին: Նիւթ՝ «Ներսէս պատրիարք Վարժապետեան եւ 61րդ յօդուածը»: 16 Մայիս իրիկուն ժամը 8ին «Պետրոս Դուրեան եւ իր քերթումները»:

ՄԱՐՍԷԼ. — Պուլ. Օտտոյի Ֆր. Կապրյոս Խաչի մասնաճիւղի պարահանդէսը մայիս 18ին, շաբաթ իրիկուն ժամը 8.30ին մինչեւ կէս զիշեր, Central Barի մէջ, 117 Route Nationale (La Viste) sur le Plateau, Place d'Aixին առնելով 26թիւ հանրակառքը:

ՏԷՍԻՆ. — Դպրոցական հանդէս կազմակերպուած Հայ Կրթական Մարմնի կողմէ, կիրակի, 19 Մայիս, կէսօրէ վերջ ժամը 2.30ին, Հայ Ժող. Տան մէջ: Երբ, արտասանութիւն, կենդանի պատկեր, եւ թատերադրութիւն մը «ԱՅՆ ԳԻՇԵՐԻՆ», զպրոցականներու կողմէ:

ՓԱՐԻՉԻ ՀԱՅ ՏԻԿՆԱՆՅ ՄԻՈՒԹԵԱՆ զեղարուեստական պարանցիկ ցերեկոյթը, 19 Մայիս կիրակի ժամը 14—23, Hôtel Lutétiaի զեղեցիկ սրահներուն մէջ: Տոմսերու վաճառումը սովորական վայրերը:

Վ. ԱԼԹՈՒՆԵԱՆ կը ներկայացնէ Մեսրոպ Տէր Մինասեանի՝

ժառանգորդը

Տրամ 5 արք, Հայ ընտանեկան կեանքէ Շարաթ 18 Մայիս ժամը 9ին, Երեւանի թատրոնը, 22 rue St. Dominique, մեթրօ Invalides: Կը մասնակցին Տիկին Բ. Դաւիթեան, Տիկին Աղնաուորեան, Պ. Պ. Ս. Մաքսուտեան, Ն. Մարգարեան, Գ. Տէրվիշեան, Տիգրան Պողոսյան, Պ. Բիւզանդ, Կ. Պետրոսեան, Տ. Աղլաղանեան եւ Գէորգ Վարդանեան (կօմսմարտիկ): Տոմսերու համար դիմել ճաշարան Հ. Սասունի 31 rue d'Alexandrie - Paris:

ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐՈՒ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ անդամներէն կը խնդրուի որ իրենց հրատարակութիւններէն 5ական օրինակ փութեան տրամադրել բժ. Գալճեանի, 5 rue Maubeuge, ցուցադրելու համար Յրանսահայ Մշակութային Միութեան կազմակերպած ցուցահանդէսին, որ տեղի պիտի ունենայ Մայիս 30ին, ժամը 14.30ին, Սալ տիէնայի մէջ:

ԿՈՒՉՈՒԻ Կօշկակարի (bottier) լաւ դորձաւոր մը: Դիմել ՆՈՒՐԻՃԱՆԵԱՆԻ, 11 rue des Carmes, Paris (5):

ՆՈՒՐԻՃԱՆԵԱՆԻԹԻՆ. — Տիկին Սօֆի Պետիկիանի մահուան առթիւ փոխան ծաղկեպսակի Տէր եւ Տիկին Հրանտ Քէօսէեան 300 Փրանք կը նուիրեն Հ. Յ. Գ. Նոր Սերունդի Փարիզի մասնաճիւղին, ընկեր Սաչիկ Մկրտիչեան 1000 Փրանք Հ. Յ. Գ. Վեթերաններու Ծննդին: Տէր եւ Տիկին Կարօ Երանեան 500 Փրանք Հ. Յ. Գ. Վեթերաններու Ծննդին եւ 200 Փրանք Հ. Յ. Գ. Նոր Սերունդի Փարիզի մասնաճիւղին:

ETAB. Z A R E H
ԿՕՇԻԿԻ վերաբերեալ ամէն տեսակ պիտոյք, ՄՈՐԹ ԵՒ ԿԱՇԻ, 348 rue des Pyrenées, Paris (20): Հեռ. Men. 69-86:

CHEZ SASSOUNI
ՃԱՇՄԱՆ Հ. ԱԱՍՈՒՆԻ
ԲՈՂՈՐ ՆՐԱՃԱՇՄԱՆԵՐՈՒ ԺԱՄԱԳՐԱՎԱՅՐԸ
31 rue d'Alexandrie, Paris (2) Métro: Reaumu
Tél. GUT. 92-65

Հայկական կերակուրներ, ընտիր օղի եւ զանդեր: Հարսնիքի, նշանաւորի, կնուծի մասնաւոր սրահ: Ամէն երեկոյ, ժամը 7ին սկսեալ արեւելեան նուագ մասնակցութեամբ երգչուհի Տիկին Սօֆի Գարագաշի: Կիրակի օրերը զոյգ է:

ՏԷՍԻՆ. — Հ. Յ. Գ. Նոր Սերունդի Տէսինի մասնաճիւղը դժբախտութիւնն ունեցաւ կորսնցնելու իր հիմնադիր եւ ժրջան անդամներէն մէկը, Վարդաշակ Տէմիրճեան, որ շիջեցաւ Մայիս մէկին, մեկնելով հիւանդութեամբ, 23 տարեկան ծաղիկ հասակին մէջ, խոր սուղի մատնելով իր ծնողքը, եղբայրները, ընկերներն եւ ամբողջ զաւուրքը: Մնած էր 1923 Մայիս 23ին Հայկ. մէջ: Հայրը, ընկեր Մկրտիչ Տէմիրճեան — Մուշի Վարդով դաւառի Կոնստանդի զիւղացի — 1925ին Հայկ. մէջ Մարտէյի կուզայ, իսկ 1943ին ալ Տէսին: Ընկեր Վաղօնը Մարտէյի մէջ իր պատանեկութեան շրջանը կ'անցընէ Հ. Յ. Գ. Պատանեկան Միութեան մէջ, իսկ Տէսին հաստատութիւն վերջը կը մտնէ Հ. Յ. Գ. Դպրոցական հանդէսի շարքերը, մինչեւ «Նոր Սերունդ»ի կազմութիւնը, որու հիմնադիրներէն մէկը կը դառնայ:

Ինչպէս Մարտէյի մէջ, հոս եւս սիրուած էր բոլորէն, իր համեմատ բնատրուութեամբ եւ ազգային վառ զգացումներով: Հազու սկսած էր անձնական գործ մը ունենալ — կօշկակարութիւն — եւ նեցուկը կը դառնար բազմադամ ընտանիքէն եւ հօրը: Նոր նշանուած էր, եւ ահա «չարիւր Փալաք» եկաւ իր բախտի անիւր շրջելու:

Յուզարկաւորութիւնը կատարուեցաւ Մայիս 4ին: Աննախնիքաց բազմութիւն մը կը հետեւէր իր զաւաղին մինչեւ կերեզմանատունը, ուր իր ընկերներէն Արլին Փափաղեան՝ զեղեցիկ դամբանական մը կարգաց, բոլորի աչքերէն արցունքներ քամելով: Ներկայ էին Մարտէյէն, Վիէնէն եւ Ս. Էթիէնէն իր բոլոր ազգականները, հայրենակիցներն եւ ծանօթները: Մտղիկ պսակներ (16 հատ) բերած էին Տէսինի, Վիէնի եւ Ս. Էթիէնի Տարօն Տուրուբերանի Հայր. Միութիւնը, Տէսինի Կապրյո Սաչը, Նոր Սերունդը, Լիոնէյի բանուորները եւ մօտիկ ազգականները:

Օտար հողը թող թեթեւ գայ վրադ, ամէնուս սիրելի Վաղօ: — Վեհունի

SALLE GAVEAU, 45 RUE LA BOETIE

26 Մայիս, կիրակի ժամը 2.30ին, նուագա-հանդէս սենեակի երաժշտութեան (Musique de chambre), կազմակերպուած ԱՐԱ ՊԱՐԹԵԻՆԵԱՆԻ կողմէ: Կը մասնակցին Իրիս Պիլպիլեան (Երգ), Jeanine Cavard (Դաշնակ), Roger Loewenguth (Թաւջութակ), Marcelle Gaudais (տաւիղ), René Grujon (սարինգ): Յայտագրին մէջ՝ գործերը Տիգրանեանի, Կոմիտասի, Տէր Գրիգորեանի, Սպենդիարեանի, Պարթեւեանի եւ Պալի, Պերլիցի, Մօցարտի, Էւսթին: Տոմսերու համար դիմել Հրանտ Սամուէլի 51 rue Mr. le Prince, Dan. 88-65 եւ Սապօֆեանի, 39 rue de Trévis, Pro. 05-91:

ՇՆՈՐ ՀԱՅԱՒԻԹ. — Օր. Ֆլորա Շէօհլեան եւ Տիկին Ջարուհի Տէր Թովմասեան իրենց խորին շնորհակալութիւնը կը յայտնեն Ֆր. Կ. Սաչի Շրջ. վարչութեան եւ բոլոր ընկերակիցներուն, ինչպէս եւ ամէն անոնց որ անձամբ կամ նամակով ցաւակցութիւնը յայտնեցին իրենց եղբոր ՌԱՖԱ. ՅԷԼ ՇԷՅ ՀԱՆԱՆԻ զանազան մահուան առթիւ:

ՄՍՏՐԻՏԷՆ կը հեռագրեն թէ արիւնալի հրացանաճուրիկները տեղի ունեցան քաղաքին կեդրոնը, ոստիկանութեան եւ հանրային տակաւններու մէջ: Պաշտօնակից լուրին համաձայն, չորս-հինգ անարեւելիներ ուսմը մը նետած էին, որ չպայթեցաւ: Գաւառի մէջ ալ խլրտումներ կը նշուէին: 50 հոգի ձերբակալուած են միայն մէկ զիւղի մէջ:

ԾԱՆՈՒՄՑ ԵՍՐԿԱԲԱԺԻՆՆԵՐՈՒ վարձակալները պիտի չլրնան դուրս հանուիլ մինչեւ 1946 Դեկտեմբեր 31:

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ հետ կատարուած բանակցութիւնները նորէն ձախողեցան, ինչ որ պիտի սաստկացնէ պայքարը ոչ միայն Հնդկիւններուն եւ Իսլամներուն, այլեւ Հնդկիւններուն եւ Անգլիոյ միջեւ:

ԱՐԷՆԻՔԷՆ կը հեռագրեն թէ Սեպտ. 1ին հանրաբուէ պիտի կատարուի, ճշդելու համար երկրին վարչաձեւը, հանրապետութիւն կամ միապետութիւն:

ԱՆԳՍՏՐԱՅԻՆ կը հեռագրեն. — Իսմէթ Ինչօնիւ ճառ մը խօսելով Հայքի արտակարգ ժողովին մէջ, յայտարարեց. — «Պիտի հրաժարիմ հանրապետութեան նախագահութիւնէն, եթէ կուսակցութիւնը պարտուի յառաջիկայ ընտրութեանց մէջ»: Ինք անձամբ պիտի պայքարի կուսակցութեան զլուխն անցնելով: Արտաքին քաղաքականութեան առթիւ, նախագահը հաւաստեց թէ «Թուրքիոյ զիւրք մեծապէս բարեկամ է ատենէ մը ի վեր»:

22 ՍՈՎ.ՆԱՐ. ԵՐԿԻՐՆԵՐՈՒ պտտելէ վերջ Ամերիկա վերադարձաւ Պ. Հուլիսի եւ իր տեղիկազիրներ կայացուց նախագահին: Միտք չունի պարենաչափ հաստատելու Մ. Նահանգներուն մէջ, թէ եւ շատ ծանր կը դառնէ Եւրոպայի պարենաւորման վիճակը:

Le Gérant: H. AGONEYAN
Imprimerie DER AGOPIAN, 17 Rue Damesme - 13

Կիրակի օր մեծ հանդիսաւորութեամբ տօնուեցաւ Յարթականի առաջին տարեկիցը, թէ եւ օրը աննպաստ էր (անընդհատ անձրեւ կը տեղայ կիրակի ցերեկէն ի վեր): Զօրահանդէսին կը մասնակցէին դաշնակից զինուորներ ալ: Մասնաւոր ամպիրոններ շինուած էին էթուալի հրապարակին վրայ, Յարթական Կամարին շուրջը, օտար հիւրերուն համար: Անգլիոյ արտաքին նախարարը Լոնտոնի դպրոցէն նորէն, խորհրդակցելու համար վարչապետին հետ, իսկ Մ. Նահանգներու նախարարը ոչ միայն մասնակցեցաւ պաշտօնական արարողութեանց, այլեւ խառնուեցաւ հանդիսատեսներու բազմութեան:

Վարչապետը, Պ. Կուէն այս առթիւ ճառ մը խօսելով, փառաբանեց Իմադրական պայքարի քրանսան, որ «երբեք ծունկի չեկաւ յարթական բարբարոսութեան առջեւ», զօր. տը Կօլը, «որ 1940 Յունիս 18ի անմահ պատգամը արձակեց»: Ապա Ֆրանսայի երախտագիտութիւնը յայտնեց այն ժողովուրդներուն որ մասնակցեցան պայքարին եւ յարթականին, զատ զատ յիշելով Մեծն Բրիտանիան, Ս. Միութիւնը եւ Մ. Նահանգները: Յետոյ փառաբանեց ազատութեան գաղափարը եւ Ֆրանսայի զեղեցիկ աւանդութիւնները:

Նոյն օրը զօր. տը Կօլ ուխտի գնաց Գլէման սոյնի գերեզմանը, Վանտէի մէջ, ուր 5000 հոգի համախմբուած էին ամէն կողմէ: Փարիզէն ալ 50 օտար թղթակիցներ դպրոցէն էին, կարծելով թէ զօրավարը քաղաքական ճառ մը պիտի խօսի, բայց յուսախար եղան: Զօր. տը Կօլ խօսեցաւ միայն հինգ վայրկեան, յորդոր կարգաւոր ազգային միութեան: «Պատակտեալ աշխարհի մը մէջ, մեզի համար ապահովութիւն եւ ազատութիւն չկայ, արտակարգ պահանջներու դժուար պետութեան մը առաջնորդութեամբ եւ միացեալ ժողովուրդի մը խանդավառութեամբ»:

Պատասխանելով զանազան հարցումներու, զօրավարը յայտարարեց թէ իր թեկնածութիւնը պիտի չընէ յառաջիկայ ընտրութեանց մէջ: Հարցում մըն ալ եղաւ իր ապագայ ծրագիրներու մասին: «Ես մարդարէ չեմ», պատասխանեց զօրավարը:

ԳԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

58 ՀՈԳԻ ԿՍՍԱՂԱՆԻ ԴԱՏԱՊԱՐՏՈՒԵՑԱՆ Տախտուի մէջ, իրբեւ պատասխանատու Մաուրիտ հաուզէնի արգելարան — տանջարանին սարսափներուն: Երեք պաշտօնականներ ալ ցկեանս բանտարկութեան դատապարտուեցան: Դատապարտութիւնը տեսնեց 37 օր: Այս առթիւ ամերիկեան դատախազը խիստ ճար մը խօսեցաւ, իսկ նախագահը զատ զատ կանչել տալով ամբաստանեալները, կարգաց վճիռը: Բոլոր մահապարտներն ալ պիտի կախուին:

«ՊԱՏԵՐԱՉՄ ԹԷՀՐԱՆԻ ԵՒ ԹԱՒԻՉԻ ՄԻՆՔԵՆ» — Այն զրոյցը կը շրջի քանի մը օրէ ի վեր, իրբեւ հետեւանք Ատրպատականի հետ կատարուած բանակցութիւններու ձախողման: Զրոյցը հաղորդած էր Ռիւթէրի գործակալութիւնը, ըսելով թէ Թաւրիզի անթիւն համաձայն, Ատրպատանի կառավարութիւնը պատերազմ յայտարարած է Իրանի դէմ եւ թէ ազգ. բանակը Թէհրանի վրայ կը քալէ: Սակայն իրիկունս դէմ նոյն գործակալութիւնը կը խնդրէ ջնջել այդ լուրը, առանց ուրիշ բացատրութիւն տալու: Վերջին լուրերու համաձայն, Թէհրանի կառավարական ուժերը կազմ եւ պատրաստ դիրք բռնած են Կասպից ծովէն մինչեւ Իրաքի սահմանադրուիւր, Ատրպատականը կտրելով իր մնացեալ մասէն: Զրոյց կը շրջէր թէ կառավարութիւնը որոշած է ի հարկին զինու. զօրութեան զիմել, ծունկի բերելու համար Ատրպատականը, բայց վարչապետը հերքեց: Պաշտօնական շրջանակներու մէջ կը հաւաստեն թէ բանակցութիւնները պիտի վերսկսին: Ամէն պարագայի մէջ, կացութիւնը անորոշ է: Թաւրիզի անթիւն կ'ազդարարէր առջի օր. — «Եթէ իրանեան զօրքը մեր հողը մտնէ, պիտի կուտիք: Մենք պիտի չհրաժարինք մեր ժողովրդապետական ազատութիւններէն»: Հեռագրի մը համաձայն, Ատրպատականի վարչապետը թաւրիզ վերադարձած է:

218 ՌՈՒՍԵՐ՝ գոց բեռնակառքերու մէջ դրուելով, Պալարիոյ ամերիկեան իշխանութեանց կողմէ յանձնուեցան խորհրդային իշխանութեանց: Թերթերը կը գրեն թէ ստոնք վերջին մասն են այն գերիներուն որոնք միացած էին զօր. Վլասովի բանակին, կոտորու համար իրենց երկրին դէմ: Ամերիկացիները ամէն միջոց ձեռք առած էին, որպէս զի կալանաւորները չփորձեն փախչիլ կամ անձնասպան ըլլալ. բայց մէկը յաջողած էր վիզը կրտուրել ամերիկոյ մը: Այս խումբը մաս կը կազմէր 3400 գերիներու որոնք պահանջուած էին Ս. Միութեան կողմէ, իրբեւ պատերազմի ոճրագործներ: Ամբողջ գործողութիւնը կատարուեցաւ կատարեալ դադարնապահութեամբ:

ԼԷՈՆ ՊԼՈՒՄ յայտարարեց թէ երկու ամսուան բանակցութիւնները բարեկալոյ ելքի մը յանդամ են եւ թէ Ամերիկա չուտով պիտի յայտնէ արդիւնքը:

ՀԱՐԱՏ

ՕՐԱԲԵՐԹ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN FRANCE

HARATCH

Fondé 1925

R. C. S. 376.284

Directeur-Propriétaire : SCH. MISSAKIAN

17, Rue Damesme — PARIS (13^e)

Tél.: GOB. 15-70 — C. C. P. Paris 1678-63

Քվտնե՛րի՛ն. — Տար. 750, 6ամս 400, 3ամս 200 ֆրանկ

Jeudi 16 MAI 1946 Հինգշաբթի 16 ՄԱՅԻՍ

ԶԿԱՄԱԶԱՅՈՒՆՆԵՐ

ԿԸ ՅԵՏԱԶԳԵՆ

Նոր ժողով Յունիս 15իս

Նորէն յոռեան լուրեր, դժբախտաբար: Երէկուան թերթերը կը հաղորդէին թէ Պ. Պըրնս խնդրած է նախագահ Թրումբուէն Ուոշինգթընէն Փարիզ դիմել առ իր օղանաւը, վերադառնալու համար, քանի որ համաձայնութիւն չէ պոյսցած հիմնական հարցերու մասին: Վերջին պահուն, եթէ հաշտարար ելք մը գտնուի Թրիէսթի, ափրիկեան դաշտավայրերու եւ հատուցումներու մասին, թերեւս ժողովը փրկուի, այլապէս անօգուտ է շարունակել:

Այս պատճառաբանութեամբ ալ, Պ. Պըրնս յայտարարութիւն մը ուղղեց ժողովին, պահանջելով յետաձգել մինչեւ յունիս 15, իսկ հաշտութեան խորհրդաժողովը գումարել յունիս 1ին կամ 15ին: Անդիտոյ ներկայացուցիչն ալ հաւանութիւն յայտնեց այս առաջարկին, իսկ Մոլոթով ժամանակ խնդրեց, հեռաձայնով խօսելու համար Միւսթինի հետ: Ինք անձնապէս համաձայն չէ ժողովը յետաձգելու:

Ամերիկեան պատուիրակը միեւնոյն ատեն առաջարկեց բարեփոխել Իտալիոյ հետ կնքուած դիւնապարտը, իրեն առժամեայ կարգադրութիւն եւ Յունիս 15ի ժողովի օրակարգին վրայ դնել Աւստրիոյ հաշտութեան դաշնագիրը: Այս բոլոր առաջարկներուն քննութիւնը պիտի կատարուէ երէկ: Պ. Պիտո ի գուր շանաց հաշտեցնել հակա-մարտ կարծիքները:

Վիճարանութեան ընթացքին, քննուեցաւ նաեւ Ֆրանքեւտալական սահմանազուտի խնդիրը: Փարիզ կը պահանջէ սրբազրել սահմանագիծը, ձրանսայի կցելով երկու փոքր շրջաններ: Այս մասին ալ համաձայնութիւն դոյսցած չըլլալով, խնդրել նորէն յանձնուեցաւ մասնագէտներու քննութեան:

Առտուան նիստին մէջ, սուր վիճարանութիւն մը տեղի ունեցաւ Անդլեւսաքսոններուն եւ Մոլոթովի միջեւ: Մոլոթովը հարցուց թէ երբ հաշտութեան դաշնագիրը ստորագրուի, անպիւստատեղի կեանքին ուղտները պիտի քաշուին Իտալիայէն: Պ. Պըրնս պատասխանեց թէ արդարեւ պէտք է դաշնագրին մէջ յօդուած մը աւելցնել, որուն համաձայն պիտի պարպուին դաշնակից զինուորները, բաց ի անոնցմէ որ անհրաժեշտ են հաղորդակցութեանց ապահովութեան համար: Մոլոթովը յայտնեց թէ իրենք պատրաստ են պարպելու Պուլկարիան, եթէ Դաշնակիցները քաշուին Իտալիայէն: Ասոր վրայ Պէվիլի դիտել տուաւ թէ իր կառավարութիւնը հրահանգած է հետեւի Լոնտոնի մէջ տրուած որոշման, որուն համաձայն Պուլկարիան պէտք է պարպուի, հաշտութեան դաշնագրին ստորագրութենէն անմիջապէս վերջը: Գալով Ռուսաստանի, կրնան պահել անհրաժեշտ զօրքը, ապահովելու համար հաղորդակցութիւնները, իսկ Իտալիոյ մասին խօսք չկայ: Առտի Պէվիլի յայտարարեց Մոլոթովի, — Դուք Լոնտոնի մէջ յանձն առիք պարպել Պուլկարիան, ուրեմն յարկեցէք ձեր խոստումը: Իսկ եթէ Ռուսաստան ալ պարպէք, նոր զինուոր մը կատարած պիտի ըլլաք եւ մենք պիտի կրնանք պարպել Իտալիան:

Պ. Պըրնս միջամտելով, առաջարկեց պարպել Աւստրիան, բայց Մոլոթովը մերժեց:

Կէս օրէն վերջը վիճարանութիւնները շարունակուեցան նոյն միօրինակութեամբ, առանց որ եւ ի խնդիր լուծելու: Օրուան նախագահը, Պ. Պիտո, պահ մը հարցուց թէ ժողովը կ'ուզէ՞ զբաղել Թրիէսթի կամ ափրիկեան դաշտավայրերու խնդիրներով: Ոչ մէկը տրամադրութեան ունէր: Այն ատեն նախագահը հարցուց, — Հապա ինչո՞վ զբաղինք: Այս հարցումին վրայ էր որ Պ. Պըրնս ներկայացուց յետաձգման առաջարկը:

Երէկուան ժողովի օրակարգին վրայ կը դրտ-

պայքարը՝ լուսեղէն փաստն է այս իրողութեան:

«Մենք պարզ մարդոց պէս կը մտածենք: — Աւագակի մը ոչ գէնք եւ ոչ ալ բունի ուժը կրնան հարկադրել՝ որ մայր մը լքէ կամ յանձնէ իր զաւակը յարձակողին: Աշխարհագրութիւնը մեր ժողովուրդը դարեր շարունակ զբաւ լինելու եւ չի ներել քննութեան առջեւ: Բոլոր ժողովուրդներէն աւելի զո՞ս տուինք, բայց մնացինք, ու ապրեցանք: «Պէտք է, այս բոլորէն վերջ, միացած ըլլանք միակ մտածումի մը շուրջ: — Մենք, ազատ պէտք է ապրինք: Մեր միութիւնը, բոլոր վտանգներու դէմ մեր միակ ուժն ու ապակէն կրնայ դառնալ: Ներկայ փոթորիկներուն մէջ որ եւ է քննութիւն կամ փորձութիւն կը սպասէ մեզի, բարեկամներ պիտի ունենանք թէ ոչ: Այս բոլորը, երկրորդա-կան մանրամասնութիւններ են: Պէտք է գիտնանք միայն, թէ մեռած կամ կորսուած են բոլոր անոնք՝ որ պտակտեալ եւ անմիաբան եղած են, ու կործանած՝ բոլոր անոնք, որ գէշ ապագորդներ ընտրած են »:

Թափանցիկ է: — Մարդիկը երկու օրն անգամ մը կը պոռան թէ «մէկ մարմին - մէկ կամք» են, ու 24 ժամը անգամ մը՝ հարկ կը տեսնեն միութեամբ սրտառուէ կոչեր ուղղելու...: Մ.

ԹՈՒՐԿԻԱՆ ԵՐԷԿ ԵՒ ԱՅՅՈՐ

Կորուսած ազատութիւնը...

(Մասնաւոր քննադատութիւն Յասաթի)

Հալքի Համաժողովի յետաձգումը առիթ է տուած, որ թուրք թերթեր փնտռեն դարձեալ կորսուած ազատութիւնը...

Պոլսոյ «Հիւր Մէս»-ի մէջ, Անդարայի նախկին քաղաքապետ Ասաֆ Իւլայ կ'ողբայ այդ ազատութեան կարճատեւ կրկնեցումը եւ կը խորհրդածէ, «մեր նուիրական իրաւունքը» խորագրին տակ:

«Ժողովրդապետութիւնը բացատրել՝ բարդ գործ է: Յորչափ մարդ տէր է իր շուր նուիրական ազատութիւններուն, — ազատութիւն խօսքի, գիրի, իրիզի եւ մտածումի —, զաւակն է դեմոկրատ երկրի մը: Կրնանք ըսել, թէ թուրք հայրենիքը առեւնէ մը ի վեր տէր է այս ազատութիւններէն մէկ մասին: Եւ սակայն, անոնք (այդ ազատութիւնները) ենթարկուած են կարգ մը յետամուտ օրէնքներու կաշկանդումին: Մենք, բանաձեւած ենք եւ ընդունած կարգ մը օրէնքներ, որոնք ոչ միայն մեր ազատութիւններուն, այլեւ մեր Հիմն. Կազմակերպութեան օրէնքին հետ խառնը կը համեմատին:

«Առտիկանութեան թէ կազմակերպութեանց օրէնքները, օրինակ, բազմաթիւ ձեւակերպութիւններու եւ դժուարութեանց կ'ենթարկեն ազգային թէ քաղաքական խմբակցութիւններու կազմակերպութեան գործը: Մինչդեռ, Հիմն. Կազմակերպութեան Օրէնքի 68 եւ 70-երորդ տրամադրութիւնները բացարձակապէս կը հաստատեն մեր նուիրական իրաւունքները, — «Ամէն Թուրք» ազատ կը ծնի, ու ազատ կ'ապրի: Ազատութիւնը իրաւունք կուտայ մարդուն ընել բոլոր այն բաները, որոնք վնաս չեն պատճառը ուրիշներու: Թուրքերու բնակիչ իրաւունքն է միութիւններ ու կազմակերպութիւններ ստեղծել, գրել եւ խօսիլ ազատօրէն»:

«Իրողութիւնն այն է մինչդեռ, որ շղթայուած ու սահմանափակուած են այս ազատութիւնները: Անշուշտ, այդ կաշկանդումները կը հետամուտի բարերար արդիւնքներու, եւ սակայն, մենք մեր ետին ձգած ենք բոլոր փորձութիւններն ու չար մեկնութիւնները մեր օրէնքներուն:

«Թուրք յեղաշրջութեան արմատները շատ խոր թաղուած են, — հետեւաբար՝ որքան շուտ վերնան լայն ժողովրդապետութեան արդեւքները, այնքան լաւ՝ մեզի համար»:

«ՆԱԽ ՄԻՈՒԹԻՒՆ», ՄԻՈՒԹԻՒՆ»...

Ասաֆ Իւլայի մտածումներու թելը կը կտրէ երեսփոխան խմբագրապետ Յալիս Բըֆըր Աթայ, Հալքի պաշտօնաթերթ «Ուլուս»-ի խմբագրապետը:

«Գու միայն կաս յերուսապիւմ...: Այս շեշտը ունին «Ուլուս»-ի խմբագրապետին տողերը, որոնք կուգան անգամ մը եւս՝ հաստատել թէ կանխահայ է ժողովրդապետութեան մարզանքներով զբաղել, երբ միութեան թէ գործակցութեան անմիջակամ պահանջ կայ ներքին ճակատի վրայ:

Յալիս Բըֆըրի ցաւը հաճելի չղարշով մը թողարկուած է, «Անկախութեան պայքարի շեղաշուք արդիւնք...»: Եւ սակայն, իջէք քիչ մը խորունկ, եւ պիտի գտնէք թանձրացեալ արիւնք: («Ուլուս», 19 Մարտ 1946):

Իրեն, «Ուլուս»-ի կը թողում այս հաճելի աշխատանքը:

«Ամէն անգամ որ կ'անդրադառնամ Անկախութեան մեր պայքարին, կը զիտակցիմ այն առասպելային ուժին՝ որ մեր հերոս դաւակներու արիւնքն մէջ զօրած է ու խեղճած թշնամի բոլոր յարձակումներն ու վտանգները: Բազմաթիւ ան զամենք, դէմ յանդիման դռնուած ենք լինել թէ չի ներու հարցականին, բայց միշտ ալ պատուով դուրս եկած ենք: Եղաւ շրջան մը, երբ բոլոր դէպքերը ցոյց կուտային թէ չըլլալու եւ չապրելու դատապարտուած էինք: Աշխարհի վրայ, ոչ մէկ բարեկամ, ոչ մէկ համակիր ունէինք: Եթէր պետութիւն, մեր գլխուն վրայ կանգնած, խեղճ կը նայէին մեզի: Անտէր ու անպաշտպան էինք, ու, կարծես, մի՞նչու էր մեր անկաշտումը:

«Եթէ իրապէս ոսկորէ եւ միսէ կազմուած ըլլային մարդիկ, 1918ին կորսուած կ'ըլլայինք իրրեւ ազգ: Բայց, մարդիկ հոգի ունին, եւ յաղթել կամ պարտուել՝ դուրս կը մնան նիւթեղէն մեր գոյութեղէն: Որքան ատեն որ մարդ կը պահէ իր կամքը ազատ ու պատուով ապրելու, մահն իսկ պարտութիւն չի կրնար նկատուիլ: — Մեր անկախութեան

ժ.Ձ. ՏԱՐԻ — 18^e Année N^o 4701 — Նոր շրջան թիւ 340

Խմբագիր՝ Ծ. ՄԻՍՍԱԿԻԱՆ

Գին՝ 3 ֆր

Մեր ԽՕՄԲԸ

ԵՒ ՆՈՐԸ ԵՒ ՀԻՆԸ

Ճարին տասներկու ամիս կը զբաղինք նոր սերունդին փրկութեան հոգերով: Բայց, չենք մոռնար նոյնքան հիմնական հարց մը, — «Ժառանգորդներ» հասցնել նաեւ միջին սերունդէն:

Աւելի պարզ խօսինք: Հարեւանցի հաշուելով 1940էն ի վեր արձանագրուած մահերը, կը տեսնենք որ առ նուազն 60—70 դէմքեր մեզմէ բաժնուած են անդարձ:

Դէմքեր որոնք աղօսներ բացին, հետքեր ձգեցին ազգային մշակոյթի, ազատագրական պայքարի կամ հանրային գործունէութեան եւ հրապարակագրութեան մէջ: Մշակներ, վաստակաւորներ որոնք լուսաւորեցին մեր կեանքը, համաձայն իրենց աշխարհահայեացքին եւ կարողութեան, ինչպէս եւ միջավայրի պայմաններուն:

Եւ զեռ շատ մը կորուստներ անձանօթ կը մնան, պատահած ըլլալով ի սփիւռս աշխարհի:

Անոնց մէջ կային ուսուցիչներ, յեղափոխականներ, քաղաքական գործիչներ, դրաղէտներ եւ բանաստեղծներ, բայց մանաւանդ մարդիկ որ եփած էին հանրային գործունէութեան զանազան ճիւղերուն մէջ:

Անոնց անմիջական յաջորդները պիտի ըլլան անշուշտ, միջին սերունդի արժէքաւոր ներկայացուցիչները: Եւ աւելի նորերը:

Ուսուցիչներու մասին չենք խօսիր: Այդ ապարէզը ամէն բանէ առաջ դպրոց եւ նուիրում կը պահանջէ: Իսկ մեր ապրած երկիրը, ինչպէս Ամերիկան, անըզի անպատ է, այս տեսակէտէն: Աւելի բարատուոր են արեւելեան գաղութները, եւ մանաւանդ Սուրիա — Լիբանանը, Եգիպտոսը, Կիպրոսը եւ հեռուոր Իրանը:

Գրագէտներու եւ բանաստեղծներու մասին ալ չենք խօսիր: Բերքը առատ է, այս ճակատին վերայ, եւ խորապէս կազդուրիչ: Գոնէ երկար ատենի համար: Ունինք տաղանդներ — այստեղ եւ ամէն տեղ — որոնք եթէ օր մը ամփոփուին միացեալ հայրենիքին մէջ, փրկուելով մաշեցնող անբնականութենէն, ապահովաբար Երեւանը ինքն ալ պիտի դարձանայ:

Կը մնայ հանրային ասպարէզի ծառայողներու պարզան:

Իռն ազգային շրջանակի գործունէութեան համար թեկնածուներ չեն պակսիր: Ասպարէզն ալ սահմանափակ ըլլալով, մեծ պատրաստութիւն, հմտութիւն չի պահանջեր: Եկեղեցի, առաջնորդարան, Ազգ. վարչութիւն եւ յարակից խորհուրդներ ու ժողովներ միշտ ալ պիտի ունենանք, իրենց կամուրջ աշխատակիցներով: Կը բաւէ որ թեկնածուներ ըլլան վստահելի, խղճամիտ եւ ընդունակ՝ շինարար աշխատանքի:

Մեզի մտահոգութիւն կը պատճառէ հանրային գործունէութեան ամէնէն փշոտ ասպարէզը, — այն որ կը կոչուի քաղաքական:

Ուրեմն պոլիտիկոսներ: Ոչ եւ ոչ:

Ուղեք — չուղեք, դեռ երկար ատեն պիտի փնտռենք մարդիկ, որոնք ընդունակ ըլլան քաղաքական դատ մը պաշտպանելու: Ոչ միայն արտաքին աշխարհին առջեւ, այլեւ ներքը: Նոյն իսկ հայրենիքին մէջ եւ հայրենիքին համար:

Ինչ ուժեր ալ ունենանք Հայաստանի եւ ամբողջ Ս. Միութեան մէջ, նորէն պիտի մնան շատ մը թափուր դիրքեր: Ասպարէզներ, պարտակառուութիւններ որոնք պատրաստուած ուժեր, տաճաններ կը պահանջեն: Մշակներ որ կարենան պաշտպանել այս ժողովուրդին շահերը, լրացնելով պետութեան գործը:

Արդ, Արտասահմանի միջին սերունդէն քանի՞ հոգի պիտի կրնայիք համբել, որ պարտք սեպած ըլլան բունի անհետացածներուն եւ յոգնածներուն տեղը: Ոչ միայն անոնց տեղը բունի, այլեւ դերապանցի զանոնք իրենց պատրաստակամութեամբ, յարատեւութեամբ եւ մանաւանդ պաշարով:

Չենք ժխտեր, շատեր կան որ ասպարէզ նետուած են եւ կ'աշխատին արժեքներ իրենց արգար յաւակնութիւնները: Նոր սերունդին մէջ ալ:

Եւ սակայն, ուրիշ բան է պատահաբար գործի մը կապուել, եւ բոլորովին ուրիշ բան՝ ասպարէզին ծառայել յարատուօրէն: Միշտ ջանալով լրացնել անոր տարրական պահանջը, — պաշար:

Այդ պարտականութիւնը ամէնէն առաջ կ'իյնայ քաղաքական հոսանքներուն վրայ: Եւ դիւրութիւններ չեն պակսիր, եթէ մէկդի դնենք «ամաթէօր»-ի հոգեբանութիւնը:

«Արուեստասէրները» բառական չեն, լեցնելու համար բացը որ հետզհետէ կը շեշտուի: Ծ.

նուէր նաեւ գերմանական խնդիրը: Նշանակալից լուր մը, այս առթիւ:— Գերման քրիստոնէայ դեմոկրատ կուսակցութիւնը բանաձեւ մը քուէարկած է, որով կը պահանջէ ինքնավարութիւն շնորհել Հռենսեան շրջանին եւ Գերմանական Դաշնակցութիւն մը հաստատել, մայրաքաղաք ընտրելով մեծ կեդրոն մը արեւմտեան Գերմանիոյ մէջ, օրինակ՝ Ծրանքֆորթը:

Թարսնու Թաւրիզ դիմ դիմաց

Թէհրանէն կը հեռագրեն թէ կառավարութիւնը վճռած է շարունակել իր խաղաղասիրական քաղաքականութիւնը, կարգադրելու համար Ատրպատականի խնդիրը: Բայց եւ այնպէս բանակը մեծ պատրաստութիւններ կը տեսնէ, ի հարկին կոտորու համար: Ինչպէս կը կարծեն թէ զինուորական դասը եւ հրետանին շրջանի հաւատարմ գեղերը կը խուսափին կառավարութեան իշխանութենէն, ուժ տալու համար երիտասարդ Շահին:

Վարչապետը, Ղազմ Սալթանէ հաստատելով բանակցութեանց յետաձգումը, յայտարարեց թէ կը ջանայ խաղաղութեամբ լուծել հարցը եւ թէ Ատրպատականի ներկայացուցիչներուն «բարի դիտարկութիւնները եւ հայրենասիրութիւնը բաւական պիտի ըլլան փարատելու ընդհանուր անձկութիւնը»:

Զինուորական իշխանութիւնը կը ծանուցանէ թէ մէկ վաշտ զինուոր ճամբայ ելած է Ղազուինէն Պէնտէր Փահլէվի եւ թէ 50 նոր կառքեր եւս պիտի մեկնին դէպի հիւսիս, իւրաքանչիւրը 25 զինուորային: Ատրպատականի ազգ. բանակն այլ պատրաստութիւններ կը տեսնէ, ի հարկին ճակատելու համար: Քիւրտ ցեղապետ մը յայտարարեց թէ իր հետեւորդները, որոնք վերջերս երես դարձուցած էին Ղազի Մուհամմէտի «Բրտական հանրապետութեան», 5000 հրացան ստացած են իրանեան բանակէն: Յեղապետը աւելցուց թէ մեծաքանակ զէնք, ռազմանիւթ եւ ուռետա կը փոխադրուի Ատրպատականի սահմանադրուի հաւատարմ ցեղերուն: Մէջտէն հասած ճամբորդներ կը պատմեն թէ կրօնական առաջնորդները կը յորդորեն հաւատացեալներուն պայքարել ձախերուն դէմ եւ ընդդիմանալ հողերուն գրաւման եւ վերաբաշխումին, «որովհետեւ, իսլամական օրէնքով, հողային սեփականութիւնը նուիրական է»:

Թաւրիզէն հասած ճամբորդ մը պատմեց է թէ Ատրպատականի բանակը ռազմափորձեր կը կատարէ ուսակական համազգեստներով եւ թէ շարքեր երկու անգամ զինուորական դասընթացներ տեղի կ'ունենան քաղաքացիներու համար: Իր տեղեկութեանց համաձայն, Ատրպատականի բանակը 24.000 հոգիէ կը բաղկանայ: (Իրանի կեդրոնական կառավարութեան ուժերը կը հաշուեն 70—80.000):

*ԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԱՆՈՒՄԻ լաւտես յայտարարութեանց առթիւ, թերթերը կը գրեն թէ հաւանական է որ Ռուսիայի թիւն այս շարքու յայտնէ փոխտուրքեան դեմարտները եւ պայմանները: Կը կարծուի թէ փոխտուրքեան դեմարտը պիտի ըլլայ 125—185 միլիոն սթերլին: Մ. Նահանգները միեւնոյն ատեն պիտի ջնջեն Փոխ - Վարձի օրէնքով տրուած վարկերը, որով ընդհ. դումարը կ'ըլլայ 250 միլիոն սթերլին: Յետոյ, Ֆրանսա պիտի ստանայ 70—80 ամերիկեան նաւեր: Փարիզի մէջ կը կարծեն թէ տրամադրելի վարկերուն 80 առ հարիւրը պիտի ծախսուի հով նիւթեր գնելու, — բամպակ, պողպատ եւ մաս մը ածուխ, իսկ մնացեալ մասը պիտի յատկացուի մեքենաներու եւ արդիական սարքաւորման: Կը նշանակէ թէ հարկ պիտի ըլլայ նոր վարկեր խնդրել յառաջիկային:

ՊԱՇՏՆԱԹԵՐԹԸ Մայիս 12ին հրատարակած էր Գերագոյն Ատենանի վերակազմութեան օրէնքը, 1946 Մայիս 10 թուականով, որ կ'ըսէր թէ անդամները պիտի ընտրուին «համաձայն Սահմանադրութեան 91րդ յօդուածին»: Արդ, Սահմանադրութիւնը մերժուեցաւ Մայիս 5ի ընդհ. քուէարկութեամբ, ինչ որ անպակեր կը դարձնէր այդ հրատարակութիւնը: Հարկ եղաւ ջնջել պաշտօնաթերթերն այդ թիւրը եւ նոր մը տպել, վերջնելով նոյն հրամանագիրը: Տակաւին չէ ճշդուած թէ ո՞վ է պատասխանատուն այս անհոգութեան: Պաշտօնաթերթի վարչութիւնը կ'ըսէ թէ իրենք միայն տպագրիչներ են եւ պարզապէս կը տպեն ինչ որ ստանան ...

ԲՐԱՍԿԱՆ ՍՊԱՅԱԿՈՅՏԸ հրատարակեց իր առաջին զեկոյցը, որուն համաձայն Սաքրի մէջ (Իրանեան Գիւրտիստան) կառավարական զօրքը յարձակած, բայց ետ մղուած է, 130 մեռելներ եւ մեծաքանակ սուր ճգնելով:

26. ՀԱՅՐԵՆԱՍԻՐՆԵՐ Գերմանացիներուն մատնած ըլլալու ամբաստանութեամբ, դատի քաշուած են 6 գործակիցներ, Վերսայլի մէջ: Ամբաստանագիրը կ'ըսէ թէ ասոնք աղատաբողութեան կոչներու ընթացքին Շաթուրի մէջ Գերմանացիներուն յանձնած էին ԷՖ - ԷՖիներ, զիտնալով հանդերձ որ պիտի գնդակահարուին: Եւ իսկապէս, Գերմանները վերջին պահուն գնդակահարած էին բոլորը: Ամբաստանեալներուն մէջ կան երկու

ՄԱՐԶԱԿԱՆ ՅԱՋՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

ՏԷՄԻՆ. — Զարմանքով կը կարդանք կարգ մը թերթերու մէջ թէ Մ. Բ. Մ. Բ. Լիոն-Տէմին մասնաճիւղը կը գործէ կուսակցութեան մը հոս - վանաւորութեան տակ: Վերջին անգամ ըլլալով կը փութանք յայտարարել թէ, մեր մասնաճիւղը, անկախ բոլոր կուսակցութիւններէն եւ զոյնդոյնի կազմակերպութիւններէ, կը գործէ իր հիմնադրներու դժած ուղղութեամբ, պահելով մեր ազգային դիմադրիչը: Ան ունի 160է աւելի եռանդուն անդամներ, 11 հոգինոց վարչութեան կողքին 5 հոգինոց մարզական յանձնախումբ մը, որ եռանդուն աշխատանքներ կը տանի:

× Cremieux U. Տ.ը Մայիս 5ին կազմակերպած էր թուումուս տը Սիքս 64 խումբերու միջեւ որոնց կարգին հրաւէր ստացած էին նաեւ մեր մասնաճիւղը եւ Փոն տը Շէրբի 2. Մ. Բ. Մ. Բ.: Ուղեր շատ յաջող եւ կարգապահօրէն ընթացան: Փոն տը Շէրբի կը մասնակցէր երկու խումբերով, նոյն պէս մենք: Մինչեւ քառ տը ֆիմալ հայկական խումբերը յաղթական էին, վերջին խաղարկութեան մասնաճիւղիս Ա. Սոմբը Բ. Ի դէմ վիճակ ուելով, ստիպուած, մեր Բ. խումբը առանց խաղալու պարտուած յայտարարեցինք: Փոն տը Շէրբի խումբն ալ մեր աշակերտին դէմ ըլլալով, եղբայրական խաղարկութենէ վերջ Փոն տը Շէրբի ալ պարտուեցաւ 3—1, եւ խաղը սկսաւ երկու ֆիմալիստ խումբերու՝ Տէմինի Փրանսական O.L.D. եւ մեր Ա. խումբի միջեւ: Ֆրանսացիները վստահօրէն դաշտ իջան: Ժողովուրդը անհամբեր արդիւնքներ կը սպասէր եւ ահա մեր երիտասարդ խմբապետը, Միլոտիէան նշանակեց առաջին նշանակեց: Երկրորդ նշանակեց նուրը խաղարկութիւնով մը նշանակեց Յ. Գաղանձեան: Նոյնքան ճարպիկ խաղացող Ա. Գաղանձեանի փասով Յ. Գաղանձեան նշանակեց Գ. նշանակեց: Ֆրանսացիները շատ աշխատեցան գոնէ մէկ նշանակեալ շահել, բայց զուր անցան իրենց ջանքերը: Մեր քաջ ընդապաւնը, Մուրատ շատ մը վստահաւոր նշանակեց արդատեց եւ խաղէն վերջ կազմակերպիչները արժէքաւոր բաժակը յանձնեցին մեր վարիչին որ իր կարգին խմբապետին յանձնելով, տղաքը ուրախ զուարթ վերադարձան Տէմին, ուր վարչութիւնը ծաղկեպսակներով դիմաւորելէ վերջ, փոքրիկ հացկերտ թիով մը որ դիմիով հիւրասիրեց տղաքը: Մինչեւ իրիկուան ժամը 11 վայելեցինք հայկական տը միմիւրրտ մը:— Մ. Դալիլեան

կիներ, մէկը յղի եւ Յոյն մը: Ուրիշ երկու կիներ փախած են:

ԵԳԻՊՏՈՍԻ անդ. զինուորները սկսած են պարպել դանազան զօրանոցներ, ինչպէս յայտարարեց վարչապետը, Սըտքի փաշա:

ԳԵՐՄԱՆԻՈՅ Ֆրանսական շրջանի պատերազմի ոճրագործներուն դատը սկսաւ երէկ: Ամբաստանալիքը ըսնի մը հարիւր կարնաւորներու մահուան պատասխանատու կը նկատէ 33 ամբաստանեալներ, 1943 Յուլիսէն 1944 Դեկտեմբեր:

ԴԱՄԱՍԿՈՍԻՆ կը հեռագրեն թէ պատասխանելով Պաղեստինի Արաբներու դիմումին, Սուրիոյ խորհրդային ղեկավարը յայտարարած է թէ Ս. Միութիւնը պատրաստ է պաշտպանելու արաբական տեսիլներ, եթէ ինչորք Միացեալ Ազգերու Ժողովին ներկայացուի:

ՍՈՒՐԻՈՅ կառավարութիւնը հրամայեց լուծել բոլոր քաղաքական կուսակցութիւնները: Ահարարի վարիչը ծոմ կը պահէ հինգ օրէ ի վեր:

ՊԱՆՏԵՆՈՅ քաղաքապետութեան ընդհ. քարտուղարը, Փիւռի, ձերբակալուեցաւ, ամբաստանուած ըլլալով թէ մեծաքանակ պարսկաստաններ կը ծախէր իր շահ իր պատկանած կուսակցութեան:

ՈՒԹ ՄԱՐԻԿԱՅԻ ԶԻՆՈՒՈՐՆԵՐ փորձեցին փախչել Մորթիէ գորանոցէն (Լիւա), կաշկանդելով պահակը եւ բանալիները յափշտակելով: Մէկը սպաննուեցաւ, հինգը ձերբակալուեցան, երկուքն ալ, որոնք երկու գերման գերիներ զգետնելով անոնց հազուատները հազած էին, նոյնպէս ձերբակալուեցան:

ՀՈՒՆԳԱՐԻՈՅ ազգ. դրամատունը մէկ միլիոն փէնիկոնոց թղթադրամներ հրապարակ հանեց, գիւրացնելու համար առուծախը:

ՇՆՈՐՀԱԿԱՒԻԲ. — Փիւռէ Սիւռ Առժանէն Այրի Տիկին Ն. Մայրեան եւ Պ. Եղիա Մարտեան իրենց խորին շնորհակալութիւնը կը յայտնեն ամէն անոնց որ անձամբ, նամակով կամ ծաղկեպսակով իրենց ցաւակցութիւնը յայտնեցին իրենց ամուսնոյն եւ հօր ողբացեալ ՓԱՆՈՍ ՄԱՂՈՅԱՆԻ մահուան առթիւ:

ՁԵՐ ՆԵՐԿԻ գործերուն եւ տախտակամաճեքու յղուածին (rabotage et entretien des parquets) համար դիմեցէ՛ք հետեւեալ հասցեին. — ԱՊՐԱՄԵԱՆ, 5 Rue d'Italie.

Le Gérant : H. AGONEYAN
Imprimerie DER AGOPIAN, 17 Rue Damesino - 13

ՅՈՒՇԱՏԵՏԻՐ

Հ. Յ. Դ. ԵԳԻՊՏՈՍԻ կոմիտէն ընդհ. Ժողովի կը հրաւիրէ քաղաքի եւ արուարձաններու բոլոր ընկերները, այս ուրբաթ իրիկուն, ժամը 8.30ին, ընկերակարաններու սրահը, 9 rue Victor Massé, métro Pigalle: Կը խօսի ԺԻՐԱՅԻ ՄԻՍԱԲԵԱՆ: Նիւթը՝ «Ամալիա եւ Հայկ. Դատը»:

ՄԱՐՍԷԼԻ Հ. Յ. Դ. «Վարդան» ենթակոմիտէն տէն Ժողովի կը հրաւիրէ իր շրջանի բոլոր ընկերները, այս կիրակի կէս օրէն վերջ ժամը 3ին, ծանօթ հաւաքատեղին: Կը խնդրուի միասին բերել անդամատեքը:

ԼԻՈՆ. — Հ. Յ. Դ. «Վարդան» կոմիտէն ընդհ. Ժողովի կը հրաւիրէ իր ընկերները այս հինգշաբթի իրիկուն, ժամը 8.30ին, 26 rue Paul-Bertի ներքնասրահը: Որտե՞ր կարեւոր օրակարգը:

ՍԷՆՏ ԷՔԻԻՆ. — Հ. Յ. Դ. Նոր Սեբուսեղի «Բարեկէն Սիւնի» խումբին դասախօսութիւնը Place du Peuple, Café Bessetի վերնաշարիկը: Պիտի բանախօսէ Պ. Հ. ԲԱՂԻՆԵԱՆ, 16 Մայիս իրիկուն ժամը 8ին «Պետրոս Դուրեան եւ իր քերթուածները»:

ՄԱՐՍԷԼ. — Հ. Յ. Դ. Նոր Սեբուսեղի առաջին խմբական պտոյտը՝ Մայիս 19ի կիրակին, բոլոր խումբերու մասնակցութեամբ: Շոգեկառքը Gare St. Charlesէն կը մեկնի ժամը 6.30ին, վերջին ժամագրայւար Aixի կայարանը ժամը 7.30—8:

ՄԱՐՍԷԼ. — Համախարրերը. Միութեան ընդհ. անդամական Ժողովը՝ այս կիրակի առաւօտ ժամը ճիշդ 9ին, պար Մասիս: Կը հրաւիրուին նաեւ ոչ - անդամները:

Հ. Յ. Դ. «Վարդան» ենթակոմիտէն իր խորին ցաւակցութիւնը կը յայտնէ Տէր եւ Տիկին Սալիկ Միլոտիէանի, իրենց դաւակներուն, Պ. Յ. Պետիկեանի, Մարդիկ եւ Պետրոս եղբայրներու, նաեւ ընտանեկան բոլոր պարագաներուն, Տիկին ՍՕՅԻ ՊԵՏԻԿԵԱՆԻ դառնաղետ մահուան առթիւ:

Պ. ՉՕՊԱՆԵԱՆ հրաւիրուած ըլլալով երթալ Նիս, այս կիրակի, ապրիլեան սպահանդէսին Փրանսերէն ճառով մը մասնակցելու համար, իր դրական դասախօսութիւնը, զոր պիտի կատարէ այս շաբաթ օրը Բարեկոթմականի Մատենադարանին մէջ, յետձգուած է Մայիս 25ի շաբաթ օրուն ժամը 5ին:

«ՅԱՒԱՉ» ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

Վիլֆրանչէն (Լիոն) Պ. Զարեհ Փորովեան մէկ տարեկան «Յառաջ» կը նուիրէ Պ. Զիլինկիւրեանի, Վիկին:

ՍԷՆՏ ԷՔԻԻՆ. — Տէր եւ Տիկին Վարդան Սրիմեան իրենց խորին ցաւակցութիւնը կը յայտնեն ընկերներ Սարգիս եւ Պետրոս Պետիկեաններու, ինչպէս եւ Տէր եւ Տիկին ընկեր Սալիկ Միլոտիէանի, իրենց սիրեցեալ մօր եւ զօրանչին դառնաղետ մահուան առթիւ:

ԸՆՏԱՆԵԿԱՆ ՄԵԾ ԽՆՁՈՅԻ

Յր. Կապոյտ Սալիկ Լիոնի մասնաճիւղին կողմէ այս կիրակի կէս օրէ վերջ, ժամը 15ին 24, 130 rue Tête d'Or սրահին մէջ: Հայկական եւ եւրոպական պարեր: Ճոխ եւ առատ պիւֆէ մատչելի դիմերով: Զանազան անակնկալներ:

ՇՆՈՐՀԱԿԱՒԻԲ. — Այրի Տիկին Կ. Տօնէլեան,

Տէր եւ Տիկին Լ. Տօնէլեան, Տէր եւ Տիկին Ա. Տօնէլեան, Տէր եւ Տիկին Ք. Տօնէլեան եւ պարագաները շնորհակալութիւն կը յայտնեն բոլորանոց որ աձամբ, նամակով եւ ծաղկեպսակով ցաւակցութիւն յայտնեցին Պ. ԿԱՐԱՊԵՏ ՏՕՆԷԼԵԱՆԻ մահուան առթիւ:

Վ. ԱԼԹՈՒՆԵԱՆ կը ներկայացնէ Մետրոպ

Տէր Միլոտեանի՝

ժառանգորդը

Տրամ 5 արար, հայ ընտանեկան կեանքէ Շարաթ 18 Մայիս ժամը 9ին, Երմիթի թատրոնը, 22 rue St. Dominique, մեթրո Invalides: Կը մասնակցին Տիկին Բ. Դաւիթեան, Տիկին Ազնաւորեան, Պ. Պ. Ս. Մարտեան, Ն. Մարգարեան, Գ. Տէրվիլեան, Տիգրան Պողոստ, Պ. Բիւզանդ, Կ. Պետրոսեան, Տ. Աղլաղանեան եւ Գէորդ Վարդանեան (կուսամարտիկ):

Տոմսերու համար դիմել ճաշարան Հ. Սասունի 31 rue d'Alexandrie - Paris :

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԵԾ ՃԱՇԱՐԱՆ

ՏՅՕՔԵԱՆԵՐ ԳԼԻՄԱՆ ԵՒ ԳՕՓԱՐԱՆԵԱՆ 6 rue Maubeuge, Paris (9), Métro Cadet, Notre Dame de Lorette: Tél. TRU. 85-47

Առաջնակարգ օդի եւ ամէն տեսակ բմպիլիներ ընտիր աղանդի պոլսական կերակուրներ եւ անուշեղէն: Ընդարձակ եւ օդաւէտ սրահ Ամէն երեկոյ ժամը 7էն սկսեալ Գէմանչիստ ՅՈՎ. ՀԱՆՆԵՍՄ, ուստի ԱԼՅՕՆՍԵ երգիչ ԱՐԹԱԲԻ կը նուազեն եւ կ'երգեն հայկական եւ արեւելեան երգեր: Գոց է Զորքաբթի օրերը:

ՀԱՐԱՇ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN FRANCE

HARATCH

Fondé 1925
R. C. S. 376.286

Directeur-Propriétaire : SCH. MISSAKIAN

17, Rue Damesme — PARIS (13^e)

Tél.: GOB. 15-70 — C. C. P. Paris 1678-63

Փստ. 664-ԿԻՆ. — Տար. 750, Ճամս. 400, Յամս. 200 ֆրանկ

Vendredi 17 MAI 1946 Ուրբաթ 17 ՄԱՅԻՍ

ՉՈՐՄԵՐՈՒ ԽՈՐՀՈՒՐԳԸ
ՅԵՏԱԶԳՈՒԵՑՄԻ ՅՈՒՆԻՍՍ 15ԻՆ

Գերմանական խնդիրը
Նոյեմբեր 12ին

ՓՁ. ՏԱՐԻ — 18^e Année N^o 4702. Նոր շրջանի քիւ 341

Խմբագիր՝ Ե. ՄԻՍԱԿԻԱՆ

Գին՝ 3 ֆր

Մեր ԽՕՍԻԸ

ՇԻՆԱՐԱՐ ՄԻՈՒԹՈՒՆՆԵՐ

Դատելով թերթերու մէջ հրատարակուած կու-
ղերէն եւ գեղարվեստի, Հայր. եւ Կերպարանաց Մի-
ութիւնները սկսած են համախմբուել, ի նախատե-
սութիւն յառաջիկայ ներդրումին:

Ժողովի ազդերը կը տեղան ամէն օր: Փոքր
Միութիւնները կը միանան մեծերուն, — Համախար-
բերդրական, Համասերաստեան, Տարոն-Տուրու-
բեան, Վասպուրական եւն.:

Որոշ տեղեկութիւններ չունինք իրենց դործ-
նական առաջադրութեանց մասին: Կենթադրեմք
թէ անոնք որ արդէն դիւղեր եւ աւաններ ունին
Հայաստանի մէջ, կը խորհին դարկ տալ նոր բնա-
կարաններու շինութեան: Ուրիշներ՝ ճանապարհ-
հաճախ ճարել կարօտ եւ բարձրագոյն ընտանիք-
ներու: Կարճ խօսքով՝ դիւրացնել վերադարձը:

Անշուշտ հրահանգներ ստացած են եւ նիւթեր
ուսին ձեռքի տակ, ըստ այնմ դասաւորելու հա-
մար իրենց աշխատանքները:

Կը կարծենք թէ իրենց առաջին գործը պիտի
ըլլայ մարդահամար մը փորձել, —

Քանի՞ հարիւր կամ հազար հայրենակից կը
հաշուէ այսինչ շրջանը:

Ո՞րքանը արձանագրուած են եւ պատրաստ՝
մեկնելու առաջին առթիւ:

Ո՞րքանը պիտի կրնան ճամբայ ելլել իրենց
սեփական ծախքով:

Այս կամ այն Միութիւնը ի վիճակի՞ է ստանձ-
նելու 5, 10 կամ քան բնակարաններու շինութիւ-
նը, համաձայն կառավարական ծրագրին եւ ըն-
ծայուած դիւրութեանց (հող, քիւնիւթ եւն.):

Հրատարակուած պաշտօնական տեղեկու-
թեանց համաձայն, հայրենադարձի առաջին կա-
րուանները պիտի մեկնին արեւելեան դաղութիւն-
բէն: Ամէնէն առաջ՝ Սուրբա - Լիբանանէն, ուր
վարուցան անդամ չեն կառարած, անհամբի-
սպասելով մեկնումի հրահանգին: Յետոյ կարգը պի-
տի դայ պաշտօնական երկիրներու:

Կը նշանակէ թէ՛ լայն ժամանակ ունինք, մեր
գաղութին համար, ուր արձանագրութիւններ կը
կատարուին ամիսներէ ի վեր:

Անհրաժեշտ է օգտագործել այդ ժամանակը:
Հարկ է նախ սերտ կապ հաստատել իւրաքանչ-
էր շրջանի Հայր. Միութեանց զանազան թեւե-
րուն միջեւ, որպէսզի թիւրիմացութիւններ կամ
խաչածեւումներ չպատահին:

Անշուշտ Ներգաղթի Կեդր. Յանձնաժողովը
հրահանգներ հաղորդած է:

Ամէն պարագայի մէջ, իւրաքանչիւր Հայրե-
նակցական կամ Կերպարանաց իրեն յատուկ ծրագիր
մը պէտք է ունենայ, համարանքով եւ նիւթական
յանձնառութիւններով: Այդպիսի ծրագիր մը կըր-
նայ դիւրացնել ընդհ. հանդանուցութեան ձեռնար-
կը, որ կը պահանջէ արտակարգ ճիւղ եւ բարձր-
կողմանի կազմակերպութիւն:

Ճամբայ մը հարթուած է արդէն մեր գաղու-
թին մէջ, զանազան «արտէլ»ներով:
Այդ արհեստակցական խմբակցութիւններու
օրինակին կրնան հետեւիլ Հայրենակցականներն
ալ, կազմելով Շինարար Միութիւններ:

Կը կարծենք թէ ամէնէն համեստ Միութիւնն
ալ կրնայ գլուխն անցնել որոշ ձեռնարկի մը, —
դպրոց, արհեստանոց, աշխատանոց եւն.: Աւելի
մեծերն ու հարուստները կրնան ստանձնել ամբողջ
թաղի մը շինութիւնը, բնակարաններով եւ անու-
ներով: Ձեռք ձեռքի տալով արդէն տեղաւորուած
հայրենակիցներու հետ:

Այս տեսակ յանձնառութիւն մը ամէն բանէ
առաջ կը պահանջէ ուժերու համախմբում եւ կու-
կազմակերպութիւն:

Այլեւս անիմաստ են գիւղի, աւանի, վերի կամ
վարի թաղի տեղական հայրենասիրութեան անջա-
տումները, որոնք շատ երկար տեւեցին:

Նորէն կը յիշեցնենք հիմնական պահանջ մը,
— Հայր. Միութիւնները համախմբել վեց նա-
հանգներու վրայ, անոնց միացնելով Կիւրիկեան եւ
Սեւ ծովեան շրջանները:

Այսքանը արդէն ճամբուն կէսն է:

Եթէ այդ կեդրոնացումը դրուի հանուր, շատ
մը ծրագիրներ ինքնին կը պարզուին: Աւելորդները
կը մաղուին, անմիջականները ձեւ ու մարմին
կ'առնեն, եւ իւրաքանչիւր Միութիւն կը դիտնայ
իր պարտականութիւնը:

Տեսակ մը աշխատանքի բաժանում, որուն
չնորհիւ շարժման մէջ պիտի դրուին ամէնքն ալ:

ՀԱՐԿՍ ՀԱՐԿԱՒՈՐԱՑ...

Պատերազմէն առաջ այս նիւթը քանի մը տո-
ղով արժարժած էինք «Յառաջ»ի մէջ, Կոմիտաս
վարդապետի հեղինակի տուրքին կը վերաբերէր:
Սմբերիկահայ մամուլը արտասուեց:

Անցեալները կարգ մը երաժշտական գանցա-
ռութիւններ թուեցի գրութեան մը մէջ, «Պատիւս
արժանաւորաց» վերնագրով եւ խոստացայ նիւ-
թական գանցառութիւններու մասին ալ խօսիլ:

Տարիներ առաջ հարցումս հետեւեալն էր. —
«Հապա հեղինակի իրաւունքը»: Պօքս Կոմիտաս
վարդապետի հեղինակի տուրքին կը վերաբերէր:
Այսօր այս խօսքը կ'ընդհանրացնեմ եւ կը հար-
ցնեմ. — «Հապա հեղինակներու իրաւունքը»: Այս
հարցումը ինքնաբերաբար կը ծնի, երբ ամէն օր
թերթերուն մէջ կը կարգամ անհամար յայտարար-
ութիւններն ու աղբիւրը, այս կամ այն հանդէսին
կամ դեղարուեստական հաւաքովի մասին:

Անշուշտ չափազանց ուրախառիթ է տեսնել
այս շարժումը որ ուրիշ բան չէ, եթէ ոչ մեր ժո-
ղովուրդի կենսունակութեան եւ գեղարուեստի
հանդէպ ունեցած սիրոյ բարձր չափանիշը, որ կը
ծառայէ տարազիր բազմութիւնները կապելու մար-
բենիքին եւ գեղարուեստին եւ անոր լուսաւոր մի-
ջոցաւ հայրենիքին:

Բայց հարցը ասով չի փակուիր: Դուք երբ եւ
իցէ տեսն'ք էք, որ այդպէս մը այդի տնկէ, աշ-
խատի, քրոնի, եւ առաւելաբար ուրիշներ վայելեն
էր աշխատանքին արգասիքը: Բայց մեր շօշափած
հարցին մէջ կը գտնուինք այս հակաբնական երե-
ւոյթին առջեւ, ինչ որ դրականութեան եւ արուես-
տի մեր մշակները չափազանց անխախտ ձեւի
եւ ցաւալի վիճակի մը կը մտածէ եւ անոնք դաղթա-
խարհի մէջ կը տառապին առ հասարակնութեան
անձկութենէ:

Ահա այս ցաւալի երեւոյթին դարձան մը դըս-
նելու համար է որ հարցը կը վերաբարձեմ, յու-
սալով թէ՛ այս անգամ արձագանգ պիտի գտնէ:

Այդ, երբ աչքէ կ'անցնենք այդ աղբիւրն ու
թուղիները, մեր մէջ ակամայ կը ծնի արամա-
բանական հարցումը. — Ինչո՞ւ ծառը անկողը շառ-
նէ իր արդար բաժինը, երբ կազմակերպութիւն -
ներ եւ անհատներ կ'օգտուին անոնց դրական-գե-
ղարուեստական արտադրութիւններէն, որոնց հա-
սոյթը յաճախ հարեւր հաղորդներու կը հասնի եւ
սարեական համապատասխան միջիւններու: Ընդդէ
որ անոնք յաճախ այդ հանդէսները կը սարքեն բա-
րի նպատակներու համար: Կա՞յ արդեօք աւելի
բարձր եւ աւելի բարի նպատակ մը քան հայ հե-
ղինակին արդար իրաւունքը տալու նպատակը:
Բայց անշուշտ կազմակերպողները չեն որ պիտի
խորհին այս մասին, այլ իրենք՝ գործին իրաւա-
ւէրները: Այսինքն հայ հեղինակները եւ յորինող-
ները (auteurs et compositeurs): Անոնք են որ պէտք
է կազմակերպութիւն եւ արժեքներ իրենց իրաւուն-
քը: «Չլացող երկխոսի կաթ չեն տար»:

Ուրեմն, խօսքը ուղղելով հեղինակներուն եւ
յօրինողներուն, կ'առջարկեմ որ անյայտ կազ-
մին հայ հեղինակներու եւ յօրինողներու հայկա-
կան հատուած մը, (նոյն ծրագրով ինչ որ է մի-
ջազգայինը) որ իր ներկայացուցչներն ունենայ
հո՞ւ գաղութներու մէջ եւ դրականօրէն տէր կենայ
իր արդար իրաւունքներուն: Թերեւս ոմանք ըսեն.

— Ես միջազգ. հեղինակներու ընկերութեան անդամ
եմ: Սխալ է: Ան կրնայ անդամ ըլլալ, բայց մտած
եմ թէ որ եւ է մէկը միջեւ այսօր իր այս կամ
այն գործին համար իրեն հեղինակի տուրք շօշա-
փելի գումար մը չէ դանձա՞ծ: Մինչդեռ այդ գոր-
ծերը յաճախ կը բեմադրուին եւ յաճախ կ'եր-
վուին: Միւս կողմէ հոն իր անդամակցութիւնը
պահելով հանդերձ, կրնայ անդամ ըլլալ Հայ.
Հեղ. եւ Յօր. ընկերութեան եւ մտածեմ թէ նիւ-
թապէս շատ աւելի պիտի օգտուի:

Համոզուած եմ թէ գործը արդիւնաւէտ պիտի
ըլլայ, երբ առաջարկս իրականանայ, եւ երբ ա-
նոնք ճամբայ ելլեն իրաւական բոլոր միջոցնե-
րով: Ներքին չէ ձգձգել այս բնական հարցը:

Ա. Գ. ՄԵՍՈՒՄԵՆՑ

30 ՎԿԱՆԵՐ Չարխալիսի փաստեր ներկայացու-
ցին Եւթուրի վեց մասնիչներուն դէմ: Փաստարան
մը առաջարկեց դժուրիակ հարցաքննել կարգ մը
վկաներ, դիտել տալով թէ «Դիմադրականները
կրնան նսեմանայ», բայց կառավարութեան ներ-
կայացուցիչը մերժեց: Ամբաստանագիրը կ'ըսէ
թէ 27 հայրենասէրներուն փորել տուած են իրենց
փոսերը, գնդակահարել տուած եւ մէկը թաղ-
ուած է ողջ ողջ:

Չորսերու խորհուրդը անելի մը հանդիպած
ըլլալով, առջի օր որոշեց նիւսերը յետաձգել մին-
չեւ Յունիս 15, ինչպէս առաջարկած էր ամերիկե-
ան պատուիրակը: Այս յետաձգումով, կը յու-
սան կարգադրել խտրական եւ պալքանեան դաշ-
նադիրներու առթիւ ծագած վէճերը: Այդ միջոցին
չորս նախարարներուն փոխանորդները պիտի շա-
րունակեն ժողով գումարել Փարիզի մէջ, ճամբան
հարթելու համար: Գալով հաշտութեան խորհուրդ-
աժողովի գումարման, ամերիկեան պատուիրակը
կ'առաջարկէր գումարել Յուլիս 15ին կամ 15ին,
բայց Մոլոթովի անդամին վրայ, որոշուեցաւ
նախ կարգադրել խտրական եւ պալքանեան դաշ-
նադիրները խնդիրը: Ի վերջոյ որոշուեցաւ խոր-
հուրդովին գումարման թուականը ձգել Յու-
նիսի ժողովին մէջ: Յետոյ համաձայնութիւն գո-
յացաւ վերաքննելու Իտալիոյ զինադարձի պայ-
մանները, իրեւ առժամեայ կարգադրութիւն,
մինչեւ հաշտութեան դաշնագրին կնքումը:

Ամերիկեան պատուիրակը նորէն փորձեց օրա-
կարգ անցնել Աւստրիոյ խնդիրը, բայց Պ. Մո-
լոթով մերժեց: Այս խնդիրը նորէն պիտի արժար-
ծուի Յունիսի ժողովին մէջ:

ՅԻՍՆՍԱԿԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ ԳԵՐՄԱՆԻՈՅ ՄԱՍԻՆ

Յետոյ ըննուեցաւ գերմանական խնդիրը: Պ.
Պրենս առաջարկեց մասնաւոր խորհուրդով մը
հրաւիրել նոյեմբեր 12ին, այդ հարցին կարգա-
դրութեան համար: Մինչ այդ, մասնազէտներու
յանձնաժողովը պիտի ընէ ամբողջ խնդիրը, —
Ռուր, Հոննոս, նոր սահմանադրութիւն, արտածում
եւ ներածում եւն.: Այս առթիւ Պ. Պրենս ներկա-
յացուց Քրանսական ծրագիրը, որ կը պարունակէ
հետեւեալ տրամադրութիւնները. —

1. Բաղաքական եւ տնտեսական միջազգայ -
նացում Ռուրի շրջանին: Բոլոր շահակից պետու-
թիւնները պիտի մասնակցին նոր կարգուսարքին
կազմակերպութեան: 2. Միջազգային դորա-
գունը մը պիտի դրուէ ծրագրուած նոր պետու-
թիւնը, որուն հողային ամբողջութիւնը պիտի ա-
պահովեն շահակից պետութիւնները: 3. Ռուրի
ածխահանքերը եւ գլխաւոր ճարտարադրու-
թիւնները պիտի ազգայնացուին եւ պիտի շահա-
գործուին իրեւ միջազգային հանրօրուտ հաս-
տատութիւններ: 4. Մաքսային պատուար մը
պէտք է հաստատել Ռուրի եւ Գերմանիոյ միջեւ: 5.
Քրանսական տեսական դրամու շնորհիւ ճախ
պիտի: 6. Քէօլնի հարաւային շրջանին դրաման
գործը պէտք է ըլլայ Քրանսական, ի հարկին Պեր-
ժիոյ եւ Լիւքսեմպուրգի մասնակցութեամբ: Իսկ
հիւսիսային շրջանը պիտի դրուեն պեթիական եւ
հոլանդական, եւ եթէ Անգլիա կ'ուզէ, բրիտա-
նական դրամաներ: 7. Համաձայն տեղական
պայմաններուն, հաստատել մէկ Հոննոսեան պե-
տութիւն միջազգայնակցային զինուորական դրա-
ւումով, կամ երկու-երեք անջատ պետութիւններ
անջատ դրամաներով: Այդ պարագային, բոլոր
ընդուն զինաթափ ըլլալով, հոննոսեան շրջանը ա-
զատ է վարելու իր ներքին գործերը, դեպքաներ
զրկելու արտասահման, եւ իր երկրորդ - տըն-
տեսական առանձին կարգուսարքը հաստատուի: 8.
Մարի ածխահանքերը, որոնք Քրանսայի յանձ-
նումն են Կերսայի դաշնագրով, պէտք է դառնան
Քրանսական սեփականութիւն, իսկ ամբողջ շրջա-
նը պէտք է ենթարկուի Քրանսայի մաքսային եւ
դրամական դրութեան: Քրանսա դրագունը մը
պիտի պահէ հոն, ներքին ապահովութեան եւ
սահմաններու պաշտպանութեան համար եւն.:

Գալով Գերմանիոյ քաղաքական ապագային,
Պ. Պրենս յիշեցուց թէ 1945 Սեպտ. 14ի յուշադրին
համաձայն, Քրանսա կատարելագոյն կ'ընդունի
Փոքրամի համաձայնութեան արն մասը որ կը թե-
լադրէ քաղաքական ապահովորոնացում, բայց կան-
խահաս կը նկատէ կեդրոնական վարչութեանց
հաստատումը:

Այս առթիւ անգլիական եւ ամերիկեան պատ-
ուիրակները նորէն յայտնեցին իրենց դիտողու-
թիւնները Քրանսական ծրագրին դէմ, իսկ Մոլո-
թով առանց ըստ էութեան ընկելու խնդիրը, ուղեց
գրիտալ թէ ինչ կ'անցնի կը դառնայ Ռուրի մէջ:
Անգլիական քննարկներն ալ ուղեցին գրիտալ թէ Ռուսե-
րը ինչ կը բանին իրենց գրաւած շրջաններուն,
մասնաւորապէս Մաքսնիոյ եւ Թուրինիոյ մէջ:

(Լուրերու շարունակութիւնը կարդալ Գ. Է9)

ՉՈՐ. ՅԻՍՆՔՕ բուն ճառ մը խօսելով Սպա-
նիոյ խորհուրդարանին մէջ, Քրանսան ամբաստանեց
իրեւ «զէջ դրացի»: Այս առթիւ բաւ թէ Քրանսա
նեղութիւն չկրնէ իր սահմանին վրայ, պատերազ-
մի միջոցին, բայց առաջարկած էր որ եթէ Սպա-
նիան ալ միանայ Գերմանիոյ դէմ մղուած պատե-
րազմին, հող եւ կղզիներ պիտի ստանայ: Այս ճա-
ռէն վերջը, Մատրիտի անթիւն ալ յայտարարեց
թէ «Քրանսա կը սպառնայ Սպանիոյ ներքին ան-
դորութեան»:

Ա. ԱՆԱՐՈՒՆԵԱՆԻ ՄԱՍԻՆ

ԹՈՒՐԻԱՆ՝ ԵՐԷԿ ԵՒ ԱՅՍՈՐ

Շունը շան միս կ'ուտե...

(Մասնաւոր քրքրակցութիւն Յառաջի)

(Բ. եւ վերջին մաս)
Ճնշուած եւ հալածական ժողովուրդ մը, միշտ կը փնտռէ իր անդօրութեան ու տառապանքի սփոփանքը: Ազատութենէ զրկուած ու անճար դարձած ցեղի մը սերունդը անդադար կ'երեւակայէ հսկաներ, կը փնտռէ մէկը որ կարենայ իր սիրտը ցոյց տալ, կամ աւելի ետք դառնալ այդ սիրտը, ու հոն ամփոփուած արգար խօսքը համարձակօրէն բան բանաւորին:

Մերունը մը իրապէս հմայելու եւ անոր սրտին իշխելու համար, անհրաժեշտ է որ մարդը իր ծոցէն ելլէ, իր հոգիէն երգելով ժայթքի: Անհրաժեշտ է որ այդ մարդուն ձայնն ու խօսքը, երգն ու աղաղակը, ամբողջ էութիւնը իրն ըլլան, ըլլան հարազատ ու մտերիմ, բայց իրմէն շատ բարձր ու սրբազան, զինքը իր բաղձանքներուն մէջ հրահրելու կարողութեամբ անհասանելի:

Գոյէճներէ եւ վարժարաններէ նոր ընթացաւարտ ուսանողներուն համար, Ա. Ահարոն - եան այդ մարդն էր, որ եկած էր երգելու, ցեղին վիշտը, փառաբանելու արի արանց հերոսները: Անոնց համար, Ահարոնեանի գրիչը ցեղին ձայնն էր որ կուգար բռնկնելու ցաւի ու վշտի դայ - րոյնց, հարածականները արիացնելով պայքարի առաջնորդելու համար հարստահարիչներուն դէմ: Անոնց աչքին Ահարոնեան նոր Հոմերոս մըն էր:

Թլկատինցիի վրայ տեղեկացածներէս վերջ, Ա. Ահարոնեանի մասին լսածներս նոր կայծ մը գրին հոգւոյս մէջ: Ա՛յ Ահարոնեանը չէի երեւակայեր իր Ֆիզիքական կազմին ու երեւոյթին մէջ այնպէս ինչպէս պահ մը երեւակայեր էի Թլկատինցիին: Մեր դպրոցի բարձրագոյն դասարանի աշակերտներէն մէկը խոր հետաքրքրութեամբ ինձի պատմած էր Ա. Ահարոնեանի Արիւնտութիւնը պատմութիւնը եւ ցոյց տուած էր հեղինակին լուսանկարը:

Եւ սկսայ զանազանէ շարն ու բարին, իրան ու անիրաւը: Սկսայ դատել մեծ մարդոց, մտաւորական մարդոց արտայայտելու տարողութիւնը: Սկսայ հիանալ Ա. Ահարոնեանի արտակարգ կարողութեանը, անոր հայրենապաշտ գրիչին վրայ: Տարի մը վերջ, արիւն ու արհաւիրքը, ջարդն ու հալածանքը արասիացեցին զիս: Զրկուեցայ իմ մտածումներէս ու դարձայ յայտնաբերող յուսահատ, պարզամտ քննիչի ճգնուած տղայ մը:

Գերութեան մէջ, որ մը երազեցի Ա. Ահարոնեանը հօրս հետ: Երազեցի որ ան իր գլուխը անխնայ կը դարնէր քարերուն, արիւնովը կուրծքը կը ծեծէր եւ աչքերը սրտմտութենէն դալարուող դեմտարու կը փոխուէր ուրիշ մեծագոյն աղաղակներով, մըրիկի պէս դուրս կը սլանային մեր վրէժխնդրութեան եւ վերածնունդի հրեղէն քաջերը իրփրայից մարդերով: Հայրս անբաղդատելի հրճուանքով զանոնք ինձի կը ցուցնէր:

Տարիներ անցան, եւ բախտաւոր եղայ ինքնութեանս վերադառնալու: Ճշմտիկայ վերստին իմ ամենամեծ սրբութիւնը՝ մայրենի լեզուն, ջանացի վերջին տղայ օրերու յիշատակներուս դաղտնիքները, վերստին ձեռք բերել իրական աշխարհը առաջնորդող մտածումներուս կրտրուած թիւը: Վերսկսայ խորհիլ մեծ մտաւորականներու, հայրենասէր մտաւորականներու մասին: Եւ շարունակեցի ծանօթանալ Ա. Ահարոնեանի հրահրելի դէմքին, անոր տարօրինակ սգոր հնարքներու խորութեանը:

Ըստ իս, քիչ բան, շատ քիչ բան գրուած է Ա. Ահարոնեանի մասին: Դեռ ոչ ոք ցոյց տուած է անոր մտաւորական ներդրումները, անոր մտածումի իսկական երեւոյթը: Ինչ որ մինչեւէրմա գրուած է, տարտամ ուրուաղիծ մըն է որ հետո է անոր կազմին ու էութեան ամբողջ ու յստակ բացատրութիւնը տալէ:

Մարդկային վիշտն ու տառապանքը, սէրն ու ստեղծութիւնը, նախանձն ու քէնը հարազատ չեն կրնար արտայայտել անոնք՝ որ հայրենիքի գեղեցկութեան մեծութիւնն ու քաղցրութիւնը դուրս ձգած են իրենց գրիչէն, անոնք որ իրենց գոհերուն անունները փնտռելու տաղանդէն հեռու մնացած են: Մտաւորական կարողութիւն մը որ - քան ալ նկարագրելու վսեմ ձիւրք ունենայ, չի կրնար սերունդներու երեւակայութիւնը խանդավառող միտքեր ներկայացնել, անոնց վրայ տալուող գեղեցկութիւնը ուժեղ պատկերացնել, երբ ոչինչ ունի իր մայր հոգիէն, երբ սպաննած է իր հայրենի բնակարաններու կենդանի սէրը, իր գրիչէն դուրս չպրտած է հոն ծնող ու սպող ժողովուրդի նիստ ու կացը, աշխատանքն ու պայքարը, վատտակն ու բարիքը: Եւ եթէ ամէն մարդ իր հայրենիքը սիրելու կերպ մը ունի, ճշմարիտ բանաստեղծը, մտաւորականը հայրենիքին իմաստը կը գտնուորէ իր սրտին մէջ ու ըստ այնմ մարմին կուտայ իր երգերով:

Ա. Ահարոնեանի հայրենիքը դարերու խորքէն եկող եւ դէպ ի դարերը յառաջացող ցաւի ու փառքի հէքեթներու հայրենիքն է, հին քաջերու ածիւններէն նոր քաջեր յարուցանող հայրենիքն է, հայրենիքը անցեալի փառքին, հայրենիքը վաղուան հրապոյրին: Հայկական Տաւրոսէն մինչեւ Վան, Վասպուրականէն մինչեւ Մուշ ու Սասուն,

Հին խօսք է, բայց նոր վկայութիւններու լրջսին տակ, կը տփռուի անոր ճշմարտութիւնը:

Աչք մը պարզօրէցէթուրք թերթերու 15 Մարտ - 5 Ապրիլի քսան օրուան թիւերուն վրայ, ու պիտի համոզուիք, որ արդիամտը «Գեմոկրատներու» խմբակցութիւնները իրար կ'ուտեն...

Եւ տակաւին, ծայրն ենք ծրարոց:

Գրած էի, թէ Հալը կուսակցութիւնը յետաձգած է իր Համաժողովը, «կենսական» պատճառներով: Թուրք էի, նաեւ, հաւանական շարժումները: Հակամարտութիւն՝ երեսփոխաններու միջեւ, աթոռի մտահոգութիւն, դայթակցութեանց հաւանականութիւններ:

Վերջին թղթաբերը, կը բերէ այլապէս շահեկան մանրամասնութիւններ՝ կատակերգական դրուագներով, որոնց արմատը թաղուած է նոյն հոգին մէջ: Թուրք «Գեմոկրատական» մարգակներու ենթախոդին՝ որ, ի՛նչք, քուրք ժողովուրդն ու քուրք կառավարութիւնն է:

Արգարեւ, հաղի խաղաղած Հալքի Համաժողովին յետաձգումով ստեղծուած ջղագրգիւր կացութիւնը, ընկերային - քաղաքական նոր դայթակցութիւններ կուգան ստեղծել կատարեալ խառնակութիւն մը՝ կիրքերու, կարծիքներու, ցանկութեանց եւ միջոցներու:

Ինչպէս յայտնի է, ձեռք Պայարի «Դեմոկրատ» կուսակցութիւնը նախնական աշխատանքներու լծուած է երկու - երեք ամիսէ ի վեր, ցանցը տարածելու համար Անատոլի մէջ, ուր, կը խորհի «Հասիլ» առաւելագոյն կողմերը դասազարդ: Անկար «Հալքի» թէ Պայարի միջեւ դոյնացած Անրֆրմ համաձայնութիւնէն, սպասելի է անշուշտ՝ որ փրկուին զէթ երեւոյթները, եւ արտաքին աշխարհ թէ հանրային կարծիք - բան - դործի վրայ տեսնեն մրցակից կողմերը: Պատասխանատու դէմքեր, «Հալք»էն թէ «Դեմոկրատ»էն, տխմար չեն անշուշտ, պոչը դուրս ձգելու համար սարքուած կատակերգութեան եւ յարակից խաղերուն. բայց, Անատոլի վաթսուներեք նահանգներէն վաթսուներէն մէջ՝ բարձրը տարբեր են: Մարդիկ տարբեր դեմքերով են իրենք, աւելի բաց սիրտ, աւելի կոպիտ ու նախնական անկեղծութիւն ունին: Կառավարութեան կողմէ տրուած որեւէ հրահանգ կ'ըմբռնեն իրենց շահանիշերով եւ իրենց արիւնին բարկութեամբ: Ո եւ է թիւաբանութիւն՝ ո եւ է ներքին հասկացողութիւն սքողելու համար, կ'առնեն տառացի տարողութեամբ եւ իմաստով, քան իր ռազմավարական - դիւանադիտական ներքերանդով: Ու կը տեսնես, որ կը փոթորկին միտքեր, կիրքեր կը հրահրուին, մարդիկ կը ներկայանան իրենց իսկական նկարագրով ու խառնուածիով, իրենց յաւիտեակամ մեծամտութեամբ:

Ճէլալ Պայարի «Դեմոկրատ» կուսակցութեան վարիչ զէմքերուն համաձայն, «Հալք» եւ Հալքի անդամ պետական դէմքեր ու պաշտօնատարներ՝ մեծ դժուարութիւններ կը ստեղծեն Դեմոկրատ կուսակցութեան դէմ, խափանելու համար մեր դործը: Այս մարդիկը, իրենք իրենց կը ներեն սարսափ տարածել զիւրացիներու մէջ՝ սպառնալով որ կառավարութիւնը պիտի չզնն իրենց ցորենը թէ ծխախոտը, եթէ անոնք արձանագրուին նոր կուսակցութեան շարքերուն: Այն քարողութիւնը կ'ընեն՝ թէ «Հալք» զուրս ո եւ է կուսակցութիւնն օտար պետութեանց դործիք է, հետեւաբար դաւաճան՝ հայրենիքի հանդէպ: Անշուշտ կարեւորութիւն չենք տար, բայց կը ցաւինք»:

Ուրիշ հիմնադիր - անդամ մը՝ Այսրնի երեսփոխան Ատնան Մէնտէրէս (նախկին «Հալք»էան մը, որ վտարուեցաւ «Հակակարգապահական» իր նորութիւններու համար), նոյնքան դառնութեամբ կը շեշտէ «Թասիլ» թղթակցին՝ թէ «կարգ մը նահանգային պաշտօնատարներ, ուղղակի թշնամական տրամադրութիւն ցոյց կուտան նոր կուսակցութեան հանդէպ, շահագործելով իրենց պաշտօնները»: («Թասիլ»-ը, 1 Ապրիլ 1946):

«Վաթան» աւելի մեծ ամօթ կը վերադրէ «Հալք»ի շրջանակներուն, շեշտելով՝ թէ «կարգ մը մարդիկ՝ թերթեր եւ խմբագիրներ կը կաշառեն: Համալսարանական ուսանողներ կը թունաւորեն, զիւրացի կը ճնշեն, խափանարարութիւններու կը դիմեն»: (28 Մարտ 1946):

Ու, տակաւին, վրան - բաց մեքենայութիւններ եւ դաւեր, որոնց մըրորը թոյն ու լեղի է, ու կը վկայէ յաւիտեակամ ճշմարտութեան մասին: ԱՐՄԷՆ ԱՄԱՏԵԱՆ

Բարձր Հայրէն մինչեւ Արարատեան դաշտ, Գուրգարը ու Սիւնիք մէկ իրողութիւն տեսաւ ան: Հոն հանդէպ են Հայոց աշխարհի փրկութեան ճանապարհի վրայ ինկողները եւ հոն է ազատութիւնը երազող խոնարհ, քրտնաջան, հարստահարուած իր ժողովուրդը, հայ ժողովուրդը: Ան քանդակը ուսանայ եւ թրքահայ լեզուի, բարբառի սահմանները, փորձեց թրծել դարերու եւ սահմաններու խաթարած հոգիներու եղբայրութիւնը: Ան, Վահագնի հերոսական իրազեկութեամբ հէք Արտաւազը կանչեց խորհրդաւոր Մասիսէն եւ ներքոյց սերունդը՝ որ մեռնելէ չվախցաւ, ներքոյց իր ժողովուրդին ազատութիւն բերելու նախաձեռնութեամբ՝ որ երգելով կարողանա զնաց, ներքոյց պնդուած քրտնաջան գեղեցկութիւն՝ որ դանդաղ մատնիչն է, ներքոյց նոր օրերու աղաքը, որ մայր հոգի ցաւերէն հրաբուխի պէս ցատկելով հեղնեցին մահը, փառաւորելու համար հայրենիքի ազատութեան գեղեցկութիւնը:

Մեր հին կրօնը հուրի եւ լոյսի կրօն մըն էր, կրօնը ազատութեան երգի, ուր, հայրենիքի պաշտպանութեան եւ քաջութեան գեղեցկութիւնը կը նուիրադրուէր կեանքի պայծառ եւ առոյգ ըմբռնումով:

Քրիստոնէութեան մուտքէն վերջ, հայ ժողովուրդը, թէեւ շարունակեց սիրել նախնի լուսաւոր երգերը, պահել դուռնապէղ վիպասանութիւնները, սակայն, իրրեւ ճապուղի, դիւրենկալ ցեղ, ճկեցաւ քրիստոնէութեան, իւրացուց անոր ոգին մինչեւ իր սոհմային հոգեբանութեան հետ նոյնացնելու աստիճան:

Երկնաւոր հաւատքի պաշտամունքէն առաջ, երկրաւոր հայրենիքի պաշտպանութեան գաղափարի պաշտամունքը, մեր մէջ ուշ ատեն շեշտուած կերպարանք ստացաւ: Ուշ ատեն, մեր մտաւորականութիւնը սկսաւ քարոզել, թէ նոյնիսկ հոգե -

մոկրատ կուսակցութեան դէմ, խափանելու համար անոր կազմակերպչական աշխատանքները:

Լուրջ «դաւ» մըն է երեւութական այս sabotage: Չենք կարծեր: «Հալք»ը դիմէ՝ թէ Պայար մինչեւ ուր կրնայ երթալ: Եւ սակայն, հանրային, ազգային կեանքի մէջ՝ կատակի թէ բեմադրուած թեան բնոյթ ունեցող մարդանքներ, դիւրաւ լուրջ համեմատութիւններ կը ստանան, երբ «հօտ»ը դառնեց չի բաղկանար միայն, ու անօթի դայեր՝ կրաւորական դեր ստաննելէ աւելի, կ'ուզեն ներգործական աշխատանքներու լծուիլ իրենց ստամոքսը գոհացնելու մտահոգութիւններով:

Ճէլալ Պայար, բեմ բարձրանալէ առաջ ձեռք թէ «Դեմոկրատ» կուսակցութիւնը ոչինչով պիտի ուզէ վերակենդանացնել հին կիրքերը կամ հակամարտութիւնները, ու իր դերագոյն առաքելութիւնը պիտի ըլլայ Հալքի աշխատանքը դիւրացնել: Թափանցիկ էր իմաստը: Բայց, ներկայի թափը թէ յորձանքը՝ բարեդուրակ չեն թուիր, որովհետեւ Պայարի աշխատակիցները թէ կուսակիցները տարբեր ակորթակներով կը գործեն:

Կը թուի, թէ «Հալք»ը կ'ընդհանարէ վտանգը, որ կրնայ հետեւիլ ներկայի կատակին եւ արուեստական փորձերուն: Կարգ մը նահանգներու, նոյնիսկ Պոլսոյ մէջ, «Հալք»ի դեկավար դէմքեր շողեկին պաշտպանութիւն լծուած են, ճախողեցնելու համար «Դեմոկրատ» կուսակցութեան հաւանական յաջողութիւնները:

«Դեմոկրատ»ի Մանիսայի կազմակերպութեան հիմնադիր անդամներէն Յէլվիկ Լուիթֆի Գարսոն - ման, Մարտ 31ին բաւական ուշադրաւ յայտարարութիւններ ըրած է «Վաթան»ի Իդմիրի թղթակցին: Թէ՛ «Դեմոկրատ» կուսակցութեան կազմուածութիւնը ջղագրգիւրութիւն կը պատճառէ կարգ մը մարդոց, որոնք անխոստովանելի միջոցներու կը դիմեն, խափանելու համար մեր դործը: Այս մարդիկը, իրենք իրենց կը ներեն սարսափ տարածել զիւրացիներու մէջ՝ սպառնալով որ կառավարութիւնը պիտի չզնն իրենց ցորենը թէ ծխախոտը, եթէ անոնք արձանագրուին նոր կուսակցութեան շարքերուն: Այն քարողութիւնը կ'ընեն՝ թէ «Հալք» զուրս ո եւ է կուսակցութիւնն օտար պետութեանց դործիք է, հետեւաբար դաւաճան՝ հայրենիքի հանդէպ: Անշուշտ կարեւորութիւն չենք տար, բայց կը ցաւինք»:

Ուրիշ հիմնադիր - անդամ մը՝ Այսրնի երեսփոխան Ատնան Մէնտէրէս (նախկին «Հալք»էան մը, որ վտարուեցաւ «Հակակարգապահական» իր նորութիւններու համար), նոյնքան դառնութեամբ կը շեշտէ «Թասիլ» թղթակցին՝ թէ «կարգ մը նահանգային պաշտօնատարներ, ուղղակի թշնամական տրամադրութիւն ցոյց կուտան նոր կուսակցութեան հանդէպ, շահագործելով իրենց պաշտօնները»: («Թասիլ»-ը, 1 Ապրիլ 1946):

«Վաթան» աւելի մեծ ամօթ կը վերադրէ «Հալք»ի շրջանակներուն, շեշտելով՝ թէ «կարգ մը մարդիկ՝ թերթեր եւ խմբագիրներ կը կաշառեն: Համալսարանական ուսանողներ կը թունաւորեն, զիւրացի կը ճնշեն, խափանարարութիւններու կը դիմեն»: (28 Մարտ 1946):

Ու, տակաւին, վրան - բաց մեքենայութիւններ եւ դաւեր, որոնց մըրորը թոյն ու լեղի է, ու կը վկայէ յաւիտեակամ ճշմարտութեան մասին: ԱՐՄԷՆ ԱՄԱՏԵԱՆ

Լուր հաւատացեալ ժողովուրդի մը համար, հայրենիքը իր պաշտամ Աստուծոյ դահն է, ու երբ չկայ այդ դահն, չկայ ուրեմն բազմիչ Աստուածը, եւ զայն պաշտողները ենթակայ են հալածանքներու, շարժարաններու, փճացումի:

Ա. Ահարոնեան եղաւ մէկը եւ չեմ վարանիր ըսելու թէ մեծագոյնը, որ խառնուելով իր ցեղի պարտուող թափորին, զնաց հայ ժողովուրդի հայ հայրենիքի տաճարին զոհ մատուցանել իր սիրտը: Ան, իր ցեղի մուսաններու օրհնութեան առջեւ տեսաւ կործանած հայրենիքին աղուորութիւնը, երազեց անոր վերականգնումի հրապոյրը ու դարձաւ առաքել մը որ իր հոգին կը փակէ օտար աշխարհներու դէմ եւ կ'ուխտէ միայն իր հայրենիքին նայիլ, իր ցեղի կակիճը երգելով հրահրել յեղափոխութեան գաղափարի հնոցը:

Արարատի լանջերուն վրայ, փոքրիկ բայց սիրուն եւ պաշտելի մեր հայրենիքի վերածնունդը կերտող մեր մտքի ու գրչի հերոսներուն մէջ, Ա. Ահարոնեան սոսկական դէմք մը չէ, այլ՝ տեսակ մը անհասանելի էակ, Մասիսի խորհրդաւոր խորութիւնէն դուրս սրացած փողարկու սերովիք:

Եւ միշտ խորհած եմ թէ դէմքեր կան որոնց կեանքը բողբոջին տարբեր է: Անոնք՝ իրենց վերջին վաղկեանքին իսկ բանիքներ ունին, իրրեւ շարունակութիւնը իրենց յանձնուած մեծ առաքելութեան:

Հայոց աշխարհի ... Այո, հայրենիքէն աւելի սրբազան բան չկայ աշխարհի վրայ:

Հայրենիքէն հեռու, Ա. Ահարոնեան, միեւնոյն անհուն սէրն է որ կը միացնէ տարիներէ ի վեր: Անոր այցելելու համարձակութեանս մէջ ես կը վարանիմ:

«Պոլշեիկ Յակոբ»

Յակոբ Սիմոնի (Օնյաչևան), որուն մահը հարգուելիք «Յառաջ» անցեալ տարի, ծնած էր Պանտարմա, 1898ին, հայրը զեղազործ եւ ունեւոր, Մեծ Եղեռնի զոհերէն: Յակոբ իր մօր եւ եղբոր Եղազորդի հետ կը վերադառնայ իր ծննդավայրը, Պանտարմա, կը լծուի կուսակցական գործին՝ անաչառ եւ գիտակցութեամբ մօտ առնելն բոլորին սիրելի կը դառնայ: Բնաւորութեամբ հեղ էր, ունէր խօսելու ու գրելու կարողութիւն:

1920ին, երբ թուրք կառավարութիւնը իր զեղեղ կորսնցուցած էր եւ անիշխանութիւնը ծայր տըւած, Պանտարմա եւ իր շրջանը՝ չէրքէզ կէֆէզմ պէջի եւ Ազնավուր «չէթէ»ներուն մէջ եւ արիւնալի ընդհարումներ սկսան: Մակընթացութիւն եւ անդառուութիւն շարունակարար:

Սանտութիւնը կը գոցուէին եւ կը բացուէին: Կը բացուէին՝ որովհետեւ կազմակերպութեամբ օրուան ժամանակաւ իշխանութեանց կողմէ:

Այդ անորոշ օրերուն շրջահայտք պէտք է ըլլալ, մէկ վայրկեանէ միւր կընար կուռի ձեւը փոխուիլ եւ ընդհանուր ջարդի եւ աւարի վերածուիլ: Այս ամենածանր պայմաններու տակ՝ նուիրական պարտականութիւն մը ունէինք, ստեղծել բացառիկ պայմաններ ու գալիք պատուհասը զէթ մեղմացնել ինքնապաշտպանութեամբ: Մեր տղաքը առանց բացառութեան զինուած էին: Իսկ մեզմէ խնդրուեցաւ չէզոք երիտասարդութիւնը գինել: Սկսանք գործի՝ հրացան եւ առատ փամփուշտ գնել փախչող թուրք «չէթէ»ներէ՝ որոնք կը հալածուէին իրարմէ: Աժան գիներով ձեռք անցուցինք բաւականաչափ պետական հրացաններ: Յակոբըն է որ կուզայ զէմէն, ձեռքը բռնած կէս քիլո (ցորենի չափ) որուն մէջ լեցուած էր ընկոյզ... Մտաւ խանութ եւ ըսաւ.

— Ընկեր՝ Կարօ՛, ահա քեզի ընկոյզներ՝ որոնց տակը պիտի գտնէք շատ աւելի խոշոր եւ ամենաբնախնայները...:

Կուսակցով՝ հարցուցի քանակը — յայտնեց թէ ութ հատ են: Տղաքը կանչելով՝ անիշխապէս ցըրուեցինք:

Ահա մէկը արհամարհելով վտանգը՝ խիզախ կը փոխադրէր ձեռնառումները՝ պարտող չէթէներու քովէն: Այսպէս քանի մը օրուան ընթացքին՝ կռիւի թուով հրացաններ ցրուեցինք երիտասարդներու, եւ անիշխապէս վարժեցուցինք նշանաւորութեան, մանրամասնութեամբ ու ինքնապաշտպանութեան եղանակը: Կանցին քանի մը օրեր, երբ գու՛վիէի միւլիէյի (այդ ուժեր) հաշտոյն աշխատող չէրքէզ կէֆէզմ պէջի բանակը Պանտարման իր շրջաններով կը դրաւ: Կը սկսի իր թշնամին մարտազարծել: Պոլշեի կը հասնին երկու սպաներ որոնք կայս. պալատէն զրկուած էին, վերջ տալու համար եղբայրական կուռին: Կէֆէզմ պէջ կառավարան կը քաշէ պատգամաւորները մզկիթի հըրապարակի վրայ ծովահայտք: Ու անիշխապէս մուսուլմաններու միջոցաւ կը յայտարարուի՝ բոլոր ժողովուրդին, — Անխախտ յանձնել իրենց զէնքերը եւ պահուած հակառակորդ «չէթէ»ները 24 ժամէն: Անստատողները մահուամբ պիտի պատժուէին:

Ահա՛ խուճապ մըն էր որ կը սկսէր չէզոք երիտասարդներու մէջ: 80 առ հարիւր համեմատութեամբ եկած էին՝ մեր տուած զէնքերը ետ տալու: Այս խիստ ծանր կացութեան մէջ՝ առանց մեր պաշարիւնը կորսնցնելու, հինգ հոգիով՝ մեր ընկ. Ս. Եսահանբեանի տան մէջ ժողովի կը նստինք, ու կ'որոշենք. — 1. Չէնքերը պէտք է ետ առնել՝ որպէսզի չփճանան: 2. — Բռնուած պարագային, մեր կենանք ալ պիտի վտանգուի:

Յակոբը յուզուած ըսաւ — Մեր մէկ հրացանը ամբողջ Պանտարմայի թուրքաբոլթ երիտասարդութեանը հետ չեմ փոխեր, յետ պէտք է առնել բոլորը:

Սկսանք գործի: Յակոբ Սիմոնի հազած էր լայն եւ ծանր վերարկու մը, հակառակ օդին տաք ըլլալուն:

— Ընկեր Յակոբ, կարծեմ տկա՞ր էք որ վալթօ էք հազեր այս տաքուն: Ոչ, ընկերներ, աղանակական մարդիկ են որ հաստ վալթօ կը հազանին եւ այդ ալ ինձ համար պատիւ մըն է...:

Մեր Յակոբը իր վերարկուին տակ պահած էր թուրքաբոլթ եւ դասալիք երիտասարդներու զէնքերը՝ որոնք ետ տրուած էին, հակառակ իրենց պատուոյ խօսքերուն:

Յունական բանակի ցամաքահանուէն քանի մը օր վերջ, երբ հայ եւ յոյն կրօնական եւ ժողովրդական եղբայրակցութեան որոշումով Հայոց քերեզմանատան մէջ հայ եւ յոյն նահատակներու համար հողահանգիստ կը կատարուէր, ահա՛ դարձեալ Յակոբը կանգնած գերեզմանաքարի մը վըրայ, կը խօսէր իրեն հոնտոր ու կը վերջացնէր.

— Ազգեր՝ երբ մեռնիլ դիտեն ազատութեան դադարի համար, ոչ մէկ բռնութիւն կրնայ ընկձել զանոնք... Ահա այսպէս են եղած հայ եւ յոյն ազգերը իրենց դարաւոր պատմութեան մէջ:

Յակոբ կ'այցելէր Պանտարմայի շրջանը՝ Խալիմ-ճիք, Հայ Գիւղ, Սուսուրըզ եւ Սուլթան Չայրը Մատէնի:

1921ի վերջերը՝ յիսունէ աւելի զինեալ հրո-

սակներ կը մտնեն Սուլթան Չայրը — Մատէնի (ուր կար պորտալիքի հանքը, հայ եւ չէրքէզ բանուորներով): Կը սպաննուի Գրիգոր Ազաճանեանը եւ ուրիշ մը կը վերաբերուի: Երբ ձեռք կ'առնուի Ասանայի Միհրանի յամառ դիմադրութեան հանդիպելով՝ չեն կրնար իրենց ծրարներն լիովին զործարել՝ եւ կը հեռանան:

Յակոբը մեր մօտ կուգայ ու զէպզին վայրը երթալը կը հազարէ մեզի: Սուսուրըզի մէջ կը տեսակցին տեղւոյն եմթակոմիտի անդամ ընկեր Սաչիկ Մանուկեանի հետ (քէմալականներու կողմէ կախաղան հանուած) ուր կը հաստատեն զէնքերու պահուած: Ի՞նչ միջոցաւ կրնանք զէնք փոխադրել, քանի որ բոլոր պայուսակները յունական զինուորական իշխանութեան խիստ քննութեան կ'ենթարկուէին: Կը դիմենք տեղւոյն վեհանձն եւ ազդասէր՝ գերապետ Միլաթի վարդապետ Մուրախանի (այժմ վախճանեալ) եւ կը պարզենք ինդիքը: Տասը թրքական մալլէր, առատ փամփուշտով՝ գերապետին բարեխօսութեամբ զըրկեցինք ապահով՝ Սուլթան Չայրը — Մատէնի, (զինուորական իշխանութիւնը չէր գիտեր պարունակութիւնը): Սոյն գործին մէջ մեծ դեր կատարեց մեր տարարտա Սիմոնի: Ուրախ էր, զնաց Մատէն եւ ցրուեց տղոց: Չէրքէներու կողմէ եղած երկրորդ յարձակում մը եւս Մատէնի վրայ, ապարդիւն անցաւ:

Բոլոր ընկերները «պոլշեիկ Յակոբ» կը կոչէին: Ինչո՞ւ: Ան ծայրայեղ ազատամիտ էր, զբաւին արժէք էր տար, այլ դադարաւոր կը պաշտէր: Կուզար խանութ՝ հաստ դաւազանը ձեռքը: «Քարեւ, ընկեր, հաճեցէք զոյգ մը դուրպայ եւ երկու թաշկինակ տալ. եթէ լաւ տեսակ չըլլայ, ետ կը բերեմ», ըսելով կը կատակէր:

Մէկի զէմ կուտայի երկու զոյգ եւ վեց թաշկինակ: Երբ ցտեսութիւն կ'ըսէր, կատակով զբամը կը պահանջէի: Կը պատասխանէր.

— «Ունեցած այս ամբողջ ապրանքէդ այս քան բաժնի ալ ինձի կ'իշխայ, արդարութեամբ պէտք է շարժիլ»: Ասոր համար ալ «պոլշեիկ Յակոբ» կը կանչէինք...:

1922ին քէմալական բանակը սկսաւ յառաջանալ, յոյն զինուորները վհատած՝ անկանոն կը նահանջէին: Գաղթականութիւն մը ծայր տուաւ գաւառներէ: Պանտարման ալ իր կարգին սկսաւ գաղթել զէպի թրայիկա: Մեր Յակոբը կը լծուի գործի: Կը մեկնի Ռոտոսթօ եւ Տօքթը. Տոտոի հետ խորհրդակցելէ վերջ կը մեկնի Պոլիս, ուր Պատրիարքարան դիմելով՝ մասնաւորապէս վարձուած շոգենաւով մը կուգայ Պանտարմա եւ Մարմարայի ծովափերէն զիւղերէն ու քաղաքներէն կը հաւաքէ հոծ գաղթականութիւն մը, ու կը փոխադրէ Ռոտոսթօ:

Այդ անիծեալ օրերնէ ի վեր չտեսայ զինքը: Քսան երկար տարիներ վերջ՝ «Յառաջ» մէջ կը կարդամ իր մահուան դոյժը...

Անբախտ Յակոբ, յիշատակը միշտ վառ պիտի մնայ մեր սիրտերուն մէջ:

Կ. ՄԱՅՏՈՂԻԱՆ

ՉԱՅՆԵՐ ԳԱՒԱՌԵՆ

ԿԵԱՆԻՐ ՎԻՃԻՒ ՄԵՋ

Վիճիւն, (Յառաջ) — Մեր քաղաքը միշտ ալ եղած է հայկ. տաք վառարան մը: Երբ ժամը շունչն էր առանց հայկական Միութեան մը ձեռնարկին, կարծես մրցումի եղած են իրարու հետ: Բոլոր Միութիւններուն ձեռնարկներն ալ կը քաջալերուին լայնօրէն, նիւթապէս թէ բարոյապէս: Ամէն մարդ կ'երթայ իր սիրած Միութեան կազմակերպած ձեռնարկին: Ներկայիս չունինք անցեալի անձիւր վէճերն ու պայքարները:

Չանք չիւնայտուի նաեւ հայ փոքրիկները հայ պահելու գործին մէջ: Մահակ Մեւրոպ զպրոցէն վերջ, Կապոյտ Սաչի մասնաճիւղը եւս բացած է հայերէնի դասընթացը մը Մարտ 25ն ի վեր, ու սուցչութեամբ շ. Կ. Տէրմոյեանի, շարժական երկու պահ երեկոները: Աշակերտներու թիւը տակաւ լրել է, տեղի անյարմարութեան եւ կարգ մը դժգոհութեան պակասութեան պատճառով: Եթէ անհրաժեշտ նիւթերը ձարուին, միջեւ հարեւրի կրնայ բարձրանալ անոնց թիւը:

Եռուղեւ մը կայ նաեւ Նոր Սերունդին մէջ: Ամէն տեղ անոնք են որ կը փայլին, բոլոր հանդէսներուն կը բերեն իրենց մասնակցութիւնը երգերով, պարերով, արտասանութիւններով եւ այլ զուարճախօսութիւններով: Եռանդով կը դործեն նաեւ Կապոյտ Սաչի սանուհիներու միութիւնը, շ. Մ. Ը. Մ. ր. եւս.:

Շ. Յ. Գ. Նոր Սերունդը վերջապէս յաջողեցաւ գտնել իրեն յատուկ հաւաքավայր մը որուն բացումը պիտի կատարուի մօտ օրէն: Ինչպէս ամէն տեղ, հոս ալ տօնուեցաւ Ապրիլ 11—24ի համադրային սպասուր Ապրիլ 28ին: Օրուան բանակի սաներէն էին Պ. Պ. Վ. Չուլիքեան եւ Ս. Քարեան, որոնք բացատրեցին օրուան տօնին իմաստը եւ թուրք դահիճներու բարբարոսութիւնները: Դժբախտաբար չկար այն բազմութիւնը որ ներկայ կ'ըլլայ ուրիշ հանդէսներու: — Գարսնի

ԸՆԿԵՐԱՀԱՄԱԿՐԱԿԱՆ ԴԱՍԱՆՕՍՈՒԹԻՒՆ

ՄԱՐՍԻՅԵԼ — Շ. Յ. Գ. Պուլիար Օտտոյի Նոր Սերունդի «Սատիսֆակտ» խումբին ընկերահամակրական դասախօսութիւնը տեղի ունեցաւ ծանօթ հաւաքատեղին, Մայիս 3ին: Ժամանակէն առաջ հաւաքուած էին ոչ միայն ընկեր եւ ընկերուհիներ, այլեւ տարեց կիներ եւ այրեր եւ անհամբեր կը սպասէին դասախօսին: Երգերու եւ արտասանութիւններու տաք պահուն ներս մտան մեր սիրելի Շ. Երգուրդի եւ ընկերուհի տիկին Տիրուհի Միսաքեանը, որոնք ընդունուեցան երկար ծափերով: Նոր Սերունդի վարչութեան կողմէ, ընկեր Ս. Տէր Նապարէթեան յայտարարեց. — «Մեր նպատակն ըլլալով միշտ վառ պահել հայ Նոր Սերունդի ոգին եւ կայել հայրենիքին, առիթ չենք փախցնել, եթէ որ եւ է մտաւորական մեր ձեռք անցնի: Այսօրուան մեր դասախօսին նիւթն է «Հայրենիքի դադարաւոր»: Օր. Մանոյեանի երգէն վերջ, Նարգուշի սկսաւ իր դասախօսութիւնը որ տեւեց մօտ մէկ ժամ: Բացատրեց հայրենասիրութիւնը, վերլուծեց նախկին մտածումները եւ ներկայիս եւ ըսաւ. — Մենք մեր անկախութիւնը կորսնցնելէ վերջ, ամէն մէկս ուր որ կ'ապրինք հոս կը նկատենք մեր հայրենիքը, ինչ որ սխալ է: Հայրենիք կը կոչուի այն հողը ուր ժողովուրդ մը պետութիւն ունի իր սահմաններով: Ենթահիւ հայ ժողովուրդի զոհս դուրսէն եւ Շ. Յ. Գալիակցիութեան առաջնորդութեան, 1918 Մայիս 28ին ստեղծուեցաւ Հայաստանի հանրապետութիւնը: Այսօր ամէնքս ալ կ'ուրախանանք այդ հայրենիքով եւ կը մտածենք ռուսով վերադառնալ, թող ըլլայ խորհրդային, սուկայն ազատ բոլորին համար խօսքի եւ մամուլի ազատութեամբ: Յետոյ խօսք տրուեցաւ ընկերուհի տիկին Շ. Միսաքեանի որ քաջալերեց երիտասարդ եւ երիտասարդուհիները եւ ուրախութիւն յայտնեց որ անոնք այսօր հարատուին կը խօսին իրենց մայրենի լեզուն, առաջուան պէս չեն խուսափիր հանրակառքերու եւ շոգեկառքերու մէջ հայերէն խօսելէ: Այս խօսքերը շատ բան արթնցուցին երիտասարդներուն մէջ: Օր. Սիւրանուշ Պարոնեան իր անուշ առողանութեամբ արտասանեց «Մայրենի լեզուն», ջերմ ծափերու մէջ: Երգեց Օր. Ս. Չարարեան: Նախահարեւ շնորհակալութիւն յայտնեց բոլորին, եւ ներկայները յորնկայս երգեցին «Մշակ բանուոր»ը, միասին տանելով հայրենիքի դադարաւոր: — Տ. Ստեփանեան ՄԱՐՁԱԿԱՆ ԿԵԱՆԻՐ

ՎԱՒԱՆՍ — Կիրակի, 12 Մայիս, արշալոյսի առաջին շոգեքուն մարդասէր վախիսցի Գրիգոր թիւն ձեռքը, օրհնութեան մրժուովը շրթներուն խնամքով կը յարգարէր մարդազաշտ:

Պարտութեան խօսք չկար: Ժամը 15ն սկսեալ ցուպը ձեռքին, թրքական վայրագութեան ազատուած հայ մամիկն ու հայրիկը, եւ հաղիւ «հայրիկ ու մայրիկ» ըսող երախտն բռնած էին մարդազաշտի ձեռքան, ծախահարեւոյ իր մէկ հատուկին, վարդ մանիշակին յաղթանակը: Ժամը 3ին աւելի քան 4000ոց բազմութիւնը անհամբեր կը սպասէր մարդիկներուն: Փրանսացիները կ'ըսէին — յաղթանակը Հայերունն է, այս դաշտը առաջին նդամ է որ այսքան հոծ բազմութիւն կրտեսնէ: Ախոյեանական մրցում, Մէն Միշէլ (Մալուր) վալանսի Հայերուն զէմ: Ժամը 3.20ին ծափերու տեղատարափին տակ դաշտ կուգան Մէն Միշէլցիները: Անիշխապէս հայ մարդիկները առաջնորդութեամբ խմբապետ Աւետիսին, իրենց դանդաղակները դուրսնէր բարձր բռնած, դուրս ցցուած կուրծքերով ու համաչափ քայլերով մէկը միւսին ետեւէն դաշտ կուգան «դէպի յաղթանակ» աղաղակներու մէջ: Հոգեւոր հովիւը նստած առաջին կարգի վրայ, մտովի կ'օրհնէ եւ կ'աղօթէ:

Ժամը 3.30ին, անկողմնակալ ու իր պաշտօնին գիտակից դատաւորին՝ զեղազործ M. Fontaineի արձակած հրամանին վրայ կը սկսի խաղը: Պիտի չլիշմ անունները հայ մարդիկներուն, բոլորն ալ գուրգուրեցին: Յիշեմ միայն խաղի ընթացքին խմբապետ Աւետիսի ալ — ձախ արձակած հրամանները, որոնք իրենց ապահովեցին յաղթանակը:

Մերիններուն լաւ խաղարկութեամբ առաջին կիսախաղը վերջացաւ 3—0ով:

Երկրորդ կիսախաղին Մէն Միշէլը կորսնցուցած իր հաւատարակութիւնը, կատաղի ու անտեղի խաղարկութեամբ կը ստանայ պատիժներ: Ժամը 5.15ին յոտնկայս անիւրջ ծափերու ու «դէպ յաղթանակ, յաղթանակ» աղաղակներու մէջ խաղը կը վերջանայ 5—0ով:

Միջը ու ծաղկիք, օր ու արեւ տեսնէք, տղաք: Գաղութը հպարտ է ձեզմով: Այսօրուրնէ կը պատրաստուինք ծափահարել Մայիս 19ի յաղթանակը:

Մայիս ամիսը յաղթանակի ամիս: — Հուր—Հեր

ՍՍԱՅԱՆՔ

La Semaine Egyptienne, Numéro Spécial, նուիրուած Եգիպտոսի հայ նկարիչներու ցուցահանդէսին, բազմաթիւ զեղարուեստական նկարներով: 1945 Նոյնմբեր: Հասցէ: — 25 Hassan Sabri Pacha, Zamalek, Le Caire (Egypte):
Zénith, Revue Culturelle Arménienne. Première année, No. 2: Տարեկան բաժնեգին 350 ֆրանք: Հասցէ: — 30 Ave. Georges Mandel, Paris (16):

ԱՏՐԿ ԱՏԱԿԱՆԻ ԹԻՃՈՒԿՆԵՐ

Ատրպատականի ազգ. կառավարութեան վարչապետը, Փէշավարի, ձայնասփիւռ ճառով մը հաստատեց թէ ձայնողած են թէհրանի հետ կառավարութեան բանակցութիւնները: Յետոյ աւելցուց. — «Գիտենք որ զօրամասեր ճամբայ հանուած են դէպի մեր սահմանները. բայց մենք յարձակումէ չենք վախճար: Վարչապետը, Ղափամ Սալթանէ, իմաստուն եւ հայրենասէր մարդ մըն է եւ զիտէ մեր ուժը: Յետադիմական ուժեր ազդած են կառավարութեան որոշումներուն վրայ»:

Փէշավարի աղբարբեց թէ Իրան զրօժած պիտի ըլլայ Ս. Միութեան հետ կնքած համաձայնութիւնը, եթէ յարձակի Ատրպատականի վրայ: Վարչապետը բան մը չըսու նորէն թէհրան վերադառնալու մասին, թէեւ կ'ըսեն թէ Թաւրիզ վերադարձած է պարզապէս նոր հրահանգներ ստանալու համար: Այս առթիւ հաստատուեցաւ որ Ատրպատականի պատուիրակութիւնը պահանջած է ցըր — ուել իրանեան ոստիկան — զօրքը եւ կրճատել բանակին թիւը: Կը հաստատուի նաեւ թէ Ատրպատական պահանջած է զելզացիներուն բաժնել պետական հողերը:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԵՒՐՈՊԱՅԻ ԱՆՕԹՈՒԹԵԱՆ մասին խօսելով, Անգլիոյ նախարարներէն Մորիսըն, որ Ուոշինկ — թրն կը գտնուի, յայտարարեց թէ կացութիւնը «յուսահատօրէն ստիպողական է»: Յետոյ բացատրեց թէ սովը անխուսափելի է: «Յս հոս եկած եմ նախապահին հետ խորհրդակցելու համար: Մենք կրնանք կանխել այդտը: Աշխարհի մէջ բաւականաչափ ցորեն կայ եւ հետզհետէ կը հասնի, ողջ պահելու համար միջինուոր մարդիկ: Ուտելիքը չէ որ կը պակասի, այլ արդար բաշխումը»: Այս առթիւ կարգաց Գերմանիոյ բրիտանական շրջանի փոխ — հրամանատարին մէջ հեռագիրը, որ կ'ըսէր թէ հացի եւ ուրիշ արմտիքներու բաշխումը բոլորովին պիտի դադարի Մայիս 27ին, եթէ դուրսէն պաշար չհասնի նոր հունձքէն առաջ: Կը նշանակէ թէ Գերմանիոյ օրակին հազար 450 սով պիտի ունենան, ուրիշ ուտելիքներով: «Եթէ ուտեստներու ներածումը դադարի, անտեսական կեանքն ալ պիտի դադարի, անուրի արտադրութիւնը պիտի դադարի, կառախումբերը պիտի շրջանի, լոյսերը պիտի մարին: Եթէ Գերմանիան սովամահութեան դատապարտուի, քաղաքական խնդիրներն ալ պիտի բազմապատուին ոչ միայն բրիտանական, այլեւ ամերիկեան շրջանին մէջ: Գերմանիոյ սովամահութիւնը անտեսական եւ քաղաքական քառս պիտի ստեղծէ ամբողջ Եւրոպայի մէջ»: — Անգլ. կառավարութիւնը որոշեց 70.000 թոն դարի եւ 80.000 թոն գետնախնձոր զրկել Գերմանիան:

ՄԻՋԱՂԵՊ ՄԸ ԾԱԳԱՍԾ Է Ս. Միութեան եւ Մ. Նահանգներուն միջեւ, եւ ծանուցազրկները իրարու կը յաջորդեն: Պորտուգալիս իշխանութիւնը դատի կանչած է Մոսկուայի ամերիկեան դեսպանատան քարտուղարներէն մէկը, ամբաստանելով թէ «անպատշաճ վարմունք» ունեցած է ուսու դերասանուհիի մը հանդէպ, անցեալ փետրուարին, կառքի մը մէջ: Ամերիկեան դեսպանատունը յանձնարարած է քարտուղարին դատարան չերթալ: Ամբաստանուած քարտուղարը Մոսկուա կը դառնուի երկու տարիէ ի վեր եւ վերջերս Ամերիկա պիտի վերադառնար: Բանդէտներ կ'ըսեն թէ այս խնդիրը հետեւանք է խորհրդային սեղակալի մը ձերբակալութեան, Ամերիկայի մէջ, չրանսութեան մէջ զարգանքով:

ԱՐԱՐԱՅԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ արտակարգ ժողովը, որ պիտի դումարուէր Գամախոսի մէջ, յետաձգուեցաւ վերջին պահուն: Դիւանադիտական շրջանակներու մէջ կը հաւաստեն թէ յետաձգման նպատակն է ժամանակ տալ արարական պետութեան վարիչներուն, ժողովը դումարելու համար ել Արեւելի մէջ, նախապահութեամբ Եգիպտոսի թագաւորին: Այս ժողովին մէջ պիտի առջարկուի իճնական միջոցներ ձեռք առնել Անգլիոյ եւ Մ. Նահանգներուն դէմ, Պաղեստինի հարցին առթիւ: Ամէն կողմէ բողոքազրկներ կը հասնին Գահիրէ: Պարուք թագաւորը նամակ մը գրելով Արեւելոյանի եմիւրին, անոր ուշադրութիւնը հրաւիրած է կացութեան վրայ որ հետզհետէ վտանգաւոր կը դառնայ: Երուսաղէմի մէջ 200.000 սթերլինի հանգանակութիւն մը բացուած է, օգնելու համար համարաբարկան պայքարին:

ՌԱԶՄԻԿ ՕՏԱՐԱԿԱՆՆԵՐԸ պէտք է հպատակութիւն ստանան ի պաշտօնէ, կը զրէ «Ճիկոտո», Փրանսական ներգաղթի նորերուն յողուածաշարքի մը մէջ: Այս առթիւ կ'ըսէ. — «1939ին Յունիս միլիոն օտարականներ կ'ապրէին մեր մէջ: Անոնք որ ի վիճակի էին զէնք կրելու, մեծ մասով ուղեցին զինուորաբերուի: Օրէնք մը հրատարակուեցաւ հայ հայրենազորակներու զինուորաբերութեան համար: Ասոնցմէ 90.000 հոգի, արմից մէջ վամաւորապէս թագաւորի Հայեր, դրօշի տակ հրաւիրուեցան, բայց միայն 40.000 հոգի կարելի եղաւ բանակին մէջ առնել, փուլուցմէն առաջ»:

Պուէնոս Այրէսի (Արժանիքին) «Արմենիա» ցաւով կը հաղորդէ զոյժ մը, վաստակաւոր ընկեր Միմոն Թորգոմեան մեռած Ապրիլ 20ին: Ողբացեալ ընկերը, ընկի Վանեցի, 75 տարեկան էր, կանուխէն մտած է. Յ. Գաշնակցութեան շարքերուն մէջ: Այս առթիւ աշխատակից մը կը գրէ. —

Անոր բանաւոր եւ դրաւոր յուշերը որոնք կ'ընդգրկեն Վանի 1896ի դէպքերէն մինչեւ Պանաստրը, Կամաւորական Ծարժումներէն մինչեւ մեր անկախութեան պայքարն ու Հայաստանի հանրապետութիւնը, փաստերով, դէպքերով և դէմքերով, յաջորդական կերպով մէկ մասնիկը կը կազմեն Հ. Յ. Գաշնակցութեան եւ Հայոց քաղաքական պատմութեան:

Բնաւորութեամբ յանդուգն ու համարձակ, անսպառ եռանդով ու կորովով, պատկառելի արտաքինով այս վասպուրականցին, ղեռ երիտասարդ տարիքի մէջ քաջածանօթ էր ոչ միայն Վանին ու վասպուրականին, այլեւ Բազուլին եւ Կ. Պոլսին: Հակառակ իր առեւտրական զբաղմունքին անձնական յարաբերութեան մէջ էր հայ յեղափոխութեան շատ մը վիթերաններու հետ: Երբեմն իրրեւ վաճառական կամ յեղափոխական, զինուոր, կամաւոր, զինակիր, համաձայն տեղին եւ ժամանակին կը ծառայէր հայ յեղափոխութեան եւ անկախութեան պայքարի գործին:

«Արմենիա» եւս կը շեշտէ խմբազրականով. — 1928ին ընկեր Միմոն Թորգոմեան կը հաստատուէր Պուէնոս Այրէս, ուր կ'ապրէր իր ընտանիքին հետ: Աւելի քան քանդակներ տարուան իր թափառումներուն՝ կուսակցական զանազան պատասխանատու դէմքերու շրջանակին մէջ աղբար, ան կենդանի յիշատակարան մըն էր: Կը սիրէր վասպուրականը մոլորանքներով հանող պաշտամունքով մը ու իր եօթնամասունը հինգ տարու ձերտանալու ճանակին մէջ, քան տարեկան երիտասարդի մը աւելնով ու կորովով կը խօսէր հայրենի հողին ու անոր գեղեցիկութեան մասին: Հակառակ առեւտրական ասպարէզի մէջ մեծցած ըլլալուն, ան դարձած էր զրջի համետ աշխատաւոր մը եւս, ու փորձած բանասիրական, բանաստեղծական եւ հրապարակախօսական կառուածներու մէջ պտոցներ կ'արտէր մարդու իր հետախուզութիւնները եւ հետաքրքրութիւնները:

Հարաւի մեր շրջանին մէջ «Արմենիա» եղած էր հողեկան իր մեծագոյն սիրովանքը. կը գրէր նաեւ զոյգ «Հայրենիք»ներուն, ու կը խորհէր ամբողջական հատորով մը հրատարակել իր յուշերը: Տարիներու հետ յողմած էր ընկեր Միմոն Թորգոմեան, որ կը թողու դարձեալ անտիպ աշխատանք մը, «Արմենիա էջեր»:

ՆԻՒՐԸՊԵՐԿԻ ԱՏԵԱՆԻՆ ԱՌՁԵՒ, ծովակալ Ռատէր, 70 տարեկան, որ զլուխ հանած էր Գերմանիոյ նաւատորմին վերակազմութիւնը, յայտարարեց թէ կ'ընդունի իր արարքներուն ամբողջ պատասխանատուութիւնը: Պոստովանեցաւ թէ կարգ մը շեղումներ կատարուած են վերապիլի դաշնադէն, բայց վրասի տուաւ թէ դաշնակիցները իրենք ալ մեծ կարեւորութիւն չէին տար անոր գործադրութեան, երբ առաջին շեղումները պատահեցան:

ՊԱՐԵՆԱՌՄԱՆ ՏԱԳՆԱՊԸ լրջօրէն կը դադարեցնէ կառավարութիւնը: Նախարարական խորհուրդը առջի օր դարձեալ քննեց խնդիրը, առանց որոշումի մը յանգելու: Չորեքշաբթի դարձեալ պիտի դրաղի: — Պաշտօնաթիւթը նոր օրէնք մը հրատարակեց, որ աւելի ծանր պատիժներ կը սահմանէ պարենատուներու կեղծարարութեան, զողութեան, հացահատիկներու անասուններուն կերցնելու սովորութեան դէմ եւս:

ԸՆՏԱՆԵԿԱՆ ՄԵՍ ԽՆՁՈՅՔ Ծր. Կապոյտ Սաչի Լիոնի մասնաճիւղին կողմէ այս կիրակի կէս օրէ վերջ, ժամը 15էն 24, 130 rue Tête d'Or սրահին մէջ: Հայկական եւ եւրոպական պարեր: Ճոխ եւ առատ պիւֆէ մատչելի զիններով: Զանազան անակնկալներ:

ԱԶԳ. ՍԳԱՀԱՆԴԵՍԸ ԹՈՒՂՈՒՄԻ ՄԷՋ Թուրք — Լա - Մէյնի Ա. Ը. Միութիւնը կազմակերպած է սպահանդէս մը, ժամը 14.30ին Սալտէ գիւղի Սուրալ 3 rue Racine սրահներուն մէջ, ի յիշատակ Մեծ Եղեռնի, 1914 - 18ի արքայի եւ Հայկ. ջարդերու ինչպէս եւ 1939—45ի արքայազման համար ինկած հայ զոհներուն, հովանաւորութեամբ Կարմիր Սաչի Մարտիլի վարչութեան նախագահ Տիկին Յոյսէփեանի: Մարտիլի կեղծունէն պիտի մասնակցին բանախօս ընկերներ, ինչպէս եւ տաղանդաւոր երգիչ Պ. Համարձումեան: Գեղարուեստական բաժնին պիտի մասնակցի տեղադր «Մշակոյթի բարեկամներ» միութիւնը: ԲԱՆԻ մէջ ալ պիտի տօնուի սպահանդէսը երկուշաբթի, 20 Մայիս, ժամը 9ին, Salle des Mutiles, Rue Mimont: Կը խօսին Պ. Պ. Ա. Չօպանեան, Մ. Գարեան եւ թերթերու թղթակիցները: ՆԻՍԻ ՄԷՋ՝ կիրակի, ժամը 14.30ին, 72 Bld. Gambetta, նոյն բանախօսներով:

Հ. Յ. Գ. ԵԳԻՊՏԱՅԻ կոմիտէն ընդհ. ժողովի կը հրաւիրէ քաղաքի եւ արուարձաններու բոլոր ընկերները, այս ուրբաթ իրիկուն, ժամը 8.30ին, ընկերակազմներու սրահը, 9 rue Victor Massé, métro Pigalle: Կը խօսի ԺԻՐԱՅԻ ՄԻՍԱԿԵԱՆ: Նիւթը՝ «Ամպլիա եւ Հայկ. Դատը»:

ԱՌՆՈՒՎԻԼԻ Հ. Յ. Գ. «Վարդան» եմիակողմէնէն ժողովի կը հրաւիրէ իր շրջանի բոլոր ընկերները, այս կիրակի կէս օրէն վերջ ժամը 3ին, ծանօթ հաւաքատեղին: Կը խնդրուի միասին բերել անգամատեղը:

ԼԻՈՆ. — Հ. Յ. Գ. «Վարանդեան» կոմիտէն ընդհ. ժողովի կը հրաւիրէ իր ընկերները այս հինգշաբթի իրիկուն, ժամը 8.30ին, 26 rue Paul-Bertի ներքնասրահը: Պիտի կարեւոր օրակարգ:

ՄԱՍՍԵՅԸ. — Հ. Յ. Գ. Նոր Սերունդի առաջին խմբակայն պտոյտը՝ Մայիս 19ի կիրակին, բոլոր խումբերու մասնակցութեամբ: Շողեկաւոր Gare St. Charlesէն կը մեկնի ժամը 6.30ին, վերջին ժամադրապար Աիք կայարանը ժամը 7.30—8:

ՄԱՐՍԵՅԸ Հ. Յ. Գ. Երջ. Կոմիտէն ընդհ. ժողովի կը հրաւիրէ այս շաբաթ իրիկուն ժամը 7ը սովորական հաւաքատեղին, Քրիստափոր, վարանդեան, վաւեան, Բնկեր Կարօ, Ակնունի, Հայաստան, Չարեան, Թաքուլ, Կուսան եւ Համազասպ եմիակողմիտները եւ խումբերը: Ներկայ պիտի ըլլայ Կ. Կ. Ներկայացուցիչը:

Հ. Յ. Գ. ՆՈՐ ՍԵՐՈՒՆԻ Փարիզի մասնաճիւղին դասախօսութիւնը այս երկուշաբթի, ժամը 8.30ին: Պիտի խօսի ընկեր Հրանտ Սամուէլ: Նիւթը՝ Յեղափոխական շարժումները մինչեւ Հ. Յ. Գաշնակցութիւն» (Շար.): Ճշգրտած ըլլայ:

Հ. Յ. Գ. Մ. ՄԻՆԱՍԵԱՆ եմիակողմիտէն ընդհանուր ժողովի կը հրաւիրէ իր ընկերները, այս կիրակի կէսօրէ վերջ ժամը 3ին, ծանօթ հաւաքատեղին:

ՄԻՓԱՆ ԿՈՄԻՏԵԱՍԻ համերգը Յունիս 29ին: Կը խնդրուի չխաչաձեւել:

Հ. Յ. Գ. ՆՈՐ ՍԵՐՈՒՆԻ տարեկան պարահանդէսը՝ Յունիս 22ին:

ՅԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ. — Տէր եւ Տիկին Կ. Երանեան իրենց խորին վշտակցութիւնը կը յայտնեն Պ. Յ. Պետիկեանի, Սարգիս եւ Պետրոս Պետիկեան եղբայրներու եւ Տէր եւ Տիկին Ս. Մկրտիչեանի եւ զաւակներուն, ՏԻԿ. ՍՕՅԻ ՊԵՏԻԿԵԱՆԻ կեղծալի սահման առթիւ:

ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԱՐԱԳ Նօթը տամ տը Փարիզի մէջ, այս կիրակի առաւօտ: Պիտի պատարագէ Արհ. Գրիգոր Կալիկ. Պահապանեան: Երգեցողութիւնը կը կատարուի ղեկավարութեամբ Երաժշտապետ Կ. Գուրգէն Ալեմշահի եւ մասնակցութեամբ Միգիան Կոմիտասի երկեսու երգչախումբին եւ Ս. Սաչ զպրաց դասին:

Վ. ԱԼԹՈՒՆԵԱՆ կը ներկայացնէ Մեսրոպ Տէր Մինասեանի՝

Ժառանգորդը

Տրամ 5 արար, հայ ընտանեկան կեանքէ Շարաթ 18 Մայիս ժամը 9ին, Շիմիի թատրոնը, 22 rue St. Dominique, մեթրօ Invalides: Կը մասնակցին Տիկին Բ. Դաւիթեան, Տիկին Աղնաւորեան, Պ. Պ. Մ. Մաքսուտեան, Ն. Մարգարեան, Գ. Տէրվիչեան, Տիգրան Պողոսյան, Պ. Բիւզանդ, Կ. Պետրոսեան, Տ. Աղլապանեան եւ Գէորգ Վարդանեան (կուսմամբարտիկ): Տոմսերու համար գիմել ճաշարան Հ. Սասունի 31 rue d'Alexandrie - Paris:

MANUFACTURE de VÊTEMENTS
Hommes et Jeunes - Gens
Ets. BOYADJIAN
6, RUE MULET, LYON

ՎԵՐԱԲԱՑՈՒՄ
AMERICAN LLOYD
Շոգեմատային ընկերութեան գրասենեակներուն (PARIS, 7 RUE AUBER)
MARSEILLE, 48 RUE DE LA REPUBLIQUE
Շոգեմատով, օղանաով եւ շոգեկառնով քամարդուրեան տոմսեր Ամերիկայի եւ բոլոր երկիրներու համար: Ընդհանրապէս ամէն կարգի փոխադրութեանց վերաբերեալ գործադրութիւններ: Դիմել Պ. ժԱՆ - ԵԼԻՇԷ ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆԻ Վերողրեալ հասցեով

ՅԱՐԱՇ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN FRANCE

HARATCH Fonde 1924 R. C. S. 376.286

Directeur-Propriétaire : SCH. MISSAKIAN

17, Rue Damesme — PARIS (13^e)

Tel.: GOB. 15-70 — C. C. P. Paris 1678-63

Բաժնետիր. Տար. 750, Ճամբ. 400, Յամբ. 200 ֆրանկ

Samedi 18 MAI 1946 Շաբաթ 18 ՄԱՅԻՍ

ՁԶ. ՏԱՐԻ — 18^e Année N^o 4703 — Կոմ. շրջանի քիւ 442 Խմբագրի Ե. ՄԻՍԱԿԻԱՆ Գին՝ 3 ֆր

ՄԵՐ ԽՕՄԻՐԸ

ԱՐԱՔԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

Միջազգային մամուլը կը յորդի Միջին Արեւելի վերաբերեալ տեղեկութիւններով:

Ինչ որ կը կարգաք, օրը օրին, լուրերու բաժնին մէջ, աղօտ մէկ պատկերն է յարաճուն խոսքով մը: Եւ խնդիրը չի սահմանափակուիր միայն Պաղեստինով:

Ամբողջ արարական աշխարհն է որ կը խլար տարիներէ ի վեր: Մասնաւոր վերջին պատերազմէն ի վեր: Եւ շարժումը այնպիսի համեմատութիւններ ստացած է, որ խկապէս մասնազուլեան կը մատնէ աշխարհակալ պետութիւնները:

Այսպէս, Եգիպտոսը եւ Իրաքը, որոնք մասնաւոր դաշնագրերն են կնքած էին Մեծն Բրիտանիոյ հետ, վերաքննութիւն կը պահանջեն ստիպողաբար: Վերաքննութիւն չ'ընելու համար այն յօդուածները որ կը կաշկանդեն իրենց անկախութիւնն ու գերիշխանութիւնը: Ուրեմն, իբրեւ նախապայման, կը պահանջեն ետ քաշել անգլիական զօրամասերը:

Անգլիոյ աշխատակողման կառավարութիւնը աննախընթաց զիջում մը կատարեց, խոստանալով պարպել իր զօրքը Եգիպտոսէն, որպէսզի դերանահան բանակցութիւնները: Պահպանողականները զոգ էլան, առաջնորդութեամբ Չորջիլի եւ Բալենի, «խմբութիւն» կոչելով այս զիջումը:

Անոնք շատ լաւ գիտեն որ էթիոպիան ու Պէլ՝ վրիճակներն իրենց չափ «կայսերապաշտ» եւ պահպանողական են, երբ հարցը կը վերաբերի վառ պահելու բրիտանական արեւը, աշխարհի բոլոր ծովերուն վրայ:

Եգիպտոսը պարպելու յանձնարարութեան հետ, Լոնտոն Չորսերու Խորհուրդին առջեւ դրաւ նոր խնդիր մը, — Լիբիան եւ Կիբրէնիան, նախկին Աֆրիկեան Տրիպոլիտիա եւ Պէնիակիս վերածել անկախ պետութեան մը:

Այս կը նշանակէ նոր խարխիւներ սարահոլելու Արգէն կը խօսուի Թոպրոքի մասին: Եւ կ'արժարժուի հակապահանջները մը, — Նոր ջրանցք մը փորել Սուէզի շուրջը, Միջերկրականի եւ Արաբիայի ծոցին միջեւ: Ծրագրի մը որ կրնայ իրապարտուիլ տասը տարիէն, թէեւ շատ մը մասնագէտներու կարծիքով պարզապէս երազ է:

Ինչ որ ընդ յենարան մը, — աշխատակողման կառավարութիւնը հաստատեց Անգլո-արաբական անկախութիւնը, զինակցութիւն կնքելով:

Նորագոտ երկիրը դրացի է Սուէզի — բրիտանական կայսրութեան հաղորդակցութեան կենտրոնական կէտին, եւ կրնայ օգտագործուիլ դանազան ձեւերով: Պաղեստինն ալ ուրիշ յենարան, Հայֆայի նաւակայանով, գտնէ երկար ատենի համար: Ու վերջապէս Կիպրոսը:

Գալով բուն Պաղեստինի հարցին, կը թուի թէ Արաբները այս անգամ շատ աւելի վճռական պիտի ըլլան, խափանելու համար հրէական պետութեան ծրագիրը:

Մնաց որ, Լոնտոնն իսկ այլեւս չի պնդեր այդ ծրագրին վրայ (Պալէստինի յայտարարութիւն): Ապագայը՝ անգլիականութեան քննիչ Յանձնաժողովի մը առաջնութիւնը եւ անոր տեղեկագրին հրատարակութիւնը:

Յանձնաժողովը ոչ հրէական, ոչ ալ արաբական պետութիւն կը նախատեսէ: Տեղեկագրին եզրակացութիւնն իսկ — եւ մասնաւոր 100.000 Հրեաներու ներգաղթի առաջարկը — փոթորիկ մը պայթեցուց Արաբներուն մէջ, որոնք հրապարակաւ կը սպառնան կոուրի միջնեւ «վերջին մարզուն վերջին շունչը»: Բողոքի հեռագրիւններ: Ընդհանուր գործադուլ: Նոյն իսկ զիմում Խ. Միտթեան: Եւ զինուորական պատրաստութիւն:

Թերթերը կը գրեն թէ այն բացառիկ ժողովին մէջ որ պիտի գումարուի այսօր-վաղը, նախազանգութեամբ Եգիպտոսի թագաւորին եւ մասնակցութեամբ եօթը արաբական պետութեանց, պիտի առաջարկուի արաբական ներքին բանակ մը կազմել, ի հարկին կուտելու համար այս կամ այն աշխարհակալ պետութեան դէմ: Իրազեկներու կարծիքով, կարելի է անմիջապէս ոտքի հանել 138.000 զինուորներ, եւ հետզհետէ մարտել 200.000 հոգի եւս: Ուրեմն մօտաւորապէս 350.000 հոգինոց բանակ մը, առանց հաշուելու արձակազէնները, դաւաղիրները, ահաբեկիչները եւ բուն արաբ ժողովուրդը:

Ինչ որ շատ աւելի խոր եւ լայն ծալքեր կը ներկայացնէ շարժումը:

Իրար կ'ուսեն Արեւ... (Մասնաւոր քննադատութիւն Յանաշի)

«Վաթան» (Ահմէտ Էմին Եարման) եւ «Ուլուս» (Յալիս Բեֆքը Աթայ) թերթերու միջեւ, վերստին է գարձեալ այն սուր պայքարը, որ կը թելադրուի «Հալք»-ի եւ նորակազմ «Ինքնակրթ» կուսակցութեանց խուլ հակամարտութիւններէն: Ինչպէս ճշդա՞ծ եմ բազմաթիւ առիթներով, դաշնակցական որ եւ է խթան պէտք չէ փնտռել այդ դրչապայքարներուն մէջ, որոնք անհաստատ, — առ առաւելն հատուածական բնոյթ կը կրեն:

Այս անգամ եւս, Յալիս Բեֆքը — Ահմէտ Էմին բուն հակամարտութիւնը կը թելադրուի հին ցաւէն. աթոռի ու պաշտօնի ցաւէն:

Յետագայ հատուածները բաւական բան կը բացատրեն.

«Վատահ ենք, — կը գրէ Ահմէտ Էմին 19 Ապրիլի խմբագրականին մէջ, — թէ «Հալք»-ի վարչները հարեւնասէր ու յարգելի անձնաւորութիւններ են: Տարակոյս չկայ, միւս կողմէ, որ միակ կուսակցութեան մը տարիներու մենատիրութեանն օգտուելով, կարգ մը մարդիկ բազմոց կը տաքցնեն այնտեղ անարժանաբար, ծուլօրէն եւ անպատկառ օղակալութեամբ: Այս կարգի հաց-կատակներ, երկար տարիներու իրենց պաշտօնն ու հանդամանքը իբրեւ զէնք դորձածելով, կը շարունակեն սպառնալ աշին ու ձախին, անվախօրէն կը դաւադրեն բոլոր ազնիւ եւ անշահախնդիր հոգիներուն, ու տեսական քծինքով կը յաջողին անխոցելի մնալ:

«Հալք»-ի առողջ կազմին վրայ վտանգաւոր պարտքեր են այս մարդիկը, — հոգիով սնանկ, անարդարացեալ, եւ գուրկ դատարարակութեան: Փոխանակ ճակտի քրտինքով վաստակելու, կը նախընտրեն տեսական դաւերով, բռնակալութեամբ, սպառնալիքով եւ խարդախութեամբ շահի իրենց կեանքը: Իրենց ծագումն ու բովանդակ կեանքը, հարցազանով մը կը ներկայանան, միշտ, մեզի: Քննադատական պայքարի իրենց միջոց կը ծառայեցնեն «Կէնկալք»-եան զէնքեր: Օրինակ, երբ խօսք կ'անցնի նոր կուսակցութիւններու մասին, կը սպառնան. «Մի հաւատաք նոր կուսակցութիւններուն: Խաբկանքներ են անոնք: Ինչպէս պատահեցաւ Սերպէսթ կուսակցութեան օրերուն, այժմ եւս պիտի վերադառնանք միակ կուսակցութեան դրութեան: Կառավարութեան ձեռքը կը գտնուի օրէնք մը, որով կրնայ անմիջապէս լուծել ունէ կազմակերպութիւն, առանց ունէ պատճառ ցոյց տալու»:

Այս կարգի քարոզութիւն մը համազօր է մենալատ անարդանքի: Ու անոնք որ այս կերպով կ'ուզեն պայքար մղել, կ'անպէտք կը հարեւանեն թուրք գեմոնիքութիւնը, — մուլթի մէջ: Նոյն մարդիկը, այնքան կարուկ կերպով կը սպառնան թուրք հողագործին՝ չեչտելով թէ «Հողային Օրէնք»-ի տրամադրութեանց հիման վրայ, կրնան երկրագործի ձեռքէն խլել իր հողերը: Կը սպառնան առեւտրականին՝ 510 թիւ որոշմանգրի հիման վրայ, կը սպառնան արհեստավարին, գործատրին ու հասարակ աշխատակորին:

Այս զէնքերով պայքար մղել, յատուկ է միայն տկարներուն եւ փառերուն: Ու ցաւալի է, որ Հալքի պատասխանատու շրջանակներուն մէջ սպրդած են այս կարգի շտեմներ ու մահաբոյժներ: (Ակնարկութիւն «Ուլուս»-ի խմբագիր Յալիս Բեֆքը-ի): Ուշ չէ ատենը, այս կարգի ապականութիւնները քշելու հրապարակէն: Այսպէս, մենք կորսնցուցած պիտի ըլլանք նաեւ վերջին առիթը, թուրք գեմոնիքութիւնը իրականութեան վերածելու»:

23 Ապրիլի «Ուլուս»-ի մէջ, Յալիս Բեֆքը պատասխանելով Ահմէտ Էմինի, կ'եղբարակացնէ.

«Այս կարգի տիմարներ, շատ աւելի մեծ վնաս կը պատճառեն մեր հայրենիքին, քան հարկը յանձնեցնողները, որոնք այսքան տգէտ ու օտարամիտ մարդիկ չեն: Պէտք է հասկնանք այլեւս այս կարգի մարդուկին՝ թէ թուրք ժողովուրդը պիտի զիտնայ այսքան անյիշաչար չմնալ իր թշնամիներուն հանդէպ»:

ԱՐԱՔԱԿԱՆ ԵՕԹԸ ՊԵՏՈՒԹԵԱՆՅ Վարիչները ժողով պիտի գումարեն մէկ շաբաթէն, Սինա լեռան վրայ, նախազանգութեամբ Փարուք թագաւորին: Հրաւերը ընդունած են Սուրիոյ կառավարութիւնը, Մէլուտի Արաբիան, Անդրյորդանանը, Լիբանանը, Եհմէնը, Իրաքը եւ Պաղեստինի Արաբական Գերագոյն Կոմիտէն: Աֆրիկեան Տրիպոլիտիա ալ պատուիրակներ պիտի մասնակցին:

ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ԳԸ ՄՆԱՆ ԱՌԿԱՌ

Ֆրանսա Արեւ յուսախաբ

Չորսերու խորհուրդը վերջացաւ մայիս 16ին, առկախ ձգելով բոլոր հիմնական խնդիրները, որոնք պիտի քննուին փոխանորդներու եւ մասնագէտներու կողմէ: Յաջորդ ժողովը պիտի գումարուի Յունիս 15ին, նորէն Փարիզի մէջ:

Իր շնորհ եւ վերջին նիստին մէջ, ժողովը մէկ խնդիր միայն կրցաւ կարգադրել, — վաւերացնել Իտալիոյ զինադադարի նոր պայմանագիրը, որուն համաձայն Իտալիան կառավարութիւնը որոշ իրաւասութիւններ պիտի վայելէ, մինչեւ հաշտութեան դաշնագրին կնքումը: Մ. Նահանգներու արտաքին նախարարը, Պ. Պըրնս անմիջապէս վերադարձաւ Ուոշինգթըն, ուր պիտի խորհրդակցի նախազանգութեամբ հետ: Ժողովը վերջացաւ մայիս 17-ի ժողովարարի մը մէջ, քննելով դերմանական խնդիրը, առանց որ եւ է համաձայնութեան յանդէպը նոյնիսկ Սարի մասին, ինչ որ եւժ յուսախաբութիւն պատճառեց Ֆրանսայի:

Առտուան նիստին մէջ քննուեցան երեք խնդիրներ, — 1. Ֆրանսական ծրագիրը՝ Սարի մասին: 2. Պըրնսի առաջարկը՝ նոյնմբեր 12ին ժողով գումարել, խմբագրելու համար դերմանական դաշնագիրը: 3. Ամերիկեան ծրագիրը՝ 25 տարուան դաշնագիր մը կնքելու Գերմանիոյ մասին: Երեք հարցերն ալ միացին առկախ: Ֆրանսա կը պահանջէր Գերմանիոյ այդ շրջանը ենթարկել իր տնտեսական եւ դրամական վարչութեան եւ ուրիշ պայմաններ կը դնէր (տես երէկուան «Յանաշ»): Ամերիկեան պատուիրակը դիտելով սուսա թէ այս խնդիրը կարելի է կարգադրել, եթէ Ֆրանսա հասնուի որ կեղծական կառավարութիւն մը հաստատուի Գերմանիոյ մէջ: Պէվին ալ առաջարկեց իրենց փոխանորդներուն քննութեան յանձնել խնդիրը: Իր կարծիքով, Սարի շրջանին անջատումը կրնայ շատ ծանր հետեւանքներ ունենալ Գերմանիոյ տնտեսական կացութեան վրայ: Եւ յետոյ, վերմանական զանազան խնդիրները պէտք է քննել ամբողջութեամբ, եւ ոչ թէ զատ զատ: Մոլոթով թեր ու զէմ կարծիքները լսելէ վերջ, յայտնեց թէ ինք ստիպուած է այս բոլոր խնդիրներու մասին խորհրդակցել Սթալինի հետ: Ֆրանսայի արտաքին նախարարը խորապէս ազդուելով այս կացութեանն, յայտարարեց, դառնու թեամբ. — «Ահաւասիկ նոր օղակ մը յուսախաբութեանց այն շղթայէն զոր Ֆրանսան կը կրէ 25 տարիէ ի վեր, վերմանական խնդիրներու կարգադրութեան առթիւ»:

Գալով նոյնմբեր 12ին ժողով գումարելու առաջարկին, Պէվին գիտել սուսա թէ աւելորդ է թուական որոշել: Պըրնս պատասխանեց թէ այս առաջարկը զնելով, կ'ուզէ այն սպառնութիւնը գործել թէ Չորսերը համաձայն են քննելու վերմանական հարցը: Պիտո յայտարարեց թէ սկզբ բունքով կ'ընդունի խորհրդաժողովը, բայց պէտք չէ թուական որոշելով այն սպառնութիւնը ձգել Գերմանիոյ մասին: Եւ առաջարկեց թուական որոշել Յունիս 15ին նիստին մէջ: Ինչ կը վերաբերի 25ամեայ դաշնագրին, որ Պըրնսի կարծիքով «աննախընթաց է Մ. Նահանգներու պատմութեան մէջ», նոյնպէս առկախ մնաց: Անգլիա համաձայն կ'ընտրէր, բայց Մոլոթով կը կարծէ թէ անոր քննութիւնը ստիպողական չէ եւ կրնայ կատարուիլ հաշտութեան դաշնագրին վերջը: Պ. Պիտո եւս վերապահ դերք մը բունց:

Կէսօրէն վերջը, նորէն ամուլ վիճարանութիւններ տեղի ունեցան: Պիտո առաջարկեց յանձնաժողով մը կազմել մասնաւոր պատուիրակներէ, զերմանական հարցը մասնաւորապէս տեղեկագիր մը ներկայացնելու համար յունիս 15ի ժողովին: Մոլոթով բաւ թէ ստիպուած է խորհրդակցել իր կառավարութեան հետ: Եւ այսպէս փակուեցաւ նիստը, առկախ ձգելով բոլոր հիմնական խնդիրները:

Ժողովին փակումէն վերջը, Պ. Պիտո մասնաւոր խափակութիւն մը ունեցաւ երեք նախարարներուն հետ, անոնց ուշադրութեան յանձնելով Ֆրանսայի մտահոգութիւնները եւ մասնաւորապէս ծուխախաղնապը:

9,000,000 Գերմաններ աւօրի

Գիմանիոյ բրիտանական շրջանին պարենաւորման վարչութիւնը կը յայտարարէ թէ ինք միլիոն Գրմաններ անօթութեան պիտի մեռնին վեց ամսուան ընթացքին, եթէ արմտիք չհասնի մինչեւ Մայիս վերջը: Նոյն աղբիւրին համաձայն, վերջերս կ'ընթակէր այնքան ծանրացած է որ, հացի պաշարէ մնացած բրիտանական շրջանին մէջ եւ հարկ պիտի ըլլայ ներկայ օրապահիկը 1050 դոլլէ (բալուլ իջեցնել 4—500), Յունիսի սկիզբէն, եթէ բաւարար արմտիք չհասնի մինչեւ այն ատեն: Այն ատը զինուորական իշխանութիւնը պիտի հարկադրուի բրիտանական կառավարութեան ներկայացնել ամբողջ տաղանապը, որպէսզի որոշէ թէ կրնա՞նք ընտանի անգլ. բանակին օրապահիկը,

ուսուցիչ ճարտար համար Գերմաններու: Մասնա-
պետներու կարծիքով, եթէ պաշար չհասնի քանի
մը շարաթէն, Գերմաններու օրապահակը պիտի
իջնէ Անգլիոյ պարենաչափի մէկ հինգերորդին եւ
հազարաւորներ անօթութենէ պիտի մեռնին փո-
ղոցներու մէջ: Եւ յետոյ, եթէ Գերմանները իրենց
թերթերէն եւ անթելէն իմանան նոր կրճատում
ները, ընդհանուր խուճապ մը պիտի ծագի, թէեւ
ամերիկեան թղթակիցները արդէն հեռագրած են
օրապահակը 4-500 դոլի վերածելու հաւանա-
կանութիւնը:

Լոնտոնի թերթերը կը գրեն թէ Գերմանիոյ
արմատիքի ամբողջ պաշարը սպառած է եւ Անգլիա-
յէն ու Ամերիկայէն դրկուած պարէնը հաղիւ 15 օր
կրնայ թաւել: «Այսուհետեւ մէկ հատիկ ցորեն
չկայ որ ալիւրի վերածուի եւ փուտերուն դրկուի»:
Բազմաթիւ Գերմաններ անկողիններէն կամ թաք-
տոցներէն դուրս չեն կրնար ելլել, շարժելու ան-
կարողութեան դատապարտուած ըլլալով:

Ամերիկեան շրջանին մէջ ալ կացութիւնը
նոյնքան ծանր է: Մայիսին վերջը, եօթը միլիոն
Գերմաններ օրակա կէս շերտ հաց պահպան պիտի
ուսնեն եւ ընդհանուր գոլը պիտի իջնէ 1180ի:

Միջազգային Նպատամատոցի նախագահը,
Լա Կարտիա, յայտարարեց թէ պիտի առաջարկէ
աւելի սեւ հաց պատրաստել եւ խմորեղէնները
արգիլել Մ. Նահանգներուն մէջ: Այս առթիւ դի-
տել տուաւ թէ Ամերիկացիները այսօր շատ աւելի
կ'ուսնեն քան 1935-1939ին:

Չինաստանի պարենաւորման նախարարը
յայտարարեց թէ կացութիւնը անտանելի դարձած
է: Օրակա 170 հոգի անօթութենէ կը մեռնին մի-
այն Բանթոնի մէջ: Հնդկաստան ալ սովածահու-
թեան դատապարտուած է եւ նոր կրճատումներ
պիտի կատարուին:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՀԵՂԿԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ նոր սահմանադրու-
թիւն մը պատրաստած է անգլ. կառավարութիւ-
նը: Այս առթիւ Հնդկաստան դրկուած պատուի-
րակութիւնը կողմ մը ուղղեց հնդիկ ժողովուրդին
ազդարարելով որ եթէ չընդունին, հետեւանք պի-
տի ըլլայ «բանտութիւն, քառս, մինչեւ անպահ քա-
ղաքացիական պատերազմ»: Կանտի ալ ազօթքի
հրաւիրեց ժողովուրդը եւ յորդորեց լրջօրէն
ուսումնասիրել նոր ծրագիրը, որ կը բաղկանայ
վեց յօդուածներէ: 1. Կազմել Հնդկական Միու-
թիւն մը, անոր ստիպ իրաւասութիւններ վարե-
լու արտաքին դործերը, աղբ. պաշտպանութիւնը
եւ հաղորդակցութիւնները: 2. Ազգ. ժողով մը
(խորհրդարան) հաստատել եւ: Այս ծրագիրը
հաղիւ Անգլիոյ երեսփ. ժողովին յանձնուած,
Չըբչի իր խոր մտահոգութիւնը յայտնեց, աւել-
ցնելով թէ պիտի պայքարի:

ԱՆԳՍՏՐԱՅԻՆ կը հեռագրեն թէ քաղաքական
պայքարը սուր հանգամանք ստացած է: Ընդդի-
մադիրներուն եւ կառավարութեան միջեւ բացուած
փոստ երթալով կ'ընդարձակուի: Պայքարը դադա-
րաբար կանգնեց անցած է անհատական վէճերու (Յա-
նաւը: Կարգալ Ա. էջի թղթակցութիւնը): Դե-
մոկրատ կուսակցութիւնը կ'ամբաստանէ կառա-
վարութիւնը թէ չարաչար կը դործածէ իր իշխա-
նութիւնը: պայքարելու համար ընդդիմադիրնե-
րուն դէմ: Կուսակցութեան վարիչներէն մէկը
յայտարարեց: «Մենք կը վերահսկենք այն պայ-
քարը որ սկսած ենք 1909ին: 1923ին կը կար-
ծէինք թէ շահած ենք ժողովրդապետութեան յաղ-
թանակը անհատական իշխանութեան դէմ: Մենք
պիտի վերահսկենք մեր յեղափոխական դործը»:
Վերաքննիչ ատենար բեկանեց ընդդիմադիր Չե-
քերիա Մէրթէլի, կնոջը եւ ուրիշ երկու խմբա-
վերներու դէմ արուած վճիռները (վեց ամսէն
մէկ տարի բանտարկութիւն):

500 ՅՐԱՆՔՆՈՅ նոր թղթադրամներ շրջարե-
րութեան պիտի հանուին Մայիս 20ին սկիւսլ,
մանիշակադոյն, եւ Եւրոպայի նկարով:

ՆԱՍՏԱՅՈՒՆ ԹՐԱՆՍԻՆ յայտարարեց թէ ուղ-
ղակի խոսակցութիւններ ունեցած է Սթալինի
հետ, մասնաւորապէս խնդրելով Խ. Միութեան ա-
ջակցութիւնը՝ սովահար երկիրներու պարենաւոր-
ման համար: Աւելի մանրամասն տեղեկութիւններ
պիտի հաղորդէ յառաջիկային:

ՀՈՍԻԻ ՀՍՄԱՆԱՍՏԱՆԸ փակուեցաւ: Ուսուցիչ-
ները դործազուլ հոգեկան են: 35.000 ուսա-
նողներ կը թափառին փողոցները: Նոր թաղա-
քին գահակալութեան առթիւ ընդհ. ներուճնորհ-
ուեցաւ անոնց որ վեց ամիս կամ աւելի լակաս
բանտարկութեան դատապարտուած են: Ուրի,
հրամանագրով մը պիտի արձակուին բոլր բան-
տարկեալները, բացի անոնցմէ որ դատապար-
տուած են ծանր ոճիրներու, քաղաքական յան-
ցանքներու, սեւ շուկայի եւ: համար:

ԵՍՍՐԻՆ ՎԵՑ ՄԱՏՆԻՉՆԵՐԻՆ երկուին հա-
մար մահապատիժ պահանջեց կառավարութեան
ներկայացուցիչը: Դատաւարութեան առիւ ծանր
միջադէպեր պատահեցան, եւ պաշտպանիստա-
բանները սպառնացին ձգել հեռանալ:

800.000 ԿՏՈՐ ձԵՐՄԱԿԵՂԷՆ եւ 100.00 մեթր
փէրփայ ծախու հանուած է այսօրուրէն կսեայ,
մատչելի դիներով, Փարիզի եւ արեւմտեաններու
մեծ ու փոքր խանութներուն մէջ: Ամէն մարդ

ՆԱՄԱԿ ԽՍՐԱՎՐՈՒԹԵԱՆ

ՄԱՐՏԻՅԵՆ, 13 Մայիս. — Թեմիս երեսփ. ժո-
ղովը 1946 Մայիս 12ի իր վերջին նիստին մէջ եւ
ծանօթ նամակիս առնչութեամբ զիս հրաժարե-
ցուց Հարաւ. Ֆրանսայի Առաջն. փոխանորդու-
թենէն: Միւս կողմէ, հրապարակաւ կը յայտա-
րարեմ որ անորոշ եւ երկար ժամանակի հա-
մար դադարած եմ մեր թեմին՝ եւ շատ բնական
կերպով Պօմոնի եւ շրջաններու մէջ քահանայա-
գործելէ: Մինչ այդ, իբրեւ վերջին պարտականու-
թիւն, կը փութամ թեալը մեր սիրելի ժողո-
վուրդին որ ամէն դնով ջանան պահել իրենց պա-
ղարիւնը՝ փրկելու համար, փոխադարձաբար,
համադորձակցութիւն ու համերաշխութիւնը:
Նախընտրեցի զոհել անհատականութիւնս եւ պաշ-
տօններս, յանուն խաղաղութեան՝ որուն այնքան
կարօտ է մեր ժողովուրդը:

ԵՂԻՇԷ ՔՂԵՑ. ՄԽԻԹԱՐԵՆԱՆ
Նախկին Առաջն. փոխ. եւ հոգեւոր հովի Պօ-
մոնի եւ շրջակայից:
ՄԱՆՕԹ. — Վերադարձալ պարագան հաղորդած
եմ նորընտիր Առաջն. փոխ. Արժ. Տ. Գալուստ
Ա. քննյ. Մովսէսեանի:

Կրնայ դնում կատարել ներկայացնելով համա-
պատասխան կէտերը եւ հիւսուածեղէնի Լ3 կտրո-
նը: Բոլոր ապրանքներուն վրայ նշանակուած է
«Արտագրութիւն 1946ի», իրենց գիներով:
ՌՕՆԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏ Անտէլիի նոր դատա-
վարութեան առթիւ (նախապէս մահուան դատա-
պարտուած էր), որ կը շարունակուի Փարիզի մէջ,
իբրեւ վկայ լուսեցաւ Պ. Էնիօ: Նախկին վարչա-
պետը յայտարարեց թէ խիստ հակողութեան տակ
անուած էր նահանգապետին կողմէ: Այս վերջե-
նը առաջարկած է թուրք մը ստորագրել, Ֆրան-
սայէն չհեռանալու համար, բայց ինք մերժած է:
Նախագահ Բոզլէլիթ ալ Ամերիկա հրաւիրած էր,
բայց Էնիօ մերժած է:

ԹԷՀՐԱՆԷՆ կը հեռագրեն թէ Ռուսերը ամ-
բողջովին պարզած են Իրանի հողերը: Չինուորա-
կան պատուիրակութիւն մը պիտի երթայ Թաւ-
րիզ, ջննութիւն կատարելու համար: Ատրպատա-
կանի հետ քանակցութիւնները պիտի վերսկսին
Թաւրիզի մէջ:

ՔԱՆԻ ՄԸ ՀԱՅԱՐ ՖՐԱՆՍԱՅԻՆԵՐ կը մերժեն
Ֆրանսա վերադառնալ Գերմանիոյ ամերիկեան
շրջանէն: Ամերիկեան իշխանութիւնները որոշած
են իբրեւ Գերմանացի նկատել զանոնք, պայմանա-
ժամ արուած ըլլալով մինչեւ մայիս 15:

ԸՆՏՐԱԿԱՆ ՊԱՅՔՐԸ երթալով կը սաստկա-
նայ: Ընկերավարական կուսակցութեան ընդհ. քաղ-
աքարը Le Populaire մէջ հրատարակուած գրու-
թեամբ մը գիտել կուտայ թէ «ազգը չուզի որ
Մորիս Թորէզը վարչապետ ըլլայ, որովհետեւ
Ֆրանսա բան չի շահի հիմնուելով Խ. Միու-
թեան արտաքին քաղաքականութեան վրայ»: Hu-
manitéն ալ երկու ընկերներու ստորագրութեամբ
կը յայտարարէ թէ Թորէզ 1939ին բանակէն հեռա-
ցաւ ոչ թէ իբրեւ դատաւիւր, այլ իրենց հրահան-
գին վրայ, պայքարելու համար Գերմանիոյ դէմ:

Տէր եւ Տիկին Գրիգոր Մերոբեան եւ իրենց
դուստրը Նոյեմի Ժալլին, Այրի Տիկին Մըրուհի
Սեբոսեան (Պոլիս), Տէր եւ Տիկին Չարհ Սեբոսե-
ան եւ զուակները (Փարիզ), Տէր եւ Տիկին Վահէ
Սեբոսեան եւ զուակները (Պոլիս), Այրի Տիկին
Նոյեմի Չարի Չարի (Պոլիս), Տէր եւ Տիկին
Հայկ Չարի Չարի եւ զուակները (Պոլիս), Տէր եւ
Տիկին Յակոբ Չարի Չարի եւ զուակները (Պոլիս),
Տէր եւ Տիկին Մկրտիչ Դաւիթեան եւ զուակները,
խորին կսկիծով կը ծանուցանեն եղբրական մահը
Իրենց զակին, բրջ, թոնուհետոյ, եղբոր աղ-
վան, ընդոստեր, զարմուհույն, ազգականին եւ
սանին՝

Օր. ՄԵԼԻՆԷ ՍԻՎԼԷԹ ՍԵՐՈՐԵՆԱՆԻ
որ տեղի ունեցաւ, ծաղիկ հասակին մէջ (19 տա-
րեկան), կիրակի, 12 Մայիս, Ibis, Rue Rouget de
l'Isle, Choisy le Roi:

Յուզարկաւորութիւնը պիտի կատարուի եր-
կուշարթի, 20 Մայիս, ժամը 15.30ին, Եւոզի լը
Ռուայի Մէն Լուի եկեղեցիին մէջ, ուրիշ մարմի-
նը պիտի փոխադրուի թաղին գերեզմանատունը:
Մասնաւոր մահազոյր կրկուած ըլլալով, կը
լինդրուի իբր այդ նկատել ներկայս:

ՀԱՂՈՐԴ. ՄԻՋՈՅՆԵՐ. — Porte de Choisyէն
մեկնող 183 թիւ օթօպիւսը, եւ Օսթէրլիցի կայա-
րանէն մեկնող կառախուսը, իջնել Choisy le Roi:

ՄԵՏՄԱԿԱՆԱԿԻ ՅԱՏՈՒԿ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ
կերպասի, պտորատու հագուստի Ալգասեան
բամպակեղէններու, պոմեթրիի մեծաքանակ վա-
նաւոր: Դիմել Ն. ԱԼԻԲՄԱՆԵԱՆ, 71bis Rue Bos-
son, Vienne (Seine):

ՓԱՐԻՉԻ ՀԱՅ ՏԻԿԵԱՆՑ ՄԻՈՒԹԵԱՆ գեղարուես-
տական պարանջիկ ցերեկոյթը, 19 Մայիս կիրակի
ժամը 14-23, Hôtel Lutétiaի գեղեցիկ սրահներուն
մէջ: Տոմսերու վաճառուը սովորական վայրերը:

Le Gérant: H. AGONEYAN
Imprimerie DER AGOPIAN, 17 Rue Damesse - 13

ՅՈՒՇԱՏԵՐ

ԱՌՆՈՒՎԻՒԼ Զ. Յ. Դ. «Վարդան» ենթակոմի-
տէն ժողովի կը հրաւիրէ իր շրջանի բոլոր ընկեր-
ները, այս կիրակի կէս օրէն վերջ ժամը 3ին, ծա-
նօթ հաւաքատեղին: Կը խնդրուի միասին բերել
անդամատեղը:

ՄԱՐՏԻՅԵՆ. — Զ. Յ. Դ. Նոր Սերբուդի արա-
ջին խմբական պտոյտը՝ Մայիս 19ի կիրակին, բո-
լոր խումբերու մասնակցութեամբ: Երեկոյան
Gare St. Charlesէն կը մեկնի ժամը 6.30ին, վերջին
ժամադրաւայր Aixի կայարանը ժամը 7.30-8:

ՄԱՐՏԻՅԵՆ Զ. Յ. Դ. Երջ. Կոմիտէն ընդհ. ժո-
ղովի կը հրաւիրէ այս շաբաթ իրիկուն ժամը
7ին սովորական հաւաքատեղին, Քրիստապոս,
Վարապետի, Վառնան, Բեկեր Կարօ, Ակնունի,
Հայաստան, Չաւարեան, Թաքուլ, Դուստան եւ
Համապատասխանութիւնները եւ խումբերը: Ներ-
կայ պիտի ըլլայ Կ. Կ. Ի ներկայացուցիչը:

Զ. Յ. Դ. ՆՈՐ ՍԵՐՈՐԵՆԱՆԻ Փարիզի մասնաճիւ-
ղին դասախօսութիւնը այս երկուշաբթի, ժամը
8.30ին: Պիտի խօսի ընկեր Հրանտ Մամուկէլ: Նիւ-
թը՝ Յեղափոխական շարժումները մինչեւ Զ. Յ.
Դաշակցութիւն» (Շար.): Ճշգրտաւ ըլլալ:

Զ. Յ. Դ. Ս. ՄԻՆԱՍԵԱՆ ենթակոմիտէն ընդ-
հանուր ժողովի կը հրաւիրէ իր ընկերները, այս
կիրակի կէսօրէ վերջ ժամը 3ին, ծանօթ հաւա-
քատեղին:

ՎՍԱՆՍՍ. — Մայիս 28ը կը տօնուի, 29 Մա-
յիս չորեքշաբթի երեկոյ ժամը 8.30ին:

ՎԻԷՆ. — Մայիս 28ը կը տօնուի Յունիս 2ին
քաղաքապետարանի սրահին մէջ:

ՄԱՐՏԻՅԵՆ. — Զ. Մ. Ը. Մ. Ի բացառիկ ընդհ.
ժողովը՝ վաղը, կիրակի, առտուան ժամը 9ին,
Միութեան հաւաքատեղին՝ Bar du Globe: Ներ-
կայանալ անդամատեղերով:

Վասպուրականի ձերուսմարտը

ՄԱՐՏԻՅԵՆ. — Վասպուրականի Հայր. Միու-
թիւնը կը տօնէ ՅԱՂԹԱԿԱՆ ՀԵՐՈՍՄԱՐՏԻՆ
31րդ տարեդարձը, Մայիս 25ին, շաբաթ իրիկուն
ժամը 9ին մինչեւ լոյս, Salon Colbertի մէջ, rue Col-
bert No. 7: Կը նախադասէ Պ. ՌՈՒԲԷՆ ՅՈՎԱՆԵ
ԵԱՆ, կը բանախօսէ հայրենակից ՀԱՅԿ
ԶՐՈՒՄԵՆԻՍԵԱՆ (Փարիզին): 25 վանուհիներ բե-
մին վրայ: Գեղարուեստական ճոխ բաժին:

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՀԵՐՈՍՄԱՐՏԻ 31րդ ՏԱ-
ՐԵԴԱՐՁԸ ՎԻԷՆԻ ՄԵՋ, կազմակերպուած Զ. Կ.
եւ Մ. Միութեան կողմէ, այս կիրակի կէսօրէ
վերջ ժամը 2.30ին Մէրլը Կաթնիկի սրահին
մէջ, պատուակալ նախադասութեամբ եւ ներկա-
լութեամբ ՉՕՐ. ՍՄԲՍԻ: Կը նախադասէ Զ. Կ.
Տէրմոյեան: Պիտի բանախօսեն Պ. Պ. Վարդան
Չուլքեան, Հայկ Զրուանդեան (Փարիզին): Գե-
ղարուեստական ճոխ բաժին, Կապոյտ Խաչի սա-
նուհիներու կողմէ: Անակնկալներ եւ Կովկասեան
պար:

Վ. ԱԼԹՈՒՆԵԱՆ կը ներկայացնէ Մերոպ
Տէր Միասեանի՝

Ժառակուորդի

Տրամ 5 արար, հայ ընտանեկան կեանքէ
Շարաթ 18 Մայիս ժամը 9ին, Երիւրի թատրոնը,
22 rue St. Dominique, մեթրո Invalides: Կը մասնակ-
ցին Տիկին Բ. Դաւիթեան, Տիկին Աղնաօրեան,
Պ. Պ. Ս. Մաքսուտեան, Ն. Մարդարեան, Գ. Տէր-
վիչեան, Տիգրան Պողոստ, Պ. Բիւզանդ, Կ. Պե-
րոսեան, Տ. Աղլազանեան եւ Գէորդ Վարդանեան
(կոմիտարիկ):
Տոմսերու համար դիմել ճաշարան Զ. Սասու-
նի 31 rue d'Alexandrie - Paris:

ՏԷՍԻՆ. — Դպրոցական հանդէս կազմակեր-
պուած Հայ Կրթական Մարմնի կողմէ, կիրակի,
19 Մայիս, կէսօրէ վերջ ժամը 2.30ին, Հայ ժող-
ճան մէջ: Երդ, արտասանութիւն, կենդանի պատ-
կեր, եւ թատերգութիւն մը «ԱՅՆ ԳԻՇԵՐԻՆ»,
զպրոցականներու կողմէ:

ՄԱՐՏԻՅԵՆ. — Պուլ. Օտտոյի Յր. Կապոյտ Խա-
չի մասնաճիւղի պարահանդէսը մայիս 18ին, շա-
բաթ իրիկուն ժամը 8.30ին մինչեւ կէս զիշեր,
Central Barի մէջ, 117 Route Nationale (La Viste) sur
le Plateau, Place d'Aixէն առնել 26թիւ հանրակառքը:

ԼԻՈՆ. — Տէր եւ Տիկին Յակոբ Մօթեան ի-
րենց խորին շնորհակալութիւնը կը յայտնեն ամէն
անոնց որ, անձամբ կամ հեռագրով մասնակցեցան
իրենց զակին՝ ՍԵՐՈՒՎԷԻ միկրոութեան արարո-
ղութեան, կնքահայրութեամբ Տէր եւ Տիկին Խա-
չատուր Տեփանեանի:

ԸՆՏԱՆԵԿԱՆ ՄԵՏ ԽՆՁՈՅԻ

Յր. Կապոյտ Խաչի Լիոնի մասնաճիւղին կողմէ
այս կիրակի կէս օրէ վերջ, ժամը 15ին 24, 130 rue
Tête d'Or սրահին մէջ: Հայկական եւ եւրոպական
պարեր: Ճոխ եւ առատ պիւֆէ մատչելի գիներով:
Զանազան անակնկալներ:

Մեր ԽՕՍԻԸ

ԱՆՏԵՐ ԳԱՂՈՒԹ ՄԸ

Ի՞նչ կը ներկայացնէ, այսօր, երբեմնի բազմամասն եւ չէն դադարէր: Ոստանը, ուր կեդրոնացած էին թրքահայ ժողովուրդին ազգ. իշխանութիւնը եւ արեւմտահայ մշակոյթը: Այնքան հաստարմատ: Ծաղկալից եւ ծաւալուն:

Անշուշտ չէք սպասեր որ այս տաժանելի հարցումներուն պատասխանը տրուի 80-100 տողիմէջ: Եթէ ուզէինք իսկ ուսումնասիրութիւն մը կատարել, դժուար թէ յաջողէինք: Ոչ միայն շատ մը վաւերական նիւթեր կը պահուին, այլ եւ եղածն ալ կարելի չէ օգտագործել:

Փորձենք, ուրեմն, կարգ մը իրողութիւններ եւ երեւոյթներ պարզել, օգտուելով Պոլսոյ թերթերէն, հայերէն թէ թուրքերէն:

Ինչ որ Ազգ. Պատրիարքարան կը կոչուէր երբեմն, դարձած է կատարեալ Արշակաւան: Մանաւանդ նոր տեղապահին՝ տիրահռչակ Գէորգ արք. Արսլանեանի «գահակալութիւնէն» ի վեր:

Տէր — տիրական ամէն բանի, այս վեղարարող անբարոն անուղղի մասնամ է իր շրջապատը, շնորհիւ իր վայելած փաստաթղթերէն: Վերջին լուրերու համաձայն (5 Մայիս), այժմ ձեռնարկներ կը կատարէ, ինքզինքը Պատրիարք հռչակելու համար: Չէ՞ որ «ախորժակը ուսելով կը բացուի»:

Նշանակալից երեւոյթ մը, այս առթիւ:

Ռուսներու յարաբերութեանց լարումէն քի վեր, պոլսահայ թերթերը ազատորէն կը խօսին Ազգ. Ընդհ. Ժողովի գումարման, Ազգ. վարչութեան վերահաստատման եւ ուրիշ հիմնական խնդիրներու մասին: Նիւթեր որոնք եթէ բերան առնէիր քանի մը տարի առաջ, փորձանքը անխուսափելի էր:

Դեռ աւելին: Ազգ. Հիւանդանոցի այս տարուան Տարեցոյցին մէջ, փաստարան մը պատմական փաստերով կ'ապացուցանէ թէ Ազգ. Սահմանադրութիւնը չէ ջնջուած:

Ուրեմն «ժողովրդայնութիւնը» կը քայլէ թուրքերէն մէջ, ինչպէս կը հաւաստեն օրն ի բուն... Բայց տարօրինակ պարագայ մը —

Պոլսահայ թերթերը լայնօրէն կը խօսին Արտասահմանի հայկական շարժումներու մասին: Կարտասպան շատ մը «արգելուած» նիւթեր: Օրը օրին տեղեկութիւններ կուտան Հայաստանի, հայ զինուորներու քաջագործութեանց եւն. մասին: Բայց, իրատունը չունին «Ազգային» կամ «Հայկական» խորագրերը դնելու աղբային լուրերուն դուրսը: Կ'ըսեն «Թաղային» կամ «Եկեղեցական» լուրեր կամ «Արձագանգ», ինչպէս Համիտի օրով:

Իպրացները մեծ մասով կը շարունակուին, հակառակ նիւթերու անուր կեղեքումներուն, կալուածներու գրաւման եւ ուրիշ շարաշահութեանց: Դեռ վերջերս էր որ Անդարայի Ազգ. Ժողովը ջնջեց փոքրամասնութեանց կրթարարներու շահաուրբը: Անշուշտ անոր համար որ այլեւս քամելիք բան չէր մնացած:

Ազգ. բոլոր հաստատութեանց, եկամուտներու եւ կալուածներու մատակարարութեան տէրտի — րականն է հռչակաւոր Էլիզաբէ, որուն ապիկարութեան եւ զեղծումներուն դէմ լեզու ելած են նոյնիսկ թուրք թերթեր, տասը տարուան փորձէն վերջը: Կը շարունակուի, նաեւ անհատ «միւլթիլի» ներու (հոգաբարձու, մատակարար) դրութիւնը, թէ եւ քանի մը թաղերու մէջ կան թաղ. խորհուրդի մնացորդներ, իրեն մատակարար: Բոլորն ալ ուղղակի ենթակայ Էլիզաբէին:

Գրական շարժում — Արդար ըլլալու համար, ըսենք թէ կան արժեքաւոր տղաք, որոնք ոչ միայն կ'արտադրեն, այլեւ մօտէն կը հետեւին եւրոպական եւ ամերիկեան գրականութեան, թարգմանութիւններով եւ ուսումնասիրութիւններով:

Հիմ լրագրութեան բարձր մնացած են ան — փոփոխ:

Երկու մեծ օրաթերթեր, «Մարմար» եւ «Ժամանակ» կատարել պայքարի մը բռնուած էին վերջերս, իրար մեղադրելով իրրեւ լրտես, մատնիչ, Վասակ, դաւաճան, ոստիկանութեան վճարովի գործակալ, գող, անբարոյական, խաչագող եւն.: Դեռ շատ աւելի ծանր բաներ կը գործածէին, ընտանեկան դադարները ալ երեւան հանելով, եւ սպանաւորներ տեղադրով, փոխադարձաբար: Ուրիշ թերթ մը, «Նոր Լուր» — ամէնէն վախկոտը — քանի մը խիղախ բողոքներ հրատարակեց, բայց հարուածը չուշացաւ:

Դեռ կը խօսինք:

Հ. Յ. Դաշնակցութեան Վաւերացումը

Պաշտօնաթերթը Մայիս 13—14ի թիւին մէջ հրատարակած է ներքին նախարարութեան 1946 Մայիս 2 թուակիր հրամանը, որով կը վաւերացուի Հ. Յ. Դաշնակցութեան դործունէութիւնը Ֆրանսայի մէջ, համաձայն 1901 Օգոստոս 16ի եւ 1939 Ապրիլ 12ի հրամանագիր — օրէնքներուն:

ԿԵԱՆՔԻ ՏԵՍԻԼՆԵՐ

Դու Շիրակի շուշան էիր նորաբաց, Ես Սյունիքի մշուշածին շաղ բաց, Իջնում էի Արագածից ստոնաշիր, Որպէս յալիկը շարում քաւիչ քերթերիդ, Հայի աղջիկ, ընկեր իմ ջինջ օրերի, Մատաղ սիրտս քո կրակով քաղ էրի: Դու նրազ ես, ուշ գիշերում, սիրւածքս, Ես մի քիթեմ՝ քո շարիով հմայում: Կ'ուզեմ անշէ բոցերիդ մէջ լուսաջինջ թեւերս այրել, շուրջը շալ տամ գառ փոշին, Հրաշք աղջիկ, ծաղկեփունջ իմ յուշերի, Յաւատ սիրտս քո կարտով պիտ էրի: Ել գարուն չիք, աշուն է, մուծ, ցրտաշունջ, Ծաղիկ ու շաղ, քիթեմ ու շող անցան շուս, Այս գովաշունջ շշուկներն էլ գերք քեզանք, Ողջ կը դառնան հեռուոր յուշ, խնդրանք... Յնարք աղջիկ, երազներիս լոյս փերի, Աշխարհը շէմ, ա՛յ, մեմ անք, միշտ գերի: ԳՈՐԵԱՆ

Յովնանեւ Ամասունի

Քանի մը կենսագրական տեղեկութիւններ եւս ողբացեալ Յովն. Ամասունիի մասին, որ մեռաւ Ֆրեզնոյի մէջ (Բալիֆորնիա), ապրիլ 22ին —

Յովնանեւ Ամասունի ծնած է 1877 Մայիս 10ին, Նորբերդի Ուոլլու գիւղը: Իր նախնական կրթութիւնը կը ստանայ գիւղի դպրոցին մէջ: Անկէ ելլելէ վերջ ինքնակրթութեամբ կը լրացնէ բարձրագոյն դպրոցի պակասը եւ ձեռք կը բերէ այնքան լայն ծանօթութիւններ, որ իրեն հետ խօսող մը չէր կրնար նկատել բարձրագոյն կրթութեան գրկուած ըլլալը:

Ամասունի 1899 Սեպտեմբեր 2ին կ'երթայ Ամերիկա, ուր կը մնայ մինչեւ համաշխարհային առաջին պատերազմը: «Հայրենիք» սկզբնական շրջանին կը բերէ իր դործակցութիւնը՝ նիւթական թէ բարոյական:

1901ին կը մտնէ Հ. Յ. Դաշնակցութեան շարքերը, անդամակցելով Պրաքթիք կոմիտէին: Կարձ ժամանակէն կը դառնայ այս շրջանի ղեկավար ընկերներէն մէկը, իր անդամ կեդր. Կոմիտէի եւ իբր գործիչ:

Համաշխարհային առաջին պատերազմէն քիչ առաջ կը մեկնի Ամերիկայէն՝ երկիր երթալու մտադրութեամբ: Պատերազմի վրայ հասնելուն հետեւեցող կ'անցնի Պուլկարիս, ուր ժամանակ մը մնալէ վերջ կ'անցնի Կոլիկաս: Կամաւորական գունդերու եւ Արեւմտահայ խորհուրդի աշխատանքներուն կը բերէ իր մասնակցութիւնը:

Պատերազմէն վերջ, զինազաւարի շրջանին կ'անցնի Պոլիս, ուր կ'անդամակցի Կեդր. Կոմիտէներու, պատասխանատու մարմինն եւ Ազգ. Կեդր. վարչութեան, որուն ներկայացուցիչը կ'ըլլայ Ազգ. Նշանատարութեան վարիչ մարմնին մօտ: Քեմալականներու Պոլիս մտնելու շրջանին Պոլսոյ Ազգ. Կեդր. վարչութեան կողմէ կը մեկնի Թրակիա — Մակեդոնիա, ուր կը զբաղի դաղթականակառ զործերով: Քեմալականներու կողմէ Պոլսոյ գրաւումին հետեւեցող ինք ալ կ'անցնի Պուլկարիս, ուր կը մնայ ժամանակ մը եւ յետոյ կուգայ Ֆրանսա, որը զինքն ստանձնելով ազգային եւ կուսակցական աշխատանքներուն մէջ:

1928ին կրկին կը մեկնի Ամերիկա: Ժամանակ մը կ'աշխատի «Հայրենիք» խմբագրութեան մէջ, յետոյ կը փոխադրուի Ֆրեզնո, ուր մօտ տասը տարի կը վարէ «Ասպարէզ» խմբագրութիւնը: Իր ետին կը թողու այրին՝ Տիկին Թագուհի Ամասունի:

Վերջին ՊԱՀՈՒՆ ստացանք Ներգաղթի Կեդր. Կոմիտէին մէկ երկար գեկոյցը: Յաջորդով:

Արդեօք սառ՞ր համար է որ Իսմէթ Ինէօնի կը յայտարարէր վերջերս, Հալքի համագումարին մէջ — «Թուրքիոյ դերը մեծապէս բարւոքած է առեւտրի մը ի վեր»: Իսկ վարչապետ Սարաճօղլու կը հաւատաէր ամերիկեան դորձակալութեան մը. — «Ոչ մէկ կողմէ ճնշումի կը սպասենք»:

Մեր դործը չէ քննել թէ ինչո՞վ բարւոքած է թուրքիոյ դերը, քանի որ Մոսկուա կը շարունակէ խորհրդաւոր լուծիւն պահել:

Բայց եւ այսպէս, կը թուի թէ Անգարա հիմքեր ունի լաւատես երեւալու: Գոնէ առ այժմ:

Օրինակ, կարգ մը նոր իրողութիւններ կը հաստատեն թէ թուրքիան միշտ ի պատուի է անպիւսաքան երկիրներուն մէջ:

Լոնտոնի մամուլը կը շարունակէ քար լուծիւն պահել հայկական պահանջներու մասին, իր շահերուն համապատասխան դոնելով թուրքիոյ հողային ամբողջութիւնը: Մ. Նահանգներուն մէջ ալ թրքանպաստ հով մը կը փչէ: Մասնաւորապէս այն օրէն ի վեր որ առաջնակարգ գրահաւոր մը, «Միլիթրի», Պոլիս փոխադրեց թուրք դեսպանին մարմինը, արտապահեց, իրականին մէջ ընդվզեցուցիչ հանդիսաւորութեամբ:

Ինչ որ ինչ տարօրինակ պարագայ մը:

Անգարայի Ազգ. ժողովի Մայիս 8ի նիստին մէջ, պաշտօնապէս հաստատուեցաւ թէ Մ. Նահանգները սրտաւ են թուրքիոյ ֆոն — Վարձի պարտքէն ջնջել հարիւր միլիոն տոլար, պայման — նաև որ կանխիկ վճարեն 4—5 միլիոն տոլար: Ժողովը խանդավառութեամբ ողջունեց այս շնորհը: Այս առթիւ, թուրքիա յանձն կ'առնէ վեց միլիոն տոլարով մասնակցել Միացեալ Ազգերու Նպաստամատոյց վարչութեան (UNRRA):

Այս միջոցին այլապէս շահեկան դէպքեր տեղի կ'ունենան թուրքիոյ մէջ:

Ընտրական պայքարը սկսած է արդէն, արտակարգ աստիճանով: Կառավարութիւնը, ղոհացում տալու համար արտաքին ճնշումներու, որոշեց ուղղակի, միատիկ ընտրութիւն հաստատել Ազգ. ժողովին համար, փոխանակ երկատիկանի (Ի. կարգի ընտրողներով):

Բայց, միեւնոյն ատեն խաղ մը սարքեց ընդդիմադիրներու գլխուն: Անմիջապէս օրէնք մը քուէարկելով, ձեռնարկեց քաղաքացիական ընտրութեանց, փոխանակ յետաձգելու Սեպտեմբերին, ինչպէս կը պահանջէին նոր հոսանքները:

Փոթորիկը պայթած է արդէն կառավարական կուսակցութեան (Հալք) եւ ընդդիմադիրներուն միջեւ: Իսմէթ Ինէօնի իրրեւ նախագահ էւ պետութեան էւ կուսակցութեան, անձամբ կը վարէ պայքարը, ճառեր խօսելով քաղաքէ քաղաք: Մահաւանդ այն շրջաններուն մէջ ուր շահեցաւ Փոքր Ասիոյ պատերազմը, 1921—22ին: Սովորական խօսքեր են իր ճառերը: Բայց, կը մատնեն զօրաւոր կամք մը շարժանքով ընդդիմադիրները, որոնք ծանր մեղադրանքներ, նոյնիսկ սպանալիքներ կ'ուղղեն:

Պոլսոյ թերթերը զարմանազան տեղեկութիւններ կը հաղորդեն պայքարի ելեւէջներու մասին:

Քաղաքի մը մէջ քաղաքացիներ բեմէն վար կ'առնէ ընդդիմադիր ճառախօսը: Ուրիշ վայրի մը մէջ 8—900 անդամներ կը հրաժարին Հալքէն: Քուէ շահելու համար, «Հալք» կ'որոշէ հայ, յոյն եւ հրեայ թեկնածուներ ալ ներկայացնել քաղաքացիական ընտրութեանց մէջ են:

Ընդդիմադիրները մասնաւորապէս կատաղած են քաղաքացիական ընտրութեանց փութացումէն: Այս առթիւ զիտել կուտան թէ կառավարութիւնը զիտակցարար այդ խաղը սարքեց, որպէսզի իրենք ժամանակ չունենան կարճակերպուելու:

Կը թուի թէ արդար է այս մեղադրանքը: Նոր հոսանքները, Ինէօնի քաղաքացիական վարչապետ ձ. Պայար), Ազգ. Վերականգնում են. հաղիւ քանի մը ամիս է որ հիմնուած են: Այն ալ ներքին պառակտումներով եւ փոխադարձ վարկարկումներով: Ամէն պարագայի մէջ, երկունք մըն է որ տեղի կ'ունենայ, մէկ հիմնական մտահոգութեամբ, — Փոշի փչել արտաքին աշխարհին աչքերուն: Ե.

Չորսերու շուքին ետեւին

Փարիզը վերջին շարժանքներուն նորէն դարձաւ դիւանագիտական եւ քաղաքական կեդրոն մը: Գաղտնապահութիւնն ալ, ինչպէս հսկողութիւնը, այս անգամ մասնաւոր չեղտ եւ հանգամանք ստացած էր:

Եթէ քաղաքական բարձրատիճան դէմքերը չկրցան հիմնական խնդիրներու շուրջ համաձայնութեան մը յանդիլ, անշուշտ միջիջարական է որ դոնէ համաձայնեցան յառաջիկայ ժողովի թուականին շուրջ:

Արքայութեան դոնէրը թերեւս այնքան ուժգնութեամբ եւ հսկողութեամբ չեն զոցուած, որքան Սորհրդատուովի սրահը:

Առաջին դժգոհները այդ ժողովէն եղան լրագրողները, եւ ճարահատ տեսակ մը քննարկաւ սարքեցին, քանի որ անբաւական էին պաշտօնական զեկոյցները:

Ո՞վ պիտի կրնար ժամ առաջ, գաղտնի տեղեկութիւն մը ստանալ, կամ տեսակցութիւն մը ունենալ Չորսերէն մէկուն հետ:

Ամէնէն խորհրդաւոր եւ լուսկեաց մարդը Մոլոթովն է, կ'ըսեն: Հակառակ իր վարժապետի տեսքին, համեստ բնավորութեամբ օժտուած անձնաւորութիւն մըն է: Յանցանքը անշուշտ իրենք չէ, եթէ լրագրողներուն համար անկարելի եղած է նոյնիսկ մօտենալ իրեն: Միջադարձին մեծ դէմք մը ըլլալը իր անպատահելիութիւններն ալ ունի:

Եթէ Պրընս, Պէվիլն կամ Պիտո երբեմն լրագրողներու բազմութեան մէջ կ'երեւէին, Մոլոթով ընդհակառակն դարձած էր անտեսանելի եւ անմատչելի: Եթէ միւս երեքը երբեմն պատահէր որ կառավարին քովն իսկ նստէին, անշուշտ անպատահելիութեան տեսողութեան սահմաններէն, Մոլոթով ընդհակառակն յաճախ կը «ցանէր» հետեւորդները: Գիտականատունէն դուրս ելած ժամանակ, հազիւ դոնէրը բացուած, զիտակցութեան կարգը կը սարքուէր մեծ արագութեամբ:

Սորհրդային դեսպանատան մէջ ի պատիւ Չորսերու տրուած ճաշին, «արտաքին»ները իրենցներքին վէճերը խեղդած էին փոսկայի պսպղուն գաւաթներու մէջ, ձկնկիթներու (խալէար) համեմներով:

Անցեալ Հինգշաբթի այցելութիւն մը սարքուած էր Լուվրի թանգարանը, որ այդ օրը փակուած էր սովորական մահաւանդութեան տաշիւ: Մոլոթով մասնաւորաբար հետաքրքրուած է Միլոյի Վէնիսով եւ երկար ատեն հիացմունքով զիտած դայն: Այդ օրը իրենց լուսանկարիչներն ու շարժանկարիչները դադար չեն ունեցած, լուսանկարելով այցելութիւնն ու թանգարանի հրաշալիքները:

Այս պայմաններու տակ, անկարելի էր որ եւ է տեսակցութիւն:

Թէեւ խորհրդատուովը վերջացաւ, բայց լրագրողները կրկին կ'աշխատին դաղտնիքներ կորցել կամ տեսակցութիւն մը սպահովել, դոնէ յստաջիկային համար:

«Յառաջ»ի թղթակիցն ալ յաջողած է պատուիրակութեան անդամներէն մէկուն խոստումը սպահովել: Ուրեմն սպասենք յունիս 15ին:

ՇՐՋՈՒՆ ԹՂԹԱԿԻՑ

Լուրեր ներգաղթի մասին

Էջմիածնի եկեղեց. ժողովին Հալքի պատգամաւորներէն Պ. Արշակ Գալէմքերեան, որ վերջերս Գահրէ դացած էր, «Յուսարեք»ի խմբագրատունն այցելելով, յայտնած է թէ այս տարի միայն Սուրիա Լիբանանէն պիտի ըլլայ ներգաղթը: Պիտի սկսի Յունիսի եւ պիտի տեւէ մինչեւ Հոկտեմբեր: Քսան հազար հոգի պիտի փոխադրուի, հաւանաբար ամիսը 5000 հոգի: Պ. Գալէմքերեան խորհուրդ տուած է «սպասել Երեւանի մասնաւոր հրահանգներուն, այլ դաղութիւններու մէջ, առանց աւելորդ աղմուկի»:

Պուլիտրային գրուած անհաստատան նամակ մը կ'իմաստաւորէ թէ ներգաղթի համար արձանագրուած են 12.000 հոգի: Գրուածն ատեն Երկուրաւիա արաստանած Հայերն ալ արձանագրուած են:

ՄՈՍԿՈՒՍԻ անթիւր կը ծանուցանէ թէ պարենահատի դրութիւնը պիտի ջնջուի մօտերս եւ անուսուրի եղանակն ալ պիտի բարեկիրտուի:

ՊԱՏԵՐԱՉՄ ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ՄԷՉ

Թաւիից կը նստանայ, Թեհրան կը հերիք

Երկու օրէ ի վեր հակասական լուրեր կը շրջին Ատրպատականի մասին: Կ'արձանագրենք օրուան լուրերը, քաղելով զանազան աղբիւրներէ, պաշտօնական թէ անպաշտօն —

Կիրակի օր բրիտանական անթիւր կը հաղորդէր թէ համաձայն Թաւրիզի ռատիոյի մէկ զեկոյցին, Իրանի կառավարութեան զօրքը յարձակած է Ատրպատականի վրայ, երեք զլխաւոր կէտերէ. — Պահլէ, Միսպահ եւ Սուրաթ: Զինուորական կառավարութիւն մը հաստատուած է Թաւրիզի մէջ: Պահարման վիճակ յայտարարուեցաւ ամբողջ Ատրպատականի մէջ:

Քիչ վերջը, բրիտանական անթիւր կը ծանուցանէր թէ Թաւրիզի ռատիոն հրահանգած է ժողովուրդին քաղաքը պաշտպանել «մինչեւ վերջին մարդը», իսկ ամերիկեան անթիւր կը հաղորդէր թէ Ատրպատականցիները 50 դերի ընդամենն: Նոյն օրը Իրանի վարչապետը, Ղալամ Սալթանէ ձայնափելու ճառով մը կը յայտարարէր թէ բան չի գիտեր յարձակման մասին եւ կ'աւելցնէր. — Ես հրամայած եմ Իրանի բանակին չհրուել: Եթէ ընդհարումներ պատահած են, պարզապէս տեղական հանգամանք ունին: Իշխան Տիրուզ, կառավարութեան քանդակ, հերքելով ծանր կոիւնքու լուրը, իր կողմէ կ'աւելցնէր թէ «առ առաւել տեղական ընդհարումներ են»: Վերջապէս, իրիկուան դէմ թէ հրանի կառավարութիւնը կը յայտարարէր թէ քննութիւն բացած է: Կ'ըսէր նաեւ թէ մինչեւ բանակցութեանց վերստին, Իրանեան եւ ատրպատականեան յանձնաժողով մը պիտի մնայ սահմանադրուիլին վրայ, պահպանելու համար բարեկարգութիւնը:

Յաջորդ օրը, երկուշաբթի, Թաւրիզի անթիւր կը ծանուցանէր թէ «եղբայրասպանութիւնը» կը շարունակուի եւ թէ Իրանի կառավարական ուժերը վերստին իրենց յարձակումները Ատրպատականի դէմ, թնդանթիւրով եւ հրասանդներով: Եւ կ'աւելցնէր. — «Եթէ այսպէս շարունակուի, պարզ է որ անկարելի կը դառնայ որ եւ է խաղաղ կարգադրութիւն: Յարձակողները իրենց զերեզմանները կը փորեն յարձակելով մեր վրայ: Յալթանակը ազատաւէրներուն կը պատկանի»: Անթիւր այս առթիւ կը յիշէր Ատրպատականի թերթերը այս լուրերը, որոնց համաձայն ետ մղուած է կառավարական զօրքին յարձակումը: Թաւրիզի թերթերը կը պահանջէին թէ հրանի վարչապետին յետադիմականները հեռացնել ազգեցիկ դերքերէ, եթէ իսկապէս կ'ուզէ խաղաղութեամբ կարգադրել ինդիլը: Անթիւր կ'աւելցնէր թէ Ատրպատականի բոլոր բնակիչները կամաւոր արձանագրուեցան երկրին պաշտպանութեան համար, երբ իմացան յարձակման լուրը:

Աւերիկացիները կը հեռանան

Թաւրիզի ամերիկեան հիւպատոսը յանձնարարեց բոլոր ամերիկեան հպատակներուն հեռանալ Ատրպատականէն, երբ վարչապետ Փէշաւարի յայտարարեց թէ նահանգը պատերազմական վիճակի մէջ է: (Վեց Ամերիկացիներ կան նահանգին մէջ): «Թէեւ պատերազմական վիճակի մէջ ենք, բայց Փէշաւարի, բայց ես վստահ եմ Ղալամ Սալթանէի բարեկամական տրամադրութեանց վրայ եւ համոզուած եմ թէ թէ հրանի բանակցութիւնները անելի մատուցեցան, որովհետեւ վարչապետը չըջարպտուած է կարգ մը յետադիմականներով»: Փէշաւարի հերքեց այն լուրերը թէ Ռուսերը նիւթական աջակցութիւն կ'ընծայեն Ատրպատականի ինքնավարութեան շարժումին: Իր համազօրով, կարծիք բանակը ամբողջովին հեռացած է: Բայց հաստատեց թէ «Ռուսերու բարոյական աջակցութեան շնորհիւ ժողովուրդը կը ցաւ ազատի կեդրոնի յետադիմական կառավարութեան հարստահարութեան, իրականացնելու համար իր երեսնամեայ տնէջը դէպի ժողովրդապետութիւն: Ես կը հաւատամ թէ նոյն աջակցութիւնը պիտի օգնէ ամբողջ Միջին Արեւելքի հրկիրներուն յառաջդիմութեան: Ես բոլորովին ես մամայն եմ որ Ատրպատականը վերահաստատուի Իրանեան ազգի շրջանակին մէջ, բայց պայմանաւոր սպասութիւնը շահուի եւ մեր կարճակերպած ժողովրդավար կառավարութիւնը ծանցուի»:

Վարչապետը թոյլ չտուաւ որ ամերիկեան հիւպատոսը եւ երկու թղթակիցներ այցելեն նահանգին միւս մասերը, զիտել տալով թէ «ճամբորդութիւնը կրնայ վտանգաւոր ըլլալ, մասնաւորապէս այն շրջաններուն մէջ ուր ամբողջութեամբ կը շինուին»:

Վերջին լուրերու համաձայն, Թաւրիզը ամբողջապէս բանակաւորուած էր զարձակած է: Երկու մարդէն մէկը համազրեւտ հազած է կամ հրացան մը դրած ուսին: Ղալամ Սալթանէ Թաւրիզին պատասխան ստացած է իր հեռադրին, հետեւեալ բողոքականութեամբ. — Ընդհարում մը տեղի ունեցած է, բայց չի գիտցուիլ թէ ո՞վ սկսաւ կոիւր:

Ո Ր Բ Ե Ր Ը

ԹՈՒՐԲԻԱՆ ԵՐԷԿ ԵՒ ԱՅՍՈՐ

Դրակ մը, եւ կէս միլիւն...

(Մասնաւոր քրքրակցութիւն Յառաջի)

Ապրիլի առաջին երկու շաբաթներու ընթացքին, թուրք թէ միջազգային մամուլի մէջ, «Մի-գուրի» Միջերկրականեան նաւահանգիստներ այցը՝ բուսական մեղան սպառել տուաւ քաղաքական «մեկնիչ»ներու:

Մասնաւորաբար թուրք եւ հելլէն մամուլը, «Միգուրի»ի եւ իրեն ընկերացող «Փրափիտենս» զբաժանորդին եւ «Փաուր» թորփիլաճալածին Պոլիս եւ Փիլիքայ այցելութիւնը նկատեցին հանդիսաւոր «խոստում» մը՝ թուրքերան թէ Յունաստանը չձգելու բախտի հովերուն, ու զըպցնելու Մոսկուայի թէ Մ. Նահանգները անտարբեր պիտի չմնան այս երկիրներու հանդէպ սեւէ թշնամական քաղաքականութեան:

Առանց տարածուելու այս կամ այն դոյնի խորհրդածութիւններու մէջ, որոնք առհասարակ կողմ կը տաչեն, կրնանք անվարան եզրակացնել թէ Մ. Նահանգներու շահագրգռութիւնը՝ Մեր-ձաւոր Արեւելքի հանդէպ, դրած անցած է այլեւս պզտոտնական համակրութեան սահմանները, ու ստացած է բնոյթը ներդրածական միջամտութեան մը: Ուշիկից, միայն Յունաստանն ու թուրքերան չունի նկատ: Առհասարակ Միջերկրականի ու Մերձավոր Արեւելքի մէջ, Սպիտակ Տունը հակառակ է «բոնապարտուի» ո՛րեւէ քայլի՝ որ պիտի վտանգէ այդ գոտիներու մէջ ապրող ժողովուրդներու ազգ. գերիշխանութիւնը, եւ հողային ամբողջականութիւնը, ինչպէս վճարար յայտարարեց նախագահ թուրքերը, «Բանակի օր»ուան իր ճառին մէջ: (6 Ապրիլ 1946):

Թող փութիւնու եզրակացութիւն կամ մտածում չնկատուի, երբ ընդգծենք այս առթիւ, — առանց մէջընթացներու կամ վերադարձի — թէ Մ. Նահանգներու շահագրգռութիւնը՝ Մասնաւոր ու Միջին Արեւելքի մասին, Ռուսիոյ կողմէն մեղանշական նոյն գծին վրայ կը տեսնէ Անգլիան, որ, իր կարգին, հետամուտ է բացարձակ առանձնաշնորհներու: Ուրեմն, Ուշիկից տրամադիր կը թուի դոնել միջին եզր մը, նախ երկու կողմէ մրցակցութեան շեշտ պայքարը մեղմացնելու, ապա զգացնելու երկու աշխարհակալ գորութիւններուն՝ թէ ինք եւս խօսքի բաժին ունի աշխարհքի գործերուն մէջ:

Այս կէտը ճշդիւ վերջ այս ձեւով, ու սահմանափակուելով թուրքեւմերիկեան յարաբերութեանց բոլորակին վրայ, կը դոնենք՝ որ «Միգուրի»ի այցելութիւնը՝ «ուրախառիթ ու պատմական

իրարանցում: Ես ու զեռ: Աղմուկ: Ամէն ազգէ ու դասակարգէ բազմութիւններ: Ամերիկեան բեռնատարներ լեցուն զինուորներով: Իտալական ճակատին վերադարձեր են: Արձակուրդի, հանգիստի ամիսներ են: Մարդիկներ հեծեալներով, հե-տիտան: Արգենտիններ մէջէն պիտի հասնին դուր-ցերիական սահմանազուլիս, որուն միայն 40 քիլո-մետր հազիւ է մնացեր: Սրճարաններէն ներս ու դուրս նստելիք տեղ չմնաց: Ոմանք պայուսակ-ներով պոչ բռներ են պանդոկի դրան առջեւ, սեն-եակ եւ ճաշ կը խնդրեն: Բոլորին տրամադրութիւ-նը բարձր է: Կ'ուտեն, կը խմեն: Կը խօսին, կը խնդան, կը կատակեն, կը նուազեն: Չինուորական տարազով աղջիկներ ալ միացեր են բանակին: Թե-թեթի կ'երգեն սէր եւ յաղթանակ: Կը հոսին: Կար-միր դիմին: Տարօրինակ զովացուցիչներ: Ուղեկց-ւորները: Խանդավառութիւն եւ հրճուանք: Կեանքը իր բնականոն հունը գտեր է: Թշնամին վտարուած է երկրէն: Այսու Ֆրանսան կ'ողջաբու-րէ իր գեակները մայրենի դուրսուրանքով: Եր-ջանիկ ժողովուրդ: Կապոյտէն վերկերով հուր կը տեղայ: Սա դիմացի լեբան դողաւոր դազաթին ձիւնի դէպքը սկսած են նօսրանալ: Ծերտ շերտ հողը կը տեսնուի: Յուլիսը կը պանծայ: Ոսկի կը քաղէ: Յուլիսը կը աքնի: Կըստեղծադրո՞ճէ: Յու-լիսը հոգ կ'ամբարէ:

Բազմութիւնները հետզհետէ կը տեղաւոր - ունին: Չինուորներուն տրամադրեցին դպրոցի շէն-քին 1 — 2 — եւ 3րդ յարկերը: Ոմանք սրճարանէ սրճարան, պանդոկէ պանդոկ տեղ գտան հանգիս-տի եւ ճաշի:

Կը լսուի դարձեալ ծանօթ երգի մը եղանակը ռազմական ու մարտակոչ: Որբերն են: Կը վերա-դառնան իրենց հաւաքակցութիւնը՝ որ դէպի հարա-արեւելք վերադառալիս ծայրամասերը կը գտն-նուի: Կը մօտենան: Հիմա այլեւս այդ թոյլ ու դալկոտ տղաք չեն: Կարմրեր, ճակատ են բռներ: Եւ անսպառ աւելնով կը թնդեն Մարտիշեճը: Կը պարանախոսուի են: Անոնց ամոյն ու լալկան աչքերը ցոլք ու կրակ ունին հիմա: Եւ անողորմ բռնացը թշնամիին դէմ: Վաղուան բանակի է որ կ'անցնի, սպառնալէն ու ահաբեկու: Որբեր չեն ա-նոնք: Տէր ու տիրականն են, իրենց երկրին ճակա-տագրին: Կը քալեն ազատ ու անվհեւ, արեւոտ ճամբուն ջովն ի վեր:

Իսկ մեր որբը՞ր... Եւ անոնց դահիճնը՞ր որ մնացին անպատի՞թ...

ՏԻԳՐԱՆՈՒՉԻ

դէպք» մը գտնուելու բուսական յարգելի պատճառ-ներ ունի Անգլաբայի համար:

Եթէ պէտք է «արգելիք»ներէ կամ շօշափելի փաստերէ մեկնել, կրնանք յիշել՝ առաջին գծի վրայ, տնտեսական այն բացառիկ դերութիւննե-րը, զորս Անգլաբայի ընծայելու տրամադրութիւն-ները ցոյց կուտայ Ուշիկից, արդէն իսկ: Ար-դարեւ, Ուշիկիցէն 12 ապրիլ թուակիր հե-տագիր մը, արձագանգ հանդիսանալէ վերջ Անգա-բայի եւ Պոլսոյ թուրքեւմերիկեան շփումնե-րուն, կ'ընդգծէ:

«Ուշիկից»-ընեան իրաւասու շրջանակներ Կուսակալն կը ձկատեն, որ Մ. Նահանգներու կա-ռավարութիւնը ինքզինքն իր իրաւունքները փո-խառուութիւն մը ընէ թուրքիւն, անոր տնտեսա-կան — բնակչային վերականգնումին նպաստելու համար:»

Նոյնինքն Հանր. նախագահ Ինէօնիւ, 6 ապրի-լի իր յայտարարութեանց ընթացքին՝ կը շեշտէր ամերիկացի լրագրողներուն:

«Կարգ մը անհրաժեշտ մեքենաներ, ու թուրքիւն վերելիքն համար կենսական նիւթեր ա-պահովելու նպատակով, կը յուսաւիք քանի մը հա-րիւր միլիոնի փոխառութիւն մը կնքել Մ. Նա-հանգներուն հետ»: («Վաթան», 7-4-46):

Թուրք մամուլը, — մասնաւորաբար «Վաթան» եւ «Տրափիլ» —, կատարուած իրականութիւն ու վերջացած գործ կը նկատեն, արդէն, խնդիրը: Աւ, իրարմէ աւելի սրտաց, քննադատելէ վերջ Անգլաբայի ճարտարարուեստական քաղաքականու-թիւնը, կը թելադրեն հեռատեսութեամբ գործել, շուտով չհանգնելու համար կէս միլիոնը: «Վա-թան», մանաւանդ, մեղադրական ակնբախ շեշտով մը դիտել կուտայ, 21 ապրիլի իր խմբագրակա-նով, — թէ՛ «ցարդ պետութիւնը անավարի գործ տեսաւ այս ուղղութեամբ, ու միլիոններ հալեցան ընդունայն, որովհետեւ միայն պետական ճարտա-րարութեամբ չի քալեր գործը: Եւ, յետոյ, թուր-քիւն հողադրճական երկիր է, ու, նախ, պէտք է ուժ տալ երկրագործին»:

Ո՛չ այս, ո՛չ այն: — Ուշագրաւ է, որ, Անգա-բայի տնտեսական ընթացքին, տնտեսական համաձայնութեան մը շփումներուն ներկայ գըտ-նուած են Պատերազմ. գործաւարութեան բոլոր յայտնի դէմքերը, եւ, Ամերիկացիներու կողմէ, Մ. Նահանգներու դեսպանի կողքին՝ դեսպան — տան զին. կցորդը, եւ Ամերիկեան նաւարաժնի սպայակոյտի ներկայացուցիչները: Այս պայման-ներուն տակ, անհեթեթ չէ ենթադրել՝ թէ կէս մի-լիոնի փոխառութիւն մը, առաւելագոյն զին-ուորական — ճարտարարուեստական աշխատանք-ներու թափ պիտի տայ, եւ Ուշիկիցն իր պիտի չու-րէ մերձեւ այլ բարիքներ եւս, «յանուն Մերձ. Ա-րեւելքի անդորրութեան», ինչպէս կը ճշդէր 7 Ապ-րիլի «Սընտէյ թայմ»:

Մասնաւորաբար Պոլսոյ թէ Անգլաբայի «սըր-տակցական» ելոյթները, թուրքերի անձնական ներկայացուցիչ Ուշիկիցի տեսակցութիւնը՝ Ինէօ-նիւի եւ Մարաճոյլուի հետ, ու մասնաւոր նամակի մը յանձնումը թուրքիւն նախագահին, — նաեւ սիրազեղ պատասխան Ինէօնիւի —, ենթադրել կուտան դիւանագիտական շրջանակներու, թէ Մ. Նահանգները քաղաքակալապէս ճշդած են ի-րենց դիրքը՝ Սովիէթ պակտներու հանդէպ եւ ուրոշած են պաշտպանել թուրքիւն ամբողջականու-թիւնը: Լուրջ թէ կատակ, այս կարգի հաւանա-կանութիւն մը անշուշտ սիրա կը պղտորէ: Այս առթիւ, հեռագրական կարգ մը գործակալութիւն-ներ, մասնաւոր կարեւորութեամբ կը հրատար-կեն Սարաճոյլուի 7 Ապրիլի յայտարարութիւնը, թէ՛ «Միգուրիի Պոլիս այցելութիւնը ցայտուն մէկ փաստ կը հանդիսանայ այն իրողութեան, թէ Մ. Նահանգները պիտի կանգնին թուրքիւն կողմին, ե-թէ երբեք այս վերջինը ենթարկուի ո՛րեւէ յարձակ-ման»: («Վաթան», 7 Ապրիլ 1946):

Չենք միտնուիլ որ ինչ աւելի կամ նուազ յատ-կանչական մանրամասնութիւններու մէջ: Բայց, կը հաւատանք, թէ թուրք դեսպանի մը դիտելիւն-դարա փոխադրութիւնը, ու այդ առիթով հանդի-սադրուած «բարեկամական» ցոյցերը, քաղաքա-կան իմաստէ զուրկ չեն: Եւ ինչպէս կան, թէ բո-լոր այս շնորհալից ցոյցերուն մէջ, իրողութիւն է Մ. Նահանգներու կողմէ առաջարկ մը, միջամտե-լու բուրքիւնսովիւր կնքի լուծման:

Անհաւանական չէ: Անկարելի՞ երբեք: Թէեւ, այս բոլորը, ի միաս Հայկ. Դատին ...:

ԱՐՄԷՆ ԱՄԱՏԵԱՆ

ԼԵՀԱՍՏԱՆ խիստ ազդարարութիւն մը ստա-ցաւ անդ. կառավարութեանէն, որ վանդատած էր թէ փոխ — վարչապետը «անճահ եւ յարձակողա-կան» խօսքեր արտասանած է, ըսելով թէ UNRRAի ուտեսաները կը գործածուին քաղաքական նպա-տակներով, աղբիւր համար ընտրութեանց վրայ, Յունաստանի եւ Իտալիոյ մէջ:

ՄՈՍԿՈՒՍՅԻ «Իրախոսութեան» Մայիս 17ին երկու էջի վրայ հրատարակեց գերման գերի զօրավարի մը եւ զնդապետի մը յօդուածը, որ կ'ըսէ թէ Սպա-նիոյ եւ Գերմանիոյ սպայակոյտները զինուորա-կան գործակցութիւն հաստատած էին: Այս առթիւ կը պատմեն որ սպանիացի զօրավար մը կը պար-ձենար թէ կրնայ ձիւրալաթարը գրաւել 20 վայր-կեանէն:

Յնցողիներ հազած՝ բոկոտն էին անոնք: Արե-ւէն այրած՝ կիսովին մերկ մարմիններ: — Մանչ ու աղջիկ — պատերազմի որբերը 4էն 9—10 տա-րեկան: Յամբած, ոսկրուտ այտերով, անփայլ աչ-քերով տղաք, որոնց վտիտ էութեանը վրայ չար-չարանքն ու վիշաք գործուած էին: Կանգուեր ա-ւերակ էր եղեր իրենց բոյնը: Զրկուեր էին սիրոյ յարկէն: Բոկոտուեր էին անոնց արեւնի կապերը: Մնողք, քոյր, եղբայր չկային: Միմակ էին: Ե - ղեւեր խորտակեր էր ամէն ինչ: Որբեր էին...
Կը քալեն անոնք կուպրէ ճամբուն մէջտեղէն, ուր առտուան արեւը լեռներու զով շունչովը լե - ցուցեր է: Թուփ, թուփ, թուփ կը քալեն միօրինակ ու թոյլ: Յոգնած են արդէն: Այդ մանչուկը՝ չի կրնար հետեւել, առաջնորդէի թեւէն կը քալէ: Այս վերջինը գրկած ունի աղջնակ մը՝ նոյնքան պզտիկ ու նիւար: Մեծերը փոքրերուն օգնելու պարտաւոր են: Կը տանին իրենց ազգաւոր դոյնը — թիւնը: Անտուաղ, անապատան մնացեր են օ - րբերով, երբ օգնութեան մը հասնելու կարելիութե - թիւնը չէ եղած, հիմա այսպէս անկազմակերպ, եղանակը կ'օգտագործեն կաղուղուելու համար դա - նոնք: Խոտմբերով ցրուած են Ալպեաններուն մէջ:
Տեղացի ժողովուրդի աղմուկն ու երթեւեկը կը դադրէ: Գիւղական կառքերու ու սայլերու ճոնչոցը կուպայ հեռուներէն: Հունձքի տուն է: Իրկիւնները կը դառնան բեռնաւորուած հասկե - րու որաներով, խոտի դէղերով, դէպ ի ազարակ - ները, հոն կար կամենելու համար:
Երկար շարք մը ձգեր են անոնք՝ հիւրանոցի պատուհաններուն տակ, ուր շէնքի բարձրութիւնը տակաւին թանձր շուք մը կը պահէ, կունակը Մօն Պլանին տուած: Երկնքի կապոյտ ու վճիտ նա - փորակն կ'իջնէ ցնձազին խաղաղութիւն: Կողմնա - կի պարտէզներէն վարդի եւ միմակի բոյր: Ա - մանաւային կենտունակ լիութիւնը կը դաշնաւորէ առաւօտ՝ որուն կը միանան երգի մը քաղցր ու տրոտով մանքերը: Մեծերու շարքերէն ոստի նը - ման բարակուկ աղջկան մը ճայն է, որ կը թըր - թուայ, ինչպէս ցանկապատի մը վարդերուն մէջ պահուած սոխակին դայլայլը, որ կ'ընդարձակուի ալիք, ալիք, կը տարածուի, կը մեղմանայ եւ կը յուզէ:
«Les yeux de maman sont des étoiles»...
Որբերը ծոեր են իրենց պուլիները: Որոնց մէջ քիչեր որ ծածկուած են թուլ կամ խարտեաչ մագերով: Թախիճը անոնց լուսաբեկ աչքերուն մէջ կը ծաւալի հողիէ հողի, հազարդական ու տրամազին: Հոս աղէկ մը թեւերը կուրճքին խա - ջածակ նայուածքը անորոշ, անհնարին ցատու ու վհատութիւն կ'արտայայտէ: Ուրիշ մը ձեռքը ճակտին է տարեր, եւ քստմանի տեսիլքի մը ակա - նատես ըլլալու ահաբեկ սահմանումն ունի: Կըս - կծալի հարց մը խաչելութեան մը նման անոյս կը տանջէ զիրենք: — Ո՞րք է մաման... Ի՞նչ է - դա... հանգ միւսնե՞ր... հայրիկը կար, անմո - ռանալի մեծ հանին, եղբայրներ... քոյրիկը, ան - բաժանելի, նոյնիսկ խաղամու կատուն, վաղվուց չնկր դպրոցի դաշտի ընկեր: Ո՞րք են. այս բոլո - րը... Չկան, չկան հիմա ...:

Մին միւսէն զարհուրելի պատկերներ կուզան իրարու ետեւէ: Աշխարհաստան ուրակոծութիւն-ներ, աղետալի գիշերներ: Լափիլիող հրկիւղամբ դժոխային հրդեհներու: Կործանում: Փրատակ: Վայնասուն: Սրտակեղեք ազգազկներ: Եւ ոչնչա - ցում

Երգը կրկնէ վերջին տողերու յանկերգը աւելի սրտաբեկ աւելի թախճաղին:
«Մամային աչքերը աստղեր են...»
Տխրութիւն մը ցաւալիւնօրէն համակած է այս սգակիր տղաքը, որոնց մէջ կը թարմանայ յիշա - տակը այն անհետացած սիրելիներուն: Ա՜սա կը դաւն անոնք վերջին գորոյթալին համբոյրը ի սպառ կորսուած մամային, իրենց նսեմ ճակատ - ներուն վրայ ...:

Լուռութիւնը կ'ընդհատէ ծափերու տփույն փնջիկ մը՝ որ հիւրանոցի պատուհաններէն վար կը թափթփի ողորմութեան լուծանքներու նման: Որբե - րը վեր կը նային ստան ու անտարբեր: Գաղաբա - կիրթ այս ցոյցը սակայն չի լեցնէր անոնց սիրա - կարօտ հոգիները: Կը շարժի կարաւանը վերակա - ցուհիի մէկ նշանին վրայ: Թուփ, թուփ, թուփ, նոյն միօրինակ ու երկնոտ ոտնաձայնը բոպիկ սոքե - րուն: Կը քալեն կուպրէ մաքուր ճամբուն մէջտե - ղէն լուս ու հնազանդ, կը դառնան դէպ ի եղեւին - ներու անտար: Եւ հետագային ալ չեն տեսնուիր:

Բայց իրենց ճղակոտոր ներկայութեան սար - սուտը կը հեւայ հոս, հողիկ մօտիկ: Եւ աղետա - լի հարց մը, կը բզկտէ մտածումներու թելը: — Մեր որբերը... Մեծ պատերազմի հայ որբերը... հազարներ էին անոնք անձայրածիր ու կիցիչ աւա - դուտներու մէջ մոխիր դարձան: Բիւրաւորներ էին որ ջրամոյն եղան: Դահիճները վայրագ էին ու ա - րկնակի: Ժանտատանդի համաճարակի մամրէ - ներով թունաւորեցին առոյգ ու կայտառ տղաքը Արմէն ցեղին: Կազմակերպուած էր նախճիրը: Մե - ռած էր մարդկային խիղճը: Եւ ոճրագործները անպատիժ մնացին ...:

Հանրակառքերու, ինքնաշարժներու սուրոց:

Թղթարանութիւն

«Մարդկային կեանքը կը սկսի թուրքով եւ վերջանայ թուրքով»: Այսպէս կը բացատրէր ժայռաբան մը, զոր տեսայ վերջերս:

Շարժանկարիչը դիմած էր ամէն հնարքի: Նորածինի մը կեանքը սկսիլ կուտար թուրքի վրայ՝ արձանագրութեամբ մը: Կեանքի ընթացքին ան վերջ թղթապայ վար եւ վերջապէս վախճանն այ թուրքի վրայ՝ սեւ շրջագծի մէջ առնուած մտահարգով մը:

Իսկապէս ինչե՛ր կրնայ ընել այդ անիծեալ թուրքը: Եթէ թուրքը չըլլար, ի՞նչ պիտի ընէր խեղճ մարդկութիւնը: Աւելի երջանիկ թէ դժբախտ կեանք մը պիտի ունենայինք:

Ամէն սեղ է թուրքը: Դպրոցականի սեղաններէն մինչեւ դիւանագիտական, դոյնը նմանած կանաչ սեղանները, թուրքով ողորդուած են: Թէեւ ասան մը թուրքի սով կար, տեղի տալով նորանոր եւ երկններանգ թղթապարենատոմսերու, բայց հիմա առատութեան նշաններ կ'երեւան:

Ամէն մարդ իր գիտցած ձեւով կը գործածէ թուրքը:

Ոմանք սորվելու, ոմանք սորվեցնելու, շատեր միտք պղտորելու, ուրիշներ իրենց յիշողութիւնը թարմացնելու...

Պատերազմն անգամ թուրքով կը սկսի: Դիւանագիտական թուրքերու երթեւեկէն վերջ, ժողովուրդները, աւելի ճիշդ՝ անոնց պարագլուխները, իրենց արարքը արդարացնելու կամ նախադրուշացնելու համար, թուրք կը գրկեն կամ կը փոխանակեն: Երբեմն ալ այդ թուրքն անգամ կը դրանան եւ պաշտօնական յայտարարութիւնը լոյս կը տեսնէ թուրքի վրայ, գործուած արարքէն վերջ:

Պատերազմը կը վերջանայ թուրքով, յաղթող թէ պարտալ թուրքի մը վրայ կը սահեցնեն իրենց ստորագրութիւնը:

Դրամատէրները կը դողան իրենց արժեթուրքերուն վրայ, միշտ ուղելով թղթակոյտը վերածել լեռնակոյտի: Ո՛չ փոյթ մարդկային զոհերն անգամ:

Բանուորը օրն ի բուն ի դուր կը ճգնի, շարժուան վերջը քանի մը կտոր թուրքի կտրօն ստանալու համար:

Սպառնալից կ'օրհնէ թուրքը, ուրիշ մըն ալ կ'անիծէ:

Երգահանը, թուրքի վրայ, իր խաղերով կը թրթոցցնէ մարդու սիրտն ու հոգին:

Վիպասանը թուրքով միայն կը պատմէ իր երեւակայութիւնը, իսկ բանաստեղծն ալ թուրքի

վրայ կ'արտայայտէ իր ներշնչումն ու հոգին, ինչպէս նկարիչը:

Սուրբ կը ցնդի, բայց թուրքը կը մնայ: Եւ այդ պատճառաւ է որ խօսքին աւելի արժէք տալու եւ մնայուն դարձնելու համար, կ'արձանագրեն թուրքի վրայ:

Միութեան մը կ'ուզես արձանագրուել, նախ եւ առաջ թուրք: Հրաժարիլ կ'ուզես, կրկին թուրք, թէեւ այս վերջինը պայման չէ: Նպատակը՝ արդիւններն իսկ շատ անգամ կը մնան միայն թուրքի վրայ:

Հանդէս կ'ուզես կազմակերպել, թուրք, միշտ թուրք: Թուրքը նախապայման է: Մարդիկ աւելի կը վստահին թուրքին քան խօսքին:

Շատեր պիտի ըսեն թէ ի՞նչ կը ներկայացնէ թուրքը, եթէ չըլլայ դրիչը:

Մէկը կը լրացնէ միւսը եւ իրար միացնողն ալ մեղանն է:

Տուէք մէկուն ձեռքը թուրքի կտոր մը եւ գրիչ մը, ինչե՛ր կրնայ արտադրել: Հիանալիէն մինչեւ ամենագարշէլին: Վրան՝ բաց մատնութիւնէն մինչեւ... Համերաշխութեան ամենագեղեցիկ քարտը կրնայ ստորագրել, միշտ թուրքի վրայ: Երբեմն ալ պատկերազարդելով դայն:

Թղթաղբամներու վրայ անգամ դիրն ու պատկերը իրենց յարգի տեղն ունին:

Ժամանակին մեր նախահայրերը կը գործածեն եղբ պայտիտը: Բազաքաղթութեան հետ այդ ալ բարակցած է եւ ձեւափոխուած, եւ այսօր կը տեսնենք ամէն տեսակի, ամենանորը թուրքեր: Շատեր խօսքով կ'արտայայտեն իրենց միտքը, շատեր ալ թուրքով: Ամենայնապէս մինչեւ ամենակարգին, թուրքին է որ կ'ապաւինի: Յիսուսի խօսքերն անգամ մեզի հասած են թուրքով:

Ի՞նչ պիտի ընէին մեր յանձնախումբերը, եթէ չըլլար թուրքը...

Մոկաց Միւրգէն թուրքով կ'երգէր: Գարեգին Պէշկէօթիւրեան իր տառապանքը կ'երգէր սրին՝ դող եւ կը գթար որ «անգուք ձեռք մ'անմանաչ, կտրեց գեղ, անջատեց մայրն ու որդին...»: Իսկ ուրիշ մը «Աւելին երգը» կ'երգէր եւ եթէ թուրքն ալ ձայն ունենար, ինչե՛ր պիտի կրնար նկարագրել: Թուրքը առ հասարակ ուրիշներուն երգելու տալ, ցնծութիւն թէ տառապանք, սէր թէ ատելութիւն, մահ թէ կեանք: Թուրքը թէ լուռ է եւ թէ խօսուն:

Ախտո՛ւ որ իրապաշտ բանաստեղծ մը չեմ, երգելու համար թուրքին փառքը...

Անմեղ թուրք մ'էիր դու սպիտակ, Անգուք ձեռք մ'առաւ քեզ իր գրչին տակ, Հարուածեց շարունակ, ըրաւ շան-սատակ: Գծեց ու նիցեց, գրեց ու պոծեց վարէն քէ վերեմ,

Եւ օր մ'ալ տարաւ քեզ կախեց... պիտէն: ՄԵՂՈՒ

Գիտական ստույիս

Ներկայիս աշխարհը կը գտնուի հիւլէական տաղանայի մը մէջ: Ամէն օր հիւլէի մասին դիտական նորութիւններու կը հանդիպինք: Միջազգային քաղաքականութիւնը, մէկ ցամաքամասէն միւսը, վարակուած է հիւլէական տեղումով: Պետական մարդոց ճառերուն մէջ յաճախ ակնարկութիւններ կ'ըլլան հիւլէական ուղեւոր մասին:

Հիմա ալ կը խօսուի կազի մը մասին, որով կարելի պիտի ըլլայ շրջապատել երկիր մը, զերծ պահելու համար զայն այդ գոտիային մեքենային պատճառաւ մասնախիւռ աւերներէն:

Այս քանդիչ ենթադրութիւններուն հետ, կը ծանուցուին հիւլէական ուժին խաղաղարար օգտագործումները, մեքենաներու եւ ուրիշ շարժիչ գործիքներու համար:

Պեթ գիտնական մը վերջերս յայտարարած է թէ՛ հիւլէական ուժին շնորհիւ կը յուսայ բարձրանալ օդի բարձրագոյն խաւերուն մէջ, աւելի արագ եւ աւելի բարձր, քան փրօֆ. Փիքաու, որ ասկէ տարիներս առաջ օդապարկով մը 15.000 մեթր բարձրացած էր օդին մէջ, ուսումնասիրելու համար լոյսի ճառագայթումները եւ զանազան ճառագայթներու իոնականութիւնը՝ օդին ելկտրականութեան ազդեցութեան տակ:

Պեթ գիտնականին յայտարարութեան համաձայն, զսպակ մը կը բաւէ, որպէսզի իր օդապարկը կը հիւլէական ուժին շնորհիւ, քանի մը ժամուան մէջ վերոյիշեալ բարձրութեան հասնի: Այդ նպատակով մօտերս պիտի կատարէ իր առաջին փորձը Պրիւսիի Բամպոլ անտառին մէջ, ուր այժմէն փոխադրած է իր գործիքները, նախատեսուած վերելքը կատարելու համար:

Ուղեւորները երկրադորձական ճիւղին քիմիադէտները երեւան հանած են թէ լուրիկն տունը կը կարողանալէ այնպիսի նիւթ մը, որ կ'արգիլէ վէրքի մը մէջ դտնուած աւելորդ միսերուն աճումը մը եւ փէնիսիլինի նման զօրեղ ազդեցութիւն մը կը ներդրած առ հասարակ բոլոր վէրքերուն վրայ:

Մինչեւ այսօր փորձերը եղած են աշխատանքի մշակումներու վրայ: Տակաւին չի զիտցուիլ թէ «թօմաթին» կոչուած նիւթը, որուն քիմիական բաղադրութիւնը առ այժմ որոշ կերպով չէ ճշդ -

«Հայրենիք» դիտել կուտայ այս խորագրով խմբագրականի մը մէջ (13 Ապրիլ):

«Ընթերցողի յիշողութեան մէջ, անշուշտ, տակաւին թարմ է քանի մը օր առաջ մեր հրատարակած թարգմանութիւնը «յուշադրի» մը, զոր օգտատու Չիլին, այսինքն՝ Երեք Մեծերու արտաքին գործոց նախարարներու քննփերանակն երեք շաբաթ առաջ, յայտնի ուսմկալար Արշակ Սաֆրատեանի Լոնտոնի մէջ ներկայացուցած է եղեր Մեծն Բրիտանիոյ արտաքին գործոց նախարարին եւ պատճէններն ալ զրկած է Միացեալ Նահանգներու եւ Սորհրդային Միութեան արտաքին գործոց նախարարներուն:

Ընթերցողը, սպասովաբար, մոռցած չէ, որ այդ ատենները, Հ. Յ. Գաշնակցութեան կողմէ ընկեր ժիրայր Միսաքեան եւ ներկայացուցած էր յուշադրի մը Երեք Մեծերու արտաքին գործոց նախարարներուն:

Սակայն, հետաքրքրական է, որ մինչ Դաշնակցական ժիրայր Միսաքեանի ներկայացուցած յուշադրի կը պահանջէր «Սորհրդային Հայաստան»ի սահմաններու ընդարձակում՝ անոր կցելով թրքահայ նահանգները, ուսմկալար Արշակ Սաֆրատեանի առաջարկած է Հայկ. Դատի լուծման բոլորովին տարբեր ձեւ մը, տարբեր ամբողջ հայութեան ընտրած ձեւէն:

Արդարեւ, Արշակ Սաֆրատեան, անտես առնելով միջազգային ներկայ պայմանները, Հայկ. Դատի լուծման իր հիմ ընդունած է Սեւրի դաշնագիրը եւ առաջարկած Սիւրիքի Հայերու ներկայացուցիչներէ, Քիւրտերէ, Ասորիներէ եւ Թուրքերէ կազմել յանձնախումբ մը ու անոր յանձնել Հայ Դատի լուծման ծրագրի մը պատրաստութիւնը, «Միացեալ Ազգերու հովանաւորութեան եւ առաջնորդութեան տակ»:

Յատկանշական է, սակայն, որ թէեւ ծանօթ Ռամկալար մըն էր եղած ամբողջ նախութեան ներկայ ընթացքին հակառակ պահանջ ներկայացուցողը Լոնտոնի մէջ, Պոսթրի ուսմկալար թերթը Դաշնակցութեան եւ ոչ թէ իր ընկերով վերադրեց այդ պահանջը, Դաշնակցութիւնը եւ ոչ թէ իր ընկերը մեղադրեց այդ արտառոց ու ինքնազուլի ելոյթին համար:

Յատկանշական է նոյնպէս, որ Պոսթրի ուսմկալար թերթը տարրական պարկեշտութիւնն եւ խղճութիւնն անգամ չունեցաւ ընդունելու, որ ինք զրուարտած էր Դաշնակցութիւնը, թէեւ «Հայրենիք» անհերքելի փաստերով ցոյց տուաւ, որ ոչ Դաշնակցութիւնը եւ ոչ ալ անոր հետ կապուած Հայկ. Դատի Յանձնախումբը Սորհրդ. Հայաստանէն տարբեր հայկական հանրապետութեան մը խօսքը ըրած չեն Երեք Մեծերուն ներկայացուցած վրենց յուշագրերէն կամ զրկած հետադրեցն ունէ մէկուն մէջ:

Կակած չկայ, որ Պոսթրի ուսմկալար թերթը մեզի հետ միաժամանակ ստացած էր Ա. Սաֆրատեանի յուշադրի մը, բայց ոչ հրատարակեց զայն եւ ոչ ալ մանաւանդ անոր խօսքն ըրաւ՝ ճշդելու համար իր դիրքը իր յայտնի ընկերով արտառոց ելոյթին հանդէպ»:

դուած, ինչ ազդեցութիւն պիտի ունենայ մարդկային մարմինն, մասնաւորապէս կարգ մը մակերեսային կեղերու վարակիչ կեղերներուն վրայ:

Փորձերը հաստատած են թէ «թօմաթին»ը դժուար ազդեցութիւն մը ունի նաեւ ոտքերու վրայ յաճախ գոյացած աւելորդ միսերուն, porriց կոչուած իրթային թարախոտ ու շրջանաձեւ պղտիկ սյուղմաններուն, ինչպէս նաեւ զլիսամորթային գանգան հիւանդութեանց վրայ, զոր մինչեւ այսօր դժուարաւ կարելի եղած էր բուժել: Տեսնուած է նաեւ թէ «թօմաթին»ը կը բուժէ թրքային ուռերուն պատճառաւ կարգ մը խանդարումները, որոնք մինչեւ հիմա անբուժելի համարուած էին:

Ինչ կը վերաբերի մանրէներէ առաջ եկած հիւանդութեանց, թօմաթինը կարելի է բաղդատել փէնիսիլինի հետ:

Ամերիկացի քիմիադէտները չափէ աւելի շահաբերուած են վերոյիշեալ զիտումով, որ կը կարծուի թէ բժշկութեան մէջ՝ կիրարկութեան նոր ու ընդարձակ դաշտ մը պիտի բանայ: Բոյսերը, ինչպէս կենդանիները, կրնան հիւանդութեանց հանդէպ ախտազերծ ըլլալ, թէեւ անոնց յօրինուածութիւնը համանման չէ: Այդ հաւանականութիւնը յաճախ արդիւնք է քիմիական ազդեցութեան մը, որ կը ներդրած առժամապէս պակասաւոր գործարանային յօրինուածութեան վրայ: Բոյսերը, որ քիմիապէս լաւագոյն տարբեր են, կը վերադրին եւ ժառանգականորէն ծնունդ կուտան ուրիշ բոյսերու, որոնք միեւնոյն առաւելութիւնները կը ներկայացնեն: Հետեւաբար, պէտք է նախապէս ընտրել այնպիսի առնակեր, որոնք այս նորագիտ դեղին համար ամէնէն աւելի ազդեցիկ արտադրողներ ըլլան:

ՀԱՅՐԵՆԱՍԷՐԻ ՄԸ ՄԱՀԸ

Ապրիլ 27ին Տրակիենանի մէջ մեռաւ նախկին Արմենական կուսակցութեան կարող գործիչներէն Փանոս Մալոսանը: Յուշարկաւորութեան կը մատնակցէին Տրակիենանի եւ Փիւսէ սիւր Արժանի հայրենակիցները:

Հանդուցեալը ծնած էր 1859 Յուլիս 11ին, Վանի Սղքա գիւղին մէջ: Աղքատ ընտանիքի զաւակ, իր նախնական կրթութիւնը ստացած էր գիւղին քահանայէն: Քսան տարեկանին կը մտնէ Վանի Արմենական կուսակցութեան շարքերը, եւ հաւաքելով գիւղի գիտակից երիտասարդութիւնը, կը կազմէ գիւղին մէջ ալ կուսակցական մասնաձիւղ մը:

1891ին կը ձերբակալուի իր ընկերներով, եօթը հոգի եւ կը փոխադրուին Վանի բանտը: Սղքա գիւղի այգիներուն մօտ երեք Թուրքեր սպաննած ըլլալու մեղադրանքով: Երկու ամիս չարչարելէ ետք, չեն կրնար հաստատել ամբաստանութիւնը եւ գիւղացի հայրենասէր մը 900 ոսկի տուգանք վճարելով կը փրկեն Մալոսանը եւ վեց ընկերները:

1896ի հայկական ջարդերուն, Մալոսան կը ստանձնէ իր գիւղին պաշտպանութիւնը, Թէրլէ մէջեան Մկրտիչի հրամանով, եւ տասնեակ մը զինուորներու հետ կուռելով 200է աւելի Թուրքերու դէմ, երեք ժամ անհաւասար կռիւէ վերջ կը փրկէ գիւղը, 850 անձ, առանց ո եւ է զոհ տալու, թէեւ գիւղը աւերակ էր դարձած:

Մալոսան աւելի լաւ ծանօթանալու համար Թուրքերուն եւ Քիւրտերուն կը դրաղի առեւտրական գործերով եւ կը շրջի ամբողջ Վասպուրականը, գիւղերը եւ քաղաքները:

1914ի վերջերս իր հաւատարիմ քիւրտ բարեկամները կ'առաջարկեն «Քիւրտ Փանոյին» զինքը ազատել ամբողջ ընտանիքով: Մալոսան կը մերժէ ըսելով որ եթէ բոլոր Հայերը պիտի ջարդուին իմ ողջ մնալու ի՞նչ կ'արժէ:

1915ին Վանի սպառնալուծեան տուն Մալոսան իր 21 տարեկան անդրանիկ զաւակին Մալխասի (ճաջազան) հետ «տասնոցը» կը վերցնեն եւ կը մտնէ Այրեւստանի պաշտպան դիրքերը: Շնորհիւ իր նման հաղարարու հայրենասէրներու, Վանը յաղթական ելաւ: Վերջերս արձանագրուած էր ներգաղթի համար:— Ազգայնցի

Ծանր դէպք պատահած է: Վարչապետը հաւաստեց թէ նոր հեռագիր մը ուղղած եւ մասնաւոր ներկայացուցիչներ զրկած է, բարեկարգութիւնը վերահաստատելու համար: «Այս հրամաններով, վստահ եմ թէ կուրբ դադարած է: Անմիջապէս պատուիրակութիւն մը պիտի զրկեմ Թաւրիզ, բանակցութիւնները վերսկսելու համար»:

Թաւրիզի անթելը հետեւեալ մանրամասնուած թիւները կը հաղորդէ. — Կիրակի առտու ժամը 5ին իրանեան զօրքը սկսաւ յարձակիլ Ուրմիոյ լիճին հարաւակողմէն, Քիւրտիստանի հարեւան շրջանին մէջ: Երեք օր առաջ, իրանեան զինուորները յարձակեցան Քիւրտիստան վրայ, բայց Քիւրտերը 37 զէրի բռնեցին եւ Պարսիկները այժմ կը նահանջեն:

Քէհրանի կառավարութիւնը որոշեց սեղեկազեր մը զրկել Միացեալ Ազգերու Ապահովութեան Խորհուրդին, Ատրաքտականի կացութեան մասին: Խորհուրդային պատուիրակը մերժեց մասնակցել ժողովին, որ դարձեալ անելի մատուցած է:

Պայխար անօրութեան դեմ

Սպանացոյ սովին դարման տանելու համար, 18 ազգերու պատուիրակները ժողով դաւարեցին Ուոշինկթընի մէջ: Խ. Միութիւնը չի մասնակցել: Այս առթիւ մանրամասն տեղեկութիւններ հաղորդեցին նախկին նախագահ Հուվըր եւ բրիտանական պատուիրակը, որոնք շեշտեցին թէ սնունդի պակասը կրնայ շարունակուիլ մինչեւ 1948 եւ թէ յուսալի չէ որ բնականօրէն վերահաստատուի 4 — 5 տարեկէն: Հուվըր առաջարկեց համաշխարհային վարչութիւն մը հաստատել, անոր գլուխը դնելով պարսկաւարման «ցար մը»: Այս վարչութիւնը գործի պիտի ձեռնարկէ Սեպտեմբեր 1ին, երբ պարսկաւարման անմիջական տաղնապը անցած կ'ըլլայ: Վարչութիւնը պէտք է հաստատուի Մ. Ա. Կ. Սպահանցիական Խորհուրդին հովանաւորութեան տակ, զործելու համար չորս շրջաններու մէջ. — 1. Եւրոպայ, մէջն ըլլալով Հիւս. Աֆրիկէն: 2. Մայր. Արեւելք: 3. Հարաւ. Ամերիկա: 4. Հնդկական Ովկիանոս, մէջն ըլլալով Աւստրալիան, Նոր Զելանտան եւ Հարաւ. Աֆրիկէն: Վարչութիւնը իր ձեռքին տակ պիտի կեդրոնացնէ ամբողջ աշխարհի պարսկաւարմանը: Հուվըրի կարծիքով, ոչորմութիւն բաշխելու եղանակը անօրութեան է: Այս առթիւ աղբարբեց. — «Պատեալութեան վերջնական ձայնը՝ սնունդը»:

ԲԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՍՍՐԻ ՇՐՋԱՆԻՆ զլիսաւոր քաղաքներէն Սարլուի մէջ մեծ հանդէս մը տեղի ունեցաւ կիրակի օր, մասնակցութեամբ 30.000 բնակիչներու: Այս առթիւ քաղաքացիներ ճառ մը խօսելով պահանջեց անմիջապէս վերահաստատել 1814ի սահմանը, ուրիշ խօսքով Ֆրանսայի կցել այդ շրջանը: Զօր. Բէժոնիկ եւս ճառ մը խօսելով, յիշեց թէ ինչպէս 1919ին, այսօր ալ Ֆրանսա կը պահանջէ Սարլի անխահանքերուն ամբողջ սեփականութիւնը, կը պահանջէ ամբողջովին Ֆրանսական տնտեսութեան կապել շրջանին անտեսութիւնը: Ֆրանսիայի բրիտանական շրջանին համայնալարները ժողով դաւարեցին մասնակցութեամբ 600 պատուիրակներու եւ պահանջեցին Ֆրանսայի չկցել Սարլի շրջանը: Լոնտոնի թերթերը կը գրեն թէ Մոսկուան ալ ուժ կուտայ այս շարժումին, հակառակ ըլլալով Սարլի անջատման:

ԶՈՐՍԵՐՈՒ ԺՈՂՈՎԻՆ ԱՌԹԻՒՒ, ամերիկեան դարձակալութիւնը, պաշտօնական աղբարբեց քաղեցով, կը ծանուցանէ թէ Պ. Պէվին պահանջած էր միջազգայնացնել արեւելեան Գերմանիոյ գործարանները, որ կը քսուէին ուսական դրաման դէմ: Այս ծրագրին համաձայն, անգլիական ներկայացուցիչներ ալ պիտի գանուին Վերին Միջկողմի մէջ, հակադրուելով Ռուսերու ներկայութիւնը Ռուրի մէջ: Պէվին առաջարկած է նաեւ վերաբնել Գերմանիոյ արեւելեան սահմանները, մասնաւորապէս Լեհաստանի յանձնուած հողերու խնդիրը: Այս առթիւ ալ սուր վիճարանութիւններ տեղի ունեցած են, եւ ի վերջոյ Մոլոթով յայտարարած է թէ ինք հրահանգ չունի այս խնդիրներով զբաղելու:

ԻՏԱՆԻՈՅ զինազաղարի նոր պայմանադրին մէջ դադարի տրամադրութիւններ կան եզեր, որոնց համաձայն Անգլիա տիրական ազգեցութիւն պիտի ունենայ այդ երկրի առեւտուրին վրայ:

ՍՈՒՐԻՈՅ կառավարութիւնը մերժեց նախապատուութեան իրաւունքներ տալ Ֆրանսայի: Բոլոր պետութիւններն ալ միեւնոյն իրաւունքներ պիտի վայելեն: Ֆրանսական դպրոցները կրնան վերաբացուիլ յառաջիկայ հոկտեմբերին, համալերակելով կրթական օրէնքին: Սուրիա պատրաստ է ի հարկին գնելու Ֆրանսական այն շէնքերը որ անհրաժեշտ չեն զենպանութեան եւ հիւպատոսութեան համար:

ԳԵՐՄԱՆԻՈՅ ՕՏԱՐ ՏԱՐԱԳԻՐՆԵՐԷՆ 867 հոգի Նիւ Եորք հասան, 75 երախաներով: Նախապահ Թրումբն արտօնած է մինչեւ 37.000 տարաբերները ընդունիլ:

ՄԷԿՈՒԿԷՍ ԱՄՍՈՒԱՆ ՄԷՋ

ԼԻՈՆ. — Մէկուկէս ամիսը շատ կարճ ժամանակ է, դաստիարակելու համար սերունդ մը, որ տարուած է մեր շրջապատի առօրեայ կեանքով: Ամէն մարդու չէ տրուած պարահանդէսէն դուրս քաշել այս օրուան երիտասարդը: Մայրենի լեզուով խօսիլը շատ դժուար կը թուէր մէկուկէս ամիս առաջ մեր այն բոլոր երիտասարդներուն, որոնք այսօր մաս կը կազմեն Հ. Յ. Դ. Նոր Սեբուսի «Սիւսիանթո» խումբին:

Մեր առաջին հաւաքութիւն (7 Ապրիլ) սրահ մտնող մեզ հետ կը խօսէր bonjourով, իսկ այսօր դիւրութեամբ կը հնչեն մեր արեւահամ քարի թաղը եւ մեծամասնութեամբ կ'արտայայտուին յատուկ հայերէնով: Դեռ նոր կը լրանար մեր խումբին կազմակերպման մէկ ամիսը, երբ յաջողութեամբ կրցանք տօնել հայ վշտի ու իղծի փայլուն արտայայտիչին՝ Աւետիք Ահարոնեանի ծննդեան 80ամեակը:

Օգտուելով Պ. Հր. Բալուեանի ներկայութենէն, կազմակերպեցինք երկու դաստիարակութիւններ 1. «Ս. Արովեան եւ Վէրք Հայաստանի վէպը»: 2. «Հայկական հարցի ծագումն ու զարգացումը մինչեւ Հ. Յ. Դ.»:

Դասախօսութեանց ներկայ եղան Նոր Սեբուսի անդամներուն մեծ մասը, ուղղութեամբ ունիւղբերով:

Շատերը դիտեն արդէն թէ, ո՛վ էր Արովեան, ո՛վ էր որ հայկական հարցը ձեւակերպեց եւ ո՛վ էր որ շարունակեց մինչեւ Դաշնակցութեան կազմակերպութիւնը:

Մեր եռանդուն աշխատանքները քաջալերելու համար, Պ. Արովեանի Աւետեան սիրայօժար տրամադրած է իր սրճարանը, ուր կը գումարելին մեր ժողովները, շարաթը մէկ անդամ: Ատկէ դաս մեզի արդէն սրահ մը տրամադրուած է Փրանսացի ընկերվարականներու կողմէ:

Սերտ յարաբերութիւններ ունինք Հ. Յ. Դ. Նոր Սեբուսիի Տէսինի «Վ. Մամիկոնեան» եւ «Բաֆֆի» խումբերուն հետ:

Մօտ օրերս պիտի կազմակերպենք «պարսէթ պօշ» խումբ մը: Մեր վերջին ժողովին որոշեցինք կազմակերպել նաեւ դաշտազնայութիւն մը, մասնակցութեամբ Տէսինի խումբերուն: Մկրտումի

ԼՈՆՏՈՆԻ կարեւոր թերթերէն «Սքոտլէն Թայմզ» զանօրէն կը պահպանի թէ Խ. Միութիւնը ժամանակ շահի կ'ուզէ, ամբացնելու համար իր շրջերը իր դրամած երկիրներուն մէջ եւ թէ Յունիս 15ի ժողովն ալ պիտի ծախողի, եթէ Մոսկուա չփոխէ իր տեսակետները:

ԱՒՍՏՐԻՈՅ փոխ վարչապետը ճառ մը խօսելով, պահանջեց որ Դաշնակցները հեռանան օր առաջ, որպէսզի կարելի ըլլայ վերահաստատել երկրին անտեսութիւնը: Առաջին բողոքն է այս օր կ'արտայայտուի չորս պետութեանց դաւարանդէմ:

ԱՄՈՒԻՄԻ ՀԱՄԱՐ միջազգային ժողով մը գումարուեցաւ Փարիզի մէջ: Ծրագրերը պիտի մշակէ, անուր ճարելու համար Եւրոպայի: Ֆրանսա ամիսը 600.000 թոն անուր կը ստանայ Գերմանիայէն, Անգլիայէն եւ Մ. Նահանգներէն, իսկ իր արտադրութիւնը հասած է ամսական 3.500.000 թոնի (108 առ հարիւր, բողոքատելով 1938ի հետ): Իտալիա կը պահանջէ 500.000 թոն, այլապէս բոլոր գործարանները պիտի փակուին մինչեւ Յունիսի վերջը:

ՅՈՒՆԻՍ 2ի ԸՆՏՐՈՒԹԵՎՆԵՍ առթիւ թեկնածու ներկայացած է նաեւ Զօր. Ժիւս, որ գերու-թեկն է փոխած եւ կարեւոր պաշտօններ վարած էր Ալժէրի մէջ: Կը պահանջէ երկրորդ ժողով մը հաստատել ձեռակոյտին տեղ եւ յարգել անհատական սեփականութիւնը:

ՍՊԱՆԻՈՅ մէջ քննութիւն կատարելու համար զրկուած միջազգային յանձնաժողովը լուր առած է թէ Զօր. Ֆրանքօ հրամայած է սահմանազուրի բոլոր զինուորներուն հանել իրենց համազգեստները եւ քաղաքային հազուստ հազնիլ:

ԲԱՆՋԱՐԵՎԷՆԵՐՈՒ փաճառուած աղաւ հրահանգել է վեր, գինը մեծապէս ինկած են: Պարսկաւարման նախարարը Ամերիկա պիտի երթայ, ուտելիք ձարելու համար:

Սրբի Տիկին Աղանի Մեծատուրեան, Տոբթ. Գուրգէն Մեծատուրեան, Օր. Շուշան Մեծատուրեան, Տիկին Մարիամ եւ Օր. Ազգանուշ Գօնչէ-կիւլեան, Տէր եւ Տիկին Զարմայր Մեծատուրեան, եւ զաւակները Օր. Հայկանուշ, Պ. Պ. Գամէր եւ Գարեգին Մեծատուրեան, Տիկ. Սրբուհի եւ Տէր եւ Տիկին Վ. Մեծատուրեան (Արժանթին) շնորհակալութիւն կը յայտնեն բոլոր անոնց որ անձամբ, նամակով եւ ծաղիկապակով, ինչպէս նաեւ հանրային հաստատութիւններու նուիրատուութիւններով ցաւակցութիւն յայտնեցին ողբացեալ ԹԱ. ԴԷՈՍ ՄԵԾԱՏՈՒՐՆԵՐՈՒ մահուան առթիւ:

ETAB. Z A R E H
40ՇԻԿԻ վերաբերեալ ամէն տեսակ պիտոյք,
ՄՈՐԹ ԵՒ ԿԱՇԻ, 348 rue des Pyrenées, Paris (20):
Հեռ. Men. 69-86:

Մայիս 28ը Փարիզի մէջ

Կը տօնուի Մայիս 29ին, իրիկուան ժամը 9էն մինչեւ առաւօտ, Petit Journalի մեծ սրահը, 21 rue Cadet. Métro: Cadet:

Կը նախագահէ ՀՐԱՆՏ ՍՍՍՈՒԷԼ (նախագահ Գաղբ. Խարիւրդի): Կը խօսին ՇՍԻԱՐՇ ՄԻ - ՍՍՔԵԱՆ: ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՅԻՉԸ եւ ՅՈՎԻԿ ԵՂԻԱԶԱՐԵԱՆ:

Գեղարուեստական բաժնին կը մասնակցին Օր. ԱՍՏՂԻԿ ԱՌԱՔԵԼԵԱՆ (Երգ), Պ. Ֆիլիփ ԱՂԱԶԱՐԵԱՆ (Չուժակ), Պ. ԳԱՐԵԳԻՆ (Թառ), Օր. ԱՃԻՄԵԱՆ (Երգ), Բ. ՀԱՊԷՇԵԱՆ եւ Զ. Գա - ՐԻՊԵԱՆ (արտասանութիւն), ԱՐՄԵՆԻԱ ՎԱՐ - ԿԱԶ (պար): Պարերը կը վարէ ՌԱՏԻՈՅԻ ՆՈՒԱ - ԳԱՆՈՒՄԲԸ, ղեկավարութեամբ Raymond Verneyի: ՏԷՍԻՆԻ ՄԷՋ. — 1 Յունիս, շարաք երկիւղ ժամը 8.30ին, Հ. Յ. Դ. Տան մէջ: Կը բանախօսէ ընկեր ՀՍԳ ՍՍՐԳԻՍԵԱՆ: Գեղարուեստական ճոխ բաժնի: Մանրամասնութիւնները յաջորդով:

ՅՈՒՇԱՏԵՏՐ

ՎԻԷՆ. — Հ. Յ. Դ. Նոր Սեբուսիի «Մուրատ» խումբի դասախօսութիւնը նոր սրահին մէջ (Սէն Մարթէն): Պիտի խօսի Պ. Հ. ԲԱՆՈՒԵԱՆ, 23 Մայիս իրիկուան ժամը 8ին: Նիւթը՝ Հայաց ազատագրական շարժումը մինչեւ քաղաքական կուսակցութիւնները:

Երկրորդ դասախօսութիւնը՝ նոյն սրահին մէջ, շարաթ 25 Մայիս, իրիկուան ժամը 8ին: Նիւթը՝ Ա. Անարոնեանը եւ իր կեանքը:

Հ. Յ. Դ. ՉՍԻԱՐԵԱՆ կոմիտէի ընդհ. ժողովը՝ այս ուրբաթ, ժամը 8.30ին, Նիւթեան սրահը:

ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ եւ շրջանի Հայր. Միութեան ընդհ. ժողովը 26 Մայիս՝ կիրակի կէսօրէն վերջ ժամը 15ին, Studio Caumartin, 19a rue Caumartin: Կը հրաւիրուին բոլոր հայրենակիցները:

Սարսառապանի յիշատակին

ՆԱՅԿԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻԿ ՀԱՅ ՍՊԱՅԻՅ ՄԻՈՒԹԻՆԸ հրաւիրում է բոլոր հայրենակիցներին ներկայ գտնուիլ Փարիզի Հայոց Էկեղեցում, կիրակի 26 Մայիսին հողհանգստեան պաշտօնին, որ պիտի տեղի ունենայ ի յիշատակ այն բոլոր հայ սպաների, ենթասպաների եւ զինուորներ, որոնք Հերոսաբարբոսկան Սարգաթաբաղի, Բաշ Աքարանի, Ղարաբիլիսի կոններում, ինչպէս եւ այլուր հայրենիքի ազատութեան համար: Բացի այս ծանուցումէն մասնաւոր հրուէր ուղարկուած չէ:

Վասպուրականի հերոսամարտը

ՄԱՐՍԻՅՈՒ. — Վասպուրականի Հայր. Միութիւնը կը տօնէ ՅԱՂԹԱԿԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻՆ 31րդ տարեդարձը, Մայիս 25ին, շարաթ իրիկուն ժամը 9ին մինչեւ լոյս, Salon Colbertի մէջ, rue Colbert No. 7: Կը նախագահէ Պ. ՌՈՒԲԷՆ ՅՈՎՆԱՆԵԱՆ, կը բանախօսէ հայրենակից ՀՍԳ ԸՐՈՒԱՆԻԿԵԱՆ (Փարիզէն): 40 Վանուհիներ ընդհ. վրայ: Գեղարուեստական ճոխ բաժնի, ղեկավարութեամբ Տիկին Մանուշ Ծահմրեանի: Տոմսերը. — 15 Longue de Capucine, Հացապարծեանի, 7 Place d'Aix, Աւտոյանի:

Դերասան Քիւր Փարիզի մէջ

Ֆ.Ա.Ը.Մ. ՓԱՐԻԶՍԻ ՀԱՅ ԱԶԳ. ԹԱՏԵՐԱՆՈՒՄԲԸ կը ներկայացնէ Ք Ի Ն Ը մասնակցութեամբ դերասան Դաւիթ-Ռոմիի, բեմադրութիւն Տիկին Աննա Բուլղաղեանի, կիրակի 26 Մայիսին, ժամը 3ին Centre Marcelin Berthelot, 28bis rue St. Dominique, métro Invalides: Տոմսերը սովորական վայրերը:

Յր. Մշակութային Միութեան քացման հանդէս

Պատուոյ նախագահութեամբ Սով. Հայաստանի Գիտութեանց Ակադեմիայի Անդամ Փրոֆ. Ե. Մանուկեանի: Հիշարթի 30 Մայիս, ժամը 14.30ին, Théâtre d'Iénaի սրահներուն մէջ, 10 Ave. d'Iéna, métro Iéna: Գեղարուեստական ճոխ բաժնի: Համարձակ վիճակ, կենդանի պատկեր, պար եւ ժամերը ազգ. տարազով: Միջնաբարին՝ Յարախուժիւններու, նկարներու եւ տեղական հրատարակութիւններու, նկարներու եւ հայ մշակույթի ալ ստեղծագործութիւններու: Հրապարակ հանուած են միայն հրաւիրատուներ:

Le Gérant: H. AGONEYAN
Imprimerie DER AGOPIAN, 17 Rue Damesma - 13

ՀԱՐԱՇԻ

HARATCH - Fondé 1925 - R. C. S. 376.286

Directeur-Propriétaire : SCH. MISSAKIAN

17, Rue Damesme - PARIS (13^e)

Tél.: GOB. 15-70 - C. C. P. Paris 1678-63

ՔԱՄԵՆ. Տար. 750, 6ամս. 400, Արտասահման 1000 ֆրանք

Jeudi 23 MAI 1946 Հինգշաբթի 23 ՄԱՅԻՍ

ՕՐԱԹԵՐԹ

ԺՁ. SU.ՐԻ - 18^e Année N^o 4707-նոր շրջանի քիւ 346

Խմբագիր՝ Ե. ՄԻՍԱԿԻԱՆ

Գին՝ 3 ՓՔ

Մեծ ԽՕՄԻԸ

ՊԱՅԻՄԱՐ ՈՒԺԻ ԵՒ ԳԱՂԱՓԱՐԻ

Յունիս 2ը քանի կը մօտենայ, այնքան դոյն եւ շեշտ կը ստանան հակաճառութիւնները հոսանքէ հոսանք, ընտրական պայքարին առթիւ:

Աւանդական տախտակները տեղաւորուած են, արդէն, փողոցներու մէջ, եւ թեկնածուներու ցանկերը կ'երեւան մեծատառ: Անհամար ճառարխօսներ ընդ ընդ եւ քաղաքի քաղաք: Ամէնքն ալ հազարաւոր ունկնդիրներով:

Անշուշտ միջադէպեր ալ պակաս չեն, — ժողովներ խանդարել, անուններ սեւցնել, ծափահարել կամ սուշել: Երբեմն ալ «չափուել»:

Պայքարին ամէնէն պատկերալից տեսարանը կը ներկայացնեն թերթերը: Բոլորն ալ մարտական ոգի մը կ'արտայայտեն, աւելի կամ նուազ ուժգին: Ահաղեմական վիճարանութեան հետ, կը կարգաբարձի — լեզի խօսքեր: Հին ու նոր պատմութիւններ եւ մեղադրանքներ, — «Դուք չէիք որ...» — «Երէկ այդպէս չէիք ըսեր» են:

Բազմաթիւ շահեկան երեւոյթներու կարգին, աչքի կը զարնէ ընկերվարական եւ համայնավար կուսակցութեանց միջեւ բացուած բանավէճը, բանաւոր թէ գրաւոր:

Մէկ հոսանքին վարիչը կամ թեկնածուն հազիւ բերանը բացած կամ տող մը գիր գրած, յաջորդ օրը կը ստանայ պատասխանը: Եւ շատ մը վարագոյրներ կը բացուին, յիշեցնելով նախապատերազմեան օրերը:

Ընկերվարական կուսակցութեան ընդհ. քարտուղարը, Պ. Դանիէլ Մայիս, վառվառ մարդ եւ հոետոր, մէկ շարքի է վեր ճակատ յարդարած է համայնավարութեան դէմ, Le Populaire-ի մէջ: Կը գրէ հանդարտ, բայց հաստատ, յուշիկ-յուշիկ շարքով այն հիմնական պատճառները որ անկարելի կը դարձնեն երկու հոսանքներուն միացումը:

Որքան հրահանգիչ կէտեր, այս բարեկիրթ եւ փաստացի վիճարանութեան մէջ:

Ի՞նչ են իր գլխաւոր մեղադրանքները կամ վերապահումները:

1. Համայնավար կուսակցութիւնը իր ներքին եւ մասնաւոր արտաքին դործունէութիւնը միշտ կը չափէ կը ձեւէ Խ. Միութեան քաղաքականութեան վրայ: Ուրեմն, «աղբը չուզեր որ Մորիս Թորնթի վարչապետ ըլլայ: Կարելի չէ երկիր մը կառավարել աղբի կէսին դէմ»:

Բազմաթիւ են այս մեղադրանքին առթիւ յիշուած փաստերը: Եւ այնքան խօսուն, որ մեկնութեան չեն կարողիր:

2. Համայնավար կուսակցութեան ներքին կարգուսարքը կը հակասէ ժողովրդավեպետութեան տարրական սկզբունքներուն:

Այստեղ ալ շարք մը փաստեր սկսելով 1920էն, երբ Ֆրանսայի ընկերվարութիւնը երկուքի բաժնուելով, ստեղծուեցաւ համայնավար կուսակցութիւնը, առաջնորդութեամբ Մարտիլ Քաշէնի, Ֆրանսայի եւ ուրիշներու: Երկուսուցուցութիւն, — Գանի որ աղատ վիճարանութիւնը դժուար է համայնավար կուսակցութեան մէջ, կարելի չէ խօսիլ միացման մասին:

3. Համայնավար կուսակցութիւնը խորութիւն չի դնէր միջոցներու մէջ, իր նպատակին հասնելու համար:

Դարձեալ օրինակներ, ապացուցանելու համար այդ հոսանքին վարկաբեկիչ հնարքները, նոյն իսկ ընկերվարութեան դէմ, որուն դադարական պայքարը կը տանին կը կապեն յետադիմականներու խաչադրութեան հետ: «Մարդ կրնայ համայնավար չըլլալ, եւ հակահամայնավար չլինել: Բանուորական տեսակէտով բոլորեւրեքեան մեթոդները շարաշուք համարելը երբեք չի նշանակեր մեղսակից կամ դործակալ դառնալ քրքրներուն»:

Այս առթիւ, ուրիշ աշխատաւորական հոսանքներ ալ դիտել կուտան թէ Աշխատանքի ընդհ. Դաշնակցութիւնը դարձած է վառարան մը՝ համայնավար դործունէութեան համար, որ աւելի շատ քաղաքական նպատակներ կը հետապնդէ:

Պայքարը բուն է նաեւ պահպանողական եւ չափաւոր ճակատներուն վրայ:

Հրատարակ իջած են հինգ մեծ հոսանքներ, մէկը միւսին դէմ, «բայց չորսը համաձայն՝ ընդդէմ համայնավարներու», ինչպէս դիտել կուտայ «Իւմանիթէն», տեսակ մը դառնութեամբ:

Պայքարը կը մղուի յանուն Հանրապետութեան եւ Ազատութեան: Բայց, այս բառերը, ինչպէս ուրիշներ, տարբեր իմաստ կ'առնեն, հոսանքէ հոսանք:

Նախակ Լիբանանէն

ՊԵՐՏՐՈՒԹ, 18 Ապրիլ (Յառաջ) — Լիբանանի աղբային կեանքը քառսի մը վերածուած է: Որոշ մարդիկ մասնաւոր ճիգ կը թափեն, հակառակ դանդուածներու թշուառութեան, աւելի եւս ծանրացնելու կացութիւնը:

Ոչ միայն ներքին, այլեւ արտաքին ճակատի վրայ եւս կատարեալ նահանջ: Մեր ներքին կեանքի քառսը արձագանք դառած է նաեւ տեղական իշխանութեանց մօտ: Այս չէր բաւեր: Քանի մը շաբաթ առաջ, Լիբանանի առաջն. տեղապահը, Պէյրութի ուստիոկայանէն խօսած քարոզին մէջ՝ վերաւորեց հայ կաթողիկէ համայնքը, եւ անոր ներկայացուցիչը՝ Աղաջանեան կաթողիկոսը, որ կը վայելէ բոլորին համակրանքը: (Յառաջ — Տեղի չէ՞ տրուած արդեօք):

Ներգաղթի տեղական կոմիտէն իր վերջին զեկոյցով կը յայտնէր թէ յառաջիկայ Յունիսին առաջին կարաւանը ճամբայ պիտի ելլէ, ու այս պէս շարունակաբար մինչեւ ձմեռ: Ժողովուրդը պատուական վիճակի մէջ է: Ներգաղթը փրկուելու մը պիտի ըլլար այս անտէր բաղմութիւններուն: Վաղը երբ օտար զինուորական ուժերը հեռանան երկրէն, տասնեակ հազարներու պիտի հասնի անդործներու թիւը: Տխուր է մօտիկ ապագան Լիբանանի հայ աշխատաւորութեան ու պաշտօնէութեան, մասնաւորապէս տեղական լեզուն չեն գիտեր եւ ֆրանսերէնը կը դառնայ անդործածելի: Արդէն իսկ բոլորովին պարպուած է Սուրիան, անդործութեան մասնելով հազարաւոր պաշտօնեաներ:

Լիբանանայ Օգնութեան Խաչի Օրուան տօնակատարութիւնը տեղի ունեցաւ մեծ շուքով: Այս տարի հովանաւորութիւնը ստանձնած էր Ա. Բողոքական նախարար Տոքթ. Թայֆուկ, որ կանուխէն եկած էր, ապացուցանելով իր համակրանքը այս կազմակերպութեան: Ան հիացող մըն է կանացի այս կազմակերպութեան, եւ հրապարակաւ դովեց զայն: Ներկայ բաղմութիւնը ջերմ ծափերով ողջունեց նախարարը: Պատրաստուած էր շքեղ զարդուստական բաժին մը, որ անցաւ յաջող: Տարեկան դործունէութեան զեկոյցը կարգաւ Տիկին Լ. Մասունի, իսկ Հայ Օգնութեան Խաչերու կեանքի եւ նպատակին շուք խօսեցաւ ընկեր Ա. Յովհաննէսեան:

Կիլիկիոյ կաթողիկոս Գարեգին Արք. Յովսէփեանց հովուական իր առաջին այցելութիւնը տուաւ Հայկ պարգիւն: Փառաւոր ընդունելու թիւն մը կազմակերպուած էր աղբային կազմակերպութիւններու կողմէ: Ծրեղ մուտք մը ունեցած է քաղաքէն ներս, ու ուղղակի Հրաշափառով՝ առաջնորդուած քաղաքի Քառասուն Մանկանց եկեղեցին:

Բոլոր այն շրջանները ուր կ'այցելէ կաթողիկոսը, կ'արժանանայ ընդհանուր համակրանքի ու խանդավառ ցոյցերու: Ան մեծ եկեղեցականի եւ գիտնականի անունին կը միացնէ նաեւ անխոր բոլորին սէրն ու յարգանքը:

Ամէն տարի Ս. Գր. Լուսաւորիչի օրը տօնէն է նաեւ Անթիլիասի մէջ կառուցուած կաթողիկոսարանի: Անթիլիաս, Պէյրութէն 6-7 քիլոմետր հեռու, նարինջի եւ պանանի պարտէզներու քաղաքն է: Ասֆալտէ ճամբու երկու կողմերը անհամար նարինջի պարտէզներ: Հոն է նաեւ Կիլիկիոյ կաթողիկոսարանը: Ապրիլ 7ին հաւատաւոր բաղմութիւնները, կէս զիշերուրէն սկսեալ, խումբ խումբ կը դիմեն Անթիլիաս: Ծամբու երկայնքին կը թնդան հայ երգն ու պարը, կարծես թէ մայր հայրենիքի մէջ դանուէինք ու ինչո՞ւ չէ՞, Լիբանանը իր աղատ միջավայրով, եղած է երկրորդ հայրենիք մը այս տարազով, որ անտէր բաղմութիւններուն համար: Աստուծո շատ կանուխ կը սկսի ինքնաշարժի երթեւեկը: Պէյրութ քաղաքի բոլոր մեծ ու պզտիկ ինքնաշարժները կը բանին, պատարագին հասցնելու համար հայ ժողովուրդի դաւակները: Հայկական ռժով ու պանծալի յիշատակ կուսակցութեան կառուցումը մը ունին եկեղեցին եւ Վեհարանը: Եկեղեցւոյ կողքին կը տեսնէք Ապրիլեան Եկեղեցի յիշատակին կառուցուած մատուռ մը, ուր անչէլ կանթեղ մը դիշեր ցերեկ կը վառի, այն դանկերուն վերեւ որ հաւաքուած ու զեպեղուած են մատրան մէջ: Ապակիէ ցուցափեղկերու շրջանակ մը՝ որոնց մէջ զանազան լեցունք են նահատակներու, — ահա թէ ինչ կը ներկայացնէ մատուռը: Լաւ է ըսի Անձանթի Հայու գերեզմանը: Ու յանկարծ կը յիշէի եւ մեծ Հայուն՝ Աւետիս Ահարոնեանի սքանչելի խօսքերը: «Այսքան շարիք թէ մոռանան մեր որդիք, թող ողջ աշխարհ Հա»

ԵՐԷ ՀԱՇՏՈՒԹԵԱՆ ԺՈՂՈՎԸ ԶԳՈՒՄԱՐՈՒԻ...

Պ. Պըրնս, Մ. Նահանգներու արտաքին նախարարը, ճայնասիրելու ճառ մը խօսելով, տեղեկութիւններ հազարեց փարիզի խորհրդատուով մասին: Այս առթիւ խոստովանեցաւ թէ եղած յառաջդիմութիւնը խարուսիկ էր, բաղդատելով այն արդիւնքին հետ զոր կը սպասէր Մոսկուայի խորհրդատուովէն վերջը (Իեկա), բայց «անհուն սպասեմք» քան կը յուսար, երբ առաջարկեց ժողով գումարել փարիզի մէջ:

Այս մասնուստապատ բացատրութեան վերջ, նախարարը մասնաւորապէս ծանրացաւ Խ. Միութեան անհատ զերբին վրայ: Երբ չորս նախարարները նորէն ժողով գումարելու փարիզի մէջ, Յունիս 15ին կամ 17ին, Մ. Նահանգներու պատուիրակութիւնը նորէն պիտի առաջարկէ որ հաշտութեան ժողովը գումարուի Յունիս Վին կամ 15ին: Եթէ Ռուսերը հակառակին — ինչպէս ըրին վերջին ժողովին մէջ — այն առեւ Մ. Նահանգները ինչպէս պիտի ներկայացնեն Միացեալ Ազգերու կազմակերպութեան, որպէսզի լուծէ իտալական դաղթավայրերու, Թրիէսի կէս. վիճերը որոնց մասին համաձայնութիւն չըրոյցաւ Չորս Մեծերու ժողովին մէջ: Այս աղբարարութեան վերջ, Պ. Պըրնս աւելցուց. — «Մենք Ամերիկացիներս պէտք չէ մոռնանք սա պարագան: Եթէ չըործակցինք խաղաղութեան մը մէջ որ անբաժանելի է ի վերջոյ պիտի ստիպուինք անգամ մը եւս մասնակցել պատերազմի մը որ համաշխարհային է»: Յետոյ նորէն ակնարկելով Խ. Միութեան, ըսաւ. — «Ամէն ազգ ալ ապահովութեան հոգ ունի, բայց մէկ ազգի ճիգը աւելցնելու իր ապահովութիւնը կրնայ սպառնալ ուրիշ ազգերու ապահովութեան եւ ստիպել դանտը որ իրենց կարգին փորձեն աւելցնել իրենց սեփական ապահովութիւնը»:

Պարզելով Չորսերու ժողովին մէջ ծագած դժուարութիւնները, նախարարը բացատրեց. թէ ամէնէն յարգ ինչպէս կը ներկայացնէր Թրիէս — թէն: «Միայն էր Իտալիոյ տայ ամբողջ Յունիսի վեհեցիան, Ա. Մեծ Պատերազմէն վերջը: Նոյնքան սխալ պիտի ըլլար այժմ Եուրոպայի տայ ամբողջ շրջանը: Այդ պիտի նշանակէր Իտալիայէն Եուրոպայի փոխանցել մօտաւորապէս 500.000 Իտալացիներ: Մ. Նահանգները պիտի ջանան համոզել Խ. Միութիւնը եւ Եուրոպայի անդիկ այնպիսի սահմանազօր մը վրայ որ պիտի խախտէր ազգադրական սկզբունքները; ապագայ խոսքի վեհեցիանց սերմեր ցանկելով: Ինչ կը վերաբերի հատուցումներուն, մեր դիրքը պարզ է, — Մենք մինչեւ հիմա, ուղղակի թէ անուղղակի, 900 միլիոն տոլար տուած ենք Իտալիոյ, որպէսզի կարենայ ապրել: Մենք պիտի նախընտրէինք մոռնալ հատուցումները: Բայց տրամադիր ենք սահմանափակ հատուցումներու, պայմանաւ որ անոնք Իտալիան չզրկեն իր ապրելու միջոցներէն: Մենք բացորոշապէս հասկցուցինք թէ չենք կրնար միլիոնաւոր տոլարներ փոխ տալ Իտալիոյ, որպէսզի իրեն հատուցում վճարուին մեր դաշնակիցներէն ու եւ մէկուն: Մենք առաջարկեցինք նաեւ եւս յանձնել Խ. Միութեան, որ 100 միլիոն տոլար հատուցում կը պահանջէր»:

Նախարարը ապա շոշափեց Աւստրիոյ եւ Պալանեան երկիրներու հաշտութեան խնդիրը: Իր կարծիքով, կենսական է հաշտութեան կնքել Աւստրիոյ եւ միւս երկիրներու հետ, այն առեւ անհրաժեշտ պիտի չըլլայ մէկ հատիկ զինուոր պահել օտար հողի վրայ, բայց ի Գերմանիայէն եւ հազարազակցութեանց զօժէն (Լեհաստանի ճամբով):

ՓԱՐԻԶԻ ՄԵՋ ԿԸ ԴԱՏՈՒԻ Պ. Լանկրոնյը, Կապի ընկերութեան նախկին անօրէնը, որ ամբաստանուած է թէ Գերմաններու շահերուն կը ծառայէր գրաւման առեւ, մեծ գումարներ կը վճարէր թերթերուն եւս: Ամբաստանեալը, յայտարարեց թէ ստիպուած էին «լուծեան գին» վճարել, որպէսզի կէսթափօն չմիջամտէ, զանազան մասնաւորութեան հետեւանքով: Ամէնէն մեծ բաժինը, 50.000 ֆրանք, կը ստանար Ժան Լիւչեա, որ զնդակահարուեցաւ:

յուն կարգայ նախատինք»: Ու մտասեւեռու մը կ'ունենաս թէ այս տասնեակ մը դանկերը երբ կը պատկերանան քու առջեւ, իրենց ետին ունին աւելի քան մէկ միլիոն զոհեր, անթաղ ու անձանթ: Հազարներու հասնող անձայրածիր բաղմութիւնները մինչեւ իրիկուն ուլ առեւ, կը պատին եկեղեցին, վեհարանը, Եղեռնի յիշատակարանը, դպրեմանքի շէնքը: Եւ ահա կը տեսնես ծեր մամիկներ, որոնք ինչ դժուարութիւններու ու զոհողութիւններու զնով, հեռաւոր վայրերէ եկած են Ս. Գրիգոր Լուսաւորիչի մըջ համբուրելու: Քիչ անդին երիտասարդ կին մը մայրական ջերմութեամբ ծունկի եկած Աստուածամօր առջեւ, — դերասան ունի իր առաջին զակին ծնունդին համար: Ու տակաւին ի՞նչ ջերմեանով ուխտեր:

Իրիկունը շատ ուշ առեւ կրկին ճամբու երկայնքին խումբ խումբ կը վերադառնան քաղաք, միասին տանելով Հայ. Եկեղեցւոյ սիրոյ հատարը:

Հակասական լուրեր Ասրպատականի վասին

Նորէն Հակասական են թէհրանէն եւ թաւրիզէն հասած լուրերը: Ասրպատականի կառավարութիւնը պաշտօնական զեկոյցով մը կը ծանուցանէ թէ պաշարման վիճակը վերցած է: «որովհետեւ պայմանները այլեւս չեն արգարացնիր այդ տնօրինութիւնը»: Ուրիշ լուրերու համաձայն, Ասրպատականի ազգ. բանակը օգնական ուժեր կը զրկէ զէպի Գիւրտիտան: Թէհրանի անթիւր հաստատեց թէ ընդհարումներ պատահած են սահմանադրութիւն վրայ, առանց նոր տեղեկութիւններ հաղորդելու:

Իշխան Ֆիրուզ, Թէհրանի բանբերը, յայտարարեց թէ Ասրպատական զրկուած յանձնաժողովին տուած տեղեկութեանց համաձայն, բոլոր խորհրդային զինուորները հեռացած են Մայիս 6ին, ինչպէս նախատեսուած էր փոխադարձ համաձայնութեամբ: Ուստի կառավարութիւնը չեն ուզել մը ուղղած է Ուոշինկիթըն, Հիւսէյին Ա. լայի, որպէսզի յայտ տեղեկութիւնը հաղորդէ Ա. պաշտօնական խորհուրդին: Լուրը պաշտօնապէս հաղորդուած է նաեւ Թէհրանի անդրախտան, ամերիկեան եւ խորհրդային զեսպաններուն: Իշխան Ֆիրուզ իր զեկոյցումին մէջ փափաք յայտնեց որ օտարներ այլեւս չմիջամտեն Իրանի ներքին գործերուն:

Թէհրանի անթիւր ազդարարեց թէ զինուորական ատենանի պիտի յանձնուին անոնք որ կ'անաստեն կեղծոտական կառավարութեան հրամաններուն, յարձակումներ կատարելով: Հրամայուած է իրանեան Գիւրտիտանի գործին պաշտպանողականի վրայ մնալ:

Հետագրի մը համաձայն, երկուշարթի առտու սպաննուած է թաւրիզի զինուորական վարժարանին հրամանատարը, գոր. Բանահեան: Երիտասարդ սպայի մը կողմէ որ վերջերս Թէհրանէն հանելով, կամաւոր արձանագրուած էր Ասրպատականի բանակին մէջ: Պատճառը անյայտ կը մնայ:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԱՐԱԲԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ, առթիւ, որ տեղի պիտի ունենայ երեքշաբթի օր, մասնակցութեամբ եօթը պետութեանց, Լոնտոնի թերթերը կը գրեն թէ Իպըն Սէուս ամէն լիազօրութիւն տուած է Եգիպտոսի թաղաւորին, իր անունով խօսելու եւ որոշումներ տալու: Արաբիոյ թաղաւորը իր դաւակներէն մէկն ալ պիտի զրկէ ժողովին, որմէ մեծ արդիւնքներ կը սպասուին: Ան-ըրյորդանանի էմիրը, Ապաուլլահ, ճրագիր մը մշակած է, դաշնակցութիւն մը հաստատելու համար Սուրիոյ, Անգլոյորդանանի, Իրաքի, Լիբանանի եւ Պաղեստինի միջեւ:

ՍՈՐ ՀՐԴՍԵՒՆ ԶԻՆՈՒՈՐՆԵՐԸ մտան Չեխոսլովաքիա, Աւստրիայէն եւ Հունգարիայէն, Գերմանիոյ ռուսական շրջանը երթալու համար: Եղած կարգադրութեան համաձայն, այս տեղափոխութիւնը պիտի տեւէ մինչեւ մայիս 29: Չեխական կառավարութիւնը հաւանած է այս գործողութեան, որ կը զուգարկուի ընդհ. ընտրութեանց:

ՅՐԱՆՔԵՒՄԱՅԵՐԻԿԱՆ ԲԱՆԱԿՅՈՒԹԻՒՆՆԵՐԸ նորէն զժողովութեան հանդիպած են, կը հարցնեն թերթերը: Իրազեկներու կարծիքով, Լէոն Պլում 750 միլիոն տոլար պահանջած է Արամիան եւ Երամիան դրամատունէն, իբրեւ առաջին վարկ, մինչդեռ ամերիկացի մասնագէտները կը հաշուեն թէ 650 միլիոնը բաւական է, վերաշինութեան գործին ձեռնարկելու համար: Լէոն Պլում նախադաս թրումբի պիտի այցելէր երէկ: ՓԱՐԻԶԻ 18.000 ԱՍՏԻԿԱՆԵՐԻՆ մօտ 12.000ը ցոյց մը սարքեցին երէկ, Ռատիկանական վերատեսչութեան հրապարակելի վրայ եւ շրջակայքերը, ոտճիկի յանդիպում եւ ուրիշ քարեփոխումներ պահանջելու համար: Առ այժմ գործադուլի վախ չկայ:

ՉԵՐԲԱԿԱՆՈՒՅՑԱԻ Մարտէլ Բափրոն, Ալ-Ֆորովի նախկին համայնավար քաղաքապետը, որ ամբաստանուած է իբրեւ գործակից: Նոյն օրը ձեռքալորուեցաւ նաեւ Օփերայի երգչուհիներէն Փէոմէն Լիւպէն, որ մեծ դերակ մը ունի էնար է Լուուսի մէջ, ուր բազմաթիւ Գերմաններ կ'ընդունէր գրաւման շրջանին: Ամբաստանագիրը կ'ըսէ թէ մտնած է իր նախկին ազարակապանները, թէ եւ երգչուհի կ'ուրանայ:

ՀՐԷՅ ԲԺԻՇԿԸ, Փրթիօ, փորձած է ինքիւնքը թունաւորել բանտին մէջ: Սրուակ մը «սխախու» գանուեցաւ: Մահապարտը, որուն վերաքննութեան առաջարկը մերժուած էր, բացարձակ լուծութիւն կը պահէ օրերէ ի վեր:

ԴԱՆՈՒԹԻ Նուրպարական բոլոր նաւերը, 400 հատ, խուզարկուեցան ամերիկեան զինուորներու կողմէ, որոնք նայիներ, փախտականներ եւ սազմանիւթ կը փնտռեն: Հարկաւորներու ցամաք փոխադրուեցան, հարցաքննուելու համար:

ՀՈՒՆԳԱՐԻՈՅ մէջ տոլարը 2ուկէս միլիոն փէնկոյի բարձրացած էր երկու օր առաջ եւ դեռ կը բարձրանայ:

ՏԻԿԱՆՑ ՄԻՈՒԹԵԱՆ ԵՐԵՎԱՆԻԸ

Կերակի օր Lutetiaի սրահներուն մէջ, տեղի ունեցաւ Փարիզի Հայ Տիկանաց Միութեան Կ. Սաչի տարեկան պարահանդէսը: Այս առթիւ Փրանսերէն ճառ մը խօսեցաւ Տարթ. Պ. Քօլօլեան (ինչո՞ւ Փրանսերէն), տեղեկութիւններ հաղորդելով Կարմիր Սաչի մասնաճիւղին գործունէութեան մասին: Միութիւնը զանազան ձեւերով օգնած է Հայաստանի, զրկելով մասնաւորապէս բժշկական գործիքներ եւ իր կարելու մասնակցութիւնը բերած է Յունահայ գաղութին օգնութեան Մարմինին (որուն կը մասնակցէր նաեւ Կապ. Սաչը), մօտ մէկ միլիոն Փրանքի ապրանք եւ ուտեստ զրկելով:

Գեղարուեստական բաժինին իրենց մասնակցութիւնը բերին Օր. Հիւլէթ Իջարացեան, որ իր վարժ եւ հաճելի ձայնով երգեց մէկ Փրանսերէն եւ երկու հայերէն երգեր (Նազան իմ, եւ Իմ չի-նարի եարը): Ժամը 9էն 12 պարերու ընթացքին Տիւրքիայի շքանքը (պար եւ երգ), Տիկանացի Երեսուն (երգ) եւ Փրանսուհի մը, ինչպէս եւ Պ. Գիտրգեան (երգ), ճոխացուցին զգեղարուեստական բաժինը: Երեկոյթը վերջացաւ տաք մթնոլորտի մը մէջ:

ՀԱՅՐԵՆԱԿՅԱԿԱՆ

ՄԱՐՍԷՅԻ, 5 Մայիս. — Զատա եւ շրջանի վերաշինացման Միութիւնը լուծուելով կը միանայ Համասերաստիական Շինարար Միութեան: Այս առթիւ կոչ կ'ընէ իր նախկին անդամներուն, որ անդամագրուին իրենց վայրերուն Համասերաստիական Շինարար Միութեան մասնաճիւղերուն, իսկ եթէ զոյսթիւն չունին, նախաձեռնութիւնը ստանձնեն կազմելու Շինարար Միութեան մասնաճիւղեր:

Միւսին ատեն կոչ կ'ընէ Սերաստիոյ բոլոր Հայրենակցականներուն եւ վերաշինացիներուն, հետեւել իր օրինակին, որպէսզի ուժերու ու ճիւղերու համախմբումով կարելի ըլլայ աւելի գործնականորէն իրագործել մեր առաջադրութիւնները, որոնց պիտաւորն է զարկ տալ նոր-Սերաստիոյ կառուցման (որ արդէն աննախընթաց թափով առաջ կ'ընթանայ), օր առաջ պատրաստելու համար ներդաշխողներու բնակարանները: — Դիվան

ՏԻԿԻՆ Ա. ՎՏԱՐԱՆԻ 300 Փրանք կը նուիրէ Ծ. Կ. Սաչի Անկէնի մասնաճիւղին, փոխան ծաղկեպակի, որպայեալ ՌԱՅԱՅԷԼ ԵՒ ՉԼԱՆԵՆԻ մահուան առթիւ:

Ազգային մեծ երգասօն

16 Յունիս, կիրակի օր, ժամը 15.30ին, Մարտի 26ի Օփերային մէջ, յայտարար կը կազմեն մեծատարակ երգահան Պ. Օննիկի Պարպիեան: 1. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՆՈՒԱԳԸ (Symphonie Arménienne) 2. ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԱՐԱԳԸ 7 ձայնով: Կը նուազէ Օփերայի նուագախումբը: Կ'երգէ հայերէն լեզուով Ռատիոյ երգչախումբը 110 մասնակցաւորուեստագէտներով:

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՄ, Լիոնի Հայ Ազգատարնամին կողմէ, հովանաւորութիւն՝ Ե. Կ. Ազգ. Միութեան, այս շաբաթ իրիկուն ժամը 8.30ին, François Coppéeի սրահին մէջ, 8 rue Victorien - Sardou: Մէկ անգամուան համար կը ներկայացուի ԱՇՆԱՐԶԻ ԴԱՏԱՍՏԱՆԸ Մուտքի տոմսեր Բ. կարգ 50 եւ Գ. կարգ 30 Փր.:

SALLE GAVEAU, 45 RUE LA BOETIE 26 Մայիս, կիրակի ժամը 2.30ին, նուագահանդէս սենեակի երաժշտութեան (Musique de chambre), կազմակերպուած ԱՐԱ ՊԱՐԹԵՒԵԱՆԻ կողմէ: Կը մասնակցին Իրիս Պարպիեան (երգ), Jeanine Cavard (դաշնակ), Roger Loewenguth (թաւջուր), Marcelle Gaudais (տաւիղ), René Grujon (արինգ): Յարապրին մէջ՝ գործերը Տիգրանուանի, Կամիտասի, Տէր Գրիգորեանի, Սպենդիարեանի, Պարթեւաձի եւ Պալի, Պերլիոյի, Մօցարտի, Էւայլի: Տոմսերու համար դիմել Հրամա Ստաւելի 51 rue Mr. le Prince, Dan. 88-65 եւ Սպոսիեանի, 39 rue de Trévis, Pro. 05-91:

ՉԵՐ ՆԵՐԿԻ գործերուն եւ տախտակամանքաւ յիլուսի (rabetage et entretien des parquets) համար դիմելէ Կետեալ հասցէին — ԱՊՐԱՄԵԱՆ, 5 Rue d'Italie.

ՆԻՒ ԵՈՐԲԻ մէջ օգնուած մը թանձր մշուշի պատճառաւ ուղղութիւնը կորսնցնելով, զարնուեցաւ մեծ դրամատան մը եւ ջախջախուեցաւ: Դրամատունը կը բաղկանայ 70 յարկէ, 218 մեթր քարձրութեամբ: Բարեբախտաբար փողոցը մարդ չկար:

Le Gérant: H. AGONEYAN Imprimerie DER AGOPIAN, 17 Rue Damesno - 13

Մայիս 28ը Փարիզի մէջ

Կը տօնուի Մայիս 29ին, իրիկուն ժամը 9էն մինչեւ առաւօտ, Petit Journalի մեծ սրահը, 21 rue Cadet, Métro: Cadet:

Կը նախագահէ ՀՐԱՆՏ ՍՍՄՈՒԷԼ (նախագահ Գաղթ. Խորհուրդի):

Կը խօսին ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՅԻՉԸ եւ ՅՈՎԻԿ ԵՂԻԱՉԱՐԵԱՆ

Գեղարուեստական բաժինը կը մասնակցին Օր. ԱՍՏԱԿ ԱՌԱՔԵԼԵԱՆ (երգ), Պ. Ֆիլիփ Ա. ՂԱՉԱՐԵԱՆ (ջութակ), Պ. ԳԱՐԵԳԻՆ (թաւ), Օր. ԱՃԷՄԵԱՆ (երգ), Բ. ՀԱՊԷՇԵԱՆ եւ Զ. Գա. ՐԻՊԵԱՆ (արտասանութիւն), ԱՐՄԵՆԻԱ ՎԱՐԿԱՉ (պար): Պարերը կը վարէ ՌԱՏԻՈՅԻ ՆՈՒԱ. ԳԱՆՈՒՄԲԸ, զեկաւարտութեամբ Raymond Verneyի:

ՏԷՍԻՆԻ ՄԷՉ. — 1 Յունիս, շաբաթ երեկոյ ժամը 8.30ին, Հ. Յ. Գ. Տան մէջ: Կը բանախօսէ ընկեր ՀԱՅԱ ՍԱՐԳԻՍԵԱՆ: Գեղարուեստական ճոխ բաժին: Մանրամասնութիւնները յայտարարով:

ԿՐԸՆՈՊԻ ՄԷՉ Մայիս 28ը կը տօնուի Մայիս 26ին, կիրակի կէսօրէ վերջ, ժամը 2.30ին, Sacré Coeurի սրահին մէջ, նախագահութեամբ Պ. ԳՐԻԳՈՐ ԲԻՐԱՉԵԱՆԻ:

Կը խօսին ընկեր ՀԱՅԱ ՍԱՐԳԻՍԵԱՆ եւ M. ALEXANDRE BOISSIEU, շրջանին ընկերավարական քարտուղարը:

ՅՈՒՇԱՏԵՏՐ

ՎԻԷՆ. — Հ. Յ. Գ. Նոր Սերունդի «Մուրա» խումբի դասախօսութիւնը նոր սրահին մէջ (Սէն Մարթէն): Պիտի խօսի Պ. Հ. ԲԱՆՈՒՅԵԱՆ, այս շաբաթ 25 Մայիս, իրիկուն ժամը 8ին: Նիւթը՝ Ա. Ախարոնեանը եւ իր կնակը:

Հ. Յ. Գ. ԶԱՒԱՐԵԱՆ կոմիտէի ընդհ. ժողովը՝ այս ուրբաթ, ժամը 8.30ին, Սրիմեան սրահը: ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ եւ շրջանի Հայր. Միութեան ընդհ. ժողովը 26 Մայիս, կիրակի կէսօրէն վերջ ժամը 15ին, Studio Caumartin, 19a rue Caumartin: Կը հրաւիրուին բոլոր Հայրենակիցները:

Հ. Յ. Գ. ՆՈՐ ՍԵՐՈՒՆԵՐԻ Փարիզի մասնաճիւղին յատկապէս դասախօսութիւնը՝ երկուշաբթի 29 Մայիս, ժամը 8.30ին: Կը խօսի ԱՐՇԱԿ ՉՈՊԱՆԵԱՆ: Նիւթը՝ Անգիլ զպարպիս (Շար.):

Հ. Յ. Գ. ՆՈՐ ՍԵՐՈՒՆԵՐԻ Փարիզի մասնաճիւղը այց մը կը կազմակերպէ այս կիրակի, 26 Մայիս Հ. Յ. Գ. Թանգարանը: Ժամադրաւայի Gare du Nord, ժամը 2ին կառախուսք ժամը 2.25, Ինչեյ Enghien les Bains:

ՍԷՆ ՇԱՄՈՆ. — Հ. Յ. Գ. «Վարուժան» կոմիտէն ժողովի կը հրաւիրէ բոլոր ընկերները եւ «Վարդգէս» խումբին տղաքը այսօր, հինգշաբթի, իրիկուն ժամը 7ին, ճառագ հաւաքատեղին:

ՕՐ. ԾՈՎԻՆԱՐ ՏԷՐ ՊԵՏՐՈՍԵԱՆԻ երգահանուհի կազմակերպի յանձնախումբը ժողովի կը հրաւիրուի այսօր հինգշաբթի ժամը 4ին, «Յառաջ» խմբագրատունը: Կը խնդրուի բոլոր անդամներէն անպատճառ ներկայ ըլլալ:

ԻՍԻԻ Յը. Կապոյտ Սաչի ընդհ. ժողովը Մայիս 27ին ժամը 8.30ին, Սրիմեան դարոցը:

Դերասան Բինը Փարիզի մէջ

Յ. Ա. Լ. Մ. ՓԱՐԻԶԱԿԱՆ ԱԶԳ. ԹԱՏԵՐԱՆՈՒՄԲԸ կը ներկայացնէ Բ. Ե. Լ. մասնակցութեամբ դերասան Դաիլաքաւանի, բեմագրութեան Տիկիմ Աննա Բուդաբանի, կիրակի 26 Մայիսին, ժամը 3ին Centre Marcelin Berthelot, 28bis rue St. Dominique, métro Invalides: Տոմսերը սովորական վայրերը:

ՄԱՐՍԷՅԻ. — Տարօն-Սաչիոյ Զորի Հ. Միութիւնը իր խորին ցաւակցութիւնը կը յայտնէ հայրենակից Տէր եւ Տիկին Միլտիլէ եւ Սրբուհի Տէ միւրեանի եւ զաւակներուն իրենց զաւակին եւ եղբորը՝ ՎԱՂԱՐՇԱԿԻ կսկածալի մահուան առթիւ: Քոխան ծաղկեպակի կը նուիրէ հաղար Փրանք Տէսինի հայ դպրոցի ֆոնդին:

Հ. Մ. Լ. Մ. Ի ՓԱՐԻԶԻ մասնաճիւղի ընդհ. ժողովը՝ ուրբաթ, 24 Մայիս ժամը 20.30ին, 34 rue St. Lazare, métro Notre Dame de Lorette: Օրա-կարգ. — Նախորդ վարչութեան տեղեկատուութիւն եւ նոր վարչութեան ընտրութիւն: Կը հրաւիրուին բոլոր Հ. Մ. Լ. Մ. ականները եւ սիրողները:

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԵԾ ՃԱՇԱՐԱՆ

Տնօրէններ ԳԼԷՄԱՆ ՆԻ ԳՕՓԱՐԱՆԵԱՆ 6 rue Maubeuge, Paris (9), Métro Cadet, Notre Dame de Lorette: Tél. TRU. 85-47

Առաջնակարգ օդի եւ ամէն տեսակ ըմպելիներ, ընտիր աղանդեր, պոլսական կերակուրներ եւ անուշեղէն: Ընդարձակ եւ օդաւան սրահ: Ամէն երեկոյ ժամը 7էն սկսեալ Գէմանչիստ ՅՈՎՀԱՆՆԷՍ, ուսի ԱԼՅՈՆՍ եւ երգիչ ԱՐԹԱՐԻ կը նուագեն եւ կ'երգեն հայկական եւ արեւելեան երգեր: Գոց է Զորեղաթի օրերը:



Մեր ԽՕՄԻԸ

ԲՈՂՈՐԸ ՄԵՎ ՃԱՄԲՈՎ

Բանի մը խօսք եւս, Թուրքիոյ ընտրական պայքարին առթիւ, որ կը ձգտի բան մը փոխել ներքին կեանքի մէջ, դո՛ւստանալու համար զանազան պահանջներ:

Ըսինք թէ ջնջուած է երկատիճան դրութիւնը եւ այսուհետեւ ընտրութիւնները պիտի ըլլան ուղղակի, — միատիճան:

Ժողովրդագիտութիւն: Երկու թաղայն ալ մարդանոցն է որ կը կատարուի: Բայց, իրականին մէջ, պատճառները աւելի դիւանագիտական են: Հալքի համադրումարին մէջ, Իսմէթ Ինճօնլու ինքն էր որ կը յայտարարէր.

« Այս պէտքը (միատիճան ընտրութիւն) ծագում առած է կարգ մը ներքին եւ արտաքին պատճառներէ: Աշխարհի քաղաքական կացութիւնը, բազմաթիւ անցեալ տարուան հետ: շատ անկի խառնակ է. ուստի մեր դիրքը նշանակաւ գործնապէս շատ փափակ է: Ներքին կարգ մը վեճեր կ'ապագայանան քի կառավարութիւնը պէտք է շատ անկի գործարար Ազգ. Մեծ Ժողովի մը կրթնի» (10 Մայիս):

Փորձառարար գիտնէք թէ՛ ամէն անգամ որ արտաքին վտանգ մը կը սպաննայ, Թուրքիոյ վարչիչները բարենորոգչական խաղեր կը սարքեն:

Տարիներով այդ խաղը խաղացին մեր ղեկուն, եւ յաջողեցան խափանել բարենորոգումները կամ արտաքին միջամտութիւնները: Յաջողեցան իրար ձգել նախկին ջոճերը — վեց Մեծերը — եւ հայկական արիւն լակել անպատիժ:

Այսօր Հայ չէ մնացած Թրքահայաստանի մէջ, բայց Հայկ. Հարց մը կ'արժարժուի դուրսէն, փոքրամասնութեանց իրաւունքներով:

Միւս կողմէ, թէ եւ Լոնտոն եւ Ռուշինկթըն միշտ կը մնան բարեացակամ, բայց իր անմիջական դրացին, Մոսկուան կը պահանջէ նաեւ փոխել ներքին կարգուսարքը: Խորհրդային մամուլին համար, Թուրքիան միշտ կը մնայ ֆաշիական եւ մեղսակից Գերմանիոյ:

Եւ վերջապէս, Թուրք Ժողովուրդը ինքն ալ դժգոհ է այն բռնաբարոյ մենատիրութեանէ որ կը շարունակուի 20—25 տարիէ ի վեր, միակ հոսանքի մը թափին տակ (Հալք):

Ուրեմն, ոչ միայն կը փոխեն ընտրութեանց եղանակը, այլեւ դուռները կէս մը կը բանան ընդդիմադիր հոսանքներու առջև:

Իսմէթ Ինճօնլու նոյն համապումարին մէջ յայտարարեց թէ պիտի ջնջուի այն յօդուածը որ կ'արգիլէր միութիւններ եւ ընկերակցութիւններ կազմել զասակարգային հիման վրայ: Ուրեմն, ուրիշ կուսակցութիւններ ալ կրնան կազմուիլ: Բայց, «պիտի արգիլենք այն կասկածելի միութիւնները որոնք արմատը արտասահման է, այսինքն օտարներու գործիք: Պիտի արգիլենք նաեւ այն ընկերակցութիւնները որ կրօնը գործիք կը դարձնեն քաղաքականութեան» (Արդէն խափանուեցաւ Սոցիալ — Դեմոկրատ հոսանքը):

Ընդդիմադիրները պիտի յաջողին բան մը փոխել հաստատուած կարգուսարքէն:

Քաղաքագիտական ընտրութեանց կազմակերպումը կ'ապացուցանէ թէ՛ Հալքը վճռական պայքարի մը ձեռնարկած է, պահելու համար իր դիրքերը: Անշուշտ պայքարը աւելի պիտի սաստկանայ, երբ սկսին Ազգ. Ժողովի ընտրութիւնները:

Մնաց որ, ընդդիմադիրները դեռ նոր պիտի փորձեն վարկ չահիլ, իրենց շողջողուն ծրագիրներով:

Ան հասարակ ընդօրինակութիւններ են այդ ծրագիրները եւ աւելի շատ ներքին խնդիրներ կը շօյափեն: Արտաքին քաղաքականութեան մէջ, բոլոր հոսանքներն ալ նոյն տեսակէտն ունին, — Մէկ թիզ հող չենք տար:

Այս տեսակէտին ուղղորդու է «Դեմոկրատ» կուսակցութեան դիրքը: Անոր նախագահը, նախ — կին վարչապետ ձէլալ Պայար վերջերս կարգ մը յայտարարութիւններ ըրած էր ամերիկեան թերթի մը, ուսուելութեւ յարաբերութեանց մասին (Նեղուցներ, Կարս—Արտասահման, եւն): Երբ այս մասին հարցումներ եղան Անդարալի մէջ, բացատրեց. — «Եթէ որ եւ է վտանգ սպաննայ Թուրքիոյ անկախութեան եւ հողային ամբողջութեան, հեռուէն կամ մօտէն, մենք մեր բոլոր հայրենակիցներու կողքին պիտի ըլլանք»:

«Միամիտներ են անոնք որ կը կարծեն թէ Թուրքիան աւելի հեռատես եւ արդարամիտ պիտի ըլլայ, եթէ ուրիշ հոսանք մը անցնի կառավարութեան ղեկիւր: Ծ.

Վասպուրականի Հերոսամարտը

Վասպուրականի Հայր. Միութիւնը, Մարտի 17-ի մէջ պիտի տօնէ հերոսամարտի 31րդ տարեդարձը, այս շարժիքի իրական: Հակառակ կարգ մը դժուարութեանց, բոլոր Վասպուրականցիները, Վանուհիներ, Երիտասարդներ, առեւտրականներ, բանուորներ ու արհեստավարներ, անխորժ ամէն մէկը՝ իր չափով ու կարողութեամբ, ներթափանցեց թէ բարոյապէս լծուած են աշխատանքի, յաւեր — ժացելու համար Հերոսամարտի հերոսներու ու հերոսուհիներու անթաղ միջատակը:

Վասպուրականցի, ուր որ ալ գտնուի, առիթ պիտի ունենայ խօսելու եւ պատմելու օրուան առթիւ, իր բարեկամին կամ մանուանդ օտարութեան մէջ հասակ նետած երիտասարդին, այդ փառաւոր օրերու մասին:

Կա՞յ Վասպուրականցի մը, որ իր բաժինը չէ բերած Հերոսամարտին: Կա՞յ Վասպուրականցի մը, որ ունեցած չըլլայ իր զոհը այս անհուսալար կողմին մէջ, որ սրբեց մեր ճակտին արատը:

Վասպուրականցի առաջին անգամ չէր որ կը հանդիպէր Թուրքերու արիւնձարաւ դաւերուն:

Հակառակ օրուան ղեկավարներու խոհեմութեան ու հաշտարար դիրքին, չարը խափանելու մտադրութեամբ, կուսակալ ձէյվաթի սաղրանքներով դաւադրարար կը սպաննուին Իշխան, Վահան, Քարաք ու Միհրան, Հայոց Չորի Հիւրճ քերտարնակ դիւղին մէջ: Անոնք Ետտախի միջադէպի առթիւ տեղին վրայ քննութիւն կատարելու պատրուակով, ուղարկուած էին կուսակալին կարգադրութեամբ:

Յաջորդ օրը կը կանչուի Վառնեան նոյն նենդամութեամբ եւ դաւաճանօրէն կ'անհետացուի, իսկ մնացած ղեկավարները, Արամ, Պուլկարացի Գրիգոր, Եկարեան, Թէրլիմէզեան Միհրան, Թէոս, Փիլոս, Եզնիկ վարդապետ, Հայկալ Կոստյեան, զարցնէրու ուսուցչական կազմը, քաղաքի ու Մոլոքեստանի բոլոր երեւելիները եւ նոյնպէս Ետտախի եւսյլ զաւաճներու ղեկավարները, Լեւոն եւ Պաղտատարեան վերջնապէս կ'որոշեն այլեւ կառավարութեան սաղրանքներին չխառնուեանք եւ դիմել ինքնապաշտպանութեան, համախորհուրդ, Ժողովուրդին հետ:

1915 Ապրիլ 7ին կը հնչէ ինքնապաշտպանութեան մարտահոյը: Քաղաքի, Այդնտանի եւ դաւաճաններու մէջ, կառավարական կանոնադր գործի, ինչպիսիքներու, զնդանքներու դէմ:

Անհուսալար կոխը կը տեւէ 30 օր եւ թշնամին կը պարտուի ամօթահար, նահանջելով դէպի Պիթիլիս: Վասպուրականցիներն ալ այն էր կացութեան: Ան իր մեծ զոհարարութեամբ զրած էր Հայաստանի անկախութեան առաջին անկիւնարարը: Ետտով Կովկասէն հայ կամավարական խումբերը Վան կը մտնեն մեծ խանդավառութեամբ եւ կ'ընդունուին առաջին նահանգապետին՝ Արամի ու զինուորական ու քաղաքական իշխանութեանց եւ վարիչներու կողմէ:

Բայց աւա՞ղ, մեծ պետութեանց եւ մասնաւորապէս ցարական Ռուսաստանի զինուորական խաղերուն հետեւանքով, կը կորսուի այնքան զոհարարութեամբ ձեռք բերուած քաղաքատիրութիւնը: Վասպուրականցիներ կը ստիպուի նահանջել դէպի Կովկաս, Ատրպատական եւ Իրաք, նորէն դառնալով տարազիր ի սփիւռս աշխարհի:

Այսօր Վասպուրականցիներն տօնելով իր հերոսամարտը, կը հաւատայ թէ պիտի գայ օր մը, երբ, տարեդարձը պիտի տօնենք ոչ թէ սաղն — ներու մէջ, այլ Վանի ամենամեծ հրապարակին վրայ քանդակուած հսկայ Արմիլին թեւերուն տակ, յաղթական կոթողին պատուանդանին շուրջ, պանծացնելով մեր բոլոր հերոսները, յայտնի եւ անյայտ:

Փա՞ռք անոնց որ դիտցան իրենց պարտականութիւնը եւ զոհուեցան, կերտելու համար այդ պանծալի Օրը:

ԱՐԱՄ ՀԻՒՍԵԱՆ

ՉենՈՍԻՈՎԱՖԻՈՅ կառավարութիւնը խնդրեց խորհրդային հրամանատարութեանէ՛ դադարեցնել իր զինուորներու փոխադրութիւնը իր հողին վրայէն, մինչեւ երկուշաբթի, որպէսզի Ժողովուրդը չփութութեան չմտնուի կիրակի օրուան ընտրութեանց առթիւ: Մտնէջալ Կոնիւսե զոհարարութեան խորհրդային զորամասեր Գերմանիա կ'երթան Աւստրիայէն եւ Հունգարիայէն: Փոխադրութիւնը պիտի վերսկսի ընտրութիւններէն վերջ, տեւելով ինը օր եւս:

ՆՈՒՆ ԻՐԱՆԻ ԽՆԴԻՐԸ

Ապահովութեան Խորհուրդը Մայիս 22ին նորէն քննելով Իրանի խնդիրը, միաձայնութեամբ որոշեց օրակարգին վրայ պահել իրան, որովհետեւ անդրկական եւ ամերիկեան պատուիրակները բաւարար չպահանք Իրանի ծանուցադիրը խորհրդային զինուորներու հեռացման մասին: Պ. Կրոմբօ, խորհրդային պատուիրակը, ներկայ չէր ժողովին:

Ամերիկեան պատուիրակը առարկեց թէ Իրանի կառավարութեան ծանուցադիրը թերութիւններ կը ներկայացնէ եւ վճռապէս չըսեց թէ Ռուսերը Մայիս 6ին լրացուցած են Ատրպատականի պար — պուրը: Նոյն տեղեկագրին համաձայն, հինգ վայրերու բնակիչները յայտնեցին թէ խորհրդային զօրքը հեռացած է: Արդ, ամերիկեան պատուիրակը բաւարար չի նկատել այս վկայութիւնը: Իր կարծիքով, «կացութիւնը չէ լուսաբանուած տա — կաւին եւ կրնայ վտանգաւոր ըլլալ»: Անգլիական պատուիրակին ալ ձայնակցեցաւ այս դիտողութեան, անկատար գտնելով իրանեան տեղեկագիրը եւ հարցնելով թէ Իրանի կառավարութիւնը դո՞ւս է կացութեան: Ինք լսած է թէ ամէն տեղ քննու — թիւն չէ կատարած եւ թէ քաղաքային հագուստ հագած խորհրդային զինուորներ կը մնան Ատր — պատականի մէջ:

Վրճարանութիւնները տեւեցին շուկէս ժամ: Լեհական պատուիրակը յամաօրէն պայքարեցաւ, օրակարգէն հանել տալու համար իրանեան խնդիրը, վաւերական եւ բաւարար համարելով Թէհրանի կառավարութեան տեղեկագիրը: Տեսնելով որ այս տեսակէտը չանցնի, Լեհաստանի ներկայացուցիչը առաջարկեց հեռագիր մը ուղղել Թէհրան, Հիւսէյին Ալայի ղեկուն վրայէն, հարցնելով թէ դո՞ւս է Ատրպատականի պարտութեան: Այս առաջարկին դէմ խօսեցան Հոլանտայի եւ Անգլիոյ ներկայացուցիչները, դիտել տալով թէ հեռագիրը պիտի ծառայէ աւելի նեղացուցիչ կացութեան մը մասնելու Իրանի կառավարութիւնը: Ատր վրայ Ժողովը միաձայնութեամբ որոշեց օրակարգէն չհանել Իրանի խնդիրը, բայց անոր քննութիւնը յետաձգել անորոշ ժամանակով: Խորհուրդին մէկ անգամ կրնայ զայն արժարծել ո՛ր եւ է առնել:

Նոր լուր չկայ Ատրպատականի սահմանին վրայ ծագած դէպքերու մասին: Թէհրանէն հասած հեռագրի մը համաձայն, կոնիւսերը դադարած են:

Ատրպատականի կրթական նախարարը յայտարարեց թէ համալսարան մը պիտի բացուի Ատրպատականի մէջ, բժշկական, մանկավարժական եւ հողագործական բաժիններով: Օրէնք մը կը մշակուի, աւելցնելու համար բանուորներու աշխատավարձը: Գործատէրերը պարտաւոր են հաց եւ ազուստ ձարել բանուորներուն:

Զեկոյց Ծրանասանայնու Ներգաղթի Կեդր. Կոմիտէի

ԽՄԲ. — Ներգաղթի կեդր. Կոմիտէի դիւանէն ստացած եմք հետեւեալ գեկոյցը. —

Համաձայն Սովետ. Միութեան Փարիզի դեսպանատան քարտուղար եւ Միութեան ներգաղթի լիբազօր քաղաքացի Ա. Հինայէկեանի հրահանգին, այս տարի իսկ հարաւորութիւն պիտի ունենանք Սովետական Հայաստան ուղարկելու արուեստագէտներ եւ մասնագէտներ:

Պաշտօնական զործողութիւններու համար մեղի տրուած ժամանակամիջոցը չափազանց կարճ ըլլալով, կը խնդրուի ըստ փափաքողներէն ա — մենաուրը մինչեւ Մայիս 31 մեզի հասցնել իրենց դիմումը, հետեւեալ հասցէին, 9 Place de la Madeleine, Paris, պատասխանելով հետեւեալ հարցումներուն. — Անուն—մականուն եւ հօր անուն, ազգականական կապը ընտանիքի ղեկավարի հետ. սեռը, ծննդեան թուականներ եւ վայրը, արհեստը, կրթութիւնը, հպատակութիւնը, այժմու գրադումը: Խորհրդային Միութեան սահմաններուն մէջ ու — նի՞ք ազգականներ եւ ինչո՞վ կը գրադին: Ի՞նչ գոյքեր ունիք անձնական եւ կամ մեքենաներ, Հայրենիքի մէջ ինչո՞վ կ'ուղչէք գրադել: Այս դիմումին պէտք է միացնել նաեւ երկու օրինակ ինքնակենսագրականներ հայրենի գրուած եւ 9 նկար դիմացէն քաշուած: 16 տարեկանէն վեր եղողները առանձին պէտք է նկարուին:

ՅՈՒՆԻՍ 18ի 6րդ ՏԱՐԵՆԱՐՁԻՆ ԱՌԹԻԻ, մեծ հանդիսութիւններ պիտի կատարուին Փարիզի մէջ: (Այս այն օրն է երբ զօր. տը Կոլ զիմադրուեցին մարտակոչը հնչեցուց Լոնտոնի անթիւն): Կառավարութիւնը զօրավարն այս հրահարած է այս հանդիսութեանց, թէ եւ ան մերժեց ներկայ ըլլալ Յաղթանակի տարեդարձին արարողութեանց, նախընտրելով ուխտի երթալ Քլեմանտայի գերեզմանը: Թերթերը կը գրեն թէ զօրավարը վերջերս դղողակին ծափերու կ'արժանանայ սինէմաներու մէջ, ինչ որ ժամանակի նշան կը համարուի: ԿԱԶԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՏՆՕՐԵՆԸ, Լանկոն — յը, գատապարտուեցաւ ցեղեանս ազգային անպատուութեան եւ անձնական գոյքերու գրաւման: ՄԱՐԱՆՆԵՐԸ Սարտենիայէն Գորսիքա կ'ար — շաւեն, փճացնելով հունձքերը: Ստիպողաբար օգ — նութիւն խնդրուեցաւ:

Ակադեմիկոս Աճառեանի մօտ

Լսել եմ, որ մեծանուն ուսուցչապետ, սիր - ուած ակադեմիկոս Աճառեանին միշտ կարելի է գտնել աշխատելիս: Նրա աշխատասիրութիւնը, ուրի արդիւնքն է 50 տպագրուած եւ մօտ 20 անտիպատուար ու մեծարժէք գիտական աշխատութիւն - Երեւանում առածի կարգ է անցել:

Այդպէս էլ դռնում եմ նրան՝ դրասեղանի մօտ նստած, ակնոցն աչքերին, թիւքուած թղթի դէպի վրայ, արագ - արագ գրելիս:

Բարեւում եմ: Մի պահ ընդհատում է աշխատանքը, նայում եւ ասում:

— Հա, բարով եկաք: Նստեցէք: Այս րոպէս կը վերջացնեմ: Զբաղեցէք բառարանիս նոր մաս - մուկները թերթելով, տպագրութիւնը վերջացել է, մնում է կազմելը:

Նա շարունակում է ինչ որ բան արտագրել, իսկ ես թերթում եմ պատկառելի զետեղանի «Հայոց Անձնանունների բառարանի» երկրորդ հատորի տպագրուած մասուկները: Անցնում է մօտ հինգ րոպէ:

— Վերջացրի, այժմ կարող եմ խօսել, ասում է նա գրելը ցած դնելով ու ամբողջ մարմնով դառնալով դէպի ինձ:

— Հէնց ուղում եմ ձեր աշխատանքների մասին խօսել, ծանօթանալ ձեր աշխատութիւններին:

— Խնդրեմ:

— Այս՝ «Հայոց անձնանունների բառարանը» քանի՞ հատոր է լինելու:

— Կը լինի հինգ հատոր, երկուսը տպուց, մնաց երեք հատոր, այդ էլ կը տպագրենք, արդէն վերջացրել եմ, աւելացնում եմ միայն մի քանի անուններ:

— Երեւի աշխատում էիք Տրդ հատորի վրայ:

— Ոչ, տպագրում է նաեւ իմ «Հայոց լեզուի պատմութեան» Հրդ հատորը: Ինչպէս գիտէք անաշխատ հատորը վաղուց է տպուած, դրարք մի հատուած էի արտագրում Եղիշիկից, դնելու եմ «Հայոց լեզուի պատմութեան» մէջ «Ասկեղարեան հայերէն» գլխում, ինչ գեղեցիկ լեզու է, ինչ ոճ, ասում է յուզմունքից զողացող ձայնով:

— Պրօֆէսօր, ձեր այս երկու աշխատութիւններից ո՞րն էք աւելի արժէքաւոր համարում:

— Իմ աշխատութիւններից ամենազանազան լին «Հայոց լեզուի պատմութիւնն» է: Կարելի է ասել իմ գործերի պատկէն է, եզրակացութիւնը, վերջ է վերջոյ նրա մի մասն է կազմում նաեւ «Արմատական բառարանը»: Միւս կողմից իմ այս գործով առանձին մի դիտութիւն եմ մտնում հայագիտութեան մէջ, որ որպէս յատուկ առարկայ անհրաժեշտ է:

— Երեւի ձեր միւս կարեւոր աշխատութիւնը համարում էք «Գաւառական բառարանը»:

— Չէ. գաւառական բառարան շատ թերի է, ձեռք է, խոշոր հատոր է, բայց ընդամենը տպուած է 30.000 քաւ, իսկ իմ մօտաւոր հաշիւներով մեր գաւառական բառերի թիւը 100 հազարից աւելի է: Մի քանի տարի առաջ ձեռնարկեցի աւելի լիակատար գաւառական բառարան կազմելու աշխատանքին, սակայն յետոյ կիրառ թողեցի՝ աւարտելու համար այժմ տպագրուող գործերս:

— Ուրեմն նորաստիպական շրջանում հրատարակուած ձեր գործերից ո՞րն էք համարում աւելի կարեւոր:

— Անշուշտ 1909 թուականին Փարիզում լոյս տեսած իմ «Classification des dialectes arméniens» աշխատութիւնը, որի աւելի ընդարձակ թարգմանութիւնը լոյս տեսաւ 1912 թուականին «Հայ բանագիտութիւն» անունով, այդ էլ յատուկ դիտալիւն է եւ զբա համար եմ Սորբոնի համալսարանից ստացել գիտական աստիճան:

— Ի՞նչ անտիպ գործեր ունէք: — Ծանօթացնեմ ձեզ իմ թէ տպագրուած եւ թէ անտիպ գործերը:

Երիտասարդի աշխուժութեամբ բարձրանում է իր տեղից, մօտենում տպագրի գրքերով ու ձեռագրի դէպքերով ծանարեւոտուած մի պահարանի, մի պահ նայում գրքերին, ու ապա ասում:

— Տեսնո՞ւմ էք այս շարքերը, որոնք բոլորը իմ տպագրուած գործերն են, «Արմատական բառարանի» 6 հատորները, որոնք լոյս են տեսել Երեւանում 1926—1932 թուերին եւ մօտ 9000 էջից են բաղկացած: Այս էլ, ասում է մտաբերելով մի մեծ հատորի վրայ, քիչ առաջ ձեր հարցրած «Գաւառական բառարանն» է: Իսկ սրանք՝ «Թուրքերէնից փոխառեալ բառեր», «Հայերէն նոր բառեր հին մատենագրութեան մէջ», «Հայոց գիրը», «Պատմութիւն հայ նոր գրականութեան» (երեք հատոր), Սանասարեան վարժարանի, Թուրքիի, Նոր Բայազետի ձեռագրերի ցուցակները՝ առանձին հատորներով եւ վերջապէս Գարբաղի, Նոր Նախիջևանի, Մարաշի, Կ. Պոլսի, Ադուլիսի եւ մի շարք ուրիշ բարբառների քննութիւնը՝ նոյնպէս իւրաքանչիւրն առանձին հատորով: Մանր - մունր գործեր էլ կան՝ «Հայոց նոր վիճակներ», «Սուրբ Մկրտչի եւ զրեւու գիւտի պատմութիւնը», «Տաճկահայ հարցի պատմութիւնը» եւն.:

— Ծառ կը ցանկանայի իմանալ, թէ որո՞նք են ձեր առաջին աշխատութիւնները:

— 19—20 տարեկան հասակիցս, այսինքն՝

1896 թուականից, երբ սովորում էի Փարիզում ու յաճախում Սորբոնի համալսարանը, զանազան լեզուաբանական յօդուածներ էի գրում Ֆրանսե - ընէ լեզուով: Առանձին գրքով վեներտիկում 1898 թուականին լոյս տեսաւ իմ «Քննութիւն Ասյանպէ - կի բարբառի» աշխատութիւնը, իսկ մի տարի յետոյ, այսինքն՝ 1899 թուականին, իմ ուսուցչին - րից մեծանուն հայադէտ Մէյէի եւ յայտնի ձայնա - բան Ռուսոյի աշխատակցութեամբ, դարձեալ Փարիզում լոյս տեսաւ «Les explosives de l'ancien arménien étudiées dans les dialectes modernes» աշխատու - թիւնը, որն առաջին փորձն է հայերէնի ձայնա - բանութեան:

— Ձեր անտիպ գործերի մէջ ո՞րն էք համարում ամէնից կարեւորը:

— Այ, սրանք, ասում է պրոֆէսօրը, ձեռք դնելով կողք - կողքի շարուած ձեռագրերի վրայ: Սրանք իմ «Լիակատար քերականութիւն հայ լեզուի» աշխատութեան ձեռագրերն են: Այս գործը իր տեսակի մէջ եղակի է, համարեա նմանը չկայ ոչ մի լեզուի մէջ, պարունակելու է մարդ - կային մտածողութեան արտայայտման բոլոր ձե - ւերը անհրաժեշտ հայոց լեզուի քերականութեան հետ: Իմ քերականութեան մէջ մտնում են Հայոց լեզուի քերականութեան վերաբերեալ մինչեւ այժմ լոյս տեսած բոլոր արժէքաւոր աշխատութիւննե - րի հիմնական նիւթը, օրինակ՝ Բագրատունու, Այրանեանի, Չարիեանի, Կարսի քերականու - թիւնները, Մէյէի «Esquisse d'une grammaire comparée de l'arm. Classique» աշխատութիւնը եւ ուրիշ կարեւոր գործեր:

— Քանի՞ մասուկ կը լինի ձեր «Լիակատար քերականութիւնը»:

— Ծառ մեծ է - դժուար է այժմուանից մաս - մուկով արտայայտել: Միայն դերանուն մասին գրել եմ հարց էլ, ամբողջ աշխատութիւնը բա - ժանել եմ 6 մասի՝ «Լեզուաբանութեան ներածու - ծութիւն», «Չայնարանութիւն», «Ձեւարանու - թիւն», «Շարահիւսութիւն», «Իմաստարանու - թիւն» եւ «Բանագիտութիւն»: Լեզուաբանութեան ներածութեան մէջ տալու եմ այն բոլոր ընդհա - նուր տեղեկութիւնները, որոնք կարեւոր են լեզ - ուաբանութեան համար. Օրինակ՝ լեզուաբանու - թիւնն իրրեւ դիտութիւն, ինչ է լեզուն, լեզուի ծագումը, սոցիալական կողմը, հոգեբանական, բնախօսական կողմը, լեզուի փոխանցումը, լեզուի բարձրութիւնը, կենսաբանութիւնը, (միապատկ լեզուների, կցական լեզուների, թեքական լեզուների եւ այլն), լեզուի կասարելութիւնը, այսինքն՝ ինչ ենք հասկանում կասարեալ լեզու ասելով (լեզուի գեղեցիկութիւն, հարստութիւն, համառօտութիւն, ճոխութիւն, սեղմութիւն, կանոնաւորութիւն, մարքութիւն): Միայն լեզուի համառօտութիւնը ցոյց տալու համար, հաշուել եմ, թէ մի քանի լեզուի Աւետարանները քանի բառ ունեն, որն աւելի շատ բառ ունի եւ որն աւելի համառօտ է: Եւ վերջապէս իմ գրքի առաջին մասում խօսում եմ օտար ազդեցութիւնների մասին ու տալիս եմ լեզուաբանութեան բաժանումը: Այս - քան առաջին մասի վերաբերեալ:

Երկրորդ, երրորդ եւ չորրորդ մասերը, այս - ինքն՝ ձայնաբանութիւնը, ձեւաբանութիւնը եւ շարահիւսութիւնը, հասկանալի են: Այժմ զանք իմաստաբանութեան եւ բանագիտութեան: Իմաս - տաբանութիւնը բաժնում ցոյց եմ տալիս, թէ բա - ները ժամանակի ընթացքում ինչպէս եւ ինչ օրէն - ղով են փոխում իրենց նշանակութիւնը: Եւրոպա - կան բառով այս դիտութիւնը կոչում է սեման - տիկա:

Համեմատաբար նոր դիտութիւն է իմ աշխա - տութեան վերջին մասը, որ եւ վերագրել եմ Բա - նագիտութիւն յայտնի խօսքով, այս բաժնում օ - բինակ խօսուելու է այսպիսի հարցերի մասին՝ մարդիկ բառերով են մտածում, թէ նախապատ - թիւններով, ինչն՝ քառամտաները միայնակ են լինում կամ երկվանակ, խօսելու եւ ծածուկ լեզու - ների (զողերի կամ այլ պայմանական լեզուների մասին), ինչպէս նաեւ մանուկների լեզուի մասին:

Աշխատանքի մեծ մասն արդէն պատրաստ է: Մնացել են միայն վերջին երկու մասերը, որոնք անհամեմատ փոքր են եւ հեշտ է գրել: Այս գրքի համար պէտք է օգտագործեմ 600 լեզուի քերակա - նութիւն, որից 140ը (բոլոր մեծ եւ յայտնի լեզու - ների քերականութիւնները) արդէն նայել եմ եւ անհրաժեշտ նիւթերը վերցրել:

— Ի՞նչ սկզբունքով էք կառուցել:

— Ի՞նչ, այս ինչքան հարց ու փորձ էք անում, ասում է կատակով, — լաւ, դրան էլ պատաս - խանեմ: Քերականական այս կամ այն երեւոյթը նախ բացատրում եմ ընդհանուր առմամբ, թէ ամ - րող աշխարհում՝ բոլոր լեզուների մէջ ինչպէս է արտայայտուած, ինչ ընդհանրութիւն կամ տար - րերութիւն կայ հայերէնի հետ համեմատած, ապա ցոյց եմ տալիս, թէ նոյն այդ քերականական երե - տային ինչպէս էր հնդեւրոպական լեզուներում, ո - րից յետոյ անցնում եմ հին հայերէնի (զբարարի), միջին հայերէնի, բարբառների եւ վերջապէս ժա - մանակակից Հայոց լեզուի քերականութեանը:

— Մի վերջին հարց էլ: Ե՞րբ էք ենթադրում վերջացնել այդ վիթխարի աշխատանքը:

— Կարծում եմ 6—7 տարուց կը կարողանամ բոլոր ձեռագրերիս հետ հաշիւս մաքրել: Իմ մե -

Պայտար Միգերկրականի հասար

ԽՄԲ. — Անցեալ շաբաու հրատարակի էինք մասնագիտի մը տեսութիւնները քարիվի պայտարի մասին, քարիվի Le Monde-ն: Ստորեւ՝ վերջին մասը, որ կը պարզէ Մեծերու մրցակցութեան ու - րիչ մէկ երեսը:

Ապագայ ոչ — անկարելի պատերազմի մը պա - հուն, քարիվը հաւանաբար նոյնչափ վճռական դեր պիտի կատարէ որչափ 1945ին վերջացող պա - տերազմին մէջ: Ռուսիա ամբողջ տեղաւորուել - լով հիւսիսային Իրանի կամ ամբողջ Իրանի մէջ, իր հաւանական հակառակորդներու ոյժին մէկ մա - սը պիտի փճացնէր քարիվի տեսակետով: Արդ, Իրան եւ Իրաք զանցառելի քանակութիւն մը չեն կազմեր Անգլիոյ համար, ընդհակառակն անոնք են որ կը հայտնային իր քարիվի սպառումին էական մասը, այսինքն 20 միլիոն թոն, իր տարեկան սպառումէն 29 միլիոն թոնի վրայ (1945ի համար ծանուցուած թուանշանը): Եթէ Խ. Միութիւնը յաջողի իր ազդեցութեան տակ առնել Իրանի քա - րիվները, իր տարեկան արտադրութիւնը այժմիակ չորս անգամ աւելի պիտի ըլլար քան Անգլիայինը:

Մ. Նահանգներու կացութիւնը լաւագոյն կը թուի անշուշտ: 1945ին անոնք արտադրած են 231 միլիոն թոն քարիվ, համաշխարհային արտա - դրութեան 65 առ հարիւրը: Ասկէ զատ աչք ունին վեներտիկայի քարիվի վրայ, որուն քանակը բարձրացած էր 46 միլիոն թոնոյի 1945ին: Բայց իրենց հանքերու ներքին միջերկր արագօրէն կը սպառի, եւ նոյնիսկ եթէ չափազանցուած համա - րիւք այն ենթադրութիւնը որ 1944ին 14 տարուան կայնամասով մը կը ցուցնէր ընդհանուր սպառու - մի մը համար, դժուար է պնդել թէ 50 տարի վերջ Մ. Նահանգները պէտք պիտի չունենան քարիվի հակադական ներածումի մը: Արդ, իրենց յոյսը դրած են Արաբիոյ վրայ, Իրանի շատ մօտիկ: Ու - բան Խ. Միութեան ամէն թափանցում դէպի հա - ռան, մեծապէս պիտի վտանգէր այն քարիվի պա - հեստները որ այսօր աւելորդ կը թուին թէ չէ, բայց քիչ յետոյ անհրաժեշտ պիտի նկատուին Մ. Նահանգներուն համար:

Իրանեան մրցակցութիւնը սակայն չի սահմա - նափակուիր Միլիոն Արեւելի քարիվներուն շուրջ: Այն օդային մրցակցութեան մէջ որ պիտի սկսի քիչ վերջ, ստիպական դադարաւարտ ունեցող եւրոպական պետութիւնները՝ Անգլիա, Ֆրանսա, Հոլանտա պիտի վերակազմեն իրենց օդային նախ - կին գիծերը ցամաքի վրայէն, Եւրոպայէն մինչեւ Ծալք. Արեւելք: Մ. Նահանգները, իրենց կար - դին, կ'ընեն իրենց դիտական եւ տնտեսական հսկայ յառաջընթացութեան վրայ, կ'ուզեն հաստա - սելի օդային գիծերու ամբողջ շարք մը, որոնք մեր երկրագունդը պիտի պատեն իրրեւ անմայրածիր սարգի ոտային մը: Արդ, իրենց Ատլանտեանի գի - ծերը չեն կրնար կանգ առնել Լոնտոն, Փարիզ, Մարսիլիա կամ Լիզպօն, այլ պէտք է երկարին մինչեւ Կալիֆօրնիա եւ Հօնկ - Քօնկ, ուր պիտի միա - նան Խաղաղականի գիծերուն:

Տրուած ղեկուցումէն իմացանք թէ Հայաստանի խորհրդային կառավարութիւնը մղում տալու հա — մար ներգաղթին, Փրանսայի լիազօր ներկայա — ցուցիչ նշանակած է Պ. Անդրանիկ Հինայէկեանը, քարտուղար Փարիզի խորհրդային գեսպանատան : Ներգաղթի Կոմիտէն անոր հրաւերով երկու ան — դամ տեսակցութիւն ունեցած է, տեղեկութիւններ տալով եւ ստանալով : Զանգուածային ներգաղթը տեղի պիտի ունենայ 1947-ին, սկիզբը կամ քանի մը ամիս վերջ, անշուշտ մաս առ մաս : Իսկ 1946-ին պիտի կրնան երթալ միայն մասնազէտներ, ար — ուեստազէտներ եւս, մօտաւորապէս 100 (հա — բիւր) հողի, ըլլան Թուրքիոյ նախկին հպատակներ կամ ուրիշ աղուութեանց հպատակներ, պայմանաւ որ անհրաժեշտ ձեւակերպութիւնները կատար — ուին մինչեւ Յունիս 5 : Հաւանական մեկնում Յու — լիսին : Եստ կարճ ըլլալով պայմանաժամը, կարե — լի չէ եղած կարգադրութիւններ ընել կարուածնե — րու կամ դոյքերու մասին : Հայաստանի մէջ Ներ — գաղթի աշխատանքները կը կատարուին մեծ խան — դավաւորութեամբ :

Ներկայացուցիչը լսելով այստեղ կատարուած աշխատանքները, շատ դանդաղ գտած է, այնպէս որ կը խնդրուի մամուլին աջակցութիւնը, արձա — նագրութեանց եւ հանգանակութեան համար :

Թելադրուեցաւ թերթերուն որ իրենց տեղի — կուցութիւնները ստանան Ներգաղթի Կեդր. Կոմի — տէէն եւ զգուշանան զանազան աղբիւրներից քաղ — ուած տեղեկութիւններ, թիւրիմացութեան եւ չփոթութեան տեղի չտալու համար : Այս առթիւ շեշտուեցաւ թէ կատարուելիք հանգանակութեան եւ քարոզչութեան մեծագոյն դերը կ'իյնայ մամու — լին վրայ : Ի պատասխան հարցումի մը թէ ներ — գաղթողները աշխատանքի եւ բնակութեան աղա — տութիւնը պիտի ունենան «այո» պատասխանուե — ցաւ : Տեղեկութիւնները կը պակսին զոյքերու փո — խաղրութեան եւս. մասին որոնց համար ան — հրաժեշտ է նախապէս համաձայնիլ տեղական իշ — խանութեան հետ : Զանգուածային ներգաղթի քա — նակի մասին ալ ճշգրիտ տեղեկութիւններ կը պակ — սին :

Ներգաղթի Կեդր. Կոմիտէի նախագահը յայտ — նեց թէ, այսուհետեւ պարբերաբար տեղեկութիւն — ներ պիտի տրուին, մամուլին, ներգաղթի մա — սին : Մ. Մ.

× Պ. Հինայէկեան կիրակի օր ներկայ էր «Իրաւասն Բիւն»ի ներկայացման : Այս առթիւ Պ. Եսայիանի յարգանքի խօսք ուղղեց բեմէն :

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԳՈՐԾԱԴՈՒԼԸ ՎԵՐՉԱՑԱԻ

Մ. Նահանգներու երկաթուղիներու գործա — դուլը վերջացաւ Մայիս 25-ին, 48 ժամ տեւելէ վերջ : Գործադուլին վարիչները հաւանեցան կա — աւալարութեան առաջարկած պայմաններուն : Նա — խազահ թրումըն պայմանաժամ նշանակած էր մինչեւ ժամը 4 (Փարիզի ժամով՝ 10), այլապէս բանակը շարժման մէջ պիտի դնէր : Համաձայնու — թիւն գոյացաւ պայմանաժամէն երեք մը խորհեան առաջ : Նախազարմարն առջեւ, եւ ինչպիսիք օրէնք մը քուէարկել, արդիւլիւն համար նման գործադուլ — ներ որոնք կրնան ջլատել երկրին ամբողջ կեանքը : Այս առթիւ հաղորդուեցաւ նաեւ թէ ժամական 16 սէնթի յաւելում պիտի տրուի, սկսելով 1946 յուն — ուար 1-էն, իսկ շուկէս սէնթի նոր յաւելում մըն ալ Մայիս 22-էն սկսեալ, ուրեմն համարուածար 18ու — կէս սէնթ յաւելում, մինչեւ մէկ տարի :

Համաձայնութեան յայտարարութեանէն 50 վայրկեան վերջը, առաջին կատարուած բերը սկսան բանիլ : Այդ միջոցին երեսփ. ժողովը ջանալիս է մեծամասնութեամբ արտակարգ լիազօրութիւններ տուաւ նախազահին, արտօնելով ի հարկին պա — տիժներ սահմանել, եթէ գործադուլներ սարքուին ընդդէմ կառավարութեան :

Նախագահը ձայնասփիւռ ճառով մը կը սպառնար շարժման մէջ դնել բանակը, պաշտպա — նելու համար անոնք որ կ'ուզեն աշխատիլ : Այս առթիւ կը յիշէր թէ գործադուլին հետեւանքով կարելի չէ եղած բեռցնել 100.000 թոն ցորեն որ սահմանուած է Եւրոպայի սովահար ժողովուրդ — ներուն : Կ'ըսէր նաեւ թէ գործադուլին վարիչները պարզապէս ասպարէզ կը կարգան կառավարու — թեան, «ճարտահրաւեր մը որ գրեթէ երբեք չէ տեսնուած մեր պատմութեան մէջ : Իւրաքանչիւր բանթողի կը յայտարարեմ թէ ձեր երկրին հան — դէպ եղած պարտականութիւնը դեր ի վեր է ձեր անձնական շահէն : Կառախումբերը կը բանին ձեր կառավարութեան միջոցաւ եւ գործադուլը

ուղղումը է կառավարութեան դէմ: Բոլորը այ պիտի տեսնէք որ ձեր ուսուցիչը պիտի պահուի, ձեր առողջութիւնը եւ ապահովութիւնը պիտի վստահուի, ձեր փողոցները պիտի մթնեն եւ ձեր փոխադրութեան դերութիւնները պիտի խորտակուին: Եթէ մեր երկրին մէջ կայունութիւնը տաղանայալի է, եւրոպայի մէջ եղբարկան է: Եթէ աւելի ուշանայ 100.000 թոն ցորենի առաքումը, 45 միլիոն բնակիչներու հացի բաժինը պիտի կտրուի մէկ շաբաթէն»:

Ուղղակի ընդմէջ վերջնական համաձայնութիւն գոյացաւ Ռուսաստանի Միջազգային Խորհուրդը մը հաստատելու համար, մասնակցութեամբ քան ազգերու: Իր անմիջական գործը պիտի ըլլայ ուսուցիչ հասցնել սովահար երկիրներուն: Պիտի գործէ մինչեւ 1947ի վերջը, որ առեւն պիտի կազմուի պարենաւորման միջոցն մարմին մը, հովանաւորութեամբ Միացեալ Ազգերու կազմակերպութեան:

Տարագիրներու խնդիրը

Միացեալ Ազգերու Տնտեսական եւ Ընկերային Խորհուրդը, որ ժողով կը գումարէ Լոնտոնի մէջ, ծրագիր մը կը մշակէ մասնաւոր յանձնարումներ մը միջոցաւ, ապահովելու համար տարագիրներու ազատութիւնը եւ աշխատանքը: Յանձնարումներ առաջարկած է Տարագիրներու Միջազգային կազմակերպութիւնը մը հաստատել, բոլորովին չէզոք եւ ազատ՝ որ եւ է կառավարական միջամտութիւնէ: Յետոյ տուած է հետեւեալ չորս որոշումները:

1.—Այն տեղերն անձեռը որ կը մերժեն իրենց հայրենիքը վերադառնալ քաղաքական պատճառներով կամ վախճանով հարաժանքներէ, պէտք է բռնադատուին վերադառնալու: 2.—Այն տարագիրները որ զործ ճարած կամ ընտանեկան կապեր հաստատած են իրենց դառնաւոր երկիրներուն մէջ, պէտք է արտօնուին հոն մնալու: 3.—Եւրոպական կառավարութիւնները պէտք է դործակցին տարագիրներու զանազան տեղաւորումներ կատարելու անբնակ վայրերու մէջ, ամբողջ Եւրոպայի տարածութեան վրայ: 4.—Միջազգային անցագրերը պէտք է տալ դաս մը տարագիրներու, նըման Նանտինեան անձնագիրներուն:

Այս առթիւ ամերիկեան պատուիրակը բացատրեց թէ տարագիրներու հարցին կարգադրութիւնը կախում ունի դաշնակից երկիրներու տրամեսական եւ ընկերային պայմաններու վերահաստատումէն: «Կը յուսանք թէ արագօրէն դործի պիտի ձեռնարկուի, երբ նոր մարմինը հաստատուի: Բայց անշուշտ չէք սպասեր որ մոզական դաւազանով մը կարգադրուի կէս միլիոն կամ աւելի մարդկային կախիւրու ճակատագիրը»:

Պատուիրակը յետոյ ըսաւ թէ Մ. Նահանգներու կառավարութիւնը միտք չունի փոխելու իր օրէնքները, ամերիկեան հպատակութիւն շնորհելու համար տեղահան բնակիչներու: «Բայց անոնք որ Ամերիկա կուգան, պիտի վայելին ամերիկեան քաղաքացիներու զրեթէ բոլոր առանձնաշնորհները: Աս այժմ, առ առաւել տարեկան 39.000 հոգի կրնանք ընդունել Գերմանիայէն եւ Աւստրիայէն»:

«ԹՈՒՐԿԻԱՆ ԴՈՒՐՍ ԵՒՐՈՊԱՅԷՆ»

Աթէնքէն կը հեռագրեն թէ Էսթը, Յունաստանի ձախակողմեան կազմակերպութիւնը, թէ եւ ուժգնօրէն ընդդիմադիր ներկայ կառավարութեան եւ բրիտանական դրաման, կատարելապէս համաձայն է վարչապետ Յարապիսի հողային պահանջներուն: Ուրիշ խօսքով, ան ալ կը պահանջէ հիւսիսային Եպիրոսը, Ալպանիայէն, Երկտասան կղզիները՝ Իտալիայէն, լեւնային հողամաս մը՝ հարաւային Պուլխարիայէն, բայց մասնաւոր կիպրոսը՝ Անգլիայէն եւ արեւելեակ թրակիան՝ Թուրքիայէն: Կառավարութիւնը պաշտօնապէս չէ պահանջած այս երկու հողամասերը: Պ. Նիքոս Զախարիասի, Յունաստանի համայնավար կուսակցութեան վարիչը, պնդելով այդ պահանջներուն վրայ, յայտարարեց թէ իրենք ամէն բանէ առաջ կ'ուզեն ապահովել Յունաստանի միութիւնը, հետեւաբար հակառակ են դէպի ծով ելք մը տալու Պուլխարիոյ: Պ. Զախարիասի կը խոստովանի թէ արեւելեան թրակիոյ մէջ յոյն բնակչութիւն չկայ այժմ, իրրեւ հետեւանք ժողովուրդներու փոխանակութեան որ կատարուեցաւ քսան տարի առաջ, բայց Յոնիանը կ'ուզեն վերադառնալ, մշակելու համար արդասաբար հողեր որոնք երեսի վրայ մնացած են: «Բայց, արեւելեան թրակիան պահանջելով, մեր գլխաւոր նպատակն է Պալքանիսի դուրսը քշել Թուրքիան, որ վտանգ մըն է պալքանեան խաղաղութեան համար եւ որ վերջերս դրօշ տակ առած է նոր զորադասեր»:

Լեզուստանի վարչապետը, որ Մոսկուա դասած է բազմադամ պատուիրակութեան մը հետ, փոխառութիւն մը պիտի խնդրէ, քանի որ Մ. Նահանգները կը մերժեն վարկ բանալ: Արժանիքի կառավարութիւնը յանձն առաւ 20.000 հոգի ընդունել ինչհական այն բանակէն որ Անգլիա կը դրոստուի: Բանակցութիւններ կը կատարուին, Իտալիոյ լեհական բանակէն ալ 50.000 հոգի ընդունել տալու համար: Անգլիա յանձն առած է մարդկուի 3000 փէսօ վճարել, ազատելու համար այս ազատուկէն:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԵԳԻՊՏՈՍԻ հետ բանակցութիւնները վերանկատու համար, անգլ. կառավարութիւնը նոր հրահանգներ անուա իր պատուիրակութեան, զինուորական հարցերու մասին: Կառավարութեան տեսակէտով, Սուէզի ջրանցքին պաշտպանութիւնը կազմուի ոչ միայն Անգլիոյ եւ Եգիպտոսի, այլեւ Մեծն Բրիտանիոյ եւ Միջին Արեւելքի պետութեանց հետ: Քաղաքական տեսակէտով ալ, Սուէզի կ'ուզէ դործակցութիւն հաստատել ամբողջ արաբական աշխարհին հետ: Եգիպտոսի Աշխատաւորներու եւ Ռուսանդներու Ազգ. Կոմիտէն պահանջեց անմիջապէս Ապահովութեան Խորհուրդին յանձնել եգիպտական խնդիրը: Այս առթիւ կ'ազդարարեն անգլ. կառավարութեան թէ «ազգը պիտի պնդէ իր իրաւունքներուն պաշտպանութեան վրայ, պիտի մերժէ որ եւ է իրաւախոսութիւն եւ պիտի ոչնչացնէ անոնք որ կը խախտեն իր ճամբան: Այդ զին համբերութիւնը երկար պիտի չտեւէ: Եգիպտոս պատրաստ է պայքարելու բրիտանական աշխարհակալութեան դէմ»: Կ'ըսուի թէ Եգիպտոսի վարչապետը Լոնտոն պիտի երթայ, խորհրդակցելու համար: Մոսկուայի եգիպտական դեսպանը հոն հասաւ օդանաւով:

ԸՆՏՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻՆ ԱՌԹԻԻ, վարչապետ Կուէն ձառ մը խօսելով Լիլի մէջ, կարգ մը բարեփոխումներ առաջարկեց նոր Մահմանադրութեան մէջ: Վճռապէս մերժելով Երակոյտին վերահաստատումը, վարչապետը ըսաւ թէ միայն Ազգ. Ժողովը կրնայ վճռել կառավարութեան պահանջները կամ հրաժարումը: Երկրորդ ժողով մը պէտք է ընդդիմանայ երեսփ. ժողովին բարենորոգչական կամքին: «Այս երկու պայմաններով, կ'ընդունինք երկու ժողովներու գոյութիւնը: Երկրորդ ժողովը պիտի կրնայ խորապէս քննել երեսփ. Ժողովին առաջարկած օրինագիծերը եւ մասնակցիչ հանրապետութեան նախագահին ընտրութեան»: Պ. Կուէն համաձայն է որ նախագահին արուի անհրաժեշտ իրաւասութիւնը, իրրեւ իրաւաբար կուսակցութեանց միջեւ. յետոյ, հակառակ է որ քաղաքական իշխանութիւնը խառնուի դատական իշխանութեան:

ՅԻՄՆՔԵՒՄՄԵՐԻԿԵԱՆ տնտեսական համաձայնութիւնը կնքուած է: Պ. Լէոն Պլում քանի մը օր ալ պիտի մնայ, կարգ մը ձեւակերպութիւններ լրացնելու համար:

ԶՐ. ՎԼԱՍՈՎ, այն որ բանակ մը կազմած էր պայքարելու համար խորհրդային իշխանութեան դէմ, ձերբակալուած է Գերմանիոյ ռուսական շրջանին սահմանին վրայ, երբ կը փորձէր Զուրիգերի անցնիլ: Իրեն կ'ընկերանար սիրուհին: Զօրավարին վրայ դառնաւ են բազմաթիւ գոհարներէն եւ օտար դրամներ: Զօրավարը Մոսկուա փոխադրուած է: (Կարգ մը թերթեր այս լուրը կուտան իրրեւ վերջնական. ուրիշներ՝ իրրեւ զրոյց):

ՀԱՄԱՅՆԱՎԱՐ ԿՈՒՍԱԿՅՈՒԹԵԱՆ ընտրական պայքարի հանգանակութիւնը հասած է 9.685.000 ֆրանքի, ինչպէս կը ծանուցանէ «Իւմանիթէ»: Մօրիս Թորէզ ճառի մը մէջ պատասխանելով ներքին նախարարին (ընկերվարական) մեղադրանքներուն, ըսաւ թէ յետագիմականները կը դրոձեն խրամատ մը բանալ համայնավարներուն եւ ընկերվարականներուն միջեւ: Այս առթիւ կարգ մը թերթեր դիտել կուտան թէ ընկերվարական վարիչներուն մզած պայքարը կապ ունի Լէոն Պլումի յաջողութեան հետ (փոխառութիւն Ամերիկայէն):

ՀԻՇ ԻՃԻՇԿԸ, Փըթիօ, գլխատուեցաւ շաբաթ առտու կանուխ: Շատ հանգաւոր էր, կը ծխէր եւ նամակ մը կը դրէր կնոջը եւ սղուն, երբ դատական պաշտօնները ներս մտան:

ԱՆԴՐՅՈՐԴԱՆԱՆԻ Թաղաւորին Թաղադրութիւնը տեղի ունեցաւ շաբաթ օր, մեծ հանդիսաւորութեամբ: Եւրոպացի կիները դուրս հանուեցան, քողարկուած չըլլալով: Իսկ պարտական կիները ծածկած էին իրենց երեսները: Թաղաւորը, որ 67 տարեկան է, Գուրանը համբուրեց աւանդական երգումը կատարած առեւ: Այս առթիւ ճառ մը խօսելով, ըսաւ. «Պիտի շարունակենք դործակցիլ մեր արար եղբայրներուն հետ, բարեւոք յարաբերութիւններ մեր դաշնակցին՝ Մեծն Բրիտանիոյ հետ: Պաղեստինը մեր սեւեական ու շարքութեան առարկայ պիտի ըլլայ»:

Յր. Մշակութային Միութեան քաղցրան Զանդեա

Պատուոյ նախագահութեամբ Սով. Հայաստանի Գիտութեանց Ակադեմիայի Անդամ Փրօֆ. Ե. Մառուէիանի: Հիշարթի 30 Մայիս, ժամը 14.30ին, Theatre d'Iéna պահանջներուն մէջ, 10 Ave. d'Iéna, métro Iéna: Գեղարուեստական ճոխ բաժին: Համարձակ վիճակ, կենդանի պատկեր, պարերը եւ մեներդ ազգ. տարազով: Միջնարարին՝ Յուլիանիդէս Հայաստանեան եւ տեղական հրատարակութիւններու, նկարներու եւ հայ մշակոյթի ալ ստեղծագործութիւններու: Հրապարակ հանուած են միայն հրատարակողները:

Le Gérant: H. AGONEYAN
Imprimerie DER AGOPIAN, 17 Rue Damesme - 13

Մայիս 28ը Փարիզի մէջ

Կը տօնուի Մայիս 29ին, իրիկուան ժամը 9էն մինչեւ առաւօտ, Petit Journalի մեծ սրահը, 21 rue Cadet. Métro: Cadet:

Կը նախագահէ ՀՐԱՆՏ ՍԱՄՈՒԷԼ (նախագահ Գաղթ. կորիւրդի):

Կը խօսին ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱԲԵԱՆ M. COTTEREAU եւ M. HENRI BARRÉ (S. F. I. O.) եւ ՅՈՎԻԿ ԵՂԱՉԱՐԵԱՆ

Գեղարուեստական բաժնին կը մասնակցին Օր. ԱՍՏՂԻԿ ԱՌԱՔԵԼԵԱՆ (Երգ), Պ. ՖԻԼԻՓ ԱՂԱՉԱՐԵԱՆ (Չութակ), Պ. ԳԱՐԵԳԻՆ (Թառ), Օր. ԱՃՄԵԱՆ (Երգ), Բ. ՀԱՊԷՇԵԱՆ եւ Զ. Գարիֆաէ (արտասանութիւն), ԱՐՄԵՆԻԱ ՎԱՐԿԱՉ (պար): Պարերը կը վարէ ՌԱՏԻՈՅԻ ՆՈՒԱՂԱՆՈՒՄԲԸ, ղեկավարութեամբ Raymond Verneyի: ՀԱՅԿԱՍՆ ՊԱՐ (Օր. Հրամոյշ Գաղապալ): Երկրորդին կը մասնակցի նաեւ Փարիզի ՀԱՅԿԱՍՆ ԵՐԳՉԱՆՈՒՄԲԸ, ղեկավարութեամբ Պ. ԱՐԱՅ ՊԱՐԵՒԵԻԱՆԻ:

ԾԱՌԹԵՐՈՒ ՄԱՍՆԱԿՅՈՒԹԻՒՆ: ձՈՒ ՊԻՒՅԷ:

ՎԱՂԱՆՍԻ ՄԷՋ. — 29 Մայիս Զորքաբերի երեկոյ ժամը 8.30ին, Ֆուայէ տիւ Թէատրը: Գեղարուեստական ճոխ բաժին: Կը խօսի ընկեր ՀԱՅԿ ՍԱՐԳՍԵԱՆ:

ՌՕՄԱՆԻ մէջ մայիս 30ին, իրիկուան ժամը 8ին, ընկերվարականներու սրահը: ՓՈՆ ՏՕՊԵՍՅԻ մէջ Յունիս 2ին:

ՍԷՆ ՇԱՄՈՆ ՄԷՋ, նախաձեռնութեամբ Հ. Յ. Գ. Վարուժան կոմիտէի, մասնակցութեամբ, ՆորՄերուզի Վարդէս խումբի եւ Ֆր. Կ. Սաչի անուհիներուն: Յունիս 2, կերակի կէսօրէ վերջ՝ ժամը 3ին Սալ ժան տ'Արքի սրահին մէջ:

Կը խօսի ընկեր ՍԱՉԻԿ ՄԿՐՏԻՉԵԱՆ Գեղարուեստական ճոխ բաժին: Կենդանի պատկեր մը եւ ուրիշ անակնկալներ: Մուտքը ազատ է ՏԷՍԻՆԻ ՄԷՋ. — 1 Յունիս, շաբաթ երեկոյ ժամը 8.30ին, Հ. Յ. Գ. Տան մէջ: Կը բանախօսէ ընկեր ՀԱՅԿ ՍԱՐԳՍԵԱՆ: Գեղարուեստական ճոխ բաժին: Մանրամասնութիւնները յաջորդով:

ՎԻԷՆ. — Հ. Յ. Գ. Կոմիտէն ժողովի կը հրաւիրէ բոլոր ընկերները այս հինգշաբթի, առաւօտան ժամը 9.30ին, նոր Ակումբը (ՍԷՆ Մարթէն):

Ֆր. Կ. ՍԱՉԻ ԻՍԻՒ մասնաձեւի ղեկավարահանգէսը յունիս 1ին երեկոյեան ժամը 8.30էն մինչեւ առաւօտ: Կը նուազէ Պ. Պալեանի Ֆրանսօ Արմէնի 6 հողիկոց նուազախումբը: Գեղարուեստական բաժին: Ճոխ պիւֆէ: Մուտքը 50 ֆրանք, 45 rue de la Defense, métro Mairie d'Issy:

ԿԸ ՓՆՏՈՒՐԻ. — Յունաստանէն Տիկին Փերուզ Զորպաճեան եւ աղջիկը Նեվրիկ կը փնտեն իրենց մայրը Տիկին Անթառամ Դաւիթեան եւ քոյրեր Մանիկ եւ Արթիւն Գրալեաններ, որոնք պատերազմէն առաջ Ֆրանսա կը գտնուէին: Տեղեկացնել Mme. Hadjiguzelianի, 40 rue Andrinople Comotini, (Grèce):

ՏԱՐԵԿԱՆ ՄԵՐ ՊԱՐԱՀԱՆԴԻՍ Ֆր. Կապոյտ Խաչի Մարսէլի մասնաձեւի կողմէ Յունիս 1 Շարաթ դիշեր ժամը 9էն մինչեւ առաւօտ Chateau des Fleursի մէջ, 18 Bld. Michelet Գեղարուեստական խնամուած թաժին Կը պարէ Օր. Օուէք Սիմօն, պարի փոքրիկ թաղուհին: Ճոխ պիւֆէ:

LEILA BEDERKHA, քերտ պարուհին եւ իր խումբը Մայիս 27էն սկսեալ ամէն երկուշաբթի ժամը 21ին, 15 Ave. Montaigne: Նոր ստեղծագործութիւններ՝ մասնակցութեամբ Ondes Martenotի:

ՇԱՎԻ. — Ֆր. Կապոյտ Սաչի Շավիլի մասնաձեւը հանդէսով մը կը տօնէ Համբարձման Տօնի աւանդական «վիճակը» Մայիս 30ին, ժամը 4ին մանկապարտէզին սրահը, Rue des Trois Champniers: Մուտք 30 ֆրանք:

ՀԻՆԳՇԱԲԹԻ ՄԱՅԻՍ 30ին նշանակուած է փոքրիկներու Հաղորդութեան օր: Մտոյները կը հրատարակին իրենց պղտիկները առաջնորդել Փարիզի Հայոց եկեղեցին, ներկայ ըլլալու բազմաձայն պատարադին, ժամը 10:

ՀԱՄԲԱՐՉՄԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԹԻԻ ՍԷՆ Ժէոով (Մարսէլ) Ս. Եկեղեցոյ Դպրաց Դատուն 13րդ տարեդարձը ըլլալով, բոլոր անդամներուն ննջեցելոց համար մասնաւոր հողահանգստեան պաշտօն պիտի կատարուի, մասնակցութեամբ դպրատու Պ. Հ. Համբարձումեանի:

ՌԻՇԱԳՐՈՒԹԻՒՆ

Հ Ր Ա Ն Տ Ս Ա Ր Ե Ա Ն Ի
AU CHAPON FIN Restaurant Bar
Փոխադրուած է 18 Marché des Capucins
Gare de l'Est, Marseille

ՅԱՐԱՇ

ՕՐԱԹԵՐՐ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN FRANCE

HARATCH - Fondé 1925 - R. C. S. 376.286

Directeur-Propriétaire : SCH. MISSAKIAN

17, Rue Damesme - PARIS (13^e)

Tél.: GOB. 15-70 - C. C. P. Paris 1678-63

ՔԱՃՆ. Տար. 750, Ճամս. 400, Արտասահման 1000 Քրանք

Mercredi 29 MAI 1946 Չորեքշաբթի 29 ՄԱՅԻՍ

ԺԶ. ՏԱՐԻ — 18^e Année N^o 4712-Նոր շրջանի ԲԻ 351

Խմբագիր՝ Ծ. ՄԻՍԱԿԻԱՆ

Գին՝ 3 Փր.

ՄԵՐ ԽՕՍԻԸ

ՈՐՊԵՍՁԻ ԿԱՐԵՆԱՆԻ ՕԳՆԵԼ

Ինչպես իմացաք երեկ, Ֆրանսահայերու Ներգաղթի Կեդր. Կոմիտեն զանազան տեղեկություններ հաղորդելով փարիզահայ թերթերու ներկայացուցիչներուն, մամուլին ազդեցությունը խնդրած է, արձանագրությունը եւ հանդիմանությունը զարկ տալու համար:

Տարրական պահանջ մը, բոլորին համար: Մանաւանդ որ, ինչպէս դիտել տուած է ներգաղթի լիազոր ներկայացուցիչը, Պ. Հինայեկեան, «չառ դանդաղ» կ'երեւան այստեղ կատարուած աշխատանքները:

Չենք ուզեր որ եւ է բանավէճ յարուցանել, պարտելով մատնանշուած դանդաղութեան պատճառները: Թող պատասխանեն անոնք որ տէր-տիրական դարձած են Հայաստանի հետ կապուած բոլոր խնդիրներուն, եւ կ'ուզեն պարզապէս «զուլամ» դեր կատարել տալ միւսներուն:

Թերթերը մէջտեղն են, ամէն մարդ կրնայ նորէն կարգաւ եւ իմանալ թէ ո՞վ ի՞նչ ըսած կամ ըրած է:

Մենք այստեղ կ'ուզէինք ներգաղթի լիազորին ուղղութեան յանձնել կարգ մը պարագաներ.

1. Բոլոր փաստերը կ'ապացուցանեն թէ Երեւանը վաւերական տեղեկություններ չունի գաղութներու կացութեան, հոգեբանութեան եւ բաղձանքներու մասին: Իր աղբիւրները ոչ միայն պակասաւոր են, այլեւ պղտոր: Եթէ իրենք պարտուածներ կատարեն անձամբ, առանց կանխակալ կարծիքներու, ինքնին կը հարթուին շատ մը թիւրիմացություններ:

2. Երեւանը պարզապէս իր վարկին կը վնասէ թոյլ տալով որ շերտաւորումներ կազմուին Արտասահմանի մէջ. «Հայաստանի բարեկամ» «Յատուկ իմական» են: Յետին գաղութի տիրացուն եւ ժամկոչն անդամ կրնան միայն թէ ինչ կը ներկայացնեն այդ առանձնաշնորհաւ տարրերը, իրենց մեծամասնութեամբ: Մենք վստահ ենք թէ օր մը իրենք պատասխանատուութեան պիտի կանչեն շատ շատերը: Երանի՜ թէ ներգաղթը եւ ուրիշ կենսական ձեռնարկներ վնասուած չըլլան, մինչեւ այն առնել:

3. Այդ շերտաւորումներուն հետեւանքով, գաղթահայ մամուլն ալ բաժնուած է երկու մասի: Հաւատարմութիւնը — «Հառաջդիմական» — թերթ եւ յօդուած կը ստանան Երեւանէն, միւսները — հեթանոսներ — դեռ կը սպասեն որ կ'ամ բաժանորդագրեն, եւ կամ փոխանակեն, ինչպէս պատերազմին առջ: Երբ ձեռքի տակ չունին թերթ, պիտի, որեւէ նիւթ, ինչպէս կրնան լրի կատարել պարտականութիւնը: Ինչպէս պիտի ծանօթացնեն հայրենիքին մէջ կատարուած աշխատանքները, ամէն ճակատի վրայ: (Պատերազմէն առաջ Երեւանի թերթերը կը ստանային փոխանակութեամբ: Մասնաւոր խմբագիր մը կը հետեւէր անոնց, եւ «Յառաջ»-ի Հայաստանեան բաժինը «արտածելի» նիւթ էր դարձած ուրիշ գաղութներու համար, 10 — 15 տարի անընդհատ):

4. Երեւան ամառը մը կը հրատարակէ 1945 Յուլիսէն ի վեր: Առաջին երկու թիւերը դնեցինք այստեղ, երկու թիւեր ալ դեռ նոր ճարեցինք հեռուոր գաղութէ մը: (4 եւ 5, հոկտեմբեր - նոյեմբեր 1945):

Ամառը կը երեւութապէս կոչուած է հայրենիքը ծանօթացնելու Արտասահմանի, բայց իրականին մէջ կը ձգտի մոլեռանդ պայքար մը վարել Դաշնակցութեան դէմ: Մեծ պատիւ պիտի ըլլար, եթէ փորձուէինք արտասպիւ կարգ մը անկիրթ, գրուելի ցնդարանութիւններ:

Երբ այնքան խորարժատ եւ յարաճուն կազմակերպութիւն մը իր գաղափարական պայքարն անգամ դադարեցուցած է, յանուն գերազույց շահերու, եւ կը գոհանայ զանազան քննադատութիւններով, ողբալի է որ իշխանութիւն մը կը շարունակէ սիրտ եւ արիւն պղտորել, այս ճակատագրական օրերուն:

Դաշնակցութիւնը որ եւ է վնաս չի կրեր այդ անմիտ խաչակրութիւնէն: Ընդհակառակն: Հայրենիքը բան մը կը շահի՞: Գաղութները կը շահին: Պատասխանի թող փնտեն ներգաղթի բոլոր լիազորները, Ֆրանսայէն մինչեւ Սուրիա-Լիբանան եւ այլուր:

Կ'ուզէինք հաւատալ թէ անամէջ խօսքեր չեն Երեւանէն եւ էլ միամիտն են արձակուած «միասնականութեան» կոչերը:

Արտասահմանի միայն պարտականութիւններ ունի, թէ իրաւունքներ ալ:

Լուրեր հայրենիքէն

Հայաստանի պետական ձեռագրատան (Մատենադարան) ձեռագիրներուն մէջ երեւան հանուած է որ 650 տարի առաջ ծնած է Երեւանի առաջին բանաստեղծը, որ յետոյ քահանայ ձեռնադրուելով, ապաստաներ է Սրբիմ, անյայտ պատճառներով: Այս բանաստեղծը ինքզինքը կը կոչէ եղբ Եղբայր Երեւանցի (երբեմն ալ քահանայ, երէց): Իրմէ մնացած են քանի մը ձեռագիրներ զոր զերբ է 1330-1345 թուականներուն եւ քանի մը չափածոյ կտորներ: Այս բանաստեղծութիւններէն մէկը ընդարձակ ողբերգութիւն մըն է ուր կը վիճարանին խաղողը, պինին եւ իմաստասէրը: Երեւանի թերթերը կը գրեն թէ այս արտագրութիւնը շատ շահեկան է պատմագրական տեսակէտով:

Յերեւանի Ժողովրդական կրթութեան թանգարանը ձեռնարկած է հաւաքելու պատերազմի առնել հանրային դպրոցներու աշակերտներուն եւ ուսուցիչներուն հայրենասիրական բանաստեղծութիւնները, արձակ գրուածքները, հակաֆաշիստական ծաղրանկարներ, ճակատի ուղղութիւններէն եւ հրամանատարներէն ստացուած նամակներ, պատի թերթեր են:

Պետական Ձեռագրատան աշխատակոչներէն Ասատուր Մնացականեան միջնադարեան դրակահանութեան մատենագրական ցանկը կազմելով, մասնաւորապէս գրադած է Ներսէս Ծնորհալիի (ԺԲ. դար) հանելուկներով: Ծնորհալին մինչեւ հիմա ծանօթ էր 146 հանելուկներով, որոնք տպուած են 1512ին, հայերէն առաջին ապագիր տաղարանին մէջ: Ուսումնասիրութեանց ատեն պարզուած է որ ձեռագիրներուն մէջ կը գտնուին նաեւ 150 հանելուկներ, որով ընդհ. թիւը կը հասնի մօտ 300ի: Այս անտիկ հանելուկները ունին բացառապէս աշխարհական բովանդակութիւն եւ կարտայայտեն կենդանիներու, թռչուններու, ծաղիկներու, բոյսերու եւ ընդհանրապէս բնութեան նկարագիրը: Հանելուկներէն երեքը հայերէններով գրուած են, որմէ կը հետեւի թէ միջնադարեան հայրեններու ծագումը ետ կ'երթայ մէկ դար, քանի որ մինչեւ այսօր բանասիրութեան մէջ հայրեններու առաջին գործածողը համարուած է Ֆրիկը (ԺԳ. դար):

Հայաստանի Գիտութեանց Ակադեմիայի վերջին ընդհ. Ժողովին մէջ (12 ապրիլ), անդամներէն Վ. Համբարձումեան ղեկուցում տալով 1946ի տարեկանի առաջադրութեանց մասին, յայտնեց թէ պատմութեան «Ինստիտուտ»ը պիտի ձեռնարկէ հայ Ժողովրդի պատմութեան եօթը հատոր կազմելու, պիտի շարունակէ Հայաստանի եւ հայ Ժողովրդի պատմութեան տարբեր շրջաններու մենագրական ուսումնասիրութիւնը եւ պիտի զբաղի ուրիշ հարցերով: «Մ. Արեղեան» Ինստիտուտը (Կաճառ) պիտի շարունակէ Հայոց գրականութեան պատմութեան վեց հատորեակիցը եւ յետոյ հատորները կազմելու աշխատանքը եւ պիտի կազմէ հայ առանձին գրողներու ստեղծագործութեանց եւ գրականութեան պատմութեան զանազան փուլերու մենագրական ուսումնասիրութիւնը:

Այս տարի «Ն. Մառ» լեզուի Կաճառը պիտի ուսումնասիրէ հին հայերէնի եւ ժամանակակից գրական լեզուի, ինչպէս եւ բարբառներու ձեւաւորման պատմութիւնը:

Չորրորդ հնգամեակի ընթացքին Հայաստանի թիւթե արդիւնաբերութեան նախարարութիւնը պիտի տրամադրէ աւելի քան 50 միլիոն ռուբլի, նոր գործարաններու եւ բնակարաններու շինութեան համար: Կիրովականի եւ Գորիսի մէջ պիտի շինուին արհիւտաժի (հիւսուածեղէն) նոր գործարաններ: Լէնինականի մէջ պիտի շինուի կանացի ընտիր գուլպաներու գործարան: Հնգամեակի վերջը գուլպայի բոլոր գործարանները պիտի արտադրեն 14 միլիոն զոյգ: Երեւանի մէջ պիտի շինուի գործարան մը ապակեղէն ամաններու: Նոյն շրջանին պիտի աւարտի Երեւանի կօշիկ երրորդ մեքենաշար գործարանին շինութիւնը: Երբ գործարանը բանի եւ Ա. եւ Բ. գործարանները վերաշինուին, կօշիկի արտադրութիւնը պիտի բարձրանայ 1.200.000 զոյգի, փոխան 1940 թուականի 460.000 զոյգին: Ամբողջ երկրին մէջ կը յուսան արտադրել մինչեւ 2.550.000 զոյգ:

Հիմնովին պիտի վերակառուցուին Լէնինականի գուլպայի եւ հիւսուածեղէնի, ինչպէս եւ նոր Բայազետի հիւսուածեղէնի գործարանները:

Մ. ՆԱԶԱԳՆԵՐՈՒ երկաթուղիներու գործարարը հաղիւ դարձած վերսկսաւ հանրագործներու գործադուր: Կառավարութիւնը գրաւած է ամիսահանրերը: Բանթողներուն թիւը կը հասնի 40000ի:

ՄՈՂԹՈՎ ԿԸ ՄԵՂԱԴՐԷ ԱՆԳԼԻԱՆ ԵՒ ԱՄԵՐԻԿԱՆ

Ս. Միլոթեան արտաքին գործաւարը Մայիս 27ին շատ կարեւոր յայտարարութիւն մը ըրաւ օտար եւ խորհրդային մամուլի ներկայացուցիչներուն առջեւ, Փարիզի խորհրդաժողովին եւ ուրիշ միջազգային հարցերու մասին: Յայտարարութիւնը, որ 5000 բառէ կը բաղկանար, ամբողջութեամբ հրատարակուեցաւ կուսակցական պաշտօնաթերթին՝ «Փրավա»-ի մէջ, եւ միաժամանակ հաղորդուեցաւ Մոսկուայի լրագրութիւնէն, ի լուր աշխարհի:

Մոլթով ամբաստանեց Անգլիան եւ Մ. Նա - հանդերձ թէ կը փորձեն ահաբեկել Ս. Միլոթեանը եւ իրենց կամքը պարտադրել անոր: Եւ ազգաբարեց. — «Ինքզինքը յարգող ոչ մէկ դաշնակից պետութիւն կրնայ համակերպիլ այդպիսի ուղղութեանը»: Իր կարծիքով, Փարիզի խորհրդաժողովին դերն էր պատրաստել հաշտութեան դաշնագիրներ որ պիտի վաւերացուին երեք մեծ պետութեանց կողմէ, իսկ Խաղաղ պարագային՝ նաեւ Ֆրանսայի կողմէ, համաձայն Մոսկուայի խորհրդաժողովին որոշումներուն որոնք իրենց կարգին ներընչուած էին Փոքրամի որոշումներէն: Ուրիշ որ եւ է մեկնութիւն պիտի նշանակէր մէկի անկ երկու դաշնակից յօրինել, օրինակ, Խաղաղ համար, մէկը՝ երեք Մեծերուն կողմէ ստորագրելի, միւսը՝ Ղ պետութեանց կողմէ, «Ինչ որ կատարելով ձախողանք մը պիտի ըլլար»: Որ եւ է ձեռնարկ որ կը ձգտի Ղ պետութեանց խորհրդաժողովին ներկայացնել անկատար դաշնագիրներ Խաղաղ, Ռուսաստան, Պուլկարիոյ, Հունգարիոյ եւ Ֆինլանդիոյ հետ, պիտի յանդի հաշտութեան ոչ թէ մէկ, այլ երկու Ժողովներ գումարելու: «Ս. Միլոթեանը չի կրնար ընդունիլ որ հաշտութեան վերջնական խորհրդաժողովը պատրուի հակառակ դաշնակիցներու պատրաստութեան համար կնքուած համաձայնութեանց: Նմանապէս բացօթյա է թէ ամերիկեան պատուիրակութեան այս առաջարկը, որուն ձայնակցեցաւ բրիտանական պատուիրակութիւնը, առ հասարակ ոչ-ցանկալի հետեւանքներ պիտի ունենայ զարգացնելու համար բարեկամական յարաբերութիւնները այն ազգերուն միջեւ որոնք կ'ուզեն հաստատուել խաղաղութիւն մը հիմնել»:

Պ. Մոլթով յետոյ բացատրեց թէ այն պետութիւնները որ ստանձնեցին յօրինել հինգ պետութեանց դաշնագիրները, համաձայնեցան բոլոր կազմակերպիչներու մասին — զինուորական սոց. մոմ, հատուցումներ եւ: Գալով Դանուբի նաւարկութեան, այդ խնդիրը քանի մը անգամ քննարկուած է եւ եթէ կ'ուզեն բարեկամական յարաբերութիւնները ամբարպնդել զանուրեան երկիրներու հետ, կարելի չէ հարցը քննել առանց անոնց մասնակցութեան: «Նպատակաւորաբար չէ որ կարգ մը ոչ - դանուբեան երկիրներ իրաւունք ունենան պարտադրելու կարգուսարք մը որ հաշուի չառնեն այդ պետութեանց շահերը, մանաւանդ մեր Դաշնակիցներուն շահերը (Չիխուլովաբիա եւ Եուկոսլաւիա)»:

«ԿՈՒՉՆԵՆ ԻՐԵՆՑ ԿԱՄԻՐ ՊԱՐՏԱՆԵՐԸ»

Իտալական հատուցումներուն ակնարկելով, Մոլթով ըսաւ թէ Ֆրանսայի զինուորները արշաւեցին խորհրդային երկիրը, հիթլերականներուն հետ եւ ահռելի աւերներ գործեցին: Յետոյ Եուկոսլաւիա, Ալբանիա եւ Յունաստան արշաւելով ոչ նուազ ահռելի վնասներ պատճառեցին այդ երկիրներուն, հետեւաբար Իտալիա պարտաւոր է հատուցումներ վճարելու: Ս. Միլոթեանը նկատի առնելով Խաղաղ աշակցութիւնը Դաշնակիցներու գաղտնի, «հարիւր միլիոն տոլարի շատ համեստ գումարին իջեցուց իր հատուցման պահանջը», բայց միեւնոյն ատեն կը պահանջէ որ 200 միլիոն տոլար վճարուի Եուկոսլաւիոյ, Յունաստանի եւ Ալբանիոյ: Փարիզի խորհրդաժողովին մէջ խորհրդային պահանջներուն ձայնակցեցաւ միայն Ֆրանսական պատուիրակութիւնը: «Եթէ զուրաշն միջամտութիւն չըլլայ, Ս. Միլոթեանը եւ Իտալիա կրնան առանց մասնաւոր դժուարութեան համաձայնութեան մը յանդիլ հատուցումներու մասին»:

Ուրիշ զանգատ մը անդլեւաբոսն դաշնակիցներուն դէմ. — «Կարգ մը ամերիկեան շրջանակներ կը ձգտին օգնուաւային եւ նախային խարխիւններու համաշխարհային ցանց մը հաստատել, աշակցութեամբ իրենց բրիտանացի բարեկամներուն: Մինչ պատերազմի ատեն, Եւրոպայի, Թէհրանի եւ Փոքրամի մէջ տեսակէտներու ներդաշնակցութիւն հաստատուեցաւ եւ որոշումներ տրուեցան կատարելով ազատութեամբ եւ բոլորին մասնակցութեամբ, հետզհետէ բացուած կ'երեւայ թէ կարգ մը պետութիւններ այժմ կը շնորհակալ իրենց կամքը պարտադրել ուրիշներու...»: Եւ մասնաւորապէս շեշտեց թէ Մեծն Բրիտանիա եւ Մ. Նահանգները «ոչ թէ խաղաղութեան յարձակողական մը կը վարեն, այլ յարձակողական պայքար մը Ս. Միլոթեանի դէմ: Բացօթյա է այդ ահաբեկումներուն կատարելով վրիպումը: Միացեալ Ազգերու Կազմակերպութիւնը հատուցումներ խնդիրներու կարգադրութեան մէջ խրելու փորձերը ուրիշ հետեւանք չեն կրնար ունենալ եթէ ոչ խախտել անոր հեղի-

նակութիւնը: Կարգ մը օտար շրջանակներու մէջ կը փորձեն վնասել Ս. Միութեան միջազգային վարկին, եւ սակայն ճախողման մատնուած են այդ փորձերը: Այդ շրջանակները չեն կրնար հասկնալ թէ Ս. Միութիւնը, որ ամէնէն դաժան պայքարը մղեց մարդկութիւնը Փաշախան բռնակալութեան փրկելու համար, այժմ իրաւամբ միջազգային դերակրու մէջ կը դրաւ զերթ մը որ կը համապատասխանէ մեծ եւ փոքր պետութեան շահերուն, անոնց խաղաղութեան եւ ապահովութեան բաղձանքին»:

Իսմար Բնակիչ Կարսի մէջ

Թուրքիոյ հանրապետութեան նախագահը, որ այս միջոցին պտոյտ մը կը կատարէ արեւելեան նահանգներուն մէջ, ընտրական պայքարի առթիւ, երկուշաբթի օր կարեւոր ճառ մը խօսեցաւ Կարսի մէջ: Ըսաւ թէ Թուրքերը կը հաւատան որ անմէջ խօսքեր չեն Միացեալ Ազգերու դաշինքին մէջ արձանագրուած բաները, — իրաւունք ազատութեան, հողային ամբողջութեան եւ անկախութեան. (Յաւազ. — Միայն Թուրքիոյ համար): Յետոյ բացատրեց թէ «Թուրքիոյ զերթը, որ հիմնուած է իր պատիւին եւ իրաւունքներուն վրայ, հասկցուած է այն ազգերուն կողմէ որոնք կը ծանչնան օրէնքը եւ արդարութիւնը: Այն ազգերը որ կրնան ոչինչ չապնել նահանջականները եւ դաւադրները, շնորհիւ իրենց ազատ դատարաններուն եւ խոհարարներուն — թեան, պիտի ապացուցանեն իրենց ապրելու իրաւունքը: Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքին եւ անկէ վերջը մեր սահմանամերձ շրջանները այս առթիւ ապացուցին իրենց արժանիքը որով հպարտ ենք բոլորս»:

Իսմէթ Ինէօնիւ յետոյ շնորհակալութիւն յայտնելով Կարսի ժողովուրդին, խնդրեց միեւնոյն հաստատակամութիւնը եւ հաւատքը ցուցնել յառաջիկայ ընտրութեանց մէջ:

Ռիթէրի զորմակարութիւնը հաղորդելով այս հեռագիրը, կը յիշէ թէ խորհրդային - հայ բան - բերներ կը պահանջեն Կարս - Արտասանի շրջանը, հիւսիսային - արեւելեան Թուրքիոյ մէջ, «շրջան մը որ Թուրքիոյ փոխանցուեցաւ առաջին համաշխարհային պատերազմէն վերջը»: Յետոյ կը բացատրէ թէ Կարսը, որ բանալին է Թուրքիոյ արեւելեան սահմանի պաշտպանութեան, կը տիրապետէ Պաթում ամառային հովիտին վրայ, — Ս. Միութեան երկաթուղիի եւ նաւթուղիի վերջին կայանը Սեւ Ծովու վրայ: Եւ վերջապէս կը պատմէ թէ Կարսը Թուրքիային առնուեցաւ ցարերու կողմէ, վերջին դարուն: Արտասանը կը գտնուի Կարսի հիւսիսային արեւմտեան կողմը:

Քրիստին կը հեռագրեն թէ քաղաքապետական ընտրութեանց առաջին արդիւնքներէն դատուելով, ընդդիմադիր կուսակցութեանց ձեռնպահութիւնը առ հասարակ յաջողած է: Ազգ. Վերականգնումի կուսակցութիւնը, միակ ընդդիմադիր հասանքը որ կը մասնակցէր ընտրութեանց, քուէ - արկութեան ատեն որոշեց ձեռնպահ մնալ, հաս - տատած ըլլալով թէ կառավարութիւնը ճշունակ կը բանեցնէ եւ ապրիլէն միջամտութիւններ կը կատարէ: Պաշտօնական արդիւնքները յայտնի չեն տակաւին, բայց օրուան լուրերէն կը հետեւի թէ կարգ մը քաղաքներու մէջ քուէարկողներու թիւը հազիւ 25 առ հարիւր կը հասնի, ուրիշ վայրերու մէջ, հազիւ կ'անցնի 50 առ հարիւրը:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԻՏԱՆԱԿԱՆ պատուիրակութիւնը ներկայանալով Չորսերու փոխանորդներու ժողովին, ծրագիր մը ներկայացուց որով կը պահանջէ Նիսը, ամբողջ Մոնաքոյի իշխանապետութիւնը, Մանթոնը եւ հողամաս մը Ալի-Մառիթիմէն: Եւ այդ պահանջը՝ ճիշդ երկու շաբաթ առաջ այն տարեդարձէն երբ Իտալիա կ'անջնայ զարկաւ ձրանսան, ինչպէս զիտի կուտան տեղական թերթերը, ոչ միայն «ձիժաղիւ, այլեւ զուարճալի» դռներով Իտալիոյ ձեռնարկը:

ԼԵՂԱՍՏԱՆ յանձն առած է ամսական 100.000 թոն անուիւն ճարել Ծրանասայի: Աճուիսի արտադրութիւնը 46—48 միլիոն թոնի պիտի հասնի 1946ին, որով այդ երկրը պիտի դառնայ ամենամեծ արտադրիչը Եւրոպայի մէջ: Ամսական արտադրութիւնը արդէն հասած է 3—4 միլիոն թոնի եւ միշտ կ'աւելնայ:

ՉԵՆՈՍՏՆԱՎԱՔԻՈՅ երեսի. ընտրութեանց մէջ, որ տեղի ունեցան կիրակի օր, համայնա - վարները շահեցան 7.000.000 քուէներէն 2.205.650 կամ 40 առ հարիւր, Պոհեմիոյ եւ Մորավիոյ մէջ, իսկ 30 առ հարիւր Սլովաքիոյ մէջ: Երկրորդ յաղթանակը շահեցան յիւստոսլաւական - ընկերվարականները (1.298.917 քուէ Պոհեմիոյ եւ Մորավիոյ մէջ): Երրորդ՝ ռամկավարները (պահպանողական): Վերջին լուրերու համաձայն, համայնա - վարները պիտի ունենան 115 երեսփոխան (1935ին ունէին 30), ընկերվարականները՝ 36, ազգ. ընկերվարականները՝ 55 են., 300ի վրայ:

ԳԵՐՄԱՆԻՈՅ ամերիկեան շրջանին մէջ ալ քաղաքապետական ընտրութիւններ կատարուեցան կիրակի օր եւ ամենամեծ թիւը շահեցան քրիստոնեայ ընկերվարականները (պահպանողական):

ՄԱՅԻՍ 28ի տօնակատարութեան առթիւ, այսօրուան (չորեքշաբթի) փոխարէն թերթը չորս է - չով լոյս պիտի տեսնէ վաղը, հինգշաբթի:

ՄԵՐ ԴՊՐԱՅ - ԴԱՍԸ

ՄԱՐՏԻՅԷԼ. — Երեւանի Ոստիկանական Պատմիչ Դպրաց - Դասու կազմութեան օրն է: Թաղական խորհուրդի հաւանութեամբ առտուն տեղի ունեցաւ հողեհանգրիս ի յիշատակ դպրիւններու և դպրութեան ծնողներուն, ինչպէս եւ հայ. եկեղեցւոյ ծառայող կրօնական եւ աշխարհական սպասաւորներուն: Պատարագեց Պատմիչ հողեւոր հովիւ Եղիշէ քահ. Միթիթարեան եւ կուս. քարոզող մը պանծացուց Կոմիտասի, Մէհտէրեանի, Չուհա - ճեանի, Եկմայեանի եւ շատ մը ուրիշներու մատուցած ծառայութիւնները:

Կէսօրէ վերջ կազմակերպուած էր ընտանեկան հաւաքոյթ մը խորհրդարանին մէջ: Ներկայ էին Եղիշէ քահ. եւ Թաղ. Սորհրդոյ ատենակալ Տրք. Յովհ. Փափաղեան: Դպրաց Դասու քարոզողը Պ. Յ. Նիկողոսեան դրաւ որ երկուսով մը ուրախութիւն յայտնեց որ տարի մը եւս բոլորած ենք սիրով եւ համերաշխութեամբ, երկար կեանք մաղթեց Ամենայն Հայոց կաթողիկոսին, շնորհակալութիւն թաղ. Սորհուրդին, դպրակալու եղբայր Լեւոն Ճէրահեանին եւ ձերուցի հայրիկին, կարայր Լեւոն Միթիկեանին: Եղբայր Յ. Ղազարեան ջուրհանգի վրայ քանի մը եկեղեցի կ'առնէր նուազեց ընկերակցութեամբ Տիկին Ա. Փափաղեանի: Տիկին Աստիկ Յ. Փափաղեան երգեց Կոմիտասի «Միջ Չարմանայի»: Թէյի սոյսարկու - թիւնը սիրով տարին եղբայր Ոստիկանական Մեթուրով Գաղտնահան: Ապա խօսք արուեցաւ Տրք. Յովհ. Փափաղեանի, որ մի առ մի թուեց մինչեւ այսօր կատարուած աշխատանքները, մանաւանդ դպրոց - սրահ մը շինութիւնը եկեղեցւոյ շրջափակին մէջ, Կրօնական Ընկերակցութեան հաւանութեամբ: Արդէն կը տեսնէք որ շէնքի հիմերը փորուած են, սակայն մէկ պարագայ կը յանձնեմ ձեր ուշադրութեան, — երէկ կային մարդիկ որ կը գնահատէին մեր այս ձեռնարկը ու պատրաստ - կամութիւն կը յայտնէին օժանդակելու իսկ այսօր դանազան հաշիւներէ մզուած խաչակրութեան սկսած են, վիժեցնելու համար մեր ձեռնարկը: Հաւաքոյթը վերջ գտաւ ժամը 7ին, փոխադարձ լաւազոյն մաղթանքներով: — Թղթակից

Համայնավար կուսակցութիւնը, որ կը յուսար կարեւոր յաջողութիւն մը շահիլ, միայն 47 ա - թոս ապահովեց 1025ի վրայ: ԾԱՆՌԱԿՇԻՒ ԽՆԴԻՐ ՄԸ Եւս ծագած է դաշնակցներուն միջեւ: Գերմանիոյ ամերիկեան շրջանին հրամանատարը որոշեց դպրոցները ճարտարագործական մեքենաներու եւս. առարկայով դէպի խորհրդային շրջանը, կրթեւ հաստուցում: Կարծողներ կան թէ այս կարգադրութեան հետեւանքով Չուրը կրնան իյնալ Փոքտամի մէջ տրուած որոշումները:

ԼԵՂԱՍՏԱՆ գէնը եւ ռազմանիւթ, ինչպէս եւ երկարատեւ վարկ պիտի ստանայ Ս. Միութեան: Անգլիա եւ Մ. Նահանգները որոշած են որ եւ է վարկ չորսամաղբիլ, զանազան մեղադրանքներով: ԱՐԱԲԱԿԱՆ Եթէր պետութեանց ներկայացուցիչները Գահիրէ հասան: Համապատասխան պիտի քննէ Եգիպտոսի եւ Պաղեստինի խնդիրները, մասնաւորապէս պահանջելով պարպել անդը. զօրքը: Եգիպտոսի վարչապետը ճառ մը խօսելով խորհրդարանին մէջ, ինչպէս որ Անգլիա փութացնէ իր բանակին պարպումը, առանց սպասելու բանակ - ցութեանց: «Լաւազոյն միջոցառումը պիտի պար - վաւի, երբ անգլիական զօրքը հեռանայ եւ Եգիպտոսի ժողովուրդը անգամ մը եւս համոզուի թէ կատարելապէս ազատ ժողովուրդ մըն է»:

ԱՆԳԼԻԱ ԵՒ Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐԸ նոր ծանուցադիր մը ուղղեցին Ռուսներէ, առաջարկելով փութացնել երեսի. ընտրութիւնները:

ՄԱՌԷՇԱՆ Թիթօ Մոսկուա դնաց, խորհրդակցելու համար:

ՀՌՈՍԷՆ կը հեռագրեն թէ նոր - Փաշախան վարիչ մը, որ ձերբակալուած էր Միլանի մէջ, յայտնեց է թէ 25.000ոց զաղանի բանակ մը կազմած են: Բանուած փաստաթուղթերէն կ'երեւայ թէ այս բանակը բաժնուած է 500 հողիւնոց վաշտերու որոնք կրնան շարժուած մէջ գրուիլ 4 ժամէն:

ԿՈՎԿԱՍՏԱՆ ԵՐԳԱՆՆԵՐԸ Յունիս 9, կիրակի ժամը 20.30ին Salle d'Iéna, 10 Ave. d'Iéna (métro Iéna, նախաձեռնութեամբ եւ հովանաւորութեամբ Տէր եւ Տիկին Մարիապետին, Պ. Պ. Թոնաւեանի եւ Եւանգելիսի:

Առաջին անգամ ըլլալով փարիզահայ հասարակութեան կը ներկայանայ Աղնաւորեան ընտանի - քը իր գաւակներով երգելու համար կողմաւոր եւ Քրաններէն երգեր: Երգախմբու պատկերներ Սա - յաթ Նովայէն, Անուշէն, Սոս Վարդիթերէն, Ա. շուր Ճիւլիանէն, Պերճ Պոչեանէն, Իսահակեանէն, Թումանեանէն, Ռօշ եւ Աղնաւոր իրենց յորինած երգերով: Երաժշտութիւնը կը ղեկավարէ Պ. Արա Պարթեանը:

Տոմսերը Աղնաւորի մօտ, 22 rue Navarin, Paris (9) Le Gérant: H. AGONEYAN Imprimerie DER AGOPIAN, 17 Rue Damesme - 13

Մայիս 28ը Փարիզի մէջ

Կը տօնուի Մայիս 29ին, իրիկուան ժամը 9ին մինչեւ առաւօտ, Petit Journalի մեծ սրահը, 21 rue Cadet. Métro: Cadet:

Կը նախագահէ ՀՐԱՆՏ ՍՍՄՈՒԷԼ (նախագահ Գաղթ. Խորհուրդի):

Կը խօսին ՇԱՍԱՐՇ ՄԻՍԱԲԵԱՆ M. COTTEREAU եւ M. HENRI BARRÉ (S. F. I. O.) Եւ ՅՈՒԼԻԱ ԵՂԻՍԱՐԵԱՆ

Գեղարուեստական բաժնին կը մասնակցին Օր. ԱՍՏՂԻԿ ԱՌԱՔԵԼԵԱՆ (Երգ), Պ. ՅԻԼԻՓ ԱՂԱՍԱՐԵԱՆ (Չուրի), Պ. ԳԱՐԵԳԻՆ (Թառ), Օր. ԱՃԷՄԵԱՆ (Երգ), Բ. ՀԱՊԷՇԵԱՆ եւ Չ. Գա - րիՊԵԱՆ (արտասանութիւն), ԱՐՄԵՆԻԱ ՎԱՐ - ԿԱՉ (պար): Պարերը կը վարէ ՌԱՏԻՈՅԻ ՆՈՒԱ - ԳԱՆՈՒՄԲԸՂ, ղեկավարութեամբ Raymond Verneyի: ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՐ (Օր. Հրաւիր Չուրի): Երեկոյցին կը մասնակցին նաեւ Փարիզի ՀԱՅ - ԿԱԿԱՆ ԵՐԳԱՍՈՒՄԲԸՂ, ղեկավարութեամբ Պ. ԱՐԱՅ ՊԱՐԵՆԻՍԵԱՆ:

ԾԱՌԹԵՐՈՒ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆ: ՃՈՆ ՊԻՒՅԷ:

ՍԷՆԹ ԷԹԻԷՆԻ ՄԷՉ Այս կիրակի Կը խօսի ընկեր ՌԱՉԻԿ ՄԿՐՏԻՉԵԱՆ: ՌՕՄՆԵՐԻ մէջ մայիս 30ին, իրիկուան ժամը 8ին, ընկերվարականներու սրահը: Կը խօսի ընկեր ՀԱՅԿ ՍԱՐԳՍԵԱՆ:

ՓՈՆ ՏՕՊԵՆՍԻ մէջ Յունիս 2ին: ՍԷՆ ՇԱՄՈՆԻ ՄԷՉ, նախաձեռնութեամբ Հ. Յ. Գ. Վարուժան կոմիտէի, մասնակցութեամբ, Նոր Մերուրի վարդէս խումբի եւ Ֆր. Կ. Ոստիկաններուն: Յունիս 2, կիրակի կէսօրէ վերջ ժամը 3ին Սալ ժան Կարէ սրահին մէջ: Կը խօսի ընկեր ՌԱՉԻԿ ՄԿՐՏԻՉԵԱՆ

Գեղարուեստական ճոխ բաժնի: Կենդանի պատկեր մը եւ ուրիշ անակնկալներ: Մուտքը ազատ է ՄԱՅԻՍ 28Ը ՏԷՄԻՆԻ ՄԷՉ

Նախաձեռնութեամբ Հ. Յ. Գ. Նոր Սերունդի եւ հովանաւորութեամբ Հ. Յ. Գ. կոմիտէին: Այս Շաբաթ իրիկուն, ժամը 8ին, Հ. Յ. Գ. Տան մէջ: Կը նախագահէ ԸՆԿԵՐ Թ. ՀԵՐՈՅԵԱՆ, կը խօսի ԸՆԿԵՐ ՀԱՅԿ ՍԱՐԳՍԵԱՆ:

Պիտի մենեղեան Տիկիններ. — Մ. Կարապետեան, Մ. Հարկեան, եւ Ա. Պոյանեան, խմբիկ եւ արտասանութիւններ նոր Սերունդի ազգային, ինչպէս նաեւ «Հայրենիքի համար» բառերախա - րը, մէկ արար եւ մէկ պատկեր:

Հանդէսէն վերջ ընկերվարական-համակրական խնջոյք Հ. Յ. Գ. Տան ներքաշարկը: Մուտքը ազատ է: ՄԱՅԻՍ 28Ը ՎԻԷՆԻ ՄԷՉ

Նախաձեռնութեամբ Հ. Յ. Գ. կոմիտէի, այս կիրակի կէս օրէ վերջ ժամը 2.30ին քաղաքապետարանին սրահին մէջ: Կը նախագահէ Հ. Կ. ՏԵՐ - ՄՈՅԵԱՆ, կը խօսի ԸՆԿԵՐ ՀԱՅԿ ՍԱՐԳՍԵԱՆ: Խօսք պիտի անեն ընկերվարականներու ներկայացուցիչը եւ ընկեր ՄԻՍԱԲ ՄԻՐՉԷ (Իրոնէն): Գեղարուեստական բաժնին կը մասնակցին Տիկին Պ. Ախարոնեան (Իրոնէն, երգ), Օր. Տէրվիշ - եան (Շասէն, երգ): Մասնաւոր պատրաստուած պարեր սանուհիներու կողմէ: Նուազախումբ եւս:

Երգաձանդեւ

Օր. Ծովիսար Տ. Պետրոսեանի (Իրոնի Օփերայէն) Սալ Կապոյի մեծ սրահին մէջ, 47 rue de la Boétie (métro: Miromesnil): Յունիս 16ին Կիրակի ժամը 14ին: Յայտադրին մէջ հայկական եւ եւրոպական կատրներ:

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ, ՀԱՅ ՆՊԱՐԱՎԱՃԱՌՆԵՐ Փորձառու անձերու կողմէ նոր բացուած է նպարեղիքի մեծաբանակ վաճառանոց մը, ուր միշտ պատրաստ կը գտնուին արեւելեան ու եւրոպական նպարեղիքներ եւ չոր միւրդեր, ֆիքսաշ-վէտք, Իզմիրի անկուս չամիչ, պուքար եւայլն: Մանրամասն տեղեկութեանց եւ ազլա - պրանքներու համար դիմել՝ PRODUITS ALIMENTAIRES (Gros, demi gros) Importation directe NAJARIAN & CASSABALIAN 12 Rue de l'Arc, Marseille Tél. Colbert 87-69

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԵԾ ՃԱՇԱՐԱՆ Տնօրէններ ԳԼԷՄԱՆ ԵՒ ԳՕՓԱՐԱՆԵԱՆ 6 rue Maubeuge, Paris (9), Métro Cadet, Notre Dame de Lorette: Tél. TRU. 85-47 Առաջնակարգ օշի եւ ամէն տեսակ ըմպելի - ներ, ընտիր աղանդեր, պոյսական կերակուրներ եւ անուշեղէն: Ընդարձակ եւ օդաւէտ սրահ: Ամէն երեկոյ ժամը 7ին սկսեալ Գեմանչիտ ՅՈՎ - ՀԱՆԷՄ, ուսի ԱԼՅՅՈՆՍ եւ երգիչ ԱՐԹԱՔԻ կը նուազեն եւ կ'երգեն հայկական եւ արեւելեան եր - գեր: Գոց է Չորեքշաբթի օրերը:

ՄԵՐ ԽՕՄՔԸ

ԱՐԻՒՆՈՎ ԵՒ ԱՐՑՈՒՆՔՈՎ

— «Հայեր, շտապեցե՛ք հայրենիքն ազատել — լուսնի և քաղցի, երբ իրաբանները Հայ, մոռնալով իր անձնականը, յանուն Մեծ Գործի՝ հայրենիքի փրկությանը ելն են իր կնոջ ու աղջիկների պատուի պաշտպանության համար պիտի գործ դնեն իր վերջին նիզը, բռնամուկ հարուածելու:»

... Հայեր, ժամանակը չէ դանդաղելու: Բայց մինչև 50 տարեկան հասակ ունեցողները պարտաւոր են գեներալ տակ գալու: Ես պահանջում եմ բոլորից ներկայանալ իրենց գեներալ ու փամփուռներով հայրենիքի պաշտպանության համար:»

Ծերունի զորավար մըն էր, Սիրիկեան, որ այս մարտահոյքը կ'ուղղէր Հայաստանի ժողովուրդին: 1918 Մայիս 24ին, իբրև ընդհ. հրամանատար:

Եւ ժողովուրդը ուղիղապես նետուեցաւ արտակարգ վճռահանութեամբ, յանձն առնելով ամեն զոհողութիւն:

Ինչ կը մնար, մահէն անդին, երբ թշնամին կը սպառնար ամբողջ երկրի տարածութեան վրայ:

«Թէ ապրիլ պէտք է, ապրիլնք. թէ մեռնիլ պէտք է, մեռնիլնք»:

Մեր ժամանակակից պատմութեան մէջ դեռ ուրաք է գտնել շրջան մը, ուր ամբողջ ժողովուրդը մը այնքան յանդիմութեամբ գրոհ տուած ըլլայ զերազանց ուժերու դէմ, ի խնդիր զոյուեան եւ ազատութեան:

1915ին ունեցանք անմոռանալի հերոսամարտներ, ուր ամբողջ քաղաքներ կրակը նետուեցան, միեւնոյն մտահոգութեամբ: Նետուեցան եւ զոհուեցան: 1918ի մայիսեան գոյամարտը անոնց թաղ ու պսակն էր, յաղթանակով պսակուած:

Կիրակի օր, Սարաւարապատի, Ղարաբերկի եւ Բաշ — Արարանի զոհերու յիշատակին նուիրուած հողեհանդիսութիւն տարին Արաքսի մոտ: «Նոր Վարդանանց» կը կոչէր այդ օրհասական ճակատամարտը, եւ անոր Ղեկնդր երէցը՝ Կիլիկիոյ ներկայ կաթողիկոսը, որ ձի նստած, մէկ ձեռքը խաչ, միւսը ձեռքուր, կը շրջէր բոլոր ճակատները եւ կը խրատուէր զինուորները: «Իսկ իբրև Վարդան Մամիկոնեան հանդիսացաւ ինքը՝ բովանդակ հայ հերոս ժողովուրդը»:

Ու կը պատմէր, իբրև ահաւատեալ —

Երբ, ետօրեայ կռիւներէն եւ յաղթանակէն վերջ, Թուրքերը հարկադրուեցան վերստի ընդհատուած բանակցութիւնները եւ ճանչնալ Հայաստանի անկախութիւնը, Մասիսայի խորհրդային կառավարութիւնը առաջինն էր որ իր պաշտօնական հեռագրով, յանձնաժողովի եւ Սթալինի, Գրիգորի Հայաստանի անկախութիւնը: Անոնք ուրախութիւն կը յայտնէին որ հարստահարուած եւ հայրենական հայ ժողովուրդը, զարբերու ստրկութիւնէն վերջ, կը վերագտնէ իր ազատութիւնը եւ անկախութիւնը: Այդ պատմական հեռագիրը ըստ տեսաւ այն ատեն Մոսկուայի երկու պաշտօնական օրհաններուն, Փրավտայի եւ Իզվեստայի մէջ:

Առանց այս վկայութեան ալ, զիտեմք որ խորհրդային իշխանութիւնը 1920ի զարման Մոսկուա կը հրաւիրէր Հայաստանի հանրապետութեան պատուիրակութիւնը, նախագահութեամբ Լեւոն Գանթի, բանակցելու եւ համաձայնութեան մը յանդէսը համար:

Գիտենք, նաեւ, որ նոյն իշխանութիւնը յետոյ Երեւանի զրկեց մասնաւոր պատուիրակ մը, Լեւոնի, շարունակելու համար բանակցութիւնները:

Թողունք պատմութիւնը, որ շատ հետունները պիտի տանէր մեզ: Եւ անգամ մը եւս յայտարարենք, ի լուր բոլորին, բոլորին: Մանաւանդ մտքով եւ սրտով «պրոլետար»ներուն —

Ինչ որ ՀՍՍՌ կը կոչենք այսօր, ծնունդն է ահաւոր, անմահ, հերոսական երկունքի մը: Արիւն եւ արցունք:

Այս, նորածինը «ո՛րք» մըն էր որ «գաւաթ մը ջուր տուող ջուներ իր սնարին վերեւ»:

Բայց դուք ի՞նչն է որ կը ծաղրէք, պարոններ:

Այդ անտէր ո՛րքը, որ այսօր դարձեր է 26 տարեկան պարմանի մը: Որ ծնաւ լեբան մը ստորոտը, մտքի մը տակ, շրջապատուած անհնարին խոչընդոտներով, տառապանքներով ու դաւերով: Եւ որ սակայն, ընդամենը երեսուն ամսուան մէջ, իր յաջորդներուն ձգեց թանկագին ժառանգութիւն մը, — Նախ 42000, յետոյ 29000 ք. քիլոմէթր տարածութիւն, պատմական դաշնագիր մը եւ դէպ մը միջազգային վաւերագիրներ, որոնց հիման վրայ այսօր Հայկ. Դատ կը հետապնդեն մետասաներորդ ժամու իմաստուններ: Շ.

Անկուսակցականի մը ձայնը

Մայիս 28ը նոյնքան համազգային տօն պէտք է ըլլայ Հայերու համար որքան Ապրիլեան Ազատունը: Այստեղ կուսակցական կուր չկայ: Անտեղի է բաժանում կամ դէմ դէմի սուր ճօճելը: Իրական կէտ մը կայ որ կը շփոթենք — Մայիս 28ին Հայը կուսեցաւ միմիայն իր զարաւոր թշնամին՝ Թուրքին դէմ որ զինքը բնաջնջել կ'ուզէր: Հայը չկուսեցաւ Հայու դէմ: Եւ Մայիս 28ի յաղթական պայքարին մէջ անկասկած որ կուսեցան նաեւ ոչ Դաշնակցական Հայեր: Ուրեմն Դաշնակցականի եւ համայնավարի կուր չկայ մեր մէջ այլ Հայի ու Թուրքի կուր: Այն բոլորին երբ Դաշնակցական կառավարութիւնը տեսաւ որ համայնավար հայ կառավարութիւն մը կ'անցնի դործի գլուխ, անոր թողուց իշխանութիւնը: Բայց հայկական հանրապետութեան հիմը դրուած էր Մայիս 28ի յաղթանակով, տարուած Թուրքին դէմ:

ԶԻԹՈՒՆԻ

Խ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՆՈՒԷՐ ԲԱՐԵՎԱՄԻՍ

Հեռու ավերի իմ բարեկամին Ի՞նչ ֆաւրեմ Հայոց հողի խնկելի, Մի ջինջ այլ՝ քը չքնալ Սեփանի, Թէ մի շարանը Մասիի ամպերի:

Թէ՛ ֆաւրեմ նրան մի ծառ ծիրանի՝ Արշալոյսների ժայիսը վրան, Որ բարեկամն ջերմ փառարանի Բանաստեղծական ծաղկումը նրա:

Թէ՛ Արարատեան հովտի ծաղկունքի Պայծառ արտերից ես հնձեմ մի խուրձ, Համբեմ եղբորս տրուութեամբ անգին, Սեղանին նրա վառի, որպէս բոց:

Մէք Արարատի աստղային ձիւնից ես ֆաւրեմ մի շե՛քալ, իբրև քանկ ընձայ, Թէ մի սուրբ ֆուլայ հայրենի ծախից, Որ օտար ավին ընկերս ցնձայ:

Հայրենի լնի այլքը ֆաւրեմի Տօք արեւի տակ կոզգիւնայ, Կհողմավարուի երամբ ամպի, Պոկուած ծաղիկը շուտ կ'ահանայ:

Ձիւնի շերտիկը հանց մոմ կ'ալայի, Կլայ շոգ փոշում հեռու ֆաւրեմի, Կցնդի ծուխի փաթիլը վնիս՝ Պոկուելով կ'ապոյտ շուրթից երիկի:

Եւ ես գնացի դաշուն Արարատեան՝ Եւ ծուր իջայ լոյս ստեղծի ամպի՝ Հայոց հասկերի հասուն, ցոլցա՛ն Մի ավի հող առայ գորովով անտակ:

Եւ ծրարեցի այդ հողը մի ավի, Եւ մի կուրկի տուեցի տանի: Ծովերով անափ, մովերով անափ Հեռու՛ — հեռաւոր իմ բարեկամին:

Նա հոգու հոգում բող գգայ յաւէտ՝ Այդ հողում է հայ ցարեանը հասնում, Հախց Հրազդանի ջուրը լուսաւէտ Հարթավայրերով հիացում հոսուն:

Այդ սուրբ հողին է մայիսեան մեղուն Ապոլ ծաղկունքից ֆաւրեմ մեղր անուշ, Փեթակների մէջ ժրպան գեղում, Ինչպէս խունկ, ինչպէս լուսնային լոյս:


Այդ սուրբ հողից եմ խոյսեցի երկինք Ողջ ուտանները մեր վեհաբանակ, Եւ տանարները անմահ գեղեցիկի, Եւ կոթողները մտքի անխորտակ:

Որ էլ դու լինես, պանդուխտ բարեկամ, Միշտ յիշիր սրտում քա կարօտայու Հայ սուրբ հողի՛ք է հարկը հայրական, Մայր Հայաստանին է օրհանդ անուշ:

Այս սուրբ հողին է հնչում անկաշկանդ, Հայ լեզուն — գարնան բարեբեր անձրեւ, Հայ խօսքը — ամրան ոսկեղէն մի հանդ, Հայ երգը — անտառ գրուխտատերու:

ԱՇՈՏ ԳՐԱՇԻ

ԽՕԲ. — Ոտանաւորին գլուխը՝ հետեւեալ ձօնը. — «Արտասահման հայութեանը, որ խանդավառութեամբ կուսեցեց զենեղալ Բաղրամեանի անունն տանկային շարասիւնը»:



Ա Ր Ա Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԴԻՐԸ
1,370,000,000 ՏՈՒՆՆԵՐ
ՎԱՐԿ ՅՐԱՆՍԱՅԻ

Յրանսայի եւ Մ. Նահանգներու ներկայացուցիչները Մայիս 28ին ստորագրեցին պայմանագիր մը որով 1,370,000,000 տոլարի (342,500,000 ամերիկեան դոլար) վարկ մը կը բացուի Յրանսայի: Այս դոլարին 650 միլիոն տոլարը պիտի յատկացուի զինուորներու: Պայմանագիրը միեւնոյն ատեն կը ջնջ պատերազմի պարտքերը:

Վարչապետ Կուլէն եւ Պ. Թրումըն հաւաքական յայտարարութեամբ մը հաղորդեցին թէ այժմ բանակցութիւններ կը կատարուին, յաւելուածական վարկի մը համար որով 80—85 նաւեր պիտի դրնուին, համազումար 750,000 թոն տարողութեամբ: Յայտարարութիւնը կ'ըսէ նաեւ թէ Մ. Նահանգները պիտի աջակցին Յրանսայի, որպէսզի կարենանայ բաւարար չափով զերմանական անուշ ստանալ: Ամերիկեան կառավարութիւնը պիտի փորձէ նաեւ Յրանսայի բաժին հանել Գերմանիոյ եւ ճապոնի առեւտրական նաւերէն: 650 միլիոն տոլար փոխառութեան համար Յրանսայ պիտի վճարէ տարեկան 2 առ հարիւր տոկոս, 1947-ից 15 տարեկան, մինչեւ 1950:

Հաւաքական յայտարարութիւնը կ'ըսէ թէ Մ. Նահանգները անհրաժեշտ կը դանեն վարկեր տրամադրել Յրանսայի, որպէսզի կարենայ վերադիմել եւ արդիացնել իր տնտեսութիւնը, վերադառնալ իր տեղը իբրև արտադրող եւ ստեղծարար մեծ ազդեւն: Յրանսական պատուիրակութիւնը վերաշինութեան ծրարի մը ներկայացուցած է որուն անմիջական նպատակն է Փրանսական արտադրութիւնը հասցնել նախապատերազմեան մակարդակին, իսկ վերջնական նպատակը՝ յարմարել վերջին տասնամեակներու արհեստագիտական յառաջընթացութեան: Մ. Նահանգները կը հաւաստեն թէ երկու կառավարութեանց զործակցութիւնը կ'ապահովէ իրականացնելու համար այն տնտեսական նպատակները որ պիտի ապահովեն աշխարհի խաղաղութիւնը: Այս առաջադրութեամբ, պիտի կրճատուին մաքսատուրքերը, պիտի վերահաստատուի անհատական առեւտուրը Յրանսայի եւ Ամերիկայի միջեւ, պիտի աւելնան Փրանսական արտադրութիւնը եւն:

Համաձայնութեան ստորագրութենէն անմիջապէս վերջը, Մ. Նահանգներու արտաքին նախարարը ճառ մը խօսելով, յայտարարեց թէ համաձայնութիւնը կ'ապահովէ երկու երկիրներուն կատարեալ զործակցութիւնը եւ բարեկամութիւնը: Լէոն Պլում երէկ մեկնած է Նիւ Եորքէն եւ Փարիզ կը սպասուի այսօր: Բաղաքական շրջանակներու մէջ մեծ յաջողութիւն մը կը նկատեն այս համաձայնութիւնը:

Զոջեռու պայտար

Մ. Նահանգներու արտաքին նախարարը ունկնդրութեան ընդունելով մամուլի ներկայացուցիչները, հերքեց Մոլոթովի կողմէ կղած մեղադրանքները, որոնց ամփոփումը տուեր էինք երէկ: Նախ յայտարարեց թէ երբեք անգլուստերիկեան ճակատ մը կազմուած չէր Փարիզի խորհրդածոյսին մէջ, Խ. Միութեան դէմ յարձակելու համար: Հակառակ Մոլոթովի հերքումին, Պ. Պլումն պնդեց թէ Սթալին 1945 Դեկտ. 24ին հաւանութիւն յայտնած էր 25ամեայ դաշնագրի մը՝ Գերմանիոյ մասին: Թերթերը կը դրեն թէ Անգլիոյ արտաքին նախարարն ալ հրապարակաւ պիտի պատասխանէ

(Լուրերու շարունակութիւնը կարդալ Գ. էջ)

ԱԶԳԱՅԻՆ ՏՕՆԸ

1918 Մայիս 28ի տօնը Երևանում

(Արևմտահայ տպագրութիւնները)

Այս բախտորոշ օրերուն, երբ Հայաստանի սահմաններուն ընդարձակման հարցը օրակարգի վրայ դրուած է, «Մայիս 28»ի տօնակատարութիւնը մասնաւոր նշանակութիւն մը կը ստանայ:

Այդ է պատճառը, որ այս տարի ամէն կողմ մեծ հանդիսաւորութեամբ կը տօնուի Հայաստանի անկախութեան 28րդ տարեդարձը: Մեծ է այս առթիւ խանդավառութիւնը հայրենաբաղձ բոլոր Հայերու սրտին մէջ:

Հասած է այլևս ժամանակը, որ հայ ժողովուրդը քաղաքական հասունութիւն եւ դիտակցութիւն ցոյց տայ: Մէկը ի նետելով կուսակցական եւ հատուածական ամէն նկատում, ի մի բոլորով հաւաքաբար, համերաշխական միջոցառումներով մեծ տօնելու համար իր անկախութեան տարեդարձը: Այլևս «Մայիս 28»ին պէտք է տայ իր իսկական նշանակութիւնը: Անիկա Հայոց «Ազգային Տօն»ն է, այս բացատրութեան միջազգային իմաստով: Բոլոր քաղաքակիրթ ժողովուրդներն ալ ունին իրենց «Ազգային Տօն»ը: Անոնք այդ Տօնին շուրջ ոչ մէկ պայքար կամ մէջ կը յարուցանեն: Բոլոր մէկ սիրտ մէկ հոգի՝ հանդիսաւորապէս կը տօնեն զայն, մոռնալով սովորական ժամանակներու իրենց ներքին վէճերը, որովհետեւ այդ ժողովուրդները, գտնուելով քաղաքակիրթական բարձր մակարդակի մը վրայ, «Ազգային Տօն»ը գերիվեր կը նկատեն հատուածական ամէն շահերէ:

Երբ ժամանակ, երբ որոշ տարրեր փուճ փառարկութիւններով կ'ուզէին նսեմացնել «Մայիս 28»ի արժէքը եւ զայն կը նկատէին պարզապէս Դաշնակցական տօն մը: Ծառ մեծ պատիւ էր այս մեր հակառակորդներուն կողմէ՝ ուղղուած Հ. Յ. Դաշնակցութեան հասցէին: Կը յուսայինք թէ Հայոց «Ազգային Տօն»ին դէմ կատարուած խաչապահութիւնը այլևս պատմութեան պիտի պատկանէր: Թէ այդ պայքար ժամանակակից պէտք էր նկատել, ինչպէս նոյն տարրերու կողմէ ուրիշ համազգային տօներու եւ ազգ. սրբութիւններու դէմ մղուած հին պայքարները: Աւա՛ղ:

Աշխարհադրոշ վերջին պատերազմը տակաւին դիտակցութեան բարձրագոյն աստիճանին չէ հասցուցած այդ ծանօթ տարրերու այսօրուան ժամանակորդները, որոնք սակայն, պէտք է անկեղծօրէն խոստովանուի, որոշ յառաջդիմութիւն բրած ըլլալու ապացոյցը ցոյց տուին վերջին տօններու, նոյնիսկ իրենք ստանձնելով նախաձեռնութիւնը Ապրիլեան Սղահանդէսին ու Թրքահայ Դատի պաշտպանութեան:

Այս յառաջդիմութիւնը շատ բարենշան է եւ մեծ յոյսեր կը ներշնչէ ապագային համար: Բայց մը եւս՝ եւ մենք մտածենք որ իրենք պիտի ստանձնեն «Ազգային Տօն»ի համազգային տօնակատարութեան նախաձեռնութիւնը:

Ու այդ օրը իսկապէս համազգային տօն պիտի ըլլայ հայ ժողովուրդին համար, որ վերջապէս հասած պիտի ըլլայ դիտակցութեան ու քաղաքական հասունութեան բարձրագոյն աստիճանին:

Որովհետեւ, «Մայիս 28»ը իսկապէս համազգային տօն է: Անիկա ոչ Դաշնակցականին մենաշնորհն է, ո'չ հնչակեանին, ո'չ ոսմակաբարին կամ համայնավարին, անիկա հայ ժողովուրդին տօնն է:

Այն միակ փաստը՝ թէ հայ ժողովուրդը՝ երկար դարեր անկախ կեանքէ զրկուելէ եւ վայրենաբարոյ բռնակալներու ճիրաններուն մէջ կեղծօրէն ու զրկուելով, 1918 Մայիս 28ին է որ վերագտաւ իր ազատութիւնն ու անկախութիւնը, բաւական է այդ թուականը անձնօրէի տառերով դրոշմելու Հայոց պատմութեան էջերուն մէջ: Մէկ զաղափարի՝ եւ մէկ նշանախօսքի շուրջ համախմբելու հայութեան բոլոր տարրերը:

Մեր դարաւոր դահիճը Ապրիլեան Եղեռնով կ'ուզէր բնաջնջել հայ ժողովուրդը եւ ընդմիջտ թաղել Հայկական Հարցը, որ ուրիշ բան չէր՝ եթէ ոչ հայ ժողովուրդին ապահովել ազատ ապրելու իրաւունքը իր հայրենի, պայծառական, դարաւոր, պատմական հողերուն վրայ:

Հայ ժողովուրդը, դիտակցութեան հասած 19րդ դարը վերջերս, իր ծոցէն ծնաւ յեղափոխական կուսակցութիւնները, որոնք իրենց դրօշին վրայ արձանագրեցին «Մահ կամ Ազատութիւն» նշանաբանը: Այդ դրօշին տակ մեռան հազարաւոր հերոսներ: Այդ նշանաբանին զոհուեցան աւելի քան մէկ միլիոն հայ նահատակներ: Ու այն պահուն՝ երբ ամէն յոյս կորած, ամէն լոյս մարած կը կարծուէր, հայ ժողովուրդի զաւակները, ամէն դասակարգէ ու ամէն դասակարգէ, նետուեցան անհաւասար կռիւի ասպարէզը եւ 1918ի մայիսեան պատմական ճակատամարտներուն մէջ՝ խոնարհեցուցին մեր պատմական թշնամին, որ պարտաւորուեցաւ ճանճալ անկախ ու ազատ Հայաստանի մը դոյրութիւնը:

Այդ օրն էր, որ սարուկ եւ հպատակ ժողովուրդէ մը կերտուեցաւ ազատ պետութիւն, անկախ հայրենիք, ընկերավարական - ժողովրդապետական ազատամարտ սկզբունքներով: Այդ օրն էր, որ հայ ժողովուրդը աշխարհի բարոյսին վրայ դժեց «Չորստամիջի Հանրապետութիւն»ը, շատ նեղ սահմաններով, ճիշդ է, բայց որոնք ընդարձակուեցան հետզհետէ քանի մը ամիս վերջ: «Հայաստան»ը

Հայաստանը տնքում էր արիւնքամ եղած բիրաւոր վէրքերից: Անարգ թշնամու օղակը սեղմել էր նրա պարանոցը եւ սպառնում խեղդամահ անել բոլորովին: Թրքական թնդանօթների փողերն ուղղուած էին շեշտակի Հայաստանի սրտին: Մի պահ թուլութիւն, կամքի ու վճռականութեան տատանում եւ անդօրութիւն՝ թշնամու յաղթական փողը պիտի հնչէր Երևանի փողոցներում, վերջ տալով հայութեան վերջին անկիւնին, վերջին շունչին ...

Հինք ու զրահի շահիւնից, ուղղակի խանդալտ երգերի թնդումից կարծրացել էր Երևանի միջոցառում... Կանաչք ու աղկերք, ծերունիներ, ցուպերին կրթնած՝ մանուկներ հետ շրջապատել էին ռազմազառ մեկնող մարտիկներին, իրենց օրհներգը կարգաւոր, վերջին խօսքն ասելու... Հայ օրիորդը հրախառ դէմքով — «Ահա եղբայր քեզ մի դրօշ» խօսքերի տակ, երգելով, նուիրում է ժողովրդական բանակին եռագոյն դրօշը: — «Մեր պատի՛ւր... մեր համո՛ւր... չմոռնաք» կանչերի, զրկախառնուած՝ արցունքի, լացի, յուզումի, դայրոյթի, վրէժի նշաններով, խանդավառ երգերի ու կրակոտ ճառերի տակ, ճանապարհ էին դնում հայրենիքի հիմքը կերտող կտորիներին:

Միւս կողմից սովի ու համաճարակի աւերիչ ոգին սոււանում էր երկնակամարի վրայ, եւ իւր հունձքը կատարում անասօրէն... Հազարաւոր մարդիկ զալարում էին սովի ճիրաններին մէջ եւ ճանձերի պէս պատերի տակ թափուած, հիւժուած ու կիսամեռ, ձեռքները մեկնում անց ու դարձ անողններին եւ հաղիւ լսելի ձայնով — «Հա՛ց, հա՛ց» մրմնջում ...

Մզաւոր սայլերն իրենց ոսկրացած ձիերով կրում էին անընդհատ փողոցներից դիակներն այլանդակուած ու անհնչացած եւ թափում եղբայրական դերքամանների մէջ...

Ազգայնների երամները, քաջալերուած դիակների հոտից, ամէն օր, երբ միջնաշարը վրայ էր հասնում, իրենց անախտօք ու շարադուշակ ձայներով սոււանում էին Երևանի կենդանութեամբ գտնուող այդու վրայ ու յաղթականօրէն բազմում ծառերին վրայ, ահ ու դող ներշնչելով հայ սնուտապաշտ տարրերին:

Եւ այդ օրհասական ու ողբերգական օրերին անգամ, Հայի անկուռն ու յուսատու ողին

դարձաւ շօշափելի իրականութիւն եւ ոչ թէ աշխարհագրական բացատրութիւն մը՝ որուն դատապարտուած էր 1375էն ի վեր, երբ Կիլիկեան բերդերուն մէջ ջախջախուեցաւ վերջին հայկական անկախ թագաւորութիւնը:

1920 յունուարին յաղթական դաշնակիցները իրաւականօրէն ճանչցան Հայաստանի Հանրապետութիւնը, որուն ներկայացուցիչը՝ Աւետիս Ահարոնեան՝ 1920 Օգոստոս 10ին Սեւրի մէջ նոյն յաղթական Դաշնակիցներուն եւ թուրք պատուիրակներուն հետ ստորագրեց ծանօթ դաշնագիր: Ասիկա դերազոյն յաղթանակի էր հայ նահատակ ժողովուրդին, որուն դարաւոր իրաւունքները վերջապէս կը ճանչցուէին աշխարհի մեծերուն կողմէ: Առանց «Մայիս 28»ին, մենք երբեք չէինք ունենար Սեւրը:

Առանց «Մայիս 28»ին, մենք երբեք չէինք ունենար Հայաստանի Հանրապետութիւնը, որուն 1920 դեկտեմբեր 2ի սահմանները մինչեւ այսօր ալ կը մնան անփոփոխ, կազմելով կորիզը Միացեալ Հայաստանին, որուն կը ձգտին այսօր հայութեան բոլոր տարրերը:

Ահա՛ այս ճշմարտութիւնն է որ պէտք է կրկնենք այսօր, երբ կը տօնենք մեր անկախութեան տարեդարձը:

Ո՛չ մէկ դէպք կրնայ փոխել պատմական ճշմարտութիւնները: Պատմութիւնը կը հիմնուի շօշափելի իրականութեանց վրայ եւ «Մայիս 28»ը պատմական անփոփոխ իրականութիւն մըն է:

Ինչպէս անցեալ ամիս Ապրիլեան Սղահանդէսը, այսօր ալ «Ազգային Տօն»ը առիթ պէտք է ըլլայ պահանջելու մեր պատմական իրաւունքները: Հայ ժողովուրդը այս տօնին առթիւ աւելի քան երբեք բարձր պէտք է պուռայ աշխարհի ճակատագրը կերտող մեծ Դաշնակիցներու երեսին, յիշեցնելու համար անոնց իրենց հին բարի խոստումները, Ուելսերեան սահմանները՝ Վանի, Բաղէշի, Կարինի եւ Տրապիզոնի նահանգներուն կցումը ներկայ կորիզ Հայաստանին:

Երբ իրականութիւն դառնան այդ խոստումները, այն ատեն միայն իրաւործուած պիտի ըլլայ արդարութիւնը հանդէպ հայ ժողովուրդին որուն միլիոնաւոր նահատակներ ինկան ազատութեան ճանապարհին վրայ, որպէսզի կերտուի «Մայիս 28»ը, որպէսզի ազատ հայրենիք ունենայ առաւելակոծ հայութիւնը:

ՀՐԱՆՏ ՍՍՄՈՒԷԼ

փայլում էր աղամանդի պէս: Նա առանց ընկ՝ ճուրղու եւ թուրանալու դժոխային պայմաններից, հարատուութեամբ կրում էր հանրապետութեան նշանախօսքը — Մահ կամ Ազատութիւն — եւ նետում թշնամու առաջ հերոսաբար: Ոչ մէկ վճատութիւն կամ յուսահատութիւն տարաբախտ օրերից, այլ ընդհակառակն աւելի կարծրացեալ վճռականութիւն ու կամքի տոկոսութիւն ճակատագրական ժամերին ...

Պարզ ու զեղեցիկ Մայիսեան երեկոյ էր: Միջնաշարը դեռ նոր էր իւր թեւերը տարածել Երևանի վրայ եւ շրջապատող լեռնաբլուրներից փչում էր մեղմիկ կենսատու գոլ քամին: Բազմութիւնները խոնուած ուրախ ու խանդավառ, ճաշած ցնցոտիներին, որոնց տակից պարզ նշարաւում էր նրանց նիհար ու դալկահար մարմինները, Երևանին շրջապատող ձորերից ու բարձրութիւններից բարձրանում էին ու իջնում դէպի քաղաքի կեղրոնը՝ երկրպագելու դարերով թաղուած հայ պետականութեան խորհրդանիշին, կառուցուած յաղթական կամարին, Մայիսի 28ի օրուան առթիւ: ... Եւ պատանի ողին սկսեցին հօր ձեռքը սեղմելով յետ ձեռք ու ժողովուրդի յանկարծ ու կանգ առաւ Սուրբ — Սարգիս եկեղեցոյ դէպի քաղաքի կեղրոնը տանող ճանապարհի վրայ՝ հիացած ու զմայլած ծիածանագոյն յաղթական կամարի դիւթական տեսքից, Ազատութեան փողոցի անկիւնում կառուցուած:

— Օ՛... որքան զեղեցիկ է այն, հայրիկ ... կանգ առ մի պահ, ես կ'ուզեմ նայել բարձրութեան վրայից ...

— Գնանք, դաւակա, գնանք աւելի մօտից դիտելու նրան:

— Ո՛չ, ո՛չ, հարցիկ, սպասիր մի վայրկեան, ես անկարող եմ քայլել այլևս... ես կ'ուզեմ այստեղից ցատկել ուղղակի ու գրկել նրան...

— Գնանք, որդի, դնանք որ շուտ հասնենք մեր ուխտատեղին... տես, բոլորն շտապում են, առանց յայտադելու:

— Հիմա, հիմա, հայրիկ... բայց այն ի՞նչ մտեթ կարմիր է մէջտեղում ընկած... որ մօտը հասնենք, կարող եմ ձեռքով շօշափել նրան... Թոյլ կը տա՞ն ինձ գրկել, համբուրել... Օ՛... ինչ սիրուն է այն կարմիր գոյնը... սիրտս վառուած է նրան նայելուց ու հողիս սլանում չքիտեմ ո՛ւր ...

— Նա դարերով թափուած մեր նախնիքների արեան դեռն է, սիրելի որդիս: Նրանք են որ դէն ի ձեռին պայքարեցան ու ինկան անմոռանալի ազատութեան ճանապարհին վրայ, որի պտուղները վայելում ենք այսօր, թէկու՞ղ սովի ճիրաններում եւ նեղ ու սեղմուած սահմաններում... բայց ոչ ինչ, դրանք ժամանակաւոր եւ անցողակի երբ — ւոյթներ են եւ մօտ ապագայում մեր հայրենիքը պիտի տարածուի իւր բնական սահմանների մէջ...

— Իսկ ինչո՞ւ համար, հայրիկ, նրանք պայքարեցան դէն ի ձեռին:

— Նրա համար, զաւակս, որ մենք ազատ լինենք դերութեան կապանքներից, չլինենք ստրուկ ու հարածական թշնամու ձեռքին... նրա համար, որպէսզի մենք այսօր քեզ հետ միասին ազատ շունչ անենք ու զրօնները մեր հորիզոնի տակ, առանց մարմտակներին ենթակայ լինելու... նրա համար, որ տէրն ու տիրական լինենք մեր սեփական հայրենիքին, թափած քրտինքին ու ստատակին...

... Ու կարմիր գոյնը — ազատութեան ճանապարհի վրայ թափած հայ զաւակների հերոսական արեան խորհրդանիշը — յաւիտենապէս գամեց պատանու սրտում, հօր խօսքերի տակ... Ու այն օրուանից նա սիրեց ազատութեան պայքարի ողին եւ ուխտեց լինել անկուռն զինուորը իւր հայրենիքի, մինչեւ զերեզման...

Փա՛ռք ձեզ, զիւրազանական ողիներ, որ ինկաք հերոսաբար ազատութեան մեծ ճամբի վրայ:

Փառք ձեզ մտքին, ձեր յոյզին, իղձին որ անդուլ աշխատանքով ու սեփական արեան զնով ստեղծեցիք Մայիսի 28ը, Ամօթ աչք Հային, նոյ՛վք այն մարդուն որ քմնողի, եսամոլի ու նիւթական դժուճ շահերից կշիւելով պիտի մոռանայ ու ոտնահարի Մայիս 28ի շքեղազարդ գանձը:

Կեցցէ Մայիսի 28ը, կեցցեն նրա անխնայ հրահանգները, որոնք իրենց արիւնք խառնելով դարերու մոխիրներին, հիմք դրին հայրենիքին եւ հայ պետականութեան:

ՀԱՅԿԱԶՈՒՆ

ՄՏՍԱՅԱՔ

ԿԵԱՆՔ ԵՒ ԳԻՐ, ՂԷՐԸ — յիշատակարան հայ երիտասարդութեան, հրատարակիչ Դաւիթ Ծահ — լամեան, Ե. Չ. Ե. Կ. պրակ: Հասցէ. — c) o Nubar Printing Press, 14 Gheit el Nouby Str. Cairo (Egypte): ԵՐՈՒՍԱԶԷՄ, ամսագիր, Ա. տարի թիւ 4, Ապրիլ 1946: Հասցէ. — P. O. Box 4042, Jerusalem (Palestine).

ՀԱՅ ԴԻՏԱԿ, շաբաթաթերթ, Ա. տարի, թիւ 8 եւ 9 (Ապրիլ 6 եւ 13): Հասցէ. — 31 Mamillah Road, P. O. B. 102, Jerusalem:

ՀԱՅԵՐԷՆ ԵՐԳԷ, ճանապարհուած երգարան, 28 երկ, 8ր ամսոյ: Տեսարակ Ը.: Մարազից եւ հրատարակիչ Գէորգ Աճեմեան, Գին 50 Փրանք: Հասցէ. — Հայոց եկեղեցի, Rue Salibé, Alep (Syrie):

Հանրապետության գոհերին

Մայիս 28

Ապրիլ 11-24-ին Մայիս 28

Այսօր Մայիս 28, Հանրապետության ստեղծման տարեդարձի առթիւ, սրտի խօսք ունիմ ասելու ձեռք, իմ անմոռաց եղբայրներ, որ 28 տարի առաջ, ձեր կեանքի դարունքին՝ արհամարհելով ամէն դժուարութիւն, նետուեցաք արեան դաշտը, դէմ առ դէմ կանգնեցաք մեր դարաւոր ոտխիւն : Դուք, չափազանց փոքրաթիւ, բայց լեցուած ազատութեան գաղափարով, զոհեցիք ձեր կեանքը որպէսզի յաւերժ ապրի ու ստեղծագործի հայ ժողովուրդը :

Իմ անմոռաց եղբայրներ — զէնքի ու գաղափարի հերոսներ, սրտի անհուն բերկրանքով վերջնում եմ գլխարկու ու խոնարհուած ձեր անյայտ ու անչլրիմ գերեզմաններին առաջ, դուք որ ստեղծեցիք Հանրապետութիւնը, ձեր արիւնքով ձեռք բերիք ազատութիւնը ու հայրենիքի վրայ ծածանեցիք ազատութեան եռագոյն դրօշը : Դուք մեռաք, բայց պատմութեան փառապանծ էջերի վրայ ոսկի տառերով անմահացրիք ձեր անունները :

Ամէն անգամ երբ քարտէսի վրայ կը տեսնեմ փոքրիկ Հայաստանը, աչքերիս առաջ կուգան Սարտարապատը, Ղարաբաղիսան ու Բաշ Արարանը, ուր դուք մոռալ ու ցատկոտ հուժկու շարքերով, «Մահ կամ ազատութիւն» բռները ձեր շուրթերին, լեցուած արդար վրէժխնդրութեամբ, ձեր խրամատներից դուրս էք տալիս թրքական բարբարոսների վրայ, եւ կատաղի ճակատամարտի մէջ, ուր արեան գետեր են հոսում, պարտութեան էք մատնուած թշնամուն եւ արեան շիթերի վրայ ձեր կուրծքներին կապում էք յաղթութեան ժապաւէնը : Յաղթանակ... Ի՞նչ փառք է սա : Երկկուայ ստրուկ ցեղը ոտքի է կանգնել ու շարժել ստրկութեան կապանքները :

Փա՛ռք ձեզ, իմ զոհուած եղբայրներ որ կոփեցիք հայկական արմընի քայլերը եւ հնչեցրիք ձեր խրոխտ շարքերից —

Մեր հայրենիք ազատ անկախ, Իր քշնամիմ սոսնակիս ...

Փա՛ռք ձեզ, դուք անձնուիրարք կատարեցիք պատմական մեծ դործը, փշրեցիք վեց հարիւր տարուայ ստրկութեան կուռ շղթան ու ստեղծեցիք առաջին Հայկական Հանրապետութիւնը :

Այսօր, երբ մեր շրթունքները արտասանում են Սարտարապատը՝ հպարտութեան զգայմունք մը կը համակէ մեզ : Մենք, նոր սերունդ, հպարտ ենք ձեզով : Դուք, իմ մեծ եղբայրներ, Սարտարապատի ամայի դաշտերում ծուռկի բերիք մեր ոխակալ թշնամին, զոհելով ձեզ շնորհեցիք մեզ կեանքի արշալոյս : Դուք ձեր քաջագործութեամբ դարձաք իտէլար սպառայ սերունդների :

Դէպքերի բերումով, երկար չտեսեց մեր անկախութիւնը, սակայն ան վերափոխուեց խորհրդային Հայաստանի, որի հիմնադիրները հանդիսանում էք դուք, եւ ձեր մտքի մեծ գաղափար — խօսնեք ըստնեք զոհուեցան ոչ միայն հանրապետութեան հաստատման ժամանակ, այլեւ նրանից շատ առաջ — ազատութեան գաղափարը սերմանելու ճանապարհին :

Այսօր հայրենիքը չի կարող իր յարգանքի տուրքը մատուցանել ու փառաբանել ձեզ, որով հետեւ արդպէս է պահանջում ներկայ կարգի ու սարքի : Բայց պատմութիւնը անողոք է : Կանցնի ժամանակ, հայրենիք ինքը կ'օրհնէր կը կանգնի ձեզ համար ու կը փառաբանի ձեր կատարած մեծ դործը :

Փառք ձեզ եւ ձեր Մեծ Գործին. — Մայիս 28 : ՄՇԱԿԵԱՆ

ՊԱՏՄԱԿԱՆ ՆԻՇ ՄԸ

Պատմութիւնը կ'աւանդէ մեզի թէ Կիլիկիոյ թագաւորութեան կործանումէն վերջ, Կիլիկիոյ թագաւորները կրեցին պաշտօնապէս եւ «Հայաստանի արքայ» տիտղոսը :

Կիլիկիոյ վերջին վեհապետը՝ Կատարինէ Կորնարո թագուհին մահէն վերջ (1010), նոյն պատմականներ ժառանգեց Սալոյայի իշխանական տունը :

Ողբացեալ Կ. Բամաջեան՝ մասնաւոր դրուժիւն մը ուղղելով Իտալիոյ թագաւորական տան քարտուղարութեան, խնդրած էր տեղեկանալ թէ արդեօք Իտալիոյ վեհապետներուն տիրոջանունը մէջ կ'ար նաեւ «Հայաստանի թագաւոր» մակդիրը : Կ. Բամաջեան ցոյց տուաւ ինձ՝ իր այս մասին ստացած պատասխանը, որ բացասական էր :

Իտալիոյ վեհապետին՝ Վիլթոր Էմմանուէլ Գ. ի հրատարակած անթիւմով (9 Մայիս 1946), միջազգային մամուլը հրատարակեց քաղաքական քաղաքական եւ պատմական տեսութիւններ, որոնց մէջ կ'երեւի նաեւ «Հայաստանի թագաւոր» տիտղոսը :

Օրինակ, Փարիզի կիսապաշտօնական Le Monde օրաթերթը, (11 Մայիս) կ'արձանագրէ թէ Իտալիոյ վեհապետը, իր պատմականներուն շարքին մէջ կը կրէր նաեւ Կիլիկիոյ, Երուսաղէմի եւ «Հայաստանի թագաւոր» տիտղոսները :

Աւելորդ են մեկնութիւնները : Գրիմիքի

Ինքնապաշտպանութիւն, ղեկավարութիւն, ահաբեկում, հերոսամարտ եւ քաղաքացիական քաջագործութիւններ իրենց վճարական դերը ունեցան ապահովելու համար 1918 Մայիս 28ը, որ դարձաւ կորիզը եւ հիմնաքարը այսօրուան Խ. Հայաստանի :

1918 Մայիսի կէսերուն Արարատեան դաշտը ամէն կողմէ շրջապատուած էր թշնամիներով : Կարսի ու Ալեքսանդրապոլի անկումէն վերջ, երկիրը բոլորովին կտրուած էր արտաքին աշխարհէն, խնդրուած քաղաքացիական պայտաճանց անասելի իրարանցում եւ սարսափ, Երեւանի եւ Արարատեան դաշտին մէջ :

Ի՞նչ պէտք էր ընել, եւ ո՞ր փախելի : Ժամբանքը դէպի Թիֆլիզ եւ Բաղու զոցուած էին : Պարսկաստան տանող երկաթուղին չէր բաներ, Եւրոպա — Նախիջեւանը թուրքերու ձեռքն էր : Հարակէն եւ արեւմուտքէն, թուրք կանոնաւոր զինուորները կուգային կտրելով եւ աւերելով հայկական դիւղերը եւ աւանները :

Ի՞նչ կը մնար ընել, եթէ ոչ զիմադրել : Մահ կամ ազատութիւն, ուրիշ փրկութիւն չկար :

Եւ ահա ամբողջ Արարատեան դաշտի հայ ժողովուրդը եւ թրքահայ գաղթականութիւնը ղեկավարութեամբ Վասպուրականի հերոսամարտ անմահ հերոսին՝ Արամի, մէկ մարդու պէտք ոտքի կը կանգնի, առնչք սեռի, տարիքի եւ հոսանքի խտրութեան : Այնտեղ էին Դանակահայանը, Հընչակահանը, համայնապար եւ չէզոքը : Այլ եւս չկային կուսակցականներ, կար միայն եւ միայն հայ ժողովուրդը :

Արամի ղեկավարութեամբ անմիջապէս կազմուեցաւ զինուորական մարմին մը, մասնակցութեամբ զօր. Միլիկեանի, Դրօի եւ Դանիէլ — Բէկ Գրիմուհեանի : Ամբողջ հայութիւնը ոտքի է, մէկ սիրտ եւ մէկ հոգի : Նոր Աւարայր, հազար հինգ հարիւր տարի վերջը :

Այնտեղ են հաւաքուած երիտասարդները, ծերերը, կիները, պատանիները, օրիորդները : Այնտեղ է հայ հայրենասէր հոգեւորականութիւնը : Ահա քաջ Վարդանը՝ Արամ, իր անվահեր ընկերներով : Ահա նոր Դեռնդ երէցը՝ Կիլիկիոյ ներկայ հայրապետ՝ Գարեգին Ա. (այն ժամանակ արքեպիսկոպոս), որ իր հայրենաշունչ քարոզչերով կը խրախուսէ, ետանդ եւ կորով կը ներշնչէ հայ ռազմիկներուն եւ ժողովուրդին :

Մայիս 21 - 22 - 23 փոքր ընդհարումներէ վերջ, Մայիս 23ին զօր. Միլիկեան կուտայ յարձակման հրամանը : Հայկական ուժերը վճռապէս կը նետուին յառաջ եւ կը սկսի կատաղի ճակատամարտը : Թուրքերը կատաղորէն կը դիմադրեն, կատարելով բազմաթիւ հակադարձակումներ :

Ամբողջ օրը, առաւօտէն մինչեւ երեկոյ, կը շարունակուի կատաղի ճակատամարտը, կ'որոտան թնդանօթները որոնց ձայները մինչեւ Երեւան կը հասնէին :

Թիկուներին վրայ ընդհանուր եռ ու զեռ : Սայրելով, Եղնելով եւ այլ հնարաւոր միջոցներով կ'աշխատին բանակին հայ, ջուր, ծխախոտ եւ ուրիշ պիտոյքներ հասցնել :

Մայիս 24ի ստուն թուրքերը ճարահատ կը փախչին : Մեր փոքրաթիւ այլ քաջարի զինուորները կը սկսին հարածել թշնամին որ յուսահատալան դիմադրութիւն մը փորձելով, կ'աշխատի նոր զիբերը գրաւել : Բայց հայ կողմից զօրքի շեշտակի հարուածներուն վրայ, կը լքէ ճակատը :

Յաղթանակը շահուած էր :

Անկարագրելի է հայ զօրքի եւ ժողովուրդի ուրախութիւնը : Մայիս 25ին թշնամին մեծ ոյժով յարձակման կը դիմէ Բաշ - Արարանի ճակատին վրայ : Կը սկսին արիւնալի կռիւներ : Դրօն կը յաջողի կատեցնել յառաջխաղացումը, զգալի կորուստ պատճառելով թուրք զօրքին : Թշնամին ստանալով նոր ուժեր, նորէն կը յարձակի, բայց կը հանդիպի մերոնց յամառ դիմադրութեան, եւ եւս կը մղուի :

Երեք օրուան կռիւներէ վերջ, թուրքերը կը նահանջեն դէպի Անի, Ալեքսանդրապոլ եւ Աղձակալա :

Ահա այսպէս հիմնուեցաւ Մայիս 28ը, հիմը դնելով փոքրիկ, այլ ազատ ու անկախ Հայաստանին :

Եթէ ըլլար 1918 մայիսեան այդ փառաւոր յաղթանակը, եթէ հայ ժողովուրդը մէկ մարդու պէս չմիանար եւ չունենար Սարգարապատի, Բաշ Արարանի, Ղարաբաղիսայի հերոսամարտը եւ Մայիս 28ով հաստատուած Հայաստանի հանրապետութիւնը, ի՞նչ պիտի ըլլար ամբողջ Արարատեան դաշտին եւ այնտեղի հայ ժողովուրդին վիճակը : Համարձակօրէն կրնանք բռնի որ՝ զարաւոր ոտխը պիտի տրէր ամբողջ Արարատեան դաշտին, սուրէ պիտի անցընէր ժողովուրդը, ինչպէս բրաւ թուրքի մէջ : Այն տեսն ի՞նչ մնացած պիտի ըլլար այսօրուան շէն քաղաքներէն եւ դիւղերէն : Բոլորը աւերակներու վերածուելով պիտի գտնային դերքի, ինչպէս Կարսը, Արտասարը, Սուրմալուն, մեր պատմական Անին եւ Արարատը : Ահա թէ ինչու հայ ժողովուրդը սքարաւոր է

Աւազ Ուրբաթ է, դաշտ ու սարեր, ծառ ու ծիւղեր ծաղիկ վարդով հարսնեցորի հաղուստ հաղած, մարդարիտի, աղամանդի շող ցողերով են զարդարուած : Բնութեան օրհնուած արգանդը կը յորդի, կը յորդի, բարօրութեան զեղուն աւիրով, շէն շող բերքով : Մշակին աչքը լեցուած է, այն աչքը որ ամբողջ ձմեռը արտերուն փորն է ձեղքած ու բեղնաւորած :

Օ՛հ, այն Ապրիլը 1915ի, Աւազ շարաթ. ինչ քստմնելի դժժան օրեր : Հայոց աշխարհը հիւսիսէն հարաւ, արեւելքէն արեւմուտք ջարդ, նախ — ձիւր, կողոպուտ ու անխնայ բռնաբարում :

Յեղին երակները լայն բացուած արդար ու կաս — կարմիր արիւնով կը ներկէին հայրենի հողը : Ա՛խ, հաղարամեակներու ընթացքին քանի՛ քանի՛ անդամներ ողորած է հայրենի հողը : Սրբազան խորան մըն է դարձած այդ հողաշերտը, Արմենիան : Հոն, մեր հայրենի հողին արդանդը միայն ցեղին արիւնով կ'արդասաւորուի :

Հայաստանի բարձրաւանդակէն մինչեւ Միջագետքի ծիծղուն, կապուտակ երկնքին տակ յողմած ու ծառ կարաւանները անվերջ ջարդուած ոտքերով, յօշոտուած դէմքերով լիւում, կամխացած հայ «տիկնայք փափկասունք» ամէն տեղ կը թափանչուի անօթի ծարաւ : Անվերջ կարաւաններ մէկը միւսին ետեւէն ու անոնց կապուած դիակներու անհամար շարանը ...

Ու դարեր այսպէս մարտնչած, արիւնոտած բնաւ չէ յողմած : Ուրարտեան օրերէն մինչեւ Արտաշէս, Տիգրան Մեծ, Կարմիր Վարդան, Բագրատունիք, Ռուբինեանք, Լուսինեանք, Դաւիթ Բէկ, Անդրանիկ, Հրայր, Բարգէն Սիւնի, Զէյթուն, Վան, Ուրֆա, Մուսա - Տաղ, Ծապին Գարահի — սար, ապա փառահեղ Սարտարապատ, ցեղին առնականութիւնը անդամ մըն ալ ցցուեցաւ դարաւոր ոտխիւն դէմ ու պարտադրեց խոնարհիլ իր կամքին առջեւ : Ու այսպէս դարեր, պաշտօնի պաշտը : Սակայն այս անգամ զոգրով շատ երկար եղաւ, խաչը շատ ծանր, երկուեք տանջանքով ու սառնապանքով : Օ՛հ, ծնունդը խայտակն ինչպէս Վահանի ծնունդը բոց աչքերով հուր մէկէն (կրակին բոցէ լեղուն) ծամով ետեւը ձգած, ցեղին արիւնէն ժայթքած, 1918 Մայիս 28ի հուր Արշալոյսէն ծնած : Յ. ՀԻՍՍՅԵԱՆ

Մայիս 28

Եւ ժողովրդապետութիւն

Լուսինեան հարստութեան կործանումէն վերջ, հայ ժողովուրդը ենթարկուեցաւ թշնամիներու հարստահարութեանց ու կեղեքումներուն, դառնալով կատարեալ ճորտ :

1918 Մայիս 28ին հայ ժողովուրդը միանաւ — բար, զէն ի ձեռին ու դերազոյն զոհողութիւններով կերտեց իր սեփական հայրենիքը իր պատմական հողերու մէկ մասին վրայ : Ու սկսաւ խայտալ ու հրճուիլ : Մայիսեան այս գեղաձիճաղ օրերուն, ուր գաղթիներու ազատաստնէն ու հայրենասէր գանդաւաճները կը տօնեն հայկական վերածնունդի այս լուսաւոր թուականը, պէտք է մոռնալ թէ Մայիս 28ով հայ աշխատաւորութիւնը տարաւ նաեւ ուրիշ յաղթանակ մը, — ժողովրդապետութեան հաստատումը մեր երկրին մէջ :

Հայ ժողովուրդը վեց հարիւր տարուան տաժանելի դերութենէ մը վերջ իր արիւնով կը նուաճէր նմանապէս մարդկային սրբազան իրաւունքները որմէ զրկուած էր դարերով :

Հայ անհատը ազատ էր, ու կը վայելէր քաղաքական ու քաղաքացիական իրաւունքներ :

Հայ անհատը ազատ էր ընտրելու իր ապրելու տեղը եւ իրաւունք ունէր ազատօրէն տեղափոխուելու մէկ վայրէն միւսը : Ամէն անհատ իրաւունք ունէր պաշտպանելու իր անունը դատարանի միջոցաւ : Անձի, բնակարանի եւ գոյքի անձեռնմխելիութիւն :

Ամէն անհատ ունէր ինքնորոշման իրաւունք, ազատօրէն արաւայտել իր միտքերը, բանաւոր թէ գրաւոր (ազատ խօսք եւ ազատ մամուլ) :

Ժողովրդական ազատ բնտրութիւններ, (ընտրելու եւ ընտրուելու իրաւունքով) : Եւ վերջապէս խղճի ազատութիւն :

Ապահովուած էին նաեւ ընկերային իրաւունքները — օրական ու թաժ աշխատանք, արհեստակցական միութիւններ, զործադուլ, պետական մասնաւոր հողատիրութիւն ու խնամք մանուկներու եւայլն :

Մէկ խօսքով, երկիրը աստիճանաբար կ'ընթանար դէպի ընկերավարութիւն, խոր ազոններ բանալով մեր ժողովուրդի կեանքի ու ըմբռնումներուն մէջ :

Ողջո՛յն Մայիս 28ի պատմական մեծ թուականին, եւ փառք անոր յայտնի եւ անյայտ հերոսներուն : ԼՈՐԻՍ ԲԱՅԱՆԵԱՆ

Ջարդարուն Մայիս եկաւ քաղցր ամիս, Սոխակ սիրահար, աղաւնիկ արդար Երգեմ ու պարեմ, քեզ տօնեմ Մայիս : Ա. ԿՐԱՍՊԵՏԵԱՆ

Մեծ եղեռնի սգանոց

ՆիՍ.— Մենք ալ տօնեցինք Ապրիլեան Մեծ եղեռնի 31րդ տարեդարձը, նախաձեռնութեամբ Ազգ. Միութեան եւ մասնակցութեամբ հայ մա- մուլի ներկայացուցիչներուն:

Կիրակի՝ 19 Մայիս, առաւօտեան, Մատչնի Հայոց եկեղեցիին մէջ կատարուեցաւ հոգեհան- դատեան պաշտօն: Պատարագէն վերջ Պ. Ա. Չօ- պանեան համառօտակի պարզեց Երիտասարդ Թուրքերու սարքած ոճիրները եւ աւելցուց.— «Այն ծնողքները որ կը թերանան իրենց զաւակ- ներուն ազգային դաստիարակութիւն տալու պար- տականութեանց մէջ, կը մեղակցին Թուրքին»:

Յետոյ անդրադառնալով Թալէաթի այն յայ- տարարութեան թէ՛ «այնպէս մը պիտի ընեմ որ Հայերէն խումբ մը բեռնակիրներ եւ ծառաներ մի- այն մնան», չեղանց.— «Անոնք չէին կրնար եւ չյաջողեցան այդ ընել... Բայց դոնուեցաւ հայ կտրիճ մը որ պատժեց այդ դահիճը Պերլինի փո- ղոցներուն մէջ»:

Կէս օրէ վերջ՝ բուն հանդիսարանը լեցուած էր 350—400 հայրենակիցներով: Հանդէսը բաց- ուեցաւ Մարտի 11-ը, որ մեծ յաջողութեամբ եր- դուեցաւ տեղացի արուեստագիտութիւնի մը առջ- նորդութեամբ եւ հայ երգչախումբի մասնակցու- թեամբ: Յետոյ երգուեցան Ս. Հայաստանի քայ- լերը եւ երկու Փրանսական երգեր: Օրուան նա- խագահը, Maître Augier դեղեցիկ ձառով մը դնահա- սեց հայ ժողովուրդի զոհողութիւններն ու խնդիր պատմութեան, անոր տոկունութիւնն ու աշխա- տասիրութիւնը եւ կոչ ըրաւ որ երկու ժողովուրդ- ները ձեռք ձեռքի պայքարին մարդկութեան բա- բորութեան համար: Ապա խօսքը տուաւ Պ. Չօ- պանեանի, որ աւելի քան 100 կէս ժամ տեւող Փը- րանսերէն բանաստեղծութեամբ մը պարզեց հայ ժո- ղովուրդի անցեալը, մշակոյթը, եւն.: Պանծացուց Տայիական ճարտարագիտութիւնը եւ երաժշտու- թիւնը, յիշելով Կոմիտասը եւ ուրիշներ: Մանրա- մասն նկարագրեց հայկական տարազրութիւնը, մեր ժողովուրդի մատուցած ծառայութիւնը մի- ջազգային երկու մեծ պատերազմներուն, մի առ մի թուեց Եւրոպացի պետական մարզոց պաշտօ- նակալ եւ հրապարակային խոստումները, Լօզանի ժողովին մէջ անոնց ցոյց տուած անասարբերու- թիւնն ու լքումը Հայկական Դատին եւն.: Սօսե- ցաւ նաեւ Ս. Հայաստանի նուաճումներուն վրայ եւ յոյս յայտնեց որ դէթ այս անգամ կը յարկեն Հայոց իրաւունքները՝ Հայաստանի կցելով բոնա- դրաւուած հոգիքը: Յիշեց նաեւ ներգաղթը:

Օրուան Բ. բանաստեղծ, Պ. Սեդրակ Քարեան բացատրեց Թուրք Զարդարարներուն քաղաքակա- նութեան ներքին ծալքերը եւ մեր զարաւոր ճիւղե- րը յանուն ազատութեան: Այս առթիւ եւս զովեա- տով նկարագրեց մեր հայրենիքի յարաճուն վե- րելքը, ու վերջացուց: «Մահման քաջաց կէն իւր հանց» աղաղակելով:

«Յառաջ»ի կողմէ խօսեցաւ ընկեր Շահան Զօտե- ան պարզելով ազատագրական պայքարին զանա- ցան երեսները, որ յանդեցաւ Մարտարագետի ու Ղարաբեղի մէջ յաղթանակին: «Առանց Մայիս 28ի զոյրութիւն չէր ունենար այսօրուան Հայաստանը որ 25 տարիէ ի վեր խաղաղութեան մէջ կ'աճի եւ կ'ուճանայ, եւ որուն կ'ուղղենք մեր ջերմագին սղջոյնը»: Հանդէսին փակումը կատարեց Պ. Գա- լայճեան ողջունելով կարմիր բանակը եւ Սթալինը:

Սգահանգէսի մէջ ծափահարելը անպատշաճ չէ՞: Ինչպէս պատշաճ է մէկ վայրկեան յամակայս լուրթիւնը: — Շահան Սեւակ

ՏԱՐԵԿԱՆ ՄԵՆ ՊԱՐԱԶԱՆԴԻՍ

Ֆր. Կապույտ Խաչի Մարսէլի մասնաճիւղին կողմէ Յունիս 1 Շարաթ գիշեր ժամը 9ին մինչեւ առաւօտ Chateau des Fleursի մէջ, 18 Bld. Michelet Գեղարուեստական խնամուած բաժին Կը պարէ Օր. Օտէք Սիման, պարի փոքրիկ թագուհին: Ճոխ պիւճէ:

ՀՈԳԵ ՀԱՆԳԻՍ.— Տէր եւ Տիկին Սէրճանեան կը ծանուցանեն թէ այս կիրակի առաւօտ, Յունիս 2ին հոգեհանդիսա պիտի կատարուի Փարիզի Հա- յոց եկեղեցին Տիկին Մարիամ Յովհաննէսեանի (Կիրասոնցի) համար: Կը հրաւիրուին իր յիշատա- կը յարգողները:

ԾԱՆՈՒ Է Licence de Cordonnier մը: Դիմել Պ. Տուրկութեանի, 51 Bld. Auguste Blanqui, Paris (13):

157 ՏԱՐԵԿԱՆ Խաչի աղա մը մեռեր է Անա- տուլուի գիւղերէն մէկուն մէջ: Ինք՝ ԶինՔԸ ԿԱՍԵՅ զերման լրտեսուհի մը, Մառի Ֆիշըր, որ բանտարկուած էր Շամպէնի մէջ: Նշանաւոր հանդիսացած է թէ 1914ի եւ թէ 1939ի պատերազմներուն մէջ:

Le Gérant: H. AGONEYAN
Imprimerie DER AGOPIAN, 17 Rue Damesno - 13

Մ Ա Յ Ի Ս 2 8

ՄԷՆԹ ԷԹԻԷՆԻ ՄԷՋ

Այս շաբաթ իրիկուն ժամը 8ին, Ռէպուպլիկ- քէններու սրահը (16 rue J. B. David): Կը խօսի ըն- կեր ԽԱՉԻԿ ՄԿՐՏԻՉԵԱՆ:

ՌՕՄԱՆԻ մէջ մայիս 30ին, իրիկուն ժամը 8ին, ընկերվարականներու սրահը: Կը խօսի ընկեր ՀԱՅԿ ՍԱՐԳՍԵԱՆ:

ՓՈՆ ՏՕՊԵՍԵԻ մէջ Յունիս 2ին: ՄԷՆ ՇԱՄՈՆԻ ՄԷՋ, նախաձեռնութեամբ Հ. Յ. Դ. Վարուժան կոմիտէի, մասնակցութեամբ, ՆորԱրեւիկայի Վարդէս խումբի եւ Ֆր. Կ. Սաչի սանուհիներուն: Յունիս 2, կիրակի կէսօրէ վերջ՝ ժամը 3ին Սալ ժան տ'Արքի սրահին մէջ:

Կը խօսի ընկեր ԽԱՉԻԿ ՄԿՐՏԻՉԵԱՆ Գեղարուեստական ճոխ բաժին: Կենդանի պատկեր մը եւ ուրիշ անակնկալներ: Մուտքը ազատ է

ՄԱՅԻՍ 28Ը ՏԷՍԻՆԻ ՄԷՋ

Նախաձեռնութեամբ Հ. Յ. Դ. Նոր Արեւիկայի եւ հովանաւորութեամբ՝ Հ. Յ. Դ. կոմիտէին: Այս Շաբաթ իրիկուն, ժամը 8ին, Հ. Յ. Դ. Տան մէջ: Կը նախագահէ՝ ԸՆԿԵՐ Թ. ՀԵՐՈՅԵԱՆ, կը խօսի՝ ԸՆԿԵՐ ՀԱՅԿ ՍԱՐԳՍԵԱՆ:

Պիտի մենեքէն Տիկիններ.— Մ. Կարապետեան, Մ. Հարկեան, եւ Ա. Պոյաճեան, խմբից եւ արտասանութիւններ Նոր Արեւիկայի տղաքներէն, ինչպէս նաեւ «Հայրենիքի համար» քատերախա- ղը, մէկ արար եւ մէկ պատկեր:

Հանդէսէն վերջ ընկեր-համակրական խնջոյք Հ. Յ. Դ. Տան ներքնայարկը: Մուտքը ազատ է:

ՄԱՅԻՍ 28Ը ՎԻԷՆԻ ՄԷՋ

Նախաձեռնութեամբ Հ. Յ. Դ. կոմիտէի, այս կիրակի կէս օրէ վերջ ժամը 2.30ին քաղաքապե- տարանին սրահին մէջ: Կը նախագահէ Հ. Կ. ՏԷՐ- ՄՈՅԵԱՆ, կը խօսի ԸՆԿԵՐ ՀԱՅԿ ՍԱՐԳՍԵԱՆ:

Սօսք պիտի անեն ընկերվարականներու ներկա- յացուցիչը եւ ընկեր ՄԻՍԱԲ ՄԻՐՁԷ (Լիոնէն): Գեղարուեստական բաժինը կը մասնակցին Տիկին Պ. Ախարնեան (Լիոնէն, երգ), Օր. Մ. Տէրվիշե- եան (Շապէն, երգ): Մասնաւոր պատրաստուած պարեր սանուհիներու կողմէ: Նուագախումբ եւն:

Ֆր Կ. ԽԱՉԻԿ ՄԿՐՏԻՉԵԱՆ մասնաճիւղին պարահան- դէսը յունիս 1ին երկուշաբթի ժամը 8.30ին մինչեւ առաւօտ: Կը նուագէ Պ. Պալեանի Ֆրանսօ Ար- մէնկն 6 հոգիներ նոճապատմը: Գեղարուեստա- կան բաժին: Ճոխ պիւճէ: Մուտքը 50 Քրանք, 45 rue de la Defense, métro Mairie d'Issy:

ETAB. Z A R E H

ԿՕՇԻԿԻ վերաբերեալ ամէն տեսակ պիտոյք, ՄՈՐԹ ԵՒ ԿԱՇԻ, 348 rue des Pyrenées, Paris (20): Հեռ. Men. 69-86:

MANUFACTURE de VÊTEMENTS
Hommes et Jeunes - Gens

Ets. BOYADJIAN

6, RUE MULET, LYON

Արեւելեակն եւ երազակալ շատ համեղ կերակուր- ներ ուտելու համար փաշտեցէ՛

Մ. ԱՆՍՈՒՐԵԱՆԻ

— Restaurant Cloche —

Ճաշարանը կայարանէն 5 վայրկեան
27 Bld. Raimbaldi, NICE

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ,

ՀԱՅ ՆՊԱՐԱՎԱՃԱՌՆԵՐ

Փորձառու անձերու կողմէ նոր բացուած է նպարեղէթի մեծամասնակ վաճառանոց մը, ուր միշտ պատրաստ կը գտնուին արեւելե- ան ու եւրոպական նպարեղէններ եւ չոր միւրեք, Փիսքաշ-վէտք, Իզմիլի անկուտ չամիչ, պուրք եւայլն:

Մանրամասն տեղեկութեանց եւ ապրա- պրանքներու համար դիմել՝
PRODUITS ALIMENTAIRES (Gros, demi gros)
Importation directe

NAJARIAN & CASSABALIAN

12 Rue de l'Arc, Marseille Tél. Colbert 87-69

CHEZ SASSOUNI

ՃԱՇԱՐԱՆ Հ. ԱՍԱՌԻՆԻ

ԲՈՂՈՐ ՆՐԲԱՃԱՏԱԿՆԵՐՈՒ ԺԱՄԱԳՐԱՎԱՅՐԸ
31 rue d'Alexandrie, Paris (2) Métro: Reaumur
Tél. GUT. 92-65

Հայկական կերակուրներ, ընտիր օղի եւ ա- զանքեր: Հարսնիքի, նշանուքի, կնուքի մաս- նաւոր սրահ: Ամէն երեկոյ, ժամը 7ին սկսեալ արեւելեան նուագ մասնակցութեամբ երգչուհի Տիկին Սօնիա Գարապաշի: Կերակի օրքըր գոյ է:

Մոլորթովի վերադրուներուն: Ֆրանսայի արտա- քին նախարարը տեսակցութեան մը առթիւ յայ- տարարեց թէ համաձայն է որ Իտալիոյ եւ միւս չորս պետութեանց դաշնագրերը ներկայացուին 21 պետութեանց ժողովին, ինչպէս առաջարկած էր Պ. Պըրնս: Իր կարծիքով, տակաւին կարելի չէ ստուգապէս ըսել թէ համաձայնութիւն պիտի գո- յանա՞յ Չորս Մեծերուն միջեւ, Յունիս 15ի ժողովին մէջ: Յոռեան ըլլալով հանդերձ, Պ. Պիսո կը կարծէ թէ մինչեւ այն ատեն նոր պարագաներ կրնան պայժատուանել կացութիւնը: Բայց եւ այն- պէս, առկա ճգուած խնդիրները չեն կրնար լուծ- ուիլ, մինչեւ որ Չորս Մեծերը ժողովը չվեր- սկսին համաձայնութեան մը յանգելու վճռական կամքով:

Նախարարը ցաւ յայտնեց որ Փարիզի ժողովը յետաձգուեցաւ առանց կարգադրութիւններ ընելու գերմանական հարցի մասին: Իրեն համար գերմա- նիան կեղրոնական խնդիրն է եւ առանց անոր կա- րելի չէ լուծել ոչ Աւստրիոյ հարցը, ոչ ալ ուրիշ խնդիրներ:

Վանտոնի թերթերուն տեղեկութեանց հա- մաձայն, Ս. Միութիւնը յայտնած է անգլ. կառա- վարութեան թէ համաձայն ըլլալով հանդերձ Գեր- մանիոյ վարչութիւնը կեղրոնացնելու սկզբունքին, ժամանակը հասած չի նկատեր, դայն գործադրե- լու համար: Անդիստ պնդած է թէ պատճառ չկայ անմիջապէս չվերցնելու կարգ մը պատուարներ մէկ շրջանէն միւսը, որպէսզի կարելի ըլլայ հա- մասար պարէն բաժնել ամէն տեղ, ապահովել ա- դատ երթեւեկը արեւելքէն արեւմուտք, գարկ տալ վաճառականութեան եւն.:

Այսպէս տեսակէտի տարբերութիւնները երե- ւան կուզան ամէն տեղ: Ամերիկեան շրջանին հրա- մանատարութիւնը դադրեցուցած ըլլալով ճարտա- բարդական մեքենաներու յանձնումը իրբեւ հա- տուցում, կ'ըսուի թէ Գերմանիոյ անգլ. շրջանի հրամանատարութիւնն ալ անոր պիտի հետեւի: Կը վախցուի որ հետզհետէ խախտի Փոցտամի համա- ձայնութիւնը:

Վաստրիոյ եւ Հունգարիոյ կարմիր բանա- կէն 70.000 զինուորներ Գերմանիա կը փոխադրուին Չեխոսլովակիոյ ճամբով: Կ'ըսուի թէ իրենց եր- կիր պիտի վերադառնան եւ այս ճամբան ընտ- րուած է, որովհետեւ Լեհաստանի մէջ փոխա- դրութիւնը աւելի դիւրին է թէ Պալեաններու մէջ:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂԱՎ

ՌՌՌՄԱՆԻՈՅ բանակին կրճատման մասին համաձայնութիւն գոյացաւ Չորս մեծերու փոխա- նորդներուն միջեւ: Ծրագիրը պիտի ներկայացուի Յունիս 15ի ժողովին:

ԱՐԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ առթիւ, որուն կը մասնակցին եօթը պետութեանց ներկայացու- ցիչները, արտակարգ զուգուցութիւններ ձեռք առ- նուած են: Չինեալ մակոյղներ եւ շրջուն պահա- կախումներ կը հսկեն Նեղոսի, ջրանցքներու, եւ ճամբաներու վրայ, եւ մարդ չի կրնար անցնիլ այն վայրը ուր կը գտնուի ժողովատեղին: Թեր- թերը կը գրեն թէ 10.000 հոգի կը պաշտպանեն այդ կալուածը որ կը գտնուի Դահիլէի մօտ, 20 մղոն հեռու: Երբեք այսքան խիստ միջոցներ ձեռք առնուած չէին եղիպտոսի մէջ, նոյնիսկ Չըրչիլի, Բոզլէյիլի եւն. այցելութեան ատեն: Թղթակից- ներն անգամ չեն կրնար այցելիլ: Կ'ըսուի թէ ժո- ղովին վերջը եղիպտոսի թաղաւորը երկու սեղան- ներ պիտի սարքէ, հրաւիրելով 80 հիւրեր:

ԱՇՍԱՐՀԻ ՀՈՒՆՁԲԸ բարեկան կ'երեւայ 1946—47ի համար, համաձայն Մ. Նահանգներու հողագործական նախարարութեան վերջին տեղե- կադրին: Արմտիքը պիտի աւելնայ, բայց միւր, կաթը եւ ճարպեղէնը անբաւական կը համարուին:

ՉՕՐ. ՏԸ ԿՕԼ Ժրնեւ գնաց, ներկայ ըլլալու համար իր եղբոր աղկան հարսնիքին: Երկու օր մնալէ վերջ պիտի վերադառնայ, առանց մասնակց- ցելու որ եւ է պաշտօնական ընդունելութեան:

ԹԷՀՐԱՆԷՆ կը հեռագրեն թէ կառավարու- թիւնը օրէնք մը հրատարակեց որով գիւղացիներ- րուն պիտի բաժնուին պետական հողերը: Ասով կը հարթուի ճամբան համաձայնելու համար Ատրպա- տականի հետ, որ առաջին անգամ յայտարարեց այսպիսի օրէնք մը:

ՄՈՍԿՈՒՍԵՒՆ կը հեռագրեն թէ անթելի 28 նոր կայաններ պիտի հաստատուին, մասնաւորա- պէս Կեդր. Ասիոյ, Անդրկովկասի եւ Ծայր. Արե- վելքի մէջ, որպէսզի յետին անկիւնն ալ կարենայ հետեւիլ օրուան լուրերուն եւ տեսութեանց: Այս առթիւ թերթերը կը գրեն թէ Մոսկուայի անթելէն գեկոյցներ կը տրուին 30 լեզուներով եւ 70 դաւա- րաբարաններով:

ԹՈՒՐԻՒՅԻՆ քաղաքապետական ընտրութիւն- ները կատարեալ ճախողանք մը եղած են կառավա- րական կուսակցութեան համար, համաձայն վեր- ջին տեղեկութեանց: Թէեւ տակաւին հրատարակ- ուած չեն պաշտօնական թիւերը, բայց կը հաստատ- ուի թէ մասնակցողներու թիւը 30—40 առ հարիւ- րէն աւելի չէ եղած: Հալքը ամէնէն աւելի շահած է արեւելեան նահանգներուն մէջ ուր ընդդիմա- դիրները կազմակերպութիւն չունին եւ ձեռնպահ մնացած են: